



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



10258

$\sqrt{28}$  h.

$\frac{23}{h-4}$

v1-4

ԶԲՕՍԱՐԱՆ ՏՕՆԻՑ

ԱՅՍԻՆՔՆ

ՏՕՆԵՐՈՒ ՎՐԱՅ ՄՏԱԾԱԿԱՆՆԵՐ

Հ. ԵԴՈՒԱՐԴ ՀԻՒՄԻԻԶԵԱՆ

ԱՐՔԵՊԻՏԿՈՊՈՍԻ ՇԻՐԱԿԱՅ

Ի ՄԻԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ



ՎԵՆԵՏԻԿ  
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1877

1704  
1877

ԾԱԽԻԻՔ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ԹՈՐԼՈՆԵԱՅ ԻՇԽԱՆԻՆ

ԱՌ Ի ԲԱՇԽԵԼ ԶՐԻ

ՈՐ ՎԱՅՆԵԿԻՔ

ԱՂԹԹԵՍՁԻՔ ՎԱՍՆ ՆՈՐԱ

2131

ԳՐԱԴԱՐԱՆ  
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ՔԱՆԱԿԱՆ

### ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԳՐԱԿԱՆ

Մտածական անթիքին ինչ հարկաւոր բան ըլլալը՝ ամեն սուրբ վարդապետներ ու հոգևոր կենաց առաջնորդները ըսած են: Հովի-հոգևոր ալ իր ՀԱ յորդորակին մէջ բաւական կըսէ: Իսկ սուրբ Սաբաղացին իր Արարածառէր կոչուած ոսկեղէն գրքին մէջ, որն որ Հովի-հոգևորին ետեւէն զատ հատորով անդուած է, 54 էրեսին մէջ՝ մտածականին ինչ հարկաւոր ըլլալը ցուցնելէն ՚ի զատ՝ ընելուն կերպն ալ կը սորվեցընէ: Ետքը 273 էրեսին մէջ ոմանց բերնէն առարկուած թիւն ընելով՝ որ ամեն մարդ մտածական ընելու յարմարութիւն չունի, ու ասոր պատասխանը տալէն ետքը՝ կըսէ. Եթէ գանուին ալ որ չիկարենան սորվիլ մտածական ընելը, անանկները կրնան սպուռած մտածականները ուշ ուշով կարդալ: Անոր համար նոյն գրքին մէջ տեղ տեղ ազուոր մտածականներ ալ կ'ենցընէ:

Բայց իր աւելցուցած մտածականները քիչ ըլլալով, կրնայ ըլլալ որ մէկը միշտ նոյն մտածականները կրկնէին ձանձրանայ, ինչպէս որ մարդս միշտ նոյն տեսակ կերակուր ուտելով՝ սիրտը կառնէ, բերանիփոխ կը վնասուէ: Աս պատճառաւ Հովիւ հոգեւորի ու Ապրաքսաճարիքի ետեւէն խել մը մտածականներ կաւելցընենք զատ հատորով մը, որպէս զի մտածական ընել չի գիտցողները կարենան ամեն օր անոնցմէ մէյմէկ հատ կարգաւ: Աս մտածականները պարզ կերպով շինուած են, ամենեւին միտք չեն յողնեցընէր, մէջը բարակ խորհրդածութիւններ չիկան. միայն կարգացողը ո՛ր որ կուզէ՝ ո՛ր որ սիրտը կը շարժի՝ հոն կանկ առնէ, ան կտորը նորէն կարգայ, ան կտորը մտքին մէջ պտտացընէ, ան կտորը յիշողութեանը մէջ տպաւորէ: Ասանկով կամաց կամաց մտածական ընելն ալ կը սորվի. վասն զի շատ բան մարդս չիկործեր որ կարենայ սորվիլ, բայց ընելով կը վարժի. մանաւանդ հոգեւորի մէջ՝ ձեռքերնէս եկածն որ ընենք, աստուած ալ իր շնորհով մեզն կօղնէ:

## Մ Տ Ա Ց Ա Կ Ա Ն Ա .

Սուրբ աստուածածնայ սևարատ  
յրարեսեր վրայ:

## Մ Ա Ս Ն Ա .

Սուրբ Օգոստինոսին խորունկ մտքին ձեռնարկութիւնն է, որ աւետարանին սուրբ աստուածածնայ համար յորմէ ծնաւ Յիսուս ըսելէն կը հետեցընէ, իր ամեն մեղքէ ազատ ըլլալը: Սնոր համար արիտենդեան ժողովքն ալ սկզբնական մեղաց վրայ վճիռ տալու ատենը՝ սուրբ աստուածածնիը մէկդի կը հանէ. ու 1884ին ՚ի Հռովմ եղած ժողովքն ալ, սուրբ դրքին ու սուրբ ժողովոց ու վարդապետաց ամենայն աղագաց սուրբ աստուածածնայ վրան ըսած խօսքերովը, իրեն անարատ յղացած ըլլալուն վճիռը տուաւ, որպէս զի ամեն հաւատացեալք սուրբ աստուածածնայ անարատ յղութեան հին ատենէն ՚ի վեր դրած ասնը կատարելու ատենը գիտնան՝ որ չէ թէ յղութեան ասնը վայրկեանէն սրբուած ըլլալուն ասնն է որ կը կատարեն, այլ ամենեւին առանց սկզբնական մեղաց յղացեալ ըլլալուն: Վասն զի ինչպէս որ կը վայրէր Քրիստոսն մօրը ներդրածական մեղք չու-

նենալը, նոյնպէս կը վայէր սկզբնականէն ալ ազատ ըլլալ: աս մտքով է որ ժամակարգութեան մէջը կըսենք առ սուրբ աստուածածինը: Յըպար անարարաբար, և զսարսուռ վայելապէս ծնար: Վայրէեան մընալ սկզբնական մեղքով աստանային գերի եղած որ ըլլար, զՔրիստոս վայելապէս ծնած չէր ըլլար:

Մարիամ յղութեան վայրկենէն աստուծոյ ա մենէն աղնուական, ամենէն կատարեալ, ամենէն երջանիկ արարածն էր. արարած մը իրեն հետ չէր կրնար բաղդատուիլ, վասն զի աստուծոյ մայր ըլլալու համար եղած էր, աչխորքիս փրկիչը իրմէն պիտոր ծնանէր: Բայց աս ամեն իր կատարելութիւնները բան մը չէին աժեր աստուծոյ առջին, ու չէ թէ միայն հաճոյ ու սիրելի եղած չէր ըլլար՝ այլ և ատելի եղած կըլլար աստուծոյ, թէ որ սկզբնական մեղքի մէջ յղացած ըլլար: Վասն զի, ինչպէս սուրբ հաւատքը մեղի կը սորվեցնէ, մկրտութենէ առաջ, այսինքն սկզբնական մեղքէն ազատենէս առաջ, ամենքս ալ որդիք բարկութեան ենք՝ Պօղոս առաքեալին ըսածին պէս: Վաւիթ մարգարէն ալ կողբայ զինքը՝ ըսելով: Անորէնսնեամբ յղացաս, և ի մեղս ծնուաւ զիս մայր իմ:

Մ Ա Ս Ն Բ .

Սուրբ եկեղեցւոյ վարդապետութիւնն է որ յետ Քրիստոսի՝ Մարիամ առջինն է աստուծոյ ընտրելոց մէջը: յայտնի ալ է որ իր ընտրութեան ու նախասահմանութեան առջի պատուը եղած է մասնաւոր շնորքը անարատ յղութեան. անանկ որ՝ ան ատենէն կրնար ըսել: Ինչ որ եմ, ինչ որ պիտոր ըլլամ, աստուծոյ շնորքն է: Ենորհոյն ու:

Կոստոյ եմ զիս, և իցեմ: Բայց անանկ պողարերը ըրաւ այն շնորքը՝ որ այն խօսքին ետեւէն նոյն առաքելոյն խօսքը կրնար յարել: Եւ շնորհոյ նորս որ յիս՝ ընդունայն ինչ ու եղէն: Վասն զի աստուծոյ շնորքն էր՝ որ իր յղութեան վայրկենէն ընդունուցաւ սուրբ ըլլալու, ու իր ամեն գործոցը արգիւնքը որջափ որ կարելի էր՝ աւելցնելու:

Այն շնորքը յղութեան վայրկենէն ի վեր տուաւ իրեն աստուած, զինքը անանկ սրբացնելու՝ որ իրեն պէս սուրբ արարած մը չըլլայ, ինչպէս որ կը վայէր աստուածամայր ըլլալու համար ստեղծուած էակի մը: Այն երջանիկ վայրկենէն Մարիամ աստուծոյ շնորքովը լեցուած՝ Եսայի մարգարէէն աւելի կրնար ըսել: Յարգանքի ինչաց զիս, և յորովայնէ յօր իմոյ խորաց զանան իմ: Այն վայրկենէն որդին աստուծոյ ծառայ իմ էս դու, և ի թեղ քառասորեցոյ ըսելու տեղը՝ մայր իմ ես դու ըսաւ իրեն, թէ և իր խոնարհ աղախինն էր: Ան վայրկենէն Որդին աստուած իրեն փառք սեպէց ամեն շնորքներով զարգարել զինքը: յիշէն որ անիկայ քիչ ատենէն իր մայրը պիտոր ըլլար՝ մասնալ տուաւ իրեն իր արգարութեան ընդհանուր օրէնքը, ու Ագամայ զաւկըներուն մէջէն զատեց հանեց զՄարիամ՝ ուղելով որ սուրբ յլանայ, դեռ մայրը չեղած՝ յիշեց իր անունը. յորովայնէ յօր իմոյ խորաց զանան իմ: Իրաւ այն շնորքն որ Մարիամ իր յղութեան վայրկենէն ընդունուցաւ, իր ամեն գործոց հիմը եղաւ: Աս ամեն բան աստուծոյ շնորքն էր. բայց իր գործակցութիւնն ալ էր՝ որ իր գործոցը արգիւնքը կէտցնէր. սրբութիւնը կատարելագործելու ատեն՝ նոյն շնորքովը իր արգիւնքներն ալ կէտցնէր, իր ամեն գործքը աստուծոյ նուիրելով: Բոլոր կենացը մէջ բան մը չըրաւ՝ որ աստուծոյ առջևը արգիւնաւոր չըլլայ: Աւատարանին ըսած մանաւ:

1\*

նուխի հաար երեւակայենք, պղտորտիկ հաս մընէ՛ որ կը ցանենք, բուսած ասենն ալ պղտիկ բոյս մընէ՛. բայց կամաց կամաց աճելով կըլլայ մեծ ծառ մը. ասանկ էր սուրբ Կուսին ընդունած շնորքն ալ. մէյմը արմատ առածին պէս՝ մեծցաւ, ճիւղերը տարածեց, տերեւներով ծաղիլըներով զարգարուեցաւ, ու պողաբերեց. բայց աս ամեն բան այն պղտի հատէն էլաւ, թէ որ այն պղտը տիկ հաար արմատ առած չըլտը, ճիւղերը չէին սնաներ ծաղիկեր ու պտուղ բերեր: Աստուծոյ շնորքն որ Մարիամ իր անարատ յղութեան առեւեր ընդունեցաւ՝ եղաւ սրտին մէջ սերմ, ու անոր ուժը իր ամեն գործքերուն մէջ տարածուեցաւ. ամեն ըրածը սուրբ ու աստուածահաճոյ եղաւ, վասն զի ամեն ըրածը՝ այն սիղբնական սուրբ շնորքէն առաջ կուգար: Իրաւ՝ աս շնորքն էր արմատը ամենայն պարզեաց և կատարելութեանց՝ որոնցմով եաքը զարգարեց զինքը աստուած, որոնցմով այն վերջի ծայրը կատարելութեան հասաւ, բայց սուրբ Կուսին գործակցութեան հաար էր որ այն շնորքը իր ծաղիկն ու պտուղը բերաւ. այն շնորքին գործակից եղաւ իր բարեգործութիւններովը, իր պարաբերը ընելով, զաստուած, ու ընկերները սիրելով, խոնարհութեամբ, կուսական մաքրութեամբ, աստուծոյ կամայը համակերպութեամբ, համբերութեամբ, ու իր ամեն առաքինութիւններովը: Թէ և աստուծոյ շնորհաց մէջը հաստատուած էր, աշխարհայ ապականութիւնը իրեն չէր կրնար մնատեր, բայց աշխարհէ մէկդի քաշուեցաւ: Թէ և ամեն մեղքէ ազատ էր, նաև սիղբնականէն, բայց ապաշխարողի կեանք անցուց: Թէ և առաքինութիւններով զարգարուած էր, բայց միշտ ջանացաւ աւելի առաջ երթալու կատարելութեան մէջ. ու ճանչնալով՝ որ իր ամեն ունեցածը այն

առջի շնորքէն առաջ կուգար, հանդերձ այնչափ կատարելութիւններովը, հանդերձ աստուածամայրութեամբը, քան զամեն մարդ աւելի խնարհ եղաւ:

Մ Ս Ս Ն Գ .

Հիմոյ մեր վըայ դառնանք. թէ և սիղբնական մեղքով ծներ էնք, բայց սուրբ մկրտութեամբ համեմատ մեր չափուն՝ աստուծոյ սրբարար շնորքը ընդուներ էնք, որն որ զմեզ որդեգիր կընէ աստուծոյ, ու մեր գործքերը աստուծոյ առջին արգիւնաւոր: Կը ճանչնանք աստուծոյ մեղի ըրած աս շնորքը. թէ որ մեղքերնիս արգէլք չըլլային, ու ճանչնայինք աս շնորքին մեծութիւնը, ամեն բանէն աւելի ասիկայ մեղի փառք կը սեպէինք. վասն զի աս շնորքն է որ զմեզ մասնակից կընէ աստուածային բնութեանը. Զի սոփիքս աստուածընէն բնութեանն լինիցիք հարորդակիցս, կըսէ Պետրոս առաքեալը: Յոհաննէս առաքեալն ալ կըսէ. Տեսէք որպիսի սեր շնորհաց մեզ Հայր, դի որդիքս աստուծոյ ինչեպոս և եմք: Բայց ասիկց կը հետեցընէ, ու մենք ալ պէտք է հետեցընենք, ինչ սեր՝ ինչ շնորհակալութիւն աս շնորքին համար պարարկան ըլլանիս. ինչ սուրբ վարք կը պահանջէ մեզմէ աս շնորքը, որպէս զինանարժան որդիք չըլլանք. ինչ պղտի բան է մեզմէ պահանջած կատարելութիւնը՝ աստուծոյ որդիք ըլլալու համար. որդիք աստուծոյ ըլլալ ու մարդկային ախտերու տակ ձգել զմեզ՝ հրէշ մը կըլլայ հոգեորի մէջ:

Սուրբ Կոյսը իր ընդունած սրբութիւնը ոչ միայն անարատ պահէց՝ ամեն մեղքի աւելութիւնէն զբուժանալով, այլ նաև աճեցուց առաքինութեամբ: Աստուծոյ շնորքին մէջը հաստատուն



չենք կրնար կենալ՝ քանի որ շնորքը անգործ թողունք ու աճեցընելու ջանք չունենանք։ անոր համար Պետրոս առաքեալը կը յորդորէ զմեզ՝ ըսելով. Աճեցէ՛ք շնորհօք և գիտութեամբն քեանք մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Աշխրբիս փորձութեանց մէջը թէ որ կերպ մը կայ աստուծոյ շնորքը պահելու, աղօթից ու առաքինութեանց ետևէ ըլլալն է։ Սուրբ աստուածածինը ասանկ պահէց, մենք ալ ասանկ միայն կրնանք պահել. աստուած զինքը մեզի պաշտպան ու օրինակ տուած է։ Իրեն նմանելով՝ իրեն պաշտպանութեանը արժանի կըլլանք։

Ա.Ղ.Օ Թ.Ք

Ո՛վ ամենատուրը Կոյս, դուն որ սատանային դուռը ջանջախեցիր, չէ թէ միայն Քրիստոս ծնանելով՝ որ անոր դուռը ոտքին տակը առաւ կոխեց, չէ թէ միայն սկզբնական մեղքէն ազատ ըլլալովք, այլ նաև այն շնորքը անարատ պահելով ու աճեցընելով, բարեխօսէ մեզի համար՝ որ մենք ալ մկրտութեամբ ու ապաշխարութեամբ ընդունած շնորքնիս, չէ թէ միայն չիկորսընցընենք, այլ նաև աճեցընենք՝ քրիստոնէական կատարելութեան ետևէ ըլլալով։

Մնթառամ ծաղիկ, անդատապարտ շառաւիղ, վերաբուսեալ յարմատոյն Յեսեոյ. զքեզ Եսայիս կանխաւ վերադռչեաց եօթնարփեան շնորհաց Հոգւոյն ընդունարան դու, աստուածածին և կոյս զքեզ մեծացուցանեմք։

## ՄՏԱԾԱԿԱՆ Բ.

Սուրբ Աստուածածնայ ձեկեակեր վրայ։

ՄԱՍՆ Ա.

Ասակաց զբքն աստուածայնն խնաստութեան վրայ ըսածը՝ Տէր «բարոս զի» 'ի սիւզն ճանապարհաց իւրոց... Ես եի՛ որով ուրախ լինէր քեզ հանապաղ, սուրբ Հարք սուրբ աստուածածնայ վրայ ալ կառնեն. անոր համար իր ծննդեան օրը աս դիբքը զբեր են ժամու մէջ կարգալու։ Վասն զի աստուած աշխարհս ստեղծելէն առաջ՝ նախասահմաներ էր իր որդւոյն մարդեղութիւնը, ու անոր մայր սուրբ Կոյսը. ու ինչպէս կուրախանոր Քրիստոսի վրայ, ասանկ ալ անոր մօրը վրայ կուրախանոր՝ ազատ պահելով զինքը սկզբնական մեղքէն նախաստեղծ մարդոյն, որով իր ամեն զաւկընէրը ատելի աստուծոյ պիտոր ծնանէին։ Ստով Քրիստոս ու իր մայրը, չէ թէ միայն նախասահմանելոց առջինները եղան՝ այլ նաև նոր կարգ մը կացուցին զեր 'ի վերայ քան զամեն նախասահմանեալները մէկտեղ։ Միայն աս տարբերութեամբ որ Քրիստոս իրեն համար նախասահմանուեցաւ, իսկ Մարիամ Քրիստոսի համար։

Ասկէց յայսնի կ'ըլլայ աստուծոյ ունեցած սէրը սուրբ աստուածածնայ վրայ, որ զինքը ընարեց բոլոր նախասահմանելոյ մէջէն ան բարձր աստիճանին: Սուրբ աստուածածինը աստուծոյ ասանկ սիրելի ըլլալուն համար պէտք է որ մենք ալ սիրենք ու մեծարենք զինքը: Մէզի բարեխօս ու բարերար ըլլալուն համար ալ զինքը սիրելը պէ՛կ է, բայց մեր շահուն համար է աս սէրը, զմեզ սիրել է քան թէ զինքը. պէտք է զինքը սիրենք ու մեծարենք իր սրբութեանը՝ իր առաքինութեանցը՝ իր արժանի ըլլալուն համար սիրոյ և մեծարանայ:

Սուրբ Կոյսն ալ Աշամայ գուտար էր, իր մարմինն ալ տկար և մահկանացու, բայց սկզբնական մեղաց բարոյական հետեանքները չուներ. անմեղանչէ՛ր էր, բայց չէ թէ առանց արդիւնք ունենալու. կոյս էր, այլ առանց ամբութեան՝ մայր էր, այլ առանց երկանց. մեռաւ, այլ առանց ապականութեան: Ինչպէս որ Սինա լեռան քովը խորտակեց Մովսէս օրինաց տախտակները, ասանկ ալ աստուած իր դրած բնութեան օրէնքները անօրինեց սուրբ Կուսին համար՝ որուն օրինակն էր Սինա լեռը. վասն զի սուրբ Կոյսն էր ան լեռը՝ որուն համար կրճէ սաղմնսերգուն. լեռան ընդ որ հաճեցաւ աստուած բնակել ի նմա: Ու ինչպէս բնութեան օրէնքները սուրբ աստուածածնայ համար անօրինեց, ասանկ ալ անոր բարեխօսութեանը համար՝ իր արդարութեան օրէնքները կը անօրինէ, ու կողորմ մեզի: Ուրեմն սրտանց դիմենք առ սուրբ աստուածածինը, որ մեզի համար բարեխօս ըլլայ:

Մ Ա Ս Ն Բ.

Ամեն սուրբերուն ու արգարներուն մէջէն սուրբ աստուածածինը միայն է՝ որուն վրայ աստանան և ոչ վայրկեան մը անբուժիւն ունեցաւ. ամենն ալ իրեն գերի կը ծնանին, ետքը աստուած կը ստանայ զիրենք. մեր երկու նախածնողքը միայն եղան՝ որոնք ստեղծուած ատենին աստուծոյ էին, բայց անոնց ալ քիչ տտենէն անրեց աստանան: Միայն սուրբ Կոյսը եղաւ միշտ աստուծոյ, անոր համար կրնայ ըսել. Տէր սրբաշառ զիս՝ ի սիրդէն ճանապարհաց իւրոյ. վասն զի աստանան չեկրցաւ, ոչ առաջ և ոչ ետքը, աստուծոյ անբուժիւնը յափշտակել անոր վրայէն: Ոչ առաջ, վասն զի աստուած իր հզոր բազկաւ նախապահեց սուրբ Կոյսը ի սկզբնական մեղաց. և ոչ ետքը, վասն զի սուրբ Կոյսը նոյն հզոր բազկին օգնակաւ նութեամբը ազատ եղաւ ամեն ներգործական մեղքերէ: Ամաչէնք ու խոնարհինք որ մենք չէ թէ միայն առաջուց աստանային անբուժեանը տակ ծնած ենք, այլ և ետքը մեր ներգործական մեղքերովը աստուծոյ անբուժեանէն արատամբերով սատանային գերի եղեր ենք: Ու ասանկ նախատանաց մէջ մենք զմեզ ձգելէն ետքը՝ դարձեալ մենք զմեզ բանի մը տեղ կը դնենք. խի սուրբ աստուածածնին որ ամենեւին աս նախատինքը չէր ունեցած՝ ամենէն աւելի խոնարհ էր, անանկ որ իր խոնարհութեանը համար արժանի եղաւ աստուածամայր ըլլալու. Ձի հայեցաւ ի խոնարհութեան աղախնոյ իւրոյ: Ձէ թէ չէր ճանչնար աստուծոյ ընդունած պարգևները, այլ կը ճանչնար որ ամեն ունեցածը աստուծոյ սպարգևն էր. բան մը իրենը

չէր սեպեր, ամենն ալ աստուծոյ կրնձայէր: Ուստի սրբուհին Եղիսաբեթ զինքը գովէլ որ սկսաւ՝ Օրհնէաւէս դու՝ ի կանայս ըսելով, ինքը պատասխանեց. Զի արար ինչ ձեծաթեծս հոգին: Ու հրեշտակէն լսած ամենն ալ որ աստուծոյ մայր պիտոր ըլլար, ինքը զինքը աստուծոյ աղախինը կոչեց. Ահա ապի կամ աղախին քեզոսն: Իր խոնարհութենէն էր որ ամենեկն օրէնքէ մը աղատ չխտեց զինքը՝ աստուծոյ մայր ըլլալուն համար, անանկ օրէնքներէ ալ՝ որ իր պատուոյն նուաստութիւն էր, ինչպէս մաքրուելու համար տաճարը երթալը: Իր խոնարհութենէն էր որ իրմէ շատ վար եղօղներուն հպատակ եղաւ, ինչպէս սրբոյն Յովսէփայ: Իր խոնարհութենէն էր որ ինչուան խաչին տակն ալ կեցաւ իր որդին երկու աւաղակաց մէջը խաչելու ատենին, ուր հարկաւորապէս Հրեաները զինքն ալ կը նախատէին իբրև Յիսուսի մայրը:

Մ Ս Ս Ն Գ.

Աս իր խոնարհութեանը համար է որ Քրիստոս զինքը իրեն մայր ընտրելէն ետքը՝ Թագուհի երկնի և երկրի ալ ըրաւ, ու ամենուս մայր. ու ասով մէկգիւն իր խոնարհութիւնը վարձատրեց, մէկալ գիւն ալ մեր խեղճութեանը ողորմեցաւ: Քրիստոս որ աստուած ողորմած է, բայց արդար ալ է. շատ անգամ իր արդարութիւնը չի թողուր որ մեզի ողորմի՝ իր ողորմութեանը անարժան ըլլալուն համար. ուստի իր բարեգթութիւնը աս հնարքը բանեցուց, որպէս զի երբոր արդարութիւնը չի թողու մեզի ողորմելու՝ սուրբ աստուածածնայ զիմէնք, որուն յանձնած է իր անհուն ողորմութեանը գանձը, ու անոր բարեխօսու-


7744  
2131

Թեամբը իր ողորմութիւնը շարժենք: Ասկէց կ'իմացուի որչափ հարկաւոր ըլլալը՝ որ իրեն ջերմուանց ըլլանք, որովհետեւ ինքն ալ գիտնալով մէկգիւն մեր կարօտութիւնը, մէկալ գիւն ալ որ աստուած աս մեր կարօտութեանը համար զինքը մեզի մայր ու բարեխօս ըրած է, չիմերժեր զմեզ երբոր իրեն գիմէնք:

Ա Ղ Օ Թ Գ

Յիշէ, մայր բարեգութ, որ լուած բան չէ՝ որ մէկը բու ոտքդ զիմելով՝ բու օգնութիւնդ ու բարեխօսութիւնդ ինդրէ, ու չի լուս իրեն: Աս վըստահութեամբ սիրտ առած՝ քեզի կը զիմեմ՝ Աոյս և մայր, ու լալով ոտքդ կ'ընամ, զիս երեսէ մի՛ ձգեր, այլ լսէ իմ աղօթքիս, ու վըստ գթալով՝ ընգունէ իմ աղաչանքս:

Այսօր ծնաւ մայրն ամուլ զքեզ յարմատոյն Յեսեայ ծառ կենաց ծաղկեալ աիրուհի, որ ետուր մարդկան ՚ի ժամու պառուղ զհացն կենաց զիջեալն ՚ի յերկնից, բարեխօսեա սրբուհի վասն անձանց մերոց:



# ՄՏԱԾԱԿԱՆ Գ.

Սուրբ աստուածածնայ ընծայմանը վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Ինչպէս որ արշալոյսը անդգալն կերպով կը քայլէ առաջ կուգայ՝ բայց ըրած քայլերը հսկայի քայլեր են. Եւ ցնծայ նա որպէս հսկայ յընկնանաւ դժաւ նապարհս իւր, ասանկ եղաւ սուրբ աստուածածնայ մանկութիւնն ալ. մտոր չիմացաւ իր ըրած հոգևոր յառաջագիմութիւնը, առաջ գնաց ՚ի դըրուենէն ՚ի դըրուենէն, անանկ որ՝ Գաբրիէլ հրեշտակը կրցաւ ըսել իրեն լի շորհօտ: Աստուած ընտարեր էր զինքը արշալոյս ըլլալու արեգականն արդարութեան, լոյսնքն մայր ըլլալու Քրիստոսի, անոր համար պէտք էր որ պղտիկոց պատրաստուէր. ինքը չէր գիտեր՝ աստուծոյ իրեն այնչափ շնորք տարուն պատճառը, բայց աստուծոյ շնորքը գործածելու միայն կը նայէր: Աստուած անանկ տրամադրեր էր որ սուրբ Կուսին ծնողքը զաւակ չունենալով, ուխտեն որ զաւակ մը ծնողքը զաւակ չունենալով, ուխտեն որ ըլլան՝ տաճարին ընծայէն. ուստի սուրբ Կոյսը եօթը տարուան եղածին պէս՝ ընծայեցին զինքը ՚ի տաճարը, որպէս զն հոն մեծ:

նայ ու հոն վարժի աստուծոյ ծառայութեանը մէջ: Աստուծոյ շնորքն էր աս. ու սուրբ Կոյսը ան իրեն պղտի հասակէն ճանչցաւ աստուծոյ շնորքը ըլլալը, ու ծնողացմէն աւելի ինքը զինքը ընծայեց աստուծոյ: Տասնըմէկ տարի հոն անցուցած կէանքը ուրիշ բան չէղաւ, բայց դանձ դանձի վրայ զիզել, ամեն վայրկեան աստուծոյ մեծադոյն շնորքին արժանի ըլլալ:

Ան ատենէն ըրաւ սուրբ Կոյսը իր ուխտը՝ աստուծոյ նուիրելով իր կուսութիւնը. որուն համար Գաբրիէլ հրեշտակին աւետիքը ընդունելու ատեն այնչափ խռովեցաւ՝ ըսելով. Գեարդ լինիցի ինչ ոյդ, ասուի դայր ու գեպէ՛՛՛: Ըսել կուզէր որ՝ կուսութեան ուխտ ունենալով, ինչպէս կրնար մայր ըլլալ: Սուրբ Կուսին ամեն առաքինութիւններն ալ ծածուկ էին, սաղմոսն ըսածին պէս՝ Առնայն քառս քառէր Բագասորի ՚ի ներսոյ. բայց ինչպէս ճրագը ապակիի մէջէն ալ լոյսը գուրս կուտայ ու կերենայ, ասանկ ալ իր ամեն առաքինութիւնները գրսէն ալ կերենային: Բայց կուսութեան առաքինութիւնը բոլորովին ծածուկ էր՝ սուրբ Յովսէփայ հարսը սեպուելով գրսուանց. ու բոլորովին ծածուկ մնաց մինչև ետքը՝ աստուծոյ ասանկ ուղեւորը, որպէս զն և ոչ չար Հրեաները արատ մը կարենային գնելու սուրբ աստուածածնայ վրայ, որ ամենեկին անարատն էր: Երբ երգոցին խօսքերն որ հարսին գեղեցկութեանը համար կըսէ՝ Գեղեցիկ ՚ի Եմայս. ամենեկն գեղեցիկ էս, և առաք ինչ ու գոյ ՚ի շէւ. ու ասոր նման խօսքերը, սուրբ Կուսին աս առաքինութեանը վրայ առաւելապէս կիմացուին. ինչուան երկնաւոր Թադաւորը Որդին աստուծոյ իրեն աս հոգևոր գեղեցկութեանը հաւնեցաւ. Զի ցանկացաւ Բագասոր գեղոյ քա: Ամեն ուրիշ օրիորդներ կը կարգուէին՝ Քրիստոսի մայր ըլլալու համար, կարծէ:

լով որ աստուած մարդկային միջոցներով կուտայ իր շնորքը սուրբ Կոյսն որ զինքը աստուածոյ ընծայեց անարատ կուսութեամբ, զանիկայ ընտրեց աստուած Քրիստոսի մայր: Այն միջոցին՝ որն որ ուրիշ օրիորդները բանեցուցին, իրենց վախճանին հասնելու արգելք եղաւ. իսկ արգելք կարծուածը՝ միջոց եղաւ սուրբ Կուսին Քրիստոսի մայր ըլլալու. վասն զի աստուած սահմաներ էր՝ որ իր որդին ՚ի կուսէ ծնանի:

Մ Ա Ս Ն Բ.

Սուրբ Կուսին վրայ խիտ յայտնի կերևայ որ ինչպէս աստուած իր տուած շնորքը բանեցընողին՝ միշտ աւելի շնորք կուտայ: Սուրբ Կուսին առաքինութիւններէն յայտնի է ինչ առաւելութիւն շնորհաց հետզհետէ ընդունելը: Իր հաւատքն որ ունեցաւ Քաբրիէլ հրեշտակապետին խօսքին՝ որ ինքը կոյս մնալով մայր պիտոր ըլլար, ու աստուածոյ որդին իրմէ ծնանէր պիտոր, աւանակ մեծ հաւատք մըն էր՝ որ Աբրահամու հաւատքէն ալ շատ վեր էր: Իրաւ՝ դժար էր հարիւր տարուան ծերու մը զաւակ ունենալ, բայց անհր նարին չէր. իսկ կոյս աղջկան մը զաւակ ունենալ անհնարին էր: Մէյրնալ որ Աբրահամ առջի բերանը տարակուսեցաւ, ու էտքը հաւատաց. իսկ սուրբ Կոյսը ամենեւին չխտարակուսեցաւ: Այսու ամենայնիւ թէ որ Աբրահամու հաւատքը անանկ մեծ եղաւ որ զինքը սրբեց ու արդար ըրաւ. Հասարակ Աբրահամ յասարած, եւ համարեցու նմա յարարուիւն. հապա ինչ պիտոր ըսենք սուրբ Կուսին հաւատողը վրայ. մանաւանդ երբոր իր հաւատքին երկրորդ մասն ալ մտածենք՝ որ ասանց տա-

րակուսելու հաւատաց, այսինքն իրմէն ծնանելու զաւակին որդի աստուածոյ ըլլալը: Ասոր համար էր որ ըսաւ իրեն Եղիսաբեթ. Երմի՛ք որ հասարակ յէ՛նէն էլէ՛դի իսպարո՞ւն ասացելոցս նմա ՚ի պետունէ. որ ըսէ՛է՛ երանի կուտամ քեզի, ոչ այնչափ Քրիստոսի մայր ըլլալուդ համար, որչափ ասանկ մեծ ու մարդկօրէն անհնարին բանի հաւատալուդ համար: Աս հաւատքը Քաբրիէլ հրեշտակապետին եկած առեւը չստացաւ սուրբ Կոյսը, այլ իր ընծայման տունէն ՚ի վեր ուրիշ ամեն առաքինութեանց հետ հաստատուն հաւատք ալ ունեցեր էր աստուածոյ ամեն յայտնած բաներուն, ու նոյն հաւատքը ինչուան խաչին տակն ալ անսասն պահեց, երբոր առաքեալներն ալ սասաներ էին:

Մ Ա Ս Ն Գ.

Հաւատքն որ հիմն է ամենայն առաքինութեանց՝ ասանկ հաստատուն գնեւէն էտքը, սուրբ Կոյսը անոր վրայ հաստատեց իր ամեն ուրիշ առաքինութիւններն ալ. ու ամենէն առաջ աստուածոյ սէրը՝ որուն համար կրնայ ըսուիլ ինչ որ Քրիստոս տէրն մեր իր երկնաւոր Հօրը մարդաւորութեանը համար ըսաւ. Այնպէս պիւրեաց ասարած պաշտարհ, մինչև արդէն իւր միածին էս: Վասն զի սուրբ աստուածածինն ալ անանկ սիրեց զաստուած, ինչուան Աբրահամու պէս իր որդին միածին տուաւ աստուածոյ. բայց Աբրահամէն աւելի արգիւնքով, որովհետև Քրիստոս իր որդին միայն էր: Աբրահամու նուիրածը օրինակ էր Քրիստոսի, իսկ սուրբ Կուսին նուիրածը բուն իսկ Ճմարտութիւն: Իսկ իրեն խոնարհութիւնը այնչափ գերազանց էր քան զամեն սրբոյը, որ-

չափ որ ինքը քան զամեն սուրբ գեր ՚ի վերայ էր: Գրեատոսի մայր ըլլալով՝ ամենուն երկնի և երկրի Թագուհի սկստոր ըլլար, ու ինքը զինքը ազատին ըրաւ: Մեծ բան չէ որ մեղի պէս ողորմելի մարդիկը խոնարհուած իւն ընեն. սուրբ Կուսին, որ վերջի ծայրը հասած էր մեծութեան՝ ուր որ արարած մը կրնայ համնիլ, այսու ամենայնիւ խոնարհ ըլլալը՝ խելքէ մտքէ վեր առաքինութիւն մըն է:

Աս գլխաւոր առաքինութիւններէն՝ որոնք արմատ են ուրիշ ամեն առաքինութեանց, կրնանք իմանալ որ աստիճան սրբութեան հասեր էր սուրբ Կոյսը՝ այն տասնըմէկ տարուան մէջն որ տաճարը անցուց, իր կենաց ծաղիկը. այն հասակն որ մենք զբօսանքով կ'անցնենք, այն հասակն որ մենք առաքինութեան հասակ չենք սեպեր, այն հասակը՝ որուն վրայ ետքը կը ցաւինք ու կըսենք առ աստուած. Չմեղս մանկութեան իմոյ և պանդխտութեան մ' յիշեր:

Ա. Գ. Թ. Բ

Ո՛վ մայր աստուծոյ, այն շնորհացը համար՝ որով զքեզ ընծայեցիր աստուծոյ բողբոլին, բարեխօս եղիր ինձի համար՝ որ գոնէ ասկեց ետքը ես ալ զիս բողբոլին իրեն ընծայեմ, իր կամքէն դուրս բան չի փնտռեմ. դուն ինձի առաջնորդէ մայր բարեգութ, ես զիս քու ձեռքդ դրեր եմ:

Առ քեզ ապաւինիմք ամենասրբուհի, գերագոյն և հրաշալի և բաշխող բարութեանց, աղբիւր ես ծարաւեաց և հանգիստ աշխատելոց, և եղեր վերընկալ աստուածային բանին:

Մ Տ Ա Մ Ա Կ Ա Ն Դ .

Սուրբ աստուածամեայ աւետմանը վրայ:

Մ Ա Ս Ն Ա .

Աստուած հրեշտակ մը խրկեց երկնքէն, չէ թէ հասարակ հրեշտակ՝ այլ զգլխաւորներէն մէկը, այսինքն Գաբրիէլ հրեշտակապետը, մէկ աղբատ՝ բայց անմեղ աղջկան մը: Խրկելուն վախճանը մեծ բան էր, այսինքն իր որդւոյն մարդ ըլլալ ու աշխարհս փրկելը: Երեւակայեցք ամենասուրբ Երրորդութիւնը, որ չէ թէ ինչպէս մարդս ստեղծելու ատեն ըսաւ՝ Սրբապետ մարդ ըստ պապիւնի մերոմ, այլ կըսէ՝ Մարդ մը ընենք որ աստուած ըլլայ, երկիրը երկնքի հետ հաշտեցնէ, մարդն որ կործանած է անկանգնելի՝ ոտքի վրայ կեցնէ, ու ինչուան երկինք հանէ, և արժանի ընէ Աստուծոյ գլուխ քաշած հրեշտակներուն աեղը բռնելու: Մարդարէններուն բերնովը ըրած խոստմունքնիս կատարենք, խրկենք Մեսիան՝ որուն այսչափ ատենէ ՚ի վեր կը սպասեն կոր վախճանած նահապետներուն ու արդարոյ հոգիքը: Աս խելքէ մտքէ վեր մարդասիրութեան հրաշքը ասանկ որոշելէն ետքը, Հայրն ամենակալ իր որդին տուաւ մեզի:

Որդին աստուած յանձն առաւ զմեզ փրկելը։  
Հոգին սուրբ աստուած ալ իր վրայ առաւ աս  
մեծ խորհուրդը կատարելը։

Գաբրիէլ հրեշտակը խրհուեցաւ չէ թէ մեծա-  
մեծ քաղքըներ, չէ թէ փառաւոր պալատներ  
կամ թագաւորներու արքունիք, չէ թէ ծիրա-  
նեաց մէջ ծնած աղջկան մը, այլ Քալիլեայի պղտի  
քաղքըներէն մէկը, հիւսան մը հետ նշանած աղջ-  
կան մը։ Ետ նշանաւոր ու մեծամեծ առաքինի  
տիկնայք կը յիշուին սուրբ զրոյց մէջ, ինչպէս  
Սառա, Յուզիթ, Սննա և այլք։ Բայց անոնց և  
ոչ մէկը ընտրեց աստուած աս մեծ խորհուրդը  
կատարելու համար։ օրինակ միայն եղան աս-  
տուածամօրը, բայց իրօք աստուածամայր աս  
խեղճ ու աննշան աղջիկը ընտրուած էր աս-  
տուածմէ։ Սնոր խրհեց աստուած իր դետապա-  
նը, անոր ձեռքովը ուղեց ընել աս մեծ հրաշ-  
քը, անոր հաւանութիւնն ալ ուղեց՝ իրբև թէ  
հարկաւոր ըլլար։ Ուրեմն աստուածոյ առջին բնու-  
թեան ուրիշ կատարելութիւնները ոչինչ են.  
միայն անմեղութիւնը խոնարհութիւնը ու մա-  
քրութիւնը, որոնց մէջ գերազանցեր էր Մարիամ  
զամենքը, աւելի աստուածածնածոյ ըրին զինքը։  
Մարիամ ոչ աստուածոյ խորհուրդը գիտէր, և ոչ  
առաջուց իմացեր էր՝ որ հրեշտակ պիտոր երև-  
նայ իրեն։ Չաքարիա նոյն հրեշտակապետը տես-  
նելէն անանկ շփոթեր էր որ ըսածն ալ չի գիտցաւ.  
Իսկ Մարիամ անանկ անշփոթ կերպով ընդունե-  
ցաւ, ու անանկ պատասխաններ տուաւ հրեշ-  
տակապետին՝ որ երկինք ու երկիր զարմացուց։

ՄԱՍՆ Բ.

Ետն հրեշտակը յարգութեամբ բարև տուաւ  
իրեն. Ե- էնէաւ առ նա հրեշտակն ասէ՝ ուրախ էր բեր-  
նէալ, քեր ընդ քեզ։ Սյո ինքն՝ ուրախացիր, աս-  
տուած քու հետդ է, ինքն է ամեն բանի մէջ  
քեզի առաջնորդողը։ Մարիամ ասանկ գովեսա-  
ներ որ լսեց, հրեշտակապետին միտքը չիհաս-  
կընալով լուռ կեցաւ. մէկ կողմանէ իր խոնար-  
հութիւնը զինքը արժանի չէր սեպեր ան գո-  
վեսաներուն, մէկալ կողմանէ ալ իր համեստու-  
թիւնը ամեն բանէ կը վախնար, ամեն բանէ կը  
զգուշանար։ Հրեշտակը տեսնելով Մարիամու  
մամտութիւնը՝ յայտնեց ան կերպով բարեւելուն պատ-  
ճառը, իմացուց մարդկութեան խորհուրդը՝ որ  
ինքը պիտոր ըլլար Քրիստոսի մայր, ու ըսաւ.  
Մէ երկուէր Մարիամ, դի գպեր շորհս յասպածոյ. և  
անա յղասլիք և ծնցես որդի, և իուէսցես զանոս նորա  
Յիսուս։ Ինչ մեծութիւն, ինչ փառք, որդւոյն  
աստուածոյ մայր ըլլալ ամեն կանայք անոր կը  
սպասէին, ամենքը ան կը բաղձային որ աստուածոյ  
մայր ըլլան. բայց Մարիամ մէկէն չիհաւանեցաւ.  
Իմացաւ բարեւին միտքը, խօսել սխաւ հրեշտա-  
կին հետ՝ միայն իր զժուարութիւնները ու տա-  
րակոյտը անոր առջին գնելու համար։ Մարիամ  
իր մաքրութիւնը աստուածոյ նուիրեր էր, ամեն  
փառք պատիւ ու աստուածոյ մայր ըլլալն ալ չէր  
ուզեր փոխել իր կուսութեանը հետ՝ որն որ խոս-  
տացեր էր աստուածոյ, անոր համար ըսաւ. Չիտր  
լինիցի ինչ այդ, անուի դայր ու գիտիմ։ Սո խօսքին  
զօրութիւնն է, որ անկէց ինչուան հիմայ այսչափ

անթիւ կուսանք Քրիստոսի հարս ըրաւ ու կրնէ կոր, ու ասոր համար սուրբ աստուածածինը կրտուի Թագուհի կուսանայ:

### Մ Ա Ս Ն Գ .

Սուրբ աստուածածնայ սրտին բաղձանքը աստուծոյ սահմանածին հետ մէկ էր. ինքը կը կարծէր որ կուսուծիւնը աստուածամայրու թեան հետ չի կրնար մէկ տեղ ըլլալ, բայց աստուած սահմաներ էր որ իր որդին կոյս մօրմէ ծնանի. այն բանն որ Մարիամ գծուարու թիւն կը սեպէր, անիկայ էր որ զինքը արժանի ըրաւ աստուածամայրու թեան: Չիտարակուսեցաւ հրեշտակապետին ըսածներուն վրայ. անոնց հաւատալու համար հրաշք չուզէց Չաքարիային պէս. Չըսաւ՝ Եւ ինչ Գիպոցից դայր: Ամեն ըսածներուն հաւտաց. բայց իր տարակոյտը անանի բնական ու օրինաւոր տարակոյս մըն էր, որ հրեշտակը իրաւունք տալով իրեն՝ հասկըցուց ինչ կերպով առանց իր կուսուծեանը զնա մը հասնելու, մայր պիտոր ըլլար: Ան ատենը մէկէն սուրբ Աստուածածինը իր հաւանութիւնը տուաւ՝ ըսելով. Եղիցի Ինչ ըսի Բանի քոմ: Ան վայրկեանը Որդին աստուած մարդ եղաւ, մարդը աստուած եղաւ, նոյն անձը աստուած և մարդ. աստուածային բնութեամբը ՚ի ծոց Հօր, և մարդկային բնութեամբը ՚ի ծոց Կուսին: Հասաւ ան ատենն որ աստուած աշխրբբիս սկիզբէն ՚ի վեր խօստացեր էր. մարդիկ իրենց փրկիչը ունեցան իրենց պէս մարդ, բայց նոյն մարդը ճմարիտ որդի աստուծոյ էր՝ որ այն վայր կենէն զինքը նուիրեց՝ իր Հօրը ամեն կամքը կատարելու, ինչուան Աղամայր ու անոր որդւոցը համար արուած պատիժն ալ քաշելու, ու խա-

չին վրայ մեանելու: Ան ատենը սխաւ աշխարհս սալ աստուծոյ իրեն արժանի և իրեն հաւասար պատիւ. ան ատենը Մարիամ՝ որ աստուծոյ ազգական էր, աստուծոյ մայր եղաւ՝ ճմարտապէս աստուածածին, վասն զի իրօք իր արիւնէն գոյացաւ որդւոյն աստուծոյ մարմինը:

### Ա, Դ, Թ, Բ

Ո՛վ մայր աստուծոյ և մեր, Թագուհի հրեշտակաց և մարդկան, արդեօք այն վայրկենին որ ՂՔրիստոս յղացար՝ ինչպէս լուսաւորուեցաւ միաբո, ինչպէս սիրով վառուեցաւ սիրադ, ինչ շնորքներու արժանի եղաւ հոգիդ: Աս անպատմելի երջանկութիւնը, աս մեծ պատիւն որ զքեզ աստուծոյ հետ միացնելով բարձրացուց ամեն արարածներէն վեր, քու խոնարհութեանդ համար սուաւ քեզի աստուած, քու մաքրութեանդ համար, քու հաւատքիդ ու հնազանդութեանդ: Ո՛հ, սրչափ հեռու եմ ես ատ քու առաքինութիւններէդ. մայր աստուծոյ, ընդունէ ինձի համար Աստուծմէ շնորհք՝ որ քու առաքինութեանցդ հետեւիմ, որ իմ սրտիս մէջն ալ բնակի Քրիստոս. որպէս զի իրմով ու իրեն համար պարիմ, ու կենդանի ըլլամ՝ չէ թէ ես, այլ Քրիստոս սրտիս մէջը կենդանի ըլլայ:

Որ հրեշտակին աւեաօք խորհրդաղբած եղբ մարմնաւորութեան որդւոյ քո Քրիստոսի, ազաւ չեմք զքեզ ակեր, ապբերացուցես զշորհս քո ՚ի սիրտս մեր, որպէս զի արժանաւորք եղցուք փրկադործ չարչարանօք և խաչիւ նորա ժամանել՝ ՚ի փառս յարութեան Քրիստոսի. Յիսուսիւ տերամք մերով ամէն:

Որ զհրեշտակին զձայնն լուեալ՝ հիացեալ բերկրեցար, բարեխօսեա վասն մեր, մեք օրհնաբանեմք զօրհնեալք ՚ի կանայս:



### ՄՏԱԾԱԿԱՆ Ե.

Մտքը աստուածածնայ այցելութեանը վրայ:

### ՄՍՍՆ Ա.

Մարիամ այցելութեան գնաց Եղիսաբեթի, չէ թէ հրեշտակին խօսքը ստուգելու համար՝ որ արդեօք իրաւացնէ ամուլ պառաւը մայր ըլլոր պիտոր. վասն զի իր հաւատքը կատարեալ էր, չէր տարահուսեր հրեշտակին ըսածին վրայ: Այցելութեան գնաց՝ չէ թէ իր վրայ եղած հրաշքը անոր իմացնելու, վասն զի և ոչ սուրբ Յովսէփին իմացուցեր էր: Այլ գնաց հնազանդելու համար միայն Հոգւոյն սրբոյ ազդեցութեանը, որ կուզէր Յոհաննէս Մկրտիչը գէս չիծնած սուրբ ընել, ան ատենէն յայտնել Քրիստոսի զբուծութիւնը, ու թէ մէկին և թէ մէկալին մայրը նոր շնորհներով զարգարեալ:

Մարիամ ու Եղիսաբեթ իրարու ազգական էին, երկուքն ալ հրաշքով մայր եղած՝ թէ և իբարմէ բոլորովն տարբեր կերպով, մէկը Քրիստոսի մայր, մէկալը անոր կարապետին: Եղիսաբեթ պառուած էր, ու վեց ամսուան ծոցուոր, կարօտ էր անձի մը՝ որ սրտանց օգնէր իրեն, ու

զինքը մխիթարէր. վասն զի Չաբարիային, ճերուծեմէն ՚ի զառ, լեզուն ալ բանուեր էր. անոր համար սուրբ աստուածածնինը գնաց իրեն. եղբայր սիրութեան համար ելաւ անէն, չէ թէ տեսնելու ու անտեսելու համար: Իր խոնարհութիւնը չի թողուց մաքէն անցնել որ Քրիստոսի մայր էր, չէր վայելէր իրեն որ Եղիսաբեթի օտքը երթայ. իր անչափ արժանապատուութիւնը՝ չիփոխեց աւմենէին իր պարզ կերպը: Աչ ճամբուն գծուաւ ըստութիւնը նայեցաւ, ոչ իր ակարութիւնը. բան մը իրեն արդէլք չեղաւ, և ոչ ուշացուց իր ճամբորդութիւնը. Գնաց ՚ի Լեռնախորհն քաղաքէս:

### ՄՍՍՆ Բ.

Իսկ երբոր հասաւ Եղիսաբեթին տունը, նախ ինքը բարև տուաւ. Եմար ՚ի գոռն Չաբարիայ, և էր ողջոյն Եղիսաբեթի. անանկ ողջոյն մը, որ Եղիսաբեթ լսածին պէս՝ զաւակը ներսէն երկրպագութիւն ըրաւ Քրիստոսի. ու ինքն ալ Հոգւով սրբով լեցուած՝ ճանչցաւ սուրբ Աստուածածնայ եղածը, ու ըսաւ. Օրհնեալ էս դու ՚ի անայս, և օրհնեալ է պարզ արձայնի գո: Վասն զի սուրբ աստուածածնայ բարև տուած ատենը՝ Յիսուս սկսաւ ամենէն առջի հրաշքը Յոհաննէս Մկրտչին վրայ ընելու, սրբելով զինքը յորովայնէ մօր՝ ինչպէս հրեշտակը խոստացեր էր Չաբարիայի. զինքը ճանչցուց աւար, ու անով մօրը, անանկ որ Յոհաննէս Մկրտիչ գէս չիծնած՝ իր պաշտօնը սկսաւ ընել, Քրիստոսի սով ըլլալը քարոզելով իր մօրը բերնով. Եմար ՚ի էնչ այս դէ եկեացէ մայր պէտան իմոյ առ իս:

Աւրեմն Եղիսաբեթի ըրած արօթքը միշտ բերաննիս ըլլայ. Օրհնեալ էս դու ՚ի անայս, և օրհ

նէաւ է պարու որովայնի քո որպէս զի սուրբ աստուածածինը մեզի համար ալ պէտք եղած շնորքները ընդունի իր միածին զաւկին: Սնոր համար սուրբ եկեղեցին գրեթէ՝ առտու կէսօր իրիկուն բարեկէլ սուրբ աստուածածինը, իրէք իրէք անգամ կը բինելով հրեշտակապետին ու Յղիսարէթի խօսքերը, ու խնդրէլ իրմէն որ մեզի համար միշտ՝ ու մանաւանդ մեր մահուանը ատենը բարեխօս ըլլայ: Աս է Հրեշտակ պետան ըսուած ազօթքը:

**Մ Ա Ս Ն Գ .**

Յղիսարէթի խօսքերուն պատասխան սուրբ աստուածածինը ասուաւ Մէծադոցանցէ երգը, որով ինքը զինքը անարժան սեպելով՝ ամեն բարիք աստուածմէ կը ճանչնայ, աստուածմէ՝ ի զաս ամեն բան ոչինչ կը սեպէ: Ետքը կը մարգարէանայ որ ամենքը իրեն երանի պիտոր ասն ինչուան աշխրբքիս վերջը: Աս մարգարեութիւնը ամեն օր կատարուելու հետ է. սուրբ եկեղեցին միշտ երանի կուտայ սուրբ աստուածածնայ ըսելով. Ազգի և ազնի գեղ մեծադոցանիմէ. Քիւն երանեն ամենայն ազնիք. Երանելիք ամենեցուն՝ պարտաւոր քանիւն զբնութեամբ անպատելի, զամենեցունց ամենախաւս արժանի եղեր էրէլ յորովայնի: Սուրբ աստուածածինը չուրանար իրեն եղած շնորքը, կը ճանչնայ օր մեծ բան է իրեն եղածը. Արար ըդ իս մեծամեծս հոգին: Բայց բոլորն ալ աստուծոյ ողորմութիւնը կը սեպէ. Զի հայեցաս՝ ի խոնարհութիւն աղախնայ իւրոյ: Ըսել կուզէ որ՝ Ինծի եղած շնորքը բոլորովին աստուծոյ ողորմութիւնն է. իմ բոլոր փառքս ու մեծութիւնս ան է որ՝ աստուած իմ խեղճութեանս նայելով ողորմեցաւ, ու իր ամենակարող զըրու-

թեամբը ինծի պէս խեղճ՝ աղախինը ամենուն էրանելի ըրաւ: Ասկէց առիթ առնելով սուրբ աստուածածինը կը փառաբանէ աստուծոյ կարողութիւնն ու զօրութիւնը՝ որ իր ամեն գործոցը հիմունքն են, մանաւանդ աշխրբիս փրկութեանը: Որոնք որ չեն հաւատար աստուծոյ ըրած ասանկ մեծ ողորմութեանը, անոնց կործանումը կը յայանէ. իսկ որոնք որ կը հաւտան, անոնք կը սեպէ բուն Սրբահամու զաւկները՝ որոնց վրայ կը կատարէ աստուած իր ըրած խոստմանը. Բրդէս խօնեցաս սպարաւծ Սրբախմուս և պատիկ նորս յառիպէան: Այսինքն Քրիստոսի եկեղեցին տեւ պիտոր մինչև աշխրբիս ետքը, ու աստուած պիտոր պաշտպանէ զանիկայ ամեն հալածանքներէն, մոլորութիւններէն, ու գայթակղութիւններէն. ու միշտ ճմարիտ քրիստոնէայք չի պակսին պիտոր, աստուծոյ խոստմանը արժանաւոր ըլլալու:

**Ա Ղ Օ Թ Ք**

Սուրբ աստուածածին, քու միածին որդիդ զմեզ ալ կանչեր է իր սուրբ եկեղեցւոյ մէջ, որպէս զի խոստմանը արժանի ըլլանք: Մի թողուր որ մեր մեղքերովը զոհուինք անկէց՝ խնդրէ մեզի համար շնորք, որ հաւատքնուս վրայ հաստատուն կենանք, ու անոր համեմատ ըլլայ վարքերնիս ալ. որպէս զի իր ողորմութիւնը մեր վրայէն չի պակսի, ինչպէս յոյսերնիս իր վրայ գրեթէ ենք. Եւ ինչ որ ըրանութիւն քո պէր ի վրայ մեր, որպէս յասացաք ի քեզ:

Ընդ ժամանակ ձայնի ողբունին Մարիամու առ Յղիսարէթ՝ խայտացեր ձայնդ ընդ առաջ Բանին աստուծոյ, յորովայնէ ամբողջ երկրպագելով, առ Քրիստոս բարեխօսես վասն անձանց մերոց:

# ՄՏԱԾԱԿԱՆ Զ.

Քրիստոսի ծննդեան փայլ:

## ՄԱՍՆ Ա.

Սուրբ աստուածածին Նազարեթ քաղաքը իր առևեր կը բնակէր, ծննդեան օրերն ալ մօտեցեր էր, ամենևին մաքէն չէր անցներ ան քաղաքէն ելլելու բայց աստուած մարգարէին բերնովը ըսած էր որ Քրիստոս Բեթղէճէմ քաղաքը՝ այրի մը մէջ պիտոր ծնանէր. Ընչպէս կրնար կատարուիլ աս մարգարէութիւնը: Սուրբ աստուածածինը աղքատ հիւսան մը կնիկ կը սեպուէր, բայց պէտք էր որ իր զաւակը բոլոր աշխարհի շանչուէր իբրև Մեսիա, ու իբրև Իսաթի արքունի ցեղէն. Ընչպէս կրնար ըլլալ աս բանս: Օգոստոս կայսեր հրովարտակը ծառայեցուց աստուած աս ամեն մարգարէութեանց կատարուելուն. կայսրը ուրիշ բանի համար չի հանեց աս հրովարտակը, բայց իր իշխանութիւնն ու հարստութիւնը դիտարարելու համար. բայց աշխարհի վրայ բան մը չիկայ որ աստուծոյ ձեռքին աակը չըլլայ, ու աստուած ան բանը իր փառքը յայտնելու չի ծառայեցընէ, կայսեր հրովարտակին հնազանդելու համար

պէտք էր որ սուրբ աստուածածինը Բեթղէճէմ էրթայ. ու ճամբորդներուն շատութենէն բնակելու տեղ մը չի գտնելով՝ այրի մը մէջ քաշուի, ու հոն ծնանի Քրիստոս: Մարգարէութիւնը կատարուեցաւ, ու հասարակաց արձանագրութեան մէջ վաւերական կերպով գրուեցաւ Քրիստոսի ծննդեան ատենը՝ տեղը՝ ու ցեղը, որպէս զի ամենքը կարենան գիտնալ: Մարգարէն մտածողին աս ամեն բան դիպուած կերէնայ. բայց աստուծոյ առջին դիպուած չիկայ. ամեն բան իր կամոյցը կը ծառայէ, Օգոստոսի փառասիրութիւնն ալ, սուրբ աստուածածնայ ու սուրբ Յովսեփայ խոնարհութիւնն ու հպատակութիւնն ալ: Յովսեփ ու Մարիամ կայսեր հրամանին կը հնազանդին. ոչ ճամբուն զժուարութիւնը, ոչ ձմեռնային եղանակին խստութիւնը, ոչ հրամայողին հեթանոս ըլլալը, և ոչ իրենց կարգէ դուրս պարագաներու մէջ ըլլալը՝ արդէք չեն ըլլար իրենց ճամբորդութեանը: Կը հասնին Բեթղէճէմ, ու հոն հանգչելու տեղ՝ հարկ կըլլայ որ աւելի յոգնին բնակութիւն մը գտնելու, ու չեն գտնար. քաղթին ամեն գին կը պարտին, կաղաչեն կը խնդրեն, ամեն բան անօգուտ: Գիշերը՝ ցուրտը՝ օտարականաց բաղմութիւնը աւելի տագնապի մէջ կը ձգեն զիրենք. վերջապէս կը հարկաւորին երեսի վրայ մտացած այր մը մանե՛լ՝ գիշերը հոն անցընելու համար: Բայց աստուած հոն զիրենք արժանի կրնէ տեսնելու որդին աստուծոյ մանկացեալ. հոն սուրբ աստուածածինը, Երկանց Եւայի բարձօղը, առանց ցառոց ու առանց իր կուսութեանը լիսա մը ըլլալու՝ աշխարհ կը բերէ զՔրիստոս, լաթերու մէջ կը պատէ, ու կենդանիներուն խոս ուտելու ամանին մէջ կը հանդէսեցընէ. Եւ պարեայ ընա՛ ի խոնարհութիւն, և երբ ի մտոս:

Մ Ս Ս Ն Բ.

Արգեօք ինչ հաւատքով, ինչ սիրով, ինչ ջերմեանդուծեամբ սուրբ Յովնէփ և սուրբ աստուածածինը ամենէն առաջ իրենց երկրպագութիւնը ըրին Քրիստոսի: Ինչ խելքէ մօքէ վեր բան. Որգին աստուած տղայ եղած, մեզի նման մարմին առած. անսկիզբն աստուած օրուան մը եղած, ամենակարողը ակար մանուկ մը եղած, իր ամեն փառքը ծածկած, Եսայի մարգարէին ըսածին պէս՝ Արարած ծածկէաւ: Բայց որչափ ալ ծածկուած ըլլաս տէր իմ, սուրբ հաւատքը ինծի ըզքեզ կը յայանէ ով ըլլալդ, ու բոլորով սրտիւ երկրպագութիւն կընեմ քեզի. կը ճանչնամ որ զմեզ փրկելու համար ասանկ աղքատութեամբ ծներ, ու խոտի վրայ մուրի մէջ պառկեր ես՝ աշխրբիս ստեղծողը ըլլալով ու երկին և երկրի տէր: Վասն զի դու ես ճշմարիտ դառն աստուածոյ՝ որ մեր մեղքերը քաւելու համար խաչին վրայ դո՛հ պիտոր ըլլաս. անոր համար հիմակուց մեզի համար քու փափուկ մարմինդ ցրտէն ու խոտին արդուծեմէն կը շարքարուի կոր:

Քրիստոս տէրն մեր մուրիին մէջէն մեզի օրինակ սկսաւ տալ ան ամեն աւաքնութիւններուն՝ որոնք էաքը բերնով մեզի սորվեցուց, այսինքն ճշնազանդութեան, խոնարհութեան, համբերութեան, աղքատութեան ու մահացուցման: Այլի մը մէջ ծնաւ, ան ալ իրը չէր. աս այրն ու մուրը

առանց լեզու ունենալու բարձրաձայն մեզի կը քարօղէն՝ արհամարհել ինչ որ աշխարհ մեծ բան կը սեպէ, ու մեծ բան սեպել ինչ որ աշխարհ կարհամարհէ: Բայց Քրիստոս առ նեղութիւնները կրեց, չէ թէ միայն մեզի սորվեցնելու համար՝ որ մենք ալ սիրով աշխրբիս նեղութիւնները կրենք, այլ և զմեզ ազատելու համար՝ աշխրբիս ու սատանային դերութեանէն: Այլի մը մէջ ծնաւ, որպէս զի մեզի արքայութեան դուռը բանայ, խոնարհեցաւ, որպէս զի զմեզ երկինքը հանէ. տեղ չեղաւ բնակելու, որպէս զի մենք յաւիտեան երկինքը բնակինք. ակար եղաւ, որպէս զի զմեզ աշխրբիս ու սատանային դէմ զօրացնէ. աղքատ եղաւ, որպէս զի զմեզ հարստացնէ: Վասն յէր առհասարակ ուր մեծապառն էր, զի դո՛հ նոքա առհասարակեմէն մեծաւիք:

Մ Ս Ս Ն Գ.

Քրիստոս տէրն մեր ամենէն առաջ հովիւները կանչեց իրեն, ցուցնելու համար որ ամենեւին մէկէ մը չեքաշուիր, ամենքը կընդունի: Մէյմն ալ որ հովիւները իրենց ոչխարները հողալու հեա ըլլալով, աշխատաւոր ու անմեղ կեանք մը կանցնէին. անոր համար ալ ամենէն առաջ արժանի եղան Քրիստոս ճանչնալու, արժանի եղան որ հրեշտակ երևնայ իրենց՝ Քրիստոսի ծնունդը աւետելու, արժանի եղան հրեշտակներուն քոռո՛քի բարձունս երգելը լսելու: Հովիւները պարզամիտ մարդիկ էին, աստուած ալ պարզամիտ հաւատք կուղէ. անոր համար երբոր հրեշտակը աւետեց իրենց ըսելով՝ Ծնաւ յէր իբիւ, ամենեւին չխաբարաւ

կուռեցան, մէկէն զնոցին երկրպագութիւն ընե-  
լու Քրիստոսի: Ոչ իրեն աղքատութիւնը և ոչ  
իրեն օկարութիւնը արգելք եղան իրենց հա-  
ւատքին. ոչ լոյս մը տեսան Յիսուսին վրայ, և ոչ  
ուրիշ նշան մը՝ որ աստուած ըլլալը իմանան.  
Հրեշտակին խօսքը բաւական եղան իրենց: Հա-  
ւատքի բաներու խելք հասցընել չըլլար. երբոր  
աստուած է ըսողը՝ բաւական է, միամիտ հա-  
ւատք պիտի ունենանք: Երջանիկ եղան հովիւները  
իրենց հաւատքովը, բայց անոնց հաւատքէն ե-  
ւել արդիւնաւոր կըլլայ մերը՝ թէ որ սուրբ հա-  
ղորդութեան հաւատքով երկրպագութիւն ընենք.  
անոնք զոնէ մանուկ մը տեսան մարդ մէջ, մենք  
հացէն ուրիշ բան չենք տեսնար սուրբ սեղանին  
վրայ: Աւ թէ որ անոնք երջանիկ եղան Քրիստոս  
տեսնելով ու իրեն երկրպագութիւն ընելով, իսկ  
մենք անոնցմէ երջանիկ ենք որ զինքը սրտերնուս  
մէջ կընդունինք: Կիմենք ուրեմն ստեպ առ սուրբ  
սեղանը՝ ինչպէս որ հովիւները մէկէն իր սաքը  
գնացին. Եւ ելին Ժոնանալի, և գոբին ղմանուին եղեալ  
ի Տոբար:

Ա. Դ. Օ Թ Ք

Յիսուս փրկիչ իմ, շնորք ասուր ինձի՝ որ քեզի  
նայելով, մտուրի մէջ ծնանելդ մտածելով, խո-  
նարհիմ ու զոնէ սրտանց աղքատ ըլլամ: Գուն  
աղքատ ծնար որպէս զի զիս երկինքը հարստացը-  
նես: Գուն ինձար երկինքէն, որ զիս հոն հանես.  
Գուն բնակելու տեղ մը չիգտար Բեթղէհէմի մէջ,  
որպէս զի ինձի յաւիտենական բնակութիւն պա-  
տրաստես երկինքը: Կը ճանչնամ ինձի համար Ը-  
րածդ, գոհութիւն կուտամ քեզի, մի թողուր որ

զրկուիմ առ բնակութենէն. օգնէ ինձի որ պան-  
դուխտի պէս կենամ երկրիս վրայ, աչքս մշտ  
հոն ըլլալով որպէս զի օր մը հոն հասնիմ, ու  
զքեզ օրհնեմ յաւիտեան:

Սա քեզ պաղատիմք, էակից Հօր Որդի, որ  
այսօր ՚ի մտուր եդար, և ՚ի հրեշտակաց պատուե-  
ցար աստուած և մարդ, ողորմեա մեզ:

աստուած է՝ որն որ Թ՛ումնս առաքելալն ըսաւ .  
Այդ զի պէտքեր զիս և հասարակներ, երանի՛ որոյ էին  
պէտեալ և հասարակն :

### ՄՏԱ.ԾԱ.ԿԱ.Ն Ի.

Նորեկ Քրիստոսի ձեկցեալն զրայ :

ՄԱՍՆ Բ.

### ՄԱՍՆ Ա.

Այս օրերս սուրբ եկեղեցին շարունակ զմեզ կը  
հրաւիրէ, Բեթղէհէմի քարայրը երթալ մաքով,  
ու հոն հովիւներուն ու սուրբ մոգերուն հետ  
երկրպագութիւն ընել նորածին մանկան մը, ու  
հաւատալ որ այն նորածին մանուկը որդի աստու-  
ծոյ է, աստուած է, բոլոր աշխրբքիս սակզծօն  
է : Մեր ըրած հանգեսներն ալ անոր համար է .  
աս երկրպագութիւնը ընելու, ու աս դաւանու-  
թիւնը տալու համար : Ո՛հ, թէ որ մեզի համար  
ալ երկինքը բացուէր, հրեշտակները վար թա-  
փէին, ասաղ մը իջնոր երկինքէն ու մեզի առաջ  
նորդեր ինչուան Բեթղէհէմի այրը, որչափ ասելի  
հաւատքով ու մխիթարութեամբ կընէինք աս մեր  
երկրպագութիւնն ու դաւանութիւնը : Բայց թէ  
որ աս մխիթարութիւնը չունինք, սակէց մեծը  
ունինք . այս ինքն այն՝ որ մեր հաւատքը հովի-  
ւներուն հաւատքէն ալ սուրբ մոգերուն ունեցած  
հաւատքէն ալ շատ աւելի արգիւնաւոր է : Աս  
առաւելութիւնը Քրիստոսի խօսքին վրայ հաս-

Մեր աս հաւատքը աստուծոյ առջին շատ ար-  
դիւնաւոր ըլլալուն պատճառն աս է որ՝ ասով  
մեր ամենէն մեծ բանը աստուծոյ կընծայենք : Ո՛ր  
բանն է որ աստուծոյ շնորհելովը իրաւցրնէ մերն  
է . թէ որ մեծութիւն ու հարստութիւն ըսես,  
գող մը՝ ձախորդութիւն մը՝ անիրաւութիւն մը՝  
կրնայ զանոնք վերցընել մեզմէ . թէ որ կեանքը  
սես, հազար կերպով ան ալ կրնանք կորսընցընել :  
Հասալ ինչ է որ ամենեկին, ոչ անիրաւութիւն մը՝  
ոչ բռնութիւն մը՝ չիկրնար յափշտակել մեզմէ .  
մեր միտքն ու կամքն է : Այլ վկայեն այնչափ բիւ-  
րաւոր մարտիրոսներ՝ որոնք արիւննին ալ թա-  
փեցին, իրենց հաւատքն ու ան աստուած սէրը  
պահելու համար . որ է ըսել իրենց միտքն ու  
կամքը : Պօղոս առաքեալը աշխրբքիս ամեն նեղու-  
թիւններն ու չարչարանքները համբէլէն ետքը՝  
կրսէ որ՝ ոչ հրեշտակ մը, և ոչ եղած ու ըլլալու  
բաները կրնան զմեզ մեր հաւատքէն և ՚ի սիրոյն  
աստուծոյ զրկել : Անհաւատները մեր հաւատքը  
յիմարութիւն կը սեպեն, նոյն առաքեալը իր ա-  
տենէն կրսէ՝ որ Հրեաները կը գայթակղէին մեր  
հաւատքին վրայ, ու հէթանոսներն ալ խենթու-  
թիւն կը սեպէին մեր հաւատքը . բայց այսու ա-  
մենայնիւ մենք կը հաւատանք՝ որ Քրիստոս աստու-  
ծոյ զօրութիւնն ու իմաստութիւնն է, որն որ  
այրի մը մէջ ծնաւ, ու խաչի վրայ մեռաւ :

Մ Ա Ս Ն Գ .

Իրաւ՝ խելքէ մաքէ վեր խորհուրդ մըն է . Խորհուրդ մէջ եւ սխանչելի , որ յայտնաւոր յայտնեցաւ . աղքատ տղայ մը՝ խրճիթի մը մէջ տեսնել ամեն բանի կարօտ , ու հաւատալ՝ որ անիկայ որդի աստուծոյ է , ու իրմէ կը կախուի մեր յաւիտենական երանութիւնը : Բայց որչափ ալ խելքէ մաքէ վեր ըլլայ , մեզի համար հերիք է որ աստուած վկայեց՝ Դա է որդի Ի՞ ըսելով : Մեր միտքն ալ կը խոնարհեցընենք , մեր կամքն ալ աստուծոյ խօսքին դերի կընենք , ու կը հաւտանք : Աս հաւտաքն է՝ որ զմեզ փրկութեան սխոր հասցընէ , թէ որ վարքերնիս ալ՝ մեր հաւատքին համեմատ ըլլայ : Աս հաւտաքն է՝ որ կուտայ սրտերնուս այն խաղաղութիւնն որ Քրիստոսի ծննդեան ատենը հրեշտակները երկընքէն աւետեցին . աս խաղաղութիւնը աշխարքս չիկրնար տալ մեզի , ինչպէս կրսէ Քրիստոս . Չոր աշխարհս ու կարէ քաւ յեզ : Աշխարքիս ամեն բարիքը չիկրնար բաղդատուիլ աս խաղաղութեանը հետ . վասն զի ամեն բան անուշընծոյը աս սրտի խաղաղութիւնն է . աս է՝ որ զմարդ աշխարքիս վրայ ալ , որչափ որ կարելի է , երջանիկ կընէ , ու ետքը յաւիտենական երջանկութեան ալ կը հասցընէ :

Ա Ղ Օ Թ Գ

Յիսուս փրկիչ իմ , թէ և աղքատ տղու մը պէս մտուրի մը մէջ զբեղ տեսնեմ , թէ և խաչին վրայ յանցաւորի մը պէս բեւեռած , միշտ կը հաւտամ՝

որ դուն իմ տէրս ես , դուն աշխարքիս ու ամեն բանի ստեղծօղն ես : Կը հաւտամ , բայց դուն օգնէ իմ անհաւատութեանս . Օգնէա , քէր , անհաւատութեանս իմոս : Կը հաւտամ , բայց դուն ինձի շնորք տուր՝ որ հաւատքիս համեմատ ըլլայ իմ վարքս . վասն զի քու խօսքդ է որ աստուծոյ քեզի բարիք մը չենք կրնար ընել : Աստուծոյ Ի՞ ու ինչ կարէ ասնէլ :

Զի կուսէն մարմնացեալ Բանն , եկայք ժողովուրդք , ընդ հովիւսն բարեբանեսցուք , և ընդ մոգուցն երկրբազեացուք , ընդ երկնային զօրան երգեսցուք՝ վառք՝ ի բարձունս աստուծոյ :

### ՄՏԱ.ԾԱ.ԿԱՆ Ը.

Նարեկ Քրիստոսի ծննդեանը վրայ:

### ՄԱՍՆ Ա.

Քրիստոսի ծննդեան ատենը եղած պարագա-  
ներուն մէջ՝ կարևոր գիտելու բաներուն մէկը աս  
է որ, հրեշտակները ոչ թաղաւորներուն երեցան  
աւետիս տալու, ոչ իշխաններուն, և ոչ Հրեկոյ  
քահանայապետներուն՝ որ հին եկեղեցւոյ գլխա-  
ւորներն էին. այլ միամիտ ու աղքատ հովիւնե-  
րուն: Հերովդէս գրական իմացած գիտութիւնն ալ  
չարի բանեցուց, հալածելով զՔրիստոս. իսկ քա-  
հանայապետներուն փոյթներին ալ չեղաւ Քրիս-  
տոսի գալը, որն որ Հերովդէսի առջին հարկաւո-  
րեցան խոտովանելու: Մինակ հովիւներն եղան՝  
որ իմացածնուն պէս, գնացին երկրպագութիւն  
ընելու Քրիստոսի: Աս պարագային խորհուրդը  
չատ աղէկ կը հասկըցուի այն աղօթքովն որ ետքը  
Քրիստոս ատեն մեր իր քարոզութիւնը սկսած  
ատենը ըրաւ առ Հայրն երկնաւոր, փառք աս-  
լով իրեն՝ որ աշխրեխ իմաստուններն ու մեծերը  
թողուց, ու աղոց պէս միամիտներուն յայանեց  
զինքը. Գոհանամ զտէն րբէր էրին և երբի, զի Ժածիւ-  
րէր պայ յիմաստանոց և ՚ի գրպանոց, և յայանեցեր պշայոց:

Ասիկէց կիմանանք նախ որ՝ զՔրիստոս ու իր  
սուրբ հաւատքը ճանչնալու համար՝ աստուծոյ  
չնորքին կարօտ ենք, ինչպէս ետեւէն աւելի կը բա-  
ցատրէ. Ու ոչ ճանաչէ ՂՈՐԴԻ՝ ԵՔԷ ու Հայր, և ու  
ՂՀայր ոչ ճանաչէ՝ ԵՔԷ ու ՈՐԴԻ, և ու՛մ ՈՐԴԻն՝ իստի՞ն  
յայանէ: Երկրորդ՝ աս ալ կիմանանք, որ աստու-  
ծոյ չնորքին արժանի ըլլալու համար՝ հովիւնե-  
րուն պէս միամիտ պէտք է ըլլանք հաւատքի բա-  
նեցուն մէջ. ինչպէս պղտի աղաք իրենց մօրը խօս-  
քին կը հաւտան, նոյն միամտութեամբ մենք ալ  
պէտք է հաւտանք սուրբ եկեղեցւոյ՝ որ մեր  
մայրն է, ու աստուած անոր բերնովը կը սորվե-  
ցնէ մեզի հաւատքի բաները: Աս մտքով կը հաս-  
կընան սուրբ Հայր Քրիստոսի մէկ ալ խօսքն ալ  
որ կըսէ. Սէն ու Դոմէթէ + և Եւթէթ + Իբր և Կանիսի, ու  
Տրանիդէ + յարգայտութիւնն էրին: Հոս ալ Քրիստոս  
նոյն միտքը կը բացատրէ՝ ըսելով. Եւ յայանեցեր  
պայ պշայոց:

### ՄԱՍՆ Բ.

Իրաւ՝ աստուծոյ մեծ չնորքը պէտք է, որ մշտ-  
բերնիս խոնարհեցընենք, մեր մտածութիւնը  
մէկդի դնել, ու մեր խելքէն վեր բաներու հաւ-  
տալ աստուծոյ խօսքին համար, ասիկայ աստու-  
ծոյ մեծ չնորքն է: Աս հլութիւնը՝ աս կամաւոր  
միամտութիւնն որ ամենէն բարակամիտ սուրբերն  
ալ ըբեր են՝ սուրբ հաւատքին տակը ձգելով ի-  
րենք միտքը, որչափ ալ լուծ մը երկնայ մար-  
դուս, բայց անանկ խաղաղութիւն մը անանկ՝ հան-  
դիստ մը կուտայ մարդուս սրտին, որ աստուծոյ  
ծառայելը կը թեթեցընէ ու կանոնչընէ. անոր  
համար Քրիստոս ատեն մեր այն աղօթքին ետեւէն  
անմիջապէս կը յարէ. Առեւ + Դու՛ծ ի՛մ յէւ, և  
գրքէ + հանգիստ անյանոց յերոց. զի Լուծ ի՛մ Կուրբ է, և  
Բեռն ի՛մ գորգի:



Մ Ա Ս Ն Գ .

Ուրեմն փառք տանք աստուծոյ՝ որ աս շնորքը սուեր է մեզի, որ մենք ալ հովիւներուն պէս միամիտ սրտիւ կը հաւատանք, որ այն խեղճ ու աղքատ աղու մը պէս Բեթղէմի այրին մէջ ծնածը՝ երկին և երկրի տէրն է . կը հաւատանք որ ինքը դասէ պիտոր զմեզ, ու յաւիտենական երանութեան ինքը զմեզ պիտոր հասցընէ : Մենք ալ կը զարմանանք ասանկ հաւատք ունենալնուս վրայ, տեսնելով որ այնչափ գիտուններ ու խնաստաններ չեն հաւատար : Ուրեմն Քրիստոսի տուած գոհութիւնը մենք ալ տանք աստուծոյ Հօր, ու ըսենք . Փառք քեզ, տէր, որ սուրբ հաւատքն որ փիլիսոփաներէն ու գիտուններէն ծածկեցիր՝ մեզի պէս աղոյ յայանեցիր : Բայց այս մեր գոհութիւնը դործքով ալ ցուցնենք, վարքերնիս ալ մեր սուրբ հաւատքին համեմատ ընելով՝ Քրիստոսի տեսան մերոյ շնորքովը :

Ս.Ղ.Օ Թ.Կ

Յիսուս փրկիչ իմ, ինչպէս հովիւներն ու մոգերը զքեզ հասարակ աղու մը պէս տեսնելով չիտարակուսեցան քու աստուածութեանդ վրայ, ու միամիտ հաւատքով քեզի երկրպագութիւն ըրին, ասանկ ալ էս սուրբ հաղորդութեան խորհրդոյն մէջ հացէն ու գինիէն ուրիշ բան չիտեսնելով զքեզ իմ տէրս կը դաւանիմ, ու աշխրբիս արարչն ու փրկիչ . դուն զօրացուր իմ հաւատքս, դուն օգնէ իմ հաւատքիս . օգնեա անհաւատութեանս իմում :

Օրհնեցուք զառաքեալն 'ի Հօրէ, որ 'ի խանձարուրս պատեցաւ վասն մեր, և փրկեաց զմեզ յանիծիցն Ագամայ :

Մ Տ Ա Վ Ա Ն Թ .

Աստուածայայտուերեանը Վրայ :

Մ Ա Ս Ն Ա .

Աստուածայայտուութեան խորհուրդը մեծ ու սրտաշարժ խորհուրդներէն մէկն է : Քրիստոս տէրն մեր ծնածին պէս՝ ուղեց ցուցնել որ ինքը Հրէից համար միայն չէ եկած, այլ ամենուն համար . մէկ ազգի մը փրկութեան համար չէ եկած, այլ փրկիչ աշխարհի : Ուրեմն աստուածայայտուութեան ասոր մեր կոչումն է, որով Քրիստոս զմեզ կանչեց իր սուրբ եկեղեցոյն մէջ . բացաւ իր սիրտը, տարածեց թևերը զմեզ ընդունելու : Անոր համար Յօսյի մարգարէն դարերով առաջ ուրախակից կըլայ Երուսաղէմի, ու կը մարգարէանայ մոգերուն իր սաքը գալը՝ աստղի մը առաջորդութեամբ, ու ինչուան ոսկի ու կնդրուկ ընծայ բերելնին ալ . Լուսաւորեաց լուսաւորեաց Երուսաղէմ, զի հասեալ է լոյս քո, և գնացեն թագաւորս 'ի լոյս քո, և հեթանոսս 'ի ծագել լուսոյ քո . էջեցեն 'ի քեզ երամակի աղաւթս քեզի և ինքորս : Եսայի մարգարէէն ալ առաջ Բաղասամ իր չուզելովը մարգարէացեր էր որ՝ օր մը պիտոր ծագէր Յակոբայ աստղը . Ծա

գէնչէ ասպէն Յովոբայ: Աս աւանդութիւնը մնացած էր արեւելք ալ. ուստի երբոր մոգերը այն անսովոր աստղը տեսան երկնքին վրայ, աստուած մանաւոր լայս մը տուաւ իրենց՝ որ Քրիստոսի ծնած ըլլալը ճանչնան: Բայց ինչ մեծ հաւատք, ինչ բարեպաշտութիւն ունեցած պիտոր ըլլան աս իրէք իշխանաւոր անձինքն որ մեկէն ճամբայ ելան ինչուան Երուսաղէմ՝ երթալու, որպէս զի երկրպագութիւն ընեն իրեն. մանաւանդ որ ան ասենն ճամբորդութիւնները այնչափ նեղութեամբ ու վտանգներով լեցուն էր:

### ՄԱՍՆ Բ.

Չարմանք չէ Հերովդէսին պէս չար ու անգութ թագաւորին խռովիլը. երբոր լսեց որ Հրէից թագաւոր ծնէր է, մոգերէն օրինակ աւնելու ու երթալու երկրպագութիւն ընելու տեղը՝ անմեղ մանկունքը ջարդել տուաւ, որպէս զի անոնց հետ Քրիստոս ալ սպաննուի, ու իր թագաւորութեանը միաս մը չըլլայ: Աւելի Չարմանք ան է որ քահանայապետները մոգերուն ըսածը համեմատ գտնելով սուրբ գրքին տուած նշաններուն, ու տեսնելով որ անոնք հետու աշխրբէ եկեր էին երկրպագութիւն ընելու Քրիստոսի, իրենք ամենեկն տեղերնէն չիշարժեցան, հոգերնին չեղաւ Մեսիային գալը: Աս բաղգատութեամբը աղէկ կիմացուի մոգերուն բարեպաշտութիւնը ու իրենց ամբարշտութիւնը. ճանչցան Ճամբարութիւնը, ու ինչպէս իրենց պարաքն էր՝ խօսքով ու բարի օրինակով ժողովուրդը յորդորելուն տեղը որ Քրիստոսի ոտքը երթան, ան ասեննէն ցուցուցին իրենց արհամարհութիւնը, որ ետքը ատելութեան փոխուեցաւ, ու այնչափ զայրացաւ ին-

չուան զինքը խաչի վրայ սպաննեցին, ժողովուրդն ալ իրենց հետ մեղսակից ընելով:

Իսկ սուրբ մոգերը տեսնելով Հրէից ու անոնց քահանայապետներուն այնչափ անհոգութիւնը՝ որոնք իրենցմէ եւեւ պէտք էր որ ետեւ ըլլային փնտուելու զՔրիստոս, իրենց ճամբէն ետ չեկեցան: Կարելի է որ զիրենք ծագը ընօրներ ալ եղան արքունեաց ու քաղաքացւոց մէջէն, որ իրենց երկրը ու ընտանիքը ձգեր ելէր եկեր էին՝ Քրիստոս փնտուելու: Բայց աս ամեն գայթակղութիւն չեկրցաւ իրենց բարեպաշտութեանը արգէլք ըլլալ. անոր համար ալ աստուած իրենց փայթը տեսնելով, ան ասպն որ իրենց առաջնորդ տուեր էր մինչև Երուսաղէմ գալու՝ նորէն երեցուց որ իրենց առաջնորդէ ինչուան Բեթղէհէմի այրը: Աստուած իր երկիւղածները չեթողուր ձեռքէ. երբեմն քիչ մը ծածկուելու ու հետանալու պէս ալ ընէ՝ մոգերուն երեցած աստղին պէս, նորէն կերենայ իրենց, մութը չեթողուր զիրենք, աւելն կուրախացնէ ու աւելի մեծ մխիթարութիւն կուտայ իրենց. Իբրև րէսն պասպն, խնդաղի յոյժ ուրախութիւն մէջ:

### ՄԱՍՆ Գ.

Երբոր մոգերը Բեթղէհէմ հասան, իրենց ճամբայ ցուցընող աստղը ինչպէս կեցաւ այրին վրայ՝ ուր որ Քրիստոս ծնէր էր: Հոն մտան տեսան Յիսուս մանուկը սուրբ աստուածածնայ գիրկը. ոչ տեղոյն ողորմելութիւնը, ոչ Յիսուսի ու սուրբ աստուածածնայ աղքատութիւնը, իրենց հաւատքը չետկարացուց. երկրպագութիւն ըրին իրեն՝ չէ թէ միայն արքայ Հրէից զինքը ճանչնա-

լով, այլ և աստուած ու վրկիչ աշխարհի: Վասն զի Քրիստոս նայելով իրենց փոյթը ու բարեպաշտութիւնը՝ լուսաւորեց իրենց մտքը, ինչպէս որ քահանայապետներուն մտքը կուրացուց իրենց անփոյթութեան ու արհամարհութեանը համար: Մաքերնուն լուսաւորութեանը հետ՝ սրտերնին ալ Քրիստոսի սիրովը վառուեցաւ. բայցն իրենց գանձը, ու ինչ որ հետերնին բերեր էին ոսկի կընդրուկ ու զմուռ՝ ընծայեցին իրեն: Արջափ որ իրենց հաւատքն ու սէրը եւեցաւ, այնչափ ալ աստուած իր գթութիւնը իրենց վրայ եւեցուց. առաջ որ աստղի մը ձեռքով իրենց ճամբայ ցուցուցեր էր, անկէջ ետքը հրեշտակի ձեռքով իրենց առաջնորդեց. վասն զի ով որ աստուծոյ տուած շնորքը կը դործածէ, մեծագոյն շնորքի արժանի կըլլայ: Մտքերը գիտուն ու իմաստուն մարդիկ էին, անոր համար ալ մտք կը կոչուէին. բայց իրենց գիտութիւնը աղէկի բանեցընելով, աստուած ալ իրենց շնորք տուաւ որ բուն իմաստութիւնը գտնեն՝ որ է Քրիստոս ասպոստոյ զօրութեան և ասպոստոյ իմաստութեան: Յարոմ ամենայն գանձի իմաստութեան ծածկէալ կան: Աստղն որ երևցաւ իրենց՝ սուրբ հաւատքին լոյսը կը նշանակէր. աստուած մեզի աստղ չիցուցուց, բայց սուրբ հաւատքին լոյսը մեր մտքին ալ ծագեց. զմեզ ալ կանչեց մտքերուն պէս՝ որ զինքը ճանչնանք ու պաշտենք: Բայց արդեօք մենք ալ իրենց պէս կը հնազանդվի՞նք աստուծոյ. արդեօք առջի բունած ճամբանիս կը փոխենք, չէ նէ միշտ նոյն ճամբան կերթանք. արդեօք Աստուծոյ կը հնազանդվի՞նք, չէ նէ Հերովդէսին՝ այսինքն աստանային:

Ա. Դ. 0 Թ. Բ

Տէր իմ Յիսուս, կենդանացուր սրտիս մէջ իմ կոչմանն շնորքը. ան շնորքովը մտքերը սուրբ եղան, խի ես անհոգութեամբ ինչուան հիմայ անպաուզ ըրի անիկայ. ասկէջ ետքը ճանչնամ քու շնորքդ, ու դործածեմ՝ քու պատուիրանքներդ պահելով. ասկէջ ետքը իմ կենացս մէկ հատիկ կանոնը՝ քեզի հնազանդելը ըլլայ:

Այսօր յայրին ընծայեցար վրկիչ, և ՚ի մոզուցն երկրպագեցար, և հովուացն ատեսալ ասէին, դու ես դաւն աստուծոյ և որդի Հօր:

Թիւննիս ալ որ մէկը յայտնելու ըլլայ, կընեղինք՝  
փառաւորուիլ կուզենք՝ սրջափ հեռու է մեր  
բունած ճամբան Քրիստոսի ճամբէն :

### ՄՏԱԾԱԿԱՆ Ժ.

Քրիստոսի մկրտութեանը վրայ :

### ՄԱՍՆ Ա.

Քրիստոս իր մկրտուելովը ուզեց մեզի մեծ օրի-  
նակ մը ապա խոնարհուած թեանս. անոր համար ը-  
սաւ՝ Պարփ է մեւ ընու դա՛մնայն արդարութիւն. այս-  
ինքն ինչ որ աստուածաշաշուածեան գործք է,  
ինչ որ ուրիշները կը խրատենք ընելու որ արդա-  
րանան, մենք ալ պէտք է ընենք : Ուստի մեզա-  
ւորներուն հետ՝ որոնք կը մկրտուէին ու մեղքեր-  
նին կապաշխարէին, Մկրտէին ի նմանէ և խոստովան  
ւինէին դեռ իւրեանց, իբրև անոնցմէ մէկը՝ ապաշ-  
խարուածեան ջուրը ընդունեցաւ : Ինքը բողոքովն  
անմեղ՝ զինքը մեղաւորներուն կարգը գրաւ, որ-  
պէս զի մենք մեղաւոր ըլլալով՝ չամաճենք ապաշ-  
խարելու : Ինքը մեր մեղքերը իր վրան առած մկր-  
տուեցաւ, որպէս զի մենք ալ մկրտուելով՝ իր ար-  
դարութիւնն ու սրբութիւնը վզանիս անենք :  
Որք ՚ի Քրիստոս մկրտեցայք, Վրիստոս դժեշտաւ էք :  
Իսկ մենք մեր մեղքերուն ապաշխարանքն ալ  
չենք ուզեր քաշել՝ կուզենք որ ամենքը սուրբի  
տեղ գնեն զմեզ՝ յանկարծ մէկ պղտի պակտու-

### ՄԱՍՆ Բ.

Քրիստոս մկրտուելէն ետքը ազօթք ընելու ա-  
տենը երկինք բացուեցաւ, Հոգին սուրբ աղանա-  
կերպ վրան ինջաւ, ու երկնաւոր Հօրը ձայնը  
լուսեցաւ՝ Դա է որքի ի՛մ սիրելի ընդ որ հաճեցայ : Ան  
առենը Յոհաննու մկրտութիւնն որ օրինակ էր՝  
ցուցուց մեզի սուրբ մկրտութեան խորհուրդը, որ  
Քրիստոս իր մկրտուելովը՝ սկսաւ հասատել : Ան  
առենը յայտնի երեցաւ ամենասուրբ Երրորդու-  
թեան խորհուրդը՝ որուն անուամբը կը մկր-  
տուինք : Վասն զի Հայր խօսեցաւ, Որդին մկրտուե-  
ցաւ, Հոգին սուրբ մարմնաւոր սեւեւամբ աղաւ-  
նակերպ երկինքէն ինջաւ : Ահաւասիկ Քրիստոսի  
մկրտուելուն ու ըրած ազօթքին զօրութիւնը : Ե-  
ղև ընդ Յիսուսի մկրտելն և իալ յաղթն՝ բանաւ երկնից,  
և իջանէլ Հոգոսն սրբոյ մարմնաւոր պետեամբ իբրև դա-  
ւանի ՚ի վերայ նորա, և գաւ յայն յերկնից՝ Դա է որքի  
ի՛մ սիրելի, ընդ գեւ հաճեցայ : Ի՛նչ հիանալի տեսա-  
րան էր ան. շատոնց գոցուած էր երկինքը, Քրիս-  
տոս բացաւ իր հաւատացելոցը : Ինչ երջանկու-  
թիւն է մեզի անոնցմէ ըլլալնիս : Քրիստոս մեր  
զլուխն է, Հոգին սուրբը կորսնցուցեր էինք, ինքը  
երեւելի կերպով ընդունեցաւ՝ որ մեզի ալ հազոր-  
դէ : Իր Հօրը հաճութեան ձայնը բոլոր աշխարհ  
հնչեց՝ իմացընելու համար որ Քրիստոսն ՚ի զատ  
աստուծոյ արժանի բան չիկայ, ու ինչ որ աստու-  
ծոյ հաճոյ է՝ անով հաճոյ է, Յիսուսին համար  
հաճոյ կըլլանք աստուծոյ : Քրիստոսի մկրտուե-

լովն է որ մեր մկրտուելու ատենը մեզի ալ երկնքը կը բացուի, մենք ալ Հոգին սուրբ կընդունինք, մեզի ալ կը հաճի աստուած, Քրիստոսի անդամ կըլլանք, Քրիստոսի եղբայր կըլլանք, աստուածոյ որդիք ու Քրիստոսի ժառանգակից կըլլանք:

Մ Ա Ս Ն Գ.

Սուրբ մկրտութեամբ նորէն կը ծնանինք, նոր ու հոգևոր կեանք մը կընդունինք, որով աստուածոյ համար կապրինք, Քրիստոսի կենեքը՝ Հոգւոյն սրբոյ շնորքովը կապրինք. ներքին լոյս մը կընդունինք, անով է՝ որ կը հաւատանք ու կը յուսանք, անով կընանք ուղիղ ճամբան քաղել, անով կորոշենք ինչ է անսասնիս, ազընիս չխաբուելի: Այնմանեք աս կենաց կարճութիւնը, յաւիտենականութեան ինչ ըլլալը, աստուածութեան գեղեցկութիւնը, մեղքին այլանդակութիւնը, ինչ որ աստուածոյ հաճոյ՝ ինչ որ աստուածոյ անհաճոյ է: Մեր գործքերը, մեր խօսքերը, մեր մտածմունքները ան լուսովը ուղիղով՝ կուսեանանք սուրբ ու լուսաւոր կեանք մը, որդիք լուսոյ կըլլանք, մութէն կը փախչինք, լոյս կը փնտռենք, ու Քրիստոս է ան ճշմարիտ լոյսը, Ար լուսաւոր ասնէ գամենայն ճարդ՝ որ գաւոց է յաշխարհ. վասն զի ինքն է որ զմեզ կը լուսաւորէ ներքուստ իր շնորքովը, ու զըրսուանց ալ իր վարդապետութեամբը ու իր օրիւնակովը: Աս մեր հոգևոր վերածնութեանը մեջ մարմինն ու արիւնը մաս չունի, միայն սուրբ հաւատաքը ու Քրիստոսի արդիւնքն է՝ որ զմեզ աստուածոյ որդիք ու արքայութեան արժանի կընէ: Ինչ շնորք որ ունինք՝ Յիսուսէն ունինք, Զի ՚ի Լուսութեան անաբի նորա մէջ ամենէն աստուածոյ շնորհն է: Իս.

Երբովն ձրի է առածնիս, մէկ կերպով մը չէինք կրնար սոհանել: Քրիստոսի շնորքին պէս մերն ալ գերբնական ու աստուածային է, միայն աս սարբերութիւնը ունի՝ որ իրենը լուսութիւն շնորհաց է՝ անչափ և անկորուստ, իսկ մերը չափաւոր է ու կրնանք կորսընցընել. աստուած կուտայ մեզի, բայց մենք կրնանք դէմ կենալ իր շնորհացը, ու մեր մեղքովը կրնանք ընդունած շնորքին կորսընցընել: Ինչ ճշմարտութիւն ալ որ գիտենք՝ ան ալ Յիսուսէն է. աշխարհք աստուածիւն է, փիլիսոփայութիւնը ունայնութիւն, անոակ անասի փիլիսոփայից աղանդները՝ մոլորութիւն են, Սովսեպի օրէնքը՝ օրինակ ու ստուեր, Քրիստոս միայն սուաւ մեզի ճշմարտութիւն իր սուրբ խորհուրդներովը, իր վարդապետութեամբը, խոստմունքներովը: Ինչ որ իրմէ առաջ շնորք ու ճշմարտութիւն եղած է՝ ամենքն ալ իր ապագայ արդեանցը զօրութեանէն է. մենք ասանց մկրտութեան՝ առանց Քրիստոսի՝ ոչ ինչ ենք և բոլորովն թշուառութիւն:

Ա Ղ Օ Թ Բ

Յիսուս փրկիչ իմ, ափսոս որ աս շնորքը չիճանչնալով՝ ընդունելէս ետքն ալ, նորէն կորսընցուցի. բայց կը յուսամ որ քու արդեամբքդ նորէն ունեցած ըլլամ: Յիսուս փրկիչ իմ, քու այսչափ բարերարութեանդ ինչ արիտուր՝ ինչ շնորհակալութիւն կրնամ ընել. արժանի ես ամենայն սերոյ, զքեզ որ աստուած այնչափ կը սիրէ՝ որ երկընքէն ամեն աշխարհ լուսեւոր ձայնով իմացուց իր սէրը, ես ինչպէս չսիրեմ ուրիշ ո՞վ կրնամ գտնալ որ քու բարութիւնդ՝ քու մեծութիւնդ՝ քու կարողութիւնդ ունենայ, ու սրտիս արժանի ըլլայ. ուրիշ ո՞վ կընայ զիս երջանիկ ընել:

ինչպէս որ քեզմով կրնամ ըլլալ: Բարեգութ Յիսուս, միացուր զիս քեզի հետ, որ անանկ երկնաւոր Հօրդ առջևը ելեմ, զիս քեզի հետ միայն տեսնայ: Մինակ որ տեսնելու ըլլայ զիս, իր բարկութեանը արժանի կըլլամ, իսկ քեզմով ոլորմութեանը արժանի: քեզմով իրեն սիրելի կրնամ ըլլալ, ու արժանի զինքը սիրելու յաւիտեան:

Երևեցար յաշխարհի, որ իջեր 'ի Յորդանան մկրտիլ 'ի Յոհաննէ, որ զնորսն սրբեցեր՝ սրբեալ զմեզ 'ի մեղաց մերոց:

## Մ Տ Ա Ն Կ Ա Ն Ժ Ա .

Նորէն Քրիստոսի Մկրտարեանը վրայ:

## Մ Ա Ս Ն Ա .

Քրիստոս տերն մեր Յորդանան դէտին մեջ մղըրուեցաւ, մեր մկրտութեան խորհուրդը սկսաւ հաստատել, ան օրւնէ սկսաւ երկինքը մեզի համար բացուիլ: Հայր աստուած երկինքէն երևաւ ըստ իջնալով, ամենասուրբ Երրորդութեան խորհուրդը մեզի յայննցին, ինչպէս որ ետքը հրամայեց Քրիստոս իր առաքելոցը՝ որ յանուն Երրորդութեան զմեզ մկրտեն: Միքեղէս անուան շնորհ և Որդու և Հոգւոյն սրբոյ: Քրիստոսի մարմինը ջուրին դաչելով՝ անանկ զօրութիւն մը տուաւ մեր վրայէն, զմեզ որդի աստուծոյ ու ժառանգակից Քրիստոսի ընել: Անանկ որ քրիստոնեայն իրաւունք կունենայ մկրտուելով՝ որդի աստուծոյ ըլլալու: սուրբ աւետարանն է ըսողը՝ Եր նոյա իշխանութիւն որդիս աստուծոյ լինել, որոյ հասարակացն յանուն նորա: Պօղոս առաքեալն ալ նոյն բանը կը հաստատէ՝ ըսելով քրիստոնէին. Այսոսնէպէս ևս

Ժառանգ, այլ որդի. ու անկէց կը հեանցրնէ. Երբէ որդի, ապա և ժառանգ ասպարհոյ և ժառանգախից Գրիշուսոսի: Յոհաննէս առաքեալն ալ կը բացատրէ ժառանգ աստուծոյ ըլլալը ինչ ըսել է. Գրիշուսոս զի որդի է ասպարհոյ էմբ, և յորժամ նա յայտնեսցի՝ նման նման լինելոց էմբ. այսինքն աստուծոյ նման պիտոր ըլլալնը: Սուրբ Հարք ալ աս նմանութիւնը նկատած կան օրինակով մը ասանկ կը բացատրեն. երկաթը երբոր կրակին մէջ կը կարծրցընէս, որչափ ալ իր երկաթ ըլլալը չկորսնցընէր, բայց կրակէն չէս կրնար որոշեր, այնչափ կը նմանի անոր: Ասանկ է մարդուս ալ աստուծոյ նմանելը. աս է որդի աստուծոյ՝ ժառանգ աստուծոյ՝ ժառանգակիցք Գրիստոսի ըլլալնիս սուրբ մկրտութեամբ:

**Մ Ս Ս Ն Բ.**

Բայց ջրոյն աս զօրութիւնը տալու համար՝ անանկ խոնարհութիւն մը ըրաւ Գրիստոս, որ խաչին վրայ ըրածէն՝ այսինքն երկու աւաղակաց մէջ երրորդ աւաղակի մը պէս խաչուելէն ալ աւելի էր: Վասն զի հոն անդգամ քահանայապետներն ու գաղիներն էին զինքը մեղաւորի տեղ դնողները. նմանապէս ուրիշ անգամ ալ՝ անօրէն հրեաներն էին, որ ըսին. Գրիշուսոս զի այն այն մեղաւոր է. իսկ հոս ինքը զինքը մեղաւորներուն կարգը գրաւ. վասն զի մեղաւորներն էին՝ որ կերթային Յորդանան գետը մեղքերնին խոստովանելու համար, ինչպէս որ սուրբ աւետարանը կրտէ. Միգրիէն ի նմանէ ի Յորդանան գետ, և խոստովան լինելն զինքն իբրեւանց: Անոր համար ալ Հայրն երկնաւոր անանկով Գրիստոսի ըրած աս անձառելի խոնարհութիւնը, երկինքէն վկայեց անոր անմեղութեանը՝ ըսելով. Դա է որդի իմ սիրելի, ընդ որ

էս հաճեցայ. որպէս զի անեսողները չիկարծեն որ իրօք մեղաւոր էր:

Առջև քրիստոսնից շատերը իրենց զաւկընին պղտիկուց չէին մկրտեր, որպէս զի մեծնան՝ աս ամեն խորհուրդները ճանչնալով մկրտուին, ու ամէն արգիւնաւոր ըլլալ իրենց մկրտութիւնը: Բայց սուրբ եկեղեցին աւելորդ սեպեց իր հաւատացեալները վասնզի մէջ թողուլ յանկարծ առանց մկրտութեան մեանելու, ու կուղէ որ պղտիկուց մկրտուինք: Աւելորդ սեպելուն պատճառն ալ աս է որ, իրաւ՝ մկրտուելու ատեննիս չէնք ճանչնար մկրտութեան խորհրդոյն ինչ ըլլալը, բայց մոգերնիս բացուելէն ետքը՝ ամեն անգամ որ կուրախանանք մկրտուած ըլլալնուս վրայ, ու աստուծոյ փառք կուտանք՝ որ աս սուրբ խորհրդոյն արժանի ըրեր է զմեզ, նոյն արգիւնքը կը վաստակինք: Գրիստոսի շնորքին անսպաս զօրութիւնն է աս, որն որ Պօղոս առաքեալը խիստ աղւոր օրինակով մը կը բացատրէ: Երբոր խրայելացիք Եգիպտոսի անսպասին մէջ ծարուած՝ կաթոտութիւն ունէին ջուրի, հրամանց աստուած Մովսէսի՝ որ դաւազանք քարին զարնէ, ջուր բխեցնէ: Զուրը բխեց, ամէնքն ալ խմեցին ու ծարաւնին անցուցին. բայց աստուծոյ ըրած ջընորքը այսչափով չիմընցաւ, քանի որ այն անջրդի անսպասին մէջ քէնք խրայելացուց ճամբորդութիւնը, քանի որ նոյն կաթոտութիւնը ունէին, միշտ նոյն ջուրէն կը խմէին. վասն զի այն ջուրը ետեւնէն կերթար, ինչպէս որ նոյն առաքեալը կը վկայէ. Զի ըմպէին ի հոգեւոր վիժէն՝ որ էրևար դէմ նոյս: Եւ որպէս զի ամեն տարակոյս վերայ՝ այն ջուրը Գրիստոսի շնորքին օրինակը ըլլալուն, կրտէ ետեւէն. Եւ վէ՞ն էր Իսդի Գրիշուսոս: Գրիստոսի շնորքն որ մկրտուած ատեննիս կընդունինք, հոն չեգադրիր, բոլոր մեր կենացը մէջ, այսինքն քանի

որ աս անջրգի երկրիս վրայէն դէպ'ի երկինք ճամբորդութիւն ընելու հետ ենք, նոյն շնորքը ետևնուս հուզայ. քանի որ հուզէնք, կրնանք ընդունիլ իր շնորքը. քանի որ ծարուհնք, կրնանք խմել այն ջուրէն: Աս այն ջուրն է, որուն համար Քրիստոս Երուսաղէմի ասճարին մէջ զսօսկին ետքի օրը կէցած՝ աղաղակեց. Որ ո՛ր ծարարի ի՞նչ, եկեա՞նք սա իս եւ արբօ՛նէ:

Մ Ա Ս Ն Գ.

Ուրեմն փառք տանք իրեն որ սասնկ խորհուրդ մը մեզի համար հաստատեք է. բայց ամենէն մեծ փառք անով կուտանք իրեն, թէ որ ըրած շնորքին համեմատ ըլլայ վարքերնիս, թէ որ պահէնք ինչ որ միրտութեան ատեն կնքահայրը մեր կողմանէ խոստացեր է, սատանայէն հրաժարիլ, ու աշխրբիս ունայնութեանցը ետեւէ չերթալ՝ մեանիւ աշխրբիս համար, ինչպէս առաքեալը կրտէ. Թողե՞ցա՞ ընդ նմին միրտութեամբն'ի ճահ: Սատանայէն կը հրաժարինք, երբոր մեզքէ ես կը կենանք. աշխրբիս ունայնութիւններէն ալ կը հրաժարինք, երբոր աշխրբիս բաները աստուծոյ սիրոյն համար կը վայելէնք, երբոր ամեն բան 'ի փառս աստուծոյ կրնենք. անոր համար կրտէ նոյն առաքեալը. Եթէ ուրիշէ, եթէ ըմբօնէ, եթէ զինչ եւ ասիցէ, զամենայն 'ի խոստ աստուծոյ արասջի: Աս օրուան տօնէս աս ըլլայ մեր քաղերու պատուը. ասով Քրիստոսի շնորքը կրնանք վայելել՝ քանի որ աշխրբիս վրայ ճամբորդ ենք, ինչուան որ հասնինք ճամբորիս աւետեաց երկիրը, այսինքն սուրբ արքայութիւնը:

Յ. Դ. Օ. Թ. Ք.

Յիսուս փրկիչ իմ, աս ի՛նչ մեծ շնորք է՝ որ ըրեր էս ինձի՝ դեռ միաքս չիբացուած. ինչ որ մկրտութեանս ատեն ուրիշի բերնով խոստացեր էմ, ամենքն ալ կը հաստատեմ. միայն շնորք տուր ինձի՝ որ դոնէ ասկէց ետքը իմ խոստմունքս պահեմ, որ քու սուրբ արքայութեանդ ըլլամ արժանի: Մկրտի Քրիստոս, և սրբին ամենայն արարածք. և տայ մեզ Թողութիւն, ջրով և Հոգւով վերասրբելով զմեզ:



# ՄՏԱԾԱԿԱՆ ԺԲ.

Տեսանքըդարաւային տոկիկ վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Սուրբ աստուածածինը ամենեւին սրբապահան չէր կանանց սրբութեանը համար դրուած օրէնքը պահէրու, որովհետեւ Քրիստոսի յղութիւնն ու ծնունդը իրեն մաքրութեանը միտա մը չէր տուած. բայց հնազանդութեան համար օրէնքին հրամանները կատարեց, յանձն առաւ որ մարդկանց առջին ուրիշ կանանց հաւասար երևնայ. տաճարին բակը կեցաւ ինչուան որ սրբութեան օրէնքին արարողութիւնը վրան կատարուի, ու ետքը կարենայ տաճարը մտնալ: Ինչուան ան առեկը ինչ զոհ որ եղած էր տաճարին մէջը՝ աստուծոյ արժանի չէին, ու Պօղոս առաքելալին ըսածին պէս՝ չէին կրնար մարդուս մեղքերը բաւել: Քրիստոսի ու կարէր աբելն նախապէսն ու զոյն բառաւ զեւր: Ստուծոյ արժանի առջին զոհը սուրբ աստուածածինը ըրաւ, նուիրելով զՔրիստոս միածին որդին աստուծոյ՝ երկնաւոր Հօրը. առջին էր զած զոհերուն բոլորն ալ Քրիստոսի զոհին օրինակն էին:

Յրուսաղէմ քաղաքը սուրբ ծերունի մը կար Սիմէոն, որուն բաղձանքը ան էր որ Քրիստոսի դալը տեսնէ. անոր համար խնդրեր ու ընդունէր էր Հոգին սուրբէն աս շնորքը՝ որ չիմեռնի ինչուան որ չտեսնէ զՔրիստոս: Ան օրը Հոգին սուրբ ազդեց իրեն՝ որ տաճարը երթայ. ու երբոր Յիսուսին ծնողքը բերին զնրքը հոն՝ նոյն Հոգին յայտնեց իրեն՝ որ ան մանկիկն էր Քրիստոսը. նայեցաւ Յիսուսին, ու սիրաբ լեցուեցաւ ուրախութեամբ, երկրպագեց ներսի դիէն, սպասեց որ օրէնքին արարողութիւնները ընրնայ, ու ետքը զերկը առաւ Յիսուսը, գոհութիւն տուաւ աստուծոյ ու ըսաւ. Ասկեց ետքը ուրախութեամբ կը մեանիմ, ընդունէ տէր՝ իմ հօգիս, վասն զի տեսայ փրկիչն որ ամենուն համար խրկեցիր, որն որ հեթանոսները լուսաւորէ պիտոր, ու փառք պիտոր ըլլայ քու ժողովրդեանդ: Թէ որ աս սուրբ ծերունւոյն հոգին ունենայինք, իրմէն աւելի պիտոր շարժէր մեր սիրաբ ամեն անգամ որ սուրբ հաղորդութիւնը սիրաբերինս կընդունինք. վասն զի չէ թէ միայն նոյն փրկիչն է ընդունածնիս, այլ և արդէն մեզն համար զոհ եղեր, ու զմեզ ալ փրկութեան ճամբան դրեր է սուրբ մկրտութեամբ, և ուրիշ սուրբ խորհուրդներով: Սուրբ Վոյնն ու սուրբ Յովսէփը իրենցմէ զօրս ելան՝ աս խօսքերը լսելով. Թէ և ծերունւոյն ըսածնէրը մարդարեւներուն խօսքերն էին որ իրենց համար նոր բան մը չէր, բայց կենդանի հաւատքն ու սերը ասանկ էն, ուրիշ վրայ ալ նոյնը տեսնաւ լով աւելի կը վառուին: Ան տանէր օրհնեց զիրենք սուրբ ծերունիին, ու սուրբ աստուածածնայ քաջեղը ցաւերը յայտնեց իրեն, ու ինչպէս շատերը պիտոր չիհաւատային Քրիստոսի, ու ան որ եկեր էր փրկելու զմարդիկ՝ անոնցմէ շատերուն դատապարտութիւն պիտոր ըլլար, ինչ

պէս որ ինչուան հիմայ կը կատարուէի աս մարդա-  
րէութիւնը անհաւատներուն վրայ: Ուղեց աս-  
տուած՝ որ սուրբ աստուածածինը ան ատենէն  
սկսի իր մարտիրոսութիւնը, ու Յիսուս դառն աս-  
տուծոյ՝ որ օր մը խաչին վրայ զոհ պիտորը ըլլար,  
քանի որ մեծնայ՝ այնչափ ալ սուրբ աստուա-  
ծածնայ ցաւը եւեղնայ, ինչուան խաչին տակը  
Թագուհի մարտիրոսաց ըլլայ՝ իր զաւակին իրօք  
քաշածը ինքը սրտին մէջ քաշելով:

### ՄԱՍՆ Բ.

Տաճարին մէջը սուրբ որբւարի մըն ալ կը բնա-  
կէր՝ Աննա անուանով, որ իր կեանքը ազօթքով ու  
ծոմով կանցընէր հոն՝ ամենեւին անկէց դուրս չեւ-  
լելով: Պղտի աղջիկ մը հարս եղած՝ եօթը տարի  
միայն երկանը հետ ապրեր, անոր մեռնելէն ետ-  
քը՝ տաճարը քաշուեր էր, ու ան ատենը ութ-  
սունըջորս աարուան էր: Աստուած իրեն մարդա-  
րէութեան հոգի տուեր էր, անով ինքն ալ ճանչ-  
ցաւ զՔրիստոս, երկրպագեց իրեն, գոհութիւն  
տուաւ աստուծոյ, ու որոնք որ Քրիստոսի գալըս-  
տեանը կը սպասէին՝ ամենուն ալ աւետիս կու-  
տար, ու կը խօսէր աշխրբիս փրկիչը հասած ըլլա-  
լուն վրայ: Իսկ Յիսուսի ծնողացը վրայ սուրբ ա-  
ւետարանիչը չքսեր որ խօսք մը հանած ըլլան բեր-  
նէրնէն, վասն զի ինչ որ ըսէին՝ իրենց փառքն ու  
պարծանքը ըսած կըլլային. բայց լուռ կեցած,  
սաստիկ ուրախութիւն սաստիկ տրամուլթեան  
հետ սիրտերնին կը ճղմէր: Մարդս իր սիրելոյն  
վրայ կուզէ լսել, դիտցած բաներն ալ իրեն նոր  
կուգան, կը զմայլի անոր գովեստները լսելով. Ե-  
ւէն հայր և մայր նորս դարձայեալ ՚ի վերայ բանիցն, որ  
Խօս էին զմանէ:

### ՄԱՍՆ Գ.

Յիսուս ճշմարիտ դառն աստուծոյ էր, աշխրբիս  
մեղքերը վերցընելու համար եկած էր, ինչպէս  
Յոհաննէս մկրտիչը վկայեց. Ահա գառն սսսսսսսս  
որ Բառնայ գեղս աշխարհի՝ զինքը աստուծոյ սեղանը  
տարին՝ Երուսաղեմայ տաճարին մէջ, որ մեզի հա-  
մար զոհ ըլլայ: Օրէնքը կը հրամմէր՝ որ ամեն ան-  
դրանիկ աստուծոյ նուիրուի, ան հրաշքին յեւ-  
տակ՝ որ աստուած ըրաւ՝ իր Ժողովուրդը Երիտ-  
տունն ազատելու համար, ոյջ պահելով խորայե-  
լացւոց անդրանիկները՝ երբոր սատակիչ հրեշ-  
տակը երկրպագւոց ամեն անդրանիկ զաւկընէրը  
զարկաւ մեռուց: Օրէնքը սովորական զաւկընե-  
րու վրայ էր, Քրիստոս աղատ էր աս օրէնքէն.  
բայց ուղեց որ պահէ օրէնքը: Ուստի սուրբ Կոյսը  
տաճարին գաւիթը սրբութեան օրէնքը իր վրայ  
կատարուելէն ետքը, սուրբ Յովսէփին հետ ներս  
տարին Յիսուսը՝ աստուծոյ նուիրելու: Ի՛նչ աւ-  
սարան էր բոլոր երկնքին առջին աս նուիրումը.  
Ինչ մեծ պատիւ Մարիամու ու Յովսէփայ, որոնց  
ձեռքովը ան նուէրքը կըլլար կոր. ինչ երջանիւ-  
թիւն մարգկանց, որոնց համար որդին աստուծոյ  
կը նուիրուէր կոր:

Անդրանիկներն որ աստուծոյ նուիրուած էին՝  
պէտք էր որ տաճարը կենային, ու տաճարին  
ծառայութիւնները ընէին. բայց աստուած ատ  
ծառայութիւններուն համար ղևտացւոց ցեղը  
սահմաններ ու հրամմեր, էր որ մեկալ ամեն ցե-  
ղերը իրենց անդրանիկները դնեն վեց վեց արծըլթէ  
սիկը վճարելով: Յիսուս պարտքան չէր տաճա-  
րին ծառայելու, ինքն էր կենդանի տաճար՝ որն  
որ Հրեաները փոցընէին պիտոր, ու ինքը իրէք

օրէն կանգնէր պիտոր. իսկ Հրէից տաճարը կործանէր, ու ամեն զոհերովը մէկէն վերջանար պիտոր. անոր տեղը նոր սեղան ու նոր զոհ պիտոր յաջորդէր, որ մինչև աշխրբիս էաքը պիտոր մնար: Ուստի հինգ արծըթէ սիկով զնուեցաւ Յիսուս, ան որ զմեզ իր պատուակիան արիւնովը պիտոր գնէր, ան արիւնովը՝ որ հինգ վերքերէն բխեցին:

Ա. Գ. Օ Թ. Բ.

Ո՛վ փրկիչ իմ Յիսուս, քու վերքերուդ ու անգին արեանդ համար ըլլայ՝ մի թողուր որ իմ փրկուածութեան համար առեած գինըդ պարտող երթայ: Դուն որ մեր մեղքերը քաւելու համար զքեզ նուիրեցիր երկնաւոր Հորդ, ընդունէ իմ նուէրքս՝ որչափ ալ սակասաւոր ըլլայ, իմ բոլոր անձս՝ որ սրտանց քեզի կը նուիրեմ: Դուն մաքրէ իմ ստիպուածիւններս, ու արժանի ըրէ զիս՝ որ օր մը զքեզ երկինքը տեսնամ: Մայր աստուծոյ, դուն որ կարօտ չէիր մաքրուելու, ու յանձն առիր՝ մաքրութեան օրէնքը վրագ կատարել տալ, ընդունէ ինձի համար աստուծոյ սիրոյն բոցը՝ որ մաքրէ իմ սիրտս ու հոգիս: Սուրբ աստուածահայր, Մարիամ մեր մայրն է, դուն ալ մեզի հայր եղբ. առաջնորդէ ինձի բոլոր կենացս մէջ, բայց մանաւանդ մահուանս ատեն պաշտպանէ զիս աստանային դէմ, ու ընդունէ ինձի համար աստուծմէ բարի մահ, որ արժանի ըլլամ՝ զքեզ ալ Յիսուսին ու սուրբ աստուածածնոյ հետ տեսնել երկինքը:

Որ արձակիչդ ես կապելոյ, պարգևատու ամենեցուն, այսօր հոյցմամբ ձերունուոյն արձակեալ զիս զբազմամեղս՝ ի կասկանայ մահու ի կեանսդ յաւիտենից:

ՄՏԱ.ԾԱ.ԿԱ.Ն ԺԳ.

Ծաղկագարդի տոնին վրայ.

ՄԱՍՆ Ա.

Չաքարիա մարգարէն շատոնց մարգարէացեր էր Քրիստոսի աս օրուան փառաւորութիւնը, աւետիս տալով Երուսաղեմի՝ որ իր թագաւորը պիտոր դար: Բայց ի՞նչ կերպով պիտոր դար. բուրովն տարբեր ուրիշ թագաւորներէ. Ահաւսին Ռաֆաւոր քո գայ նորեալ ՚ի վերայ՝ յասանաի իւր: Ուրիշ թագաւորները զինեալ՝ չորս զինին զեւուորներով պատած՝ կուգան, առջևնէն գերեւներ, փողովոգեան ողբ ու լաց բերելով՝ ուրիշներուն արիւնովը գնած իրենց յաղթանակը: Իսկ Քրիստոս հեղ թագաւոր մը, առանց զէնքի, առանց զինուորի, գերի ընելու տեղը՝ գերութենէ խաղըտելու համար կուգար կոր, ուրիշներուն արեան տեղը՝ իր արիւնը թափելով. անոր համար մարգարէն Երուսաղեմին կրտէ որ չլվանանայ. Սէ երկնէր Դուսաբ Սիւնի, որախ լէր, ահա Ռաֆաւոր քո գայ աս թեզ արգար և իբիլ, հեծեալ ՚ի վերայ իւր և յասանաի նորոյ: Ոչ առաքեալներն որ էջը իր յաւանակովը բերին՝ զիտէին որ մարգարէին ըսածը

կը կառարեին կոր, և ոչ ժողովուրդն որ ձիթե-  
նիկ ու արմաւենիի ճիւղերով՝ ու զգեսանին ճամ-  
բուն վրայ Քրիստոսի առջին փակելով՝ ուրախու-  
թիւն կրնէին. վասն զի ինչպէս սուրբ աւետարա-  
նը կըսէ՝ Հոգին սուրբ ընդունելէն ետքը յիշեցին  
մարդարեւթիւնը. Եւ զայն ինչ ոչ գիտացին աշխերքս  
նորա զառաջինս. այլ յորժամ քառասորեցաւ Յիսուս,  
յայնժամ յիշեցին՝ էլէն այն էր, որ գրեալն էր վասն նորա,  
և զայն արարին նմա: Աստուծոյ նախասես ու ամե-  
նակարող զօրութիւնը միայն կրնար այնչափ ա-  
տեն առաջ զօրցընել տալ մարդարեւին՝ ուրիշնե-  
րուն ազատ կամքէն կախուած բաները:

### Մ Ա Ս Ն Թ.

Որոնք էին՝ որ զՔրիստոս ասանկ ուրախու-  
թեամբ ընդունեցան: Կէս մը Երուսաղէմի բնա-  
կիչներէն, կէս մը զառակի տօնին համար գրոսէն ե-  
կօղներ, կէս մը իր աշկերանները՝ որոնք արդէն իր  
ըրած հրաշքները տեսած էին, մանաւանդ Ղա-  
զարու յարութիւն աւնել տալը. մէկաւնոնք ալ՝  
լրած էին աս հրաշքները, անոր համար ամենքը  
մէկտեղ ընդ առաջերան Քրիստոսի՝ աս նոր կերպ  
յաղթանակը ընել տալու իրեն, աղաղակելով Ոչ  
սաննա օրհնեալ որ քառք յանուն պետան Խաբաբորդ Իս-  
րայէլէ: Երբոր Չիթենեաց լեռան զառ ՚ի վայրը  
հասան, Քրիստոսի աշկերանները տեսնալով իրեն  
ասանկ անակնկալ փառաւորութիւնը, սկսան  
ուրախութեամբ բարձր ձայնով զաստուած օրհ-  
նել, ժողովրդեան Ովսաննային վրայ աւելցընե-  
լով աստուծոյ մարդկանց հետ հաշտուիլը. Օրհ-  
նեալ որ քա լաբաբորդ յանուն պետան, խաղաղութիւն  
յեւիէն և քառք ՚ի Բարձրանս: Նոյն օրհնութիւնն է

որ սուրբ եկեղեցին մեր բերանը կը դնէ՝ Քրիստո-  
սի ամեն օր սուրբ սեղանին վրայ իջնալու ատենը,  
որ զմեզ ասանուծոյ հետ հաշտեցընէ. մենք ալ նոյն  
սրտով երգենք Սուրբ սուրբը, ու նոյն սիրով ընդու-  
նինք զՔրիստոս:

Քրիստոսի աշակերանները անանկ ուրախու-  
թեամբ իրենցմէ դուրս ելած աս օրհնութիւնները  
կերպէին՝ որ փարիսեցիները չկրնալով կրքեր-  
նին բանել՝ ըսին Քրիստոսի որ չէին զերեւը ու  
լուսընէ. Սասքեա աշխերքսդ քոյ՝ զի տեւոյն: Բայց  
Քրիստոս պատասխանեց. Ասոնք լուսու որ ըլ-  
լան, քարերը կաղաղակեն. Ելէն քոյս տեւոյն: Ժա-  
թիւք աղաղակեցին: Ու իրաւցընէ իր խաչելու-  
թեան օրը, աշկերանները լուսուն համար՝ քա-  
րերը աղաղակեցին, ու իրենց պէս խնամ սիրտերը  
գարձի բերելով՝ ըսել տալին. Արդարեւ աստուծոյ  
որդի էր սա: Ետքը երբոր Քրիստոս տաճարը մտնե-  
լու ատեն՝ բժշկեց որչափ կոյր և կաղ մարդիկ որ  
դրանն առջև մուրալու համար նստոր էին, ամե-  
նուն հետ մանր աղաքն ալ սկսան Ովսաննա օրհնու-  
թիւն որդոյ Խաբաբի կանչել: Քահանայապետները աս  
հրաշքները տեսնելով՝ ու աղայոց ալ Ովսաննա  
երգելը լսելով՝ բարկացան, ու չամբըցած՝ ըսին  
Քրիստոսի. Լսէն զէն աւնի քոյս: Քրիստոս ալ ի-  
րենց պատասխանեց. Կը լամ, այդ սաղմոսը չէք  
կարդացեր որ կըսէ. Ի Բերանոյ որդոյ և սուրբեցոյ  
խաբաբեցեք զօրհնութիւնս:

### Մ Ա Ս Ն Գ.

Բայց տեսնելով քահանաներուն՝ գպիրներուն՝  
ու փարիսեցիներուն խոտարտութիւնը, որ իրեք  
տարիէն ՚ի վեր այնչափ հրաշքներով Պաղեստինը

լեցընէլէն ետքը, մանաւանդ Երուսաղէմ շատ ան-  
 դամ իր աստուածութիւնը յայտնէլէն ետքը, ու  
 քանի անգամ ուղեւէն ետքը՝ որ անոր զուհիները  
 ժողովէ ինչպէս հաւը իր ձագուկները թռկերուն  
 տակը կը ժողվէ, դեռ յամառեր էին, աչւընին  
 լըսին դէմ գոցելով, Յիսուսի բարեգութ յիրարը  
 շարժեցաւ Երուսաղէմին վրայ, ու սխառ լա՛ւ ա-  
 նոր գրուխը քալու խեղճութիւնները առաջուց ը-  
 սելով, ու այն սրտաշարժ ուլբը անոր կործան-  
 մանը վրայ ըրաւ: Յիսուսի արցունքը Երուսաղէ-  
 մայ քարերուն վրայ չէր, այլ իրեն բնակչացը  
 մեղքերուն համար քալու պատիժներուն ու այն-  
 չափ հոգւոց կորստանը վրայ: Արդեօք աս պատ-  
 ճառը մէնք ալ չէնք տուած՝ Քրիստոսի՛ մեր վրայ  
 ալ լայու. արդեօք մէնք ալ ապերախտ չէնք է-  
 ղած Քրիստոսի մեղի ըրած բարերարութիւննե-  
 րուն, ու մեղի տուած շնորքներուն. արդեօք շատ  
 անգամ աչւընիս չէնք գոցած իր մեղի տուած  
 լըսին՝ յամառելով մեր կրիցը՝ մեր չար ունակու-  
 թիւններուն վրայ: Աւրեմն Քրիստոսի սուրբ ար-  
 ցունքին հետ մեր զղջման արցունքը խառնենք,  
 իրեն հետ մեր վրայ լանք, որպէս զի զմեզ ալ Ե-  
 րուսաղէմին հետ ձեռքէ չիձգէ, մեղի համար ալ  
 չըսէ. Ահա Բողոքաւ Լիյի յիւրաք յեր ասերալ:

Ա. Ղ. Օ Թ. Բ

Յիսուս փրկիչ իմ, իրաւցընէ լայու արժանի է  
 իմ հոգւոյս վիճակը՝ ինչուան հիմայ անցուցած  
 տարիներս միտքս բերելու որ ըլլամ, ի՛նչ արցունք  
 թափելու պատճառներ ունիմ: Այիսոս իմ կոր-  
 սնկուցած ասրիներուս, ջըլլալու տարիներ, չի-  
 յիշէմ զիրենք առանց արցունքի՝ որ քուկին բա-  
 րեգութ աչայդ՝ արցունքի պատճառ եղած են:

Պատու իմ կարծր սիրտս Գողգոթային ժայռե-  
 րուն պէս, շնորք տուր ինձի՛ որ էս ալ կաթնիկը  
 տղայոցը պէս զբեղ օրհնեմ, իմ վրաս ալ կատա-  
 րուի քարերուն աղաղակելը: Տուր որ ճանչնամ  
 ու օրհնեմ ինձի ըրած բարերարութիւններդ,  
 որպէս զի էս ալ Երուսաղէմին ասերախտու-  
 թեանը պատիժը չիկրեմ, վասն զի քու բարե-  
 գութ սիրտդ չուղեր ամենեւին մեղաւորները պատ-  
 ժել, այլ գարձի գալերնին կուղէ՝ որ զիրենք վար-  
 ձասրէ. քուկին խօսքդ է՝ Աւ Կաթմ ամսի մեղաւորին,  
 այլ զբառնաւ Կորս 'ի լար ճանապարհէն եւ դիւաւ:  
 Այսօր ընդ ծերոց և ընդ աղայոց օրհնաբանու-  
 թեանցն վերերգեմք նորոյ արքայից եկեալ յԵ-  
 րուսաղէմ, ովսաննա օրհնեալ եկեալ անուամբ  
 տեաան, օրհնեալ որ գալոցդ էս:

# ՄՏԱԾԱԿԱՆ ԺԴ.

Քրիստոսի սուրբ Հաղորդութեան խորհուրդը  
հաստատելուն վրայ:

## Մ Ա Ս Ն Ա.

Քրիստոսի սիրելի աշակերտը սուրբ Յոհաննէս աւետարանիչ՝ աս խորհուրդը հաստատելուն պատմութիւնը ասանկ կը պատմէ: Չափի տօնին առջի երկուշնի՝ գիտնալով Քրիստոս որ ատենը հասեր էր աշխրհէս ելելու, ու Հօրը քովը երթալու, իր սէրը ցուցուց իրեններուն, այսինքն քրիստոնէից՝ որ ան ատենէն մինչև աշխրհիս ետքը պիտոր ըլլային, խիստ սիրեց զանոնք: Ըսել է որ Քրիստոս անանկ սէր մը ցուցուց մարդկանց՝ որ անկէց աւելին անկարելի էր: Քիտնալով որ իր երկնաւոր Հայրը ամեն բան իրեն ձեռքը դրեր էր, բոլոր բնութեան ու շնորհաց տեր ըրեր էր զինքը, իր ամենակարողութիւնը բանեցուց: Խնչուան ան ատենը ըրած հրաշքները բան մը չէին աս հրաշքին քովը, որով ամբաւ սէրը մեզի պիտոր ցուցնէր: Վասն զի բնութեան ամեն օրէնքը տակն ու վրայ պիտոր ընէր՝ առանց փոխելու, ամենէն մեծ հրաշքը պիտոր ընէր՝ առանց բան մը երեցը

նելու զրտուանց. ինքը զինքը ամենուս զատ զատ պիտոր տար, որ հետը միանանք՝ մէկ ըլլանք. իր պաշտօնէիցը իշխանութիւն պիտոր տար՝ նոյն հրաշքը ամեն օր ընելու, որպէս զի մինչև մեզի հասնի իր ըրած շնորքը, ու ինչուան աշխրհիս ետքն ալ քէ: Խեղէ մտքէ վեր մարդասիրութիւն, ամենակարող սէր:

Ետքի սեղանն էր՝ որ իր աշակերտացը հետ պիտոր նստէր. նստելու ատեն ըսաւ իրենց. Խիստ կը բաղձայի չարչարանքէս առաջ աս զատկական սեղանը ձեզի հետ նստելու: Առակից առաջ կուգար Քրիստոսի աս բաղձանքը. զիտէր որ ան սեղանէն ետքը բռնուի, չարչարուի, մեռնի պիտոր. այսու ամենայնիւ ինչպէս կրնար բաղձալ ան սեղանին: Ո՞վ կրնայ աս խօսքը մտածել՝ առանց սիրաբը շարժելու: Ան սեղանին կը բաղձար, որպէս զի աս սէրը մեզի ցուցնէ, աս խորհուրդը հաստատէ մեզի հետ միանալու, ու մեր փրկութեանը համար ընելու զո՞նք իր չարչարանքներուն ու մահուանը յիշատակը, ամեն օր նորոգելու: Աս էր իր բաղձանքը, զմեզ փրկելու ու իր սէրը մեզի ցուցնելու:

## Մ Ա Ս Ն Բ.

Առաջուց խոստացեր էր Քրիստոս իր սուրբ մարմինը հացի պէս՝ սուրբ արիւնն ալ զինիի պէս՝ մեզի տալու որ ճաշակենք, որպէս զի յաւիտենական կենաց արժանի ըլլանք. Հացն՝ դր էս փաց, մարմին ի՞նչ է. Որ ուրիշ դժարմն ի՞մ, և ըմպէ զարիւն ի՞մ, ունի չիլեանս յաւիտենականս. Զի մարմն ի՞մ ճճարիպ կերտուր է, և արիւն ի՞մ ճճարիպ ըմպելի է:

իր խոստմունքը կատարեց. ետքի ընթերցը ընդերու աներու անեն՝ հայը ձեռքը առաւ, օրհնեց, բրգեց, ու աշկերաններուն տուաւ՝ ըսելով. Առէք կերեք, աս իմ մարմինս է: Մմանապէս գինիին բաժակը ձեռքը առած, գոհացաւ, ու աշկերաններուն տըւաւ՝ ըսելով. Խմեցէք ասկէց, աս իմ արիւնս է՝ որ ամենուգ համար պիտոր թափեմ: Թող հերեմակոսները քաշքշերով մեկնեն աս յայտնի խօսքերը, թող իրենք տարակուսին Քրիստոսի սիրոյն ու ամենակարողութեանը վրայ. մենք գոհա նանք՝ որ մեզի աս մեծ սէրը ցուցուց: Ասոր համար է՝ որ սուրբ Յոհաննէս աւետարանիչը սեղանին սկիզբէն Քրիստոսի սէրն ու ամենակարողութիւնը մեզի կը զուրցէ. ասոր համար է՝ որ սուրբ Հարց կը յորդորեն աս բանիս մէջ զբայարանքներնուս չնհաւատալ, այլ Քրիստոսի խօսքին. ասոր համար է՝ որ սուրբ Եկեղեցին ալ իրմէ գուրս ըրաւ աս բանիս վրայ նաև տարակոյս հանօղները: Կափառնառու մի բնակիչները աւելը շիտակ հասկըցան Քրիստոսի խօսքը հանած տարակոյսնին ան միայն էր որ՝ Քրիստոս ինչպէս իր մարմինը ուտել տար պիտոր իրենց. Գրիգոր Կաթիկոս Կաթիկոս իւր ուրիշէ: Բայց Քրիստոսի խմտաութիւնը դառաւ կերպով՝ որ կարենանք զինքը ճշակել, իրեն հետ միանալ, իր անմահութեանը մասնակից ըլլալ, չէ՛ թէ միայն հոգեով այլ նաև մարմնով, ինչպէս որ ինքը ըսաւ. Որ ուրիշ Կաթիկոս ի՞, և ըմպէ Կաթիկոս ի՞, ունի գլխանս յաւիտենականս, և Ես յարուոյնց զնա յառաջն յեդանամ: Վասն զի Քրիստոսի մարմինը ճաշակելով անանկ կը միանանք իր հետը, որ մասնակից կըլլանք իր աստուածային կատարելութեանցն ալ. որովհետև սուրբ հարգողութեանը մէջ իրօք ներկայ է ինքը իր աստուածութեամբը:

Եւս և

Մ Ա Ս Ն Գ .

Մէլքիսեդեկ քահանայապետին հացն ու գինին՝ օրինակ էր Քրիստոսի սահմանած պատարագին, անոր համար կըսէ սաղմոսեբոզն. Գոհ էս քահանայ յաւիտենական ըսք կարգին Մէլքիսեդեկի: Հին օրինաց զոհերը՝ բոլորն ալ օրինակ էին աս պատարագին: Քրիստոսի խաչին վրայ մատուցած պատարագն է՝ որ ամեն որ սուրբ սեղանին վրայ կը նորոգուի, անոր համար սուրբ մարմինը զատ՝ ու սուրբ արիւնը զատ՝ կը նուիրէ քահանայն, որ պէս զի Քրիստոսի մահը ու խաչին վրայ թափած արիւնը իմացընէ. թէ և հացն ալ գինին ալ կենդանի մարմին ու արիւն Քրիստոսի են, երկուքն ալ ամբողջ Քրիստոս: Նոյն պատարագն է, բայց խաչին վրայ իրօք մեռաւ Քրիստոս, հոս խորհրդաբար կը մեռնի. հոն անարգաբար ու նախատնօք մեռաւ, իսկ հոս ամեն հաւատացեալք՝ բոլոր սուրբ Եկեղեցին գոհութեամբ ու սիրով իրեն երկրպագութիւն կընէ, ու իբրև Քրիստոսի մարմինը՝ իր զլեոյն հետ զինքը աստուծոյ կը նուիրէ, ինչպէս հրամայեց Քրիստոս ըսելով. Զայս արբեք սոս Իմոյ յիշատակի: Նոյն պատարագն է՝ որ աշխրբիս ամեն կողմը կը մատուցուի, ու աշխրբիս ինչուան ետքը պիտոր մատուցուի, ինչպէս Մաղաքիա մարգարէին բերնովը ըսաւ աստուած. Յարեւելից մինչև Ի Տոպոս արեւոս փառասորեալ է անուն ի՞մ՝ Ի մէջ ազգաց, և յամենայն արեւելիս մարմին խոսնիչ անունն իմոյ և պապարագ սուրբ: Աս պատարագովն է՝ որ իրեն արժանաւոր փառք կուտանք. ասով իրեն արժանաւոր գոհութիւն կուտանք մեզի ամեն ըրած բարեբարութեանցը համար. ասով ընդու-

նէլն կըլայ իրեն մեր խնդրուածքը, ու մեզնի ամեն  
 հարկաւոր շնորքները կուտայ. ասով միայն իրեն  
 հետ կը հաշտուինք, մեր մեղացը թողուցիւն կու-  
 տայ, ու իրեն ըրած անարգանքնիս լիւրջ կը հա-  
 աուցանենք: Չէ թէ միայն մեր ողջութեանը ատեն  
 աս է մեր յայնն ու ապաւենը, այլ նաև մեզնէնէս  
 ետքն ալ. երբոր քահանայն սուրբ սեղանին առ-  
 ջին բազկատարած աս սուրբ պատարագը կը մա-  
 սուցանէ, քաւարանին հոգիները կուրախանան՝  
 մեղքերնու թողութիւն ընդունելով աստուծմէ:  
 Տրամուս հոգիքն ուրախանան, շէ թողանքն մեղաց լինի:

Ս. Ղ. Օ Թ. Բ

Յիսուս փրկիչ իմ, դուն աս խորհուրդը մեր  
 փրկութեանը համար հաստատելով՝ բոլոր կե-  
 նացք մէջ կը բաղձայիր, իսկ մենք սաղ սրտով  
 կը հաղորդուինք. դուն քու չարչարանացդ ու  
 մահուանը յիշատակ թողուցիր աս խորհուրդը՝  
 որ մենք ալ յորդորուինք քեզի չարչարակից ըլ-  
 լալու. իսկ մենք մեր հանգիստը միայն կը փնտռենք.  
 կայծ մը ան կրակէն՝ որով քու սիրագ մեր վըր-  
 կութեանը համար վառուած էր, մեր սրտին մէջն  
 ալ վառէ՝ որ անփոյթ չըլլանք մեր փրկութեանը:  
 Ար հաւատամ բոլորով սրտիւ՝ որ այն հացն ու դե-  
 նին քու ճամբիս մարմինդ ու արիւնդ է. որչափ  
 ալ մեղքերս կը վախճեն զիս ընդունելու զքեզ  
 սրտիս մէջ, քու քաղցը հրաւերքդ սիրտ կուտայ  
 ինձի՝ որ ընդունիմ: Մի նայիր իմ անարժանու-  
 թիւնս, այլ նայէ սրտիս՝ որ պատրաստ է քու ցու-  
 ցուցած սիրոյդ համար ամեն նեղութիւն ու չար-  
 չարանք քաշելու, սիրոյ թեթև կերպով մին ալ  
 չեղբայրներու համար: Ո՛վ խորը ողորմութեան,  
 դուն որ խոստացար ու ըսիր՝ Ո՛ր ուրիշ զմարմին ի՞մ

և ըմպէ զարիւն ի՞մ, յիս բնակեացէ, և էս 'ի նձա, կա-  
 տարէ քու խոսքդ, սուր որ քեզն համար ու 'ի  
 քեզ ապրիմ, բոլորովին իմ կիւրքերէս ու ինձմէն  
 ալ հրաժարելով:

Ժողովեալքս ի քէն հայցեմք  
 Ընդ ժողովեալ մտասանին,  
 Որ զկենարարդդ քո մարմին  
 Բաշխեալ ետուր ընդ բաժակին.  
 Շնորհեա եւ մեզ, սէր, ընդ նոսին  
 Հաղորդ լինել քում սեղանին,  
 Կենաց հացիդ՝ յոր փափաքեմք,  
 Եւ ըմպելոյդ՝ ում ծարաւեմք:



# ՄՏԱԾԱԿԱՆ ԺԵ.

Նորէն Ս. Հայրորդութեան խորհրդոյն վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Քրիստոս տերն մեր շարունակ ժողովրդեան խրատներ տալէն յոգնած, որ մը ըսաւ առաքեալներուն. Եկէք երթանք՝ քիչ մը հանդէսնք. ու առապատ տեղ մը գնացին: Բայց ժողովուրդը ըսելով Քրիստոսի ուր ըլլալը, մօտ քաղքընէրէն հոն ժողովեցան: Քրիստոս աչքը վրանին որ գարձուց, գուժը շարժեցաւ, վասն զի անհովիւ ոչխարներու պէս խեղճ մնացեր էին, ու սկսաւ խրատներ խօսել իրենց հոգւոյն հարկաւոր բաները սորվեցնել: Օրը իրիկուն եղաւ, առաքեալները ըսին Քրիստոսի: Անապատի մէջ ենք, ատենը ուշ է, արձրկէ ժողովուրդը որ երթան մօտ գեղերն ու քաղքընէրը՝ կերակուր գանան գինը: Առաքեալներուն ըսածը որչափ որ բանաւոր խօսք էր, այնչափ զարմացուց զիրենք Քրիստոսի պատասխանը. Հարկ չիկայ որ երթան, դուք սուէք իրենց ուտելք: Առաքեալները ամենեւին Քրիստոսի բերնէն խօսք մը ըսած չէին, որ սասնկ մշտապէս բերնուն դէմ ըլլար. ուստի ըսին՝ մենք կերակուր

չունինք տալու, երթանք գինէք. բայց երկու հարիւր գահէկանի հաց չեբաւեր այսչափ հոգւոյ: Վասն զի հինգ հազար հոգիի չափ էին, առանց համրելու կնկալք ու տալք: Քրիստոսի խօսքը զիրենք փորձելու համար էր, կըսէ աւետարանիչը. բայց ինքը իր ընեղքը գիտէր: Ուստի ըսաւ. Քանի հաց ունիք, գնացէք նայեցէք: Աս խօսքը աւելի տարակուսի մէջ ձգեց առաքեալները. բայց հնազանդեցան գացին ժողովրդեան քովը եղածը փրկեցնելու, ու հինգ հացէն՝ երկու ձուկէն աւելի բան չեգտան: Քրիստոս բերել տուաւ գտածնին, ու ժողովուրդը խոտին վրայ խուսմէ խուսմէ նստեցընել տալէն ետքը, ձեռքը առաւ հացերը, աչքը երկինք վերուց, գոհութիւն տուաւ իր երկնաւոր Հօրը՝ որ իրեն ամեն կարողութիւն տուեր էր, որ հնեց հացերն ու բրդեց, առաքեալներուն տուաւ՝ որ բաժնեն ամենուն. նմանապէս ձկներն ալ:

Աս կերպով Քրիստոս տերն մեր սլաւարաստեց առաքելոց ու իր սուրբ եկեղեցւոյն հաւատքը՝ սուրբ հաղորդութեան մեծ խորհրդոյն, որ պիտոր հաստատեր բոլոր քրիստոնէից հոգևոր կերակուր: Մենք որ հիմայ կը տեսնանք սուրբ եկեղեցին բոլոր աշխարհ տարածուած, ու ամեն տեղ քահանայք կը բաժնեն հաւատացելոց երկնային հացը, կրնանք տարակուսել Քրիստոսի ըրած հրաշքը սուրբ հաղորդութեան օրինակը ըլլալուն վրայ: Առաքեալները բաժնելու ատեննին իրենք ալ չէին գիտեր ինչպէս հացը ձեռքերնին կը շատնար, անանկ որ ամենուն բաւելէն ետքը՝ ասուելիւ մեծ կողով լեցուեցաւ աւելցած կողմներէն: Սուրբ հաղորդութեան օրինակին վրայ աս հրաշքները տեսնալէն ետքը՝ ինչ զարմանք բուն հաղորդութեանը վրայ Քրիստոսի ցուցուցած հրաշքներուն, սրտն խեղճիս չհասանիր: Որչափ ալ խեղճ մտքէ վեր ըլլան, բայց երբոր Քրիստոս

ու սուրբ առաքեալները և սուրբ եկեղեցին ա-  
սանկ կը սորվեցընեն, պէտք է որ լսեն զգայա-  
րանքնիս անոնց խօսքին առջևը:

### ՄԱՍՆ Բ.

Սմեներն ալ կերան ան հացէն, վասն զի ամենքն  
ալ անօթի էին՝ կարօտ էին ուժ աննելու: Մենք  
ալ որ աշխրբիս անապատին մէջն ենք, հոգինիս  
կարօտութիւն ունի ուժ աննելու, պէտք է որ  
ստեպ սուրբ հաղորդութիւնը ընդունինք՝ որ մեր  
հոգւոյն հացն է. ինչպէս մարմինը ասանց հացի  
չապրիր, ասանկ ալ հոգին առանց սուրբ հաղոր-  
դութեանը չիկրնար ապրիլ, այսինքն չիկրնար  
մեղքէ հեռու կենալ, ակարութեան կիցնայ՝ սղախ  
առիթ մը որ զիմացն էլէ: Ընչախորժակով շնոր-  
հակարութեամբ կերաւ ժողովուրդը ան հացէն,  
որ թէ և հրաշքով շտացած էր՝ բայց իրապէս  
հացի ուժ ունէր. իսկ մենք որ հաւատով գիտենք  
սուրբ հաղորդութեանը ճշմարտապէս Քրիստոսի  
մարմինն ու արիւնը ըլլալը, որ մեզի հոգևոր կեանք  
ու յաւիտենական փրկութիւն կուտայ, ինչ ջեր-  
մեանդութեամբ պէտք է որ ընդունինք: Քրիս-  
տոս որ ընդ աջմէ չոր նստած է՝ ուղեւով որ մեզի  
հետ ըլլայ, ինքը զինքը մեզի ապ, բոլոր իր ամե-  
նակարողութիւնը բանեցուց, բնութեան օրէնք-  
ները փոխեց՝ իր սերը մեզի ցուցընելու համար.  
որպէս զի դէս աշխրբիս վրայ ըլլալով՝ իր հետը  
միանանք. և որովհետև հիմայ երկնքի արգարոցը  
պէս իրեն հետ չենք կրնար դէս միանալ, ան միու-  
թեանը գրաւական սուրաւ սուրբ հաղորդու-  
թիւնը: Ուրեմն ինչպէս անդգայ ու անխոյժ կըր-  
նանք ըլլալ իրեն սիրոյն, ինչպէս գաղթութեամբ

ու ցրաութեամբ կրնանք ընդունիլ զինքը: Հա-  
ւատքի սգակութիւնն է միայն, որ զմեզ ասանկ  
անպէտք կըրնէ:

### ՄԱՍՆ Գ.

Կը նախանձինք Չաբէին վրայ, որ զՔրիստոս կը  
սուշը ընդունեց, հարիւրապետին՝ որուն ծա-  
ւայն անընացուց, կուրին՝ որուն աչւնները բա-  
ցաւ, ու տեւատես կնոջը՝ որ անբժշկելի հիւան-  
դութենէն ազատեց: Թէ որ անոնց ունեցած հա-  
ւատքը մենք ալ ունենանք, անոնցմէ աւելին կըն-  
դունինք սուրբ հաղորդութեամբը: Տեւատես կինը  
միտքը դրաւ որ Քրիստոսի զգեստին միայն դաչե-  
լով՝ կը բժշկուէր. Խորհէր ՚ի մի Բէ Բայն Բեռնեայոյ ՚ի  
Դրուսի հանդէսին նորա, ՚ի Բեռնայոյ: Թէ որ Քրիստոս  
զգեստին ծայրովը միայն բժշկեց խեղճ կինը՝ անոր  
հաւատքին նայելով՝ Հասաք քո Բեռնային դէպ, որ-  
չափ ևս առաւել մեր հոգին կը բժշկէ՝ երբոր հա-  
ւատքով զինքը սրտերնիս ընդունինք. վասն զի նոյն  
գլխած աէրն է. Յեւաա Քրիստոս երէկ և այսօր նոյն և  
յաճիպեանս: Աս հաւատքովը ձայն լսելուն պէս՝ մեկէն  
ցեալները հալածանքի ձայն բռնուն պէս՝ մեկէն  
կը հաղորդուէին, ու անանկ կուժալար հոգինին  
սուրբ հաղորդութեամբը՝ որ սիրով դասիճնե-  
րուն սաջին կը զիմէին, արեւնին Քրիստոսի հա-  
մար թափելու. չէ թէ եկեղեցականք միայն, այլ  
նաև աշխարհական մարդիկ, նաև կանայք ու օ-  
րիորդք: Անոնց հաւատքովը հաղորդուինք մենք  
ալ, անոնց սերը մենք ալ կուսենանք. արիւն թա-  
փելու հարկ ալ չըլլայ, մեղքէն հեռու կենալու  
չնաբը կընդունինք անաարակոյս:

ԱՂՕԹՊ

Յիսուս փրկիչ իմ, ներէ ինձի որ ինչուան հիւսկայ առանց բաւական մտածելու՝ թմրած հաւատքով ընդուներ իմ զբեղ իմ սիրտս. զօրացուր իմ հաւատքս, օգնէա անհասարկութեանս իմոս, որպէս զի կատարեալ հաւատքով սուրբ հաղորդութիւնը ընդունելով առողջանայ հոգիս, ու ինձի ալ ըսես. Քաջաւերեայ, հասարկ քո ինչո՞ցին դէռ:

Որ վառեցար ի յարկւոյն, եւ ոչ կիզար ըստ մորենայն, Այլ ետուր ըզհացն կենաց կերակուր բանաւորաց, Բարեխօսեա առ Քրիստոս, ջնջել ըզգիր մեղաց մերոց:

## ՄՏԱԾԱԿԱՆ ԺԶ.

Նորէն Ս. Հաղորդութեան խորհրդոյն վրայ:

### ՄԱՍՆ Ա.

Առանց բաւական պատճառի բանի մը հաւատալ՝ սուս կրօնքներուն ու աւելորդապաշտութեան յատուկ է. բայց ճշմարիտ կրօնքին հաւտացած բաները անսնկ պատճառներ ունին, որոնց ամեն բանաւոր մարդ պէտք է որ հաւտայ: Կա՛հառնաու մի ժողովրդեան մէջ շատ անհաւատներ կային՝ որ Քրիստոսի չի՛հաւտաւէն ՚ի զատ, իրենց անհաւատութիւնը պաշտպանել ալ կուզէին. ուստի իրմէ հրաշք պահանջեցին իրեն հաւտարու համար, թէ և քիչ մը առաջ տեսեր էին՝ որ հինգ հացով հինգ հաղար հոգիէն աւելի կշտացուցեր էր. Զինչն անս առնիցես դի պէտքոս և հասարացոս, հարգն մեր իբրան զմանանայն յանապաքի անդ: Ասով ըսել կուզէին՝ որ Մովսէսի ըրած հրաշքը աւելի մեծ էր, զթաւուն հաղար հոգի կշտացուցէ թէ օր մը՝ այլ քառսուն տարի. քու տուածդ հասարակ հաց էր, անորը ամենահամ մանանայն. ուստի ինչ հրաշք պիտոր ընես որ հաւտանդ. չէնչ գործիցես: Բայց աս արամաբանութիւնը

ճուռ էր. վան զի բանը հրաշքին մեծութեանը կամ պղտիկութեանը վրայ չէր, հրաշքը միշտ հրաշք է՝ մարդուս կարողութեան վեր, աստուած է միայն որ հրաշք կրնէ: Բանը անոր վրայ էր որ Մովսէսի ձեռքով եղած հրաշքները՝ թէ եգիպտացւոց և թէ իսրայելացւոց ցուցընէլու համար էր, որ աստուած էր իսրայելացիները հանողը Եգիպտոսէն. իսկ Քրիստոսի ըրած հրաշքները՝ ցուցընէլու համար էր, որ ինքն էր խոտաացեալ Մեսիայն որդի աստուծոյ, ու իր ամեն ըսածն ու սորվեցուցածը աստուծոյ պատգամ էր: Անոր համար Քրիստոս իրենց պատասխանեց, որ Մովսէսի ձեռքով իրենց արուածէն գերազանց կերակուր մը իրենց պիտոր սար. Ամեն ամէն ասեմ յեւեմն ու Մովսէս եպ յեւ զհաջն յերկնից, այլ Հայրն իմ աս յեւ զհաջն յերկնից զճարտարի՞ որ իեանս աս աշխարհի. Էս էմ հաջն իեանց: Ըսել կուզէր որ՝ Մովսէսի ասուած հացը օրինակն էր անոր, որ ինքը պիտոր սար. անիկայ մարմնաւոր կեանք կուտար ու բերնի աւսորժելի անցաւոր համ, իսկ ասիկայ հոգևոր կեանք ու յաւիտենական երանութիւն:

### ՄԱՍՆ Բ.

Ժողովուրդը աս խօսքերս թէ և վեր 'ի վերանց հասկըցան, այսու ամենայնիւ խնդրեցին որ այն ըսած հացն տայ իրենց. Տէր, յամենայն Ժամ քուր մեզ զհաջն դայն: Իսկ մենք որ կը ճանչնանք ու կը հոււտանք որ այն հացը՝ այսինքն սուրբ հաղորդութիւնը՝ ճշմարիտ մարմին և արիւն Քրիստոսի է, ու չէ թէ մարմնաւոր ու անցաւոր կեանք կուտայ՝ այլ հոգևոր ու անանց, որչափ աւելի պէտք է որ խնդրենք 'ի Քրիստոսէ որ տայ մեզի միշտ այն

հացն: Անոր համար սուրբ Հայրք, ու սուրբ Եկեղեցին, Հայր Թեոֆիլ մեջի եղած խօսքը Զհայ Թե հանապազօր քուր մեզ այսօր՝ աս մտքովն ալ կիմանան, ու մենք ալ աս մտքով մարմնաւոր հացին հետ պարտրկան ենք խնդրելու հոգևոր հացն ալ: Ապա թէ ոչ, ինչպէս իսրայելացիք մանանայէն ձանձրանալնուն ու արանջնուն համար՝ պատժուեցան աստուծմէ, անոնցմէն աւելի մենք ալ արժանի կըլլանք պատժուելու. ու պատիժնիս կըլլայ՝ յաւիտենական կեանքէն զրկուելնիս. Ենէ ու իբրեւիք զմարմին որդւոյ մարդոյ, և արքայի զարքան նորա, ու ունիք իեանս յանձին: Իսկ ընդ հակառակն՝ ուրոնք որ մտախաբանք ու դժուրութեամբ կը հաղորդուին, իրենց վարձքը կըլլայ յաւիտենական կեանք. Որ ուսիրքն 'ի հացն յայսմանէ, իեղե յաւիտեան:

### ՄԱՍՆ Գ.

Սուրբ հաղորդութիւնը կը միացընէ զմեզ Քրիստոսի հետ, չէ թէ միայն բարոյական միութեամբ սիրոյ՝ այլ իրական միութեամբ, անանկ որ՝ բնական միութիւն մը չիկայ որ անոր հաւասարի. սրբափ ու կամքի միութիւնը բան մը չէ ասոր քովը: Քրիստոս մեր վրայ ունեցած սէրը մեզի ցուցընէլու համար՝ հերթէ շնտախցի խաչին վրայ մեղի համար մեռնիլը, այլ ուզեց մեզի հետ միանալ, ու անանկ ընել որ մենք ալ իրեն կարենանք մեր սերը ցուցընել իրեն հետ միանալով, չէ թէ անցաւոր կերպով՝ այլ մշտնջենաւոր. Որ ուսիք զմարմին իմ, յիս բնակեացէ և էս 'ի նմա: Ինչպէս կերակուրն որ կուտենք՝ մեր մարմինը կը դառնայ, ներսի զինիս կը մնայ, մեր դոյացութիւնը կըլլայ, ասիկէջ շատ աւելի սուրբ հաղորդութիւնը զմեզ իրեն հետ կը

միացնէ, 'ի մեզ կը ընտելի, մենք ալ 'ի նմա, մեզի  
 հետ մեկ կըլլայ: Առտի սուրբերն ու այն անմեզ  
 հոգիները՝ որ ամեն կերպով կը զգուշանան աս  
 միութենը չեքահելու ու միութեանը արդեւք մը  
 գնելու, անանկ միութարուծիւն՝ անանկ զմայլ-  
 մունք՝ կը զգան սուրբ հաղորդութենէն՝ որ ար-  
 քայութեան մէջ ունենալու երանութիւննին աս  
 կէց կը սկըսի, ու յաւիտեան կը քչէ: Վասն զի  
 սուրբ հաղորդութիւնը աստուծոյ յաւիտենական  
 կենացը մասնակից կընէ զմեզ: Որդին աստուծոյ  
 մարդ ըլլալով՝ իր աստուածային կեանքը հաղոր-  
 զէց իր մարդկութեանը. ուստի ինչ կեանք որ  
 Հայր աստուած ունի, նոյնը սուսա Քրիստոսի  
 ալ: Չի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս  
 էր և Որդոյ անել կեանս յանձին իւրում: Առտի նոյն  
 կենացը մենք ալ մասնակից կըլլանք Քրիստոսի  
 հետ միանալով, ու աստուծոյ որդւոյն հետ մեկ  
 ըլլալով, որ ճշմարիտ աստուած է ու յաւիտե-  
 նական կեանք. Եւ էմք 'ի ճշմարտին որդոյ նորա Յի-  
 սուսի Քրիստոսի, զի նա է ճշմարիտ սարսաճ և կեանք  
 յաւիտենական: Աս մասնակցութիւնն որ աստուած  
 սուրբ հաղորդութեամբը մեզի կուտայ իր յաւի-  
 տենական կենացը, որչափ խելքէ մտքէ մեր է՝  
 այնչափ իրական ու ճշմարիտ է, այնչափ ալ գե-  
 րազանց ու փափաքելի:

Ա Ղ Օ Թ Վ

Յիսուս փրկիչ իմ, աս ինչ սեր է՝ որ մեզի  
 ցուցուցիր, աս ինչ փառք է որ մեզի սուիր. քու  
 պատուական մարմինդ ճաշտիւնով՝ քեզի հետ ու  
 քու Հօրդ հետ մեկ կըլլանք. աստուածութիւնդ  
 քու սուրբ մարմինդ աստուածացուց, քու սուրբ  
 մարմինդ զմեզ կաստուածացնէ: Աւրեմն շնորբ

սուր ինծի՝ որ ջերմեւանգութեամբ ու փափա-  
 քանք հաղորդուիմ. մի թողուր որ անզգայ ըլ-  
 լամ քու սիրոյդ, ու անիոյթ ըլլամ ասանկ մեծ  
 շնորբին՝ որ քու պատուական մարմինդ ճաշտիւ-  
 ըովս կուենեամ: Ար ինդրեմ, սուր ինծի աս հացը.  
 Տէր, յամենայն ժամ որդի ինչ զնայն պայն. աս գերա-  
 զանց ու հարկաւոր հացը, աս հացն որ գուն էս:  
 Եկուր միրէ իմ սրտիս, մի թողուր որ ասկէց  
 էաքը մէյմն ալ քու կամացդ դէմ բան մը ընեմ,  
 որ ջըլլայ թէ զատուիմ քեզմէ, ու աս սուրբ ու  
 աստուածային միութենէդ զրկուիմ. վասն զի  
 քեզմէ որ զատուիմ, որուն զիմեմ որ ինծի յա-  
 վիտենական կեանք կարենայ աալ: Տէր, առ ոչ  
 երեւիցորդ, բանս կենաց յաւիտենականաց ունիս:

Բացան գրուիք հաւատայ նոր Սիսնի, ընդունել  
 զանմահ փեսայդ յառաքատ, բաշխէ զմարմին  
 քո և զարիւն. պահէա զսա անշարժ յաւիտեան:

# ՄՏԱԾԱԿԱՆ ԺԷ.

Նորէն Ս. Հայրապետեան խորհրդոյն վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Քրիստոս տէրն մեր 'ի ծնէ կոյրը բժշկելէն ետքը՝ երբոր Երեթով քաղաքը մտաւ, բոլոր ժողովուրդը ամեն զինն թափեցան՝ որ զինքը տեսնեն: Չաքէոս հոն տեղի մաքսաւորներուն զխաւորը՝ որ շատնց լսած էր Քրիստոսի հրաշքները, աս ետքի հրաշքն ալ լսելով, կը բաղձար զՔրիստոս տեսնելու. բայց հասալը կարճ էր, բազմութեան ետեկն չէր կրնար տեսնել զինքը, ուստի վաղէց գնաց ելաւ վայրի թղենիի մը վրայ՝ ուսկից որ Քրիստոս պիտոր անցնէր: Բաղձանքը կը յաղթէ դժուարութիւններու. շատ անգամ սուրբ հաղորդութիւնը ընդունելու՝ կամ իրեն այցելութիւն մը ընելու՝ արդէք կըլան մեր գործքերը, բայց իրաւցնէ բաղձանք որ ունենանք՝ աստի գանալը գիւրին կըլայ: Չաքէոս հարուստ մաքսապետ էր, իր պատուաւոր վիճակին ալ չէր վայլեր ծառի վրայ կըլը, իր վրան ծիծաղել պիտոր տար, բայց ամեն բան աչքը առաւ. Քրիստոս տեսնելու համար: Աս իր նիւթական

բաղձանքն ալ չերիք եղաւ՝ որ Քրիստոս իրեն ողորմի. ծառին քովէն անցնելու ատեն՝ վեր նայեցաւ ու ըսաւ. Չաքէ, շուտ ըրէ իջիր, բու տունդ պիտոր դամ: Մեկէն իջաւ՝ զինքը ընդունելու. բայց արդէք ինչպէս զարմացաւ մտքէն՝ Քրիստոսի զինքը ճանչնալուն, ու անունովը կանչելուն համար. արդէք ինչ ուրախութիւն ունեցաւ, որ զՔրիստոս՝ անցնելու ատեն համառօտ մը տեսնելու տեղը՝ իր աունը երկան ատեն պիտոր տեսնէր զինքը ու հեար խօսակցէր: Չէր ճանչնար Չաքէոս՝ Քրիստոսի ո՛վ ըլլալը, միայն լսեր էր որդի Գաւթի կոչուելը, ու այնչափ հրաշքներէն 'ի զամ՝ խօսքով մը 'ի ծնէ կուրին աչքը բանալու. ուստի սրտին մէջ սկսած էր՝ հաւատք մը՝ անոր Մեսիա ըլլալուն: Սեղան պատրաստել տուաւ իրեն, ու աշկերաններուն. այն սեղանին վրայ ո՛վ գիտէ ինչ կերպով խօսեցաւ Քրիստոս իրեն, ո՛վ գիտէ ինչ աղագեցութիւն ըրաւ սրտին իր շնորբովը որ, Չաքէոս մեկէն զիջումի եկած՝ ըսաւ Քրիստոսի. Ահա հարստութեանս կէսը աղքատներուն կուտամ, ու թէ որ մէկու մը զոկում ըրած եմ, չորս անգամ աւելի հատուցումը կրնեմ: Ո՛հ, թէ որ մէնք ալ ասանկ պատրաստութիւն ունենայինք՝ զՔրիստոս ընդունելու, աս սրտով զինքը ընդունէինք, ինչ բաներ չէր խօսեր մեր սրտին ալ, ինչ շնորբներ չէր տար մեզի: Չաքէոս իր ամենէն սիրելի բանը նուիրեց Քրիստոսի, այսինքն իր հարբատութիւնը. արդէք մէնք ալ ունինք աս արիւթիւնը՝ մեր վրայ ամենէն եւել տիրած կիրքը Քրիստոսի համար զպելու: Չաքէոս իր պարտքերուն քառապատիկը նուիրեց Քրիստոսի. արդէք մէնք ալ աս եւանդը ունինք որ պարտկան եղածնէս աւելին ընենք Քրիստոսի սիրոյն համար: Ասով կը ճանչցուի որ մեր ըրած հիւրընկալութիւնը՝ սիրոյ ու մեծարանաց հիւրըն-

կալու թիւն է . եկողնն պարպերնիս միայն վճարեցը՝ ոչ սիրոյ նշան է, և ոչ մեծարանաց . այսու ամենայնիւ այնչափին ալ գոհ է Քրիստոս, մեր ողորմելու թեանը գլծալով . հէրիք կը սեպէ ուղեւնիս՝ մէյմըն ալ իրեն գէմ չընել:

Մ Ս Ս Ն Բ .

Քրիստոս տեսնելով Զաքէոսին դարձը ու աւաջագրու թիւնը, ըսաւ . Սյօք եղև իբրև ինչ քանոս այսօր: Արդեօք ի՛նչ մի թարանք ունեցաւ Զաքէոս աս խօսքը լսելով . նոյն մի թարու թիւնը կուներանք մենք ալ, թէ որ Զաքէոսին եւանդը՝ իր առատասրաութիւնը ունենանք առ աստուած: Առատասիրտ մարդու մը ընծայ ընողը, չէ թէ միայն չի կորսնցնէր աստուածը՝ այլ կրկնապատիկը կը վատաբերէ, վասն զի առատասիրտ մարդը ոչ էր բէք տակը կը մնայ . թէ որ անիկայ կրկնապատիկ կը հատուցանէ, իսկ աստուած կը հատուցանէ բիւրատապախիկ . վասն զի աստուծոյ առատասրտութիւնը չափ չունի: Ի՛նչ է պատճառը որ Քրիստոս չէ թէ միանգամ՝ այլ ստեպ սներնիս կուգայ, ու վրանիս փոխութու թիւն մը չենք տեսներ, միշտ նոյն պակասութիւնները ունինք . վասն զի առատասիրտ չենք առ աստուած, պարպերնէս եւել բան մը չենք ուղեր ընել իրեն համար, ինքն ալ իր շնորքը խնայելով կուսայ մեզի: Զաքէոս միանգամ մը ունեցաւ բարեբախտութիւն՝ զՔրիստոս իր տունը ընդունելու, ու այնչափ սէր ու մեծարանք ցուցուց իրեն . հապա թէ որ Քրիստոս խոստացած ըլլար իրեն երթալու՝ քանի որ ուղէ, ի՛նչ ընդունելութիւն չէր ըներ, ի՛նչ շնորքներ չէր խնդրեր, ու ընդուներ իրմէն: Թէ որ Զա-

քէոսին չըրաւ Քրիստոս աս խոստմունքը, մեղը ըրած է . ամեն անգամ որ կուղենք, չէ թէ մեր տունը կուգայ՝ այլ սրաբնուս մէջ կընդունինք զինքը . ու կուգայ ամեն հոգեոր պիտոյքնիս լէցունելու համար, կուզէ որ խնդրենք իրմէն, որ չափ աւելի խնդրենք՝ աւելի կախորժի, ու աւելի կուսայ:

Մ Ս Ս Ն Գ .

Հապա թէ որ Զաքէոս մեր տեղը ըլլար, գիտնար որ իր տունը եկողը աստուած է, ան ատենը ի՛նչ չէր ըներ . ասուն ալ իրեն կուսար, տէր էս ու տէր եղիւր իմ ատնս ալ ինծի ալ կըսէր: Հոս է մեր հաւատքին զորութիւնը . կը ճանչնանք, չենք տարակուսիր որ սուրբ հաղորդութիւնը իւրօք ինքը Քրիստոս է, մեր ամեն ունեցածը՝ ու մենք ալ իրենն ենք . ուրեմն իրեն նուիրենք ունեցածնիս ալ զմեզ ալ, այսինքն ըրածնիս ալ խոսածնիս ալ մտածածնիս ալ իր փառացը համար ընենք, իր փառացը համար ապրինք, անանկ որ կարենանք Պօղոս առաքեալին պէս ըսել . Կենդանի էմ այսուհետեւ, ոչ էս, այլ կենդանի է յիս Քրիստոս:

Ա. Գ. Օ Թ Գ

Յիսուս փրկիչ իմ, ինչու համար ասանկ պատրաստ էս ամենուն տունը մանաբու, մէկուն սըրտէն ալ չէս զզուելի, որչափ ալ մեղաւոր ըլլայ՝ հէրիք կը սեպէս որ միայն ինքը իր մեղքէն զզուի: Վասն զի ամենուն ալ փրկուիլը կուզես, կուզես ամենուն համար ալ ըսել՝ Սյօք եղև իբրև ինչ քանոս այսօր: Ուրեմն հրամայէ եկուր իմ ատնս ալ . ուրիշ պատրաստութիւն չունիմ, բայց իմ անար-

ԺանուԹիւնս ճանչնալ, ու մեղքերէս զզուել: Ե-  
կուր, վասն զի Չաբէոսին տունը անոր համար  
մտար՝ որ մէկը չկուտասհատի իր մեղքերուն հայե-  
լով: այլ սիրա անէ խօսքովք որ հոն ըսիր. Եֆ-  
րդի ճարդոյ խնդրէլ և կեցոյցանէլ շիրուսեան: Ես ալ  
կորսուած եմ, բայց քու ողորմութեանդ պապ-  
ւինելով՝ վստահ եմ փրկութեան հասնելու:

Սիրա իմ հաստատեցաւ 'ի քեզ, Քրիստոս առ-  
տուած, և բարձրացաւ յոյս իմ 'ի փառս քո,  
որ զկենդանարար մարմին և զարիւնդ քո բաշխե-  
ցեր քաղցելոց, և 'ի խաչին բացեր զկողահոս աղ-  
բիւրդ՝ արբուցանելով փեղերաց զանմահութիւնս  
'ի ճաշակմանէ մահաբեր պաղղյն:

## ՄՏԱԾԱԿԱՆ ԺԸ.

Նարեկ Ս. Հայրաբարեան խորհրդոյն վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Քրիստոս է որ սրտերնուս մէջ կընդունինք.  
մտածենք որ ինչ մտքով ու ինչ սրտով աս սուրբ  
խորհուրդը մեզի համար սահմաներ է. իր միտքն  
ու սիրաը աղէկ կը բացատրեն սուրբ աւետարա-  
նիչները աս պատմութեամբս: Անգամ մը խել մը  
ժողովուրդ Քրիստոսի ետեւն գնացեր էին անա-  
պատ տեղ մը՝ իր սրտաշարժ խրատները լսելու.  
օրը իրիկուն եղաւ, առաքեալները իմացուցին ի-  
րեն որ արձրկէ ժողովուրդը, երթան աներնին  
կերակուր ուտելու: Ինքը ըսաւ. Սիրաս կը կը-  
տըրախ ատ ժողովրդեանը վրայ, անօթի տուն եր-  
թալու որ ըլլան՝ ճամբան կը մարմըրին, երթալու  
տեղերնին հետու է, դուք ասուք իրենց կերա-  
կուր: Առաքեալները պատասխանեցին. Աս անա-  
պատ տեղը ուսկից գանանք ուտելը. իրաւ՝ հինգ  
հաց կար տղու մը քով, բայց վեց եօթը հազար  
մարդկանց ինչ կը բաւէր: Ան ատենը ըրաւ Քրիս-  
տոս այն մեծ հրաշքը, հինգ հացը անանկ շատցը-  
նելով՝ որ ամենքը կշտանալն ետքը՝ ատուերկու  
կողով ալ աւելցան կտորներէն:



Ամեն սուրբ Հարք այն անսպասովը աս աչ-  
 խաբքս կխմանան, ուսկից ամենքս դէպ 'ի երկինք  
 կը ճանապարհորդենք. աս ճամբուս մէջ՝ հոգեւ-  
 րասպէս չխմարմըրելու ու փորձութեանց դէմ՝ չե-  
 սկարանալու համար, Քրիստոս տէրն մեր այս  
 սուրբ հացը տուաւ մեզի: Ու ինչպէս որ միան-  
 դամ մը Եւէոյի տա՛ ըսելովը՝ այն խօսքին ուժը ին-  
 չուան հիմայ կը քըշէ, արեւն ու լուսինը բոլոր աչ-  
 խաբքս կը լուսաւորեն, ինչպէս որ միանգամ մը  
 Բոստոնի երկէր ըսելովը՝ ինչուան հիմայ ծառերն  
 ու տունկերը կը բուսնին, ինչպէս միանգամ մը  
 կենդանեաց ու մարդկանց Ամէնքս և Բաղնայաբա-  
 ըսելովը՝ ինչուան այսօր իր խօսքին զօրութիւնը  
 կը տեւէ, ասանկ ալ միանգամ մը Այս է մարտի իմ  
 ըսելովը՝ ինչուան հիմայ երբոր քահանայն նոյն  
 խօսքը կը կրկնէ, հացը մարմին Քրիստոսի կըլլայ.  
 ու միանգամ մը առտքէլոցը ըսած ըլլալովը՝ Բոս-  
 րոս Դոնա Կոստէլ իր հրամանը ինչուան այսօր կը  
 տեւէ, ու նոյն հացը քահանայք ճաշակելէն ետքը՝  
 Ժողովուրդեան ալ կուտան ճաշակելու: Որպէս զի  
 ինչպէս ան ասեմի ժողովուրդը այն հացը ուտե-  
 լով զօրացան ու հասան իրենց քաղաքը, ասանկ  
 ալ մենք այս սուրբ հացովը զօրանանք հոգեւորա-  
 պէս, ու հասնինք բաբայութիւն: Քրիստոսի բա-  
 րեգութիւն սիրաբ միայն կրնար աս ճարը ընել մեր  
 ակարութեանը. ուզեց որ իր մարմինը ճաշակե-  
 լով անանկ իրեն հետ մէկ ըլլանք, որ ամենեւին  
 աշխարհիս ու սատանային փորձութիւններէն ու  
 վատագներէն չզիվանանք՝ զինքը միշտ հետերնիս  
 ունենալով. աս է ըսելը՝ Որ ուրիշ դարմին իմ, յիս  
 Բնակեցի և էս 'ի նմա. ու իր հետը մէկ ըլլալով՝ իրա-  
 շունք ունենանք՝ յաւիտենական երանութեան.  
 աս է ըսելը՝ Ե- ուր էնն էմ, անդ և պապանեայն իմ  
 Եւէոյի:

ՄԱՍՆ Բ.

Բայց ինչպէս որ Քրիստոսի ուրիշ շնորքները  
 ընդունելու համար՝ հաւատք կը պահանջուի, ևս  
 տուաւ ևս սուրբ խորհուրդին շնորքը ընդունե-  
 լու համար պէտք է հաւատքնիս զօրացնենք:  
 Սուրբ աւետարանը կըսէ՝ որ Քրիստոս տէրն մեր  
 Գալիլիայի մէջ շատ հրաշք չեկրցաւ ընելու. Բ'նչ  
 ըսել է Լէրցաւ. ինքը տէր չէր ուր որ կուզէր՝ որ-  
 չափ որ կուզէր՝ հրաշք ընելու: Տէր էր, բայց  
 անհաւատութիւնը արգելէր կըլլար իր շնորքե-  
 րուն. սուրբ աւետարանն է ըսողը. Ե- ու Կարաց  
 առնել անդ զօրութիւնս Բաղնայա վասն անհասարակեան  
 նոցա: Ընդ հակառակն ուրիշ տեղուանք հիւանդ-  
 ներ՝ կոյրեր՝ կապէր՝ չորս գին առած, հագուստին  
 ծայրը միայն դպչելով՝ կը ընանային. Աղաւէին զնա  
 չի գոնէ մանգամ 'ի գլանցս հանդերձի նոցա մեքէսիցին,  
 և որք մանգամ մեքէսցանն՝ իրենցան: Իսկ տեսաւ աս  
 կնկանը պատմութիւնը ամեն խօսք կը ըմբնցընէ.  
 վասն զի աս խեղճ կնիկը, տասուերկու տարի ամեն  
 ունեցածը բժիշկներուն տալէն ետքը յուսահա-  
 սած՝ հաստատ մտքը գրեթէ էր՝ որ Յիսուսի զգես-  
 տին մէկ ծայրին որ դպչէր, պիտոր ընընանար:  
 Բազմութեան մէջը մտաւ, դնաց դպաւ. կը կար-  
 ծէր որ այնչափ բազմութեան մէջ չխմայուէր:  
 Բայց Քրիստոս անոր դպչելը խմանալէն 'ի զատ,  
 սրտին մէջի ունեցած հաւատքն ալ խմացաւ  
 գարձաւ ըսաւ կնկանը. Բու հաւատքդ զքեզ ը-  
 ւընտցուց, երթաս բարով ով կին: Հասարակ և  
 ցառիցի դէպ, երբ 'ի խաղաղութիւն:

### Մ Ա Ս Ն Գ .

Հիմայ հոս Յիսուսի զգեստին ծայրը չէ՛ սրուն  
կը դպչինք . հոս զՔրիստոս սրտերնուս մէջ կըն-  
դունինք . ուր է որ մեզի ալ նոյն խօսքը ըսէ . Հա-  
սարք քո կեցողոյն դէտ, երբ ՚ի խաղաղութիւն : Ինքը  
ամեն շնորք պատրաստ է ապուռ մեզի, միայն հա-  
ւատքնիս պէտք է զօրացընենք . իրմէն ինդրենք  
որ զօրացընէ . Հասարակ փէր, օգնէս անհասարակ-  
ութեան իմում ըսենք : Հաւատանք որ այս սուրբ  
հայն որ կընդունինք՝ նոյն ինքն Քրիստոս է . հա-  
ւատանք որ կընայ, ու կուզէ, զմեզ յաւիտենա-  
կան փրկութեան հասցընել . հաւատանք ալ՝ որ  
մեր յաւիտենական փրկութիւնը իրմէ ինդրելու  
որ ըլլանք, չէ թէ ինդրածնիս միայն կուտայ՝ այլ  
ամեն մեր կարօտութիւնն ալ կը լէցընէ . ինքն  
է ըսողը՝ Խնդրեցէ՛ք նախ դարբայութիւնն սարսփոյ, եւ  
այն ամենայն յաւելցէ՛ք չէդ : Ուրեմն սրտանց ըսենք ինչ  
որ սուրբ եկեղեցին սարկաւազին խօսքովը մեր  
բերանը կը դնէ . Խոսքովանիմ եւ հասարակ, դի սա է  
Տարմն եւ արիւն փեռու մերոյ Յիսուսի՝ Քրիստոսի, որ  
Բառնայ զմեզ աշխարհի :

Ա. Գ. Օ Թ. Բ

Յիսուս փրկիչ իմ, առ ի՞նչ գթութիւն է որ  
ունիս մեր վրայ . հերիք չէ որ ապաշխարութեան  
խորհուրդը հաստատեր ես, որպէս զի մկրտու-  
թեան շնորքը դժբաղդաբար կորսընցընելու որ

ըլլանք, անովը նորէն ստանանք, այլ և սուրբ հա-  
ղորդութեան խորհուրդը հաստատեր ես, որպէս  
զի մահուչափ մեղքին մեր վրայ ձգած ահարու-  
թիւնը անով զօրացընես, որ նորէն չկնանք :  
Շնորք սուր մեզի, որ այսչափ խնամքդ պարսպ  
չխնանենք, ու այս սուրբ խորհուրդներովը հաս-  
նինք յաւիտենական փրկութեան :

Որ վառեցար ի յարիւոյն, եւ ոչ կիզար ըստ մորենւոյն,  
Այլ ետուր զհացըն կենաց կերակուր բանաւորաց,  
Բարեխօսես առ Քրիստոս ջընջել ըզգիր մեղաց մերոց :

## ՄՏԱԾԱԿԱՆ ԺԹ.

Քրիստոս իր առաքելոց սոքր լուսարեւ վրայ:

### ՄԱՍՆ Ա.

Երբ ընթրիքը պատրաստուած, ու Քրիստոս իր առաքեալներով սեղան նստած էր. միաքը երկինք վերցուց, կըսէ սուրբ աւետարանիչը, մտածեց որ իր երկնաւոր Հայրը ամեն բան իրեն ձեռքը դրեր էր. մտածեց որ Աստուծմէ ելեր էր ու առ աստուած պիտոր դառնար. սեղանէն ելաւ, վրայի զգեստը մէկգի զրաւ, զենջակ մը առաւ՝ մէջքը կապեց. էտքը ջուր առաւ՝ կոնքի մը մէջ լեցուց, ու ըսկաւ աշկերաներուն ոտքը լուալ ու զենջակովը սրբել: Վիպոց Յիսուս՝ զի պամենայն ինչ էր Հայր ՚ի Յետոս նորա, և ինչ յապոստոս էլ և առ ասպոսաթ էրնայ, յառնէ յընթերեաց անսի և այլն: Յիսուս՝ կարծես որ մոռցաւ իր արարիչ ըլլալը, մոռցաւ՝ որ ամենուն դատաւորն էր, ու օր մը ամենքը իր ատեանը պիտոր ելլէին. մոռցաւ՝ որ աստուծոյ որդի էր իր Հօրը հաւատար. իսկ սուրբ աւետարանիչը ընդհակառակն գիպոց Յիսուս կրօն, այսինքն մտածեց՝ որ իր երկնաւոր Հայրը ամեն բան իր ձեռքը դրեր է, ու այսու ամենայնիւ աս խո-

նարհուածիւնը ըրաւ: Ինքը կարծես որ մոռցաւ իրեն ո՛վ ըլլալը, ու աս աստիճան խոնարհելը յանձն առաւ. բայց մէնք պէտք է յիշենք իրեն ո՛վ ըլլալը, ու ոտք լուալու ատենն ալ իրեն երկըրպագութիւն ընենք: Ապշելու բան. հերիք չէ որ իր աստուածութեան փառքը մէկգի զրաւ ու մարդ եղաւ, ծառայութիւն ալ ուզեց ընել, զինքը ծառայի կարգ դնել, ուրիշներուն ոտքը լուալ: Ասկէց էտքը ինչ պէտք է երևնայ մեզի մեր հպարտութիւնը, մեր մեծ երևնալ ուզելը, մեր ունայնասիրութիւնը: Քրիստոս իր աշկերաներուն առջին աս աստիճան խոնարհեցաւ, իսկ մէնք կը պահանջենք որ ուրիշները մեր առջին խոնարհին, դժարնիս կուգայ երբոր ուրիշները մեզի յարգութիւն չընեն:

### ՄԱՍՆ Բ.

Երբոր Քրիստոս եկաւ Պետրոս առաքեալին ոտքը լուալու, Պետրոս գէմ՝ կեցաւ՝ ըսելով. Դո՞նք իմ ոտքս պիտոր լուաս, քաւ լիցի: Զարմանք չէ Պետրոս առաքեալին ետ քաշուիլը, վասն զի ան ատենը չէր գիտէր Քրիստոսի խոնարհելուն խորհուրդը. անոր համար Քրիստոս ըսաւ իրեն. դուն հիմայ չես գիտեր պատճառը, էտքը պիտոր գիտնաս: Բայց Պետրոս աս խօսքն ալ չիմացաւ, ու գեռ Քրիստոսի գէմ կենալով ըսաւ. Զեմ թողուր ամենեկին որ իմ ոտքս լուաս. Ու լուսողնս դիպոս իմ յառիպէան: Թէ և Պետրոսի աս խօսքը իր հաւատքն ու խոնարհութիւնը կը ցուցնէր, բայց Քրիստոսի այն խօսքէն էտքը պէտք էր հնազանդէր Յոհաննէս մկրտիչին պէս. աստուծոյ կամայը գէմ կենալը խոնարհութիւն չէ. ուստի պատաս-

խանեց իրեն Քրիստոս. Թէ որ չլըւամ, ինձի հետ մաս չես ունենար. Եթէ ու լաւացի դէպ, ու ունիւ ընդ իս ծան: Սոսկալի սպառնալիք, Քրիստոսի աշակերտութենէն զրկուիլ ըսել էր. Պետրոս աս խօսքը լսածին պէս, ըսաւ. Զէ թէ միայն ոտքս ու ձեռքս՝ այլ և զլըւխս լըւաւ: Հոս կերևնայ Պետրոսի սերն որ ունէր Քրիստոսի վրայ, երբոր անկէ զրկուիլ ըսեց՝ մոռցաւ ամեն բան, Քրիստոսի հնազանդեցաւ: Ասանկ է անոնց խոնարհութիւնն որ՝ սուրբ հաղորդութենէ ետ կը կենան, կը կարծեն որ խոնարհութիւն է ըրածնին. երբոր Քրիստոս է զմեզ հրաւիրողը, պէտք է հնազանդինք՝ երեն. խղճմանքնիս թէ որ մաքուր չէ, պէտք է մաքրենք՝ իրմէ չիզըրկուեալու համար:

ՄԱՍՆ Գ.

Քրիստոս մէկալ առաքելոցը հետ Յուդային ոտքն ալ լըւաց: Յուդա զիտէր իր անօրէնութիւնը՝ արդէն խօսք տուած ըլլալով քահանայապետներուն մասնելու զՔրիստոս. հոն ալ Քրիստոսի բերնէն ըսեց Պետրոսի ըսածը՝ Իսկ ուրքէ և, այլ ու ամենէին, ու իմացաւ որ իրեն համար էր այն խօսքը: Այնչափ անգամ տեսած էր Քրիստոսի ամենակարողութիւնը՝ կուրերուն աչքը ու խուլերուն ականջը բանալու, ու մեռէլներու յարութիւն առնել տալու ատեն. այսու ամենայնիւ տեսնալով որ Քրիստոս իր առջին խոնարհած՝ ոտքը կը լըւար կը սրբէր, սիրտը չեշարժեցաւ Քրիստոսի հեղութենէն ու այնչաշարութենէն, միտքը դրածը չխիտխեց. Թող տալու տեղը որ Քրիստոս իր ոտքը իյնայ, ինք անոր ոտքը չինկաւ՝ մեղայ ըսելու, ճանչնալով ալ որ գիտէր իր միտքը դրա-

ծը: Սոսկալի տեսարան մըն էր. Քրիստոս Յուդային ոտքը խոնարհած, Յուդա զՔրիստոս մասնելը միտքը դրած. մէկ զիէն այնչափ սէր ու հեղութիւն, մէկալ զիէն այնչափ ատելութիւն ու յամառութիւն. ո՞ր պիտոր վերջանայ աս տեսարանը: Բայց Յուդա միտքը դրածը պիտոր ընէ, երթայ դահալիժի կորսուի պիտոր: Քրիստոս աւոյն ալ զինքը ձեռքէ չեթողուց. առանց Յուդային անուշը տալու՝ ըսաւ առաքեալներուն որ իրենցմէ մէկը զինքը մասնէր պիտոր, որպէս զի յանցաւորը զգաստանայ: Բայց Յուդա տեսնելով որ Քրիստոս զինքը ուրիշներուն առջին չեխայտառակեց, անով դարձի զալու տեղը՝ ուղեց խաբէլ իր ընկերները, ու անոնց հետ՝ Մէն էս ինք՝ ըսաւ Քրիստոսի, որպէս զի իր անօրէնութիւնը ուրիշի վրայ ձգէ: Աս ալ հերիք չխեպեց Քրիստոս՝ նորէն նշան մըն ալ տուաւ սիրտը շարժելու համար, ձեռքը ինձի հետ կերակուրին երկընցնօղն է մասնիչս ըսաւ, ու անոր ընելու մեղքին ծանրութիւնը ցուցնելու ու զինքը սոսկացնելու համար՝ յարեց ետեւէն. վայ ան մարդուն՝ որ զիս պիտոր մասնէ, ալ աղէկ էր իրեն՝ որ աշխարհք եկած չըլլար: Ետքը իր սուրբ մարմինն ու պատուական արիւնն ալ՝ մէկալ առաքելոց հետ անոր ալ տուաւ. բայց բան մը հերիք չեղաւ Յուդային սիրտը կահուցընելու: Ինչպէս որ աստուծոյ առջի տուած շնորքը բանեցնօղը աւելի շնորքը ընդունելու արժանի կըլլայ, ասանկ ալ աստուծոյ առջի տուած շնորքը ոտքի տակ անոյղին ետքը՝ հասարակօրէն ասանկ կը լըննայ: Յուդա այսչափ շնորք ընդունելէն ետքը՝ մասնեց զՔրիստոս, ու յուսահատութենէն ինքը զինքը կախեց:

Ա Ղ Օ Ք Ք

Յիսուս փրկիչ իմ, մի թողուր որ քու շնորքդ արհամարհեմ. ինձի համար խաչին վրայ մեռնելիք Յուդային օտքը լուսալէդ անհամեմատ աւելի մեծ է. քու խօսքդ է. Մէծ ես քան զայս սէր ու ուրիշ, եթէ զանոյն իւր դէմքն 'ի վերայ Բարեկամաց իւրոց: Ենորք ասուր ինձի որ քու ասանկ մեծ շնորքդ պարապը չիհանեմ. որչափ ալ մեղաւոր եմ, բայց չեմ ուզեր Յուդայի պէս յամառեալ մեղաւոր ըլլալ. ներէ իմ մեղքերուս, սղորմութեանդ արժանի ըրէ զիս՝ ինչպէս որ ըրիր հեադ խաչուած աւաղակին:

Որում երկրպագեն դասք հրեշտակաց, խոնարհեցար 'ի լուսնալ զոսս հողեղէնս՝ բժշկել սոքօք զգարշապարս նախահօրն, բժշկեալ զճոգւոյ ինոյ զհիւանդութիւնս:

# Մ Տ Ա Մ Ա Կ Ա Ն Ի .

Քրիստոսի Յուդայէն մատուցեալ վրայ:

## Մ Ա Ս Ն Ա .

Յուդային սա սոսկալի մեղքը՝ իր պագահութիւնը առաջուց չիմահացընէն հեռեցաւ, ինչպէս ամեն ծանր մեղքերն ալ սղտիկէն կը սկըսին: Առաքելոց կարգը մտաւ աս կիրքով. առաքելութեան մեջ իր կիրքը զսպելու տեղ՝ աւելի աճեցուց. շատ հաւանական ալ է որ ինքը ուզած ըլլայ անտեսութեան պաշտօնը աննել, իր արծաթութիւնը իրեն խրատ պիտոր ըլլար պաշտօնէն հրաժարելու՝ որպէս զի մեղաց առիթը հեռացընէ իրմէն. իսկ ինքը պաշտօնը չիթողուց՝ գողութիւնը շարունակելու համար, չիկարծեց որ աս իր ակտիւ պիտոր հասնի օր մը՝ ուր որ հասաւ: Քրիստոսի տուած արծաթսիրութեան դէմ խրատները կը լսէր, ու փոյթը չէր ըլլար. ախար ասաջ գնաց. անուշահոտ եղը չէր ուզեր որ թափուի, կուզէր ծախել որ գինէն գողնայ: Քրիստոսի անուշ խրատը իրեն առաւարուն դէմ, ու գողութեան առիթը վերցընելը, հերկը եղաւ որ զայրա-

նայ, ու սկսի մտածել լրջժ առնելու: Ան առեւորդ տիրեց սատանան իր վրայ. Ապա էմպա սարանայ է Յուդա. առաքեալ էր, եղաւ մասնիչ, ու Քրիստոսի սպաննողներուն դուռն. Որ էլն առաջորդ ունէլէայն Յիսուսի: Ինչ կործանում: առաքեալ մը՝ մի յերկոսասանից, ուրիշ առաքեալներուն պէս ամենուն սիրելի՝ ամենուն տունելի ըլլալու տեղը, ինչուան աշխրթս ետքը դարձելի պիտոր ըլլայ ամենուն, ամենքը անիմեն պիտոր զինքը, ու իր անունը Յուդա՝ յարնել պիտոր նշանակէ:

ՄԱՍՆ Բ.

Ելաւ զնայ Յուդա, դտաւ քահանայապետնէրը՝ որ խորհուրդ կընէին կոր ինչ կերպով Քրիստոս սպաննելու. ըտաւ իրենց՝ ինչ կուտանք ինձի, թէ որ ձեր ձեռքը տամ զինքը: Աս ինչ սիրաւ ամեն որ Քրիստոսի հեղուծիւնը ու քաղցր ընտանուծիւնը վայելէն ետքը, ամեն որ իր հրաշքները տեսնէն ետքը, զինքը իր սիրելի աշխրտներուն կարգը զնէլէն, անոնց հետ իրեն ալ հրաշքներ ընելու իշխանուծիւն տալէն ու անդին ալ արքայուծիւն ու դասուական ածու խոստանալէն ետքը, երթալ մասնել զինքը անոնց՝ գիտնալով որ անիրաւ տեղը զինքը կը հալածէին: Ասիկայ սիրտ չէ, հրէշիմէ անգլուծեան ու տպերախտուծեան: Խիստ ուրախացան քահանայապետները, մէյմը որ դտան կերպը Քրիստոս բռնելու, մէյմըն ալ որ իր աշխրտին ձեռքով պիտոր բռնէին. անոր համար այն քահանայապետներն որ ազահուծեան կողմանէ ալ Յուդայէն վար չէին մնար, խոստացան իրեն երտուն արծաթ գահեկան: Եւ խեղաչին, և խոստացան քաւնմա ար-

ծառ: Ու ան առեւորդ կընեցին մեկդի դրին տալու արծաթնին. Կընեցին նմա էրեսուն արծաթի: Քահա- նայապետներուն ըրած ժողովքը՝ սատանայից ճաւովք էր, ժողոված անգլերնին ալ դժոխք. ինչ ուրախուծիւն որ իրենք հոն տեղը ունեցան, սատանաննին ալ դժոխքնին մէջնոյն ուրախուծիւնը անոնց հետ ըրին: Երկու գիէն առուտուրի դաշնագրուծիւնը հաստատուեցաւ, գերի մը զնէլու զին էր տուածնին, այն անարգ գնովը յանձն առաւ Յուդա՝ իր յաւիտեանական երանուծիւնը Քրիստոսի հետ ծախել: Աստուած պահէ՝ որ մեք ալ ասանկ առուտուր չընենք, անարգ կիրքի մը համար դասուած չիկորսընցընենք, ու մեր փրկուծիւնը վտանգի մէջ չիդնենք:

ՄԱՍՆ Գ.

Յուդա աս անորէնուծիւնը ընէլէն ետքը՝ դեռ Քրիստոսի հետ կը նստէր կեւքեր, միտքը յարմար տան գտնալ էր զինքը մասնելու. Եւ յայնմէքէ խեղբեր պարսպ, շի յարնէսցէ ընա նոյա: Բայց այսու ամենայնիւ Քրիստոս իրեն կը համբերէր, ինչպէս որ աստուած մեղի համբերէր է մեղքի մէջ եղած ստեննիս ու կը համբերէ: Քրիստոս զինքը յանգիմանելու ու վաճառելու տեղը՝ ետքի ընթերաց իրկուծը անոր ստքն ալ լուաց ու սրբեց, ասիկայ ալ անոր խիստ սիրաւ չիկազուցուց. լսեց ալ Քրիստոսի ըսելը՝ Եւ դո՛ւք սուրբ էք, այլ ու ամենէին խնացաւ որ գիտէ իր ըրածը, ու այսու ամենայնիւ չամաչեց, դուրս չէլաւ, կեցաւ որ իր ոտքն ալ լուայ: Ետքը Քրիստոս յայտնի ալ ըտաւ՝ Մի տէ՛ր է՛ ինչ յարնէսցէ է շի. բայց ինքը դեռ հոն կեցած՝ կեղծաւորուծեամբ իր անորէնուծիւնը

ուրիշներէն ծածկելու համար, ինքն ալ մէկալ առաքեալներուն հետ հարցուց՝ Մի՞ թէ էս իցէ՞մ: Ու երբոր Քրիստոս պատասխան տուաւ՝ Գաւ էս, դարձեալ հոն կեցաւ. Քրիստոսի սուրբ մարմինն ու արևնն ալ սրբապղծութեամբ ճաշակեց: Քրիստոս զինքը գարձի բերելու՝ սիրաբ շարժելու համար, նորէն ըսաւ որ աշխերաներուն մէկը զինքը մասնէր պիտոր, ու նշանն ալ տուաւ ո՛վ պիտոր ըլլար մասնից՝ Թաթխած պատառը Յուգային տալով: Իայց Յուգա գարձի գալու տեղ, սրբութիւնը առածին պէս՝ էլաւ ցիւաց որ քահանայապետներուց ըրած խոսամունքը կատարէ: Քրիստոս ընթրելը ընկնողներէն ետքը՝ Զիթեանէաց լեռը էլաւ, ինչպէս իր սովորութիւնն էր, գիշերը աղօթք ընելու. հետը առեր էր Պետրոս Յակոբոս ու Յոհաննէս աշխերաները: Անոնք Թաբոր լեռան վրայ ըրածնուն պէս՝ սկսան քնանալ. երևու անգամ Քրիստոս աղօթքին առենը քովէր նին եկաւ՝ արթնցուց զիրենք՝ որ աղօթք ընեն, փորձութեան մէջ շինարու համար. բայց նորէն քուններնին տարաւ: Երբորդ անգամ եկաւ ու ըսաւ: Ելէք երթանք սակէց, հիմայ կուգայ մատանիք: Աս ըսելու առենը հասաւ Յուգա, հետն ալ բաղնութիւն՝ լապտերներով գաւաղաններով ու Թուրերով. հետը եղողները քահանայապետներուն ծառաներն ու պաշտօնեաներն էին: Յուգա իրենց նշան տուած էր որ, որուն հետ որ պատգաւի՝ անիկայ է Քրիստոսը, անիկայ բռնեն: Դատ կուրութիւն՝ որ դեռ իր անորեմութիւնը ծածկել կուզէր, թէ իր վարդապետէն և թէ ուրիշ առաքեալներէն, ու իբրև թէ իր գործքերը ըլնցուցած՝ իր վարդապետին քովը կը գաւտար. ուստի մտեցաւ Քրիստոսի, ու ողջ լեր ըսելով՝ երեսը համբուրեց: Քրիստոս երեսը չիգարձուց, թողուց որ համբուրէ իր սուրբ և աստուածային

եբեսը. միայն աս խօսքը իրեն զուրցեց զինքը պագնելու առենը. Յուգա, համբուրելով կը մասնես զիս: Աս վերջին աղգարարութիւնն էր որ ըրաւ իրեն, շնորքին չափը լեցուեցաւ, ասով Քրիստոս իրեն ցուցուց՝ թէ իր սէրը և թէ անոր ըրած անորեմութեան ծանրութիւնը. ու թէ որ Յուգա աստիկ շնորքը ստքի տակ առաւ, զարմանք չէ անկէց ետքը յուսահատութենէն ինքը զինքը կախելը:

Ա. Դ. Թ. Գ

Յիսուս փրկիչ իմ, ինծի շնորք սուր որ չըլլայ թէ անարժանութեամբ հողորդուելով՝ Յուգայի նման ըլլամ. չըլլայ թէ գրտուանց սիրոյ նշան տալով՝ զբեղ անոր պէս մասնեմ, դուն միայն կը ճանչնաս իմ խստասրտութիւնն, ու դուն միայն կրնաս իմ սիրտս կակղցնել՝ որ չըլլայ թէ այնչափ շնորքներն որ ինծի ըրեր ես՝ ստքի տակ առնեմ, մեղքերուս վրայ սրտանց զըջացած չըլլամ, ճշմարիտ գարձի եկած չըլլամ, ու սրբապղծութեամբ զբեղ ընդունիմ. իրաւան առենը Յուգային տուած վայիդ էս ալ արժանի կըլլամ, ինծի համար ալ կըսես ձայն Գարդոնայի: Ասկէց ետքը քու շնորքովդ խոճմասնիքս աղէկ մաքրած մօտենամ սուրբ սեղանը, որպէս զի քու սուրբ մարմնիդ և պատուական արիւնիդ ըլլայ ինծի քաւութիւն մեղացս, ըլլայ ինծի յաւիտենական կեանք, որպէս զի քու օրհնութեանդ արժանի ըլլամ արգարներուն հետ՝ Եկոյտ օրհնեալ լընլու քու աստուածային բերնէդ:

Յաստուածային կայծակունս ի սրովբեց անհրպակին  
Անմարդապետ մերձեցար՝ դ՛ու պարտապան քում  
խորհրդոյ.

Դնորհեա ընդոյն մարբութեամբ  
Ի թողութիւն մեղաց մերոց:

# ՄՏԱ.ԾԱ.ԿԱՆ ԻԱ.

Յոսիպին զԳրիստոս համբոյն զրոյս :

## ՄԱՍՆ Ա.

Յուզային ըրածը մէկ մեղք մը միայն չէր, այլ շատ ու ծանր մեղքեր մէկտեղ. առաքեալ ըլլաւ պիտոր, եկեղեցւոյ հիման քարերուն մէկը, ու ինքը եղաւ ամսորիշաներուն գլուխը, Քրիստոսի մահուանը սկզբնապատճառ, առաջնորդ ունեւեաղն Յիսուսի: Քրիստոսի ըրած հրաշքները իր աչքովը տեսած էր. այսու ամենայնիւ՝ եթէ հաւատաց որ հեալ առած զինուորները առանց Յիսուսի կամացը չիկրնային պիտի բռնէլ զինքը, ինչ կուրուծիւն: Թաղալուծեան ու սիրոյ նշանը գործածէց՝ զՔրիստոս թշնամիներուն ձեռքը աղու, ինչ նենդուծիւն: Յանձնեց զինուորներուն որ զինքը աղէկ բռնեն՝ որ չիփախէի, ինչ ատելուծիւն: Թերևս կը վախնար որ Քրիստոս ձեռքունուն փախչէլու որ ըլլայ՝ ինքը երսուն զահեկանը կը կորսնցնէ. ինչ գարշելի ազահուծիւն. Ըստ որում էս կամբողքն ինչ է, կալիքի նա ե պարբիքի դժուարութեամբ: Յուզա առ իր գործքովը եղաւ գլուխ ուրացողներուն, որոնք հաւատքնին ուրացածնուն պէս՝ եկե-

ղեցւոյ դէմ ատելուծիւն բռնուծիւն ու մատնուծիւն կրնեն: Եղաւ գլուխ նենդաւորներուն, որոնք ուրիշը կը գգուեն՝ որոգայթի մէջ ձգելու համար: Եղաւ գլուխ վատ մարդկանց, որոնք աւարգ շահի մը համար ուրիշներուն կրիցը պաշտօնեայ կըլլան, ու անոնց մեղքն գործակից: Եղաւ գլուխ անդուծ ու չարասիրտ մարդկանց, որոնք իրենց փափին ամեն բան կը զոհեն:

Յուզա զինուորները ետև թողուց, ինքը առաջ դնաց՝ որ պագաուի Քրիստոսի հետ, ինչպէս որ անոնց հետ խօսք գրեք էր: Ինչ կուրուծիւն. Քրիստոս իրեն յայանի ըսեր էր իր անօրէնուծիւնը, ինքը դեռ ծածկէլ կուզէր զանիկայ, չէ թէ միայն առաքեալներէն՝ այլնաւ ի Քրիստոսէ, իբրև թէ ետեէն եկող զինուորներուն հետ ինքը բան մը չունէր: Գիտէր որ ուրիշներուն սիրալը կը տեսնար Քրիստոս, մտածածնին կը զուրցէր, ու ինքը իր նենդուծիւնը կուզէր ծածկէլ անիկէց՝ սիրոյ ու բարեկամուծեան խօսքով, Առջ լեր Լուրապէս ըսելով: Կը սոսկայ մարդ՝ երբոր երևակայէ Յուզային Յիսուսի վեղը ինչալը, զինքը պագնէր, ողջ լեր ըսելը. երբոր մտածէ որ ինչ կանցնէր կըր մտքէն՝ Քրիստոսի այսչափ սիրոյ գործքերը ընելու ատեն:

## ՄԱՍՆ Բ.

Քրիստոս երեսը չիգարձուց, ընդունեցաւ Յուզային պիղծ շրթունքը իր սուրբ երեսին վրայ, աւոր նենդաւոր համբոյրը ընդունեցաւ՝ այն իր երեսին վրայ, որուն ատելուծիւնը՝ արգարոց յաւիտենական երանուծիւնն է արքայուծեան մէջ: Այն համբոյրը ամենէն ծանր չարարանքներուն



մէկը եղաւ Քրիստոսի, ինչպէս որ վախուկ սըր-  
տի մը իրմէն բարերարեալ մարդէ մը նենդու-  
թիւն ընդունելը խիստ ծանր կուգայ. իսկ Յու-  
գային նենդութեանը պէս դարձելի նենդութիւն  
եղած չէ աշխրջիս վըայ: Իր վարդապետը մատ-  
նելու բանեցուց այն մտերմութիւնը՝ որն որ  
Քրիստոս խոնարհութեամբ առեր էր իր աշ-  
կերաներուն իրեն հետ պագտուելու. այն մեծ  
շնորքը բանեցուց զՔրիստոս թշնամիներուն ձեռ-  
քը առլու՝ որ սպաննեն իր բարերար՝ իր սուրբ՝  
իր անմեղ վարդապետը: Ի՞նչ քաշեց արդեօք  
ան վայրկեանին Յիսուսի վախուկ սիրտը. ի՞նչ պի-  
տոր ըլլայ աս ապերախտութեանը քով մեր քա-  
շած ապերախտութիւններն որ մեղի այնչափ  
ծանր կուգան, ու այնչափ կը դանդաղանք՝ ան-  
տանելի ապերախտութիւն է ըսելով: Բայց այսու  
ամենայնիւ Քրիստոս զինքը չիմերժեց. որչափ ալ  
անարժան էր սիրոյ, դեռ սէրը չիվերցուց, զինքը  
դարձի բերելու զէն, զինքը իրեն ընկէ կոչեց, ու  
անանկ անկեղծութեամբ խօսեցաւ հետը՝ որչափ  
որ Յուդա նենդութեամբ զինքը ողբունեց: Քրիս-  
տոսի սուրբ սրտին ամենէն մեծ ցաւը՝ Յուգային  
կորուստն էր, տեսնալ որ իր աշկերարը՝ իրմէն ա-  
նանկ բարեպաշտ կրթութիւն առած, իրմէն այն-  
չափ շնորքներ ընդունած, դժոխքին տակը կը գա-  
հալիժէր: Ողորմելի՛ Յուդա, ո՛ւր հասուց զինքը  
ազահութիւնը. անփոյթ չըլլանք մեր ախտերը  
զսպելու, երթալով կը մեծնան, զմեզ կը կոր-  
ծանեն:

Քրիստոս աս խօսքը միայն ըսաւ Յուգայի. Յու-  
դա, համբուրելով մարտն դարձի մարդոյ: Աս խօսքովը  
խնայուց անոր՝ թէ իր սէրը, և թէ անոր յանցա-  
նացը մեծութիւնը: Աս խօսքէն Յուգային սիրտը  
միայն կրնար չիշարժիլ. բայց աս իրեն խտտաըր-  
տութեանը համար էր որ Քրիստոս իրեն ան վայր

տուսու. Բայց վայ մարդոյն այնքի, յոյր յետն որքի մար-  
դոյ մարտնոյի: Ու ետեւէն յարեց այն սոսկալի  
խօսքն ալ. Լաւ էր նմա, Բէ լեբ իսի ծնեալ մարդն այն:

### Մ Ա Ս Ն Գ .

Աս ամեն բանէն ՚ի զաս՝ Յուգային ըրածը մեծ  
նախատինք ալ էր Քրիստոսի. վասն զի իր աշկերա-  
տներէն մէկը ըլլալով մասնիցը, տեսնուցին ու լսող  
ները կրնային ըսել՝ որ ուրեմն իրաւ չէ Քրիստոսի  
որդի աստուծոյ ըլլալը, սուս են իր ըրած հրաշք-  
ները, որովհետեւ ընչա իր քովը եղող անձ մը՝ որ  
իր վարուցը ու ամեն գործքերուն ակնհաստես էր,  
չիհաստալով իրեն՝ զինքը իր թշնամեացը ձեռքը  
մասնէր էր: Ասոր համար է որ քահանայապետ  
ները այնչափ ուրախացան, ու հանդերձ իրենց  
ազահութեամբը՝ սասկ խոստացան իրեն. Ե-  
տեւային, և խոստացան պալ նմա արծաթ: Ասոր համար  
ալ է որ Քրիստոս աւերն մեր՝ որուն բերնէն ամե-  
նեկն դանդաւ չէր ելէր, ու զինքը խաչ հանուցնե-  
րուն առջին ալ գառնուկի պէս անմուռնչ կեցաւ,  
իր աշկերտէն աս նախատինքը ընդունելուն հա-  
մար՝ մարգարէին բերնովը կը գանգատի. Զի Բէ  
Բշնամայն նախապէալ էր, համբերէի արդեօք:

Մ. Գ. 0 Թ Վ

Յիսուս փրկիչ իմ, չըլլայ որ աս գանգաւոր էս  
ալ իմ վըաս ընել տամ քեզի՛ գայթակուութիւն  
տալով ուրիշներուն, իմ սուրբ հաւատքիս համե-  
մատ վարք չունենալով: Ինչ նախատինք որ ին-  
չուան հիմայ ըրեր եմ՝ քեզի՛ քու աշկերտդ ըլլա-

լով, ջանամ այսուհետև անոր ներհակը ընելու, որպէս զի անհողները ճանչնան ինչ տիրոջ ծառայելը, սորվին որ քեզի ծառայելն է վերհուժեան հասնելու ճամբան, ու զարձի դան. Ուստիցի անօրինաց զճանապարհս քո, և ամպարիչս քո քեզ շարժիցին:

Այսօր զոր սերովբէքն ծածկէին զդէմն յահէ փառաց աստուածուծեանդ, իսկ հորստեան սրգին Յուզաստ՝ ի համբոյր մերձեալ նենգուծեամբ՝ նշանակ և առիթ մահու անմահիդ. վասն որոյ երկրպագեմք անճառելի քո խոնարհուծեանդ:

### ՄՏԱԾԱԿԱՆ ԻԲ.

Քրիստոսի տրամուշրևակը վրայ:

### ՄԱՍՆ Ա.

Մնչ որ Քրիստոս աւերն մեր իր կենացը համար՝ ըսաւ՝ Իշխանութիան ունիմ զինքս, և իշխանութիան ունիմ մասնագամ առհասը զինքս, ևս առաւել իր ամեն չարչարանացը ու ամեն քաշածներուն վրայ ալ իմանալու է. ուստի նաև իր արամուծեանը՝ որ Գեթսեմանի պարտիզին մէջը կրեց: Իր ամեն խօսքերէն ալ յայտնի կերևայ՝ որ ուղած ատենը ունեցաւ ատ արամուծիւնը: Յոբի ընթրեաց ատեն ըրած խօսքերը ան ինչ խաղաղ հոգեով զուրցուած խօսքեր են. ամեն մէկ ըսածը մարդուս սիրալ կը մխիթարեն, արիւծութիւն կուտան մարդուն: Նմանապէս սլարտէզը մանալու ատեն ըրած խօսքերը՝ ամեննին արամածի խօսքեր չեն: Ուրեմն ետքն որ անանկ արամեցաւ ինչուան ըսաւ Տրքոսմ է անքն իմ մինչև ի մահ, ու սաստիկ արամուծեանէն արիւն որ քրտնեցաւ, ըսել է որ ինքը մեր սիրոյն համար ուղեց քաշել ատ արամուծիւնը: Եւ սխառ քրքիւր և հոգաւ: Ինչուան ան ատենը իր չարչարանացը վրայ խօսելու ատեն՝

վրան արամուժիւն մը չէրենալէն 'ի զատ, կը բազմար որ որ մը առաջ չարչարուի ու մեանի զմեզ փրկելու համար. մէյմը կըսէր՝ Միրփուր-նի մի ունի՞մ մը քիւ, և զիսրդ ինչ-իսմ միսլա կապուէսոյի: Մէյմըն ալ կըսէր. Յանկանաւ յանկանայ զայս պա- սէր ուրիշ ընդ յեւ: Իսկ ան առենը անանկ արամու- յիսաւ՝ որ հարեւաբքի աստիճան հասաւ. Ե- էր 'ի քապուսպի. ինչուան երկկնքէն հրեշտակ ինչաւ՝ որ զինքը զորացնէ, թէ որ չէ՝ արամուժեան աստու- կուժենէն չէր գիմանար, կը մեռնէր: Աս վիճա- կին մէջը տեսնելով մեր փրկիչը, կրնայ սրտերնիս չնշարժիլ՝ երբոր մասձենք որ աս արամուժիւնը զմեզ յաւիտենական արամուժեանէն խաղսելու համար քաշէ: Ուրեմն ասիկց ետքը ինչ արամու- ժիւն որ ունենանք, մասձենք մեր փրկիչը Գեթ- սեմանի պարտիզին մէջ. մեր արամուժիւնը իրեն նուիրենք, իր արամուժեանը հետ խառնենք, որ պէս զի յաւիտենական արամուժեան տեղը յա- վիտենական երանուժեան արժանի ըլլանք:

ՄԱՍՆ Բ.

Արիւժեամբ չարչարուիլ ու արիւժեամբ մեռ- նիլը՝ կարծես որ փառք մըն է մարդուս, արամիլը՝ հոգ ընելը՝ սկարուժեան նշանն էն. բայց որով- հետև հոգինիս ու մարմինիս ալ սկարացիւ եր մեղօք, երկուքն ալ կարօտ էին մաքրուելու ու զորանալու, Քրիստոս տէրն մեր ուղեց հոգւով և մարմնով մեր սիրոյն համար չարչարուիլ ու հո- գին իր մարդկուժեանը աշուտագոյն մասը ըլլա- լով՝ անկէց սկսաւ իր զոհը ընելու: Մէկ զինն չարչարանքներն որ պիտոր քաշէր՝ ամեն պարա- դաներովը երեւակայուժեանը կուգային, մէկալ

զինն Հրեկց թշուառուժիւնը, որոնք զինքը սպան- նելով՝ Աստուծմէ սոսկալի սպախիժ վրանին պի- տոր գար. ու ասոնցմէ եւել մեղաւորներն որ իր քաշածներովը աւելի յանցաւոր պիտոր ըլլային, ու անոնցմէ շատերը պիտոր դատասպարաուէին: Աս ետքի մասին մէջ ամենքս ալ կը մտնենք, ամե- նուս մեղքերն ալ իրեն արամուժեան պատճառ եղան, ու իր արամուժիւնը աւելի սասակացու- ցին: Ափսոս, զինքը արամեցընելու տեղը՝ կըր- նայինք մխիթարել անմեղներուն հետ, թէ որ մենք ալ իրենց պէս անմեղ կեանք ունենայինք: Քրիստոս աս արամուժիւնը քաշէ՞ր՝ մեր անկարգ ուրախուժիւնները քաւելու համար, մեր ամեն մեղքերուն՝ որ մեղով ու երեւակայուժեամբ կը գործենք՝ աստուծմէ թողուժիւն խնդրելու հա- մար: Վայ էր մեզի, թէ որ Քրիստոս աս չարչա- րանքները մեզի համար քաշած չըլլար. ինչ զու- ջուժմ՝ ինչ ասպաշխարանքներ ալ ընէինք, առանց ասոնց չէին բաւեր. արքայուժեան դուռը մեզի համար միշտ գոց կը մնար:

ՄԱՍՆ Գ.

Կրնար Քրիստոս չիթողուլ որ արամուժիւնը տիրէ իր սրտին, կրնար աներկիւզ կրել մեզի հա- մար քաշելու չարչարանքները՝ առանց ասնջելու առաջուց անոնցմով իր երեւակայուժիւնը. բայց ուղեց որ իր սրտին մէջ առաջուց կրէ դանոնք. հարկաւոր հատուցում մը սեպեց աս իր ներքին ասնջանքը նուիրել երկնաւոր Հօրը՝ մեր մեղքե- րուն համար. վասն զի մեղքերը ներբուստ առաջ կուգան, սրտէն կը սկզբին. Զէ՛ 'ի սրտէ ելանէն խոր- հորդոք արտ. հոգին է որ իր կամօքը մարմինէն ա-

ուսջ կը սկըտի գործելու ամեն մեղք: Ասոր հա-  
մար թողուց որ իր սիրտը աս մահաբեր արամու-  
թիւնը կրէ. ու ինչպէս կրեց, արանջալով, ան-  
համբերութեամբ, երկան բարակ իր արամու-  
թեանը պատճառները պատմելով իրեք աշկերտ-  
ներուն՝ որ հետը առած էր. հազիւ քանի մը բա-  
նով իր ծանր արամութիւնը իրենց իմացուց: Չի  
կեցաւ իրենց քովը՝ անոնց հետ քիչ մը մտիթա-  
րուելու, նորէն մեկդի քաշուեցաւ՝ աղօթք ընե-  
լու, իրեք ժամ աղօթքով անցուց, առանց իր  
աղօթքին լսելի ըլլալը կամ չըլլալը նայելու. ու-  
րիշ բան չէր ուզածը՝ բայց համակերպութիւն  
երկնաւոր Հօրը կամացը հետ. Հայր, ու որպէս իմ  
հօմ, այլ որչա՛ր լինի. Ու որպէս էս կօմի, այլ որպէս որ-  
կօմի: Ամենքս արամութեան պատճառներ ու-  
նինք. չունենանք ալ՝ մեզմէ կը հնարենք. բայց  
մեր արամութիւնները ոչ Քրիստոսի արամու-  
թեանը չափ ծանր են, և ոչ մեր արամութեան  
պատճառները իր ունեցած պատճառներուն կըր-  
նան բազդատուել: Ուրեմն պէտք էր որ համբե-  
րէինք, ու սիրով քաշէինք. բայց մեր անձնասի-  
րութիւնն է որ զմեզ անհամբեր կընէ. աղէկ որ  
քննենք սրտերնիս, աս է միշտ պատճառը, աս է  
որ շատ անգամ առանց պատճառի ալ արամու-  
թիւններ կը հնարէ մեզի, աս է որ միշտ եղածն  
ալ կը մեծցընէ: Մէկէն առ աստուած զիմելու՝  
աղօթք ընելու տեղ՝ կուզենք զբոսանքներով զմեզ  
մտիթարել, փոթըրցընելով ու դանգատելով մեր  
արամութիւնը թեթեւցընել: Ո՛ր է Քրիստոսի  
համակերպութիւնը իր երկնաւոր Հօրը կամացը  
հետ. թէ որ մենք ալ մեր արամութեանը մէջ ի-  
րեն պէս Աստուծով ուղէինք մտիթարուել, մեզի  
ալ աստուած իր հրեշտակը կը խրկէր զմեզ զօրա-  
ցընելու. այսինքն աստուած իր Հնորքով մեր սըր-  
տին մէջը կիջնար, ու զմեզ կը մտիթարէր. աըրս-

մութիւններնուս պատճառն ալ վերցընէր չիմե-  
րցընէր՝ մեզի օգտակար կընէր, ու անով կուրա-  
խացընէր զմեզ. ինչպէս Դաւիթ մարգարէն կըսէ՝  
Ու կօմեր միտարել անչն իմ, յիշեցի դաստաւած և ու-  
րախ ելէ:

Ա. Դ. Օ Թ Գ

Յիսուս փրկիչ իմ, քու արամութեանդ մէջ ալ  
սիրելի ես, քու սկարութեանդ մէջ ալ զօրաւոր.  
Հնորհակալեմ՝ որ աս արամութիւնն ու սկարու-  
թիւնը իմ սիրոյս համար յանձն առիր: Ասկէց  
ետքը ինչ արամութիւն՝ ինչ հոգ որ ունենամ,  
շիշեմ որ դուն անկէ սաստիկը ինծի համար քա-  
շեցիր, ու իմ քաշածս քուկինիդ հետ երկնաւոր  
Հօրդ նուիրեմ. ու քու սիրոյդ համար սիրով ու  
անարտուել թաշեմ:

Այսօր որ 'ի հրեղէն զօրաց երկինց միշտ փառա-  
բանեալ երկրպագիս Բանդ, աղօթէիր առ Հայր  
մարմնով ընկալեալ ընդ Հօր զքո վասն իմ զգա-  
ղատանս. ուստի կամաւ կրելով զերկիւլ 'ի հրեշ-  
տակաց զօրանայիր զօրացուցիչդ երկնաւորաց և  
երկրաւորաց. վասն որոյ ինայեա 'ի մեզ Քրիս-  
տոս կամաւոր քո չարչարանք:

### ՄՏԱԾԱԿԱՆ ԻԳ.

Քրիստոսի պարտիզին մէջ ըրած  
ստորոքին վրայ:

### ՄԱՍՆ Ա.

Քրիստոս տէրն մեր կրնար առաքելաց քոյն  
ալ ընել իր աղօթքը, բայց մէկզի քաշուեցաւ  
քարընկէցի մը չափ, որպէս զի աւելի մտադրու-  
թեամբ կարենայ աղօթել: Միկան վրայ եկաւ՝  
երկնաւոր Հօրը աւելի յարգութիւն ընելու հա-  
մար, ու երեսը երկրի վրայ գրած՝ անանկ սկսաւ  
աղօթել. Մեկեցաւ ՚ի նոցանէ իբրև քաշուեց մի, եւ  
ծռուր, անկաւ ՚ի վերայ երեսոց իւրոց եւ կայր յաղթնս:  
Արդեօք մենք ալ ասանկ կ'աղօթենք. մտքերնիս  
ցրուելը կրնանք արգարացընել՝ մտքերնուս տէր  
չենք ըսելով. բայց մեր մարմնոյն ալ տէր չենք,  
չենք կրնար ծնկան վրայ աղօթել: Արտաքին խո-  
նարհ ու յարգական ձևն ալ շատ կօգնէ ներքին  
մտադրութեան:

Թէ որ աւետարանիչները գրած չըլլային Քրիս-  
տոսի ինչ աղօթք ընելը, սրչափ պիտոր բարձայինք  
գիտնալու ըրած աղօթքը: Մեզի խիստ հարկաւոր  
ըլլալուն համար՝ Հոգին սուրբ գրել առաւ. ը-

րած աղօթքը աս էր: Հայր իմ, թէ որ հնար է՝  
մի՛ թողուր որ աս չարչարանքները քաշեմ. բայց  
իմ կամքս չըլլայ, քու կենդ ըլլայ: Ինչպէս որ կու-  
զես, անանկ ըլլայ: Աս էր հոգեվարքի մէջ ըրած  
աղօթքը, ու միշտ նոյն աղօթքը կը կրկնէր. Ինչ  
սէր, ինչ յարգանք, ինչ հպատակութիւն, ինչ  
երկնաւոր Հօրը կամօցը համակերպութիւն: Ու-  
րեմն ինչ որ խնդրենք Աստուծոյ, որչափ ալ ու-  
զենք որ լսէ մեր աղօթիցը, միշտ ասանկ ըսենք.  
Ինչ ու որպէս ես կամիմ, այլ որպէս Դու. ու իմ կամիմ, այլ  
Դու լսի:

### ՄԱՍՆ Բ.

Աս աղօթքը ընելու ատեն, անանկ տագնապի  
մէջ չմտացաւ իր աշկերանները. իրէք անգամ ե-  
կաւ զիրենք խրատելու, ու իրենց սիրտ տալու՝  
որ փորձութեան մէջ չիյնին. Արեւոս կայէ, եւ ա-  
ղօթնս արարէ, զի մի անկանիցի ՚ի Դուրսնիս. այդպէս  
ու կարացի մի ծած արեւոս կաւ ընդ իս: Աս խօսքովս  
նախ կը խրատուինք որ՝ զբօսանքի համար շատ  
անգամ քունէ կը զրկենք զմեզ, ու քիչ մը ատեն  
աղօթքի համար քուններնիս չենք կրնար բռնել.  
ամենեւին ուրիշ բանի մը անանկ ճիշդ առեն չենք  
բռնէր՝ ինչպէս աղօթքի. երկան երկան կը խօ-  
սինք, կը խաղանք, պարտապ ասններ ալ կանցը-  
նենք, քուններնիս չի գար. աղօթքի գալուն պէս՝  
քուններնիս կը բռնէ: Ուրեմն անանկ ատեն Յի-  
սուսին աղօթքը մտածենք՝ զիչեր ատեն պար-  
տիզին մէջ, հոգեվարքի աստիճան հասած, արեւն  
քօտինք մտած, ծնկան վրայ ինչուան դետինը  
խոնարհած. անկարելի է որ այ մտածութիւնը  
զմեզ չարթընցընէ: Նոյն խի Յիսուսին աղօթք  
ընելու ատենը վաստակած արգիւնքը զմեզ կը զ-

րացնէ. վասն զի ամեն քաջածնեւրուն մէկ վասն-  
 ճանն ալ աս էր որ, մենք ալ նոյն բաները քաշե-  
 լու ատեննիս՝ զօրութիւն անենք. մարտիրոս-  
 ները Քրիստոսի չարչարանքներովն էր՝ որ զօրու-  
 թիւն կառնէին այնչափ տանջանք քաշելու: Այն-  
 չափ նախատինք ու զրպարտութիւն կրեց, որ-  
 պէս զի մենք ալ կրելու որ ըլլանք՝ իրեն կրածնե-  
 րովը ուժ անենք համբերելու: Ինչուան խաչին  
 վրայ երկնաւոր Հօրմէն թողածի պէս եղաւ, որ-  
 պէս զի հոգևոր ցամաքութեան մէջ՝ երբոր աս-  
 տուծոյ երեսէն ինկածի պէս կը ըլլանք՝ չեւբանինք,  
 մեր սովորական ազօթքներէն ու բարեգործու-  
 թիւններէն չեղադրինք, իր խաչին վրայ Աստուծո  
 սպասած ի՞մ ընդէր խոչէր լին ըսելը մտածելով, ու  
 ան վայրկեանին մէջ քաջած նեղութենէն ուժ  
 անելով:

Քրիստոսի խօսքովը դարձեալ կը խրատուինք՝  
 որ փորձութեան մէջ աս աստուած գիմենք, ա-  
 ղօթք ընենք, մեր վրայ չեկտտահինք. վասն զի հօ-  
 գինիս որչափ ալ յօժար ըլլայ՝ որչափ ալ ուղէ  
 դէմ կենալ փորձութեան, մարմննիս՝ բնութիւն  
 նիս՝ տկար է: Քրիստոսի խօսքովը դարձեալ մեծ  
 հեղութիւն ու եղբայրսիրութիւն կը սորվինք.  
 Ինքը այն աստիճան արամութեան մէջ էր, ասա-  
 քեառներուն ալ խմացուցեր էր իր արամութիւնը՝  
 որպէս զի իրեն հետ արթուն կենան ու ազօթք  
 ընեն. Տրբո՞ւմ է հոգի ի՞մ միշտ ՚ի մահ, ինչե՞տ սաք  
 հայե՞նք ընդ իս. իսկ անոնք իր խօսքը մտիկ չընելով  
 քուն եղեր էին. այսու ամենայնիւ ի՞նչ հեղու-  
 թեամբ զիրենք խրատեց: Մենք որ եղած ըլլայինք,  
 իրաւունք կը սեպէինք իրենց անզգայութիւնը ե-  
 բանին զարնել:

Մ Ա Ս Ն Գ .

Քրիստոս տէրն մեր քանի անգամ նոյն աղօթքը  
 կրկնեց, որ եթէ կարելի էր՝ չարչարանքներէն  
 խաղտի. ու թէպէտ չիխաղտեցաւ, բայց ինքը  
 միշտ նոյն ջերմեանգութեամբ յարատեւեց իր ա-  
 ղօթքը: Եւ մարտիրոսութեամբ էս կայ յաղթու: Իսկ  
 մենք մէկէն կը սղաղինք, երբոր աստուած ուզած  
 նիս չընէ՝ կը դազրինք խնդրելէն, կամ գոնէ նոյն  
 ջերմեանգութեամբը չենք յարատեւեր աղօթք-  
 նիս. վասն զի չունինք համակերպութիւն աստու-  
 ծոյ կամոցը հետ, այն խնդրելիս որ չընէ, ա-  
 ղօթքնիս պարասը դնացած կը սեպենք. չունինք  
 նոյն հպատակութիւնը՝ որով Քրիստոս իր երկ-  
 նաւոր Հօրը կամոցը թողուց իր ուզածը՝ ըսելով.  
 Աւ որպէս էս կամի՞մ, այլ որպէս դո՞ւ:

Դարձեալ Քրիստոսի նոյն աղօթքը կրկնելէն կը  
 սորվինք որ աստուծոյ հետ խօսելու համար՝ հարկ  
 չիկայ որ միշտ երկան ու տարբեր աղօթքներ ը-  
 նենք. ամեն ժամ՝ ամեն քառորդ աստուծոյ հետ  
 կրնանք խօսիլ, ու մեր սերը՝ մեր հպատակու-  
 կութիւնը՝ մեր իրեն ապաւինութիւնը՝ մէկ խօս-  
 քով մը յայտնել: Մարդիկ նոյն խօսքը լսելէն կը  
 ձանձրանան, բայց աստուած կախորժի. մեծ մեծ  
 սուրբեր սովորութիւններ ըրեր էին իրենց՝ պզտի  
 խօսք մը օրուան մէջ ստեպ կրկնել: Ինչպէս սուրբ  
 Ռսկերերանը ամեն անգամ կըսէր այն կարճ ա-  
 ղօթքն որ՝ հիմայ մենք երեկոյեան ժամուն մէջը  
 կըսենք. Փառք քեզ սաքսած, խոտք քեզ, յաղագս  
 մենայնի պէր խոտք քեզ: Նմանապէս ուրիշ սուրբեր  
 ալ, որը սաղմոսին մէկ տունը, որը ուրիշ ըզձա-  
 կան խօսք մը միշտ բերաննին ունէին: Աստուած

մեզմէն դժուարին բաներ չխաւհանջեր. լուռ ալ  
կենանք իր առջին, բայց սրտերնուս մէջ խոնար-  
հուած իւր սէր հաւատք ու իրեն ապաւինուած իւր  
որ ունենանք, մեր լուծիւնը ամեն երկան ա-  
ղօթքներէն աւելի ընդունելի կըլլայ իրեն:

Ա.Ղ.Օ Թ.Ք

### ՄՏԱԾԱԿԱՆ ԻԳ.

Քրիստոս յանկրտե կապելուս ոչ շահանայա-  
պետներու տառակր հասկելուս վրայ:

### ՄԱՍՆ Ա.

Յիսուս փրկիչ իմ, Գեթսեմանիի պարտիզին  
մէջ ըրած աղօթիցդ համար ըլլայ, աուր ինձի հո-  
գի հեծուածեան սրտի և աղօթից, որպէս զի ա-  
ղօթքներս մտադրուածեամբ ու ջերմեռանդու-  
ածեամբ ընեմ, ու միշտ սրտիս մէջ ունենամ քո  
ներկայութիւնդ: Երեսի վրայ ինկած՝ կը համբու-  
րեմ ան երկիրն որ քո ամենասուրբ ճակատդ  
վրան դրիր, քո արիւն քրտինքդ վրան կաթե-  
ցուցիր, ու քո սուրբ կողէդ վազած արիւնովն  
ու ջրովը լուացիր. կը համբուրեմ ան երկիրը, ու  
քո սուրբ քրտանցդ ու պատուական արեանդ  
բարեխօսութեամբը կը խնդրեմ՝ որ իմ կամքս քո  
կամացդ հետ համակերպելու շնորք տաս, որպէս  
զի քո ուղածիդ՝ որչափ ալ բնութեանս ծանր  
գայ սիրով հպատակիմ, ու քո կամքդ իմս ըլլայ:

Չայնիս մաղթեր աղօթական  
Վասն իմ առ Հայր իւր Էական,  
Ծուները զընէր խոնարհական  
Որում կըրկնի ծուր ամենայն.  
Եթէ փրկիլ մարդկան հնար է,  
Առանց մահուս իմ որ գրեալ է,  
Բաժակ մահուս յինէն անցէ.  
Ոչ իմ կամաւ, այլ քոյդ ետցէ:

Երեւակայենք ինչ կատարութեամբ զինուոր-  
ները Քրիստոսի վրայ վազեցին, գայլերը անմեղ  
գառան վրայ անանկ չեն յարձըկիր. ինչ անգթու-  
ածեամբ զինքը չուաններով կապեցին, ինչպէս զին-  
քը առգիս անդին հըրմըշարկեցին, ինչ նախատա-  
կան խօսքեր ըսին կապելու ատեն: Բայց չուան-  
ները չէին զինքը կապողը, զինուորները չէին զինքը  
բռնողը. ուղեւոր որ ըլլար, ինչպէս իրեն մօտե-  
նայու ատեննին՝ անանկ ըրաւ որ Էաւ Էտե եր-  
թան ու կանրկի վրայ փուռին, նմանապէս զինքը  
բռնած ու կապած ատեննին կրնար ձեռւընուէն  
խալըսիլ: Չինքը բռնող մեր սէրն էր. զմեզ սա-  
տանային կապանքներէն խալըսելու համար՝ ինքը  
յանձն առաւ կապուել. զմեզ սատանային գերու-  
թեանէն ազատելու համար՝ Թողուց որ զինքը  
բռնեն:

Մէյմըն ալ՝ իր կապուելովը սիրտ տուաւ ա-  
նոնց, որ սուրբ հաւատքի համար պիտոր կա-

պուռէին, պարծանք եղաւ անոնց: Ուստի Պօղոս առաքեալը ամենէն պանծալի անուն՝ Քրիստոսի համար կապուած ըլլալը սեպեղով, անով կը սկսի առ Փիլիմոն գրած թուղթը. Պօղոս կապեալ Յիսուսի Քրիստոսի: Ամեն բանաբարկեալներն ալ ատով կը մխիթարուէին, Քրիստոսի կապանացը մասնակից ըլլալը՝ իրենց մեծ մխիթարանք ու ուրախութիւն սեպեղով: Մենք ալ հիմայ, որ հաւատքի համար ոչ կապուելու և ոչ բանա մանալու առիթ ունինք, պէտք է որ Քրիստոսի օրինացը կապանքը սիրով յանձն առնուինք, մեր միտքը գերի ընենք ՚ի Հնա- զանգութիւնն Քրիստոսի: Ուստի էրբոր Քրիս- տոսի գրած օրէնքներէն ալլաւ ըլլալ կուզենք, իր կապանքը մեզի պարծանք սեպեղու տեղը՝ կը նախատենք, ու նորէն սասանային գերի ըլլալ կուզենք:

ՄԱՍՆ Բ.

Տարին զՔրիստոս նախ Աննա քահանայապե- տին ատենը, որ Կայիափային աներն էր. աս Կայիափան էր որ զՔրիստոս պէտք է սպաննել ըսաւ, որպէս զև Հրէից աղղը չեխորձանի: Աննա ասոր խրկեց զՔրիստոս, ան տարի իշխանութիւ- նը անտրը ըլլալուն համար, ու ետքը ինքն ալ Հոն եկաւ. Հոն ժողովեցան զլսաւոր քահանաներն ու գպիրները՝ ամենքը մէկտեղ զՔրիստոս դատաւ պարտելու: Աս անիրաւ դատապարտութիւնը յանձն առաւ Քրիստոս, որպէս զի զմեզ խաղտէ յաւիտենական արդար դատապարտութենէն՝ ու բուն մեր մեղացը համար արժանի էինք:

Քահանայապետները սկսան հարցընել Քրիս- տոսի, իր վարդապետութիւնը ինչ ըլլալը իմանա- ըլլաւ համար: Շնոր բան. յանցաւոր բաներ են,

գեռ յանցանքը չեն գիտեր, կուզեն իրմէ խնա- նալ: Քրիստոս անքն մեր իր սատուածային խնա- տութեամբը արդար պատասխան տուաւ՝ որ աս բանին վրայ իրեն հարցընելը ընդունայն էր, պէտք էր որ իր վարդապետութիւնը լսօյնեալուն հարցը- նէին: Աս պատասխանը կը պատանծեցընէր զքա- հանայապետը. անոր համար իր սպասաւորներէն մէկը Քրիստոսի սպասակ մը զարկաւ՝ ըսելով. Այսանկ պատասխան կուտաս քահանայապետին: Ի՞նչպէս չեղօսացաւ մէկէն այն ձեռքը, ինչպէս կայծակ չիզարկաւ անօրէնը, ինչպէս բոլոր ա- տեանք Երուսաղէմ՝ բողբջին Հէս գետինը ջան- ցաւ: Անարգ ծառայ մը, ամենէն մեծ նախափն- քը, ամենուն առջին, իբրև պատիժ մը կուտար կոր. սրճն, անոր որ իր անթիւ հրաշքներովը ցուցուցեր էր իր որդի աստուծոյ ըլլալը: Աս ա- մեն պարագաները անանկ կը սաստիացընեն ըրած նախափնքն որ, կարծես թէ պէտք էր Քրիստոս անոր յանգչեութեան պատիժը տար, որպէս զի իրեն ալ՝ Հոն եղօյնեալուն ալ խնայընէր ըրածը անիրաւութիւն ըլլալը: Բայց չեպատժեց, հեղու- թեամբ համբերեց, մեր բարկութեան ու հպար- տութեան մեղքերը քաւելու համար, ու մեղի ուժ տալու՝ որ ասանկ նախափնքներու կարե- նանք համբերել առանց վրէժխնդրութեան: Դա- տաւորներուն պարտքն էր պատժել աս յայանի անիրաւութիւնը, մէկ սպասաւոր մը առանց իշ- խանութիւն ունենալու՝ ասանկ բան չէր կրնար ընել ամբաստանեալ անձի մը, թէ և յանցաւոր ըլլար: Քրիստոս անքն մեր ուղեց՝ որ ըսեն ինչ գէշ բան կար իր ըսածին մեջը. բայց անոնք ոչ իրեն պատասխան տուին, յայանի ընելով անոր ըրածը հաւնելին: Իրենց ուղածը դատաստան ընել չէր, այլ ինչպէս որ ըլլայ՝ դատապարտել զՔրիստոս.



անոր համար երկու սուտ վկայ ալ փնտռեցին՝ որ կարենան իրենց վախճանին հասնել։ Իսկ քահանայապետն և ամենայն աբեանն խնորհին սոսք վայտուելան Վիտաուէ, զի ապանցին զնա։ Արնային գորգեւէ ժողովուրդը, ու խոսովութեամբ սպաննել տալ զինքը՝ ինպէս որ ըրին ետքը սուրբ Ստեփանոսին. բայց կուզէին նախատական մահուամբ, ու իբրև թէ դատաստանով ու վճռով սպաննել զինքը. սա բանը Պիղատոսին ձեռքովը միայն կրնային ընել, բայց առանց սուտ վկաներու չէր յաջողեր։ Աստից էին ազգին զխաւորները, ասոնց ձեռքն էր ամեն հոգևորական իշխանութիւն, աստից պիտոր հովուէին խեղճ ժողովուրդը։ Մնոր համար Քրիստոսի սիրտը կը կրօնըրտէր ժողովրդեան վրայ, անանալով որ անհովու ոչխարներ գարձեր էին։ Եւ քիսեալ զթողութեան գնացաւ, զի էին աշխատեալէ իբրև զաշխարհ՝ որոյ ու ի՞նչ հովուէ։

Մ Ա Ս Ն Գ .

Սուտ վկաներուն ըրած ամբատանութիւններուն ամենեւին պատասխան չխառաւ Քրիստոս, անանկ որ՝ քահանայապետը կատղած, ինչո՞ւ չես պատասխաներ ըսաւ, աես ինչ կըսեն կոր. քեզի գէմ։ Բայց Յիսուս լուս կեցեր էր. Եւ Յիսուս լուս կայր։ Աս անգութ զըզարտութեանց ու քահանայապետին ասանկ անիրաւ կատղութեանը առջին՝ Քրիստոսի անբարբառ կենալը՝ Եսայի մարգարէն շատոնց ըսեր էր. Իբրև զբոլ սոսքէ իբրև անհասնել կայ, այնպէս ալ Բանայ զԲերան Խոր. ու այն լուսութիւնը քան զամեն ճարտասանութիւն զորաւոր էր՝ իր անմեղութիւնը ցուցնելու։ Վասն զի ինչ պէտք էր խօսել, ուր որ վկաներուն ըսածը

իրարու գէմ էին. Եւ նման միմեանց ու էին վայտուելանքն։ Ի՞նչ պէտք էր խօսել, ուր որ իր ըրած հրաշքները կը խօսէին, ծովը՝ մըրթիկները՝ հիւընդուութիւնները՝ մահը՝ իր թշնամի սատանաներն ալ. ի՞նչ պէտք էր խօսել, ուր որ անիրաւութիւնն էր դատաւոր։ Եւ Յիսուս լուս կայր. լուս կը կենար, որպէս զի մեր սուտ պատճառանքները քուէն, ու մեզի շնորք տայ մեղքերնիս խոստովանելու։

Ա, Գ, Թ, Գ

Յիսուս փրկիչ իմ, առ զըզարտութիւնները չէին քու դատապարտութեանդ պատճառ, այլ իմ յաւիանական դատապարտութեան արժանի մեղքերս. աստից համար լուսցիր, վասն զի ես պատասխան չունէի տալու. աստից համար դատապարտութիւն յանձն առիր. մի թողուր որ ընդունայն ընեմ ինձի համար համբերելդ, այլ ճշմարիտ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ կեանքս անցընեմ։ Քու լուսութեանդ համար ըլլայ, շնորք սուր ինձի որ բերնով չիմեղան չեմ։ Ի՞նչ քիսեալ պահպան բերանայ իմոյ, և դոստան անոր շրթանց իմոյ, զի մի խորհրդեցի սիրք իմ Բանին լարուելան։

Այսօր, զոր երկնային լուսեղինացն ահիւ պատուեալ Բանդ աստուած, նսեմացեալ գաղբերայեցուոցն զիմանալի լոյսդ՝ ի գիշերին ջահիւք և սուսերօք եկեալ ըմբռնել զանբմբռնելիդ. վասն որոյ երկրպագեմք անձառելի քո խոնարհութեանդ։

# ՄՏԱԾԱԿԱՆ ԻԵ.

Քահանայապետներուն գրիխառախ Պիղա-  
տախ ձեռքը մատներուն իրայ :

## ՄԱՍՆ Ա.

Բարձր գիշերը Քրիստոս անհրաժեշտ մեր զինուորներուն ձեռքէն չարչարանք ու նախատինք կրեւէն ետքը, առաւօտանց քահանայապետներն ու դպիրները նորէն չարաժողով մը ըրին. նորէն հաստատեցին առջի ըրած անիրաւ վճիռնին, ու որոշեցին Պիղատոսի ատեանը հանել զինքը : Իբրև այդ եղև՝ խորհարար արարին ամենայն քահանայապետքս և ծեր + ժողովըրդեան վասն Յիսուսի, սպաննել զնա. կողեցին զնա, և առին գնացին, և երան ՚ի յետս պոնապոսոյ Պիղատոսի : Պիղատոսի մատնեցին, չէ թէ միայն իբրև Մովսէսի օրինացը դէմ ընող՝ այլ նաև քրեական յանցաւորի մը պէս, իբրև թէ Քրիստոս Հրէից թագաւոր ըլլալ կուզէր : Քրիստոս մեր մեղացը զո՛հ ըլլալու գաւան մը պէս՝ թողուց որ զինքը Երուսաղէմի փողոցներուն մէջէն անցնեն տանին Պիղատոսի ատեանը : Տանօղները ան զինուորներն էին, որոնք բոլոր գիշեր անգլժաբար զինքը չարչարելու ու նախատելու էին : Յիսուս չուանա

ներով կապած մէջերնէն կերթար յանցաւորի մը պէս. ետեւէն ալ անօրէն քահանայապետները՝ որոնք դատաւոր ու միանգամայն դատախոսը էին Քրիստոսի, բազմութիւն քահանաներու դպիրներու, ու ժողովըրդեան ծերակոյտը. ամենքն ալ իրեն դէմ կապած, վասն զի իր առաքինութիւնը ներք իրենց մտաւթիւններուն սաստիկ յանդիմանութիւն էին :

Ժողովուրդն ալ իրենցմէ գրգռեալ փողոցները լէցուած էին. չէ թէ ինչպէս առաջ իր հրաշքները տեսնելու, իր վարդապետութիւնը լսելու, իր բարերարութիւնները վայելելու, այլ տեսնելու զինքը անարգեալ ամբաստանեալ ու դատապարտեալ, առանց բերան բանալու, առանց ինքը զինքը պաշտպանելու : Ժողովուրդը իր քահանաներէն ու մեծերէն խաբուած, դրսուանց երեցածը միայն դատելով, զինքը որդի սատուոյ հաւատաւ տեղը, կեղծաւոր մը սուտ մարգարէ մը՝ սատուոյ երեսէն ինկած մէկը կը սեպէին : Թէ որ մէջերնին ուղի սրտովներ ալ կային, որչափ ալ զՔրիստոս անմեղ կը ճանչնային՝ բայց ողորմելի մարդ մը կը կարծէին, որ ինքը զինքը չէր կրնար պաշտպանել : Ըսել է որ բոլոր Հրէից ազգը չե՛նչանցաւ իր Մեսիան, իր փրկիչը, անարգանաց ու տկարութեան մէջ տեսնելով զինքը. առաքեալներն անպամ, որչափ ալ իր սէրը սրտերնէն չէր պահած, բայց յոյսերնին կորեցին իրմէ : Միայն սուրբ աստուածածինը տեսնելով իր միածին որդին՝ որ անարգանք փողոցներէն հըրմըտուկեւով սպաննելու կը տանէին, ինքը միայն իր անհնարին ցաւոյն մէջ իր հաւատքը անասան պահելով, կիմանար ի՛նչ մեծ խորհուրդ կը կատարուէր կոր, ու կրնայ ըսուել որ իր սրտին մէջը միայն չին և նոր օրինաց հաւատքը կենդանի էր :

Մ Ա Ս Ն Բ .

Հրեաներուն զՔրիստոս Պիղատոսի ատեանը հանելուն վախճանը ան էր՝ որ իրենց ատելութիւնը յազգեցընեն, կարենան խաչել վրայ սպաննել զինքը: Աս մահը ամենէն անարդ, ամենէն երկան, ամենէն անդուժ մահն էր՝ որ չարագործներուն կը տըրուէր. անոր համար հաովնայեցուց ատեանը մասնեցին զինքը, ինչպէս որ առտուան չարաժողովին մէջ որոշէր էին. անոր համար ամեն ջանք ըրին որ Պիղատոս դատասպարահ զինքը, ինչուան սպառնալիք ալ ըրին՝ կայսեր աչքէն հանելու զինքը, ըսելով. թէ դէս արշալէս, լէս բարեկամ էայսէր: Վասն զի Պիղատոս Քրիստոսի զէմ՝ ատելութեան սպառնալ մը չունենալով՝ ճանչցաւ անոր անմեղութիւնը, ու քանի անդամ ըսաւ. Չգըպանեմ ինչ շնաս յառնս յայսմէի. Ու ինչ շնաս մահու գոբի՝ ի սմս. Ես ոչ մի ինչ պարձառու գոբանեմ ի դմս. ու որչափ Հրեաները կը ջանային դատասպարաւել տալ զՔրիստոս՝ այնչափ ինքը կը ջանար սպրեցընելու. բայց կայսեր երեսէն խնալը ծանր էր իրեն. իբրև լրատաւ զբանս պայս Պիղատոս, առաւել ևս երբնաս: Ուստի զինքը խաղտելու համար՝ բռնեց խրկեց զՔրիստոս Հերովդէսի, որպէս զի անիկայ դատէ. կարծեց որ ասով կը խաղտէր անկրաւութիւն ընէլէն: Հերովդէս որ՝ թէպէտ Հրեայ կը սեպուէր՝ բայց հաւատք կրօնք չունէր, կերպ մըն ալ ինքը բանեցուց զՔրիստոս դատելէն խաղտելու: Ինեղի տեղ զբաւ զՔրիստոս, ու իր մեծամեծներովը ծաղը ընելէն ետքը՝ խենդի զգեստ հաղցուց, ու նորէն խրկեց Պիղատոսի: Ատուածոյ անհուն իւմաստութիւնը յանձն առաւ խենդի տեղ զրուել,

Մ Ա Ս Ն Գ .

որպէս զի ստքի տակ առնէ մարդկային իմաստութիւնն ու աշխրբիս համարմունքը. չէ թէ հէթանոս փրկեսոսիաներուն պէս հպարտութեամբ հըպարտութիւնը կոխելով, այլ խոնարհութեամբ խենդ սեպուէլով: Աս կերպով զՔրիստոս նորէն Պիղատոսի ատեանը տարին:

Պիղատոս ուրիշ հնարք մըն ալ բանեցուց ըզՔրիստոս խաղտելու. ստիպութիւն էր որ զատիկ տօնին յանցաւորներուն մէկը կարծրկէր, որն որ Հրեաները ուզէին. առաջարկեց իրենց որ զՔրիստոս արձրկէ: Ան միջոցին սպաննող չարագործ աւաղակ մըն ալ բռնուած էր՝ Բարաբբա անուանով. քահանայապետները համոզեցին ժողովուրդը՝ որ զանիկայ արձրկել տան, որպէս զի Յիսուս չխխաղտի մահընէ: Ուստի երբոր Պիղատոս հարցուց. Ասոնց երկուքէն որը կուզէք որ արձրկեմ, Բարաբան թէ Յիսուսը, անոնք ամենքը մէկտեղ սղաղակեցին. Յիսուսը մի արձրկէր, Բարաբբան արձրկէ. Մէ դէս, այլ զԲարաբբա: Աս բաղդատութիւնը ստիպել է, նախ Պիղատոսին կողմանէ՝ վասն զի ճանչցաւ Քրիստոսի անմեղութիւնը, ու անորէն աւաղակին հետ մէկ կարգ դրաւ զինքը. Ես յանցանք մը չեմ գոբեց ար մարտան շրայ. ուրեմն հետևութիւնը պիտոր ըլլար որ ըսեր՝ Կաճելեմ ար անեղ մարտը: Բայց ինքը ասանի չքաւ, հասցա՝ Աս անմեղն ու Բարաբբան կը տեսնէք կոր, ասոնցմէ որը կուզէք որ արձրկեմ: Սակեք մեծ անկրաւութիւն կրնայ ըլլալ: Երկրորդ՝ աւել տոսկալ բաղդատութիւն ժողովրդեան կողմանէ, որ Քրիստոսի այնչափ հրաշքները տեսնալէն ու բարեբարութեամբ

Թիւնները վայելէին ետքը, դատաւորին բերնէն ալ լսելով որ Յիսուսը անմեղ է, ուղեցին որ Բարբբան արձրկէ, Յիսուսը դատապարտէ: Աս նախատինքը Քրիստոս մեզի համար յանձն առնելէն ետքը, հիմայ մտածենք մեր հպարտութիւնն որ՝ դժարնիս կուգայ երբոր ուրիշները զմեզ հասարակ մարդու մը հետ բաղդատեն: Ամբողջ ազգ մը՝ քահանաներով ու մեծերով՝ զՔրիստոս որդին աստուծոյ անօրէն աւազակէն դէշ սեպեցին հրապարակաւ ամեն տղոց առջին, ու մենք չենք ուզեր ուրիշներուն հաւատար ալ սեպուիլ: Ո՛հ, թէ որ Քրիստոսի վարքը մտածէինք, ու մեր պարտքը իրեն նմանելու, աշխրբիս մէջ նախաախնք մը չէր ըլլար՝ որ մեզի ծանր գայ:

Ա. Գ. Օ Թ. Ք

Յիսուս փրկիչ իմ, կը սոսկամ Հրեաներուն ըրած բաղդատութեանը վրայ, բայց ես ալ նոյն բաղդատութիւնը ըրած եմ՝ քանի որ իմ անարգ կիբքերս ու սխտերս քու պատուիրանքներէդ վեր դրեր եմ, զանոնք ուղեր եմ գոհ ընել՝ քան թէ դքեզ: Քու աս անհուն համբերութեանդ համար ըլլայ, ինձի շնորք ատար որ ասկէց ետքը անոնք ոտքի ստակ առնեմ. քու սիրոյդ համար, ու չըլլայ որ մէյմըն ալ արարած մը քեզի հետ բաղդատեմ, ու անոր համար դքեզ կորսնցընեմ:

Մտանեալ Պիղատոսի որպէս մահապարտ՝ ի յԱննայէ և ի Կայնափայ դատապարտեալ, համբերելով վասն զմեզ կեցուցանել:

## Մ Տ Ա Մ Ա Կ Ա Ն Ի Զ .

Յիսուսի ձաղկանացը վրայ:

Մ Ա Ս Ն Ա .

Ձաղկանաց պատիժն որ յանցաւորներուն կը տրուէր, Հրէից օրէնքը կարգելու որ քառասունէն աւելի չլզարնեն. ուստի թիւը չանցընելու համար՝ ապահով ճամբան կը բռնէին, երեսունը ինը հարուած միայն կուտային յանցաւորին. բայց հռոմայեցոց օրէնքը թիւ չէր սահմաներ: Յանցաւորը սիւնի մը կը կապէին ձեռքերէն ու ոտքերէն, ու չորս զինուոր բարակ գաւազաններ մէկտեղ կապած՝ անոնցմով կը ծեծէին: Անանկ սոսկալի ու նախատական տանջանք մըն էր աս՝ որ օտարներուն միայն կուտային, հռոմայեցի եղօղը ազատ էր աս պատժին. ուստի Պօղոս առաքեալն որ հռոմայեցի գրուած էր, երբոր կապէցին՝ որ ծեծէին պիտոր, ու ինքը ըսաւ հարիւրապետին՝ ի՞նչ օրէնքով հռոմայեցի մը ծեծէք պիտոր, մէկէն ետ կեցան զինուորները: Պիղատոս աս պատիժը ուղեց ալ Քրիստոսի, միտքը դնելով որ անով գոհ ընէ Հրեաներն, ու զՔրիստոս մահաւորէ խալքսէ՝ ինչպէս քանի անգամ ըսեր էր

իրենց. Խրապեղից դարս և աշխիւնից. անոր համար զինուորներուն ձեռքը առաւ զՔրիստոս որ ծէծեն: Տանջանքին սաստիւթեանը հետ մտածենք Յիսուսի կուսածին մարմնոյն փափուութիւնն ալ որ առջի հարուածներէն սկսաւ պատրուախլ, հարուածները վէրքերուն վրայ գալ, ու արիւնը չարս գինն վաղէլ, բոլոր մարմնը վէրքերէն ծածկուած, ինչպէս Յսայի մարգարէն կրտէ: Յոբից մինչ յգլուխ վէրք այսոսին և հարուածք խշխայնեալս, անանկ որ մարդու կերպարանք չմնաց վրան: Տեսոք մէք դնա, և ու գոյր նորա սեպիւ. այդ մէ՛ ՚ի հարուածս, և գիտէ հաճեբեւ յարող: Ու ասանկ սոսկալի ցաւոց մէջ՝ դանդաւ մը, հառաջանք մը, խօսք մը չէր ելէր բերնէն. Եւ նա առ Վարդի ու բնայ զԷբրան Իւր:

ՄԱՍՆ Բ.

Բայց ինչո՞ւ համար Քրիստոս այսչափ ու այսպիսի չարչարանքներ ուղեց քաշել, երբոր աւանդ սասնց ալ կրնար փրկել զմեզ իր մարդ ըլլալ միայն, ու մեզի համար աղօթք մը ընելը հերքեք էր. աստուած իրեն սերոյն համար մեզի կը ներէր: Թողունք աստուծոյ դազանի խորհուրդները, ու մենք մեր մասը միայն մտածենք: Յիսուս մեր փրկիչը ըլլալով՝ չուղեց ինայել ինչ որ կարելի էր ընել մեզի համար. ուղեց նախ առատապէս հատուցանել իր երկնաւոր Հօրը ըրած աւարդանքներնու հատուցումը. ու ինչպէս որ իրեն առ երկնաւոր Հայրը ունեցած սէրը չափ չունէր, ասանկ ալ անոր գէ՛մ՝ եղած անարգանացը հատուցումը ուղեց որ չափ չունենայ: Երկրորդ. ուղեց որ մեր ամեն վշտոց մէջը միսիծարանք ունենաք՝ իր քաշածները մտածելով, ու կարենանք

ըսել. Ի՞նչ է իմ քաշածս իմ փրկչիս քաշածներուն թովը: Երրորդ՝ ուղեց մեզի իմացնել մեզքին ինչ գէշ բան ըլլալը, աստուծոյ արգարութեանը ինչպէս խիստ ըլլալը, ու պղտի երեցած անհնազանդութիւն մը աստուծոյ հրամանին՝ ինչ սոսկալի պատժոց արժանի ըլլալը, որպէս զի մեզքէն խտրենք: Զորրորդ՝ մեզի վստահութիւն տալու համար որ իրչափ ալ մեղաւոր ըլլանք, աստուած զմեզ երեսէ չիձգեր՝ զլքալու որ ըլլանք, տեսնելով որ Քրիստոս մեզքերնուս հատուցումը եւեջք ըրած է աստուծոյ արգարութեանը: Հինգերորդ՝ ուղեց մեր սրտին մէջ իր սէրը վառել մտածելով որ իրչափ ու որպիսի չարչարանքներ քաշեց մեզի համար մեր փրկիչը:

ՄԱՍՆ Գ.

Աս մտածութիւններն՝ էին որ մարտիրոսներուն ուժ տուին այնչափ չարչարանքներ սիրով քաշելու: Վրան զի Քրիստոս առաջին մարտիրոս ինքը եղաւ իր աստուածութիւնը գաւանդելով Պիղատոսի տառանք. թէ որ իր աստուածութիւնը գաւանդ չըլլար, ոչ Հրեաները զինքը կը մասնէին Պիղատոսի, և ոչ Պիղատոս զինքը կը գտտապարտէր. անոր համար կը դրէ Պօղոս առաքեալը իր Տիմոթէոս աշակերտին. Վրայե՛մ չէլ առաջի ապրուծոյ՝ որ Ինդիսի առնէ դամնայն, և Յիսուսի Քրիստոսի՝ որ վրայեայ առաջի Պանդոսոյ Պիղատոսի գբարոտ դաւանութիւնն: Երբոր Հրեայք Պետրոս առաքեալը իր ընկերներովը բռնեցին՝ զՔրիստոս քարոզելուն համար, ու ծեծեցին զերկնք, անոնք ուրախաւալով ելան քահանայապետին տառանքն՝ Քրիստոսի քաշած չարչարանքը իրենք ալ քաշելուն հա-

մար: Պողոս առաքեալն ալ իրեն փառք կը սեպէ ութը անգամ Հրեաներէն ծեծ ուտելը: Ուրիշ ամեն մարտիրոսներն ալ նոյն ուրախութիւնը ունեցան Քրիստոսի համար չարչարուելու ատեննին. սի՛ կուտար իրենց աս ուժն ու մխիթարանքը, բայց Քրիստոսի իրենց համար քաշածները մտածելին:

Թողունք մարտիրոսներուն քաշածը, աշխարհս նեղութեամբ լեցուն է. հիւճնդութիւն, վշտ, դժբախտութիւն, անիրաւութիւն, հասարակաց սլափիժներ, ամենն ալ հարուածներ են՝ որ աստուծոյ կամօքը կամ թոյլտուութեամբը կուգան վրանիս: Բայց քրիստոնէայ մը մտածելով որ աստուած իր միածին որդւոյն չիկնայեց մեր մեղացը քառութեանը համար, ինչպէս Յոսայի մարդարէն յայտնի կը զուրցէ. Մա զեղ մեր բառնայ, և ձան մեր լարարի. և մէք համարեցաք զնա ի ջասս և ի հարուածս և ի լարարանս իբրև յասպոճոյ. Բայց նա Վերսորեցաւ ձան մեղաց մերոց, և պարծեցաւ ձան մերոց անօրէնութեանց, և նորս Վերօրն Բժշկեցաք. աս մտածելով չէ թէ միայն առանց արանջալու կը քաշէ քրիստոնէայ մը աս նեղութիւնները, այլ նաև գոհութիւն կուտայ աստուծոյ՝ անոնցմով զինքը Քրիստոսի չարչարանացը մասնակից ընելուն համար: Ասանկով իր մեղքերը կը քաշէ, մեղաց առիժներէն կը փախչի, քրիստոնէական կատարելութեան մեջ առաջ կերթայ, սիրար աշխրբիս չիկուպցնէր, իր նեղութեանցը մեջ ուժ կ'անէ ու կը մխիթարուի՝ մտածելով Քրիստոսի քաշածները: Մտա սուրբեր, ու ինչուան հիմայ շատ բարեպաշտ հաւատացեալներ, Քրիստոսի չարչարանքը ու մանաւանդ իր ձաղկանքը մտածելով, ու բաղձարով նիւթապէս ալ մասնակից ըլլալու անոնց, իրենք զիրենք ապաշխարութեան համար ձաղկեցին ու կը ձաղկեն. Պողոս առաքեալն խօսքէն ալ յայտնի է՝ որ

ինքն ալ ասոր նման ձգնութիւններ կրնէր. Ուրպէս ինչ պնդանք ինչ կոչուել, այլ ճշմէ՛մ զմարմնս ի՛մ և հնազանդեցողոյսնէմ: Մարմնոյ չափաւոր ձգնութիւնները՝ հոգւոր ձգնութիւններուն վրայ զարդ մը կ'աւելցընեն, ու Քրիստոսի քաշած ցաւերը իրօք զգալ կուտան մեզի: Քրիստոսի չարչարանքները որչափ ալ առատապէս մեր մեղացը հատուցումը կրնեն աստուծոյ, բայց առանց մենք ալ անոնց մասնակից ըլլալու՝ չենք կրնար մեր մեղքերը քաշել: Աս մտքով է նոյն առաքելոյն ըսածը. Լնոս՝ զպահասութիւնս նեղութեանցս Քրիստոսի ի մարմնի իմոս:

Ա. Ղ. Օ Թ. Բ

Յիտուս փրկիչ իմ, ինչ շնորհակալութիւն կրնամ ընել քեզի՝ որ ինձի համար ձաղկեցար, ինձի համար առ դառնակսկիծ ցաւը քաշեցիր: Վայ ինձ, էս արժանի էի յաւիտեան դժոխքին մեջը տանջուելու. զիս անկէց խաղտելու համար՝ դուն տանջուեցար: Աս ցաւոցդ համար ըլլայ, շնորք ասոր ինձի որ աշխրբիս ամեն նեղութիւնները սիրով ու անարատնջ քաշեմ, որպէս զի քու քաշածներդ անօգուտ չըլլան ինձի համար, այլ քուկին վերքերովդ հոգիս բժշկուելի. Եւ նորս Վերօրն Բժշկեցաք:

Բամեալ բողբոզ քո մարմն,  
 Յետ վըճըւոյ դատարին,  
 Սաստիկ էառ զհարուած դանին  
 Վասըն գանից նախաստեղծին.  
 Չիս որ յոտից մինչև ցըզլուխ  
 Յաւովք նեղիմ անհընարին,  
 Առողջացո դարձեալ կըրկին  
 Որպէս շնորհք աւագանին:

# ՄՏԱԾԱԿԱՆ ԻԻ.

Քրիստոսի ընդ ոչ ոքիչ նախատեսակ  
ստեղծութիւնք ընդունելու վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Երբոր եկեղեցականաց շարժողութիւնք՝ որ Քրիստոս արժանի էր մահու, թողուցին զինքը զնուորներուն ու սպասաւորներուն ձեռքը՝ որ ինչ տանջանք ու նախաախնք կուզէն, ընեն իրեն: Առջի սոսկալի նախաախնքն որ զնուորները ըրին իրեն՝ երեսը թքնէ ընին եղաւ. ուրիշ երեսը թքնելը ամենէն մեծ նախաախնքն է: Արլայ որ մէկը բարկութեան մէջ աս նախաախնքը կընէ ուրիշ. բայց եղած բան չէ՝ որ յանցաւորի մը պահապանները չորս զին սուած, որչափ ալ յանցաւորը ըլլայ, խեղճին երեսը թքնելով զուարճանան: Սակիայ Քրիստոսի միայն եղաւ, որ ամենէն անմեղ էր. Քրիստոսի միայն երեսին, որն որ արքայութեան փառքն է, որուն առջին հրեշտակները երեսնին կը ծածկեն թեւերովն՝ չիկրնալով նայել իրեն համարձակ: Նայի մարդարէն ըսած էր Քրիստոսի բերնէն՝ աս սոսկալի նախաախնքը ընդունելը. Զերեւս ի՞նչ ու Կարգաւոր յանձնք ընդ երեսն

Բանելայ: Մարդուս միտքն ալ՝ սիրան ալ կը զգաստուի Քրիստոսի աս սոսկալի խոնարհութենէն: Ինչ սոսկալի մեղք պիտոր ըլլայ աստուծոյ դէմ ըրած հպարտութիւնն իս՝ որ աս սոսկալի նուաւ սուրբին յանձն առաւ Քրիստոս, անիկայ քաւելու համար:

## ՄԱՍՆ Բ.

Ստով չիկշտացան զնուորները, լաթով մը ծածկեցին Քրիստոսի գլուխը, ու չորս դիէն բռնցի զարնելով ու հըրմալակելով կըսէին. Նայինք կրնան մարգարէանալ ո՞վ է զարնողը: Բողոր ան գիշերը աս անգութ ծաղրածութեամբը անցուցին, ու ինքը բերանը չբացաւ, խօսք մը չըսաւ: Թէ որ սոսկ մարդ մը ըլլար աս համբերութիւնը ընողը՝ դարձեալ խիստ մեծ բան էր, հայպ ինչ պիտոր ըսնիք որդուոյն աստուծոյ համբերութեանը՝ որ մէկ վայրկեանի մէջ զամենքը հոն կայ. ծակնահար կրնար ընել: Գեւ աւետարանիչներուն ըսածը բողոր չէ. Գուկաս աւետարանիչը ասոնք պատմէն ետքը կըսէ՝ որ ուրիշ տանջանքներ ալ տուին իրեն անգութութեամբ, ու շատ հայհոյութիւններ ալ ըրին. Եւ արդէ՛ որք պահէին զնա՝ այսն առնէին ընտանս եւ հարկանէին, ծածկէին դերեսս նորս եւ պանջէին, եւ հարցանէին ցնա եւ ասէին. Մարգարէաց, ո՞վ է որ եհարն ուզեալ եւ այլ բազում ինչ հայհոյութեամբ խօսէին ՚ի նա: Բայց պատմութիւնն բաւականէն ալ աւելի է, իմանալու Քրիստոսի ան գիշերը միայն քաշածը, ու իր անհուն երկայնամտութիւնը:

Մ Ա Ս Ն Գ .

Հիմայ բազդատեհք ասոնց հետ մեր վարքը ինչ է Քրիստոսի մեզմէ պահանջածը: Իր պատուէրանքները պահել, որ ուրիշ բան չէ՝ բայց աստուծոյ սէրը ու եղբայրսիրութիւն: Ինչ է մեզմէ ուզած ապաշխարանքը. համբերել աշխրբիս նեղութիւններուն, ու ինչ խաչ որ մեր աղէկութեանը համար աստուած կը խրկէ՝ ամենէ սիրով: Մեր աս ողորմելի պատուիրանապահութիւնն, ու ապաշխարանքը, իբրև թէ Քրիստոսի չարչարանացը պահապը լեցընել սեպուի պիտոր: Լոռա՛ ըլկախառնիւն նեղութեանցն Քրիստոսի ՚ի ճարճի իմո՛ւ. աս մեր ողորմելի մահացուցմունքներովը կրնանք կոր ըսելու՝ որ Քրիստոսի քաշածները մենք ալ կը քաշենք. Յամենայն ծած ըմպն Յիսուսի ՚ի ճարճիս մեր իբեպո՛ւ: Այսչափ յարգը ուսկից կառնուն մեր ողորմելի ապաշխարանքները. — Անով որ Քրիստոս կրնդունի ու կը միացնէ զանոնք իր քաշածներուն հետ, անանկ որ իր քաշածը մերը կըլլայ, ու անովն է որ աստուած մեր մեղքերուն՝ մեր ուղորմելութեանը զինայելով, Քրիստոսի փառացը մասնակից կրնէ զմեզ, իբրև թէ ովկիանոսին մէջը կաթիլ մը ջուր լեցընէնք, ու բոլոր ովկիանոսը մեր սեպուէր: Ա՛հ թէ որ աս բան աղէկ մտածէնք, ու Քրիստոսի չարչարանքները սիրաբերուս մէջ տպաւորուած ըլլային, ինչպէս կը փոխէնք մեր վարքը. ամեն բան աչըրուս թէ թե կերևնար. որչափ ալ բնութիւնն իսկրէր, կրսէնք: Ինչ է իմ քաշածս փրկչիս քաշածին քովը, անիկայ իմ մեղքերս քաւելու համար՝ զիս փրկելու համար՝ այնչափ բան քաշեց, էս ինչպէս կրնամ ուրիշ

կերպով փրկուիլ. ինքն է իմ առաջնորդս փրկութեան, ինչպէս կրնամ էս ասոնց իրեն չարչարակից ըլլալու՝ փրկութեան հասնիլ: Թէ որ կարենայի ալ ուրիշ ճամբով հասնիլ, ինչ օրտով կրնայի իր ճամբէն գուրս ելլել, ուրիշ ճամբայ բռնել. ինքը իր անմեղ մարմնը ինծի համար այսչափ չարչարանաց տակը ձգելէն ետքը՝ էս ինչպէս իմ յանցաւոր մարմնոյս կրնայի խնայել. ինքը ինծի համար այնչափ նախատինք կրէլէն ետքը, էս ինչպէս կրնայի իմ անձնասիրութեանս հետեիլ, փառք պատիւ փնտուել, աշխարք վայելել: Թէ որ էս ծառայ ըլլալովս՝ արորմէս աւելի իմ հանգիստս փնտուէի, ինչ երեսով կրնայի օրմը իր առջևը երևնալ, ինչպէս կրնայի աչքս վեր աւնել՝ զինքը խաչի վրայ տեսնալ, ամօթէս պէտք էր գեակիւր անցնէի: Չէ, չէ, ուրիշ ճամբայ չեմ ուզէր երթալ, ուրիշ բան չեմ ուզէր գիտնալ, Բայց զՅիսուս Քրիստոս, և ընդն ՚ի խաւ ելեալ. անոր միշտ նայիմ, անկեց սիրտ աւնում, անով արթըննայ սրտիս մէջ փափաք մահացուցման ու ապաշխարութեան, ու անով ամեն նեղութիւն իր սիրոյն համար յանձն առնում:

Ա Ղ Օ Թ Բ

Յիսուս փրկիլ է իմ, ինչուան հիմայ աղէկ չէի մտածէր ինչ ըսել է քրիստոնէայ, վեր ՚ի վերջ կը մտածէի, մութ աեղեկութիւն մը ունէի, անոր համար ասանկ ետե մնացեր եմ, ջանք չեմ ըրէր քրիստոնէի վարք ունենալու: Հիմայ քու շնորքովդ աչքս բացուեցաւ, հիմայ կրմանամ ինչ մեծ բան ըլլալը՝ որ աս սուրբ հաւատքին մէջ ծնէր եմ. հիմայ կրմանամ ինչ մեծ կոչում ունէ



ցեր եմ՝ որ ետեւէդ դամ: Բայց ճանչնալա բաւա-  
կան չէ, թէ որ քու շնորբդ չօգնէ ինձի՝ որ կոչ-  
մանս համեմատ վարք ունենամ. անոր համար  
աչքս քու վըայէդ չի վերցընեմ. երբոր անձնասի-  
րութիւնս իր հանգիստը փնտռէ, քու չարչա-  
րանքներուդ նայիմ. երբոր անհամբերութիւնս  
բռնէ, քու քաշած նախասինքներդ մտածեմ,  
քեզի հետեւիլը ինձի փառք սեպեմ, քեզի խաչա-  
կից ըլլալը ինձի երջանկութիւն: Քու աս չարչա-  
րանքներն ու նախասինքը կրելուդ համար ըլլայ,  
օգնէ իմ աս բարի առաջադրութեանս:

Այսօր յառաջ նշանակեալ հրամանն քո կա-  
տարիւր յաշակերտաց դասն, քանզի զհովիւդ  
քաջ հարեալ՝ ցրուեցաւ հօտն ըստ մարդարէին.  
որ և կապեցար անկապելիդ՝ ՚ի յԱննայէ և ՚ի  
Կոյիափայ դատապարտեալ, ՚ի ծառայէ ապտա-  
կեցար, և նախատանաց թուք կերտարանդ չօր  
ընկալար. վասն որոյ խնայեա ՚ի մեզ, Քրիստոս,  
կամաւոր քո չարչարանք:

## Մ Տ Ա Մ Ա Կ Ա Ն Ի Ը .

Վրիստոսի վշով պատկոռելուն վրայ:

## Մ Ա Ս Ն Ա .

Պիլատոս զՔրիստոս անանկ չարաչար ծեծել  
տալէն ետքը՝ տեսաւ որ Հրեաները անով ալ գոհ  
չեղան, նորէն իսաւեոյի կը պառային, ու աւելի  
խռովութիւն կեւրէր կօր, թէ և խիղճը զինքը կը  
տանջէր՝ բայց վախնալով որ կայսեր երեսէն իյ-  
նայ, ամենուհ առջին ձեռքը լուաց՝ ըսելով որ ես  
անպարտ եմ անմեղին արուեսէն, ու զՔրիստոս  
ձեռուրին տուաւ: Կը կարծէր որ աս արարողը-  
թեամբը խղճմտանքին տանջանքէն, ու աստու-  
ծոյ պատուհասէն խաղտի. բայց խիստ սխալե-  
ցաւ, ինքը զինքը ասով դատապարտեց: Վասն զի  
թէ որ գիտէր Քրիստոսի անմեղութիւնը, դատա-  
ւոր ըլլալով իր պարտքն էր որ ազատէր զինքը.  
աղտաւըւ աեղը՝ թշնամիներուն ձեռքը տուաւ.  
իւր պարտքը դատաւորութիւն ընել էր, միջնոր-  
դութիւն ուղեց ընել անոնց՝ որ իր խօսքին մտիկ  
պիտոր չընէին: Զինուորները առին տարին զՔրիս-  
տոս ան միջոցին իրենց զինուորանոցը. սատանան  
փորելին մտեր էր, հոն ուրիշ նախատական ան.

գուժ ասնջանք մնն ալ տուին իրեն: Հրեաները զրպարտեր էին զինքն որ թագաւոր կ'ուզէր ըլլալ. ուրեմն զինքը ծաղր ընելու համար՝ ուղեցին սուտ թագաւոր ձեւացնել: Ներս կանչեցին բուր իրենց գունդը. քաշեցին հանեցին Քրիստոսի զգեստներն՝ որ ձաղկանքէն վերաւորուած մարմնոյն վրայ կ'աւծ էին. փրթելու ատենը ինչ ցաւ որ կուտար՝ մտածելը մարդուն ստեղծմ' կը բերէ. բոլոր վէրքերը նորէն բացուեցան: Մերկ մարմնոյն վրայ կ'արմիր քուրջ մը ձգեցին՝ թագաւորական ծիրանիկ տեղ. փուշերէ պատկ մը շնեցին՝ գլուխը անցուցին, արիւնը երեսներէն վար կը վազէր. ձեւքն ալ եղէգ մը տուին թագաւորական գաւազանի տեղ: Քրիստոս ալ առաւ. ամենեւին մէկ ըրածնուն ալ դէմ՝ չիկեցաւ, ինչպէս որ ոչխար մը սպաննելու որ կը ասնին՝ կերթայ, դէմ չիկենար. Որպէս ուշխար ՚ի սպանդ վարեցաւ. Ես իբրև դատու անեղ վարեալ ՚ի սպանդ:

### Մ Ա Ս Ն Բ.

Աս ձեռի մէջ զինքը դնելէն ետքը, ծաղր ընելով՝ առջեւը ծնկան վրայ կուգային, ու կը բարեկէն զինքը՝ ըսելով՝ Ողջ էե՛ր աբայ, Հրէե՛յ: Երեսը կը թքնէին, ու եղէգը ձեւքէն կ'անեկն՝ անով գլուխը կը ծեծէին: Երեսակայեց որ զարնելու ատեն նին պատկին փուշերը աւելի խորունկ մանելով՝ ինչ ցաւ ինչ կսկիծ կուտային. պղտի փուշ մը ձեւքնիս որ մանայ, ցաւին չենք զիմանար. հապա անստկալի փուշերը բոլորը մէկտեղ՝ խորունկ ինչուան սակոյն որ կը մանային: Ինչ անտանելի ցաւ էր որ մեր սիրոյն համար քաշեց մեր փրկիչը, ինչուան որ ամեն զննուորները իրենց սատանայաւ

կան կատաղութիւնը յագեցուցին: Ի՞նչ պիտոր ըլլայ ան զննուորներուն բանը գատատանին օրը, երբոր տեսնան Ագաւմէն ինչուան ան օրը աշխարք եկած մարդիկը գողալով կեցած անոր առջին՝ որուն իրենք աս բաները ըրին: Քրիստոս ինչուան հինայ ալ կը թողու մեղաւորներուն զինքը նախատել, իրեն դէմ ընել, բայց օր կուգայ՝ որ պիտոր գողան իր առջին: Մենք ալ որ ասանկ անհոգութեամբ իրեն կը ծառայենք, արգեօք ինչպէս սուշենք մնանք սիրտոր՝ իր ասուածային ահաւոր մեծ վայելքութիւնը տեսած ասեմնիս:

### Մ Ա Ս Ն Գ.

Զննուորները աս անգութ տեսարանը հոն ձեւացուցին, բայց ասուածոյ կողմանէ մեծ խորհուրդ մը կատարուեցաւ: Սին ընտան վրայ էր զննուորանոցը, հոն զինքը ծաղր ընելու համար թագաւոր ըրին, բայց իրօք թագաւոր ըրաւ ասուած զինքը ամեն հաւատացեցոյ. հոն Իսաիթ մարգարէին բերնովը ըսածը կատարուեցաւ. Ես խոյի Ռաֆաաւոր ՚ի նման է ՚ի վերայ Սինի լեւին սրբոյ նարա. որք ասոց յիս, որդի ի՞մ էս դու, ինչքեա յիւնն և սոց յեղ զնեմանոսս ՚ի ժառանգութեան, և իշխանութեան յեղ զսմնայն ժափս երեւի: Հոն եղանք մենք իր ժառանգութիւնը, հոն եղաւ ինքը մեր ակրը, հոն հեթանոսները իրենց ակնկալութիւնը ընդունեցան՝ Հրէից թագաւորը, որն որ իր ծննդէնէն ՚ի վեր սկստեր էին իրէք մոգերուն ձեւքովը փնաւել: Ո՞րք է որ ծնաւ աբայն Հրէե՛յ: Աս էր այն թագաւորութիւնը՝ որուն համար ինքն Քրիստոս ըսաւ Պիղատոսի ատեանը. Իմ Ռաֆաաւորութեան չէ սոցս՝ ալ խարհէ: Թէ որ կուզենք որ Քրիստոս մեր թագաւորը ըլլ

լայ, իր վրայ նայինք՝ սրահը գոհարներէ չէ, դա-  
 ւադանը ոսկիէ չէ, ծիրանին մետաքսէ չէ: Իրեն  
 հետեւինք՝ աշխրբիս փառքն ու հարստութիւնը  
 ոտքի տակ առնելով: Իր վրայ նայելով՝ սիրա առ-  
 նենք մահացուցմունք ու ասպաշխարանք ընելու:  
 Փախչինք փափկութենէ, զսպէնք կիրքերինս,  
 չերթանք լայն ճամբէն՝ որն որ աշխարհ մարմին  
 ու սատանայ առջևնիս կը բանան, Քրիստոսի ե-  
 տեկն երթանք նեղ ճամբէն. ու թէ որ փուշ մը  
 ան ճամբուն մէջ ոտընիս խայթէ, մտածենք որ  
 Քրիստոս մեզի համար փշով սպակուեցաւ. առանց  
 նեղութիւն քաշելու՝ փշերով սպակուած թագա-  
 ւորի հպտտակ չենք կրնար ըլլալ: Բայց աս վշտակ  
 թագաւորութեանը քիչ տանէն կը յաջորդէ փա-  
 ռաւոր թագաւորութիւն մը, որուն մասնակից  
 կըլլան իր առջև թագաւորութեանը հպտտակնե-  
 րը: Իր բարեկամներն ալ, թշնամիներն ալ, հա-  
 լատացեալ ու անհաւատ, իրենց յաւիտենական  
 անդարձ վճիռը իր բերնէն պիտոր ընդունին: Ան  
 ասենք պիտոր չըլլայ ցուտը ու նախատանայ թա-  
 դաւոր, չորս դին անօրէն ղնուորներ առած՝ ղնե-  
 քը չարչարելու ու ծաղը ընելու համար. այլ  
 թագաւոր փառաց և մեծվայելութեան, չորս  
 դին հրեշտակները առած՝ իր հրամանները կատա-  
 րելու. մէկդի ընելու արքայութենէ անոնք որ իր  
 ցաւակն թագաւորութեանը չուզեցին հպտտակ  
 ըլլալ, ու արքայութիւն անոնք՝ որ մաս-  
 նակից եղան իր չարչարանայն ու նախատանայը:  
 Յարժամ էիւսցէ որդի մարդոյ փառօք իւրովի, և ամենայն  
 հրէշտակէ ընդ նմա, յայնժամ նաքոյի յախոս փառաց իւ-  
 րոց, և խողովեցոյն առաջի նորա ամենայն ապգո և այլն:

Ա. Գ. Օ Թ. Թ

Յիսուս փրկիչ իմ, կ'երկրապագեմ քու անձա-  
 սելի խոնարհութեանդ, զքեզ փուշ սրահին տակը  
 իմ թագաւորս, իմ տէրս ու իմ փրկիչս կը ճանչ-  
 նամ: Այն թողոր որ քեզմէ ասպտամբօշներուն  
 հետ քու յաւիտենական արքայութենէդ զրկուիմ  
 իմ քեզի ըրած երկրապագութիւնս ղնուորներուն  
 ըրածին պէս չէ, այլ ինչպէս անօրէն սատանային  
 փորձութիւններուն յաղթելէդ ու ղնեքը խայտա-  
 աակ ընելէդ ետքը՝ հրեշտակները քեզի երկրապա-  
 գութիւն ըրին. ու ինչպէս որ զուն հրամանցիւր  
 որ օրմը ճշմարիտ երկրապագուներդ հոգաւ և ճշ-  
 մարքաւեամբ երկնաւոր Հորդ երկրապագութիւն  
 պիտոր ընեն, անոնց պէս քեզի բուրբով սրախ-  
 երկրապագութիւն կը մատուցանեմ, ու կը խն-  
 դրեմ, որ քու փշով սպակուելուդ համար՝ իմ  
 երեւակայութիւնս մտքրես ամեն չար խորհուրդ-  
 ներէ, ու քու չարչարանքներդ միայն սպաւորես  
 երեւակայութեանս մէջ, որպէս զի անոնցմով միշտ  
 զգածուիմ, զըջամ մեղքերուս վրայ՝ որ անոնց  
 պատճառ եղան, ու արժանի ըլլամ երկինքը զքեզ  
 քու փառացդ մէջ տեսնելու ու օրհնելու յաւի-  
 տեանս:

Սըրբափայլ պրճնեալ զարդուն,  
 Զոր զգեցուցեր Ահարոնին,  
 Փոխան պըսակ է փշոց եղին  
 Մշակք սյգւոյն իսրայելին.  
 Ըզփուշ մեղաց հանցես յինէն՝  
 Զոր յիս եհար իմ թըշնամին,  
 Եւ ողջացո զխայթուած վերին,  
 Զի սպիք մեղացըն ջընջեսցին:

# ՄՏԱԾՍԿԱՆ ԻԹ.

Պիղատոսի զՔրիստոս Հրէից ցուցընելը

## ՄԱՍՆ Ա.

Պիղատոս զՔրիստոս Հրէից ձեռքը տալէն ետքը՝ խղճմտանքէն չարաչար ամնջուելով, մանաւանդ կնոջը տեսած երազին համար, ու խմանալով զինուորներուն ան միջոցը ինչ վիճակ հասցընելը զՔրիստոս, մտածեց որ Հրեաներուն զինացը հանէ զինքը ան խեղճութեան մէջ՝ որ թերեւս սրտերնին շարժի, ու կարենայ ինքը ամ ծանր անկրատութիւնը ընելէն խալովիլ: Բայց գործնաւ աս բանիս մէջն ալ աստուած էր խորհուրդը ունէր. Պիղատոսը ուրիշ բան չըրաւ, բայց աստուծոյ խորհուրդին ծառայել: Անոր համար սուրբ աւետարանը ամեն պզտի պարագաներն ալ կը յիշէ աս գործողութեանը. նախ՝ տեղը. Մաթա ՚ի վերայ բեթան, ՚ի պեղոնն՝ որ իռէր քարայրակ, և եբրայեցիներէն Կապպաթա: Երկրորդ՝ օրը. Էր սոբոթան պարի: Երրորդ՝ ժամը. Ե- էր ժամ իբրև վեցերորդ: Չորրորդ՝ ըսած խօսքը. Ահա լափաւորդ յեր յիշուահա այրդ յիշու:

Քրիստոս բեմը ելաւ, գլուխը փշէ պսակ, ձեռքը եղեղէ դաւաղան, կարմիր զգեստ հագած, այն ձևովն որ զինուորները զինքը ծաղր ընելու համար ձեռացուցեր էին, ու այն վէրքերովն որ ձաղկանքէն ու փուշերէն ընդուներ էր, անանկ որ մարդու կերպարանք չէր մնացեր վրան. Տեսա՛ք մէք ուս, և ու գոյր նորա պէտիւ: Աս վիճակին մէջ Պիղատոս հանեց զինքը ժողովրդեան առջին, որպէս զի սիրտերնին շարժի վրան. ու կերակայ որ սկսեր էր ժողովրդեան մէջէն շատերուն սիրաբը չեղիմանալ որ՝ մէկէն չար քահանայատէրաները սկսան պոռալ. Բարձ ՚ի մէնջ, Բարձ ՚ի մէնջ, և հան դար ՚ի խաւ. որպէս զի չըլլայ թէ ժողովուրդը զթայ, ու ազատել ուզէ զինքը մահուանէ:

## ՄԱՍՆ Բ.

Պիղատոսին միայն՝ բռնած ճամբէն ալ յայտնի է որ ինչ նշանակութեամբ ըսաւ՝ Ահա այրդ յիշու: Բայց աս խօսքը շատ նշանական խօսք մըն էր, ու յայտնի է որ աստուած ըսել տուաւ Պիղատոսին, ինչպէս Բաղասմին՝ որ եկեր էր անիծելու զԽարայէլ, օրհնել տուաւ: Պիղատոսին միայն որչափ ալ որ յայտնի էր, բայց խօսքը բնական խօսելու կերպ չէ. Ահա այրդ յիշու: Այդ անունը սուրբ գրքին մէջ քանի տեղ Քրիստոսի վրայ ըսուած է, ինչպէս Այդ մի ՚ի հարութիւն, և գիպէ համբերել յուրոյ: Չի՞ի ի՞մ գայ այր՝ որ առաջի ի՞մ եղև. ասոնց նման ուրիշ տեղուանք ալ: Բայց զլուարտապէս ան՝ խօսքն որ Եսայի մարգարէն կրտէ. Առաջինսոցն աս պէր վասն նեղութեան իւրեանց, և առաջեսոցն նորա պէր այր մի՝ որ բրկեցն զնսսա, և շաքարաբանս բրկեցն զնսսա. ասոնք ամենն ալ Քրիստոսի վրայ կիմացուին: Աս

այլը՝ որ Ադամէն 'ի վեր խոստացեր էր աստուած մարդկանց, ու այսպի դարեր կը սպասէին իրեն՝ Քրիստոս էր, որ զմեզ փրկելու համար այն վեճակը հասեր էր, ոսբէն մինչև 'ի գլուխը վերբերով լեցուած, այլ 'ի հարուածս, փուշերով պակուած, ու նախատանօք ծածկուած: Ուստի Պիղատոս աս այլը՝ այսինքն զՔրիստոս՝ ան խօսքովը ներկայացուց, չէ թէ միայն Հրէից՝ այլ և ամենայն ազգաց, որ զատկի տօնին համար հոն ժողովեր էին, ու ըսաւ՝ Ահա այդ դէպէս այսինքն այն փրկիչն որ կը սպասէիք, ահա ասիկայ է: Ուրեմն աստուած, ինչպէս որ Վայիափայի անարժան բերնովը իմացուցեր էր՝ որ Քրիստոսի մահը բոլոր աշխարհիս կեանք պիտոր տար. Լաւ է մեզ՝ զի այդ մեռանիցի 'ի վերայ ժողովրդեանս, և մի ամենայն ազգս հորիցէ: Պիղատոսի բերնովը ալ իմացուց ամենուն՝ որ ան խեղճութեանը մէջ անսած մարդերնին՝ Քրիստոս էր փրկիչ աշխարհի:

### Մ Ա Ս Ն Գ.

Դատ անիրաւ դատաւորներ եղած են աշխարհիս վրայ, բայց ամենքն ալ իրենց ըրած անիրաւութիւնը ջանացեր են ծածկելու. իսկ Պիղատոսին ըրածը՝ աշխարհիս սկիզբէն 'ի վեր եղած բան չէ, և ոչ պիտոր ըլլայ, որ մեկ դատաւոր մը չէ թէ միայն դիմանայ ամբաստանելոյն անմեղութիւնը՝ այլ և ամենուն առջին զուրցէ, ու զուրցելու ատենը՝ անմեղը դատապարտէ: Անիժեալ մարդահաճութիւն. իսկ Պիղատոս իբրև զմիս Կառնիս հաճել զամբոխին... հասանելոս ատենէլ զհայրաւորս նոցա: Ան ատենն է որ Հրեաները ան սոսկալի անէծքը իրենց ու զաւկըններնուն վրայ չարամաղթեցին, ըսելով. Արիւն Դորա 'ի վերայ մեր, և 'ի վերայ որդոց մերոց: Հէ-

րիք էր որ Քրիստոս սպանուի, ամեն պատիժ յանձն առին՝ որ աստուած խրկէ վրանին, ու իրենց կողմանէ Պիղատոսի մեղքն ալ վրանին առին, զինքը ամեն պարտկանութենէ ազատ ընելով: Ինչ կատարութիւն: Հէթանոս դատաւոր մը կը դողար կոր զՔրիստոս դատապարտելու, կը վախեր կոր որ ըրած անիրաւութեամբը պատժուի աստուծմէ, իսկ Հրեայք որ աստուածապաշտ պիտոր ըլլային՝ աստուծոյ ընարուած ժողովուրդը, ատ անիրաւ վճիռը ձեռք ձգելու համար՝ աւան պատիժ աչքնին առին, չէ թէ միայն իրենց համար՝ այլ նաև որդւոց որդի յաւիտենական պատիժ: Անոր համար տասնութը դարերէ 'ի վեր՝ բոլոր աշխարք սարսափելով կը տեսնայ իրենց ողորմելութիւնը, որ բոլոր աշխարք ցրուած, ամեն նէն կ'անարգուին իբրև աստուածասպան՝ զՔրիստոս սպաննելուն համար:

### Ա Ղ Օ Թ Բ

Յիսուս փրկիչ իմ, քու արիւնդ՝ քու պատուական արիւնդ մեր վրայ ըլլայ. Հրէից անէծքը մենք բարեմաղթութեան կը փոխենք, Արիւն Կո 'ի վերայ մեր, և 'ի վերայ որդոց մերոց: Քու սուրբ արիւնդ իջնայ մեր վրայ, ու ինչպէս զատկական դառին արիւնը՝ Եգիպտոս իսրայելացուց դրանը սեմոցը վրայ քսուելով՝ ազատեց զիրենք սատակիչ հրէշտակին ջարդէն, սասնկ ալ քու սուրբ արիւնդ ազատեց զմեզ ժամանակաւոր ու յաւիտենական պատիժներէն, ու ըլլայ մեր փրկութեանը գրաւական: Մի՛ մեղեցի, քեր մեր և ասորս, Խորհրդին՝ կ'ստեղծանայ մերոց պարստախան արեամբդ Կո:

Որ թագաւորդ էս թագաւորաց Քրիստոս, 'ի ծառայեց դատապարտեալ՝ համբերելով վասն մեր երկայնամիտ տէր, քեզ փառք:

ու նորէն իր լաթերը հագցուցին: Անոր համար  
Էրկրորդ անգամ ալ նոյն ցաւը քաշելը խմացընե-  
լու համար՝ որոշ նորէն կը պատմէ հանուեցընել-  
նին. Մէրկադոյցին 'ի նմանէ զգլխախորն, և ագոյցին նմա  
չէր հանդերձն, և պարտն զնա 'ի խաւ հանել:

### ՄՏԱԾԱԿԱՆ Լ.

Քրիստոս խաչը ուր Գողգոթա շուր  
կըկրուն վրայ:

### ՄԱՍՆ Ա.

Չնուորները զՔրիստոս ձաղկեւէն ու արուն-  
լուայ ընելէն ետքը՝ հագցուցին իր զգեստները,  
ինչպէս սուրբ աւետարանը կը պատմէ: Ետքը եր-  
բոր զինքը ծաղր ընելու համար թագաւոր ձեւա-  
ցուցին, նորէն սուրբ աւետարանը կըսէ որ մեր-  
կացուցին զինքը, ու կարմիր քուրճէր ձգեցին  
վրան. աս նորէն մերկացընելնին որոշ պատմելը  
մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ վէրքերուն  
վրայ կպած զգեստները քաշելու հանելու ատեն  
նին՝ վէրքերը նորէն բացուելով, Քրիստոսի քա-  
շած ցաւը սաստիկ ցաւերէն մէկն եղաւ: Ետքը  
բոլոր զննուորաց զուսպին այն անողորմ ծաղրա-  
ծուութիւնը՝ սուս երկրպագութեամբ ու Ուշ Լեւ  
աբայ չըբէջ ըսելով, ու Պիղատոսի զինքը ժողո-  
վերդեան գինացըն նոյն քուրճէրով հանելը՝ խել մը  
ատենի կարօտ էր. անանկ որ՝ բացուած վէրքե-  
րուն վրայ կարմիր քուրճէրը նորէն կպած էին,  
երբոր խաչը կանակը տալու ատեն հանուեցուցին,

### ՄԱՍՆ Բ.

Իսկ փուշ պատկն որ թողուցին մինչև ետքը  
զվտուն վրայ, կրնանք երեակայել ինչ կակիծ կու-  
տար իրեն, քանի որ խաչը տանելու ատեն կը զըս-  
չէր զվտուն, մանաւանդ երբոր խաչին վրայ պառ-  
կեցուցին՝ որ ձեռուներն ու ոտներըր գամեն:  
Այսչափ ծանր եղաւ Քրիստոսի զմեզ փրկելը.  
ինքը քաշեց, մենք հաղիւ կը մտածենք քաշածը,  
մեզն ծանր կուգայ իր քաշելը մտածելու աշխա-  
տութիւնը. բայց ասնք մտածելովն է՝ որ կրնա-  
նանք այն խօսքին զօրութիւնը. Որ ու առնու զխաւ  
իւր, և գայ զնի իճ, լէ ինչ արժանի: Վասն զի ինչ-  
պէս կրնանք առանց դոնէ ցաւելու իր վրայ, դոնէ  
մտածելու քաշածը, մասնակից ըլլալ մեր փրկին  
փառացը, որ մեր սիրոյն համար այսչափ ու այս-  
պիսի ցաւեր կրեց: Քրիստոս վէրքերուն ցաւէն  
ու թափած արիւնէն ուժը կարած, կանակը ա-  
ռաւ ծանր խաչը՝ Գողգոթա լեւը տանելու հա-  
մար որ վրան խաչուի: Մասն Աբրահամ սիրելի  
զաւակին, որ իր զոհուելու կրակին փայտը կանակը  
առած՝ լեւը ելաւ, ուր որ զոհուէր պիտոր- ա-  
նոր համար ըսաւ Քրիստոս չըբէջ. Սբրահամ հայր  
Յէր ջանկացաւ դեսանել զբ իճ, երես և ուրան եղև.  
վասն զի Խաչակի զոհը Քրիստոսի մեզն համար  
զոհ ըլլալուն օրինակն էր: Որչափ ալ Քրիստոս  
իրեն ուժ կուտար ան սոսկալի բեռը կանակը ա-

աած՝ լեռը ելլելու, չհրիմացաւ ինկաւ խաչին տակը: Հրեաները վախցան որ չըլլայ թէ ճամբան մեռնի, ու չնկարենան իրենց անդուժ բաղձանքին հասնիլ զինքը խաչուած տեսնելու, անոր համար Սիմոն կիւրենացին բռնեցին՝ որ խաչը անհկայ տանի: Ո՛հ, թէ որ ան ատենը ճանցած ըլլար Սիմոն ինչ բախտի հանդիպելը, արդեօք ի՛նչ սիրով կը տանէր խաչը:

### ՄԱՍՆ Գ.

Սիմոն Գրիստոսի խաչը տանելով՝ Գրիստոսի չարչարանքը թեթևցուց. մենք ալ նոյնը կրնենք՝ թէ որ աշխրբիս նեղութիւնները սիրով տանինք, Գրիստոս կրնգունի մեր քաշածը կիւրենացւոյն քաշածին պէս: Կիւրենացին խաչը տանելու ատենը չէր գիտեր իր երջանկութիւնը, աս մտիթարանքը չունէր. մենք գիտենք, փառք աստուծոյ, ու գիտնալովին՝ սիրա կառնենք սիրով տանելու մեր խաչը: Կիւրենացին առանց աս գիտութիւնը ունենալու՝ բերնէն դանդաղ մը չիհասնց. ի՛նչ ամօթ բան կըլլայ՝ թէ որ մենք գանգատելու ըլլանք, ու չուզենք տանիլ մեր խաչը: Կիւրենացին երբոր ետքը մեր գիտութիւնը ունեցաւ, երանի կուտար իրեն՝ Գրիստոսի խաչը տանելուն, ու Գրիստոսի հետ նախատուելուն համար. իր կենացը մէջ ունեցած ամենէն մեծ բախտը անհկայ սեպեց, ինչուան հիմայ մենք ալ անանկ կը սեպենք, ու իրեն երանի կուտանք: Իր փառացը՝ իրեն զաւկըներն ալ մասնակից եղան, ու ինչուան աշխրբիս ետքը՝ իրենց հօրը պատճառաւ անուննին պիտոր կարգացուի սուրբ աւետարանին մէջ:

Եւ ունէին պահալ զՍիմոն Կիւրենացի, զհայրն Աղէթսանորի եւ Ռոմիայ:

Աղէկ էն ճգնութիւններն ու խաչերը՝ որ մենք մեր կամօքը կընտրենք, բայց շատ աւելի արդիւնաւոր են ան խաչերն որ աստուծոյ նախախնամութիւնը կը խրկէ մեզի, ինչ կերպով ալ գալու ըլլան վրանիս, թէ բնական և թէ բարոյական պատճառներէ: Մեզի անխրաւութիւն ընօղը, իրաւ՝ կը մեղանչէ, ու անոր համար աստուծոյ կամքը չէ իր ըրած մեղքը, բայց անոր մեղքէն մեզի եկած խաչը՝ աստուծոյ կամքն է. մեր բարւոյն համար կը թողու՝ որ ուրիշը մեզի ատ անխրաւութիւնը ընէ, ատ խաչը վրանիս դնէ: Մեզի ծանր գալը արդիւնքնիս չնպակսեցընելէն՝ ի զատ, շատ անգամ կ'աւելցընէ ալ. հիմայ մենք հաւատաբով միայն գիտենք աս բաները, բայց օր կուգայ՝ որ պիտոր իմանանք մեր երջանկութիւնը, երբոր տեսնենք մեր քաշած պղտի նեղութիւնները Գրիստոսի քաշած չարչարանքներուն հետ մէկ եղած. անանկ որ՝ պիտոր չիճանչանաք քաշածնիս այնչափ արդիւնաւոր եղած ըլլալը: Երանի՛ կիւրենացւոյն, բայց երանի՛ մեզի ալ, թէ որ աստուած զմեզ ալ ընտրէ խաչակից ըլլալու Գրիստոսի: Կիւրենացւոյն ըրածը՝ Գրիստոսի տուած խրատին գործնական կատարումն է. անոր խաչը կանախը առած Գրիստոսի ետեւէն երթողը՝ պատկեր մըն է հաւատացելոյ, որ Գրիստոսի արժանի ըլլալու կը ջանան. անհկայ նիւթապէս տարաւ խաչը, իրենք բարոյապէս կը տանին: Աշխրբիս մէջ նեղութիւն քաշելը՝ խաչ կրելը՝ հարկ է. Յիսուսի համար կրելը՝ քրիստոնէին պարտքն է. Գրիստոսի ետեւէն կրելը՝ զինքը ազւնուս առջևը ունենալով, երջանկութիւն է:

ԱՂՕԹՔ

Յիսուս փրկիչ իմ, անկէց ետքը ինչ խաչ և ուսկից ալ վրաս գալու որ ըլլայ, սիրով կընդունին իմ մեղքերովս աւելի ծանրացուցեր եմ քու խաչդ, անկէց ետքը քու սուրբ շնորքովդ կը յուսամ թեթեցընելու խաչակից ըլլալով քեզի: Քու խօսքդ է, Ձի լուծ իմ քառոր է և բեռն իմ քու քրոհի: Չօրացուր իմ հաւատքս՝ որ իմանամ քեզի խաչակից եղօղներուն երջանկութիւնը, որպէս զի աս խօսքիդ ասպայոյցը ես ալ իմ վրաս փորձեմ, ինչպէս որ քու վկայքդ ու ամեն սուրբերը փորձեցին իրենց վրայ, ու ամեն նեղութիւն թեթեւեպեցին՝ դիտնալով որ ինչ փառք իրենց համար պատրաստեր ես:

Ստեղծեալ ծառայ մահաբերին՝  
 Այն որ բուսաւ ի մէնջ դրախտին,  
 Փոխան բարձեր ըզփայտ խաչին  
 Ի Գողգոթայ հաներ տեղին.  
 Ձիմ առ ի մեղս անկեալ զողի  
 Եւ ծանրագոյն բարձող բեռին  
 Բարձ ի յուսիդ ըստ ոչխարին,  
 Հան ի յերկինս յուխտեալ տեղին:

### ՄՏԱԾԱԿԱՆ ԼԱ.

Յիսուսի խաչկոտորեանք վրայ:

### ՄԱՍՆ Ա.

ՉՔրիստոս տէրն մեր այն ցաւալից վեճակին մէջ՝ որ վրան ոյժ չիկար քալելու, հըրմըշաըկելով տարին Գողգոթա լեռան վրայ խաչելու: Ո՛վ Գողգոթա, թշուառ և երջանիկ լեռ. թշուառ, վասն զի քու վրագ ամենէն մեծ մեղքը գործուցաւ, աստուածասպանութիւն. և երջանիկ, վասն զի քու վրագ ամենէն մեծ խորհուրդը կատարուեցաւ, փրկութիւն աշխարհի: Երջանկութիւնդ յաղթեց թշուառութեանդ, վասն զի մինչև հիմայ, ու մինչև աշխրբիս ետքը, ամեն հաւատացեալ կը փախաքի ու փախաքի պիտոր դքեզ տեսնալ, ու համբուրել Քրիստոսի արուեսովը թրջած հողդ. ճշմարիտ հաւատացեալ մը չիկայ ու պիտոր չըլլայ, որ դքեզ յիշելու ատենը սիրտը տակնու վրայ չըլլայ: Լեզու ունենայիր ու պատմելիք ան ատենի քու վրագ եղած հրաշքները, մանաւանդ մեղաւորներուն գարձը, որ մեր սիրտն ալ շարժէիր լալու մեր մեղքերն որ պատճառ եղան Որդւոյն աստուծոյ քու վրագ խաչուելուն. բայց



առանց լեզուի ալ՝ քու անունդ միայն բաւական  
կը խօսի ամենուս սրտին:

Հան հասածին պէս Քրիստոս, դաշխճները հա-  
նուէցուցին զինքը՝ երրորդ անգամ վերքերը բա-  
նալով, նորոգելով իր անտանելի ցաւը. հրեցին  
պառկեցուցին խաչին վրայ՝ որ գեանքը գրած  
պատրաստած էր սեղան սրբաւէտն, որուն վրայ պէ-  
տոր պատարագուէր Քրիստոս գտուն սսսսսսսս: Ե-  
րևակայենք իր ցաւն որ փշով պսակած զլուսը՝  
խաչափայտին վրայ ինկած առենը զարնուէլով,  
ու փուշերը խորունկը մանկելով, կրէց: Քաչեցին  
տարածեցին խաչին վրայ, զարկին դամեցին ան  
ձեռւններն՝ որ զիրենք ստեղծէր էին, ու ան ու-  
ղենքն որ դնէ յամպս ոգնայս իւր: Ան առենը կա-  
տարուեցաւ սաղմուսագուցին բերնով ըսածը.  
Մակեցին ս. քրիստոս իմ և դոքս, և խաչեցին զամենայն ու-  
նէրս իմ: Ասանկ զինքը խաչին վրայ դամելէն ետքը,  
խաչը վեր առին, պատրաստած ծակերնուն մէջը  
տնկեցին: Ո՛վ կրնայ առանց փշաբաղելու երևա-  
կայել այն ցաւն՝ որ մեր փրկիչը կրէց, երբոր բո-  
լոր մարմնայն ծանրութիւնը դամբէն կախուե-  
ցաւ. վեց ժամ մէկդիէն աս ստակալի ցաւը, մէկաւ  
դիէն ալ ամեն տեսակ նախատինք կրելով: Վասն  
զի նախ զինքը անօրէն յանցաւորներուն կարգը  
դնելու համար՝ երկու աւազակ ալ երկու զին  
խաչեցին: Եսայի մարգարէն ըսած էր զարձու-  
րէլով աս ստակալի նախատինքը, ու Քրիստոս ինքն  
ալ բռնուեցէն առաջ՝ ետքի իրկուսը յիշեցուց  
նոյն խօսքը իր առաքելոցը. Բայց ասեմ յեւ, ուի այս  
ևս որ գրեաւ է՝ պարզ է ուի խաբարեացի յիս իէ ընդ ան-  
բէնս համարեցաւ: Աս խօսքէս ալ յայտնի է որ ամե-  
նէն ծանր նախատինքներուն մէկն էր աս, որ մաս-  
նաւոր կերպով իմացուց առաջուց իր առաքել-  
ոցը: Քրիստոս աւազակներու կարգը դրուեցաւ,  
կրնանք մենք դանգաախլ՝ ուրիշներուն մեր վրայ

քիչ համարմունք ունենալուն վրայ. կրնայ ըլլալ  
նախատինք մը՝ որ աս նախատանալը հաւասարի:

ՄԱՍՆ Բ.

Ասկէց 'ի զաս' խօսքով ալ ըրած հայհոյանք-  
ներնուն ու նախատինքներնուն չափ չիկար. քա-  
հանայապետները, գովիրները, զինուորները, դա-  
հիճները, անցաւորները, ինչուան իր հետը խա-  
չուած աւազակներուն մէկն ալ, զինքը նախատե-  
ցին: Ուրիշները փրկեցիր, զբեզ ալ չփրկիս ըսին,  
անոր՝ որ զիրենք փրկելու համար խաչուէր էր:  
Թէ որ որդի աստուծոյ էս, խաչին վար ինչիւր որ  
հաւատնք քեզի՝ ըսին, անոր՝ որ զիրենք յաւիտե-  
նական մահունէ խաղսելու համար խաչին վրայ  
կը համբերէր կոր. ինչիւր որ քեզի հաւատնք ըսին,  
անոր՝ որ քանի անգամ ինչիւր էր ու չէին հաւ-  
տացած. այսինքն զինքը բռնել ուզեր էին, ու ա-  
ռանց օգնականութեան մը ձեռքերնէն խաղսեր  
էր. ըսը տարեր էին զինքը անկէց վար ձգելու,  
ինքը մեջերնէն անցեր դացեր էր. մեանելէն ետքն  
ալ գերեզմանէն յարութիւն առաւ, դարձեալ  
չհաւատացին: Թէ որ աստուծոյ որդի էր, իրենք  
իրեն խելք պիտոր չխտրվեցնէին ինչ պիտոր բա-  
նէր, այլ իրմէն պիտոր խնդրէին որ աչընին բա-  
նայ, ճանչնան զինքը: Իրենք ընդ հակառակն իր  
երկնաւոր Հայրն ալ իրեն հետ կը հայհոյէին՝ ը-  
սելով. Յոյսը աստուծոյ վրայ դրեր է, թող աս-  
տուած զինքը խաղսէ նայինք: Աստուած խաղ-  
սեց զինքը ու փառաւորեց, բայց իրենք ուղեցին  
ծածկելու զաւրձը. կաշառով զնուտներուն ճերանը  
դոցեցին. ուրեմն միտքերնին հաւատ չէր, այլ  
նախատել զինքը, սիրտը կսկըծցնէլ:

ՄԱՍՆ Գ.

Աս ամեն նիւթական ու բարոյական ցաւերուն մէջ Քրիստոս տէրն մեր ինչ ըրաւ. Եւէ էս որդէս խոսել որ ու լի է, եւ որդէս համբ՛ որ ու բոնոյս զբերան իւր: Բերանը չլքացաւ, բայց միայն աղօթք ընելու՝ իր դահիճներուն ու զինքը հայհոյօղիներուն համար. Եւ Յիսուս ասէ. Հայր, Խոզ դոցա, զի ու գիպէն զինչ գործէն: Աս աղօթքին մէջը մեծ բաներ կան գիտելու. Նախ որ Քրիստոս իրաւ՝ կատէ զմեղքը, ու մեղքը վերցընելու համար էր խաչին վրայ կեանքը տալը, բայց զմեղաւորը կը սիրէ, ու զինքը փրկելու համար էր որ կը մեռնէր:

Երկրորդ որ աս աղօթքը հոն տեղի եղօղներուն համար միայն չէր, այլ ամենուն. վասն զի ամենուն մեղքերն ալ՝ պատճառ են իրեն մահուանը, ամենուս մեղքերուն համար ալ՝ յանձն առաւ Քրիստոս խաչին վրայ մեռնիլը:

Երրորդ որ Քրիստոս զինքը խաչօղներուն մեղքը թէթեցընէլ կը ջանայ, իրենց տգիտութիւնը պատճառ բերելով. Զի ու գիպէն զինչ գործէն: Ամեն մեղք չարութենէ ու տգիտութենէ առաջ կուգայ. Քրիստոս տէրն մեր իր թշնամեաց չարութիւնը մէկդի զնելով, տգիտութիւննին միայն կը յիշէ: Իրաւ որ մեղք գործելու աստենիս կուրցած ենք կիրքով, չենք ճանչնար ըրած մեղքերունու ծանրութիւնը, բայց նախ որ մեր տգիտութիւնը կամաւոր է, մեր կիրքերը զսպելու որ ըլլանք՝ զմեզ չեն կուրացընէր. մէյմըն ալ որ կիրքերնուս մէջն ալ՝ խղճմտանքնիս այնչափ կիմաւցընէ մեզի ըրածնիս գէշ ըլլալն որ չենք կրնար արդարանալ:

Չորրորդ որ Քրիստոս աս աղօթքովը եղբայր սիրութեան օրինակ կուտայ մեզի, ու գործքով կը հաստատէ ինչ որ խօսքով օրինադրեց. Սիրեցէ՛ զմեծամիս յէր, եւ աղջն աբարէ՛ ՚ի վերայ այնոցի՛ որք լինին զչէղ եւ հաւածէն: Նմանիկը իրեն, ներենք ուրիշներուն մեզի ըրած անիրաւութեանը, որպէս զի ինքն ալ մեզի ներէ. անմեղադիր ընենք իրենց տգիտութիւնը՝ մաքերնին վրանին չըլլալը, ըրածնին չիմանալը, վերջապէս ջանանք թէթեցընելու որչափ որ կարելի է՝ իրենց յանցանքը. ասանկով որչափ ալ իրենց անիրաւութիւնը կ'ատենք, բայց զներենք կը սիրենք՝ որոնց համար Քրիստոս արիւնը թափեց, որոնց համար երկնաւոր Հօրմէն թաղութիւն խնդրեց:

ԱՂՕԹՔ

Յիսուս փրկիչ իմ, խաչին վրայ մեղաւորներուն համար ըրած աղօթքիդ բոլոր զօրութիւնը բանեցուր իմ վրաս ալ, որպէս զի երկնաւոր Հայրդ՝ իմ մեղքերուս ալ թողութիւն տայ, ինչպէս բարի աւագակին, ինչպէս հարկերապետին, ինչպէս հոն դարձի եկող ամեն մեղաւորներուն: Խաչն զվայքաշած չարչարանացդ համար ըլլայ, մի թողուր որ մէյմըն ալ քեզի դէմ՝ մեղանչեմ. դուն զիս մինչև ՚ի մահ սիրեցիր, շնորք տուր ինձի՛ որ ես ալ զքեզ մինչև իմ մահս սիրեմ. քու խաչդ ըլլայ իմ սպաւէնս, սատանային փորձութիւններէն հոն փախչիմ:

Ապաւինեցաք ՚ի խաչ քո, արարիչ յաւիտենից, որ ետուր մեզ պահապան յաղթող ընդդէմ:

Թշնամունքն • աղաչեմք սովաւ փրկիչ սլահայանեա  
զանձինս մեր :

Ի յուրբաթու ժամ երրորդին  
Բեւեռեցար տերդ ի խաչին,  
Լուծեր զյանցանս նախաստեղծին  
Եւ կապեցեր ըղձընամին.  
Ձիս ամրացո ընդ հովանեաւ  
Կենդանարար քո նըշանին,  
Եւ ի ծագելն յարեւելց  
Լուսաւորեա լուսով նորին :

## Մ Տ Ս . Ծ Ա . Կ Ա Ն Լ Բ .

Մտայր սառուածածնայ խաչին տակը  
կեկայուն վրայ :

## Մ Ա Ս Ն Ա .

Սուրբ աստուածածինը ցաւակցութեան հա-  
մար միայն չէր՝ որ ինչուան Քրիստոսի խաչելու-  
թեան անող գնաց, ու խաչին տակը կեցաւ . իր  
հաւատքը զինքը հոն բերեր էր՝ նաև գործակից  
ըլլալու աստուածային մեծ խորհրդոյն կատար-  
մանը : Երկրիս վրայ ինքը միայն գիտէր աս գաղտ-  
նիքը . գիտէր որ իր որդին երկրի վրայ հայր չու-  
նէր, որդի աստուծոյ էր : Գարբիէլ հրեշտակ ի-  
րեն աւետիս բերած ասեմէն ըսած էր՝ որ իր որ-  
դին աշխարհ փրկէր պիտոր, մարդկանց մեղքերը  
քաւելով, ու յաւիտեան թագաւորէր պիտոր :  
Սիմէոն ծերունին ալ քառասնօրեայ գալտեան  
օրը ըսեր էր իրեն՝ որ իր որդին նշան հակառա-  
կութեան պիտոր ըլլար, ու իր սիրտն ալ ցաւոց  
սուր մը պիտոր մանէր : Իր որդին ալ շատ ան-  
գամ ըսած էր՝ որ Հրեաներուն ձեռքը պիտոր  
մասնուէր, պիտոր նախատուէր, պիտոր խա-  
չուէր, պիտոր մեանէր, ու իրեք օրէն յարութիւն

պիտոր սունէր: Սուրբ աստուածածինը աս ամեն բան միտքը պահած էր, ու կը մտածէր անոնց վրայ, կը բարդատէր տեսածներուն հետ, ու անոնց կատարուելը կը տեսնէր. Եւ Մարիամ զամենայն զբանս զայսոսիկ պահէր, և խելամառ լինէր ՚ի սրբի իւրոմ: Քրիստոսի քաջածներն որ ուրիշներուն հաւատքը կը մթընցնէր ու կը տկարացնէր, իրենը կը լուսաւորէր ու կը հաստատէր. ինքն էր աւանդապահ սուրբ հաւատոց. ինչ որ ետքը սուրբ աւաքեալները քարոզեցին, ինչ որ սուրբ մարտիրոսները իրենց արունովը կնքեցին, բոլորն ալ ծանօթ էին իրեն. իր հաւատքը կատարեալ ու պայծառ էր:

Ոչ մայր մը, և ոչ որ, սուրբ աստուածածնայ քաջած ցաւոցը պէս ցաւ քաշէր էր, և ոչ քաշէ պիտոր: Ի՞նչ զգաց արդեօք, երբոր իր միածին որդին անանկ վիրալից դահլիճներուն ձեռքը տեսաւ, երբոր զինքը խաչին վրայ դամբնուէն հարուածները լսեց, երբոր խաչին վրայ զինքը կատուած տեսաւ, երբոր դահլիճներուն զինուորնէրուն դպիրներուն ու քահանայապետներուն ըրած նախատինքները լսեց, երբոր զինքը երկու աւաղակներու մէջ՝ երբորդ աւաղակի մը կարգը գրուած տեսաւ: Ո՛վ մայր ցաւազին, ի՞նչ հաստատուն ու անասանելի հաւատք էր քու հաւատքդ, որով հոն խաչին տակը դիմացար կեցար:

### Մ Ա Ս Ն Բ .

Մարիամ խաչին տակը կեցած՝ սուրբ եկեղեցին գեղն զՔրիստոս աստուածոյ կը նուիրէր, ինչ պէս որ եկեղեցին կը նուիրէ ու նուիրէ պիտոր ինչուան աշխրբիս ետքը. իր որդւոյն հետ զինքն ալ կը

նուիրէր՝ մասնակից ըլլալով անոր ցաւոցը ու նախատանացը, ու նոյն դիտաւորութիւնները ունենալով ինչ որ Քրիստոս ունէր՝ զինքը իր երկնաւոր Հօրը նուիրելու ատեն. այսինքն աստուծոյ անարգանացը հատուցում ընել, զմարդիկ աստանային դերութենէն ազատել ու արգարութեան և անմահութեան վիճակը դարձնել: Ինչպէս իր որդւոյն քաջած ցաւերը ինքն ալ սրտին մէջը կը քաշէր, ասանկ ալ անոր հնազանդութեանը, խոնարհութեանը, ու մեր վրայ ունեցած անհուն սիրոյն մասնակից էր. անոնց հետ եւեջրնելով իր որդւոյն վրայ ունեցած բնական ու դերբնական սէրը, ու իր և աշխրբիս փրկչին համար ունեցած երախտագիտութիւնը:

Պատարագ տեսնալու ատեննիս մտքերնիս բերեց սուրբ աստուածածինը, ու իր աս ամեն ըզգացմունքներուն սրտանց մասնակից ըլլանք, իբրև թէ իրեն հետ խաչին տակը կեցած ըլլայինք, ինչպէս Յոհաննէս աւետարանիչը՝ Մարիամ մագդաղեանցին ու Մարիամ Աղէսպան: Երոյն սուրբ պատարագն է որ ամեն օր սուրբ սեղանին վրայ կը կատարուի. ու նոյն շնորբին մէնք ալ արժանի կըլլանք, որուն արժանի եղաւ Յոհաննէս աւետարանիչը՝ հոն սուրբ աստուածածնայ քովը կենալով:

### Մ Ա Ս Ն Գ .

Քրիստոս խաչին վրայէն զՅոհաննէս իրեն տեղը որդի ըրաւ սուրբ աստուածածնայ՝ սուրբ աստուածածնին ալ Յոհաննէս աւետարանչին մայր ըրաւ: Յոհաննէսի համար միայն չէր աս Քրիստոսի ըրածը, այլ նաև ամեն հաւատացեալոց. թե՛րև աս խորհրդով սուրբ աւետարանը Յոհաննէս

եին անունը չի տար հոն, այլ կրօւէ. Յիսուս իբրև ե-  
րես զմայրն եւ զաւակերսն զոր սիրէր՝ ոչ իայր յօր, առէ  
ցմայրն. Այն դուստր, ահա որդի քո, ապա առէ ցաւակերսն.  
Ահա մայր քո: Ուրեմն զմեզ ալ որ Քրիստոսի աշա-  
կերտներն ենք, ու մեր վրայ ալ այնչափ սէր ունին՝  
որ արիւնը մեզն համար թափեց, զմեզ ալ Յօ-  
հաննէս աւետարանչին հետ որդի ըրաւ սուրբ  
աստուածածնայ, ու սուրբ աստուածածինն ալ  
մեզն մայր: Մենք ամենքս Քրիստոսի անդամներն  
ենք, իրեն հետ մէկ մարմինմընենք, ինքը մեր  
գլուխն է. ուրեմն մենք ալ սուրբ աստուածած-  
նայ զաւակներն ենք, աս տարբերութեամբ միայն  
որ՝ Քրիստոս իր բուն որդին է, մենք իրեն որդե-  
գիրներն ենք:

Թէ որ Քրիստոս սուրբ աստուածածնայ միայն  
ալ ըսած ըլլար՝ Ահա որդի քո, Յօհաննէսը սուրբ  
աստուածածնայ որդի տալով՝ սուրբ աստուա-  
ծածինն ալ անոր մայր տուած կը ըլլար. բայց այս  
չափը հերիք չիսեպելով, Յօհաննէսին ալ զայդ ը-  
սաւ. Ահա մայր քո. որպէս զի մենք ալ սուրբ աս-  
տուածածինը մօր սեղ զնենք, մօր պէս սիրենք  
ու մեծարենք զինքը: Ի՞նչ մեծ չնորք. ասով կը  
համարձակինք, ու կրնանք մենք զինքը մեզի մայր  
կոչել, ու զմեզ իր զաւակները սեպել. ու թէ որ  
մենք մեր որդիական պարտքերը ընենք իրեն, ու  
ինչպէս զաւակ մը վստահութիւն կ'ունենայ իր  
մօրը՝ ասանկ ալ մենք իրեն ապաւինելու որ ըլ-  
լանք, ինքն ալ մեզն իր մայրութիւնը կը ցուցնէ՝  
պաշտպանելով զմեզ հոգեւոր ու մարմնաւոր վը-  
տանդներու մէջ, մանաւանդ մեռնելու ատեննիս:

Ա. Դ. Օ Թ. Բ

Սուրբ աստուածածին, քու քաջած ցաւոցդ  
համար ըլլայ, Քրիստոսի սիրոյն համար ըլլայ, իր

խաչին տակը կեցած՝ հոգին աւանդելը տեսնալուդ  
համար ըլլայ, երեսէ մի ձգէր զիս իմ մեղացս  
համար: Մտածէ որ միածին որդիդ զիս ալ քեզն  
որդի ըրաւ, ու խաչին վրայէն կտակ ընելու պէս՝  
զիս քու մայրենի խնամոցդ յանձնեց. ցուցուր  
ինծի ալ քու մայրութիւնդ, բոլոր յոյսս քու  
պաշտպանութեանդ վրայ դրած եմ. մի թողուր  
որ սիրելի որդւոյդ ինծի համար քաջած չարչա-  
րանքները, ու քու կին ինծի համար քաջած ցա-  
ւերդ պարապը հանեմ. ապաստան մեղաւորաց,  
մխիթարիչ վշտացելոց, բարեխօսեան վասն մեր մե-  
ղաւորացս այժմ՝ և ՚ի ժամուռ մահուան մերոյ:

Յօղէր արտօսըր ցաւազին  
Մայր տեառն որ կայր մերձ առ խաչին,  
Յորժամ ըսէր ըզմարաւին  
Բարբառելոյ իւր միածնին.  
Ետուն քացախ՝ խառնեալ լեղի  
Այնմ՝ որ բըղխեաց զեա յԱգնի,  
Եւ ՚ի վիմէն վըտակ բարի  
Արբոյց տոհմին դառնացողի:

### ՄՏԱ.ԾԱ.ԿԱ.Ն ԼԳ.

Քրիստոսի խաչիև վրայ սնեցոցած կորի  
իրեք ժամը :

### ՄԱՍՆ Ա.

Քրիստոս տէրն մեր իրեք ժամ խաչին վրայ  
չարչարանք ու նախատինք կրելով անցրնելէն ետ-  
քը, ժամը վեցին երկինք մթնեցաւ՝ արևը խաւա-  
րելով : Աս խաւարումը բնական կերպով չէր կըր-  
նար ըլլալ, վասն զի զատիկը լուսնին լամանը կընէին  
Հրեաները, ան ատեն արևու խաւարում չէկրնար  
ըլլալ : Ուրեմն չէ թէ լուսնը արևին ու աշխրբիս  
մէջ իյնալով՝ անոր լոյսը արգելեց, հապա բուն ա-  
րևը իր լոյսը ծածկեց, հետևաբար լուսնին ալ մը-  
թնեցաւ . ու Երուսաղէմի կողմերը միայն չէրաւ  
մթութիւնը ինչպէս բնական խաւարման ատեն  
կըլլայ, այլ բոլոր աշխրբիս ամեն կողմն ալ մթնե-  
ցաւ . Խաւար եւն ՚ի վերայ ամենայն երկրէ . անանկ որ՝  
մարդիկ իրար հաղիւ կը տեսնային, թէ և Երուսա-  
ղէմ կէս օր էր : Բայց Հրեաներուն միտքն ու սիր-  
տը անանկ թանձրագոյն խաւար մը պատած էր,  
որ այն սոսկալի հրաշքը չեճանչնալով իրենց յա-  
մառութեանը մէջ կեցան, ու անօրէնութիւննին  
զլուխ ատրին :

Աս խաւարը ուրիշ խորհուրդներէն ՚ի դաս՝  
կը նշանակէ նաև կուսպաշտութեան մութը, ուս-  
կից հէթանոսները Քրիստոսի մահուամբը խալը-  
սեցան : Իրենց մէջը դիտողներ ալ եղան, ու գրե-  
ցին ինչուան աստղեր ալ տեսնալնին ան մթութեան  
ատենը : Աս խաւարումը հրաշքով ըլլալուն մէկ  
նշանն ալ ան էր որ՝ չէ թէ կամաց կամաց մթնե-  
ցաւ, ու ետքը քիչ քիչ ալ մութը փարատեցաւ,  
այլ մթննայն ալ լուսաւորինն ալ մէկէն երաւ-  
անանկ որ սամիկն ալ իմացաւ կարգէ գուրս խա-  
ւարում ըլլալը, ու ան ատենէն տրամագրութիւն  
ոճեցան իրենց ապագայ դարձին : Մէկ դիէն կար-  
ծես որ անբան արարածներն ալ իրենց տրամու-  
թիւնը ցուցուցին Քրիստոսի չարչարանացը հա-  
մար, մեկալ կողմանէ ալ արարիչն արարածոց իր  
մահը իմացուց հրաշքով մը՝ որ աշխրբիս ամեն դիւն՝  
ամեն մարդ կը տեսնէր : Սուրբ Նիսնեսիոս արիւ-  
պագացին ալ ան ատենէն տրամագրեցաւ Քրիս-  
տոսի սուրբ հաւատքը ընդունելու . վասն զի այն  
կարգէ գուրս խաւարումը տեսած ատենը ըսաւ .  
Կամ աշխրբիս վերջը հասեր է, և կամ աշխրբիս  
ստեղծօղը կը մեանի կոր : Հրեաները Քրիստոսէ  
խնդրէր էին՝ նաև յերկից ցուցանել . ահա իրենց նը-  
շան մը՝ որ անկէց մեծը չեկրնար ըլլալ . անանկ  
նշան մը՝ որ Չաքարիա մարդարէն առաջուց ըսած  
էր . Օրն այն յայտնի դեատն՝ ու դիւն ինչ և ու գիշեր,  
և ընդ երէկ եւ իջի լոյս : Յովէլ մարդարէն ալ ըսած  
էր . Սրբգաթն դարձի ՚ի խաւար, և լուսնի յարիւն : Թէ  
որ Հրեաները Քրիստոսի իրենց սուրբ խրատը  
ընէին, ու բննէին զգիրս, սատուած ալ իրենց  
լոյս կուտար . բայց իրենք մութի մէջ մնացին,  
սատուած իր լոյսը հէթանոսներուն տուաւ :

### Մ Ս Ս Ն Բ.

Ինչուան ինը քէնց խաւարը. իննին առենները Քրիստոս մեզի իմացնելու համար որ ինչ կը քաշէր կոր, ինչպէս իր երկնաւոր Հայրը մեր մեղացը համար իրեն չէր խնայեր կոր, Գաւիթ մարդարէին բերնովը առաջուց ըսած խօսքը կրկնեց. Աստուած ի՞մ, սպասած ի՞մ, ընդէր Բողոք դիտ: Աս բնական զգացումը՝ որ մարդս վշտաց մէջ կը զգայ՝ երբոր աստուած անանկ կուզէ որ այն վշտէն չիխալուի, Քրիստոս աչրն մեր կամօք կրեց, որպէս զի մենք մեր վշտացը մէջ ուժ առնունք՝ աստուծոյ սուրբ կամացը զմեզ համակերպելու:

Քրիստոս աչրն մեր Գողգոթա հասած առենը՝ դեռ չիխալուած, Հրեաները իրեն լեզիով խառնած գինի տուէր էին խմելու, ու սաղմոսին խօսքին կէսը կատարուէր էր. Եբրայի ինչ լեզի. Կը մնար մէկալ կէսն որ կըսէ. Ես ի Ծարաւ ի՞մ արբողին ինչ քացախ: Քրիստոս աչրն մեր անխօսքն ալ կատարելու համար, ինչպէս սուրբ աւետարանը կըսէ, Ծարաւ ի՞մ ըսաւ: Ի՞նչ որ ըսած չըլլար, չէր իմացուէր ծարաւ ալ քաշէր: Զինուորները աւնոր, որ աշխրջիս ալ քերտները ու ախանակիս ջուրերը ստեղծէր էր, ջուրի անդ լեզիի հետ խառնած քացախ խմցուցին՝ սպրունգով եղէզի մը ծայր մշտիկի մէջ դրած բերնին մօտեցնելով: Մշտիկը՝ որ ծոթընի ճիւղերէ աւելի պէս կապած փուռն մըն էր՝ ամեն քաւչական զոհերու մէջ կը դործածուէր, օրէնքն ալ ասանկ կըսէր: Աստուծոյ հաւանքի զգացի թախաւաւ յարեան, և սրբիւնքի: Մովսէս սկսաւ ընելու աս արարողութիւնը առջի զատկի տօնին, օրինակ Քրիստոսի. Քրիստոս ալ մեր

մեզըը քաւելու համար՝ մշտիկով խմեց քացախը. ուրեմն աս բանս մտածելով՝ Գաւիթ մարդարէին հետ ըսենք մեր վրիչին. Յօղէս յիս յապաւ, և սուրբ էրէն: Միանգամայն մտածենք՝ որ Քրիստոս կէրակոյ տեղ լեզի ճաշակեց, ու ջուրի անդ քացախ խմեց. մենք որ կերակուրի անհամուծեանը համար արանջանք, կամ որկրամօլութեամբ որ ուտելու խմելու չափը անցնենք, ինչպէս քրիստոնեայ ու Քրիստոսի հետեող կրնանք սեպուել:

### Մ Ս Ս Ն Գ.

Քրիստոս աս չարչարանքն ալ քաշելէն ետքը իր վերջնութիւն խօսքը ըսաւ. Ամենայն ինչ կապուեալ է: Երեւակայէնք Քրիստոս խաչին վրայ, որ ինքը ըլլալով տէր և անօրէն ժամանակաց և զիպուածոց, ու միտքը բերելով ինչ որ մարդարէները Հոգուով սրբով իր չարչարանաց վրայ ըսեր էին, կը տեսնայ որ ամենքն ալ կատարուեցան, ու կըսէ. Ամենայն ինչ կապուեալ է: Ասկէց վտեմ, ասկէց աստուածային, ինչ կրնայ ըլլալ՝ աս է Քրիստոսի ճիւղաբար իւրախութեամբ զմահ յանին առնուլը, աս է կամարբողութեամբ գալը՝ ի չարչարանս:

Արդեօք մենք ալ մեռնելու ատեննիս կարենանք պիտոր ըսել որ կատարեցինք ինչ որ աստուած մեզի համար պատրաստէր էր, ինչ որ մեր պարտքն էր, ինչ որ աստուած կուզէր որ ընենք: Երանի՛ մեզի, թէ որ կարենանք Պօղոս առաքելոյն պէս ըսել ան տաւնը. Զգործան կապուեալի, զհասարակ պահեցի, այսուհետեւ կայ և ինչ ինչ արարութեան պատիւ: Աս վտաս հուծիւնը առ աստուած Քրիստոսի արդեամբըը ան առենը ունենալու համար, հիմայ է ատենը ջանարու:

Ա. Ղ. Օ Թ Ք

### Մ Տ Ս. Ծ Ս. Կ Ա. Ն Լ Գ.

Քրիստոս փրկիչ իմ, քու աս խօսքիդ համար  
 ըլլայ, ինձի շնորք սուր որ մեռնելու ատենս կա-  
 րենամ ըսել որ քու ամեն կամքդ իմ վրաս կա-  
 տարուած ըլլայ, կարենամ ըսել աս մտքով Ամե-  
 նայն ինչ կարգէաւ է: Կարենամ ըսել որ ջանացի  
 քեզի ծառայել, որջափ ալ մեղաւոր եմ՝ մեղքե-  
 րուս վրայ զըջացած եմ, ու քու դրած խորհուրդ-  
 ներդ ընդունելով՝ ի ձեռն սուրբ չարչարանացդ  
 ու պատուական արեանդ մեղքերուս թողութիւն  
 ընդուներ եմ, հիմայ ինձի ուրիշ բան չեմնար ը-  
 նելու՝ բայց իմ մահս քու հիմնիդ հետ երկնաւոր  
 Հօրդ նուիրել, ու յօժարութեամբ մեռնիլ: Ա՛հ,  
 ի՛նչ չաժեր որ ընեմ աս կերպով մեռնելու հա-  
 մար: Յիտուս փրկիչ իմ, դուն զօրացուր զիս քու  
 չարչարանացդ մասնակից ըլլալու, որ մահուանս  
 ատենը աս միտքս արանքը ունենամ:

Սիրտ իմ առ քեզ աղաղակե,  
 Բանդ որ ընդ Հօր ի սկզբանէ,  
 Որ կամաւոր վազն մարդկան  
 Կրեցեր մարմնով զայս ամենայն,  
 Ինձ ըսելի արա ըզձայն  
 Յարբայութեանըդ քո կողման,  
 Ընդ ժողովոց անդ անդրանկաց  
 Օրհնել ըզքեզ միշտ յաւիտեան:

Քրիստոսի խաչին վրայ ըսած ետքի խօսքը ու  
 սուրբ հոգին աշակերտ:

### Մ Ա. Ս Ն Ա.

Քրիստոս տէրն մեր վեց ժամ խաչին վրայ  
 տանջուելէն ետքը՝ ահաւոր ձայնով մը Հայր ի  
 Յետոս քո առնդեմ դնով ի՛մ ըսաւ, ու հողին աւան-  
 դեց: Աս կերպ մեռնելը՝ բնական կերպ չէ, ըսել է  
 որ երբոր ուղեց՝ ան ատենը տիրաբար մեռաւ: Իր  
 քաշածները անանկ տանջանքներ էին՝ որ բնակա-  
 նաբար մարդկային բնութիւնը չէր կրնար զիմա-  
 նալ, թէ որ ինքը իր աստուածային զօրութեամբը  
 իր կեանքը պահած չըլլար, ինչպէս որ ինքը առա-  
 ջուց ըսած էր. Ինչպէս որ ինքն ունիմ դնել զիս, եւ ին-  
 խանութիւն ունիմ առնուլ զիս. ու ոչ հանել զիս յինչն,  
 այլ էս դնել զիս անչաճի իմով: Ուղեւոր որ ըլլար, մէկ  
 վայրկենի մէջ կրնար ողջ առողջ ըլլալ ինչպէս գե-  
 րեզմանէն յարութիւն առաւ, խաչին ինչնալ, ու  
 թշնամեաց մեջէն անցնիլ երթալ: Աս բաներս չը-  
 րաւ, բայց աղաղակելովը ցուցուց որ կրնար ը-  
 նել. գլուխը խնամարհեցուց, ու մեռաւ, որպէս  
 զի զմեզ յաւիտեանական մահուանէն աղտակ. Ես.



հասած հմահ կռիւնց. մեռաւ որ մահուն խայթոցը բթացընէ, որ է մեղքը. երկինքը բացաւ մեզի, ու Հայրն երկնաւոր իշխանութիւն տուաւ իրեն դաւ տեղաւ զիկեղանիս և զմեռեալս, արդարներուն յաւիտենական երանութիւն տալու, ու մեղաւորներուն պատիժ յաւիտենական:

ՄԱՍՆ Բ.

Քրիստոս մեռաւ՝ որ մեզի անմահութեան իրաւունք տայ. ամեն սուրբ խորհուրդները Քրիստոսի մահւնէն ունին իրենց զօրութիւնը, թէ մեզի շնորք տալու, և թէ ունեցած շնորքն իս աւելցընելու: Քրիստոսի մահը՝ մերկնը փոխեց բոլորովին. առաջ սոսկ մեր մեղաց պատիժն էր մահը, հիմայ Յիսուսին մահուանը հետ միանալով՝ եղաւ կամաւոր զոհ մը՝ որ կը նուիրենք աստուծոյ: Առաջ թշուառ օր մըն էր մեզի մահուան օրը, հիմայ անցք մըն է թշուառութենէ երանութիւն, 'ի մահուանէ 'ի կեանս. ու որչափ որ հիմայ ալ գեռ ցաւ ու սոսկում՝ բերէ մեզի մեռնիլը, բայց Քրիստոսի մահը զմեզ կը զօրացընէ, սիրտ կուտայ մեզի գլուխնիս ծռելու, ու յօժարութեամբ աստուծոյ տալու մեր հոգին, մտածելով որ մեր փրկիչը մեզի համար մեռաւ՝ լէալ հնազանդ մահու լսի, և մահու խալի:

Քրիստոս անէրն մեր իր մեռնելովը մեր փրկութեան խորհուրդը ընդունցածին պէս, մէկէն հրաշալի կերպով մը արեւը նորէն ծագեց, ու տաճարին վարագոյրը՝ որ սրբութիւն սրբութեանցը կը բաժնէր, ու քահանայապետը միայն տարին անգամ մը հոն կը մտնէր, վերէն 'ի վար պատուեցաւ: Արիկայ նախ կը նշանակէր՝ որ ալ անկէ ետ-

քը ընդունելի չէին աստուծոյ հոն եղած զոհերը, Քրիստոսի պատարագը միայն ընդունելի էր: Անոր համար աստուած Սմովս խորգարէին բերնովը՝ արեւուն կէսօրուան ատեն մաւարեղ ըսելէն ետքը, մէկէն կը յարէ տօներուն զագրելը: Յասոր յայնիկ հոցէ արեգակն 'ի Քլբբէի, և խաւրբոցի յերեւելոյ 'ի գոռէ, և դարձոցի 'ի սոռոճ գոռս յեր: Երկրորդ կը նշանակէր՝ որ հին օրինաց վարագոյրը վերջաւ, այն օրէնքներուն նշանակութիւնը յայանի եղաւ, օրինակին աւելը յաջորդեց ճմարտութիւնը: Երրորդ՝ կը նշանակէր որ երկինքն գուռը մեզի բացուեցաւ, որ բուն սրբութիւն սրբութեանցն է, որն որ այնչափ դարերէ 'ի վեր գոց էր:

ՄԱՍՆ Գ.

Քրիստոսի մահուան ատենը շարժ ալ եղաւ, ու ժայռերը պատուեցան, Հրէից խտասարտութիւնը յանդիմանելով որ այնչափ սոսկալն հրաշքները ատենելէն ետքը՝ դեռ սիրտերնին չէր շարժեր. անդարձ կեցեր էին քարերէն աւելի խիտ: Գերեզմաններ ալ բացուեցան, շատ սուրբրու մարմիններ յարութիւն ագին, ու Քրիստոսի յարութիւնէն ետքը՝ Երուսաղէմի մէջ շատերուն ելուեցան: Վասն զի Քրիստոսի հոգին իջաւ մէկէն 'ի Լիւսիոս, ուր որ ամեն արգարաց հոգիները Ագամէն սկսեալ՝ կը սպասէին իրեն դալատեանը, ու յաւիտենական մահուան դէմ՝ իր ըրած յաղթութեանը առջի պառագը ցուցընելու համար՝ չէ թէ միայն ստատանային գրութիւնէն ամենքը խաղսեց որ իրեն հետ արքայութիւն երթան, այլ ուզեց ալ որ անոնցմէ գլխաւորները հոգեով ու մարմնով իրեն հետ երկինք ելեն. անոր համար ան ատենէն յարութիւն անել տուաւ իրենց մարմնոյն:

Անոնք էին որ մինչև 'ի համբարձում գեռ երկրիս վրայ ըլլալով՝ շատերուն երեցան Երուսաղէմ, ինչպէս իրենց փրկիչը կերենար իր առաքելոյն ու աշակերտացը: Ասովը չէ թէ միայն Քրիստոսի հաւատացող աւելի հաստատութիւն տուին, այլ մեզի ալ հաստատուն յոյ՛ որ մենք ալ իրենց պէս յարուժիւն պիտոր աւնենիք: Երևակայենք չիմայ Լիմպոսի մէջ վնջահար տարւոնն 'ի վեր գերութեան մէջ սպասող հոգիներուն ուրախութիւնը՝ երբոր տեսան իրենց ազատարարը, մտածենք Ադամայ ու Եւայի ցնծութիւնն՝ որ այնչափ անթիւ արգարոց հոգիները իրենց պատճառաւ այն գերութեանը մէջ տեսնալով, բոլոր յոյսերնին Քրիստոսի վրայ գրած էին՝ թէ իրենք և թէ անոնք խաղտեղու: Որո՛ւմ սպասէին արգելաւի՛ 'ի մէլ սասէր բանիին ապաւեցողիլ յստոյ գալաքեան ասպոսած որդոյն: Ուստի երբոր Քրիստոս հասաւ, ու Լիմպոսին դռները կտորրաւելով ներս մտաւ՝ զերենք խաղտեղու, ինչ ուրախութիւն զգացին, ինչ սէր, ինչ գորով, ինչ շնորհակալութիւն՝ որ Քրիստոս իրենց համար այնչափ բան քաշէց, ինչ յեղափոխութիւն վիճակի: Հերթը է մտածելը միայն որ զիրենք սպաննող սատանային տերութեանէն՝ Քրիստոսի տերութիւնը անցան, որ իրենց համար իր արիւնը թափեր էր: Մտածենք սատանային արամուժիւնն ու խայտառակիլն ալ, որ այնչափ Քրիստոսի մահուանը ետեէն իյնալէն ետքը, այնչափ Հրեաները գրգռելէն ետքը՝ որ զՔրիստոս չարչարեն ու սպաննեն, անոր չարչարանօքը ու մահուանքը իր իշխանութիւնն ալ՝ իր գերիներն ալ կորսնցնուց, ու ինքը գերի եղաւ Քրիստոսի: Ինչպէս որ կերգենք. Մա ինքնիշխանութեամբ բաղնեաց 'ի վերայ խաւի, կայեաց զիշխանն մեղասէր, զմահու գերեւանն Սրբամայ՝ ինսագործեաց 'ի իննս անմահ:

Ա. Գ. Օ Թ. Գ.

Յիսուս փրկիչ իմ, իմ սիրաս ալ կը ցընծայ քու յողթանակիր վրայ, ես ալ կը գորովիմ զմեզ փրկելու համար քաշած չարչարանքներուդ վրայ, ես ալ շնորհակալ կը ըլլամ ինծի ցուցուցած սիրոյդ համար: Քու մահդ հաւատացելոց սրտին մէջ երկու իրարու ներհակ զգացմունք կը ներգործեն. մեկգիւն սրտերնին կը կըսըրաի քու իրենց համար խաչնի վրայ քաշածներդ մտածելով, մեկալ գիւն ալ կ'ուրախանան քու փառքդ՝ քու յողթանակդ՝ ու իրենց փրկութիւնը մտածելով: Իմ անզգայ սիրաս ալ կը զգայ աս արամախառն ուրախութիւնը. բայց ասով միայն գոհ չէ. Լիմպոսին հոգիներուն սէր կը բաղձայ, կը յուսայ, ու կը սպասէ իր ազատարարը օր մը տեսնալու: Փրկիչ իմ յիսուս, մի զրկեր զիս աս երջանկութեանէն, որ ինծի համար լարաբեցար և մեռար և յարեար:

Որ լուծեր զմահ և վերածեր զնշնեցեալն 'ի դժոխոց անշնչուժեամբն քո 'ի վերայ խաչնի, և իջանելով քո 'ի գերեզման թագաւոր անմահ, օրհնեմք զքեզ աստուած հարցնի մերոց:

# ՄՏԱԾԱԿԱՆ ԼԵ.

Քրիստոսի ակախաց կողմն վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Քրիստոսի խաչելութեան օրը ուրբաթ էր, հեռուեալ օրը Հրեաներուն ամի էր, ու իրենց զատկէն անմիջապէս ետևի շաբաթ օրը ըլլալով մեծ ամի կրնէին: Քահանայապետներն որ թշուղի քամէին և զուղար իսմէին, իրենց Մեսիան սպաննէլէն ետքը՝ խղճմանը ըրին որ մեռած մարմինները, թէ իրեն և թէ հետը խաչուողներունը, շաբաթ օրը խաչի վրայ անթաղ չիման. ուստի հրաման առին Պիղատակէն որ ծնկերնին կտաքտեն՝ որպէս զի շուտով մեռնին, ու մարմիննին առաջուց թաղուի: Չինուորները երկուքին ծնկերները կտաքտեցին. բայց անմալով որ Քրիստոս աւերն մեր արդէն մեռած էր, անօրը չկտաքտեցին. միայն զինուորին մէկը նիզակով խոցեց Յիսուսին կողմ, ու արիւն և ջուր ելուց կողէն: Աստուած հրամամեր էր՝ որ իսրայէլացիք զատկական գառին ոսկերքը չիկտաքտեն, որն որ ճշմարիտ գառինն աստուծոյ օրինակն էր. Ոսկի քի բեխնէ՞ք + ի նմանէ: Թէ որ զինուորը Յիսուսին մեռած ըլլալուն վրայ աս.

բակուսէր, իրեն արուած հրամանը պիտոր ընէր, ծնկերները կտաքտէր. Թէ որ մեռած ըլլալուն վրայ չիտարակուսեցաւ, ինչո՞ւ Յիսուսին կողմ խոցեց. ինչո՞ւ ուրիշները իր ըրածին դէմ չեկեցան: — Վասն զի աստուած ասանկ գրեր էր որ մարդիկ իրենց չարութիւնը ընելու ասեն, ինչ որ գրուած էր անկէց դուրս բան չընեն:

Մարգուս սիրաը՝ սիրոյ ակթուն է. Քրիստոս աւերն մեր ուղէց որ սիրաը բացուի, ու ետքի կաթիլը իր արեանը անկէց կաթիլ է, ու անով մեր սիրաը շարժէ՝ զինքը սիրելու: Ուղէց որ ինչպէս Եւա Ագաճայ կողէն ելաւ, ասանկ ալ սուրբ եկեղեցին՝ որ իր հարսն է, իր կողէն ելլէ՝ իրեն արեամբը լուսացուած սուրբ և անարատ: Ուղէց որ եկեղեցւոյ սուրբ խորհուրդները՝ որ իր սիրոյն պատուներն են, իր սրտէն ելլեն. մանաւանդ միտուութեան ու հաղորդութեան խորհուրդները, որ ջրով ու արեամբ կը կատարուին. միտուութեան ջրովը Հոգւոյն սրբոյ շնորքը կընդունինք՝ կըլանք քրիստոսեայ, ու սուրբ հաղորդութեամբ այսինքն Քրիստոսի սուրբ մարմնովը ու արեամբը կը միանանք Քրիստոսի հետ. Սա է որ էին ջրով և Հոգւով և արեամբ Յիսուս Քրիստոս:

## ՄԱՍՆ Բ.

Յիսուսին սիրաը խոցող զինուորն ալ՝ չիղկուցաւ անոր մարդասիրութենէն. սուրբ աւետարանիչը աս պատմութիւնը ընելէն ետքը՝ Չաքարիս մարդարէին խօսքը կը յարէ. Հայեդիս՝ ի նա՞ յոր խոցեցին: Չինուորը, գարձի եկաւ, ու ետքը Քրիստոսի սիրոյն համար իր արիւնը թափեց: Մենք որ Յիսուսի սրտէն ելած շնորհաց աղբիւրը կը տես.

նենք ու կը վայելենք կոր, որչափ ևս առաւել պէտք է որ զղջանք մեր մեղքերուն վրայ: Թիչ որ ան զինուորը Յիսուսին կողմ խոսեալու համար իրեն նայելով ամ շնորքը ընդունեցաւ, հապա մենք որ իրեն ապաւինելու համար նայինք, այսինքն մտածենք իր սուրբ սրտին սերը, ու մեզի համար քաշածները, ի՞նչ շնորք չենք ընդունիր իրմէ:

Քրիստոս տերն մեր ուղեց որ կողմ բացուի, բայց մեանեւէն ետքը, որպէս զի չեկարծուի որ բանի մեռաւ՝ այն մահացու վէրքը ընդունելով ուղեց ցուցնել՝ որ աղատութեամբ իրեն կամօքը կը մեաներ. չէ թէ ինքը մահուան կը հնազանդէր, այլ մահը իրեն. ինչպէս որ հարկւրապետը ու իր հետը եղող սահապանները աղէկ ճանչցան, ու ըսին. Արդարեւ այս արքայ էր, արքայն սպառնալով որքէ եր աս: Սփեց ի զամ ուղեց ալ որ ինչպէս Ագամայ քուն եղած ատենը հանեց աստուած Եւա անոր կողմն, ասանկ ալ Քրիստոսի քուն եղած՝ այսինքն մեռած ատենը՝ սուրբ եկեղեցին ելէ իր կողմն: Երբորդ խորհուրդն ալ մեանեւէն ետքը կողմ բացուելուն՝ աս էր որ առաջ իր մեռնելովը մեղքը վերնայ, ու ետքը սրբարար շնորհաց աղբիւրը բացուի՝ զմեզ արգարացնելու:

ՄԱՍՆ Գ.

Քրիստոս տերն մեր, իր կողմն վերաց սպիքն ալ մէկալ չորս վէրքերուն, այսինքն ձեռաց ու ոտից սպիքներուն հետ, յարութիւն անեւէն ետքն ալ պահեց. անանկ որ՝ Թոմաս առաքեալը կրնար մատը ներս խոթել, երբոր Քրիստոս զինքը յանդիմանելով ըսաւ. Ի՞նչ դժաբանս քո, եւ մտեալ ի կողմն: Աս ասանկ ըրաւ, չէ թէ անոր համար միայն՝

որ սուրբ առաքեալները անման, ու վկայէն, որ իրաւցնէ ինքն էր յարութիւն անծողը, ու մենք ալ իրենց վկայութեամբ հաւատանք. չէ թէ մեայն՝ որպէս զի ետքի դատատանին օրը բոլոր աշխարհիս ցուցնէ մէքքերը, մեղաւորները ամբողջնէրու. այլ որպէս զի երկինքը ընդ ամէն երկնաւոր Հօրը նստած ցուցնէ անոր միշտ զաննք, ու իր չարչարանացը՝ իր մահուանը յիշատակաւ մեզի համար ողորմութիւն խնդրէ, ինչպէս Պողոս առաքեալը կըսէ. Քրիստոս Յիսուս որ մեռան, եւ է ընդ ամէն սպառնալով, որ եւ բարեխոս իսկ է վասն մեր: Վասն զի ինչպէս որ երկրիս վրայ եղած ատենը աղօթեց մեզի համար, ասանկ ալ հիմայ երկինքը մեզի համար կաղօթէ. ու իր աղօթքովն է որ Հօգին սուրբ ընդունեցան առաքեալները, ու մենք ալ ի ձեռն սուրբ խորհրդոց կընդունինք, ինչպէս որ ինքը խոստացաւ. Եւ ես առաւելօն ղ Հայր, եւ այլ մտիկաբէլ ասցէ թէ: Անոր համար կըսէ նորէն նոյն առաքեալը. Անանկ քահանայապետ մը ունինք երկինքը աստուծոյ քովը՝ որ մշանջեաւոր է ու գեր ի վերոյ քան զԱհարոն. ըսել կուզէ որ իր աղօթքը՝ իր բարեխոսութիւնը՝ միշտ ընդունելի է աստուծոյ, իր նուիրած պատարագին անհուն զօրութեամբ համար. Այնպիսի ունիմք գահանայապետ՝ որ նպաստ ընդ ամէն մեծութեան անտուայն յերկինս. Ո՞ր ու է ինչ ի յեռագործ սրբութեանն Եմուս Քրիստոս յօրինան ճշմարտութեանն, այլ ի բուն իսկ յերկինս, յանդիման ընդ ներեռնացն սպառնալով վասն մեր: Ու Քրիստոսի քահանայութեամբ մշանջեաւորութիւնն ալ՝ սաղմոսին խօսքովը կը հաստատէ. Դու եւ գահանայ յապետեալ ըսի իարգին Սէլեւսեղեկի: Ուրեմն թէ որ Քրիստոս իր գլխով ու մարդասէր սրտով՝ իր երկնաւոր Հօրը առջին միշտ կը բարեխոսէ մեզի համար, ասկեց անելի ի՞նչ վստահութիւն կրնանք ունենալ մեղքերնուս թողութիւն ընդունելու:

ԱՂՕԹԻՔ

### ՄՏԱԾԱԿԱՆ ԼԶ.

Քրիստոսի քաղնակն ու յարարակն վրայ:

### ՄԱՍՆ Ա.

Յիսուս վրկիչ իմ, բոլոր յոյսս՝ ամեն վատահոգութիւնս քու վրայդ դրած եմ, քու վերջերուդ հապաւնիմ. ամեն երկրաւոր սէր հանէ իմ սրբտէս, որպէս զի քու սիրտդ չվիշտացնեմ. ու վառէ իմ սիրտս քու աստուածային սիրովդ: Դուն ըսիր որ աշխարհ դալուդ պատճառը՝ մեր սրտին մէջ աս սէրը ձգեցն էր. Հոր էի արեանէլ յերկիր. ու հուզէիր որ ան ատենէն աս սէրը վառուած ըլլար սրտերնուս մէջ, երբոր գեռ մեզի համար աս վէրքերը չէիր ընդունած. Եւ դէն, կամ թէ արդէն էի բոբոբէր: Իսկ չիմայ որ մեզի համար արիւնդ թափեցիր, ու այսչափ աւելի պատճառներ ունինք զքեզ սիրելու, վառէ իմ սրտիս մէջն ալ աս հուրը՝ որ այրէ սպառէ ինչ որ քու սիրոյդ դէմ է: Ենորք տուր ինձի, որ աս քու բարեգութ սրտիդ սպերախառութիւն չընեմ. ու թէ որ ապերախս պիտոր ըլլամ, խէ ինձմէն աս սիրալը, ու նոր սիրա մը տուր ինձի. Սիրք ուրբ հասարակեալ յիս ասարած, և հոգի ուղիւնորդեալ ՚ի քորի իմոս:

Որ զցօղ անասական արեան ՚ի կողահոս սղբեւրէն արբոյց տիեզերաց, ժողովուրդք հեթանոսաց առաւել բարձր արարէք զնա յաւիտեան:

Յովսէփ արիմաթացին Հրէից մեծերուն մէկն էր, բայց ամենեւին չէր խառնուած անոնց ու քահանայից ըրածներուն, անանկ որ՝ սուրբ աւետարանը զինքը բարեգործ և արար կը կօչէ: Յովսէփ չէր կրնար արգելուլ անոնց անօրէնութիւնը, անոր համար լուռ կեցեր էր. բայց Յիսուսի մեռնելէն ետքը տեսնելով որ մարմինը՝ երկու մէկալ իր հետը խաչուածներուն հետ անարդուէր պիտոր, ու կարելի էր Քրիստոսի մարմինը ձեռք բերել, ամեն վախ մէկդի դրաւ, համարձակեցաւ՝ մասաւ խնդրեց Պիղատոսէն, ու աստուծոյ յաջողելով՝ առաւ Յիսուսի մարմինը: Յովսէփ ողջութեան ատենը իրեն համար վիճափոր գերեզման մը շինած էր՝ Քրիստոսի խաչելութեան տեղւոյն մաս. հոն թաղեց Քրիստոսի աստուածացեալ մարմինը անուշահոտ խուկիերով, ու մաքուր կաւաներով պատած: Աս բարեգործութեանը օգնական եղաւ նաև Նիկողեմոս, որ իրեն պէս բարեպաշտ անձ մըն էր, ու ինքն ալ Քրիստոսի

աշակերտ: Անտարակոյս սուրբ աստուածածինն ալ հոն էր այն ամեն բարեպաշտ կանանց հետ, որ Փողոսթա լեռնէն չէին բաժնուած. Յոհաննէս աւետարանիչն ալ հոն էր. ամենքն ալ մասնակից էին աս սրտաշարժ գործողութեանը:

Երևակայէնք Յիսուսին վերալից մարմինը սուրբ աստուածածնայ դիրկը, չորս դին աս ամեն բարեպաշտ անձինքները առած, արտասուօք միայն իրենց սրտին զգացմունքները իրարու յայտնելով: Մագդաղենացին Յիսուսի սոքին վրայ խնկած, անմեղ Մարիամ Աղէսպան իր ամբիժ աչքները Յիսուսի ամեն մէկ վէրքին վրայ պարզայնելով, ու ամեն մէկին վրայ արցունք թափելով. ուրիշներն ալ ամեն մէկը մէյմէկ կերպով իրենց սէրը յարգութիւնը՝ ու սրտերնուն ցաւը ցուցնելով: Թէ որ հաւատքնիս կենդանի ըլլար՝ աս ամեն զգացմունքները մենք ալ կը զգայինք հազարգուտելու աստենիս, իբրև թէ Քրիստոսի սուրբ մարմինը սրտերնուս մէջ թաղելով. ու մեր հաւատոցը համատ՝ մաքուր կապաներուն տեղը՝ կը պատրաստէինք մեր հոգւոյն մաքրութիւնը, անոյշ խոռնկերուն տեղն ալ՝ մեր մահացուցմունքը:

**ՄԱՍՆ Բ.**

Տրտում անուր գերեզմանէն մեկնեցան ամենքը, բայց ՚ի Մագդաղենացւոյն, ու մէկալ Մարիամէն՝ որ Մագդաղենացիէն չէր բաժնուեր. ասոնք երկուքը հոն նստած՝ գերեզմանին վրայ կը նայէին ու կուլային: Սուրբ աւետարանիչը՝ Եւսեբէն հանդէպ գերեզմանին կըսէ, բայց մինչև էրբ նստելին չկուրցեր. գիտէնք որ ուրբաթ իրիկուն եղաւ Քրիստոսի թաղումը, ու շաբաթ օրը

ըննցածին պէս՝ գնացին անուշահոտ խոռնկեր ու եղբր պատրաստելու. իրենց փափաքը՝ գերեզմանը բանալ, ու նորէն մէյմին ալ օժեղ էր Յիսուսի մարմինը. և որովհետև շաբաթն օրը տօն ըլլալով չէին կրնար օժեղ, անոր համար կըսէ սուրբ աւետարանիչը. Եւ ՚ի շաբաթուան հանդարտեցին լանս պարտիւնին: Կիրակի առտուն իրենց միաշաբաթին, այսինքն մեր կիրակի առտուն, կանուխ ճամբայ էլան. մէկալ բարեպաշտ կանայք ալ իրենց հետ: Բայց ճամբան սկսան մտածել որ՝ ով պետք վերցընէր գերեզմանին քարն՝ որ մեծ ու ծանր էր. մէկալ դժուարութիւնները միտքերնէն չէր անցներ՝ որ իրենք հոն չէգտնուտեն քահանայապետները կնքեր էին գերեզմանը, ու հոն պահապաններ զրէր էին՝ որ մարդ չխօստենայ: Ասոնց սուտ վախը ան էր՝ որ Քրիստոսի աշակերտները գիշերով չկազման մարմինն, ու յարութիւն առաւ չըսեն, բայց բուն վախերնին Քրիստոսի յարութիւն առնելն էր, որն որ իրենց խնջովը կուզէին արգիլել, գերեզմանը կնքելով ու պահապաններով: Բայց Քրիստոս քոց գերեզմանին մէջէն յարութիւն առաւ, ասանց պահապանները բան մը իմանալու. ցուցնելու համար որ պահապանները չէին կրնար զինքը արգելուլ, միանգամայն իւրաքեր կանանց ալ արգելքները վերցընելու՝ որ կարենային գերեզմանին մօտեցալ, ու եղածը տեսնել: Անոնց դալու ատենը հրեշտակ մը խըրկեց աստուած. հրեշտակը երկիրը շարժեց թընտացուց, ահագին քարը մէկդի դրոյց, ու գեմբը փայլակի պէս, հանդուստները լոյսի պէս պայծաւ, քարին վրայ նստաւ: Պահապան զնուորտները շարժէն ու լոյսէն զարհուրեցան, մեռելի պէս գետինը ինկան: Ան միջոցին մէկալ իւրաքեր կանանցմէ առաջ Մագդաղենացին եկաւ, գերեզմանը բաց տեսաւ, մէջը Քրիստոսի մարմինը չէ-

Կար. կարծեց որ մէկը գողցեր է. մէկէն գարձաւ, Պետրոս ու Յոհաննէս առաքեալներուն պատմեց: Անոնք ալ մէկտեղ եկան, տեսան որ իրաւ էր Մագդաղէնացիին ըսածը, բայց Քրիստոսի յաւրումը առնելը մաքերնէն չանցաւ, նորէն գարձան տարակուսած՝ մէկալ առաքեալներուն քովը: Իսկ Մագդաղէնացին հոն կեցած՝ կուլար, ու լալու ատենը ճուշտաւ տեսաւ որ երկու փառաւոր հրեշտակներ նստեր էին գերեզմանին մէջը, որոնք ըսին իրեն. ինչու կուլար: Ինքը, իմ տէրս ասկէ վերուցեր՝ չեմ գիտեր ուր դրեր են՝ ըսաւ, ու ոչ անոնց պատասխան տալուն սպասեց, ոչ իրենց փառաւորութեանը նայեցաւ. վասն զի միաքն ալ սիրան ալ Քրիստոսի մարմինը կորսնցրնելուն վրայ էր: Ետեւ գարձաւ, պարտիզպանի ձեռով մէկը տեսաւ, հարցուց որ ի՞նքը վերուցեր էր մարմինը: Պարտիզպանն որ ինքն Քրիստոս էր, իր սովորական կերպովը՝ Մաշեա՛մ ըսածին պէս, Մագդաղէնացին ճանչցաւ ձայնէն զինքը, ու Բաբոնի ըսելով՝ ոտքը ինկաւ: Բայց Քրիստոս արգելեց որ չնմտենայ իրեն, երթայ իր տեսածն ու լսածը պատմէ առաքեալներուն: Ան միջոցին մէկալ իւզաբեր կանայքն ալ եկեր էին. անոնք ալ Քրիստոսի մարմինը գերեզմանին մէջը չըլլալուն համար տարակուսած ատենին, երկու փառաւոր հրեշտակները երեցան ու ըսին. Մի վախճաք, Յիսուսն որ կը փնտրուէք՝ հոս չէ, յարումը ինչպէս որ առաջուց ըսեր էր. գնացէք պատմեցէք առաքեալներուն: Անոնք ալ մէկգլխէն վախցած՝ մէկալ զիէն ուրախացած, գարձան Մագդաղէնացիին հետ՝ գացին պատմեցին առաքեալներուն՝ ինչ որ ատեսր ու լսեր էին: Բայց առաքեալները ոչ Մագդաղէնացիին, և ոչ մէկալ կանանցը հաւատացին: Թողուց Քրիստոս որ առաքեալները աս թերահաւատութիւնը ընեն, ու

ընկերուն խօսքին չհաւատան, իրենցմէ քննեն ատենան ու հաւատան, որպէս զի մենք չխտարաւորութեամբ թերահաւատ չըլլանք: Բայց որչափ ալ կանանց խօսքին չհաւատացին, մամուռքնին եւ լեւցաւ. Պետրոս ու Յոհաննէս նորէն գերեզմանը գնացին, գերեզմանը պարսպ ու կապաններ ծալլած տեսան, ու դեռ տարակուսած գարձան: Զարմանալի բան. այնչափ անգամ առաջուց զուրցեր էր Քրիստոս որ յարումը ինչպէս սխտոր ասնէ, Հրեաներն ալ գիտէին, ու քահանայապետները դիմացը առնելը ջանացան, իսկ առաքեալները այնչափ բան տեսնելէն ու լսելէն ետքը գեռ չհաւատացին: Հոս կերեւոյ Յիսուսի սրտին քաղցրութիւնը ու գթութիւնը, որ զիրենք երեսէ ձգելուն ատեղ երեցաւ իրենց, ու վերքերը ցուցնելով՝ հերքե սեպեց զիրենք յանդիմանելը, չհաւատալուն համար:

### Մ Ա Ս Ն Գ .

Մէկ անգամ երևնալն ալ հերքե չխեպեց, այլ իւզաբեր կանանցմէ ու Եմմաուոս գացող աշկերտներէն՝ ի զատ, Պետրոսի զատ երեցաւ, ետքը երկու անգամ առաքելոց՝ ասջի անգամուն Թոմաս առաքեալը մէկտեղ չըլլալուն համար. ետքը հինգհարիւր հաւատացելոց մէկտեղ, ետքը Յովորոսի՝ որ եղբայր ատեան կրտսեր, ետքը Եթանասունուերկու աշակերտացը: Սուրբ առաւածածնայ երևնալը՝ զէն գրէր աւետարանիչները. վասն զի հարկաւորը անոնց վկայութիւնն էր, որոնք առաջ չհաւատացին Քրիստոսի սուրբ յարումը, ու զինքը ատենալէն ետքը համուրուցան: Իսկ սուրբ աստուածածնինը առաջ ալ

էտքն ալ իր միածնին խօսքերը միտքը պահած, անոնց վրայ երբէք չէր տարսիտուած: Ուստի սուրբ աւետարանը իր լուսթեամբը մեզի կը թողու մակարեւել, որ Քրիստոս չէ թէ միայն ամենէն առաջ իր սիրելի մօրը երեցաւ՝ զինքը մխիթարելու համար, այլ և մինչև իր համբարձումը ստեպ կերևնար իրեն: Աս ամեն երևմունքները՝ առաքելոց ու հաւատացելոց հաւատքը հաստատելու համար էին: Բայց Վրահաս աւետարան չին գործք առաքելոցին մէջը ըսած աս խօսքէն՝ Չասորս բառաստան էրեւել նոյա և ստել վանն արգայոս ինանն սարգոյ, կերևնայ որ Քրիստոս տէրն մեր առաքեալները հաւատքի մէջ մէյմը հաստատելն էտքը՝ ամեն օր կերևնար իրենց, ու սուրբ խորհուրդներուն վրայ զիրենք կը անդեկայցնէր, ու իր եկեղեցւոյն կառավարութեանը համար կարգաւորութիւններ կընէր: Ինչ մարդասիրութիւն, ինչ գութ. յարութիւն աննէլն էտքն ալ իր փառաւոր յողմանակն որ պիտօր ընէր՝ բոլր արդարոց հոգիները մէկտեղ առած երկինքը մանալու, այնչափ օր ուշացուց մեր բարւոյն համար:

Ա. Գ. Օ Թ Ք

Յիսուս փրկիչ իմ, կը հաւտամ բոլորով սրտիւ՝ որ զմեզ փրկելու համար խաչուելէն ու մեանելէն էտքը յարութիւն առիր. կը հաւտամ առանց վէրքերդ տեսնելու, առանց զանոնք շօշափելու որպէս զի քու աստուածային բերնէդ էլած երանութեանը մասնակից ըլլամ, Երանի՛ որոջ ու ինչ Կէտաւ և հասարակէն: Եմմաուուս գնացօղ երկու աշկերաներուդ արամութեանը պատճառը հարցուցիր, ու զիրենք ուրախացուցիր. իրենց տըրամութիւնը՝ քու սուրբ յարութեանդ վրայ տարա-

կուսեղնէն էր, իսկ իմն անկէց չէ, չեմ տարակուսիր յարութիւն աննելուդ վրայ, կը հաւտամ. այլ իմ արամութիւնս՝ գործքերս հաւատքիս համեմատ չըլլալուն համար է: Չիս ալ անոնց պէս ուրախացուր, խօսէ իմ սրտիս ալ՝ որ անոնց սրտին պէս ճըմիլի, ու իմանամ որ ուրիշ ճամբով չեմ կրնար փրկուիլ՝ բայց միայն խաչը ուսս առած՝ ետևէդ գալով:

Ընդ կանայսն իւզաբերս առ քեղ առաւօտեմք, կենդանիդ յաւիտենից Քրիստոս ընկալ և զմեր փոխանակ խնկոցն զօրհնաբանութիւնս, փոխանակ իւզոցն զհաւատս ամբիծ, և զպաղաքանս մեր ընդ առաւօտեան կանանցն ընկալ, որք զողջոյն կենաց տուան Եւասի ուննաման:



# ՄՏԱԾԱԿԱՆ ԼԷ.

Նորէն Քրիստոսի յարուրեալն վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Քրիստոսի սուրբ յարութեան տօնը՝ ուրախութեան տօն մըն է մեզի համար. բայց մեր ուրախութիւնը՝ առաքելոց ու ան առեւնի հաւատացեալոց ունեցած ուրախութեանը շուքը կրնայ սեպուիլ: Անոնց ուրախութիւնը երեւակայելու համար, պէտք է իրենց առջի արամութիւնը մտածենք՝ որն որ իր չարչարանացը, իր դատապարտուելու ու խաչին վրայ երկու աւազակներու հետ մեռնելու ատենը ունեցան: Թերահաւատութեան ատտիճան հասած էր իրենց արամութիւնը, որն որ կերպով մը մեզի խնայելու համար՝ սուրբ աւետարանը Եմմաուուս գնացող երկու աշկերաններուն պատմութիւնը կրնէ:

Քրիստոս արդէն յարութիւն առած էր, բայց դեռ իւրաքեր կանայք միայն իմացեր էին. անոնց խօսքին ալ հաւատացող չէր եղած: Աշկերաններէն երկու հոգի Երուսաղէմէն Եմմաուուս գեղը երթալու ատեննին՝ Քրիստոս անէր մեր ճամբորդի մը ձևով իրենց երեցաւ, հարցուց որ ինչո՞ւ այն.

չափ արամեր էին, ինչ բանի վրայ էր ըրած վերջապէս Եմմաուուսը. Գրիգորէն Բն Բնիք, վասն որոյ լիճիքը ընդ մեզնէն էր արմատէն: Անոնցմէ մէկը ըսաւ. Երուսաղէմի մէջ դուն միայն կաս որ եղածը չես գիտեր. մեծ մարդարէ մը ելաւ՝ խիստ զօրաւոր խօսքով ու հրաշքներով մեր իշխաններն ու քահանայապետները զննքը հալածեցին ու մեռուցին. մենք յոյս ունեցինք որ ինքը ըլլայ մեր փրկիչը, բայց իրեք օր է որ մեռաւ գնաց: Իրաւքանի մը կնիկայք իր գերեզմանը գացեր՝ պարասդ գտեր են, ու յարութիւն առեր է կրսէն կոր, բայց զննքը տեսնող չիկայ: Աս արամութեան ու տարակուսանաց մէջ էին ուրիշ ամեն հաւատացեալներն ալ. անանկ որ՝ խեղճ կնիկաց պատմածները թնչուց խօսքեր երեցեր էին անոնց. Եւ ընդան առաջի նոյա շաղթաղիւնէն բնիք նոյա:

Ուստի երբոր Քրիստոս երեցաւ իրենց, ու իր յարութեանը արացոյցները տեսան, անպատմելի եղաւ իրենց ուրախութիւնը, որն որ սուրբ աւետարանը մէկ խօսքով կիմացրնէ՝ Չհասարային ՚ի խեղճութենէն ըսելովը: Բայց որչափ ալ անոնց ունեցած ուրախութիւնը չիկրնանք ունենալ, սու երկու մեծ մտիթարութիւնը ունինք. որ անոր տեղը կը ընցընեն: Մէյմը որ՝ իրենց առջի բերանը ըրած թերահաւատութեանն ազատ ենք, վասն զի անոնց թերահաւատութիւնը մեր հաւատքը կը հաստատէ. մէյմըն ալ որ մեր հաւատքը անոնց ունեցածէն արգիւնաւոր է, վասն զի անոնք զՔրիստոս տեսնելով իր յարութիւն առնելը հաւատացին, իսկ մենք առանց զննքը տեսնելու կը հաւատանք, ու իր սուրբ յարութեան տօնն ալ կը կատարենք կոր: Ուստի Քրիստոսի առած երամութիւնը մեզի համար է որ ըսաւ. Երանի՛ որոյ լիցէր Կրիստոսը Եմմաուուսը:

### Մ Ս Ս Ն Բ.

Բայց ուրիշ խիստ օգտակար պտուղ մըն ալ կրնանք քաղել նոյն Եմմաուուս գնացող աշկերտաներուն պատմութենէն: Ասոնք սուսջուց Քրիստոսի այնչափ հրաշքները տեսեր էին, իր ասուածային բերնէն լսած ալ էին՝ որ մեռնելէն ետքը իրեք օրէն յարութիւն պիտոր առնէր. ճամբուն մէջն ալ իրենց առջին գրեր կը բոլոր մարդարէներուն իր վրայ ըսած խօսքերը: Մէնէք նոցա որ ինչ յամենայն գիշու գրեալ է զմանէ: Այսու ամենայնիւ խելը ընին չէր պառկեր յարութիւն ասած ըլլալուն. երբ եղաւ որ խելը ընին պառկեցաւ. սուրբ աւետարանն է ըսողը. Առեալ զհայն օրհնէայ էբէլ և եպ նոցա, և նոցա Բոցան ալ, և Ժանէան զնա: Երբոր այն հացը ճաշակեցին՝ որ սուրբ հաղորդութիւնն էր, ան ատենը ճանչցան զՔրիստոս, ան ատենը իր ամեն խօսքերը սկսան հասկընալ, ու խելը ընին պառկեցաւ: Ի՞նչ սքանչելի զօրութիւն սուրբ հաղորդութեանը. ան է որ զմեզ կը իրուսաւորէ, ան է որ զմեզ մեր սուրբ հաւատքին մէջ հաստատուն կը պահէ, անո՞նք է որ մեր սիրտը կը շարժի. նոյն աշկերտներուն խօսքն է. Ո՞չ իսկ և սիրտ մեր ճնէին ՚ի մեւ, միւլ խօսէրն ընդ մեզ:

### Մ Ս Ս Ն Գ.

Ճանչնանք ուրեմն սուրբ հաղորդութեան զօրութիւնը, ու արժանաւոր պատրաստութեամբ հաղորդուինք: Այն երջանիկ իւզաբեր կանայքը ի՞նչ պատրաստութիւններ ըրին Քրիստոսի սուրբ

մարմինը յարգելու, ի՞նչ անուշահոտ եղեր ու խունկեր առին հետերնին. անոր համար ալ ամենէն առաջ արժանի եղան յարութիւն առնելէն ետքը զինքը տեսնելու: Մէք ալ մեր կիրքերուն մահացուցմունքը, որ աստուծոյ առջևը ամենէն անոյշ խունկերն են, հետերնիւ տանինք՝ Քրիստոսի սուրբ մարմինը ընդունելու: Զըլայ որ զբաղ մունք մը կամ գժուարութիւն մը մեզի ետ կենալ տայ սուրբ խորհուրդներէն, աստուծոյ օգնակալութեանը վրայ վստահ ըլլանք ամեն գժուարութիւն յաղթելու: Այն սուրբ կանանց Քրիստոսի գերեզմանը երթալու ատենը՝ մըտաւորին մեծ զըժուարութիւն մը ինկաւ որ գերեզմանին վրայի ծանր քարը միւ պիտոր վերցնէր՝ որ կարենային Քրիստոսի սուրբ մարմինը խնկել: Ո՞չ Բաաւէրոսոսն մեւ զմէն ՚ի Գրանց գրեւմանին, Գրանց էր մեծ յոյժ: Բայց աս գժուարութեանը համար ետ չեղարձան. ի՞նչ եղաւ. հրեշտակը երկկնքէն ինչաւ, մէկզի զըրցուց քարը: Աստուած ամեն գժուարութիւն առջևնէս կը վերցնէ, երբոր մենք մեր պարտքէն ետ չիկենանք:

Թի՛ք որ առաքելոցը ունեցած ուրախութեանն ալ կուզենք մասնակից ըլլալ, սուրբ խորհուրդներն են որ մեր օրաին ճշմարիտ ուրախութիւն կուտան: Անոնց համար է որ Եսայի մարգարէն գարբով առաջ սուրբ խորհուրդներուն վրայ մարգարէութիւն ընելով ըսաւ. Եւ առե՛ք ջուր ուրախութեան յաղբերացն իբրութեան. վասն զի մեր փրկութեան աղբիւրները սուրբ խորհուրդներն են. անոնք են որ մեր փրկութիւնը ապահովելով սըրտերնուս ալ հանդատութիւն ու ուրախութիւն կուտան: Անոր համար Քրիստոս տէրն մեր զատկին ետքի օրը՝ տաճարին մէջը կեցած՝ զամենքը իրեն հրաւիրելով ըսաւ. Ենէ՛ք ո՛ր Ժարտի իցէ, եւ կեցէ՛ք առ իս. ու աս ջուրին համար է որ ինքը գար.

ձեալ ըսաւ: Ձորն պէ ես Կոթ՝ եղբի աւբի-ր ջրոյ  
բախեալ ՚ի կեանն յառիփենակնս. այսինքն՝ աս սուրբ  
խորհուրդներն են որ զմեզ պիտոր հասցնեն յա-  
ւիանական երանութեանը:

Ա. Ղ. Օ Թ. Բ

Յիտուս փրկիչ իմ, ինչպէս որ Եմմաուոս եր-  
կաւ աշկերաներուդ սիրաբ շարժեցիր քու անուշ  
խօսքերովդ, ասանկ ալ իմ սիրաս շարժէ շնոր-  
քովդ, ու սուրբ Հոգորդութեան խորհրդովդ զօ-  
րացուր իմ հաւատքս, ու լուսաւորէ իմ միտքս,  
որ քու սուրբ խօսքերդ հասկընամ ու կատարեմ:

Ընդ կանայն իւզարերս առ քեզ առաւօտեմք,  
կենդանիդ յաւիանից Քրիստոս ընկալ և զմերս  
փոխանակ խնկոցն զօրհնաբանութիւնս:

## ՄՏԱԾԱԿԱՆ ԼԸ.

Նորէն Քրիստոսի յարուշխանը վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Քրիստոսի մեանիլը մահուան վրայ յաղթա-  
նակելու համար էր, մեռաւ որ մահը ոտքին տակը  
առնէ. ան որ ինքիրենը յարութիւն առաւ, կըր-  
նար ալ չիմեանել: Դաւիթ մարգարէն ՚ի Ռուտա  
առաջ կը կօչէ զՔրիստոս, այսինքն երբոր կուզէր՝  
ինչպէս որ կուզէր՝ անանկ մեանէր պիտոր, ու-  
զօժ ատենը՝ չէ թէ միայն ինքը պիտոր յարու-  
թիւն առնէր, այլ նաև ուրիշները յարուցանէր  
պիտոր: Նոյն աստուածային զօրութեամբը՝ որ  
ուրիշներուն վրայ այնչափ անգամ բանեցուցեր  
էր, յարութիւն առաւ. առանց պահապանները  
իմանալու՝ առանց գերեզմանը բանալու՝ ելաւ  
գերեզմանէն, բայց ցուցնելու համար որ գերեզ-  
մանը բանալն ալ իրեն համար բան մը չէր՝ պա-  
հապաններն ալ իրեն արգելք մը չէին՝ հրեշտակի  
ձեռքով երկիրը շարժեց, վրայի ահագին քարը  
մէկզկ գըրեց, պահապանները զարհուրեցուց,  
մեռելի պէս գեախը փռուեցան, ամեն արգելք  
վերցուց, որպէս զի ամենքը կարենան տեսնել գե-

րեղմանին պարսպ ըլլալը: Ո՞ր է մահ յաղութիան  
դ, ո՞ր է դժոխս խայտոյ դ:

Յարեաւ Քրիստոս, բայց չէ թէ իր առջև կենօ-  
քը՝ այլ բոլորովին նոր կեանք մը առաւ, ու փա-  
ռաւորեալ կեանք: Առաջուց ալքբաս, աննշան  
կեանք մը կը վարէր, մարմինը մեզիս սէս չարչա-  
րէլէ էր, ցաւոյ ու սրամտութեան ենթակայ. բայց  
յարութիւն առնելէն ետքը՝ իր մարմինը ազատ էր  
ամեն մեր տկարութիւններէն, թշնամիքը և ոչ  
կրնային դաշիւ իրեն: Մարմին էր, բայց հոգեղէն-  
բան մը չէր կրնար զինքը արգելուել, դրօսն չալէ-  
ւէ՛ զշկերաներուն ժողոված սեղը ներս մտաւ,  
դոյ գերեզմանէն դուրս ելաւ: Քրիստոսի աս այ-  
լահերպութիւնը թաքոր լեռան վրայ եղածէն ա-  
ւելի մեծ էր:

ՄԱՍՆ Բ.

Աս կատարելութիւններէն ՚ի զատ՝ անանկ մար-  
մին մըն էր որ ալ չկարողար մեռնէր. Գիտէ՛ք է՞նչ  
Քրիստոս յարոյճեալ է ՚ի Ռեւելոյ, այսուհետեւ ու Ռեւա-  
նի, և մահ նմա ոչ ևս դիւրէ: Ասզարոս և ուրիշ մե-  
ռնէներն որ Քրիստոս յարուց, ետքը նորէն մե-  
ռան. բայց Քրիստոս յաւիտեան կենդանի պիտոր  
մնայ: Քրիստոսի նոր կենացն ու անմահութեանը  
մենք ալ օրմը մասնակից պիտոր ըլլանք. իր շնոր-  
քովը մենք ալ գերեզմանէն մեր հողացեալ մար-  
մինը պիտոր առնենք փառաւոր հոգեղէն ու ան-  
մահ, թէ որ հիմակուց իր կենացը նմանել ջա-  
նանք: Պօղոս առաքեալին խրատն է. Որպէս յարեա-  
նի Ռեւելոյ Քրիստոս խոսօք Հօր, նայնպէս և մեք ՚ի նո-  
րօգոսն կենաց շրջեսցուք: Պէտք է որ հոգինիս՝ չէ թէ  
միայն մեղքերէ մաքրենք, յարուցանենք զինքը,

այլնաւ նորոգենք ամենեկին. իր գիտաւորութիւն-  
ները ուղղենք, իր անձնատիրութիւնը կարգաւո-  
րենք, հպարտութիւնը խոնարհեցնենք, ծուլու-  
թիւնը արիացնենք, ծուռումուռ մտածմունք-  
ները փոխենք, անցաւոր բաներու յարմուռքները  
սրտերնէս վերցնենք, մէկ խօքով՝ նոր սիրա ու-  
նենանք:

ՄԱՍՆ Գ.

Աս կերպով հոգինիս նորոգելէն ՚ի զատ, պիտոր  
ջանանք՝ որ աս նորոգութիւնը մշանջնաւոր ըլ-  
լայ, միշտ սեւէ: Ի՞նչ օգուտ մեր հոգւոյն յարու-  
թիւն առնելը, կեանքը նորոգելը, թէ որ նորէն  
մեռնի, թէ որ նորէն իր առջև կեանքը դառնայ:  
Այնչափ անգամ խոստովանէր սրբութիւն առեր  
ենք, այսինքն հոգինիս յարութիւն առեր է. այն-  
չափ անգամ՝ նոր կեանք սկսեր ենք, առաջագրեր  
ենք ամեն պակասութիւննիս շեղելու. բայց ետքը  
նորէն նոյն պակասութիւններուն մէջը կնկեր ենք,  
թերեւս աւելցուցեր ենք ալ մեր պակասութիւննե-  
րը. թերեւս առաջ էրթաւտ ակը՝ ետ ետ գնացեր  
ենք, տարուէ աարի աւելի անհոգ եղեր ենք:  
Քանի սնդամ՝ աստուած մաքերնուս լոյս տուեր  
է, սրտերնիս շարժեր է՝ որ մեր կեանքը նորո-  
գենք, ու սկսեր ենք ալ նորոգելու՝ սաղմոսին  
խօքը ըսելով. Առայ՛ի՛, այժմ սխալայ, այս նորագոսն ա-  
ւը Բարձրէւն. բայց սրջափ ատեն քէր է: Բանը  
յարատուութեան վրայ է. պէտք է որ առ աս-  
տուած զիմենք, իրմէն խնդրենք յարատուելու  
շնորքը. ճանչնանք մեր տկարութիւնը, գիտնանք  
որ իր շնորքովը միայն կրնանք յարատուել. մէկ  
զիւն կրցած ջանքերնիս ընենք, մէկու զիւն իրեն  
ապաւինինք: Քննենք՝ ի՞նչ եղած է պատճառը որ

այնչափ առաջագրելէն ու այնչափ աստուծոյ  
խոստմունքներ ընէլէն ետքը՝ գործեալ նոյն պակ-  
սու թիւններուն մէջը ինկէր ենք. ու աստուծոյ  
շնորհով պատճառը վերցնենք: Տարիները կանց-  
նին կարծածնէս շուտ, կեանքերնուս ետքը կը  
հասնի, թէ որ յարատեամ չըլանք՝ մեր վախճա-  
նին չենք հասնիր. Որ համբերեսցէ 'ի սպասու, նա կէջցէ:  
Քրիստոսի մարմնոյն յարու թիւնը՝ նորոգումը՝ ու  
անմահու թիւնը իրմէն կը կախուէր. բայց մեր հո-  
գին յարուցանելը նորոգելը ու անմահացնելը  
մեզմէ ալ կը կախուի. սուրբ Օգոստինոսին խօսքն  
է. Աստուած որ զմեզ առանց մեզի ստեղծեր է,  
առանց մեզի չիբրկեր. ուրեմն ձեռքերնէս եկածը  
ընենք:

Ամեն չարեաց պատճառ՝ մեր թուրու թիւնն  
ու գաղջու թիւնն է. ասոնց կը յաղթենք՝ Քրիս-  
տոսի փառաւոր յարու թիւնը մտածելով: Սուրբ  
գիրքը զնիքը անդրանի ձեռեւոյ կոչելով՝ զմեզ իր եղ-  
բարքը կրնէ, ինչպէս ինքն ալ զմեզ իրեն եղբար-  
քը անուանեց. ուրեմն թէ որ ինքը յարու թիւն  
առաւ, իրեն պէս օրմը մենք ալ փառաւոր յա-  
րու թիւն պիտոր առնենք: Որպէս Արաման ամենե-  
քեան ձեռանին, նոյնպէս և Քրիստոսիս ամենեքեան կեն-  
դանացին:

Պօղոս առաքեալը աս իր խօսքին ետեկն՝ ինչ-  
պէս յարու թիւն առնելնիս ալ կըսէ. Սերմանի մար-  
մին շնչաւոր, և յառնէ մարմին հոգեւոր. սերմանի անար-  
գութեամբ, և յառնէ բառօք, սերմանի փխրութեամբ, և  
յառնէ զբռութեամբ: Պատճառն ալ ետեկն կը յարէ.  
Արամայ հոգեղէն ըլլալով՝ մենք ալ հոգեղէն ե-  
զանք. բայց ինչպէս որ Քրիստոս երկնաւոր է, ա-  
նոր պէս մենք ալ երկնաւոր պիտոր ըլլանք. Առա-  
ջին մարդն յերբէ հողեղէն, իսկ երկրորդ մարդն Կեր յերե-  
նի. որպէս զգեցաք զպապիւր հողեղէնին, զգեցո՞ք և  
զուրպիւր երկնաւորին: Ո՞ր թմրու թիւն աս խօսքէն

չարթըննար. ո՞վ աս յոյսը գիմացը ունենալով՝  
կրնայ անխոյժ կենալ:

Ա. Դ. Օ Թ. Գ

Փրկիչ իմ Յիսուս, սուղաւորէ իմ սրտիս մէջը  
քու սուրբ յարու թեանդ յիշատակը՝ որով մեր  
յարու թեանը յոյսը հաստատեցիր. զօրացուր իմ  
հաւատքս, որ աս յոյսով իմ թմրու թիւնս ար-  
թընցընէ: Մահուն դէմ՝ ըրած յաղթու թիւնդ՝  
կատարեալ ըրէ. քու աստուածային զօրու թիւնդ  
բանեցուր՝ իմ հոգիս ալ յարուցանելու աս մա-  
հացու գաղջու թեանէն, որ տիրած է վրաս. աս ալ  
հրաշքի ու քու զօրու թեանդ կարօս է, ինչպէս  
որ երեսունը ու թը տարուան անգամալայժը ոտք  
հանեցիր, ասանկ ալ կրնաս՝ մէկ ուղեւորդ իմ  
թմրած հոգիս արթընցընէ:

Որ 'ի մեռելոց յարեար իշխանու թեամբ որ-  
պէս տէր, զիս զմեզօք զմեռեալս նորոգեալ ե կեցո՞:

# ՄՏԱԾԱԿԱՆ ԼԹ.

Նորէն Քրիստոսի յարոշրևանքի վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Քրիստոսի սուրբ յարուձեանը տօնը կատարելով, ամեն մարդ իր ջերմեանդուձեանը համեմատ՝ աւելի կամ նուազ արգիւնք կը վասարկի. բայց մէկ արգիւնք մը կայ՝ որ ամենքս ալ հաւասար կը վասարկինք, Քրիստոս տէրն մեր երբոր յարուձիւն առած՝ երկցաւ իր առաքելոցը, Թոմաս առաքեալը հոն չիգանուեցաւ. ու երբոր մէկալ առաքեալները պատմեցին իրեն Քրիստոսի յարուձիւն առնելն ու իրենց երևնալը, չհաւատայ, ու այն թերահաւատուձեան ծանր խօսքը ըսաւ. Ինչուան որ վէրքերը չիջօջափեմ, ինչուան որ մասս կողին մէջը չիխոթեմ, չեմ հաւտար: Անոր համար Քրիստոս ութ օրէն ետքը նորէն իրենց երևնալով, Թոմաս առաքեալին ըրած թերահաւատուձիւնը յանդիմանեց, ու ըսաւ իրեն. Հիմայ եկուր շօջափէ վէրքերս, բեր մատդ կողս մէջը խոթէ, ու անհաւատ մ'ըլլար: Իսկ երբոր Թոմաս սղաղակեց զըջալով՝ Խաչառնիքն է հաւաքամ, ան ատենը Քրիստոս աս մեծ խօս-

քը ըսաւ իրեն. Գուն վէրքերս տեսնելով ու շօջափելով հաւատայիր, երնէկ անոնց՝ որ առանց տեսնելու պիտոր հաւատան: Աս երանուձիւնը մեզի համար է. ուստի մենք որ Քրիստոսի սուրբ յարուձեանը տօնը կը կատարենք, ամենքս ալ աս երանուձեանը արժանի կըլլանք. մեզի համար է Քրիստոսի խօսքը. Երանի՛ որոյ լիցէ պետեալ ես Խաչառնիքն:

## ՄԱՍՆ Բ.

Իայց աս պատմուձեանէն ուրիշ բան մըն ալ կեղէ խիտ սրտաշարժ: Ասկէց կիմանանք որ Քրիստոս իր փառաւորեալ մարմնոյն վրայ ալ իր վէրքերը պահած էր. Ընչ կը նշանակէ ասկէայ: Եսայի մարգարէն Քրիստոսի համբարձուձը մարգարէանալու ատենը՝ տեսնելով այն փառաւորուձեանը մէջ այն վէրքերը, կը հարցնէ իրեն. Ընչ են աս ձեռքիդ վրայի վէրքերը. Զքն էն այդ վէրք է քո ջեռու. ու Քրիստոսի բերնէն կը պատուխանէ. Խմ սիրելեացս համար ընդունած վէրքերս են. Զորս վերաորեցայ ՚ի քան սիրելոյ: Մէկը Քրիստոսի մեզի համար քաշած չարչարանքննն որ մտածէ, կըսէ որ ասկէց աւելի սէր չէր կրնար ցուցնել մեզի. Մէծ ես քան զայս սէր ոչ ոք ունի, ելիէ քանն իւր դիտէ ՚ի վերայ բարեկամաց իւրոյ, բայց Քրիստոսի բարեգութ յիրար միայն կրնար անկէց աւելին ալ ցուցնել: Այն վէրքերը իր փառաւորեալ մարմնոյն վրայ մեր սիրոյն համար պահէց, որպէս զի իր երկնաւոր Հօրը աչքին դիմացը ըլլան, ու անոնց նայելով ողորմի մեզի միշտ: Պօղոս առաքեալ աս սրտաշարժ մտածուձիւնը ընէլէն ետքը՝ որ Քրիստոս երկնաւոր Հօրը քով նստած մեզի համար միշտ կը բարեխօսէ, անանկ իր սիրար

կը ընցուի Քրիստոսի սիրով՝ որ չհերձակուի զինքը բռնել՝ անէծք կուտայ անոնց, որ չեն սիրեր ըզ- Քրիստոսս. Եւէ ո՞ր ու սիրէ դարձի Յիսուսս, եւ ի՞նչ նշու- լէաւ:

### Մ Ա Ս Ն Գ.

Փնօք աստուծոյ որ աս անէծքէն աղաս ենք ամենքս ալ՝ որ Քրիստոսի սիրոյն համար իր սուրբ յարուածեանը ամը կը կատարենք: Բայց ինչպէս որ ինքը գործքով կը ցուցնէ մեզ իր սէրը՝ բա- րեխօս ըլլալով միշտ մեզի համար իր վերքերովը, ասանկ ալ մենք ցուցնենք իրեն գործքով մեր սէ- րը, ջանանք մեր բարի վարքովը պարտալ չի՛հանել իր մեզի համար ընդունած վերքերը: Աս գործու- նեայ սէրը սրտերնուս մէջն որ ըլլայ, ապահով է մեր յաւիտենական իրկութիւնը, ինչպէս որ նոյն առաքեալը կըսէ՝ ասանկ արամաբանելով. Թէ որ թշնամի եղած ատեննին՝ Քրիստոս զմեզ իր երկ- նաւոր Հօրը հետ հաշտեցուց, կրնայ ըլլալ որ զինքը սիրած ատեննին զմեզ դատապարտէ: Ու- րեմն Քրիստոսի սէրը սրտերնէս չի՛հեռացնենք, մեր շահուն համար ըլլայ՝ սիրենք զինքը, ինքը աս մեր անկատար սիրովն ալ գոհ կըլլայ. ու ճանչ- նալով մեր սկարութիւնը որ միշտ մեր շահը կը փնտրուենք, զինքը սիրելը մեզի շահաւոր ըրեր է: Բայց մենք ամաչէնք զինքը մեր շահուն համար միայն սիրելէն. ասանկ սիրելը մեր սրտին պատիւ չընէր. չմտնանք իր մեզի համար ըրածները՝ թէ որ զգայուն սիրա ունինք. աս մտածմունքէն ա- ռաջ կուգայ կատարեալ սէրը՝ որով արքայու- թեան մէջ սիրենք պիտոր զինքը, այսինքն միայն իր բարութեանը համար, ու աս սէրը պիտոր ը- լայ մեր յաւիտենական երանութիւնը:

Ա Ղ Օ Թ Գ

Յիսուս փրկիչ իմ, որ կը պատուիրես ինձի՝ սիրել զքեզ, Սիրենցես դարձի ասպոսած քո, ըսելով. կընդունիմ սըրտանց քու հրամանդ: Վայ ինձի, որ զքեզ սիրելու համար՝ հրամանիդ կարօս եղիր եմ. ու պատիժ ալ կը սպասնաս, թէ որ զքեզ սիրելու չըլլամ: Բայց ի՞նչ պատիժ կրնայ ըլլալ զքեզ չսիրելէն եւեւ. ի՞նչ եմ ես՝ առանց քու սիրոյդ, բայց ոչինչ, ու ոչնչէն ալ դէշ արքայու- թիւնը առանց քեզի՝ դժոխք կըլլայ ինձի, ու դժ- ժոխքը քու սիրովդ՝ արքայութիւն: Ուրեմն որով հետև կը հաճիս ընդունելու իմ սէրս, շնորք առւ- ինձի, որ մէյմի՛ն ալ քու սիրոյդ դէմ չընեմ:

Ինդ լուսոյ անըստուերի  
Պաղատանօք կամք առաջի,  
Որ փակեալ գրամբք յերեկոյին  
Երևեցար մտասանին,  
Ինդ Թովմայի առ քեզ գոչեմք,  
Տէր եւ աստուած զքեզ դաւանեմք.  
Ի՞նչ եւ առ մեզ յերեկոյիս  
Եւ տուր զողջոյն քո ի հօգիս:

# ՄՏԱԾԱԿԱՆ Խ.

Քրիստոսի համարածմանը վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Քրիստոս տերն մեր յարութիւն առնելէն ետքը քառասուն օր դեռ երկրիս վրայ էր, ու ստէպ կերևնար իր առաքելոցը: Ետքի անգամուն իրենց պատուիրեց՝ որ Երուսաղէմ քաղքէն չիճեանան ինչուան որ Հոգին սուրբը չիջնայ վրանին: Ետքը տարաւ զիրենք Չիթենեաց լեռը, ու մէջերին կեցած՝ արարչագործ ձեռքները վեր վերցուց, օրհնեց զիրենք. ու օրհնելու առենը երկինք ելաւ: Ի՛նչ տեսարան. ի՛նչ հիացում. առաքեալները չէին գիտեր ինչու զիրենք հոն առնելը. ուրիշ անգամներ ալ իրենց երևնալէն ետքը՝ աներեւոյթ կը լսուր, բայց աս կերպով չէ: Տեսեր էին իր ծովու վրայ քարէլը, գոց գանձրէն ներս մտնելը, բայց աս կերպ հրաշք ընելը չէին տեսեր. իրենց հետ խօսելու առենը՝ մէյմըն ալ սկսաւ վերանալ, կամաց կամաց աչքնուն հեռանալ, ինչուան ամպ մը եկաւ՝ բոցորովին ծածկեց անտես ըրաւ զինքը: Թէպէտ Քրիստոս առաջուց ըսած էր իրենց. Տեսանիցէք որդի մարդոյ, ու ելանիցէ որ

էր հասարկին. բայց Քրիստոսի խօսքերը ոչ ըսած առենը կը հասկընային, և ոչ յարութիւն առնելէն ետքը յիշեցին, ինչուան որ Հոգին սուրբ չիջաւ վրանին, ու չիբացաւ մաքերնին՝ յիշելու ու հասկընալու թէ Քրիստոսէ լսածնին, և թէ սուրբ Գրքին իր վրայ ըսածնէրը: Առաքեալները աս հիանալի տեսարանէն տաշած մնացեր էին՝ աչքնին դէպ՝ ի երկինք դարձուցած. ու ո՞վ գիտէ որչափ առեն ալ անանկ ապշած կը մնային՝ թէ որ երկու հրեշտակ երկինքէն իջնալով զիրենք չարթընցընէին: Հրեշտակները ճեպ ճերմակ հագուած էին, իրենց պայծառութենէն յայտնի էր հրեշտակ ըլլալնին: Ըսին իրենց. ի՛նչ կեցեր երկինքը կը նայեք. աս Յիսուսը օրմը երկինքէն պիտոր իջնայ՝ ինչպէս որ իր հոն ելալը տեսաք: Ըսէլ կուզէին որ օրմը նոյն մարմնովը պիտոր գայ աշխարքս դատելու, ու իւրաքանչիւր մարդու իր գործոցը հատուցումը ընելու. հիացած ու անգործ կենալը ան օրուան պատրաստութիւն չէր: Առաքեալները հնազանդեցան գարձան Երուսաղէմ, ու ան վերնատանը մէջ՝ ուր որ Քրիստոս ետքի ընթրիքը ըրեր ու հաղորդութեան սուրբ խորհուրդը հաստատեր էր, ամեն օր կը ժողովէին ալօթք ընելու. սուրբ աստուածածինը, իւրաքեր կանայք, ու Քրիստոսի ուրիշ աշակերաններն ալ հեռերնին:

## ՄԱՍՆ Բ.

Քրիստոս երկինք վերացաւ Չիթենեաց լեռնէն, որուն վրայ սկսեր էր իր չարչարանքը. հոն իր սուրբ ճակատը գետին դրած՝ Հայր, Էֆէ կաթա, անոյ՝ ու քաջակոյն հայս յինէն ըսեր էր. հոն զինքը բռներ, աւազակի մը պէս կապեր ու տարեր էին խաչ հա



նելու. հոն ալ սկսաւ իր փառքը: Ուրեմն չկլախ-  
 նանք չարչարուէլէն ունախատուելէն, անոնք զմեզ  
 քաշած տեղերնէս երկինք կը հանեն: Առաքեալնե-  
 րը ուրախութեամբ զարձան Երուսաղէմ: Եւ նոստ  
 երբ պագեալ նմա՝ Դարձան, Երուսաղէմ ուրախութեամբ մե-  
 ծաւ. մենք ալ անոնց հետ ուրախանանք, վասն զի  
 աս խորհուրդը մեզի համար ալ է, ուրախանանք  
 ու օրհնենք իրենց պէս զատուած: Քրիստոս ու-  
 զեց որ իր բոլոր առաքեալները Չիթենեաց լեռը  
 ըլլան, տեսնան իր համբարձումը, ինքը զիրենք  
 հոն տարաւ, որպէս զի ցուցնէ իրենց՝ որ աչ-  
 իրըքիս նեղութիւնները քանի մը տարիէն ուր  
 կը լմննան: Ետտ անգամ խօսքով իրենց հասկը-  
 ցուցեր էր, գործքով ալ հասկըցուց, ուզեց որ  
 աչքովն տեսնան իր երկինք ելլալը՝ ուր որ զի-  
 րենք ալ կանչեր էր: Ինչ որ արքայութեան հա-  
 մար իրենց ըսեր էր՝ ասով նորէն յիշեցուց, որ  
 ան էր իրենց բուն հայրենիքը. հոն իրենց համար  
 ալ տեղ պատրաստելու կերթար, իրենք ալ օրմը  
 հոն պիտոր երթային, աշխարհս անցք մըն էր,  
 անցաւօրի մը պէս պիտոր ապրէին աշխրբիս վրայ:

Աս ամեն հասկըցուցածը մեզի համար ալ էր. մեր  
 հայրենիքն ալ երկինքն է, մեր աչքն ալ՝ միտքն  
 ալ՝ սրտերնիս ալ՝ հոն պիտոր ըլլալ, միտ անիկայ  
 պիտոր մտածելնք, Պօղոս առաքեալն ըսածին  
 պէս Չիթիին խորհեցէ, ուր Քրիստոս նորի ընդ ալմէ  
 Հօր. զի ինն խորհեցարոս, մի զայս՝ որ յերեիտ ասպ է:  
 Ինչ ալ որ տեսնենք աշխրբիս վրայ բաղձալի, աս  
 իմ վախճանս չէ պիտոր ըսենք, աս երկինք չէ,  
 աս աստուած չէ. ու սուրբ անդադութիւն մը  
 պիտոր ունենանք աշխրբիս բաներուն:

### Մ Ա Ս Ն Գ.

Քրիստոս տէրն մեր իրեք տարի վարդապետեր  
 էր ամենուն, ևս առաւել իր առաքելոցը, երկին-  
 քին ու յաւիտենական երանութեանը ինչ ըլլալը.  
 հոն հասնելու ճամբան ալ սորվեցուցեր էր, բայց  
 համբարձման օրն ալ աս ետքի դասը տուաւ ի-  
 րենց ու մեզի: Ընդունած վերքերուն սպիկը իր  
 փառաւորեալ մարմնոյն վրայ ալ պահած էր. ա-  
 նոնք մեզի ցուցնելով՝ երկինք ելաւ, իբրև թէ ը-  
 սեր մեզի. Տեսէք ինչ պէտք եղաւ քաշել ինծի՝  
 երկինք ելլելու համար. Ո՛ր դնոնս պարս էր արա-  
 բէլ Քրիստոսի, և հասնէ ՚ի փառս իւր. զուր ալ աս  
 կերպով պիտոր ելլէք, ուրիշ կերպով չէք կրնար  
 ելլել: Ո՛վ կրնայ ասանկ օրհնելին տփոսն ըլլալ,  
 որն որ ինքը օրհնագիրը սկսաւ պահել. ինչպէս  
 կրնայ մեկը յուսալ Քրիստոսի փառացը մասնա-  
 կից ըլլալու, առանց իրեն չարչարակից ըլլալու:

Ի՞նչ ալ է մեզմէ ուզած չարչարանքը. իր խա-  
 շին ծանրութեանը քով ինչ է մեր խաշն որ ու-  
 սերնիս առած իր բուռէն պիտոր երթանք: Իր  
 պատուիրանքները պահել, որ ծանր բաներ ալ  
 չեն. Եւ պարտաւորանք նորս լին ծանուստ. աշխրբիս  
 նեղութիւնները ու ինչ որ ինքը կը խրկէ մեզի,  
 որոնք ուզենք չուզենք՝ պիտոր քաշենք, իր սիրոյն  
 համար քաշել, մեր մեղացը ապաշխարանք սե-  
 պել: Աս է բոլոր ուզածը, ու ասով իրեն չարչա-  
 րակից եղած կը սեպէ զմեզ, ու ասոր համար եր-  
 կինքը մեզի տեղ պատրաստել խոստացեր է: Ո՛վ  
 է որ աս բանս մտածելով՝ սիրտ չառնէ. ո՛վ է որ  
 Քրիստոսի տուած աս գիւրբն դասը մտքը չպա-  
 հէ, ու ՚ի գործ դնելու անփոյթ ըլլայ, տեսնելով

իր երկինք վերանալը, ու զմեզ իր ետևէն կանչելը: Ի՞նչ կայ աշխարհիս վրայ որ յաւիտենական երանութեան հետ կարենայ բաղդատուիլ: Այլ կրնար յուսալ Քրիստոսի հետ երկինքը վայելելու ասանկ թեթև մահացուցմամբ, թէ որ ինքը ասանկ բարեգուծ՝ ասանկ առատ ջրլար:

Ա. Ղ. Օ Թ Բ

Յիսուս փրկիչ իմ, կամաչեմ առջևդ երևնալու իմ ապերախառութեանս համար, որ ասանկ մեծ խոստմունք՝ ասանկ մեծ բան առջև դրեր ես, ու ես անփոյթ անդգայ եղեր եմ քու առատ մարդասիրութեանդ: Ինձի ալ կը յարմարի մարդարէին բերնով տուած յանդիմանութիւնդ. Որդիք մարդկան մէջն յերբ եւ խոստախորտ, ընդէր սիրէս զմանրութիւնս և խորքէս զսիրութիւնս: Վասն զի յաւիտենական երանութեանը՝ որ ինձի կը խոստանաս՝ անփոյթ ու անդգայ ըլլալով, սիրտս աշխարհային փուռմուռմուռ բաներու կը պուցեր եմ. կը ճանչնամ իմ ապերախառութիւնս, ու կամաչեմ: Ենորք տուր ինձի որ ասկէց ետքը չխառտուիմ աշխարհիս աջք խաբող բարիքներէն, ու մի փայն իմ ճշմարտ երանութիւնս երկինքը ըլլալը զխանալով քու ետևէդ գամ: ուրիշ ճամբով հոն չհասնուիր, վասն զի դու ես ճանապարհ և ճամբորդութիւնս և իեանք:

Որ երեքօրեայ յարութեամբդ քով և համբարձմամբ յերկինս վերածեր զմարդն առ կենաց փայտն և յանմահական ճաշակն, Քրիստոսս առտուած և մեզ ողորմես:

# Մ Տ Ա. Ծ Ա. Կ Ա. Ն Խ Ա.

Նորէն Քրիստոսի համբարձմանը վրայ:

## Մ Ա Ս Ն Ա.

Առաքեալները Ձիթենեաց լեռան վրայէն Քրիստոսի վերանալը տեսան, ինչուան որ ամպ մը եկաւ ծածկեց. թէ և իրենք դեռ սուշած երկինքը կը նայէին, բայց չէին տեսներ անկէց ետքը եղածը: Քրիստոս ըսած էր առաջուց իր աշխարհներուն որ սիրտը տեսնէին իր վերանալը՝ ուր որ առաջ էր. Տեսնելէս ըտրդի մարդոյ, զի ետանիցէ ուր էր դառաջիկան: Հրէկց ալ ըսած էր որ մեռնելէն ետքը՝ աստուծոյ աջ զին սիրտը նստեր. Բայց յայսմէսէս նաքի որդի մարդոյ ընդ աջն զբոնութեանս սպորձոյ: Ուստի Մարկոս աւետարանիչն ալ Քրիստոսի վերանալը սպատմելով կըսէ. Եւ ինչն գէր Յիսուսս յեդ խօսելոյն ընդ նոսա, այսինքն առաքելոցը հետ խօսելէն ետքը, համբարձու յերկինս և նստաւ ընդ աջն Հոր: Սուրբ Ստեփանոս ալ քարկոծուելու ատենը՝ երբոր երկինք նայեցաւ, աչքին առջևը բացուած՝ տեսաւ արքայութեան փառքը, ու ընդ աջմէ աստուծոյ նստած զՔրիստոս, որուն հասար ամենէն առաջ արիւն թափեց. Ահա փեսանք

ներկին բայեալ, և դորդի մարտոյ՝ զի կայ ընդ ողջի սու-  
րաւորս: Անոր համար Հաւատարմքին մէջն ալ կը  
դաւանինք: Եւեալնովն մարմնին նախաւ ընդ աղջի Հօր:

Բայց Քրիստոսի երկինք ելլելու առեալ՝ ամպը  
զանիկայ առաքեալներուն աչքէն ծածկելէն ետ-  
քը՝ ինչուան իր երկնաւոր Հօրը քով նստիլը ինչ  
հանգէսներ որ եղան, սուրբ աւետարանը չկատա-  
մեր, մարդարէններուն խօսքէն կը հասկըցուի. ու  
րոնք ինչպէս որ Քրիստոսի չարչարանքն ու մահը  
մանրամասնաբար առաջուց կը պատմեն, ասանկ  
ալ իր փառաւոր յաղթանակաւ երկինք ելլալը:  
Յայտնի է նախ՝ որ Քրիստոս իր սուրբ հոգին ա-  
ւանդածին պէս՝ արգարոց հոգիները սատանային  
գերուծեակն ազատելու համար ինչաւ ՚ի Լիմպոս,  
ուր որ Ադամ՝ Եւայէն սկսեալ՝ մինչև եաքի մեւ-  
նող արգարը՝ կը սպասէին իր դաւաճեանը, ու ա-  
նոնց մէջէն գլխաւորներուն՝ մարմնով ալ յարու-  
թիւն առնել տուաւ: Աս ամեն արգարներն՝ որ  
Քրիստոսի հետ երկինքը պիտոր ելլէին՝ արքայու-  
թիւն երթային, ամպը զինքը ծածկելէն ետքը՝  
եկան չորս զին առին, որպէս զի ինչպէս քաջ զօ-  
րավոր մը թշնամւոյն յաղթելով՝ գերիները ձեռ-  
քէն կառնէ, ու յաղթանակաւ կը դառնայ, ա-  
սանկ ալ Քրիստոս սատանային ձեռքէն գերիները  
տանելով՝ անոնց հետ յաղթանակաւ մանայ՝ եր-  
կինքը: Դաւիթ մարդարէն, որ ինքն ալ աս հոգի-  
ներուն մէջն էր, զարերով առաջ աս կտորը ա-  
սանկ կը ստորագրէ. Եւ ՚ի Բաբելոնս, գերեաց զԲե-  
րուսիւն, Էսա-սաբ, Բաբելոնց պարգևս, և եպ որդւոց  
մարդիսն: Սէնք ալ ժամակարգուծեան մէջ ասանկ  
կերգէնք. Այնմահուկանց պատը Քրիստոս, անարիւնով  
ոս ՚ի Դժոխս՝ հաներ զկապեալսն քաղաւթեամբ: Չիտաւեցե-  
լոյն պապեացոս քաղաւթեան, որ գուրմբ քայտի զպապե-  
լաւսն լարին վանեաց, և մահաւամբ զհազարեալսն իննագոր-  
ծեաց, զիլեւոյն ՚ի Դժոխս վերածեաց զհոգիս:

Մ Ա Ս Ն Բ .

Առախ Քրիստոս ասոնք ամենքը հետը առած՝  
կերթար կոր զէպ ՚ի երկինք. աս երթալը Եսայի  
մարգարէն առաջուց Հոգւոյն սրբոյ յայտնու-  
թեամբը տեսնելով՝ կը հարցնէ. Ո՛վ է ասիկայ,  
որ երկրէ երկինք դիմեր կուգայ՝ կարմիրներ հա-  
գած. ինչո՞ւ կարմիր են զդեսաներդ. Իսկ այս ո՞վ է,  
որ զիւեալ գայ յԵրուսալէմ, կարմրուկեան յորոց ի-  
բաւարայ. Լսան էր կարմիր են յորոց քո. աս ձեռքիդ վրայի  
վերքերը ինչ են. զի՞նչ են այդ վերք ՚ի քո յեռս: Ինքն  
ալ պատասխան կուտայ. Հնձան կոխեցի միամի-  
նակ, այսինքն խաչ ելայ որ սատանան ոտքի տակ  
առնեմ՝ կոխիլուտեմ, բոլոր զդեսաներս կարմրե-  
ցան. աս վերքերն ալ որ կը տեսնես՝ իմ սիրելեաց  
համար առի. Հնձան հարի մայն. դաւնայն հանդերձս  
իմ Բաբելոնցի... վերաւորեցայ ՚ի բուն սիրելւոյ իմոյ:  
Ասանկ երկինքը մտեցաւ Քրիստոս. ան ատենը  
եղածն ալ Դաւիթ մարգարէն կը պատմէ: Բոլոր  
երկնային զորուծիւնք իրար անցան, երբոր ա-  
սան Քրիստոսի անանկ յաղթանակաւ՝ ամեն ար-  
գարները մէկտեղ առած՝ գալը: Իրաւ՝ հրէշտակ-  
ները գիտէին մարդեղուծեանն խորհուրդը, աս-  
տուած իրենց ձեռքովը յայտներ էր անիկայ մար-  
դարէններուն, իրենք Չաքարիայի ու սուրբ Աս-  
տուածածնոյ աւետիս բերեր էին, իրենք քանի  
անգամ երկինքէն ինչեր էին Քրիստոսի ծառայե-  
լու. բայց խորհրդոյն լուծը ամեն պարզաբանե-  
րովը չէր յայտնած իրենց աստուած: Առախ եր-  
բոր տեսան Քրիստոսի փառաւորուծիւնը՝ որ ա-  
նանկ բան դեռ չէր տեսնուած երկինքը, այսինքն  
մարդ մը՝ որ միանկամայն աստուած ըլլայ, ու

յաղթական եկեղեցին իրեն հեռ, այսինքն բոլոր արգարները մէյմէկ արևու պէս Քրիստոսի չորս գին առած, ու աս ամեն բան աստուծոյ խնամտութեամբը առաջուց կարգի գրած, ան ստենը իմացան աստուծոյ իր եկեղեցւոյն վրայ բանեցուցած բազմապատիկ խմաստութիւնը, ինչպէս որ կըսէ Պօղոս առաքեալը. Զի յայտնեալի արդ իշխանութեանց և պետութեանց, որ յերկինս են, ՚ի յեռն էկեղեցոյ՝ Բաղնայապիլ իմաստութիւնն աստուծոյ: Աս որ անտան հրեշտակները՝ սկսան ձայն տալ երկնից դոնապաններուն. Համբարձէտ իշխանս գրեռնս յէր ՚ի վեր, համբարձիս արունս յանիպէնից, և Տարչ Թագաւոր փառաց: Արքայութեան յաւիտեանական գրունքը ինչուան ան ստենը մարդու մը չէր բացուած. դոնապան հրեշտակները աս հրամանը լսելով՝ զարմացան, ու հարցուցին. ո՞վ է աս փառաց թագաւորը. Ո՞վ է սա Թագաւոր փառաց: Մէկալ հրեշտակները պատասխանեցին. Ստիկայ է մեր տէրը, մենք իր զինուորներն ենք, աս է փառաց թագաւորը. Տէր գրեռնեանց, սա ինքն է Թագաւոր փառաց:

Մ Ս Ս Ն Գ.

Ասանկ յաղթանակով ասանկ փառաւորութեամբ մեր փրկիչը երկինք մտաւ՝ բոլոր արգարները հետը առած, որոնց ամեն մէկը մէյմէկ արև գարձած՝ Քրիստոսի յաղթանակն ու փառքը կաւեցընէին. Յայնժամ արդարսն ծագեցան իբրև դարեգափն յարգայտեան երկնից: Դաւիթ մարգարէն՝ որ ան ստեն ակնասես եղաւ Քրիստոսի աս փառաւորութեանը, առաջուց Հոգւով սրբով տեսած, ու արագայ պատմութիւնը Սաղմոսին մէջ ըրած էր: Հոն կը պատմէ ալ ինչ կերպով երկ-

նաւոր Հայրը զՔրիստոս ընդունեցաւ, ու իր աջ կողմը նստեցուց, ամեն թշնամիները ոտքին տակը դնելով. Ասաց արե ցար ի՞մ, նիտր ընդ ամէ ի՞մն, միւն և երից զԼինամիս քո պարտաւորսն որից քոջ: Ասով կը խոստանայ աստուած Քրիստոսի՝ որ ոչ՝ հեթանոս բանաւորները իրենց հաւածանքներովը, ոչ սատանաները իրենց ամեն ճգամբը, չկարենան սխտոր իր թագաւորութեան արգելք ըլլալ, իր եկեղեցին կործանել:

Անկէց ետքը սկսաւ հրեշտակներուն օրհնութիւնն ու սոնախմբութիւնը, որն որ նոյն մարգարէն փողերու ձայնով կը բացատրէ. Համբարձաստարած օրհնութեամբ, և արե մեր Յայնիս փառաց. ու նոյն սոնախմբութիւնը ինչուան հիմայ կը տես, ու յաւիտեան անէ սխտոր. ու աստուած հասցընելու որ ըլլայ, մենք ալ ան սոնախմբութեանը մասնակից սխտոր ըլլանք: Գիտէիք որ մեր սուրբ Լուստուրջին ամեն օր խոր վերապին մէջ եկող մխիթարող հրեշտակը՝ Համբարձման երրորդ օրը երբոր եկաւ, իմացուց իրեն՝ որ հետեւալ օրը իրեն դատուն կ'իյնար աս սոնախմբութիւնը: Խեղճ նիս որչափ ալ չհհասնի հրեշտակներուն ըրած ուրախութեանը ու հանգիսին, գիտէիք սուրբ աւետարանէն որ Քրիստոս անքն մեր կըսէ՝ որ հրեշտակները մեղաւորաց դարձին համար ուրախութիւն կրնեն երկինքը, ու գիտէիք ալ որ ինչպէս երկինքին ամեն բանը խեղճ մտքէ վեր է, իրենց հանգեցը մեր հանգեաներուն չխաղաղատու իր, բայց չենք կրնար երևակայել ինչուան որ արժանի չըլլանք մասնակից ըլլալու անոնց:

Ա. Ղ. Օ Թ. Ք

Յիսուս փրկիչ իմ, քու փառաւորութեանդ վրայ հիմնիւս հիմնայ հաւատարով կուրսխանամ, կը յուսամ որ օրմը զիս ալ արժանի ընես աչքով տեսնալու: Մեղքերս կատեմ, չէ թէ միայն քեզի գէտ ըլլալնուն համար՝ այլ նաև զիս քու փառաւորութիւնդ արքայութեան մէջ տեսնելէն զրկելնուն համար: Ինչ սոսկալի թշուառութիւն է՝ զքեզ տեսնելէն զրկուիլը. շնորք տուր ինձի՝ առանկ արդարութեամբ ու առանց մեղայ անցընելու իմ կեանքս՝ որ դամ տեսնեմ քու փառքդ, ու սիրտս կշտանայ. Ես արդարութեամբ երեւոյսցայ երեսաց քոյ, և յաբեցայց յերեւել շտաաց քոյ:

Վասն գթութեանդ քո աստուածային մարդէ զութեանդ հաւատարեցեր զմեզ մարմնայ քո և արեան՝ պատարագաւ Հոր ՚ի հաս անուշից զմարմինդ առ ՚ի մէնջ, և համբարձար լուսափայլ ամպօք. յայտնեցար իշխանութեանց և պետութեանց, որք հեացեալ հարցանէին՝ եթէ այս ո՞ր է որ զիմեալ գայ յՆգովնայ. և յեկեղեցւոյ քո ուսան զբաղմանսդ ատիկ զմաստով ինչս ըրա՞նք. քեզ էրդեցցեն եկեղեցիք սրբոց զերդս հոգևորս:

## ՄՏԱԾԱԿԱՆ Խ Բ.

Նորէն Քրիստոսի համբարձմանը վրայ:

### Մ Ա Ս Ն Ա.

Քրիստոս տէրն մեր ուղեց որ իր համբառնալու օրը ամեն առաքեալներն ու աշխարհները մէկտեղ դանուին, ու իր երկինք երթալը տեսնան. որպէս զի ցուցընէ իրենց՝ որ աս կարճ ու մահկանացու կեանքերնիս երկինքը պիտոր լըննայ, ու անոր համար մեր ամեն մտածութիւնն ու յոյսը հոն պիտոր ըլլայ: Ես անգամ իրենց աս դասը տուեր էր, բայց կարծես որ դեռ խելընին այլեկ չէր հասած. անոր համար ուղեց ետքի համառօտ ու զորաւոր դասը տալ ամեն վարդապետութենէ եւել համազօղ, այսինքն պիանասես ընել զերեւիք իր երկինք երթալուն, ուր որ զիրենք ալ հրաւիրեր էր: Աս տեսութիւնը ամեն տարակոյս վերուց մտքերնէն. ինչ որ Քրիստոս արքայութեան վրայ ըսեր էր իրենց՝ նորոգուեցաւ մտքերնուն մէջ, այսինքն արքայութիւնը իրենց բուն հայրենիքը ըլլալը, ամեն մէկուն հոն տեղ պատարաստուած ըլլալը, իր անոնցմէ առաջ հոն երթալը, օրմը զիրենք ալ հոն ընդունելը, ու անոր

Համար իրենց երկրիս վրայ պանդուխտի պէս ան-  
ցաւորաբար կենալը: Աս ամեն բան յիշեցին, ու  
անանկ խեղճին հասաւ՝ որ անկէ ետքը աչւնին  
երկինք էր, ուր որ Քրիստոս իրենց գրաւականը  
աչւնուն առջին համբարձաւ:

Աս ամեն դատը մեզի համար ալ է, մեր աչքն  
ալ երկինքը պիտոր ըլլայ, ուրիշ բանի ետեւ պի-  
տոր չըլլանք: Թէ որ աս ասանկ կը հաւատանք,  
հապա ինչո՞ւ մեր հաւատքին համեմատ չենք շար-  
ժիր. աս ասանկ որ կը հաւատանք, պէտք չէ որ  
երկինքէն ուրիշ բան մտածենք՝ ինչպէս առա-  
քեալը կըսէ. **Չէրին խորհեցառո՞ւ, Քի դայս որ յերեւ  
սոք է. պէտք է որ նոյն առաքելոյն պէս մեր կեն-  
ցազավարութիւնը երկինքը ըլլայ. Այլ մեր արարա-  
վարութիւն յերեւն է:** Երբ որ երկրի վրայ պանդուխ-  
տի մը պէս պիտոր կենանք, ինչպէս կրնանք եր-  
կրիս բաներուն սրտերնիս կըսցընել. պէտք է՝ որ  
աս ամեն բան երկինք չէ՞ ըսենք, ու սուրբ ան-  
զգայութեամբ մը արհամարհենք ամեն երկրաւոր  
փառք վայելք ու մեծութիւն՝ որ մեր վախճանին  
արդեւք կրնան ըլլալ:

ՄԱՍՆ Բ.

Թէ որ երկինքը ամեն բաղձանքնիս լեցուելու  
չըլլար, կրնայինք ուրիշ տեղ փնտրուել մեր եր-  
ջանիութիւնը. բայց երկինքը կատարեալ երջան-  
կութիւն է, վասն զի հոն ծայրագոյն բարին պի-  
տոր ունենանք, որ է աստուած: Անոր համար  
Քրիստոս իր աշկերտներուն նկարագրեց երկին-  
քին ինչ ըլլալը. երջանիութիւն մը յաւիտենա-  
կան՝ ամեն փոփոխութեան ազատ, փառք մը՝ որն  
որ ոչ ոք կրնայ յափշտակել իրենցմէ, լիութիւն

ամենայն բարեաց՝ որ ամեն բաղձանք կը յագեցը-  
նէ: Աս ամեն խօսքերէն ու խոստմունքներէն ա-  
նանկ ելած էր սրտերնին, որ ամպը զՔրիստոս  
ծածկէնէն ետքն ալ չէին ուզեր լեւնէն վար իջ-  
նալ, և ոչ աչւնին երկինքէն վար գարձընել, երե-  
ւակայութիւննին զմայլած՝ հոն տեղի վրայ լսած  
բաներնուն: Անոր համար ըսաւ հրեշտակը իրենց.  
**Ինչ կեցեր երկինք կը նայէք. Չէ՞ կայ հայեցեալ ընդ  
երկինս:**

Մենք ալ գիտենք հաւատքով աս բաները, մենք  
ալ կը յուսանք աս բաներուն. հապա ինչո՞ւ մենք  
ալ Քրիստոսի աշակերտացը պէս չենք զմայլիք ան  
բաներուն. ինչո՞ւ երկրաւոր բաներու սրտերնիս  
կը յօժարի: Անոնց պէտք եղաւ որ հրեշտակներ  
երկինքէն իջնան, ու գրեթէ բռնի աչւնին վար  
գարձընել ասն, ուր որ դեռ ընելք ունէին՝ եր-  
կինք չելած. հրեշտակները անոնց ըսին՝ **Չէ՞ կայ  
հայեցեալ ընդ երկինս.** Իսկ մեզի հակառակը կըսեն՝  
ինչո՞ւ աչւնիդ երկրաւոր ընդունայն բաներու  
վրայ է, երկինք նայեցէք՝ ուր որ ձեր երջանկու-  
թիւնն է: Ո՞ւր էր որ մեր խեղքը միտքն ալ երկինք  
ըլլար, ու բռնի միայն աչւնիս երկիր գարձընէնք:

ՄԱՍՆ Գ.

Մեր վախճանը երկինք ըլլալը, ու հոն մեզի հա-  
մար պատրաստուած երջանիութիւնը ցուցընե-  
լէն ետքը, կը մտար որ Քրիստոս ցուցընէր մեզի՝  
ինչ ճամբով հոն կրնանք հասնիլ: Անոր համար  
Ձիթենեաց լեւնէն երկինք ելաւ, ան լեւնէն՝ ուր  
որ իր չարչարանքը սկսեր էր. ուր որ արեւն թա-  
փելով՝ կենանքը տալով ստացաւ երկինքը. վէքե-  
րուն սպիքն ալ կը ցուցընէին ինչ կերպով իր

յաղթանակը վաստըկեր էր: Ասով մեզի սորվեցուց ինչ կերպով մենք ալ երկինքը պիտոր վաստըկինք, ուրիշ ճամբայ չեկայ երկինք ելլելու: Ո՞վ կրնայ ասկէջ ետքը յուսալ ուրիշ կերպով երկինքը ստանալու, երբոր Քրիստոս չարչարանօք ու մահուամբ երկինք ելաւ, ո՞վ կրնայ արանջալ գրած օրէնքին վրայ՝ որ մենք ալ նոյն կերպով ելլենք: Բայց ինչ է մեր քաջած չարչարանքը. թէ որ իրեն պէս չենք մեռնիր խաչին վրայ, գոնէ մարմինն իսաչենք՝ իր անկարգ յօժարութիւնները մեռցնելով, Պօղոս առաքեալին ըսածին պէս. Որ քրիստոսեանքն էն՝ պարսիս իւրեանց՝ է խալ հանին կարեօքն եւ ցանխուժեամբք հանդերձ: Երանի՛ մեզի, թէ որ գոնէ աս կերպով խաչակից ըլլանք մեր փրկչին. Ինչ ուրախութիւն պիտոր ունենանք երկինքը, ինչ օրհնենք պիտոր տանք իրեն՝ որ մեր առջևէն երթալով մեզի ճամբայ ցուցուց՝ այն յաւիտենական երջանկութեանը հասնելու:

Ա. Գ. Օ Թ. Բ

Յիսուս փրկիչ իմ, ես ո՞վ եմ որ քու փառացի մասնակից պիտոր ընես զիս, ու քեզի հետ թաղաւորել պիտոր տաս երկինքը, քու առատութիւնդ խեղճե մաքէ վեր բան է, գուն միայն կըրնայիր ընել ասանկ խոսամունք՝ մեզի պէս սիրմե՛լի մարդկանց: Բայց հոս է իմ ամաչելու ապերախութիւնս, որ ասանկ երջանկութիւն մեզի խոսամոյակդ ետքը, դեռ սիրաս բոլորովին երկինքը չէ, դեռ երկրաւոր ընդունայն բաներու հետ է. իրաւցընէ ես ալ արժանի եմ յանդիմանութեանդ՝ որ մարդարէին բերնովը ըրիր ՈՐԴԷ՛ Ժորդան, մե՛ն յերբ էք խոսասիրտք, ընդէր սիւնէ՛ անն:

բաւիւն եւ ինքրէք դպրութիւն: Քու շորքդ միայն կրնայ ընել՝ որ սիրաս բոլորովին փրցընեմ աշխրբքիս խաբեբայ բարիքներէն, ու երկինքը միայն բաղձամ, ու հոն հասնելու ճամբէն չխոտորիմ՝ խաչը կանակս ետեւէդ դամ:

Ի խաչ ելեր բանդ աստուած, մարմնացեալդ ՚ի կուռնիս կամաւ Հօր և Հոգւոյն, ՚ի փրկութիւն ազգի մարդկան: Ի դերեզմանի եզար անապական, զի զմեռելութիւնս մեր բարձեր, զգերեալն փրկեցեր ՚ի ձեռաց մահու: Եւ յերրորդ աւուր յարեար աստուածապէս, ՚ի յերկինս համբարձար, ընդ աջմէ Հօր նստար, փառաւորեալդ ՚ի հրեշտակաց, և երկրպագեալդ ՚ի սերովքեկից:

# ՄՏԱԾԱԿԱՆ ԽԳ.

Հոգեգայտական տոնիկ վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Հոգին սուրբ հրեղէն լեզուի ձևով ինչպէս առաքելոց վրայ, ցուցնելով՝ որ իրենց աշխարհ դարձնելու զէնքը պիտոր ըլլար լեզունին, ու լեզուն հրեղէն ըլլալն ալ կը ցուցնէր՝ որ իրենց քարոզութեամբ լուսաւորուէր պիտոր մարդկանց միտքը, ու սրտերնին վառէր պիտոր աստուածային սիրով: Ամենէն առաջ իրենց վրայ եղաւ Հոգւոյն սրբոյ այս ներգործութիւնը. առաջուց չեկրցան ըմբռնել յայտնի ճշմարտութիւններն՝ որ Քրիստոս տէրն մեր իրենց կը բացատրէր, ու Հոգին սուրբ ընդունածնուն պէս՝ մտքերնին անանկ լուսաւորուեցաւ, որ բոլոր սուրբ գրոց խօսքերն ալ՝ անոնց միտքն ալ հաւատքի խորհորդներն ալ հասկըցան: Սրտերնուն փոփոխութիւնն ալ անկէց պակաս չեղաւ. ինչուան Քրիստոսի մահւոյնէն քիչ մը առաջ կը վիճէին՝ որ իր մեռնելէն ետքը իրենցմէ ո՞վ մեծ պիտոր ըլլար իրենց վարդապետը բռնուածին պէս՝ Թորոցին զինքն ու ցրուեցան. յարութենէն ետքն ալ իբրև

Թէ Քրիստոս իրենց ամենևին բան մը հրամանաւ չըլլար ընելու, նորէն իրենց նաւերը՝ ցանցերը՝ ուսկանները՝ ու իրենց ձկնորսութեան արուեստը ձեռք առին: Իսկ Հոգին սուրբ ընդունածնուն պէս, ամեն վախ՝ ամեն կիրք մէկդի գրին, մէկէն արիացան՝ աստուծոյ սիրովը վառուեցան, ուրիշ բանի չէին բաղձար՝ բայց աստուծոյ համար կեանքերնին տալու: Ոչ ասեմ պէտք եղաւ, ոչ ուսում, մէկէն ամեն լեզու գիտցան, մէկէն ճարտասան եղան, մէկէն գիտուն եղան, մէկէն փիլիսոփայ եղան: Գրեթէ մտածել չեկրցօ՛ւ կրթութիւն չունօղ ձկնորսները, կրթուած մարդիկ եղան, վե՛մ մտածմունք, ազնուական զգացմունք ունեցան, բոլորովին ուրիշ մարդիկ եղան: Մեծ են աս փոփոխութիւնները՝ դրսուանց երևնալ նուն համար. բայց ասոնցմէ պղտիկ չեն այն հոգևոր փոփոխմունքներն որ միշտ հաւատացեցնող սրտին մէջ Հոգին սուրբ կը ներգործէ՝ երբոր պատրաստ կը գտնայ սրտերնին, երբոր իրեն չընորհացը արգելք չեն գներ: Ուստի երբոր սուրբ խորհուրդները ընդունելով վրանիս փոփոխութիւն մը չէնք տեսներ, միշտ նոյն կիրքերը՝ նոյն պակասութիւնները կը տեսնենք, ըսել է որ Հոգւոյն սրբոյ ներգործութեանը արգելք մը կայ սրտերնուս մէջ, ըսել է որ իր շնորհացը գէ՛մ կը գնենք:

## ՄԱՍՆ Բ.

Թորովուրդը դրսէն երեցած բաներուն վրայ զարմանալով սկսան իրարու ըսել. Ատոնք մեր շանչցած տգէտ ու անկիրթ գալիւղացիները չէն. Ո՛ր սաստիկ ամենեքեան սոգս որ խօսիս՝ գաւիւղացիք էն: Զարմանքնին իրաւացի էր, հրաշքը յայտնի ու



չկառած հրաշք բայց ինչո՞ւ չըսին. Ատոնք մեր ճանչցած վատկոտ մարդիկները չէն որ իրենց վարդապետը Թողըցին փախան. հիմայ մէկէն ինչ եղաւ իրենց՝ որ սասնկ սիրտ առած զինքը կը քարոզեն կոր: Ասանկ է. հոգևոր փոփոխութեան միա զնօզները խիստ քիչ են. կը տեսնեն որ մէկը իր վարքը կը փոխէ, չեն ըսեր որ Հոգւոյն սրբոյ շնորքն է. շատ շատ՝ ինչ եղաւ առ մարդուն կը տեսն, ինչ կը նշանակէ առ փոփոխութիւնը. Զքնը չափոյի այս լինել: Ետտերն ալ կը ծաղրեն, ըսելով. Խեղքին ո՞վ զիտէ ինչ փչեր է. Ե- Ինչոյն ընդ խառ աբիէալ, սսէին՝ Եկէ Խաչոյ-աւելոյ Իջէ: Իայց ինչպէս որ ան ասենը Պետրոս առաքեալը իրենց ինչպէցոց՝ որ ըրած արամբանուութիւննին ծուռ էր, ու ծաղրածութիւննին անիրաւ, ու սուրբ գիրքին ցուցոց՝ որ Հոգւոյն սրբոյ զօրութիւնն էր անսածնին, սասնկ ալ հիմակուան սարակուսողները ու ծաղր ընօղները պէտք է խմանան՝ որ Հոգւոյն սրբոյ զօրութիւնը իրենց անխեղութիւն երևնալը՝ սուրբ գիրքը ըսած է. Զի շուտար մարդ ու ընդունի ու Հոգւոյն արարածոյ, ու յիմարտութեան է նմա:

Մ Ա Ս Ն Գ.

Հոգւոյն սրբոյ աս շնորքները ընդունեն իսկ՝ Քրիստոսի չարչարանացը ու մահուանը պառուշն է, ինքը երբոր երկինք ելաւ փառաւորուեցաւ՝ իրկեց մեզի Հոգին սուրբ, ինչպէս աւետարանիքը կրէ. Չե էր Հոգի, Խնուի Յիսուս լն էր Խառառու ընաւ. ու ինչպէս ինքը խոստացեր էր առաքելոց. Առաւելոյն ու Հայր, և այլ Բիւրեղի պարէ յեւ, ու ընդ յեւ Բիւրեղի ՚ի յաւիտեան, ու Հոգին ճմարարութեան: Աս աղաչանքը ոչ էրբէք կը դազրի ընելէն, ու անոյն

է որ Հայրն երկնաւոր միշտ պատրաստ է տալու մեզի իր սուրբ Հոգին, Թէ որ արդէլք չիդնենք տալուն: Աս սուրբ Հոգին է որ սուրբ եկեղեցւոյ մէջ միշտ բնակելով, միշտ ճմարտութիւն վարդապետել կուտայ իրեն՝ առանց սխալելու. իսկ մեզի շնորք կուտայ հնազանդելու սուրբ եկեղեցւոյ ըրած վարդապետութեանը: Ինքը սորվեցուց առաքելոց մեր սուրբ հաւատքին ամեն ճմարտութիւնները, իրենք ալ սուրբ եկեղեցւոյ, սուրբ եկեղեցին ալ մեզի կը սորվեցնեն. ասով է որ մեր հաւատքը աստուածային է, վասն զի Հոգին սուրբ սորվեցուցեր է մեզի. ու սորվեցուցածը՝ չէ Թէ իրենն է միայն, այլ և Հօր և Արդւոյ, ինչպէս ինքն Քրիստոս բացատրէց առաքելոցը. Ու Եկէ յանիէ Իւլ Խօսիցի, այլ Կր Եկի՝ Խօսիցի... յի՞մէ անպիտանառաւ և պապեացի յեւ. Կամեւայն Իւլ Կր Կր Կր Հայր՝ Իմ է, վասն այնորի յառի յեւ Եկ յի՞մէ աստուառաւ և պապեացի յեւ: Ասանկ հաւատքի մը մէջ վերածներ է զմեզ Հոգին սուրբ, ու ինքն է որ նոյն հաւատքին մէջ կը պահէ զմեզ: Եոյն հաւատքովն է որ զինքը կը ճանչնանք ճմարտի աստուած, ու իր մէն կընդունինք մեր փրկութեանը համար հարկուոր եղած ամեն շնորքները: Վասն զի ինչպէս Պօղոս առաքեալը կրէ, և ոչ քեր կրնանք ըսել Քրիստոսի՝ առանց Հոգւոյն սրբոյ շնորհացը. Ու ոչ Խաչի ասել քեր ու Յիսուս, Եկէ ու Հոգւոյն սրբոյ:

Ա Ղ Օ Թ Վ

Յիսուս փրկիչ իմ, շնորհակալ եմ որ բու սուրբ Հոգիդ ինչպէս որ խոստացար՝ անանկ ալ տուիր մեզի. հերիք չեսպէցիր բու մեզի հետ ըլլալը սուրբ հաղորդութեան խորհրդով, Ե- անկ էս ընդ յեւ եմ Բիւրեղի ՚ի յապարտած աւխարհի ըսելով, այլ

նակ քու սուրբ Հոգիդ ուղեցիր որ զմեզ մտիթա-  
րելու՝ մեզի օգնելու համար՝ մեզի հետ բնակի  
միշտ. Աղաւեջիդ զՀայր, և այլ մոխրաբէլ քաջէ յեւ, զի  
ընդ յեւ բնակեցի յառիպեան: Մի զբզկեր զես իրմէն,  
մի հաներ ինձմէ քու սուրբ Հոգիդ. Մի ընկենոր  
զիս քեզ յերեսաց քոյ, և զՀոգի քո սուրբ մի հանէր յի-  
նէն: Որպէս զի իր շնորքովը փրկուածեան հասնիմ,  
ու զինքը երկնաւոր Հօրդ ու քեզի հետ օրհնեմ  
յաւիտեան:

Բացեր տէր այսօր զգանձդ երկնային և բաշխե-  
ցեր առատապէս պարգևս աղքատ բնութեանս:

## ՄՏԱԾԱԿԱՆ ԽԳ.

Նորէն Հոգեգայտեալն տօնին վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Անն արարած՝ աստուծոյ կատարելութիւն-  
ները կը պատմէ, ու ամեն մէկ արարած՝ աստու-  
ծոյ մէյմէկ բարեբարութիւնն է մեզի, որոնց հա-  
մար պարտեալն ենք իրեն գոհութիւն տալու, ու  
անոնցմով յորդորուելու զինքը սիրել: Բայց ա-  
նոնց ամենուն ձայնն ալ հերիք չեղաւ մեր սիրտը  
չարթելու, և ոչ ուրիշ բան մը կրնար աստուծոյ  
սէրը մեր սրտին մէջը վառել. աստուած իր սուրբ  
Հոգին, որ իսկապէս ու գոյացապէս աստուծոյ  
սէրն է, խրկեց մեզի: Ու ցուցնելով որ սիր-  
տերնիս իր սիրովը վառելու համար էր Հոգին  
սուրբ խրկելը, բոցի ձևով խրկեց առաքեալնե-  
րուն վրայ. Զի սէրն սսսսսսս սսսսս է ՚ի սիրտ մեր  
ի յեռն Հոգոյն սրբոյ, որ սսսսս մեր: Բայց հոն վեր-  
նատան մէջը միայն չենջաւ Հոգին սուրբ, այլ ամեն  
անգամ որ սուրբ խորհուրդները կընդունինք՝  
Քրիստոսի արդեամբքը մեր վրայ ալ կիջնայ: Ու  
իջնալու նշանն է՝ աստուծոյ սէրը սիրտերնուս  
մէջ վառուիլը. վասն զի Հոգին սուրբ ընդունելը

ու զաստուած սիրելը նոյն բանն է, որչափ որ Հոգւոյն սրբոյ շնորքը կ'ընդունինք՝ պէտք է որ այնչափ աւելի սիրենք զաստուած: Ի՞նչ կըսեմ որչափ: Հոգւոյն սրբոյ շնորքը չափ չունի. Զի ու է-  
 Են է արդէն ասի աստուածը զՀոգւոյն. ուրեմն մենք ալ զաստուած չափով չհպարտ սիրենք: Վասն զի որչափ ալ սիրենք զինքը, դեռ աւելի սիրոյ ար-  
 Ժանի է՝ իր ամեն կերպ կատարելութեանցը ու մեզի ըրած անչափ բարերարութեանցը համար:

### ՄԱՍՆ Բ.

Աստուծոյ սէրը ինչ բաղձանքներ չիվառեր մարդու սրտին մէջ. ինչ զոհեր ընել չիտար. ինչ բարձր մտածութիւններ միտքը չիձգեր: Հոգւոյն սրբոյ առաքելոց վրայ իջնալուան առջև ներգործութիւնը եղաւ՝ մայրեւել իրենց սիրաւ, անանկ որ՝ սրտերնուն մէջ չիմնաց զգացում մը որ աստուծմէ կամ աստուծոյ համար չըլլայ: Վասն զի աղէկ հասկըցան որ սիրտ մը այնչափ կը պակ-  
 սի զաստուած սիրելէն, որչափ որ աստուծոյ հետ ուրիշ բան ալ կը սիրէ՝ թէ որ աստուծոյ համար չիսիրէ ան բանը: Սիրտ մը որչափ որ ազատ է ուրիշ բան սիրելէն, այնչափ աւելի աստուծոյ սիրովը կը բորբոքի: Առաքելները վերնատունէն զուրս ելած աստուծոյն ինչ դարձեր էին, բոլորովին աստուծոյ սիրովը վառուած, ուրիշ մարդիկ եղած, անանկ որ՝ ատենդներէն ոմանք գինովցած կարծեցին զիրենք: Շատ սուրբերու վրայ ալ էրե-  
 ցաւ աս շնորքը. ինչ որ զգայական սէրը աստուծի ու կարգէ զուրս բաներ ընել տուած է մարդուն, չի կրնար և ոչ բաղդատուիլ աստուծոյ սիրոյն ընել տուածին հետ. եղան սուրբեր՝ որ իրենցմէ

զուրս կելլէին, զգացողութիւննին ալ կը կորսն-  
 ցընէին՝ աստուծոյ սիրոյն աստուծութենէն: Ի՞նչ պէտք կըլլայ ուրեմն որ մեր սիրաւ ասանկ պաղ ու անղբայ է աստուծոյ սիրոյն. մեր սիրան ալ անոնց սրտին պէս ստեղծուած չէ՞, ընդունակ զաստուած սիրելու. ինչո՞ւ աստուծոյ վրայ բան մը որ կը լսենք՝ սիրտերնիս չիշարժիր. ինչո՞ւ աս-  
 տուծոյ վերաբերեալ բաներուն չենք վաղեր, ա-  
 ղովքի, հոգւոր ընթերցման, քարոզի, ողորմու-  
 թեան գործքերու: Այնթ կը սեպենք մեզի ը-  
 րիք մը ընտելերուն՝ մեզի սէր ցուցնողներուն՝  
 մեր փոխադարձ սէրը չիցուցնել, երախտագէտ չըլլալ. որոնց որ ալ բարերարութիւն մը ըրեր ենք ու իրենց սէրը մեզի չեն ցուցնէր, ինչ անղբայ՝  
 ինչ ապրեախտ մարդիկ են կըսենք: Իսկ աստուած որ մեզի այսչափ բարերարութիւն ըրեր է ու կը-  
 նէ, անոր սիրոյն անղբայ ըլլալիս՝ ամթ չենք սե-  
 պեր: Գիտենք որ ինքն է մեր հայրը, մեր ստեղ-  
 ծօղը, մեր փրկիչը, զմեզ ամեն օր՝ ամեն վայրկեան պահպանօղը, ու աս անունները մեր սիրաւ չեն շարժեր, մեր սիրաւ իր սիրովը չեն բորբոքեր. ին-  
 չո՞ւ, վասն զի սրտերնիս ուրիշ բաներու յարում ունի, իրեն քիչ տեղ մնացած է սրտերնուս մէջ:

### ՄԱՍՆ Գ.

Աստուծոյ մեր վրայ ունեցած սէրը աղէկ ճանչ-  
 նալու համար, հէրիք է մտածելը՝ որ աստուած, չէ թէ միայն իր միածին որդին չիմնայեց զմեզ փրկելու համար, այլ նաև իր սուրբ Հոգին տուաւ ու կուտայ մեզի. ու սուրբ Հոգին տալով՝ զինքն ալ կուտայ: Ասանկ է աստուծոյ մեր վրայ ունե-  
 ցած սէրը, մեզի պէս ողորմելի արարածներուն

վրայ. մեր բարւոյն համար՝ բանի մը չիմնայեր: Գժուարին տրամաբանութիւն պէտք չէ ճանչնալ լու համար՝ որ ինչ կերպ պիտոր ըլլայ մեր փոխադարձ սէրը առ աստուած, ու ինչպէս պարարկան ենք զինքը սիրելու: Աստուած զմեզ սըրտանց միայն չիսիրեց, այլ և գործով. սրտանց սիրելուն համար՝ իր սէրը անդորձ չեղաւ, այլ մեծամեծ ու խելքէ մաքէ վեր գործքերով յայտնեց զայն: Ուրեմն թէ որ մենք ալ զինքը սրտանց կը սիրենք՝ բան մը պիտոր չիմնայենք իրմէն, իրեն ծառայելու ու հաճոյ ըլլալու համար՝ ամեն ուրիշ բան պիտոր զոհենք: Վասն զի առանց աս համակերպութեանը իրեն կամացը հետ, առանց իր ամեն ուզածը ընելու, ընդունայն է զաստուած կը սիրենք ըսելնիս, պարտալ խօսք է: Սէրը աստուծոյ ամեն պատուիրանքները պահել կուտայ, ամեն գժուարութեանց կը յաղթէ՝ աստուծոյ դրած օրէնքներուն ամենէն պղտիկն ալ պահելու. Լոռի օրինաց սէր է: Սիրոյ պահսութենէն է՝ որ ամեն գժուարութիւն գիմացնիս կեղծ. կը զարմանանք՝ որ սուրբերը ինչէր ըրին աստուծոյ համար, ինչէր քաշեցին մինչև ՚ի մահ. բայց մտածելուս պէս որ կը սիրէին զաստուած, զարմանալու բան չիմնար: Հիմայ զբարեպաշտ ու առաքելի, եկեղեցականներ ու աշխարհականներ կը տեսնենք, որ աշխարհի սասանկ ապականութեանը մէջ՝ իրենց պարտքը կրնեն, սրբութեամբ իրենց կեանքը կանցընեն, ու կը զարմանանք. թէ որ աչքոյնիս չկատանայինք, չէինք կրնար հատալ: Ուսկից կուգայ աս իրենց եռանդը, աս իրենց յարատեւութիւնը. յայտնի է որ զաստուած սիրելէն: Իրենց ըրածին վրայ զարմանալու տեղը, պէտք էր զարմանայինք՝ թէ որ զաստուած սիրելէն ետքը աս գործքերը չընէին: Ասկէց պիտոր իմանանք որ մենք զմեզ կը խաբենք՝ զաստուած կը սիրենք ըս.

լով. վասն զի երբոր ՚ի սիրոյ առաջ եկած գործքերը չունինք, ինչպէս կրնանք ըսել որ կը սիրենք զաստուած: Ետ ապէտք է խոնարհինք՝ աս բանը մտածելով, շատ ալ պէտք է վախնանք. վասն զի առանց սիրելու զաստուած, չենք կրնար իրմէն սիրուիլ. ու Աստուած մէ որ չիսիրուինք, ամենէն մեծ խելճութեան մէջն ենք:

ԱՂՕԹԻ

Ո՛վ սուրբ Հոգի, անսպառ աղբիւր սիրոյ՝ որով հրեշտակներն ու արգարհները միշտ վառեալ կը բորբոքին, իմ սիրտս ալ վառէ աս բոցովը: Թէ որ քոյ գանաս իմ սիրաս, բայց քու շնորբիդ ուժովը՝ որուն գէմ արգելք չիգիմանար: Առաքելոց վրայ ըրած փոփոխութիւնդ իմ վրաս ալ ըրենոյն սէրը, նոյն հաստատութիւնը, նոյն գործունէութիւնը, նոյն ուժը ինծի ալ տուր. զանոնք մինչև ՚ի մահ աս մը չիկրցաւ բաժնել ՚ի սիրոյն Գրիտոսի, նոյն յարատեւութիւնը ինծի ալ տուր՝ որ բոլորովին քուկդ ըլլամ, բոլորովին քեզի հետ կապուիմ անլուծանելի սիրով: Ափսոս որ ինչուան հիմայ սիրաս բոլորովին քեզի չեմ տուեր, ու կեսը ուղեղով ալ՝ բոլորովին զսկուեր եմ ՚ի քո սիրոյդ: Անարժան եմ քու շնորբիդ՝ քու այնչափ շնորբներուդ ապերախս ըլլալով, ու զեռ աստուծոյ սէրը սորված չըլլալով. աս որ սորված ըլլայի, ամեն բան սորված կըլլայի: Մի նայիր իմ անարժանութեանս, տուր ինծի քու շնորբդ, սորվեցոր ինծի զաստուած սիրելը, ասկէց ետքը աս սէրը միայն առաջնորդէ ինծի, ու քու սէրդ սրտիս մէջը վառեալ մնայ անչիմանելի:

Հոգի աստուծոյ աստուած Ճմարիտ, որ իջեր  
'ի Յորդանան և 'ի վերնատունն, և լուսաւորեցեր  
զիս մկրտութեամբ սուրբ աւազանին, մեղայ յեր-  
կինս և առաջի քո, մտքրեա զիս վերստին աս-  
տուածային հրով քով որպէս հրեղէն լեզուօք  
զառաքեալն, և ողորմեա քո արարածոցս և ինձ  
բազմամեղիս:

ՄՏԱԾԱԿԱՆ ԽԵ.

Տապալակիկե տօնիկե վրայ:

ՄԱՍՆ Ա.

Աստուած Մովսէս մարգարէին հրամայեց՝ որ  
տապանակ մը շինէ, անոր մէջը իր տասը պատուի-  
րանաց տախտակները ու մանանային սափորը  
պահելու համար: Սուրբ Գիւրջը տեղնիտեղօքը կը  
պատմէ՝ ինչ մեծ խնամքով տպուկորէց աստուած  
Մովսէսի՝ անոր նիւթն ու ձեւը, ներսէն ու դրսէն  
ոսկւով պատելը, վրան դնելու Քերոբէկից ոսկիէ  
արձանները, ու անիկայ պահօղ պաշտօնէկից բազ-  
մութիւնն ու սրբութիւնը: Պօղոս առաքեալն ալ  
մեծ յարգանք կը նկարագրէ զանիկայ, ինչպէս  
քերոբէներուն արձանները թւերովն կը ծած-  
կէին զանիկայ, ցուցնելու համար՝ հրեշտակնե-  
րուն յարգութիւնը անոր մէջ պահուած բանե-  
րուն: Վասն զի մանանայն՝ Քրիստոսի սուրբ  
մարմնոյն օրինակն էր, ու պատուիրանաց տախ-  
տակներն ալ սուրբ էկեղեցւոյ վարդապետու-  
թիւնը կը ցուցնէր, երկուքն ալ մեր յաւիտե-  
նական փրկութեանը հարկաւոր բաներ: Այսչափ  
աստուծոյ խնամքը ու խրայեւացւոց յարգու-

Թիւնն որ ունէին տապանակին, ուրիշ բանի համար չէր, բայց միայն օրինակ ըլլալուն այն ճշմարտութեանը՝ որ մենք հիմայ մեր եկեղեցեաց մէջ կը պաշտենք, ու անոնցմով աստուծոյ ամեն շնորք կընդունինք:

ՄԱՍՆ Բ.

Հիմայ մտածենք որ՝ եթէ խորայեւացիք այնչափ կը յարգէին տապանակը, ու աստուած ալ կուզէր որ յարգէին, ինչուան պատժեց ալ Ողած՝ համարձակելուն համար անոր ձեռք զբացրնելու, հապա աստուած մեզմէն ինչ յարգութիւն ու պաշտօն կը պահանջէ մեր եկեղեցեացը՝ որոնց մէջ չէ թէ սուրբ հաղորդութեան օրինակը, այլ նոյն ինքն Քրիստոսն է: Անոր համար երբոր Հրեաները մանանային համար պարծենալով՝ ըսին Քրիստոսի, որ Մովսէս մեզի հրաշքով երկինքէն մանանայ ինչեցուց, հապա դուն ինչ հրաշք պետոր ընես, Չին նշանս առնիցես, պատասխանեց Քրիստոս. Մովսէս ձեզի իմ օրինակս ինչեցուց երկինքէն, բայց իմ Հայրս՝ զիս պիտոր սոյ ձեզի, Մովսէսի տուած հացին ճշմարտաւ. Այլ Հայր իմ քառքէ թեւ զհաց յերկից զճամբիս:

Աս հացն է, այսինքն Քրիստոս. որ մեզի համար սուրբ սեղանին վրայ պատրաստ կեցած է միշտ, որն որ ամեն ատեն՝ ամեն օր կրնանք վայելել. աս հացն է, որ առաքեալները խնդրեցին ի Քրիստոսն՝ ըսելով. Տէր, յամենայն ժամ քառք մեր զհացն զայն: Աս հացն է, որուն համար ըսաւ Քրիստոս. Ով որ աս հացէն կուտէ, յաւիտենական վերկութեան կը հասնի. Սէն որ քառքէն ի հացէ յայսմանէ, քերքէ յաւիտեան:

ՄԱՍՆ Գ.

Ո՞ր կը մնայ հիմայ տապանակը, որուն համար աստուած այնչափ պատիւ ու յարգութիւն պահանջեց խորայեւացիներէն. ինչ մեծ յանցանք կըլլայ մերը, թէ որ ամենայն յարգութեամբ ու մեծարանօք չիկենանք մեր եկեղեցեաց մէջ, թէ որ եկեղեցիները խօսակցելու ու իրարու հետ տեսնուելու տեղ ընենք. հաւատքի պակասութենէ առաջ կուգան աս բաները: Աս խորհրդով սահմանած է տապանակին տօնը, որն որ Քրիստոսի այլակերպութեանը տօնն անմիջապէս առաջ կը կատարենք: Առաքեալները Քրիստոսի մարդկային կերպարանք կը տեսնէին, ու հաւատքով միայն կը ճանչնային իր աստուածութիւնը. աս իրենց հաւատքը արծարծելու համար Քրիստոս ատեն մեր իր փառքը յուցուց իրենց՝ Թաբօր լեռան վրայ իր պայծառակերպութեամբը, ու իր աստուածութեանը վկայ կոչելով Մովսէսն ու Եղիս: Ասիկայ իրեն հետ եղած իրեք առաքելոցը համար միայն չէր, այլ անոնց վկայելով՝ ամեն ուրիշ առաքելոց, ու մեր ամենուս հաւատքը հաստատելու համար, որ սուրբ հաղորդութեան մէջ զինքը ծածկուած տեսնելով՝ հաւատքին չետկարանայ, հաստատուն հաւատով ու ջերմեանով թեամբ իր աստուածութիւնը ճանչնանք, ու պաշտենք եկեղեցեաց մէջ:

Ա. Դ. Օ Թ Գ

Ներքէ ինծի, տէր իմ, որ ինչուան հիմայ նիւթական կերպով, սովորութեան պէս մտեր եմ եկեղեցիները, թմրած հաւատքով: Բաց իմ միտքս՝

որ ասիէ ետքը ճանչնալով մանեմ քու տունդ, հա-  
ւատքով երկրպագութիւն ընեմ հոն. սիրաս ալ  
քու սիրովդ վառէ, որպէս զի ջերմեւանդու-  
թեամբ ընդունիմ հոն ինձի համար պատրաս-  
տած սուրբ խորհուրդներդ:

Խորան սրբութեան կանգնեցաւ սուրբ եկեղե-  
ցի, և Քրիստոս թագաւորն 'ի սմա պատարա-  
դեալ, եկոյք հաւատացեալք, երգեսցուք Քրիս-  
տոսի երգ նոր:

Սրբուհի մարիամ, սափոր ոսկի և տապանակ  
կտակարանաց. որ զ'ի վերուստ հացն կենաց  
պարգևեցեր քաղցեալ բնութեանս. առ նա միշտ  
բարեխօսեա վասն քաւութեան մեզաց մերոց:

Ուրախ լեր սափոր ոսկի երկնային հացին, որ  
ղաւ 'ի վերուստ իջեալ զմանանայն կենաց' նորոյս  
պարգևեալ կերակուր Խորայելի:

### Մ Տ Ա. Ծ Ա. Կ Ա. Ն Խ Զ.

Քրիստոսի պայծառակերպութեանը վրայ:

### Մ Ա. Ս Ն Ա.

Քրիստոս տասուերկու առաքեալներէն իրեքը  
հետը առած՝ բարձր լեռան մը վրայ ելաւ աղօթք  
ընելու. աւանդութեամբ զիտենք ան լեռանը թա-  
բոր լեռը ըլլալը: Հոն ալ Քրիստոսի պարտիզին  
մէջ ըրածնուն պէս՝ առաքեալները քուն եղան  
Քրիստոսի աղօթք ընելու ատենը: Քրիստոս ի-  
րենց համար աղօթք կընէր, իրենց քուն կըլլային.  
մենք ալ նոյն բանը ըրած կըլլանք ամեն անգամ որ  
աղօթքի ծուլութիւն կընենք. վասն զի հիմայ ալ  
Քրիստոս մեզի համար աղօթելու հետ է. Քրիստոս  
Յիսուս որ մեռան, մանասանդ թէ յարսեալ ինչ է, և  
է ընդ աջէ աստուծոյ, որ և բարեխօս ինչ է վասն մեր:  
Քրիստոս տէրն մեր իր երկնաւոր հօր քովը կե-  
ցած շարունակ կը ցուցունէ իրեն՝ մեզի համար  
առած վերքերը, ու մեզի համար բարեխօս կըլլայ,  
իսկ մենք թմրած կը կենանք, իրեն հետ աղօթք  
չենք ընէր:

Առաքեալները յանկարծ քուններէն արթն-  
ցան, տեսան որ Քրիստոսի գէմքն ու բոլոր կեր-

պարանքը փոխուեր ու փառաւորուեր էր, երկու հոգի ալ հետը կը խօսէին: Քրիստոս իր աստուածային մարմնոյն փառացը մէկ պղտի ճառագայթը ուղեց զուրնէն անոնց՝ որ թիչ առեռնէն իր չարչարանքն ու նախատալից մահը պիտոր տեսնէին. բայց այն պղտի ճառագայթը մարդկային երեւակայութենէ անանկ վեր բան էր, որ իրեք աւետարանիչն ալ ուրիշ կերպ չիկրնալով բացատրէ՝ Քրիստոսի դէմքը արև գարձեր էր կըսեն, զգեստներն ալ լյս: Բայց ինչ կերպ բան ըլլալը անկէց կիմացուի՝ որ առաքեալները զմայլած՝ իրենցմէ դուրս ելած՝ այն լեռնէն վար իջնալ չէին ուղեր, հոն կուղէին կենալ միշտ, ոչ քաղց՝ ոչ ծարաւ՝ ոչ աշխարհ կը մտածէին, ան զմայլմունքը իրենց համար ամեն բանէն վեր էր: Թէ որ Քրիստոսի փառաւորեալ մարմնոյն աւտթենէն ասանկ զմայլեցան առաքեալները, հապա թէ որ աստուծոյ տեսութեանը ճաշակը առնէր մարդս՝ թիչ կըլլար արդեօք. աշխարհիս ամեն վայելքը՝ ամեն գեղեցկութիւնները աչքին չէին երևնար, սիրտը բանի մը չէր կըպչէր, օր մը առաջ մեռնելու կը փափաքէր՝ զաստուած տեսնելու համար: Վասն զի աստուծոյ տեսութիւնը անանկ կը բովանդակէ ուրիշ ամեն զմայլմունք ու վայելք՝ ինչպէս արևը ճրագի մը լյս. ինչպէս արևուն մէջ ճրագ մը որ դնես՝ լյսը չէս եւելցըներ, ասանկ ալ ան զմայլմունք վրայ ուրիշ ինչ զմայլմունք ալ որ եւելցընես՝ բան մը չեւելնար: Վասն զի թէ որ մէկը աստուծոյ հետ ամեն արարածներն ալ ունենայ, զաստուած միայն ունեցողէն աւելի բան մը չունենար: Աստուած քանի մը մեծամեծ սուրբերու, ինչպէս Մովսէսի ու Պողոս առաքեալին, աս ճաշակը առնել տուաւ. որպէս զի անոնց վկայութեամբը մեր հաւատքը արթնցընէ, իմանանք որ աստուծոյ տեսութիւնը թիչ աւ-

սակ բան պիտոր ըլլայ, որ արդարք անովը զմայլած՝ յաւիտեան երանելի պիտոր ըլլան, ու անկէց զրկուիլը պիտոր ըլլայ մեղաւորներուն դժոխքը: Սա սուրբերը տեսածնին լաճնին ու ըզգացածնին չիկրցան բացատրել: Պողոս առաքեալը այսպէս միայն կրցաւ ըսել. Չոր ամի ու երէս, և ունի ու լուս, և ի սերս մարդոյ ու անխա, դր պարտեայ սպողոսի իրեւեայ իւրոյ: Իսկ Մովսէս աստուծոյ հետքը միայն քարի մը ծակէն տեսաւ, ու զմայլած՝ ան ալ չիկրցաւ պատմել ինչպէս բան ըլլալը: Բայց երկուքն ալ չիկրնալովն բացատրել, աւելի բացատրեցին արքայութեան թիչ ըլլալը. այս ինքն որ չէնք կրնար ըմբռնել, անանկ խեղճ մտքէ վեր բան է:

### ՄԱՍՆ Բ.

Քրիստոսի հետ երկու հոգի որ տեսան առաքեալները, թիչ կերպով զանոնք ճանչնալնին չէն ըսեր աւետարանիչները՝ բայց ճանչցան որ Մովսէս ու Եղիա էին, որոնք իրենց փառօքը հոն եկեր՝ Քրիստոսի հետ իր չարչարանացը ու մահուանը վրայ կը խօսէին: Մովսէս՝ որուն ձեռքովը աստուած հին օրէնքը տուեր էր, ու Եղիա՝ որ ամեն մարգարէներէն եւել աստուծոյ փառացը վրէժխնդիր էր: Ասոնք, որոնց վկայութեանը վրայ տարակոյտ չէր կրնար ըլլալ, եկան վկայելու Քրիստոսի աստուածութեանը. ու իր չարչարանացը ու մահուանը վրայ կը խօսէին, որպէս զի իմանան առաքեալները ու իմայրնէն ուրիշներուն ալ, որ Քրիստոսի չարչարուիլն ու մեռնիլը՝ իր աստուածութեանը փաստ մը չետալէն՝ ի դատ՝ իրեն փառքը կեւելցընէին, անովը աստանային ձեռքէն զմեզ փրկելուն համար:



Մովսէսի ու Եղիայի վկայութիւնը Հայրն երկ-  
 ւոր հաստատեց՝ լուսաւոր ամպով մը Քրիստոսի  
 վրայ իջնալով, ու ամպին մէջէն աս երկրորդ ան-  
 գամ խմայընելով՝ որ Քրիստոս իր սիրելի որդին  
 էր. Դա է որդի ի՞մ սէրէի, ընդ որ հաճեցայ: Առա-  
 քեալները աս ահաւոր ձայնն որ լսեցին, վախե-  
 րէն երեսի վրայ գետնը փռուեցան, խմայան ու  
 է եղեր իրենց վարդապետը: Յորդանան գետին  
 վրայ այսչափ միայն ըսաւ Հայրն երկնաւոր. բայց  
 հոս ետեւէն աւելցուց՝ Դժա լաւարդս. աս հրամա-  
 նը առաքեալներուն համար միայն չէր, այլ մեզի  
 համար ալ էր, ու ամեն հաւատացելոց՝ որ մինչև  
 աշխրջիս ետքը պիտոր ըլլան: Աւրեմն սուրբ ա-  
 ւետարանն որ Քրիստոսի խօսքերն են՝ աստուծոյ  
 պատգամն է, ուրեմն ինչ որ սուրբ աւետարանը  
 մեզի կը սորվեցընէ՝ պարտըհան ենք պահելու. ու-  
 րեմն աս ձայնը՝ Դժա լաւարդս՝ ականջնուս մէջ  
 միշտ պէտք է ըլլայ, որպէս զի սուրբ աւետարա-  
 նին տուած կանոնները պահենք. աւետարանը  
 չփոխուիր. իսկ առանց իր տուած կանոնները  
 պահելու ալ փրկութեան չենք կրնար հասնիլ:

Մ Ս Ս Ն Գ.

Ձայնը դադրելուն պէս՝ ամպը վերացաւ,  
 Մովսէս և Եղիա աներևոյթ եղան, Քրիստոս նո-  
 րէն իր առջի կերպարանքը առաւ, ու առաքելոց  
 քովը մտնեալով՝ մշտեց զիրենք ու ըսաւ. Ոտք  
 էէք, մի վախնաք: Գլուխնին վեր առին որ՝ Յի-  
 սուս միայն մնացեր էր իր սովորական կերպա-  
 րանքովը: Ետքը լեռնէն վար իջնալու ատեն Քրիս-  
 տոս արդէնց իրենց, որ տեսածնին ուրիշներու  
 չիպատմեն՝ ինչուան որ ինքը յարութիւն չառնէ:

Վասն զի լսողները չհաւատային պիտոր, ճշմար-  
 տութեան անարգանք պիտոր ըլլար, ու չար  
 Հրեաներուն՝ որ Քրիստոսի ամեն փառաւորու-  
 թեանը վրայ կը նախանձէին՝ պատճառ պիտոր  
 ըլլար աւելի թշնամութեան ու հալածելու զին-  
 քը: Իսկ յարութիւն առնելէն ետքը՝ երբոր Հո-  
 զին սուրբ առաքեալներուն խօսքին ուժ պիտոր  
 տար համոզելու, ու հրաշքներով ըսածնին հաս-  
 տատելու, ան ասեմը մէկ դիէն վտանգին քիչնա-  
 լը՝ մեկալ դիէն քարոզելու հարկը՝ լեզունին կար-  
 ձըկէր ամեն տեսածնին պատմելու: Անոր համար  
 Պետրոս առաքեալը Հոզին սուրբ ընդունելէն  
 ետքը՝ տեսածը բերնով պատմելէն՝ ի զատ, Աա-  
 թողիկեայց թուղթին մէջը կը գրէ, Երեսնու պատ-  
 մութիւններէ առած չէ Քրիստոսի վրայ ըսած-  
 ներս, այլ մենք ան սուրբ լեռանը վրայ աչքովիս  
 տեսանք իր փառքը, ու ականջովիս լսեցինք աս-  
 տուծոյ ձայնը. Բանդի ու էնէ պաճաճեալ ինչ առաս-  
 պէւեայ պէտք էր ինչեալ ցոյցս յէս պետան մերոյ Յիսուսի  
 Քրիստոսի զգորութիւնն և զգալապէս, այլ մեզէն եղեալ  
 ականապէս և որս մեծութեանն. քանզի ասեալ յասպու-  
 ծոյ Հօրէ պիտոս և պատիւ յեկեալ յայնպիսի Բարբառոյ  
 մեծ վայելութեան քառայն անպի՛ էնէ քա է որդի ի՞մ սէ-  
 րէի ընդ որ հաճեցայ: Եւ այս Բարբառ մէս իսկ լաւա-  
 քէնէս յերկից, որ ընդ նմս իսկ էսս ՚ի սուրբ լեռնին:  
 Յոհաննէս առաքեալն ալ գրեթէ ասով կըսկրսի  
 իր աւետարանը. Եւ պետս պիտոս նորս, պիտոս  
 իբրև պիտոսի սա՛ ՚ի Հօրէ:

Ա. Գ. Օ Թ. Բ

Յիսուս փրկիչ իմ, բոլորով սրտիւ կը հաւատամ  
 որ երկնաւոր Հօրդ միածին որդին ես, սաստիկ  
 յասպուծոյ, լոյս ՚ի լուսոյ. ու երանի կուտամ ինձի

քու աշակերտդ ըլլալու համար. բայց անունով  
միայն քու աշակերտդ կըլլամ, թէ որ քու ըսած-  
ներդ չխախտեմ: Ենթաց ասոր ինձի, որ երկնաւոր  
Հօրդ ձայնին հնազանդիմ՝ որ Քիստոսի ըսաւ,  
քեզ լսեմ. որպէս զի արժանի ըլլամ տեսնելու  
զքեզ քու անձառելի փառօքդ, չէ թէ քիչ մը ա-  
տեն, այլ յաւիտեան արքայութեան մէջ:

Ենորհեա աէր և մեզ մեղաւորացս՝ ՚ի միւսան-  
դամ քո գալստեանդ տեսանել զքեզ հայրական  
փառօք ՚ի նորոգել զսիրելէրս. լոյսդ անձառելի,  
ողորմեա:

## Մ Տ Ա Մ Ա Ա Ա Ն Խ Է .

Նորէն Քրիստոսի սրայծառակերպոյրեանը  
վրայ:

## Մ Ա Ս Ն Ա .

Աս օրուան աւետարանին խօսքերուն մէջ գի-  
տելու բաներուն մէկն ալ Պետրոս առաքեալին  
խօսքն է՝ որ կըսէ. Բարեւ է Եւ ասք լինել: Իրեք  
տարի Քրիստոսի իր աշակերտներուն սորվեցու-  
ցածն ու ըսածը ան էր որ, առանց աշխրբիս վրայ  
վիշա ու նեղութիւն քաշելու՝ անկարելի է ար-  
քայութիւն երթալ: Թաբօր լեւը ելլելու ատենն  
ալ Քրիստոս նոյն վարդապետութիւնը ըրած էր.  
Բայց Պետրոս աս ամեն խօսքերը մոռնալով կու-  
ղէր որ արքայութիւնը Թաբօր լեւնէն սկսի վայե-  
լելու, ուր որ Քրիստոս իր աստուածային փա-  
ռացը մէկ սլզի ճաշակը ուղեց տալ իր հետը ե-  
ղած իրեք առաքեալներուն: Անոր համար է որ  
սուրբ աւետարանը կըսէ Պետրոս առաքեալին  
համար՝ որ խօսածը չէր գիտեր: Եւ ու գիտէր ղին  
խօսէր:

Սուրբ աւետարանին աս խօսքը մեր վրայ ալ  
կը յարմարի, մենք ալ չենք գիտեր ուղածնիս ու

խօսածնիս, երբոր առանց նեղութիւն քաշելու՝ կուղենք արքայութիւն երթալ մաքով Քրիստոսի խօսքերուն հաւատանք ալ, բայց դործքով մեր հանգիստը միշտ կը փնտռենք. նեղութիւն մը՝ խաչ մը որ աստուած խրկէ մեզի, ծանր կուգայ, կը տրանջանք: Քրիստոս իրեն համար ալ կըսէ՝ Պարս էր Քրիստոսի լարարել և ապա հասնել ՚ի Ժառուհի, իսկ մենք մեզի պարտք չենք սեպեր նեղութիւն քաշել: Քրիստոս կըսէ՝ Նեղ և սոյնով է ճանապարհն՝ որ ասնի ՚ի կեանս, իսկ մենք լայն ճամբայ մը կը փնտրուենք արքայութիւն երթալու: Ուրեմն ըրածնիս ալ՝ խօսածնիս ալ չենք դիտեր. Եւ ու գիտեր դէն խօսեր:

### Մ Ա Ս Ն Բ.

Ո՛հ թէ որ գիտնայինք ինչ կը պտղաբերէ մեզի վիշտ քաշելը՝ խաչ կրելը, ուրիշ կեանք կանցընէինք. բայց մենք ամենքս ալ Սիմոն կիւրեճանցին կընամանինք. թէ որ գիտնար անիկայ որ Քրիստոսի խաչը կրելը՝ ետքը իրեն ինչ պիտոր պտղաբերէր, Հրեաներուն շնորհակալ ըլլալով՝ խաչը ուսը կառնէր, ինչպէս որ ետքը բոլոր կենացը մէջ աստուծոյ փառք տալէն չիզագրեցաւ՝ անանկ մեծ բախտի հանդիպելուն համար, երբոր քրիստոնէսայ եղաւ, ու իր արիւնն ալ Քրիստոսի սիրոյն համար թափեց: Իայց մեր ամեն խեղճութիւնը հաւատքի տկարութենէ կուգայ. թէ որ հասկընայինք Պօղոս առաքելալին ըսածը՝ դի ուէն արժանի լարարանք ժամանակիս հանդերձեւոյ Ժառուհի, որ յայդնեւոյ էն ՚ի Ռու, թէ որ մտածէինք որ աշխրբիս վշտացը համբերելնուս վարձքը աստուած պիտոր ըլլայ, ինչպէս որ ինքը խոստացաւ ըսելով՝ Եւ եղեւ Լուսն:

40, մենք ալ սուրբերուն ու մարտիրոսներուն պէս ամեն նեղութիւն սիրով կընդունենինք:

### Մ Ա Ս Ն Գ.

Մարգա ՚ի ծնէ կուրի մը պէս է. հասկըցոր անանկ կուրի մը որ ինչ է լոյսը, ինչ է լուսով տեսած բաներնիրս: Որչափ ալ խօսքիդ հաւատալու ըլլայ՝ որ դարմանալի բաներ են ըսածներդ, բայց չիկրնար ըմբռնել. ասանկ ենք մենք ալ երկնաւոր բաներու նկատմամբ: Թէ որ ՚ի ծնէ կոյր մը բըւրի մը վրայ կեցած՝ յանկարծ աչընները բացուէին, տեսնար երկինքը՝ արևը՝ գոյնզգոյն ծաղկըներ՝ ծով գաշա՝ ծառեր՝ թռչուններ՝ ու որչափ աչքը զուարճացրնող բաներ որ երկրիս վրայ կան, ինչ կըսէր. Ուրեմն աս է եղեր որ ինծի կըսէին, ու ես չէի հասկընար, չէի ըմբռներ, հիմայ կիմանամ՝ լոյսը ինչ բնէ է եղեր: Ասանկ պիտոր ըլլայ մեզի ալ՝ երբոր աչընիս անդին բացուի ու տեսնանք դաստուած. ասանկ պիտոր ըլլայ՝ երբոր ինչ պէս լուսով ուրիշ ամեն բան ալ կը տեսնանք, ասանկ ալ աստուծով ամեն շնորհածնիս ալ տեսնանք, չիհասկըցածնիս ալ հասկընանք: Մենք ալ ան ատենը պիտոր ըսենք. Ուրեմն աս է եղեր սուրբ հաւատքին մեզի ըսածը, կըսէր, ու մենք չէինք իմանար, չէինք ըմբռներ. ու հիացած ըլլանցած պիտոր ըսենք՝ Բարառ է Ռուսայ լինել:

Աս հիացմանը մէկ պղտի ճաշակն էր՝ որ Քրիստոս այսօր իր իրեք առաքելոցը փորձել տուաւ. անանկ որ՝ ալ ան տեղէն չուղեցին բաժնուիլ, կուղէին միշտ հոն կենալ: Արքայութիւն ինչ ըսել է, ինչ ըսել է աստուած, թէ որ կերպով մը կրնանք ըմբռնել՝ աս է՝ որ անկէց ետքը բանի մը

չիբաղձանք պիտոր, ամեն բաղձանքնիս կշտանայ  
պիտոր, ինչպէս Դաւիթ մարգարէն կըսէ՝ Յագե-  
ցայ յերեւել խառայ քոյ :

Ա Ղ Օ Թ Բ

Փառք քեզ Գրիստոս, որ աս երանութիւնը  
մեզի համար պատրաստեր էս, փառք քեզ ալ որ՝  
մեր յոյսը ասանկ ականատես ու փորձը առնող  
վկաներով հաստատեր էս, մեզի սիրտ տալու հա-  
մար. որպէս զի աշխրբիսնեղութիւններուն արիա-  
բար համբերելով, ու քեզի խաչակից ըլլալով,  
որ մը զքեզ քու հայրենի փառօքդ տեսնենք եր-  
կինքը :

Շնորհեա տէր և մեզ մեղաւորացս 'ի միւսան-  
գամ քո գալտեսանն տեսանել զքեզ հայրական  
փառօք 'ի նորոգել զտիեզերս, լոյսդ անձառելի  
ողորմեա :

## Մ Տ Ա Մ Ա Կ Ա Ն Խ Ը .

Սուրբ Եկեղեցոյ տօնին վրայ :

Մ Ա Ս Ն Ա .

Աստուած ուզէց որ Երուսաղէմի մէջ տաճար  
մը շինուի իրեն . Դաւիթ մարգարէն անոր համար  
պէտք եղածը պատրաստեր էր, նոճի գերաններ,  
ազնիւ մարմարիոններ, կորընթեան պղինձ, ար-  
ծաթ ու ոսկի անբաւ : Ասոնց վրայ Սողոմոն ալ  
իր անհուն հարստութիւնը եւեջընելով, շինեց  
աստուծոյ ուզած տաճարը : Երևելու կերպն ալ  
անանկ յարգութեամբ մը, որ ամեն նիւթ դուրսը  
բանեկն ու կոկեկն ետքը, ուրագ մը կամ երկը-  
թէ գործիք մը ձայն չիհանեց այն պատրաստած  
նիւթերը մէկ տեղ դնելու ատեն : Տաճարը լմն-  
նալէն ետք՝ աստուած ալ իր փառքը երեցուց  
հոն, լոյս ծագելով տաճարին վրայ, ու երկնքէն  
ձայն տալով որ հոն աղօթք ընողներուն խնդրքը  
պիտոր կատարէր : Աս փառաւոր տաճարը Հրէից  
մեղքերուն ու կռապաշտութիւն ընելուն հա-  
մար՝ թողուց աստուած որ բաբելոնցիք գան առ-  
նեն աւրըշտրկեն ու փլցունեն : Ետքը երբոր  
Հրէաները ճամբանին փոխեցին ու դարձի եկան,

աստուած յարոյց Եզրը ու Զօրաբաբէլը, որոնց ձեռքով նորէն տաճարը շինել տուաւ. որն որ իբրաւ՝ չէր կրնար և ոչ բարդատուել առջինին մեծութեանն ու փառաւորութեանը հետ, բայց այսու ամենայնիւ աստուած Անդէաս մարգարէին բերնովը ըսաւ՝ որ այն երկրորդ տաճարին փառքը աւելի պիտոր ըլլար քան զառջինինը: Աս խօսքս Քրիստոսի համար ըսուած ըլլալը՝ խիստ յայանի է, ու ամէն սուրբ վարդապետներ աւանկ կիմանան, Քրիստոսի աս երկրորդ տաճարին մէջը ընծայուելուն համար:

Ուրեմն թէ որ այն երկրորդ տաճարին փառքը այնչափ աւելի եղաւ քան զսողոմոնեան տաճարինը՝ Քրիստոսի միանգամ հոն ընծայուելուն համար, հասպա ինչ պիտոր ըսենք աս մեր եկեղեցեացը համար, ուր որ Քրիստոս ամեն օր կընծայուի: Թէ որ Քրիստոս այն երկրորդ տաճարին մէջ երբեմն դնաց քարոզելու, մեր եկեղեցեաց մէջ գիշեր ցորեկ կեցեր է մեր աղօթքը ընդունելու, խնդիրքնիս լսելու: Մեծ մտածական մըն է, մանաւ ազատի գեղի մը խեղճ եկեղեցի մը, ու հոն մտածել՝ որ անիկայ Սողոմոնի շինած տաճարէն փառաւոր է, այն պատճառաւը՝ որով որ աստուած Զօրաբաբէլին շինած տաճարը՝ Սողոմոնին շինածէն փառաւոր պիտոր ըլլայ ըսաւ: Ու թէ որ Սիմէոն ծերունին տեսնելով զՔրիստոս այն տաճարին մէջ, ու զիրիւր առնելու արժանի ըլլալուն համար, անանկ փառք տուաւ աստուծոյ, ու անանկ գոհ եղաւ՝ որ կուզէր մեռնիլ այն երջանկութեանը հասնելէն ետքը, մենք ինչպէս պէտք է փառք տանք աստուծոյ՝ որ զՔրիստոս չէ թէ զիրկերնիս, այլ քրտերնուս մէջ՝ ուղած ատեննիս կրնանք ընդունիլ մեր եկեղեցեացը մէջ, ու իրեն հետ անանկ մէկ ըլլալ՝ որ յաւիտենական կեանք ունենանք, ինչպէս որ ինքը ըսաւ՝ Ոչ ոքի զմարմն իմ, ինչոքէ յաւիտեան:

### Մ Ա Ս Ն Բ .

Հեթանոսները իրենց մեհեաններուն մէջը քարէ ու փայտէ շինած կուռքեր կը պաշտէին. այնչափ մոռցեր էին աստուծոյ իրենց ստեղծողը ըլլալը՝ մինչև կը կարծէին որ իրենք կրնան աստուած ստեղծել: Աս խաւարին մէջը մեր նախնիքը թաղուած կեցած ատեննին՝ Քրիստոս ըսաւ ծագեց, աչքնիս բացաւ, ամեն կուռք մէկդի ձգեցինք իր շնորքովը, ու զինքը միայն կը պաշտենք, ու մեր յաւիտենական երջանկութեանը յոյսը իր վրայ միայն դրած ենք:

Ու ինքը մեր եկեղեցիներուն մէջ իր աստուածութեամբը ու մարդկութեամբը կը բնակի, եկեղեցիները ամեն զի ամեն տեղ առջինիս բաց է, մեր փրկութեանը համար սահմանած խորհուրդները հոն ընդունելու. անանկ որ՝ չենք կարօտիր Հրէից պէս հրէաստանին ամեն կողմերէն ինչուան Երուսաղէմի տաճարը երթալ, որ աստուծոյ աղօթք ու երկրպագութիւն ընենք: Մեր վրայ կը կատարուի Քրիստոսի խօսքն որ Սամարացի կնոջ ըսաւ. Ստեն գայ պիտոր ու եկած ալ է, որ չէ թէ մինակ Երուսաղէմ՝ այլ ամեն տեղ կարենան պիտոր հաւատացեալք աղօթք ու երկրպագութիւն ընել աստուծոյ: Ասկէց կը հետևի որ ինչ յարգութեամբ պիտոր կենանք եկեղեցեաց մէջ, ինչ հոգ պիտոր ունենանք անոնց վայելութեանն ու մաքրութեանը, ու ինչ մեծ յոյս կուենան արքայութեանը երթալու անոնք՝ որ եկեղեցիներ կը շինեն կամ կը զարգարեն: Վասն զի ինչպէս կրնայ ըլլալ որ Քրիստոս տեղ չիտայ արքայութեան մէջ անոնց, որ երկրի վրայ իրեն բնակարան կը շինեն

կամ կը զարդարեն, այսինքն չխոսյ անոնց այն կա-  
րևոր շնորքները՝ որոնցմով յաւիտենական փր-  
կութեան հասնին, ինչպէս կրնայ ըլլալ որ՝ այն  
շնորքն որ աստուած Երուսաղէմի տաճարին գոր-  
ծաւորներուն տուաւ՝ եկեղեցի շինողներուն չի-  
տայ։ Իր խօսքն է որ նոյն Սնդեաս մարդարէին  
բերնովը ըսաւ. Տայ իբնութիւն ամենեցուն, որ գոր-  
ծիցեն դասարդ դայ :

**Մ Ա Ս Ն Գ .**

Մեր հայրերը կուսպաշտ էին ըսինք, Քրիստոս  
ըյս տուաւ մեզի, որ կուռքերը ոտքի տակ ա-  
ռինք : Բայց ինչ կը կարծենք, հեթանոսները Ե-  
րուսղնէ աստուծոյ տեղ զբաժ էին այն քարէ ու  
փայտէ իրենց շինած կուռքերը. անոնք պատրուակ  
մըն էին, որոնց տակը իրենց մոլութիւնները կը  
պաշտէին : Ուրեմն չիբաւեր որ հիմայ մենք կուռք  
չենք պաշտեր, թէ որ կուռքերուն հետ կիրքեր-  
նիս ալ մէկդի չիգնենք . թէ որ թողունք որ մոլու-  
թիւն մը վրանիս արէ, դարձեալ կուսպաշտու-  
թիւն ըրած կըլլանք, ինչպէս Պօլոս առաքեալը  
ագահութեան համար կըսէ . Սրծախիտութիւն չը-  
կին կուսպաշտութիւն : Ուրեմն ամեն կիրք սրտերնուս  
մէջ մարենք, որ աստուծոյ սէրը միայն վառի հոն,  
ու կարենանք մեր սուրբ հաւատքին համեմատ  
կեանքերնիս անցնելով՝ արժանի ըլլալ բուն ճըշ-  
մարիտ եկեղեցւոյ, այսինքն արքայութեան մէջ,  
իր փառօքը տեսնել ու փառաւորել մեր փրկիչը,  
որն որ մեր եկեղեցիներուն մէջ սուրբ հաղորդու-  
թեան խորհրդովը ծածկուած՝ մեր ալօթքը կըն-  
դունի :

**Ա Ղ Օ Թ Բ**

Յիսուս փրկիչ իմ, որ Երուսաղէմի տաճարին  
մէջ կեցած՝ զամենքը քեզի կանչեցիր, որ կարօ-  
տութիւննին լեցնես, ըսելով . Եթէ ո՞ ծարաւի ե-  
ցէ, եկեալէ առ իս ե արբէ . ու հիմայ ալ ամեն եկե-  
ղեցեաց մէջ նոյն հրաւերքը կընես մեզի, սուր ին-  
ծի ալ որ՝ քու ճշմարիտ երկրպագուացդ հետ  
Հոգւով ե ճարարութեամբ քեզի երկրպագութիւն  
ընեմ, որպէս զի իմ սրտիս մէջն ալ բղխէ Հոգւոյն  
սրբոյ շնորհաց այն դետը, որն որ խոստացար  
քու հաւատացելոցդ :

Խնդա յոյժ դուսար Սինի, քանզի երկիրս եր-  
կինք եղեն այսօր, ե թագաւորն երկնաւոր հա-  
ճեցաւ ընակել ՚ի քեզ :

### ՄՏԱԾԱԿԱՆ ԽԹ.

Սուրբ աստուածածնայ վերախիսմանը վրայ:

### ՄԱՍՆ Ա.

Սուրբ աստուածածնայ մահուանը ատեն ունեցած ուրախութիւնը երեւակայելու համար՝ պէտք է մտածենք Քրիստոսի համբարձմանէն ետքը իր մինակ մնալովը ունեցած տրամուլթիւնը: Մէկ հատիկ իր սիրելի զաւկէն բաժնուած, իր բոլոր սիրտը՝ ամեն բաղձանքը՝ ամեն մտածութիւնը երկինքն էր: Իր գանձը, այսինքն Քրիստոս, երկինքն ըլլալով իր սիրտն ալ հոն էր. շարունակ սաղմոսին խօսքը կըսէր. Վա՛յ քիչ չի ընդէրեւ եղբորս Քրիստոսի համար: սէրն ու տրամուլթիւնը ամեն օր իր կեանքը կուտէին, կրնար ըստ գրոյն ըսել առ Քրիստոս սաղմոսին մէկալ խօսքը. Վա՛յն քիչ հոգիք իր սրտին վիշտը որ աստիճան կը հասնէր, վասն զի մեր սիրտը աշխրբիս հետ կապեր ունի, հոս ալ երջանկութիւնը կը փնտրուէ. կը զգանք աշխրբիս նեղութիւնները, կը տրամենք, ու կուրանք ալ երբեմն աս մեր խեղճ կենացը վրայ, բայց ըսցիրնուս պատճառը սուրբերուն արտասուածը

պատճառին հետ մէկ չէ. անոնք Դաւիթ մարգարէին պէս կուրային՝ Պանդոսիս է՛մ էս սերելի ըսելով: Սուրբ աստուածածնինը կը զգար այն տրամուլթիւնը, որուն շուքը կրնայ սեպուել մօր մը զգացածը, երբոր իր մէկ հատիկ սիրելւոյն կը բաժնուի: Սոս ասանկ ըլլալով, սուրբ աստուածածնայ համար՝ մահը իր հառաչանքները կը դադարեցնէր, իր գորովը կը մխիթարէր, իր բաղձանքը կը ընցնէր՝ երթալու միանալու իր սիրելւոյն հետ, տեսնալու իր փրկիչը մարմնով՝ որ իր սուրբ որովայնին պտուղն էր: Ո՞վ կրնայ բացատրել սուրբ աստուածածնայ՝ իր փառաւորեալ որդին տեսնելու ասնն ունեցած ցնծութիւնը: Անոր քաջածրարանքները, իրեն քաջածրարած ցաւերը, բոլորը մէկտեղ միտքը գալով՝ ինչ ուրախութեան մէջ ընկըմիլը ո՞վ կրնայ երեւակայել:

### ՄԱՍՆ Բ.

Սա ուրախութեանը վրայ աւելցնենք իր արքայութեան մէջ ունեցած փառքը: Քրիստոս զինքը հոգւով և մարմնով երկինք վերափոխէին ետքը, ըրաւ զինքը Թագուհի երկնի և երկրի, միջնորդ ու բարեխօս ամեն հաւատացելոց. ըրաւ գանձապետ իր շնորհացը, ու կուղէ որ իրեն ձեռքովը ընդունինք՝ ինչ շնորք որ մեզի կուտայ: Անոր համար իր մահուանէ՛ր վեր սուրբ եկեղեցին զինքը կը մեծարէ իբրև Թագուհի երկնի և երկրի՝ ամեն սուրբերէն վեր. ու որչափ որ շատցան հաւատացեալները, նոյնչափ տարածուեցաւ սուրբ աստուածածնայ շնորհուանութիւնը. ու քանի որ սուրբ եկեղեցին հալածանքներէ խալըսեցաւ, այնչափ աւելի տծնախմբութիւններ հաստատուե-

յան՝ զինքը փառաւորելու. անտնի որ՝ ելաւ իր  
 խօսքը. Այսուհետեւ երանելոյն ինչ ամենայն ազգս: Ան-  
 թիւ եկեղեցիներ շինուեցան իր անուամբը՝ ի պա-  
 տիւ աստուծոյ. ժողովքներ եղան՝ իր պատիւը  
 քիչցնել ու զօրներուն մոլորութիւնները դատա-  
 պարտելու, ու քաղաքներ սերունթիւններ իր  
 պաշտպանութեան տակը գրին զիրենք: Աօրիկ  
 էր վարձքը՝ իր ետքի աստիճանի խնամարհութեա-  
 նը, որ աստուածամայրութեան բարձր աստի-  
 ճանին հետ միացուց

Իսկ իր կուսական մարբութեանը վարձք՝ ու-  
 ղեց Քրիստոս որ անապական մնայ սուրբ աս-  
 տուածածնայ մարմինը, այն որ ամենեւին արատ  
 մը չէր ունեցեր՝ ոչ սկզբնական մեղքով և ոչ ներ-  
 դորձական թեթև մեղքով մը: Ու Քրիստոս ինքը  
 եկաւ հրեշտակաց բազմութեամբ, նոյն մարմինը  
 հոգւոյն հետ նորէն միացնելով՝ երկինք փոխա-  
 դրեց, ինչպէս որ կերդենք: Այսօր զազափին յանցա-  
 նայ նախամօրն, զկուսութեանց մայրն, իրարարեաց բանն  
 աստուած, յերինայինն դասելով յաստուածախնայ խո-  
 բանն և յանպարտս՝ ի կեանս:

Աստիցմէ ի զատ սուրբ աստուածածնայ վա-  
 ռեալ բարբոքեալ սերն որ ունէր առ աստուած՝  
 փառաւորութեաց կատարելալ միաւորութեամբ  
 աստուծոյ հետ: Ի ծննդեան ի վեր սիրեր էր միշտ  
 զաստուած, ու սիրելի եղած էր աստուծոյ. կըր-  
 նայ ըսուիլ որ իր սերը շարունակ մարտիրոս կը-  
 նէր զինքը, մանաւանդ իր միածնին համբարձմա-  
 նէն ետքը, զօրով ըլլալով անոր ատուութեանէն՝ որ  
 այնչափ կը սիրէր: Կը հառաչէր կը բաղձար տես-  
 նալու ու ժառանգելու զանիկայ, բայց չէր կըր-  
 նար՝ քանի որ երկրիս վրայ էր: Հասաւ էր ջանիկ  
 վայրկեանը՝ որուն կը սպասէր. իր մահուանը  
 վայրկեանն էր ան, որ սուաւ իրեն գտնել իր սի-  
 րելին ու ժառանգել: Ան ատենը Երգ երգօցին

հարօին պէս ըսաւ. Բոյի զոր սիրեաց անյն իմ, կապ  
 զնա և ու խողից: Վասն զի ան վայրկեանն սկսաւ  
 վայելելու զինքը, որն որ յաւիտեան պիտոր  
 վայելէ:

### Մ Ա Ս Ն Գ.

Ասանկ մայր մը տուաւ մեզի Քրիստոս, ամեն  
 առաքինութիւններով զարգարեալ. ասանկ բա-  
 րեխօս մը՝ որուն խօսքէն չանցնիր. անոր համար  
 սուրբ եկեղեցին զինքը յետ Քրիստոսի մեր յոյսն  
 ու ապաւէնը կը կոչէ. Յոյս մեր և ապաւէն մայր պետան  
 և սուրբ Կոյս, Բարեխօսեալ առ փեր լսան մերոյ իրկու-  
 թեան: Ինքն ալ պատրաստ է մեզի օգնելու. ա-  
 նանկ բարեգութ սիրտ մը ունի, որ դեռ երկրի  
 վրայ ըլլալով՝ Կանա գալիկացուցոց հարանիքին նաև  
 մարմնաւոր պիտոյքը լեցնելու համար՝ բարեխօ-  
 սեց իր միածին որդւոյն. ո՞րչափ ևս առաւել մեր  
 հագուոր պիտոյքը կը լեցնէ՝ իրեն զիմեւու որ  
 ըլլանք: Վասն զի ինքն ալ իր որդւոյն պէս կուզէ՝  
 որ խնդրենք նախ զարքայութիւնն աստուծոյ, ան  
 տանը ուրիշ ամեն մեր պիտոյքն ալ կը հոգայ:  
 Նախ զՔրիստոս խնդրենք իրմէն, ըսելով՝ Արժա-  
 նացոյ զմեռ քեանսէլ զբնիւտ յոյսու զորդայնի ք  
 զՅի-  
 սոս. վասն զի զՅիսուս առանց իրեն չենք կրնար  
 տեսնել. իրեք սուրբ Թադաւորներն ալ որ զՅի-  
 սուս կը փնարուէին իր մօրը հետ տեսան զինքը.  
 Տեսին զմանուկն, հանդէ՛՛՛ Մարեմա՝ մարցն իւրով: Ետքը  
 բոլորովին զմեզ իրեն յանձնենք՝ ըսելով. Ի թեւ  
 էմ ապաւինեալ Քրիստոսի մայր աստուծոյ մերոյ. վասն  
 զի ինքը մեզմէ եւեւ զիտէ մեր պիտոյքը ու կը  
 հոգայ, միայն թէ ջանանք մեղքէ հեռու կենալ.  
 Ինքը մեր մուլութիւններուն պաշտպան չեկըր-  
 նար ըլլալ, իր որդւոյն կամացը դէմ չեկրնար օգ-



նել մեղի, այլ մեր բարի բաղձանայք՝ աստուծոյ ծառայելու: Անոր համար Քրիստոս զինքը մեզի բարեխօս ու մայր տալու ասեն՝ ամենակատարեալ օրինակ մըն ալ սուտաւ, որպէս զի իրեն նշմանինք. վասն զի բուն Ճշմարիտ ջերմեռանդու թիւնը սուրբ աստուածածնայ՝ իրեն նմանին է: Ընդունայն է ըսենին՝ որ զինքը կը յարգենք, թէ որ իր վարուցը չիջանանք նմանիլ:

Ա. Ղ. Օ թ. Բ

Քու ոտքդ կը դիմեմ, սուրբ աստուածածին. այն ուրախութեանը համար ըլլայ, որն որ ունեցար քու փառաւորեալ միածինդ տեսնելու ատեն. այն փառաւորութեանը համար ըլլայ, որով միածին որդիդ զքեզ սլտակեց թաղուհի երկնի և երկրի, քու երանութեանդ մէջ զիս մի մտնար: Յիշէ որ միածին որդիդ խաչին վրայէն զիս ալ քեզի յանձնեց, զքեզ երկինքը ինծի համար ալ բարեխօս դրաւ: Իմ խեղճութիւններս ինծմէ աւելի կը ճանչնաս, գթա վրաս բարեգութ մայր. մի թողուր որ քու միածին որդւոյդ՝ ինծի համար քաջած չարչարանքները, քու քաջած ցաւերդ ալ, ինծի համար անպտուղ ըլլան: Իմ խընդիրքս քու ուզածդ է. ուրիշ բան չեմ ինդրեր, բայց առանց մեղաց կեանքս անցընել, ու աստուծոյ շնորհացը մէջ քրիստոնէական մահ մը ունենալ:

Վերափոխեալ զքեզ ՚ի յերկնային խորանն այսօր որդին քո միածին, ուստի և գասք առաքելոցն և իմաստուն սուրբ կուսանացն միաձայնելով գովէին զքեզ. կոյս անհարմարեալ հոգևոր երգով զքեզ միշտ մեծացուցանեմք:

ՄՏԱԾԱԿԱՆ Ծ.

Սուրբ աստուածածնայ գերազանցութեանը վրայ:

ՄԱՍՆ Ա.

Օրմը երբոր Քրիստոս տէրն մեր իր քաղցր կերպովը կը վարդապետէր, Ժողովրդեան մէջէն կին մը ըսած խօսքերովը զմայլած՝ բարձր ձայնով ըսաւ. Երանի՛ր ուրախի՛ր՝ որ կեանքս դէռ և սպեանդն՝ որ դիւցոյցին դէռ: Երանի՛ իրեն ալ որ աս խօսքը ըսաւ. չէր գիտեր որ առաջինը կըլլար կոր կատարելու այն մարգարէութիւնը՝ որն որ սուրբ աստուածածինը ըրած էր. Զի սհա յայսմէնքէ երանեցին ինչ աֆէնայն աղգ: Զեր գիտեր որ իր ըսած խօսքը բերնէ բերան բոլոր աշխարհք պիտոր տարածուէր, ու մինչև աշխրբիս վերջը պիտոր զուրցուէր: Զեր գիտեր սուրբ աստուածածնայ ով ըլլալը, ու ինչ գերազանցութիւններ ունենալը, բայց մէկ խօսքով իմացուց, որ ինչ որ էր՝ իր աստուածորդուովը էր: Բայց մէկը որ աստուծոյ չընորբովը ան կեողմէն աւելի կը ճանչնանք սուրբ աստուածածինը, չէ թէ միայն Քրիստոսի մայր ըլլալուն համար իրեն երանի կուտանք, այլ նաև իր ամեն առաքելութեանցը համար:

Նախ իր անմեղութիւնը զինքը երանելի ըրաւ. վասն զի Ադամայ որդուց մէջ ինքը միայն եղաւ. չէ թէ միայն ամեն ներգործական մեղքերէ ազատ՝ այլ նաև ՚ի սկզբնական մեղքէն. անանկ որ՝ իր յուրթենէն ինչուան կենացը վախճանը՝ ամենեկին արատ մը չունեցաւ, և ոչ թէթե անկատարութիւն մը: Ասովն է որ իր սրբութիւնը կը գերազանցէ, չէ թէ միայն ամեն սուրբերունը մէկտեղ՝ այլ նաև հրեշտակներուն սրբութենէն: Այն շնորքն որ իր յուրթենէն ՚ի վեր ընդունած էր Աստուծոմէ, միշտ աճեցուց. ուստի թէ որ Գաբրիէլ հրեշտակին աւետիս բերած ատենը՝ արդէն շնորքով լեցուած էր, իսկ երբոր որդին աստուծոյ ինն ամիս իր ներսը կրեց, ետքը իր կաթամբը սնուց, ետքն որ այնչափ տարի իր գիրիը կրեց ու զինքը մեծցուց, ինչ լուրթիւն շնորհաց ընդունելը խելքէ մտքէ վեր է: Հապա ասոնց վրայ էլ ւելցրնելու որ ըլլանք այն շնորքներն՝ որ ընդունեցաւ իր միածին որդւոյն հալածանացը չարչարանացը ու մահուան համար քաշած ցաւերովն ու Աստուծոյ կամացը համակերպելով, կըլլայ շնորհաց Ուկիրանոս մը՝ որ մայր ճոթ չունի:

Սուրբ աստուածածինը երանելի է նաև ան կողմանէ, որ մայր ըլլալով՝ չիզարդեցաւ կոյս ըլլալին: Անանկ մեծ գերազանցութիւն մըն է ասիկայ, որ Եսայի մարգարէն առաջուց գուշակած էր իբրև ամեն հրաշքներէն վեր հրաշք մը, վասն զի աստուծոյ մայր ըլլալու հետ կապուած էր, անանկ միութիւն մը աստուծոյ հետ՝ որ կերպով մը սուրբ աստուածածինը անսահման կընէր: Վասն զի Որդին աստուծոյ՝ եղաւ որդի Մարիամու: նոյնը որ իրեն հայր կը ճանչնայ զաստուած՝ իրեն մայր կը ճանչնայ զՄարիամ: Մարիամու որդին աստուած է, ինքը աստուածամայր: Հրեշտակները Քրիստոսի պաշտօնեայք են, սուրբերը

Քրիստոսի ծառայք. թէ որ եղբարք ալ կը կոչուին Քրիստոսի, բայց որդեգրութեամբ են. իսկ Մարիամ մայր է բնութեամբ, ու յատուկ նշանակութեամբը մայր բառին: Նոյնը՝ որուն համար Հայրն երկնաւոր կըսէ՝ Որդի ի՞մ էս Դու, և էս այսօր ծնայ դէռ: Մարիամ ալ նոյնը կըսէ՝ առանց ուրիշ մը իր աստուածամայրութեան պատուոյն մասնակից ըլլալու:

Մ Ա Ս Ն Բ.

Կնոյն որ՝ ատ երանին տուաւ սուրբ աստուածածնայ՝ պատասխանեց Քրիստոս. Նա երանի այնոյի է, որ Ենի դբանն ասործոյ և առնէն: Ասովը ըսել ուզեց որ՝ իրաւ երանելի էր Մարիամ իր մայրը ըլլալուն համար, բայց աւելի երանելի էր իր առաքինութիւններովը աստուածամայրութեան արժանի ըլլալուն համար: Վասն զի աստուածամայրութիւնը զինքը բարձրացուց, բայց առաքինութիւնները զինքը արժանի ըրին աստուածամայրութեան: Աստուածամայրութիւնը կը պահանջէ որ զինքը պատուենք ու փառաւորենք, բայց առաքինութեանը կրնանք մասնակից ըլլալ իրեն հետեւելով: Աստուածամայրութիւնը խելքէ մտքէ վեր բան է, բայց ինքը ամեն մարդկանց պէս վշտալից ու հասարակ վիճակ մը ունեցաւ. ու այն վիճակին մէջ՝ Մարիամ ինչ առաքինութիւն չունեցաւ. ամեն առիթ՝ ամեն վայր՝ կեան անանկ բանեցուց, որ անկէց աղէկ չէր կըրնար բանեցուիլ: Աս է որ աստուած ամեն վիճակի մարդկանցմէ կը սպասէ՝ իրենց տրուած շնորքին համեմատ: Անարատ պահեց իր կուսութիւնը մինչև ՚ի մահ, հրեշտակի մը գովեստէն ալ վախ-

ցաւ: Խոնարհութիւնը իր ամեն գործոցը կանոն եղաւ. որչափ ալ երանի ու գովեստ ընդունեցաւ, ինքը զինքը միշտ աստուծոյ խոնարհ աղախին սեպեց: Բանի մը մէջ զինքը ազատ չիսեպեց հնազանդութենէ, ինչուան ամենէն դժար պարագաներու մէջ ալ հնազանդեցաւ սուրբ Յովսէփին: Իր եղբայրսիրութեանը ապացոյց էն այցելութիւնն՝ որ ըրաւ Եղիսաբեթի, ու կանա գաղութացւոյց հարմիքին մէջ ունեցած կարեկցութիւնը: Իր համբերութիւնը ու աստուծոյ կամայը հետ ունեցած համակերպութիւնը՝ Քրիստոսի քաշած չարչարանացը ու մահուան ատեն յայտնի եղաւ. իր սիրելի միածին որդին վէրքերով լի՝ չարաչար ձեռնելէն ու փշով պսակուելէն՝ արիւնով ծածկուած՝ ամենուն օտեղի եղած, երիւ աւազակներու մէջ անօրէն մարդու մը պէս խաչուած տեսնելով, արիաբար խաչին տակը կեցած՝ իր ցաւը աստուծոյ կը նուիրէր: Քրիստոսի համբարձմանէն ետքն ալ ամեն տեղ կը յիշուի առաքեալներէն չիզատուիրը, մէկ տեղ աղօթքի հետ ըլլալը, ու որդւոյն փառաւորուելէն ետքը նորէն քաջուած կեանք մը անցընելը: Աս առաքինութիւններովը իրաւցընէ արժանի եղաւ Քրիստոսի սոււած երանութեանը, Նա երանի այնոյի է՝ որ Լէն դբանն աստուծոյ և առնէն:

### ՄԱՍՆ Գ.

Մնոր համար սուրբ եկեղեցին իրեն մասնաւոր պաշտօն մը կը մատուցանէ, ամեն սուրբերէն վեր. Իր ծննդեանէն ՚ի զատ կը տան նաև անարատ յղութիւնը, ու իր կենացը ամեն երևելի պարագաները: Իր անունը Յիսուսի անուանը հետ ամեն աղ-

գաց եկեղեցական պաշտամանը մէջ շարունակ կը յիշուի. սուրբ Հարբ իրարմէ եւեւ իր գովեստները ըրած են. ամեն քրիստոնէսայ աղագաց մէջ՝ սրչափ եկեղեցիներ ՚ի պատիւ իր անուանը նուիրուած են աստուծոյ. սրչափ վանքեր, եղբայրութիւններ իր անուանը, սրչափ առանձին ու հասարակաց ջերմեանդութիւններ՝ իր պաշտպանութեանը արժանի ըլլալու համար:

Երկրի վրայ այսչափ է իր փառքը, բայց երկինքինը նալ կրնայ պատմել. իր որդւոյն պէս՝ մարմնով յարութիւն առած, Թագուհի երկնի և երկրի եղած: Քրիստոս ընդ աջմէ Հօր նստած է, ինքը ընդ աջմէ Քրիստոսի. Քրիստոսի ամեն իշխանութիւն յերկինս և յերկրի արուած է, ինքն ալ իր մայրը նոյն իշխանութեան մասնակից ըրած է. Քրիստոս ուրիշ սուրբերուն բարեխօսութեանը համար ալ մեզի շորքներ կուտայ, բայց իր մօրը բարեխօսութեանը ամենեկն չէ չքսեր: Մարիամ մեր մայրն է, ամեն շնորք կրնայ մեզի համար ընդունիլ ՚ի Քրիստոսէ. ինչ վատահոլութիւն չխար մեզի աս մտածելու. ուրեմն՝ դիմելք իրեն մեր ամեն հոգեւոր կարտութեանը համար՝ որ մենք ալ ուրիշ շատերուն պէս իր հօր պաշտպանութեանը արժանի ըլլանք:

### ԱՂՕԹՒՔ

Ո՛վ մայր Յիսուսի մեր փրկչին, ամենքս քու առջիկ խոնարհեալ կը շանչանք զքեզ ամեն աստուծոյ արարածներէն սուրբ և անարատ, ամեն նէն գերազանց: Զքեզ սիրօղը՝ զքեզ փառաւորօղը՝ զՔրիստոս կը սիրէ ու կը փառաւորէ. վասն զի քու սրբութիւնդ ալ, քու առաքինութիւններդ

ալ, դուն ալ Քրիստոսինն էս, անով ու անկէց է  
ամեն ունեցածդ. ուրեմն մենք ալ այն երջանիկ  
կնովը հետ կրսենք. Երանի՛ քեզի որ զՔրիստոս 'ի  
քեզ կրեցիր, բարեխօսէ մեզի համար միշտ, մա-  
նաւանդ մեր մահուանը ասեն:

Ուրախ լեր աթոռ փրկութեան, յոյս հաստա-  
տութեան մարդկան, միջնորդ օրինաց և շնորհաց,  
օրհնութեամբ անդադար գոհութեամբ մեծացու-  
ցանեմք:

## ՄՏԱԾԱԿԱՆ ԾԱ.

Սոսրբ խայիկ վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Աշխարհս քանի որ աշխարհ եղեր է՝ լուսած-  
բան չէր, և ոչ կրնար մէկը երևակայել ասանկ  
բան. երևակայել նախատանաց գործիք մը՝ որ ան-  
օրհնութիւնը պատժելու համար հնարուած էր,  
որուն վրայ աւազակները կը կախէին, փոխուի  
ըլլայ ամենէն մեծ պատուոյ նշանը. թագաւոր-  
ները թագերնուն վրայ դնեն. չէ թէ միայն եկե-  
ղեցականք՝ այլ և աշխարհականք կուրծքերնուն  
վրայ կրեն: Եւրոպայի քաղքերներէն որուն վրայ  
որ բարձր տեղէ մը նայիս, խաչերով ծածկած կը  
տեսնես. ամեն եկեղեցեաց զանգակատանց, վա-  
նորէից ու բարեպաշտական տեղեաց վրայ խաչ մը  
բարձրացած կը տեսնաս: Այն բուրգերն որ՝ փա-  
րաւոններուն հպարտութիւնը Եգիպտոսի չորս  
դին իրենց անունը անմահացընելու համար կանդ-  
ներ էին, և ուրիշ հպարտութեամբ մին ալ հո-  
մայեցիք կուսպաշտութեան կեդրոնը բերեր տըն-  
կեր էին, հիմայ անոնց ծայրը ամենէն մեծ իո-  
նարհութեան նշանը տնկած է: Ի՞նչպէս եղաւ աս

յեղախոխուածիւնը . — վասն զի Քրիստոս անոր վրայ մեռաւ, Քրիստոսի փառքը անոր անարգանքը ծածկեց ու փառաւորեց, Քրիստոսի անոր վրայէն մեզն ցուցուցած սէրը՝ զինքը սիրելի ըրաւ : Ո՞վ կրնայ խաչք յիշել՝ առանց սիրաբ ասկնուելոյ ըլլալու, առանց կերպ կերպ սրտաշարժ խորհուրդներ միտքը գալու : Վասն զի խաչք եղաւ ան սեղանը, որուն վրայ Քրիստոս գառն աստուծոյ Տաքարայ Տաքարայ պարագ և զենոնն անապական : Անոր վրայ Քրիստոս անարատ թեւերը տարածելով բոլոր աշխարհս փրկեց, ու բոլոր աշխարհս հովանի եղաւ սատանային գէմ : Խաչք եղաւ այն ծառը՝ որ գրախաին մահացու պողոյն տեղը ըլլալով Քրիստոս մեզն պաղաքեցեց, գրախաին պատուը զամենքս մեռուց, ասիկայ զամենքս կենդանացուց : Խաչք եղաւ՝ որ բացաւ մեզն կենարար ծառոյն ճամբան, որն որ սերտեանքը բոցեղէն սրով շրջապատեց գոցեր էին : Խաչք զէնք մըն է մեր ձեռքը՝ Քրիստոսի պատուական արեամբը սրուած, որով սատանային գէմ կեղեկք ու կը յաղթենք իրեն : Խաչք աճող մըն է, որուն վրայ մեր փրկիչը նստած՝ կողորմի մեզն, վասն զի արգարուածիւնը քանի որ կը տեսնայ զանիկայ աստուածային արեամբ ներկած՝ ողորմութեանը տեղեկուտայ : Խաչքն վրայ Քրիստոս մեր դատապարտութեան վճիռը բեւեռեց, ու ձեռուրներէն հուր ցած կեցընելով սատանային գէմ սպառնացաւ՝ որ չկրնայ մտենալ վերցընել անիկայ : Խաչք Քրիստոսի կտորն է, որուն վրայ հեծած՝ ինչաւ 'ի Լիմպոս' սատանային ձեռքէն ազատելու համար զերամս արգարոց : Խաչք սուրբ աստուածածնայ պէս զՔրիստոս իր գիրկը կրէց . Խաչք Քրիստոսի փառքն է, վերջին դատաստանին օրը իր առջևէն պիտոր գայ, թշնամիները դատապարտելու, զմիջ ուրախացընելու :

Մ Ա Ս Ն Բ .

Այս ամեն խորհուրդները՝ խաչքն վրայ նայելով միտքերնիս որ գան, կարելի բան է որ սիրտերնիս չնշարժի . կարելի բան է որ խաչք չսիրենք . իսկ խաչք սիրելէն ետքը՝ կարելի բան է որ չուզենք Քրիստոսի սիրոյն համար նեղութիւն քաշել : Այս պիտոր ըլլայ սուրբ խաչք տանելնուս պըտուել, ասոր համար Քրիստոս սիրելի ըրաւ մեզն սուրբ խաչք, ասոր համար իրեն փառք ու մեզն պարծանք ըրաւ սուրբ խաչք : Ուստի Պողոս առաքելալը մեկ զիէն կրսէ . Այլ ինչ քաւ լիցի պարծել, բայց մայն 'ի խաչն քեռոս մեր Յիսուոսի Քրիստոսի . մէկալ զիէն ալ կրսէ . Պարծիք 'ի նեղութիւնս մեր : Վասն զի պարծիլ 'ի խաչն՝ ուրիշ բան ըսել չէ, բայց սիրով նեղութիւն քաշել, Քրիստոսի խաչալից ըլլալ . ապա թէ ոչ, սուտ պարծանք կըլլայ ըրածնիս : Առանց նեղութիւն քաշելու չենք կըրնար արքայութիւն երթալ . և որովհետեւ նեղութիւն քաշելը զիւրին բան չէ, Քրիստոս աէրն մեր անիկայ զիւրացընելու համար՝ ինքը նախ քաշեց, որպէս զի մենք ալ իրեն նայելով սիրտ տանենք քաշելու . անոր համար Պետրոս առաքելալը կրսէ . Քրիստոսի լարաբիւն ճարճով վասն մեր, և դո՛ւք 'ի նոյն մասն վաւեցարուք : Ո՞վ է որ զՔրիստոս խաչքն վրայ տեսնայ, ու սիրտ չառնէ, չուզէ ինքն ալ սիրով քաշելու՝ ինչ նեղութիւն որ աստուած իրեն կը խրկէ : Առանկ բարբարար տէր մը՝ որ մեր սիրոյն համար խաչքն վրայ մեռաւ, թէ որ առանց նեղութեան կարենայինք արքայութիւն երթալ՝ ինչ .

չո՞ւ պիտոր ուղեր որ նեղութիւն քաշէինք: Ի՞նչ գուժ կըլար իրեն մեր վրայ ունեցած գուժը, թէ որ մեր նեղութիւն քաշելը ուղեր՝ առանց ուրիշ վախճանի մը: Ուրեմն մեր բարւոյն համար է՝ որ կուզէ նեղութիւն քաշելնիս. ասոր ապացոյցն ալ ան է՝ որ իր սիրէլեացը կը թողու որ աւելի նեղութիւն քաշեն. առաքեալներն որ այնչափ կը սիրէր, ինչուան իր անոր վրայ ունեցած սէրը երկնաւոր շորը վրայ ունեցած սիրոյն կը հաւասարէ՝ ըսելով. Որպէս «իբեայ դէս» Հայրն իմ, «իբեայ դէս» ուղեց որ ամենէն աւելի անոնք նեղութիւն քաշեն. ու անոնցմէ աւելի ալ իր սիրելի մայրը: Մեր նեղութիւն քաշած ատենը՝ ինքը կը գթայ ու կը գորովի վրանիս. բայց դիտնալով որ մեր օգտին համար հարկաւոր է, կը թողու որ քաշենք. ինչպէս մայր մը որ զաւակին կեանքը պահելու համար լեզի լեզի գեղեր կը խրճցընէ իրեն: Թէ որ ուրիշ կողմանէ շեղանայինք ալ որ նեղութիւն քաշելը ինչ հարկաւոր ու օգտակար է մեզի, բաւական էր անոր օգուտն ու հարկաւորութիւնը ճանչնալու համար մտածելը՝ որ ասանկ բարեգուժ և ողորմած ակը մը կրնայ կոր մեզի նեղութիւն խրկել:

### Մ Ա Ս Ն Գ .

Յովսէփ նահապետը իրեն եղբարցը հետ խուտութիւն ընելու ատենը՝ գուժը շարժեցաւ, ու չկիրցաւ արցունքը բռնել: Մէկ դիէն կը գթար, մեկալ գիէն խտութիւն կընէր իրենց. Խօսեցաւ ըտ նոսա խոսաբոյնս, և անշեալ մէկուսի՝ ի նոցանէ՝ Եւլոյ: Աս կերպով է Քրիստոսի մեզի տուած նեղու-

թիւնը. կը պատժէ զմեզ, բայց պատժելու ատեն մարդասիրութիւնը իր սիրաւ կը ճմլէ. չկրնար երկան քշել իր խտութիւնը, մէկէն կըսկըսի գգուել զմեզ մտիթարելով: Հիմայ ասանկ նեղութիւնը կրնայ ծանր սեպուիլ մարդուս. անզգայ մարդ պիտոր ըլլայ, որ խաչին վրայ նայելով՝ չեյօժարի նեղութիւն քաշել. ինչո՞ւ է որ քաշած նեղութիւննիս կը զգանք, ու աս մտածութիւն ներուն անզգայ ենք: Փափուկ օրիորդներ իրենց զգայուն բնութեանը յաղթեցին աս մտածութիւններով, ու ամեն նեղութիւն յանձն առին, ինչուան արիւնին ալ թափեցին. մենք անոցմէ զգայուն եղանք: Բոլոր ճգնաւորներն ու մարտիրոսները անզգայ էին, ու մենք միայն կը զգանք նեղութիւն քաշելը: Պօղոս առաքեալը աղէկ կըսէ. Սոչափ մարտիրոսները բոլորախեղիս ատենալով՝ ամաչենք, որ զեւ արիւն թափելու չափ նեղութիւն չկրնայինք. Այսուհետեւ մէ՛ք՝ որ այսպէ շորը մեզ մտածեալ անիմք դեպիս վայտի, դէ՛ւ պարսոսիան դամենայն՝ ի Բայ ընկեացոս... դէ՛ լե ևս արեամբ լա՛ք պարեմաւեալ հոխոտա՛ք խոցի՛ք մեղայն: Ուրեմն մենք ալ Սնդդէաս առաքեալն պէս պըլլուինք սուրբ խաչին՝ ինչպէս ինքը խաչուելու ատենը ըրաւ, ու իր ան ատենը ըրած աղօթքը՝ մենք ալ ամեն մեր նեղութեանցը մէջ ընենք:

### Ա Ղ Օ Բ Բ

Ող լեր պատուական խաչ, Քրիստոսի արիւնովը թըջած. բանի որ ինքը վրադ չէր դամուած՝ կը քաշուէի քեզմէն, իսկ հիմայ սիրելի ու ցանկալի ես ինձի. ուրախութեամբ քեզի կուգամ, վասն զի միշտ իմ սիրտս կը փափաքէր զքեզ գըր.

կելու. սուրբ խաչ առ զիս, ու Քրիստոսի սուրբ,  
որպէս զի քեզմով որ զիս փրկեց՝ քեզմով ալ զիս  
ընդունի:

Յայլթող զօրու թեամբ խաչի քո սրահեա զմեզ  
Քրիստոս աստուած, որ տարածեցեր զձեռս քո  
'ի նմա. և լուծէր զինիք գատապարտութեան  
յանցանաց մերոց, ապրեցուցանել զմեզ 'ի պա-  
տրանաց թշնամւոյն:

## ՄՏԱԾԱԿԱՆ ԾԲ.

Նորէն սուրբ խաչիև Վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Սուրբ խաչը մտածականի գիրք մըն է, որուն  
վրայ խիստ շատ բաներ հարգացեր են սուրբ Հարք,  
ու անսակ տեսակ մտածականներ ըրած են: Ու  
մանք մտածեր են անոր վրայ Քրիստոսի քաջած  
չարչարանքները, մեղքին ինչ ծանր բան ըլլալը՝ որ  
հարկ եղաւ Քրիստոսի իր չարչարանքներովը սա-  
տուել մեր գատապարտութեան գիրքը, ու խաչին  
վրայ գամել, ինչպէս որ առաքեալը կրտս. Բնե-  
ռէայ պոյն 'ի Խառփայրի: Ոմանք ալ անոր վրայ  
Քրիստոսի քաջած նախատինքը, որ խաչահա-  
նուաց հայհոյանքներովը, քահանայապետներուն  
զինքը ծաղր ընելովը, ու սոսկալի վատահամբա-  
ւութեամբ երկու աւաղաններու մէջ խաչուելը-  
վը կրեց:

Բայց աս ամեն տխրալի մտածականները ա-  
ւագ շարթուան օրերը մտածեցինք. հիմայ այս  
օրուան տնտախմբութեան յարմար միտթարա-  
կան մտածական մը ընենք: Սուրբ Հարք, սուրբ  
մարգարէներն ալ, խաչը Քրիստոսի կառքը կը սե-

պեն. Վասն զի ինչպէս զօրավար մը իր կողմին վրայ հեծած, կերթայ կը զարնէ թշնամին, ու անոր ձեռքէն գերինները կը խալըսէ, ասանկ ալ Քրիստոս խաչին վրայ հեծած, սասանային վրայ վազեց, ու զմեզ՝ որ անոր գերի եղած էինք, ձեռքէն առաւ խալըսեց: Աս է սաղմոսին խօսքը. Եւ 'ի Բարձրանս, և գերեաց պփերո-նի-ն. Էսա սաար, Բաշխեաց պարգևս որդւոց ճարգիսն: Ուրիշ մարգարէ մըն ալ կըսէ. Եւեբ դոս 'ի Խոսս քո, հեծել-նի-նդ քո լէր-նի-նն եղև ալանց:

### ՄԱՍՆ Բ.

Ասկէց եւել ուրախալի մտածական մըն ալ, ան է որ՝ Քրիստոս անքն մեր իր խաչելու թեամբը բացաւ մեզի արքայութեան գուռը, որ մեզի համար յաւիտեան փակուած պիտոր մնար. անոր համար առաքեալը կըսէ. Ունիմի այսուհետև եղբարք պիտոյնքս ինչպէս 'ի ճապս սրբո-նեանցն արեամբն Քրիստոսի: Բայց աս մտածականը հոս չի վերննար. այլ ասովը կիմանանք արքայութեան ինչ ըլլալը: Որ և իցէ բանի մը արդուութեան ու մեծութեան չափը՝ անոր գինը ինչ ծանրութիւն որ ունի՝ անկէց կը չափուի. ուրեմն արքայութիւն ըսածնիս, յաւիտեանական երանութիւն ըսածնիս, աստուծոյ ատուութիւն ըսածնիս, ինչ մեծ բան պիտոր ըլլայ, որ հարկ եղաւ որ որդին աստուծոյ մարդ ըլլայ խաչին վրայ այնչափ չարչարանօք ու նախատանօք արեւը թափէ, որ իր արեանը գնովը անիկայ կարենանք սասնալ: Պօղոս առաքեալը, որ արքայութեան վառաց մէկ պղափ մասը ատեաւ, կըսէ. Չոր այն ու երես, և ունին ու լուսս, և 'ի սիրտ ճարգոյ ու անկառ. այսինքն և ոչ կրնայ մարդս երեւա-

կայել անոր ինչ ըլլալը: Ու առաքեալներն ալ անոր մէկ շուքը թաքօք լեռան վրայ ատենելով, զմայլեցան, իրենցմէ գուրս ելան, ու ան լեռնէն վար չէին ուզեր կոր իջնալ:

### ՄԱՍՆ Գ.

Հիմայ աս մտածականը ընելէն ետքը, կարելի բան է որ մարդս աս երջանկութեանը հասնելու համար ամեն բան չի գոհէ. կարելի բան է որ ասանկ երջանկութիւն մը մեզի համար իր արեամբը գնովը չխտրէ: Աս է որ Պօղոս առաքեալին բերնէն այն սոսկալի անէծքը հանել տուաւ անոնց դէմ, որ զՔրիստոս չէն սիրեր. Նոր-Նաւոր ունի սիրէ պիտոյնքս: Սիրենք ուրեմն մեր փրկիչը, բայց սիրենք գործքով: Այլանդակ հակասութիւն մը կը ըլլար՝ թէ որ մեզը զմեզ իր սիրելի բարեկամը սեպեր, իր բարերարը սեպեր, ու չըսեմ մեր կամացը դէմ ընէր, հապա թովընիս հանդիպել ալ սուզեր: Ասանկ կը ըլլայ մեր բռնած ճամբան ալ, սուրբ խորհուրդներէն հեռու կենալու որ ըլլալը: Քրիստոս անքն մեր սուրբ սեղանին վրայ կը սպասէ՝ որ երթանք զինքը սրտեհնուս մէջ ընդունինք, որ մեզի շնորք ապ իր արեամբը մեզի համար պաւ տրաստած արքայութեան չիզրկուելու. իսկ թէ որ մենք հաղիւ իրեն մօտենալ ուզենք, ինչ սէր կը ստուի. անիկայ սէր չէ, զինքն ալ իր շնորքներն ալ բանի տեղ չի գնէլ ու արհամարհել է: Ուրեմն երախտագիտութիւնն ալ մեր շահն ալ զմեզ կը ստիպէ, Պօղոս առաքեալին ըսածին պէս, սէրն Քրիստոսի սպիտակ պէշ, որ ստեպ իրեն զինքնք, իր մէն ինդրենք՝ որ իր մեզի համար պատրաստած յաւիտեանական երանութեանը հասնինք:



Ա. Ղ. Օ թ Գ

Յիսուս փրկիչ իմ, մի թողուր որ քու անգին արիւնդ ինձի համար անօգուտ ընեմ. քու սուրբ խաչդ ինձի օգնական ըլլայ, ինձի սանգուխ ըլլայ արքայութիւն ելլելու. անիկայ հաւատացելոյ զօրութիւնն է սատանային ու աշխրբիս փորձութեանց դէմ. ես ալ կը հաւատամ ինչ որ սուրբ եկեղեցին կը հաւտայ, որպէս զի ինձի ալ ըլլայ զօրութիւն, որ կարենամ յաղթել անով սատանային ու աշխրբիս:

Չօրութիւն սուրբ խաչի քո Քրիստոս, որ կանգնեցեր ՚ի փրկութիւն աշխարհի, սա պահեսցե՛ղ զմեզ յամենայն փորձութենէն:

# ՄՏԱԾԱԿԱՆ ԾԳ.

Նորէն սուրբ խաչին վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Սուրբ խաչնն տօնը՝ ինչպէս ուրիշ ամէն տօնախմբութիւնները՝ սուրբ եկեղեցին սահմաներ է, որպէս զի ըստ աւուր պատշաճի մեր հոգևորական պտուղը քաղենք: Սա օրուան քաղելու պտուղնիս ալ աս է, որ առանց խաչի չենք կրնար փրկութեան հասնիլ. Պօղոս առաքեալը խիստ յայտնի կըսէ, Աստուած կուզէ որ Քրիստոսի նմանելով հասնինք արքայութեան. Զի պէս յառաջն ճանաչէր, յառաջագոյն հրաւիրեաց կերպարանաինց լինել պապիւնի որդւոյն իւրոյ: Քրիստոս տէրն մեր ալ կըսէ. Որ կաժոյի կեցողսնէլ պապն իւր, առցել իւր և եկեղեցի զնէս իմ: Ասով ըսել չուզէր որ նիւթապէս մէյմէկ փայտէ խաչ ուսերնուս վրայ կրենք. այլ աստուծոյ խրկած խաչը սիրով տանինք: Մեր մեծ պահասութիւնը աս է, որ խաչ մը՝ վըշտ մը որ ունենանք, փոխանակ համբերութեամբ ընդունելու, թէ որ չխորանանք ալ գոնէ սխուր տրտում կանցընենք կեանքերնիս: Բայց արամութիւնը ինչ կօղնէ, արամութիւնը աւել

կը ծանրացընէ մեր խաչը: Տունդ այրեցաւ, դնա տրամէ ու արամէ. սունդ նորէն անկը չիգար. արամեղովդ կուշացընես զանիկայ նորէն շինելը: Հարստութիւնդ կորսընցուցիր. տրամէ որչափ որ կուզես. հարստութիւնդ անկը չիգար. մանաւանդ արամութեամբդ սիրագ կը կոտորի, չէս կրնար նորէն վրայ գնել: Սիրելիդ մեռաւ, իրաւունք ունիս արամելու. բայց արամութիւնդ զինքը չողջընցընէր. մանաւանդ արամութեամբդ քու աւուղբութիւնդ ալ կը կորսընցընես: Տրամութիւնը բանի մը չիգար, բանի մը չօգնէր. արամութիւնը աստուած մէկ բանի մը համար միայն ըրեր է, ու ան բանին մէկ հատիկ գեղն է: Աշխրբիս վրայ իրապէս չարիք չիկայ՝ բաց ՚ի մեղքէն. ուրիշ ինչ չարիք որ ըսես, ամենն ալ աստուծոյ կամօքը կամ թոյլտուութեամբը կուգան վրանիս. ու ան որ աստուծմէ կուգայ, միշտ մեզի բարի ու օգտակար է. անոր համար արամութիւնը հոն տեղիք չունի, ու օգուտ մըն ալ չիկրնար ընել: Մէկ հատիկ չարը մեզի համար մեղքն է, որն որ աստուծոյ կամացը գէմ է, չուղեր որ մեղանչէնք, որ պէն զի յաւիտեական փրկութենէ չիղրկուինք: Հոս է արամելու տեղը, արամութիւնն է միայն աս չարեաց դեղը, վասն զի աս արամութեան, ետեհն ապաշխարութիւն կուգայ. Պօղոս առաքելին խօսքն է. Որ ըսք աստուծոյ արքայութեանն է, ասպաշխարութեանն ՚ի իրարմէն գործէ. ու աստուած տեսածին պէս՝ որ զինքը վշտացընելուս համար կը արամիք, դուժը կը շարժի վրանիս: Արքաաբու պէս անօրէն թագաւորը, որ իր ամեն մեղացը վրայ՝ խեղճ՝ Նաբովթայ այգին ալ յափշտակեր էր, երբոր աստուծոյ իր վրայ բարկանալուն համար արամեցաւ, աստուած գթացաւ վրան:

Մ Ա Ս Ն Բ .

Պօղոս առաքելը կորնթացիներուն կըսէ. Ուրախ եմ, չէ թէ ձեր արամութեանը վրայ, հասաւ ձեր մեղացը վրայ արամելուդ համար. Ուրախ եմ, ու զի արքայութիւնն այլ զի յասպաշխարութեանն արքայութեանն: Ուրեմն արամութիւնը մեղքի համար միայն պէտք է ունենալ, ու անոր միայն կօգնէ. իսկ ուրիշ վշտաց համար չէ թէ միայն պիտոր չիտորմինք, այլ ե փառք ասնք աստուծոյ՝ որ զմեզ սիրելուն՝ մեր յաւիտեական փրկութեանը համար կը խրկէ զանոնք մեր վրայ: Առանց վըշտ ունենալու՝ շատ անգամ կը հեռանանք Աստուծմէ. աստուած ալ կը հարկաւորի որսորդի մը ըրածը ընել մեզի: Եղնիկը որսորդին ձեռքէն փախչելու, որ ըլլայ, ինչ կընէ որսորդը. նեա մը կը նետէ, կը վերաւորէ զանիկայ, ու վրայ կը հասնի կը բռնէ: Աստուած ալ մեր վրայ նետի տեղ վըշտ կը խրկէ, ու ետեւուս կը հասնի կը բռնէ զմեզ: Աստուծ ըրաւ Դաւիթ մարգարէին ալ, որն որ ինք իրեն կը խոստովանի իր դարձին պատճառը, ու կըսէ. Սեպտ քո հարսն յիս, ե յիս հասարակեցաւ յեռն քո:

Մ Ա Ս Ն Գ .

Թէ որ գիտնայինք աշխրբիս վրայ քաշած վըշտերնիս ինչ կը պաղաբերեն մեզի, կը բազայինք աստուծոյ համար վըշտ կրել, ինչպէս որ սուրբէն կընէին: Մութի մէջ շատ անգամ չուանի կտոր մը՝ մարգս օձ կը կարծէ. աստուծ ալ մեկը մութի

մէջ ենք, վիշտը գէշ բան կը կարծենք. մեր օգուտը մեզի մնաց կերեւոյ, սուրբ հաւատքին լուսովը միայն կրնանք ճանչնալ անանկ չըլլալը: Ուրեմն ասակէջ ետքը աստուած մեզի ինչ խաչ որ խրկէ, համբերութեամբ ընդունելնք, ու խնդրենք իրմէն որ ձեռքը վրանիս գնէ, ու չի վերցընէ, որպէս զի չըլլայ թէ նորէն հեռանանք իրմէ, ու նորէն հար կաւորի ուրիշ խաչ ալ խրկելու մեզի. այլ ինչ խաչ որ ատեր է մեզի՝ անիկայ ուսերնիս առած, Քրիստոսի ետեւէն երթալով, հասնինք յաւիտեանական վերկուծեան:

Ա. Գ. Օ Թ. Գ

Յիսուս փրկիչ իմ. ուրիշ բանի համար ալ որ չըլլայ, քեզի նմանելու համար պէտք էր սիրով ընդունէի ամեն վիշտ: Չեմ ճանչնար իմ բարկքս, զօրացուր իմ հաւատքս, որ անով ճանչնամ վըշտաց յաւիտենական օգուտը. զօրացուր իմ յոյսս, որ վշտաց ետեւէն եկած բարեօքը զիս յորդորէ սիրով տանելու իմ խաչս. տուր ինձի քու սէրդ ալ որ ամեն վիշտ կը թեթևցընէ:

Իսկ փայտ խաչի քո կենսատու գաւազան զօրութեան կենաց մարդկան և յոյս հաստատութեան, առաջնորդ եղև մեզ ի կեանս յաւիտենից:

## ՄՏԱԾԱԿԱՆ ԾԴ.

Նորէն առք խայկն փայ:

ՄԱՍՆ Ա.

Քանի որ Քրիստոս տէրն մեր իր խաչելութեամբը երկինքը երկրիս հետ, այսինքն զատուած իր աստուամբ արարածոցը հետ հաշտեցուց, Հաւելոյց ու Հայր ընդ աբրաժս. քանի որ իր խաչին վրայ թափած արիւնովը խաղաղութիւնը բաւ աստուծոյ ու մեր մէջը, և արար խաղաղութիւն արեամբ խաւին. քանի որ մեր յաւիտենական գատապարտութեան ձեռագիրը պատուեց ու գամեց խաչին վրայ, Ջնչեաց ու յեռափէր մերոյ հախախտութեան, և բեւեռեաց ընդ խալափայտին. սուրբ խաչը եղաւ մեզի մխիթարանք: Ո՞վ կրնայ անոր վրայ նայի՞ առանց սիրտը շարժելու, առանց գոհութիւն տալու Քրիստոսի, առանց սրտին մէջը օրախութիւն ու յոյս զգալու: Ի՞նչ մխիթարանք է մարդուս իր վշտացը մէջ մտածել՝ որ քաջածնեը կրնայ Քրիստոսի քաջածնեըն հետ միացնել, ու անոր արդեանցը մասնակից ըլլալ մտածել որ մինակ չէ ինքը՝ Քրիստոս ալ հետն է, ինքն ալ Սլմնն կրեւրեանացիին պէս կօքնէ Քրիստոսի,

գործակից կըլլայ աստուծոյ հետ հաշտուելուն: Աս մտածութիւնները ինչ քաղցրութիւն չեն տար սրտին, ինչ մխիթարանք չեն ըլլար իր վըշտացը: Թէ որ Սիմոն կիւրենայցին Քրիստոսի խաչը ամենելու ատեն ունեցած ըլլար աս մտածութիւնները, ինչ սիրով չէր տանէր: Այսու ամենայնիւ ամենէն ետքը՝ երբոր Քրիստոսի շնորքով ճանչցաւ ինչ մեծ բախտի հասնելը, իր բոլոր կենացը մխիթարանքը եղաւ. արդեօք հիմայ երկինքը ինչ կը մտածէ այն ատենին վրայ, որ խաչին բեռանը տակը նեղութիւն կը քաշէր: Արմաման է մերն ալ. ծանր կուգայ մեզի խաչ քաշելը. բայց ետքը մեզի ինչ շնորքներ բերելը յայտնի է Սիմոն կիւրենայցին հաւատքի դալէն, սուրբ առաքեալներուն արդեանցը մասնակից ըլլալէն, ու ետքը ետքը Քրիստոսի սիրոյն համար իր արիւնը թափելու արժանի ըլլալէն:

### ՄԱՍՆ Բ.

Քրիստոս խաչին վրայ մեռնելէն ետքը ճանչցուեցաւ իրեն ո՞վ ըլլալը. Յորժամ Բարձրագոյնացանիցէ գործի մարդոյ, յայնժամ գիպասելի էլէն էս է՛ն: Մենք ալ խաչ քաշելով կը հաստատուինք Քրիստոսի սուրբ հաւատքին մէջ: Քրիստոսի աս խօսքը մինչև ցայսօր կը կատարուի կոր. իր խաչելութենէն ետքը այնչափ մարդիկ հաւատքի եկան ու կուգան միշտ. աս խելքէ մտքէ վեր զօրութիւնը ո՞վ տուաւ խաչին. մարդկային գործք չիկրնար ըլլաւ ասիկայ. ուրեմն Քրիստոսի զօրութիւնն է՝ որ խաչին վրայ մեռնելով՝ տուաւ անոր: Մտքէ անցնելու բան չէր որ անարդանաց գործիքը աս զօրութիւնը ունենայ, ուրեմն ինչ պոպոյնցներ պիտոր

ուրենայ մեր հաւատքն որ, սուրբ խաչին բոլոր աշխարհ երկրպագութիւն ընէ. ուրեմն ինչ աստուածային շնորք մարդկանց սրտին մէջը կը ներգործէ անով՝ որ զիրենք կը համոզէ, ու այսչափ ուժ ու մխիթարանք կուտայ իրենց:

### ՄԱՍՆ Գ.

Սուրբ խաչը մեր մխիթարանքը ըլլալէն՝ ի զատ, անով կըլլանք վարձուց արժանի: Ի՞նչպէս կըլլայ՝ որ Քրիստոս անքն մեր միշտ իր երկնաւոր Հօրը կամբն ու հաճոյքը ընելով, Ես սխաճոյս նորա ատեն՝ հանապա՛, ու իրեն հնազանդ ըլլալով միշտ, Հայն երկնաւոր ուղեց որ իր սիրելի որդին խաչին վրայ մեռնի: Ա՛ս է իր հնազանդութեան վարձքը, աս է իր Հօրը սիրոյն նշանը: — Աս է. վասն զի ասով Քրիստոս փառաւորեցաւ, Ո՛չ զնոյն պարսիկ երաւրիէ Քրիստոսի, և ճառնէլ ՚ի փառս իւր. ասով երկնի և երկրի վրայ ամեն իշխանութիւն ունեցաւ. Տո՛ւսա ինչ ամենայն իշխանութիւն մերիւն և մերիւն. ասով եղաւ զատաւոր կենդանեաց և մեռելոց, ասով ըրաւ այնչափ մարդկանց փրկութիւնը որ իրեն հետ յաւիտեան պիտոր թաղաւորեն: Թէ որ ինքը խաչ ելելով հասած չըլլար այսչափ փառաց, ու մեզի իր օրինակը առեած չըլլար, ո՞վ կրնար մտածել՝ որ խաչ քաշելը պիտոր ըլլայ մեր վարձքը, ո՞վ կրնար սիրտ ընել՝ աս կերպով վարձք վաստակելու: Աս յուսովը աս օրինակովն է որ այնչափ սուրբեր խաչակից եղան Քրիստոսի, ուրիշ բան չուղեցին գիտնալ Քրիստոսի խաչելութենէն ՚ի զատ: Ասոր համար Պողոս առաքեալը՝ ոչ ուրիշ բան կուզէր սորվեցընել հաւատացելոյ, և ոչ կուզէր որ իրենք ուրիշ բան

սորվին՝ բաց 'ի Քրիստոսի խաչելութենէն. Զի ոչ էին 'ի Տրի երի գիգիւնէն 'ի յիւր բայոյ միայն զՅիստոս Քրիստոս, և ոչոյն 'ի խաչ ելեալ: Վասն զի աս ուսուցիչ քրիստոնէին ամեն սրբաբեր կը սորվեցընէ, որչափ ալ ուրիշ բաներու ագէտ ըլլայ, որչափ ալ թանձրամիտ ըլլայ, աս գիտութեամբ միայն՝ այսինքն Քրիստոսի խաչակից ըլլալովը՝ իր յաւելտենական երջանկութիւնը կը գտնայ: Սորվինք մենք ալ աս գիտութիւնը. ամեն սուրբերուն մատենանը սուրբ խաչը եղած է, մենք ալ աս գիրքը միշտ կարդանք. վասն զի ուրիշ ամեն գիտութենէ զուրկ ալ ըլլանք, կրնանք փրկութեան հասնիլ. բայց առանց աս գիտութեանը չենք կրնար հասնիլ:

Ա. Ղ. Օ Թ. Գ.

Յիսուս փրկիչ իմ, դուն ըսիր որ խաչելութենէդ ետքը՝ մարգիկ պիտոր ճանչնան զքեզ. Յորժամ Բարձրացողանիցէ՜ դարձի Տարայ, յայնժամ գիգտու ընի՜ թէ ես եմ: Իմ՝ վրաս ալ կատարէ քու խօսքդ, շնորք տուր ինձի՜ որ ճանչնամ զքեզ: Իրուն ըսիր որ խաչելութեդ ետքը՝ պիտոր քեզի ձգես ամենքը. Յորժամ Բարձրացողայ յերջէ, կամենեսնան յգեցից աս իս: Ղիս ալ ձգէ քեզի, մի թողուր որ հեռանամ քու խաչէդ, միշտ միտքս ըլլայ քու խաչելութիւնդ, անիկայ ինձի սիրտ աայ, անիկայ զիս մտիթարէ, անիկայ շրթանցս վրայ ու սրտիս մէջը ունենալով՝ հոգիս աւանդեմ. անիկայ ըլլայ իմ վարձքս:

Աղաւինեցաք 'ի խաչ քո արարիչ յաւիտենից, որ ետուր մեզ սոստապան յաղթող ընդդէմ թըշնամուոյն, աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեալ զանձինս մեր:

### ՄՏԱ.ԾԱ.ԿԱՆ ԾԵ.

Աստուծոյ խրկած խաչկրք սիրով  
քաշկոշ վրայ:

ՄՍՍՆ Ա.

Քրիստոս տերն մեր խօսքով ալ գործքով ալ սորվեցուց մեզի որ առանց խաչ քաշելու արքայութիւն չենք թըրցուիր: Ամենքս ալ քիչ շատ՝ մեր խաչերը ունինք, կը մնայ որ համբերութեամբ ու սիրով տանինք խաչերնիս: Աս համբերութիւնը ունենալու համար հերիք էր մտածելն որ՝ ամենքս ալ մեղաւոր ենք, ամենքս ալ ապաշխարութեան կարօտ. ու չիկայ ապաշխարութիւն մը՝ որ այնչափ աստուածահաճոյ ըլլայ, ինչպէս Աստուծոյն է կած խաչերը սիրով քաշել: Աս մտածութիւնը որչափ ալ բաւական է սիրելի ընելու մեզի խաչ քաշելը, ասկէց զօրաւոր յորդորանք մըն ալ ունինք խաչերնիս սիրով տանելու:

Փիտենք արգէն Յօք նահապետին օրինակովը՝ որ աստուած միշտերն ու խաչերը մեղքերնիս պատժելու համար միայն չիփրկէր մեզի: Ինքը վկայեց՝ որ Յօք նահապետը մեղք չունէր. ուրեմն վարձք վաստակելու համար էր իր ամեն քաշածը:

Սրբոց վարքէն ալ կը սորվինք, որ ամենն ալ խաչ քաշեր են, ու աւելի սուրբ՝ աւելի անմեղ եղօղճ՝ աւելի քաշեր է: Թէ որ աշխրբես վսայ անձ մը եղած է՝ որուն արժան էր առանց խաչի արքայութիւն երթալու բացառութիւնը ունենալ, սուրբ աստուածածինն է՝ որ չէ թէ միայն ներքին մեղք մըն ալ չուներցաւ՝ այլ սկզբնական մեղքէն ալ ազատ էր, ու մայր աստուծոյ էր: Բայց իր քաշածը՝ ուրիշ մայր մը չիկայ որ քաշած ըլլայ. իր մէկ հատիկ զաւելին ծննդէնէ մինչև ՚ի մահ հաշտուուուուն համար հալելէն ու մաշելէն ետքը, տեսաւ իր միածին որդւոյն՝ անանկ չարչարանքով խաչին վսայ երկու աւաղակի մէջ երրորդ աւաղակի մը պէս մեռնիլը: Ուրեմն մեր վտայը մէջ պէտք է մանաւանդ փառք տանք աստուծոյ՝ որ զմեզ իր սիրելեացը կարգը կը դնէ, յիշելով Պօղոս առաքեալին խօսքը՝ Զի ոչ Իբէ Իբէ, Խրաբէ. Կանչէ լսմէնայն ոչ Իբէ՝ ոչ Ընդոսնի:

### ՄԱՍՆ Բ.

Բայց ինչ ըսել է իր սիրելիները տանջելու ուրեմն գուցէ չունի աստուած որ իր սիրելեաց վիշտ կրելը կուզէ: Ատանկ որ ըլլար, մեզի ալ գուցէ չէր կրնար տալ. աս գուցէ՞ր՝ տա կարեկցութիւնը մեր սրտին մէջ դնօղը, որով ուրիշներուն վտայը վսայ կը ցաւինք, հարկ է որ ինքը ամենողորմ ըլլայ. ու ամենողորմ ըլլալով՝ մեզի վիշտ որ կը խրդիէ, ըսել է որ մեր օգուտը ասանկ կը պահանջէ: Այն որ մեր վիշտերը թեթեւցընելու համար՝ մեզմէ աւելին քօշէց, ու ամանի ամենածանր վիշտեր, չիկրնար ըլլալ որ մեր վիշտ քաշելը ուզէր՝ թէ որ մեր օգուտը աս ջըլար: Եթէ իրեն

համար կրտէ որ Պարս Էր Քրիստոսի լաւաբիւ և հրաշիւ Ի Ժառ Իար, իրչափ աւելի պէտք է որ մենք վտակուութեամբ արքայութիւն երթանք: Ուրեմն փառք տանք իրեն որ արքայութեան ճամբուն մէջ գրեր է զմեզ՝ ինքը առջննէս երթալով, ու ջանանք սիրով համբերել իր խրկած վտայը:

### ՄԱՍՆ Գ.

Իրաւ է որ բնութիւննիս երբեմն կը տժգոհայ, ծանր կուգայ մեզի համբերելը, բայց նախ աս վտահոտութիւնը պէտք է ունենանք որ աստուած անանկ վիշտ մը չի խրկէր մեզի, որուն չիկարենանք համբերել: Պօղոս առաքեալին խօսքն է. Հառապաբեմ է սաքոսած, և ղ ալարչի և յէ Ի Ժրճոսնիւն սոսաւել Կան Կար յէր: Այնմէն ալ որ մեր ակար բնութեանը տժգոհութիւնը՝ բոլորովին անվարձ չընէր մեր խաչը, ինչպէս որ կիւրենացոյնը ջըրաւ. որչափ ալ չուզէր իր տաներ Քրիստոսի խաչը, իր յաւիտենական փրկութիւնը պաղաբերեց իրեն: Այն թեթեւ գանգատները՝ որ երբեմն մեր բերնէն կը փախչին, կորսընցընել չեն տար մեզի քաշածնուս վարձը՝ ինչպէս Յօր նահապետին ալ կորսընցընել չի տուին: Ասոնք խորտիկին ծուխերուն պէս են. որչափ ալ մայն անոյշ հիւթերը ծխելով պակսին, խորտիկը միշտ խորտիկ է. որչափ ալ այն թեթեւ գանգատները քիչցընեն մեր վտայը արգիւնքը, բայց աստուած՝ որ աղէկ կը ճաննայ մեր բնութեան ակարութիւնը, Զի նա գիտայ զսքեղ ճոռածս մեր, և յիշեաց Կի հող էմէ, կը ներէ մեզի, ինչպէս վերաբոյժը կը ներէ հիւանդին հեծութեանը՝ որն որ բժշկուուելու համար զինքը անոր ձեռքին տակը դրած է՝ կարելու ու այրելու:

Ա. Գ. Օ Թ. Գ

Յիսուս փրկիչ իմ, ասիէց ետքը սիրով կրնգու-  
նիմ խրկած խաչերդ. չէ թէ միայն իբրև մեղացո  
պատիժ, այլ և ինչպէս քու բարեգուծ սրտիդ  
պարգևը՝ որ իմ բարեոյս համար կը խրկես ինձի:  
Միայն թէ շնորք տուր ինձի որ սուրբ խաչիդ զօ-  
րութեամբը յաղթեմ սատանային, ու կարենամ  
անտրտունջ համբերել:

Գաւազան զօրութեան զկաջ քո ետուր մեզ,  
և սովաւ յաղթեսցուք անօրէն թշնամւոյն:

# Մ Տ Ս Մ Ս Կ Ա Ն Ծ Զ .

Ամենայն սրբոց տօնին վրայ:

## Մ Ս Ս Ն Ա .

Քրիստոս տէրն մեր գիտնալով մեր բնութիւնը՝  
որ միշտ մեր շահը կը փնտրուենք, զմեզ յորդո-  
րելու համար որ մեր փրկութեանը ետեւէ ըլլանք՝  
մեծ շահ կը գնէ առջևինս. Զի վարձք յեր բարւոյս էն  
յերբինս: Զաստուած քան զմեզ աւելի սիրելու  
պարտքերնուս մնաս մը չի հասցընելով, կուզէ որ՝  
զաստուած սիրելինս նաև մեր շահը ըլլայ, կուզէ որ՝  
որ զաստուած սիրելը մեզի շահ սեպէնք: Անոր  
համար մեզի մեծ վարձք կը խոստանայ, որպէս զի  
անով ջանանք աւելի սիրել զաստուած՝ աս-  
տուած սիրութիւնը մեր շահուն հետ միացընե-  
լով: Հաւատքի մասն է, չենք կրնար տարախու-  
սիլ որ կրնանք ու պարտքիան ալ էնք աս վարձ-  
քին արժանի ըլլալ, ուրեմն պէտք է փափաքինք  
ու ջանանք արժանի ըլլալու. վասն զի վարձքեր-  
նիս սպաշով է, վարձքերնիս առատ է, վարձքեր-  
նիս յաւիտենական է. Ահաասիի վարձք յեր բարւոյս  
էն յերբինս:

Աս զորաւոր յորդորանքը հերիք չիտպելով, ուրիշ կերպով ալ սիրտ կուտայ մեզի Քրիստոս՝ նեղ ճամբէն երթալու, սուրբերուն օրինակը առ ջննիս դնելով: Ինչպէս որ աս ճամբէն խոստրելու ամենէն մեծ վտանգներուն մէկը դայթազիզութիւնն է, այսինքն չար օրինակը, ասանկ ալ չի խոստրելու, ու արիւթեամբ առաջ երթալու համար՝ ամենէն զորաւոր օգնութիւններուն մէկը բարի օրինակն է: Արջայի՛ ալ նեղ ու դժուարին երկնայ մեզի արբայութեան ճամբան, թէ որ մէյո՛ւ սուրբերուն վրայ դարձնենք աչքնիս՝ ան կարելի է որ սիրտ չառնենք իրենց նմանելու: Սուրբերուն օրինակը գեղը կը յորդորէ, թէ սիրտերնիս շարժելով, և թէ մաքրելիս համոզելով: Սուրբերուն վարքը աւետարանական կատարելութեան իրական ու յայտնի օրինակ մըն է, որ աստուած գլխադնիս կը գնէ ու կրէ. Ինչպէս որ իրենք իմ պատուիրանքներս պահեցին, դուն ալ կրնաս պահել ուղեւոր որ ըլլաս. իրենց օրինակը քեզի կը սորվեցընէ ինչ որ պարտեալն ես աստուծոյ, ինչ որ ընկերիդ. ինչպէս պէտք է վայելէս աշխարհի բաները, ինչ բաներէ ետ կենաս. միով բանիւ՝ ինչ պիտոր ընես ու ինչ պիտոր ջընես, քրիստոնէաբար պարելու համար:

ՄԱՍՆ Բ.

Սուրբերուն վարքը անանկ գիրք մըն է որ ամենքը կը հասկընան, զիտունն ալ ագէան ալ խելացին ալ անխելքն ալ: Իսուիթ մարդարեւին երկինքի վրայ ըսածը՝ սուրբերուն վարքին վրայ ալ կրնայ ըսուիլ. Երկինք պարսկէն զխոստ ստապոն-ծոյ: Ի՞նչ պէս կը պատմեն առանց խօսելու: — Սրեւուն ու

լուսնին լուսովը, աստղերուն դեղեցկութեամբը: Աւրիշ լեզու չունի երկինքը, բայց աս իր անձայն լեզուն՝ բոլոր աշխարհը կը լսուի. սկիւթացին ալ յոյնն ալ բարբարոսն ալ կը հասկընայ: Ասանկ ալ սուրբերուն վարքը՝ աստուծոյ պատուիրանքները մեզի կը պատմեն՝ իրենց առաքինութիւններովը, ինչ որ գիրքերը ու քարոզները դժուարաւ կրնան մեզի հասկըցընել յայտնի կը տեսնանք ու կը հասկընանք սուրբերուն օրինակովը: Իրենց խոնարհութիւնը, իրենց եղբայրսիրութիւնը, իրենց աշխարհիս բաներուն չկարողիլը, իրենց հաւատարմութիւնը, իրենց ամեն կատարելութիւնները տեսնելով՝ կարելի բանն է առաքինութիւնը չիսիրել, ու հետեւաբար չիբազալ առաքինի ըլլալու: Սիկիոյ հիկորդ ժողովն պատկերամատները դատապարտելու պատճառներուն մէկն ալ աս եղաւ՝ որ հաւատացեալք տեսնելով սրբոց պատկերները, ու յիշելով անոնց վարքը, սիրտերնին վառուի անոնց առաքինութեանը հետեւելու: Ասոր համար ալ է որ սուրբ եկեղեցին անոնց սօները սահմանած է, չէ թէ միայն զատ զատ սօները՝ այլ նաև բոլորը մեկտեղ, իբրև թէ ըսելով մեզի. Տեսէք ձեր հաւատքին քաջազուկները, անսէք զանոնք որ աշխարհս արժանի չէ իրենց, զորս ոչ արժէ աշխարհս. անսէք զանոնք որ աշխարհս արժամարձեւով աստուծոյ արժանի եղան. ասոնց զձեզ բաղդատեցէք, ու խոնարհեցէք՝ Պօղոս առաքեալն ըսածին պէս. Սյուսանէպոս եւ մէք որ ըսելը պէտք մնայն ՚ի բայ ընկէտոյս: Սուրբ մը չիկայ՝ որուն վարքը մեզի խրատ չըլլայ. թէ որ անձնասիրութիւն ընելու տեղ մը կայ, հոս է. ջանանք նախանձիլ անոնց՝ ինչպէս նոյն առաքեալը կրսէ. Եյսիսանիսարդ լեբոստ շնորհայն, որ լսաի էն:



ՄԱՍՆ Գ.

Բայց մենք որ այսչափ տկար ենք ու այսչափ արգելքներ ունինք, կրնանք նմանիլ սուրբերուն: Հոս է խրատ անելու տեղը, ու սրբոց օրինակին ամենէն հարկաւոր տեղը: Սուրբերը ապացոյց են մեզի՝ որ կրնանք մենք ալ իրենց նմանիլ, ամեն արգելք ոտքի տակ անելով: Վասն զի աստուծոյ սէրը ամեն դժուարութիւն կը զիւրացնէ, ու աւանակ մխթարութիւններ կուտայ մարդուս՝ որ աշխրբին տուածներէն գեր՝ ՚ի վերոյ են: Իրաւ է որ սուրբ ըլլալու համար՝ պէտք է մենք մեզի դէմ՝ պատերազմինք, մեղմէ հրաժարինք, ախտերնիս զսպենք, զբայարանքնիս մահացընենք. աս բաներս բնական ուժով չեն կրնար ըլլալ: Բայց հոս է որ յայտնի կըլլայ սաղմոսին խօսքը՝ Սքանչելի է աս դոսած ՚ի վերայ սրբոց եւրոց: Վասն զի ինքն է որ իր շնորհովը կը զիւրինցընէ մեզի ասոնք, ու անանկ կը քաղցրացընէ ու կը թեթեւցընէ՝ մինչև կրնայ բռնել: Լաւ թէ քաղցը է, և բեռն ի՞մ քոտրոգի:

Սուրբերուն օրինակն որ չունենայինք, կրնայինք վախնալ, ու մեր վախը իրաւացի կրնար երեւնալ: Բայց սոչափ մարտիրոսներուն՝ փախուկ օրիորդներուն՝ ու ամեն սրբոց քաջածը ապացոյց է՝ մեր վախը ընդունայն ըլլալուն: Սինք լեռներու աւնապասներու մէջ կեանքերնին անցուցին. անոնք վանքերու մէջ թաղուած ճգնութեան ու աղօթքի հետ եղան. անոնք իրենք զիրենք քունէ ու կերակուրէ զրկեցին, անոնք սոսկալի օտանջանքներու զխմացան, ծեծի, բանտի, շղթաներու, կրակի, սուրի, սղոցի, քարկոծուելու, գաղաններու առջին ձգուելու. Գարիժեղան, սղոցեղան, սպանմամբ սրոյ

Ջոան: Աս բաները աչւընուս առջին որ բերենք, կրնանք անկարելի սեպել աստուծոյ պատուելանքները պահելը. աստուած անոնց ատ բաները քաշելու ուժ որ տուաւ, մեզի չնտար՝ քրիստոսնի վարք անցընելու համար. մեր քաջածը կրնայ բաղդատուել անոնց քաջածներուն հետ. գատաստանին օրը աս բաղդատութիւնը Քրիստոս տէրն մեր ընելու որ ըլլայ, ինչ պատասխան կրնանք տալ: Ուրեմն, առաքելոյն ըսածին պէս, քանի որ ատեն ունինք՝ բարեգործութեան հետ ըլլանք: Միւլդեա ժամանակն ՚ի յետ է, գործեցոյս գբարիս: Թէ որ սուրբերուն աստիճանն ալ չիհասնինք, ջանանք իրենց հետեւելու. վասն զի աս ջանքն ալ զմեզ երանելի կընէ, ինչպէս Քրիստոս ինքը բսաւ: Երանի որ քաղցեալ և ծարաւի իջնի աբարաւիւնան: Աս քաղցն ու ծարաւը, այս ինքն բաղձանքն ու ջանքը, մեզի կըցածնիս ընել որ աայ, ան ատենը աստուած ալ կօյնէ, իր շնորհովը մեր վախճանին կը հասնինք:

ԱՂՕԹԻ

Վ՛սուրբք աստուծոյ, որ երեմն մեզի պէս տկար մարդիկ էիք, ու կը բաղձաք որ մենք ալ որ մը ձեզի պէս երանելի ըլլանք. մենք ալ ատ ձեր երանութեանը կը հաւատանք: Գուք երկինքն էք, մենք դեռ երկրիս վայ, բայց արդէն խկ ձեր քաղաքակիցներն ենք՝ իբրև Քրիստոսի հաւասարեալք՝ Գաղաթից սրբոց և ըսպանի սոսոսոյ: Թէ և խեղճ՝ քաղց ու ողորմելի՝ աս արտասուաց հօլտիտ մէջ, բայց աստուծոյ որդիքն ենք, ժառանգի սոսոսոյ և ժառանգաթիցի Քրիստոսի: Աս աչքով յայեցէք մեր խեղճութեանը վայ, ու մեր աղօթքը մատուցէք

աստուծոյ՝ որ ձեզի համար ձախութիւն տուած է մեզի համար բարեխօսելու: Բարեխօս եղիք մեզի համար, որ կը բազմանք ձեզի նմանող ըլլալ վայելեցէք ձեր երանութիւնը, բայց մի մոռնաք մեր խեղճութիւնը՝ որ ձեր օգնականութեանը կարօս ենք՝ ձեր քովը դալու համար:

Պատկիչ սրբոց քոց Գրիստոս, որ պատկես դուրբս քո, և աննեօ զիամն երկիւղածաց քոց, և նայիս սիրով և քաղցրութեամբ յարարածս քո, լուր մեզ յերկնից՝ ի սրբութենէ քումմէ, բարեխօսութեամբ սուրբ աստուածածնին, և ազաջանօք ամենայն սրբոց քոց, լուր մեզ տէր և ողորմեա, ներեա քուեա և թող զմեղս մեր արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոց Հոգւոյդ, այժմ և մշտ և յաւիտեանս:

# ՄՏԱԾԱԿԱՆ ԾԷ.

Ննչեցեց յիսայ:

## ՄԱՍՆ Ա.

Ննչեցեց ինչ համար աղօթք չընելը, ու ինչ կերպով որ կրնանք՝ անոնց չօգնելը, չէ թէ միայն բարեպաշտութեան ու եղբայրսիրութեան գէմ է, այլ նաև մարդկութեան գէմ՝ անզգայութիւն մըն է: Անոնք որ զղջմամբ ու խոստովանութեամբ կը մեռնին, բայց մեղքերնուն ասպախարանքը գեռ չեն քաշած, պէտք է որ մեռնելն են ետքը քաշեն: Աստուած ամեն մեկուն իր ազախարանացը չափ ու ատեն կը սահմանէ, աս չափն ու ատենը՝ ոչ իրենք կրնան համառօտել, և ոչ աստուծոյ արդարութիւնը կը համառօտէ՝ ինչուան ետքի բնիտնը պէտք է որ հատուցանեն: Միայն շնորք մը ըրած է՝ որ սուրբ եկեղեցւոյ աղօթքը ու պատարագները կարենան օգնել իրենց, թէ թեւընէլ իրենց նեղութիւնը. իրենց պատժոյն չափն ու ատենը քիչընէլ: Ըսել է որ աստուած անոնց ընելու ողորմութիւնը՝ մեր ձեռքը գրեր է. թէ որ մենք իրենց համար աղօթք՝ պատարագ՝ բարեպարծութիւն ընելու ըլլանք, աստուած կ'ողորմի

իրենց. ուրեմն իրենց վիճակը կերպով մը մեզմէ կը կախուի: Սա ասանկ ըլլալով՝ ննջեցեալքը մեր վրայ իրենց ազատարարներուն պէս կը նային, կըս պատեն որ օգնենք իրենց՝ արքայութեան հասնելու համար. ու ականալով մեր անդապուծիւնը, իրաւամբք կրնան գանդախել մեր վրայ: Որչափ ալ աստուծոյ արդարութիւնը կուշայրնէ իրենց վարձքը՝ մինչև որ մաքրուին, բայց սիրելի են իրեն այն հոգիները, ու կուզէ որ օգնենք իրենց որ շուտով խաղտին: Սատուած էրբոր խորայեւացիները կուզէր պատժել, ու Մովսէս իր աղօթքովը աստուծոյ բարկութեանը արգելք կը լար, ըսաւ իրեն. Թոյլ գար, և սաքախնջի Կնոս: Իսկ հոս ամենեւին անոր ներհակը կըսէ մեզի, կուզէ որ աղօթքով արգելք ըլլանք իր արդարութեանը, որպէս զի ննջեցեալը պատիժը կարձըցընէ:

Մ Ա Ս Ն Բ.

Իրենց պատիժը՝ որ աստուծոյ տեսութեանէն զուրկ մնալն է՝ գժօխքին պատիժէն տարբերութիւն չէր ունենար, թէ որ ըմբնալու յոյսը չըլլար: Սա զրկուամը՝ որ մենք հիմայ չենք զգար՝ մեռնելէն ետքը մարդու անանկ տանջանք մը կուտայ, որ ամեն մարտիրոսներուն քաշածը մէկտեղ և ոչ կը բաղդատուի անոր: Վասն զի մարդուս հոգին անանկ վերաբերութիւն ունի իր ըստեղծողին հետ, որ իր մարմնոյն հետ ունեցած կապը անոր քով ստուեր մըն է: Արդ թէ որ հոգւոյն իր մարմնէն բաժնուելը անանկ սաստիկ պատիժ մըն է, որ աստուած Արամայ մեղացը ատ պատիժը դրաւ, հապա հոգին որ մեռնելէն ետքը կուզէ մէկէն միանալ աստուծոյ հետ ու չիկրնար,

ինչ սոսկալի պատիժ պիտոր ըլլայ իրեն. ամեն վայրկեան մեռնիլ մը, չէ թէ հոգին մարմնէն այլ հոգին իր ստեղծողէն բաժնուելով: Աշխարհի բուրբ ցաւերը մէկտեղ ժողված՝ ան ցաւին չեն հասնիր. թէ որ աստուած վայրկեան մը բանար աչքը նուս դիմացը քաւարանին տեսարանը, ու լսէինք ննջեցեալ հոգւոց հէծութիւնն ու հառաչանքը՝ որ ողբօքարոս՝ Ի վերայ մեր բարեխմբ ըսէին մեզի, չէր կրնար դիմանալ սրտերնիս: Չարագործ մը տանջանաց մէջ տեսնալու որ ըլլանք, սրտերնիս կը կըրարաի. հապա այնչափ արդարներուն հոգին այն խեղճ վիճակին մէջը տեսնալով՝ Ինչպէս կըրնար դիմանալ: Իսկ էրբոր տեսնայինք որ այն հոգւոցը մէջ մեր սիրելեաց հոգիներն ալ կան, եղբարց, քերց, ծնողաց, որդւոց ու բարերարաց, էրբոր տեսնայինք որ մեր պատաճառովն ալ հոն էյնօղներ կան, ինչ կըրար սրտերնիս: Ասոնց ամենն ալ մեր աղօթիցը՝ մեր օգնականութեանը կարօտ կը սպասեն, ու մենք թերևս և ոչ կը մտածենք զիրենք:

Մ Ա Ս Ն Գ.

Բայց թէ որ զանոնք չենք մտածեր, գոնէ զմեզ մտածենք, ու մեր շահուն համար օգնենք իրենց: Ինչ մեծագոյն շահ կրնայ ըլլալ մեզի՝ քաւարանէն հոգի մը խաղտելէն աւելի. այն խաղտած հոգին զնքը պարարկան կը սեպէ մեզի համար բարեխօս ըլլալու առ աստուած, և թերևս անոր բարեխօսութեամբը աստուած պիտոր տայ մեզի յարատևութեան շնորքը՝ որով կարենանք մենք ալ փրկութեան հասնիլ: Թէ որ աստուած յայտնէր մեզի արքայութեան մէջ հոգի մը՝ որ մեր ա-

դօժքովը քաւարանէն խալըսած ըլլար, ի՞նչ վստա-  
հուածեամբ կը գիմէինք իրեն, ի՞նչ ջերմեանդու-  
ծեամբ մեր յաւիտենական փրկութիւնը իրեն կը  
յանձնէինք: Աս մտիծարանքը ունենալնիս մեզմէ  
կը կախուի. երբոր մեր աղօթքովը՝ մեր նպաստ-  
ներովը հոգի մը խալըսէնք, ու իր երանութիւնը  
կանխել տանք, թէ և մենք զինքը չիճանչնանք՝ ին-  
քը զմեզ ազէկ կը ճանչնայ, ու կրնանք վստահիլ՝  
որ զմեզ չմոռնար: Արքայութեան մեջ ապերախ  
սուծիւն չիկայ, մոռնալ չիկայ. արքայութեան  
հոգիքը Փարաւոնին տակառապետին պէս չէն,  
որ բանտէն ելածին պէս՝ մոռցաւ զՅովսէփ նա-  
հապետը. հարկ չիկայ որ Յովսէփայ ըսածը իրենց  
ըսէնք. Արասդես ինչ ողորմութիւն, և յիշեցէս դէս յոր-  
ժած Բարի Լիւիօնի թեղ: Մեր աղօթքովը խալըսած  
հոգին անանկ երախտագէտ կըլլայ մեզի, որ՝ ան-  
կարելի է որ մոռնայ զմեզ. կը փափաքի ու կը  
ջանայ որ մենք ալ օրմը արքայութիւնը իրեն քովը  
երթանք, ու մեզի համար միշտ կը բարեխօսէ առ  
աստուած:

Իսկ թէ որ մենք ննջեցելոց համար չաղօթենք,  
անփոյթ ըլլանք իրենց օգնելու, աստուած անանկ  
կրնէ՝ որ մեռնելնէս ետքը՝ մեզի ալ օգնող չըլլար:  
Մանաւանդ թէ աստուծոյ արդարութիւնը կը  
զօկէ զմեզ նաև սուրբ եկեղեցւոյ համօրէն ննջե-  
ցելոց համար ըրած աղօթքներէն ու մատուցած  
պատարագներէն, մեր անգութութիւնը ու ննջեցե-  
լոց համար աղօթք չընելնիս պատժելու համար:  
Ուրեմն ննջեցելոց օգնելը մեր շահն ալ է. անանկ  
որ՝ մեզի ալ անգութութիւն ըրած կըլլանք, թէ որ  
ննջեցելոց համար չաղօթենք:

Ա Ղ Օ Թ Գ

Յիսուս փրկիչ իմ, ողորմէ մեր ննջեցելոցը՝ ու-  
րոնք քու արարածներդ ըլլալէն ՚ի զատ, քու  
պատուական արեանդ գինն ալ էն: Յիշէ անոնց  
համար քաշած չարչարանքներդ, ու խաչին վրայ  
մեռնելդ. թէ թեցուր իրենց պատիժը, ու կար-  
ճըցուր իրենց ապաշխարանաց ատենը. որպէս զի  
զան վայելէն քու երանելի ատեութիւնդ, ուրկէց  
զուրկ ըլլալնն է իրենց ամեն խեղճութիւնը:

Աստուածածին անարատ մայր տեառն և կոյս  
սուրբ, բարեխօսեա առ որդին քո միածին, զի  
փրկեցէ զմեզ ՚ի սպառնալեաց գեհնոյն, և պար-  
գևեցէ մեզ զերկնից արքայութիւնն, և հան-  
գուցէ զհոգիս մեր ննջեցելոցն. օգնեա և ինձ  
Քրիստոս այսօր յառաջին ճանապարհին, և ՚ի  
միւսանդամ գալտեանն քո օգնեա ինձ:

# ՄՏԱԾԱԿԱՆ ԾԸ.

Նորէն ննչեցերոյ վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Աստուծոյ ամբաւ ողորմութիւնը ու Քրիստոսի փրկչին մերոյ մեղի համար պատրաստած անհուն արգիւնքը մտածելով՝ կրնանք վստահիլ որ օր մը մենք ալ մեր բարեպաշտ ննջեցերոյ հետ երկինքը զաստուած վայելենք պիտոր: Քիտէր Քրիստոս մեր տկարութիւնը՝ որ մկրտութեան ատեն մեղի տուած շնորքը ինչպէս գիւրաւ կըրնանք կորսնցընել: անոր համար խոստովանութեան ու հաղորդութեան սուրբ խորհուրդները սահմանեց, որպէս զի մեր անմեղութիւնը հոգևոր նաւակոծութեամբ կորսնցընելու որ ըլլանք՝ անոնց ինչպէս տախտակի մը պըլուելով՝ կարենանք յաւիտենական խղզութենէ խալըսիլ: Ասովն է որ կը վստահինք, չէ թէ միայն մեր յաւիտենական փրկութեանը վրայ, այլ և քաւարանէն ազատ ըլլալու: վասն զի քանի անգամ որ խոստովանութեան ու հաղորդութեան սուրբ խորհուրդները կընդունինք, կըրնանք երեւակայել որ Քրիստոսի խաչն տակը կեցեր ենք, ու իր սուրբ կողէն բխած

արիւնն ու ջուրը վրանիս վազելով՝ զմեզ կը լուայ ու կը մաքրէ: Աս խորհուրդներն են որ զմեզ Քրիստոսի արգեանցը մասնակից կընեն, ու մեր պզտի ու օղորմելի բարեգործութիւնները իր արգեանց հետ խաւնելով՝ անանկ կը մեծցընեն, որ օր մը պիտոր չեճանչնանք մերը ըլլալնին: իբրև թէ Ովկիանոսին մէջը դգալ մը ջուր լեցընէինք, ու անով բոլոր Ովկիանոսը մերը սեպուէր: Վասն զի Քրիստոս տերն մեր մեր գլուխը ըլլալով, էրբոր մենք իրեն հետ կը միանանք՝ իր արգիւնքը մերը կը սեպուի՝ իրեն հետ մէկ մարմին ըլլալովնիս, ինչպէս Պօղոս առաքեալը կըսէ. Ինչ յարմի Քրիստոսի է, և անորմէ յանդամաց նորա: Ասովն է որ գաւաթ մը ջուր ողորմութեան համար տալը՝ յաւիտենական վարձուց արժանի կըլլայ:

## ՄԱՍՆ Բ.

Բայց մաքրուելու կարօտութիւն ունենալով ալ որ աչընիս անգին բանանք, կրնանք դարձեալ մխիթարուիլ ասով որ, որչափ ալ նեղութեան մէջ ըլլանք՝ ուղիւով կը քաշենք մեր քաւարանը, ու այն ապահովութիւնն որ ունինք՝ վերջապէս օր մը զաստուած գտնալու ու յաւիտեան զինքը վայելելու, ամեն տանջանք մեղի կը քաղցրացընէ: Իրաւ՝ մեծ տանջանք է հոգւոյ մը համար, իր մարմինէն բաժնուելու ատեն՝ չեկրնալը մեկէն աստուծոյ հետ միանալ: վասն զի մարդուս հոգւոյն իր մարմնոյն հետ ունեցած կապը՝ իր ստեղծողին հետ ունեցած կապին քովը շուք մըն է: Ուրեմն թէ որ մեր մարմինէն բաժնուելը այնչափ ծանր տանջանք է մեզի, հապա ինչ պիտոր ըսենք Աստուծ մէ բաժնուելնուս համար: Բայց աստու-

ծոյ շնորքին մէջ մեանողին կամքը բողբոլիլն աստուծոյ կամացը հետ մէկ ըլլալով, քանի որ աստուծոյ արդարութիւնը, կուզէ անոր քաւարանին մէջ մնալը իր ուզածն ալ ան կըլլայ: Քանի որ աշխարհիս վրայ էնք, չենք գիտեր համակամութիւն աստուծոյ կամացը հետ ինչ ըսել է, աչքը նիս անգին որ բանանք, ան ստենը պիտոր իմանանք՝ ինչն Քրիստոս տէրն մեր ուզեց որ Եւէնջի կաճ 40 ըսենք միշտ: Աս իմանալն է որ քաւարանին հոգեոցը ուզելով կենալ կուտայ հոն. վասն զի ինչպէս արքայութեան մէջ արդարներուն յաւանական երանութիւնը զաստուած սիրելն ու աստուծոյ հետ մէկ կամք ունենալն է, ասանկ ալ աստուծոյ կամքը ան ըլլալն է՝ որ քաւարանին հոգեոց համբերութիւն կուտայ հոն կենալով. քանի որ աստուած կուզէ:

### Մ Ա Ս Ն Գ.

Քաւարանին հոգիները մարտիրոսներուն պէս են. ինչպէս որ անոնք աստուծոյ սիրովը լիցուած՝ յոժարութեամբ կը համբերէին քաշած տանջանքներուն, բայց կը փափաքէին ալ որ վայրկեան մը առաջ ազատին ան տանջանքներէն, ու զաստուած վայելեն, ասանկ են քաւարանին հոգիներն ալ. սիրով կը քաշեն իրենց տանջանքը, բայց քաշածին միշտ տանջանք է, օրմը առաջ կուզեն խաղտիլ անոնցմէ, ու իրենց քաւարանը կարծեցընելը աստուած մեր ձեռքը դրեր է. մեր աղօթքները, ու մանաւանդ սուրբ պատարագն է որ իրենց կօզնէ: Քանի՛ քանի մեր ազգականներն ու բարեկամները, քանի՛ քանի մեր բարերարները, ու անոնք՝ որոնց քաւարան երթալուն թերևս

մենք ուլ պատճառ եղեր էնք, կը սպասեն մեր աղօթքին, ու կը զարմանան՝ որ բաւական չենք յիշեր զիրենք: Թէ որ աստուած քաւարանին զընները բանար, ու կարենային այն հոգիներն ալ խօսիլ մեզի հետ, արդեօք ինչ խեղճ չէին թափեր՝ որ իրենց օգնենք: Աս բանիս վրայ զբացմունքնիս քիչ ըլլալուն պատճառը՝ քիչ մտածելիս է. բայց թէ որ անոնց օգուտը քիչ կը մտածենք, գէթ մեր օգտին համար ըլլայ՝ օգնենք իրենց. վասն զի թէ որ մենք իրենց քաւարանը կարծեցընենք, իրենք ալ մեզի կօզնեն՝ որ կեանքերնիս աղէկ անցընելով՝ հասնինք իրենց հետ արքայութեան մէջ յաւիտեան երանելի ըլլալու:

Ա. Դ. Օ Թ. Գ

Յիսուս փրկիչ իմ, մի՛ թողուր որ մեանելս ետքը ուշանամ քու աստուածային երանացուցիչ երեսօք տեսնալ: Հարկ է որ Եւէնջի կաճ 40 ըսեմ, և ուզելով երթամ քաւարան՝ օրմը առաջ մաքրուելու, բայց քու բուն կամքդ ան է որ աշխարհիս վրայ մաքրուիմ: Ուրեմն շնորք տուր ինձի որ ինչ նեղութիւն ու վիշտ որ խրկես ինձի, սիրով քաշեմ քաւարանի տեղ, որպէս զի մահւոնէս ետքը մէկէն արժանի ըլլամ քու սուրբ արքայութեանդ:

Կուսածին մարդացեալ աստուած իմ Յիսուս, յայնմ աւուր ասէդ ատենին՝ զգինս արեան քո մի՛ դատապարտեր. օգնեա և ինձ՝ Քրիստոս այսօր յառաջին ճանապարհին, և ի՛ միւսանգամ գալու տեսնն քո օգնեա ինձ:

# ՄՏԱԾԱԿԱՆ ԾԹ.

Նորէն ճնշեցեալ շրայ:

## ՄԱՍՆ Ա.

Չեկայ անանկ արտուածիւն մը՝ որուն մէջ աւելի յարմարի Վաւիթ մարգարէին իր արտուածեանցը մէջ ըսած խօսքը. Յիշե՛ցի զսոսրոս, և ուրախ եղէ, ինչպէս մեր սիրելեաց մահուան ատենը: Անանկ ատեն անկարելի է ուրիշ ճշմարիտ մխիթարութիւն մը գտնել. անանկ ատեն բրիւտ աննէական հաւատքն ու յոյսն է միայն՝ որ զմեզ կը մխիթարէ: Անոր համար Պօղոս առաքեալը խրատ կուտայ մեզի՝ որ մեր ննջեցեալը համար անհաւատներուն պէս չխորտանիք, որոնք յուսալու բան մը չունին մահւոնէ ետքը. Ու իսմի՛, եղբարք, եթէ որպէս իջէ՛ք լիան ննջեցեալն, զի մի քրքրեցի՛ որպէս և այլան՝ որոյ ու գոյ յոյս: Եթէ զիտե՛ք որ աստուած իր սիրելիքը ան ատեն կը կանչէ՛՛ երբոր աւելի օգտակար է իրենց, մենք ալ թէ՛ որ կը սիրենք մեր ննջեցեալները՝ պէտք է մխիթարուինք, մասձեղա՛լ որ այն է եղեր իրենց օգտակարը: Թէ որ կը սիրենք զիրենք, իրենց օգուտը պիտոր ուզենք. պիտոր ուրախանանք՝ որ անով

արքայութեան մէջ աւելի կըլայ իրենց փառքը: Աս ստոյգ է որ աչւընիս անդին բացածնուս պէս՝ ամեն բան ուրիշ կերպ պիտոր տեսնենք. ատեննք պիտի որ աստուած ամեն բան արէ՛կ՝ ու ամեն բան ատենին ըրեր է. ու պիտի ըսենք՝ որ ինչ արէ՛կ եղեր է մեր սիրելեաց ան ատենը վախճանելը. ինչ արէ՛կ եղեր է մեր ալ աս կամ ան ատենը վախճանիլը: Վասն զի աստուծոյ ամեն ըրածը՝ մեզի համար միշտ բարին ու աւելի օգտակարն է, ինչպէս Պօղոս առաքեալը կըսէ. Որոյ սէրէն զսոսրոս, յամենայն գործակից լինի նոցա: Յամենայն ըսելով՝ ամենեւին զիպուած մը զուրս չեթողուր. երբոր մենք աստուծոյ կը ծառայենք, աշխրբբիս ամեն բանը՝ ևս առաւել մահն՝ որ մեզի համար ամենէն մեծ բանն է, աստուած մեզի օգտակար կընէ. Յամենայն գործակից լինի մե՛կ է Բարին:

## ՄԱՍՆ Բ.

Իրաւ է, կը հաւատանք որ մեր ննջեցեալ ան ատեն մեռնիլը աւելի օգտակար եղած է. բայց թէ որ դեռ արքայութիւն չէն հասած, թէ որ քաւարանին մէջ նեղութիւն կը քաշեն կոր, ինչպէս կրնանք չխորտմիլ: Ասոր առջի պատասխանը այն է որ՝ երբոր հաւատացեալ մը իր կեանքը աստուծոյ ծառայութեանը մէջ անցուցեր է, ու սուրբ խորհուրդներէն հեռու չէ կեցեր՝ որոնք որ Քրիստոս մեր մեզայնք բաւուածեան համար սահմանած է, երբոր մահուան ատենն ալ սուրբ խորհուրդները ուզեր ու ընդուներ է, ու աստուծոյ ամբաւ ողորմութեանը ովկիանոսին մէջ ինքը զինքը ձգելով վախճաներ է, անոր համար քաւարան չեկայ. Քրիստոս խօսքն է. Ի դաստիարակ ու ճարտէ, 15\*

այլ փոխեցաւ 'ի Տահուանէ 'ի 'իէանս, այսինքն շնորհեալ տակ արքայութիւն կերթայ:

Բայց թէ որ մաքրուելու բան մըն ալ ունենայ, ինչ կը կարծենք, արդեօք չուզէր՞մ կերթայ քաւարան. ո՛հ, չէ: Հոս սուրբ Հարց նիւթական օրինակով մը կը հասկըցընեն մեզի անոր վիճակը: Թագաւոր մը աղքատ աղջկան մը հօտնի, ու իրեն հարս ընարէ, խեղճ աղջիկը անանկ մեծ բախտի հասնելուն համար՝ բողբոլովն երախտագիտութիւն ու սէր կտորած՝ չուզէր ժամ մը առաջ Թագաւորին երեսը տեսնել: Բայց յանկարծ ան միջոցին ցեխի մը մէջ ինկած՝ հաղուստներն ալ գէմքն ալ աղտոտած որ ըլլայ, կուզէ՞ ան վիճակին մէջ Թագաւորին դիմացը ելլել: Արչափ որ ալ բազձայ տեսնել իր բարերարը, բայց քանի որ չէ մաքրուած, չուզէր անոր դիմացը երևնալ: Ասանկ ալ հոգի մը, զոր աստուած արքայութեան փաււացը համար ընտրեր է՝ իրեն հետ միացընելու, ու իբր թէ իրեն հարս ընելու, ինչուան որ չէ մաքրուի՝ չուզէր աստուծոյ երևնալ:

### ՄԱՍՆ Գ.

Ասոր համար է որ քաւարանի հոգիները մեր աղօթիցը կը սպասեն. վասն զի մահւոնէ ետքը իրենք իրենց չեն կրնար օգնել. աստուած ալ պէտք է որ թողու զիրենք քաւարանին մէջ՝ ինչուան որ մաքրուին. բայց անոնց մաքրութեանը առենք կարձեցընելը մեր ձեռքը զրած է, մեր աղօթքնէրովը, մանաւանդ սուրբ պատարագին զօրութեամբն է որ անոնք շուտով կը մաքրուին. անոր համար հոգեհանգիստ պաշտօններ կը կատարենք. անոր համար կըսենք՝ Ահէշ խորհուրդ Գահանային

Բաղկարարած կայր 'ի Բեֆն ասալի ոտբէ սեղանոյն. հար շեջանի, խաւար մերժի, արբմաւ հոգիքն ուրախանան, զի Ռողոմէիան մեղայ լիին: Աւրեմն կրնան իսա ալ օգնել մեր սիրելի ննջեցելոցը՝ մեզի մեծ վսիթարանք պիտոր ըլլայ. մեր ծնողքը՝ մեր ընտանիքը՝ մեր սիրելի բարեկամները՝ մեզի կը սպասեն. թէ որ կարենային խօսել մեզի հետ, ինչ խեղճ չէին Թագեր որ իրենց մահուանը վրայ կը ցաւինք կուլանք, առանց օգնելու իրենց՝ որ ժամ մը առաջ արքայութիւն երթան. ու թէ որ մեր օգնականութեամբը շուտով երթալու ըլլան, ինչ երախտագիտութիւն չեն ունենար, ինչ բարեխօսութիւն մեզի համար չեն ընէր, որ մենք ալ փրկուցութեան հասնինք, ու շնտակ արքայութիւն երթանք: Աւստի մեր սէրն ալ՝ մեր շահն ալ՝ մեր մխիթարանքն ալ՝ զմեզ կը յորդորեն, որ ննջեցելոց օգնենք. որպէս զի իրենք ալ՝ մեզմէ ետքը էկողներն ալ՝ մեզի օգնեն:

Ա. Գ. Օ Թ. Բ

Յիտուս փրկիչ իմ, բողբոլովն քեզի կը յանձնեմ, թէ իմ և թէ իմ սիրելեացս կեանքը. երբոր կուզես կանչել զմեզ, վասն զի գիտեմ որ կանչած ատենդ է ամենէն օգտակարը ինձի ալ՝ իմ սիրելեացս ալ: Բայց միայն քու շնորբդ տուր մեզի, որ մեր մեղացը քաւութիւնը հոս ընդունինք, որպէս զի մէկէն հասնինք քու սուրբ արքայութեանդ:

Հայր անոխակաւ և բարեգութ, մաղթելով հայցեմք 'ի քէն վասն մեր ննջեցելոցն, արժանաւորել հանգստեան օթեանի սրբոցն:



### ՄՏԱԾԱԿԱՆ Կ.

Նորէն ևնչեցեցոց վրայ:

### ՄԱՍՆ Ա.

Չիկայ մտածական մը՝ որ այնչափ ազդեցող թիւն ունենայ մեր սրտին վրայ, ինչպէս ննջեցեւոյ վրայ մտածելը: Մէկ գիէն կը արամինք մեր սիրելեացը մահուանը վրայ, մեկալ գիէն ալ չենք կրնար չիմտածել որ՝ օր մը մենք ալ նոյն ճամբէն պիտոր անցնինք: Աս մտածութիւնը բնական սոսկում մը կը բերէ մեզի. վասն զի մահը ոչ երբէք կրնայ դադրիլ Աստուծմէ գրուած պատիժ ըլլալէն, ոչ երբէք կրնայ մահը մարդուս հետ ընտաննալ: Բայց ինչ է որ աւել սոսկալ կրնէ մեզի մահը. իրաւ՝ հոգիին իր մարմինէն բաժնուիլն ալ ըստ ինքեան սոսկալ բան մըն է, բայց իրտ կը քիչնար այն սոսկումը՝ թէ որ մահընէ ետքը ունենալու վիճակնուս վրայ ստուգութիւն մը ունենայինք: Դատաստանին վախն է որ աւել սոսկալ կրնէ մեզի զմահը. մեղքերնիս է որ մեր սիրտը կը խայթէ, Խայթոյ ճահու մեղ էն, որ մեր սիրտը կը խայթէ, ուրեմն ջանանք մահուն վայթոյը անպիտան ընել՝ մեղքէն հեռու կենալով:

### ՄԱՍՆ Բ.

Թէ որ հրեշտակ մը երևնար մեզի մահընուս առն ու ըսէր. ինչ կը վախնաս, աչքդ գոցածիդ պէս՝ արքայութիւնը պիտոր բանաս, ինչ մխիթարանք չէր ըլլար մեզի. գրեթէ վախերնիս բոլորովն կը դադրէր: Բայց փառք տանք Քրիստոսի՝ որ չէ թէ հրեշտակի ձեռքով մեզի աս մխիթարանքը կուտայ, այլ իր բերնովը. մեր ձեռքը կը դնէ աս մխիթարանքը ունենալնիս, երկու դիւրին թէութեամբ: Այլ որ սուրբ հաւատքին մէջը հաստատուն կը կենայ, ու իր հաւատքին համեմատ կեանք կանցընէ, այսինքն ուլ որ աստուծոյ պատուիրանքները կը պահէ, աստուծոյ պատուիրանքներն ալ ծանր բաներ չըլլանին՝ Յոհաննէս առաքեալը կը վկայէ. Ես պատուիրանք նորս չեն ինչ ծանուսի. անիկայ շիտակ արքայութիւն կերթայ՝ առանց դատաստան մանելու: Չի որ զբանս իմ լի է, ես հասարայ այնմ՝ որ աստուծոյն զէս, ՚ի դատաստան ու յապնէ, այլ խոյնցաս ՚ի ճահուսնի ՚ի կեանս:

### ՄԱՍՆ Գ.

Բայց որչափ ալ թէթեւ ըլլան աս երկու թէութիւնները, որովհետեւ մարդուս տկարութիւնը կրնայ պակասիլ, Քրիստոսի բարեգութ զիրտը՝ ասոր ճարն ալ ըրեր է: Որչափ ալ պակասութիւններ ըրած ըլլաիք, երբոր հեռու չենք կենար այն սուրբ խորհուրդներէն՝ որոնք որ Քրիստոս մեզից թողութեան համար սահմաններ է, մնացածը

աստուծոյ անհուն ողորմութիւնը կը հոգայ, քրիստոնէական հաստատուն յուսով իրեն ապաւինելնու համար: Վասն զի աս կերպով յուսացողներուն է որ աստուած Գաւիթ մարգարէին բերնովը փրկութիւն կը խոստանայ. Գաւիթ յիս յասացաւ, քրիստոնէական: Աւրեմն փառք Քրիստոսի մարդասիրութեանը՝ որ մահուանէ սոսկալու պատճառ չէ թողուցեր մեզի. մահուն խայթոցը բթացուցեր է, ալ չկիրնար խայթել զմեզ. մահուն ճիրանները փշեր է, մազիկները ջաղջախեր է: Առիծմը վրանիս յարձըկելու որ ըլլայ, ինչպէս կը սոսկանք. բայց երբոր զխանայք որ ժանկըր թափած է, մազիկները խլած, չկրնար մեր սոսկումը: Մահն ալ առաջուց առիծի պէս մարդկանց վրայ կը յարձըկէր. բայց քանի որ Քրիստոս անոր մեր անոր մազիկները ջարդեց ու ժանկըր փշերց, չկիրնար ասէց ետքը զմեզ վախցնել:

Ա. Ղ. Օ Թ. Բ

Յիսուս փրկիչ իմ, փառք քեզ, որ մեզի համար ասանկ մեծ բարիք ըրեր ես՝ բոլոր սուրբ չարանօրք: Մի թողուր որ մեր մեղքերովը մահուան ձեռքը նորէն զէնք տանք, իր խայթոցը սրենք, ու նորէն մեզի համար սոսկալի ընենք մահը: Բոլոր խաչին վրայ մեռնելու համար ըլլայ, շնորք սուր մեզի որ պատրաստ ըլլանք միշտ աներկիւղ մահուան զխմացը ելլելու, ու կարենանք քեզի պէս ըսել մեռնելու ատեննիս. Հայր, ի յեռնս աստուծոյ զեղբի իմ:

Ժամանակ դարձի իմոյ եհաս ՚ի յերկիր. արդ աեր ընկալ՝ զճառայս քո, և Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ՚ի յերկիր ուղիղ:

### ՄՏԱԾԱԿԱՆ ԿԱ.

Սոսք Ստեփանոս Լախափկայիս վրայ:

### ՄԱՍՆ Ա.

Սուրբ Ստեփանոս առջինը եղաւ՝ Քրիստոսի համար իրենց կեանքը սուտողներուն, ամենէն առաջ վկայեց Քրիստոսի աստուածութեանը, աւետարանական օրինաց առջի մարտիրոսը եղաւ. անոր համար սուրբ եկեղեցին զինքը նախավկայ կը կոչէ: Բայց նախավկայ ըսել սոսկ պատուոյ անուն մը չըլլալը հասկնալու համար, սուրբ Ոսկեբերանը օրինակ մը կը բերէ: Երբոր Փարաւոն Իսրայելացիները հալածեց ինչուան Կարմիր ծովուն եզերքը, հարկ էր որ եգիպտացոց գերի չըլլալու համար՝ ծովէն անդին անցնէին: Մովսէս աստուծոյ հրամանաւ ձեռքը դէս ՚ի ծովը երկընցուց, երկու բաժնեց ծովը, վեհ մը բացուեցաւ Իսրայելացոց առջին. ցամաք էր, բայց սոսկալի ճամբայ. որչափ ալ աստուծոյ օգնականութեանը վստահ էին, մեկը չէր համարձակեր անցնողներուն առջինը ըլլալու. երկու գիւնի ալքը լեռան պէս բարձրացած՝ կը սպառնային ծածկելու մէջը մահողը: Ի՞նչ ըրաւ Մովսէս իրենց սիրա աալու

համար. ամենէն առաջ ինքը ինչու ան սոսկալի վեհն մէջը, գիմացը անցաւ, ու իր օրինակովը ամենքն ալ ետեւէն սիրտ ըրին անցան:

Մովէս Քրիստոսի օրինակն էր. Քրիստոս ճըլ-մարիտ առաջնորդ աստուծոյ ժողովրդեանը՝ ինքը բացաւ իր հաւատացելոց առջին արբայութիւն երթալու ճամբան, նոր ու դժուարին ճամբայ. ու գերազանցապէս ինքը եղաւ առջի մարտիրոսը՝ այսինքն վկայ իր աստուծու թեանը, ինչպէս Պօղոս առաքեալը կրսէ. Պապուրէմ գեղ ասալի ասպոսոյ՝ որ իենդանի ասուէ դամենայն, և Յիսուսի Քրիստոսի՝ որ Վայեայ ասալի պնսպոսոյ Պիղապոսի դէմառոգ դասանու-նիւնն: Ինքը բացաւ աս Կարմիր ծովուն, այսինքն արեան ու մարտիրոսութեան ճամբան ինչմը հաւատացելոց՝ որ նախասահմանեալ էին մարտիրոս ըլլալու. բայց տկար էին, պէտք էր սիրտ տալ իրենց: Ի՞նչ ըրաւ Քրիստոս. իր տեղը իրենց պէս մէկը ընտրեց, այսինքն սուրբ Ստեփանոսը, որ առջինը ըլլայ ու ետեւէն ձգէ ուրիշները. անանկ որ՝ Աստուծմէ իրեն արուած չորքն ու զօրութիւնը, ինչպէս սուրբ գիրքը կրսէ՝ Սքեփանոս այր լի շնորհոգ և զօրութեամբ, իր ետեւէն եկողներուն ալ հաղորդեց, այնչափ մարտիրոսներ իր օրինակովը աւելի սաստիկ շարճարանքներու ալ գիմայան:

ՄԱՍՆ Բ.

Սուրբ Ստեփանոս մարտիրոսութեան մէջ առջինը ըլլալէն ՚ի զատ, իր մարտիրոս ըլլալուն կերպն ալ շատ դժուարին էր: Հայհոյիչ սեպեցին զինքը, ու առանց քննութեան՝ առանց դատաստանի՝ վրան վաղեցին. Ի՞նչնն ասոսորաւ ՚ի

Վերայ նորա. քաղքէն դուրս տարին զինքը, ու հոն քարերու կարկուտ մը վրան թափեցին անգթաբար: Իսկ ինքը ան կարկուտին տակը համբու-թեամբ կեցած, քարկոծուելու տանջանքին մէջն ալ սիրուն հրեշտակի մը պէս զուարթ, իր հոգին Քրիստոսի կը յանձնէր: Անանկ սքանչել տեսարան մըն էր այն տեսարանը՝ որ ինքն Քրիստոս հանդիսատես ուղեց ըլլալ. Երկինքը բացուեցաւ, ու ինքը հոն իր երկնաւոր Հօրը ալ կողմը կեցած երեցաւ. Ահա դեսանէմ գերիշնո բարեալ, և զորքի մարտոյ՝ զի կայ ընդ աջի ասպոսոսոյ: Չորեր ընդ աջմէ աստուծոյ նստած՝ այլ կեցած, իր քաջ նահաւատակ տեսներու ու պսակելու համար: Ան ատենը իրաւցընէ կատարեցաւ սաղմոսին խօսքը՝ Երբե՛ր ՚ի գլխի նորա պսակ ՚ի դարէ պապասակնէ: Հրեաները զսուրբը քարկոծելու համար՝ քարեր վրան թափեցին. իսկ Քրիստոս այն քարերը գոհար դարձընելով՝ անոնցմով զինքը պսակեց: Անոնցմէ պատուական ի՞նչ քարինը կրնային ըլլալ, որ սուրբ եկեղեցոյ նախավկայն պսակեցին:

Հիմայ սուրբ Ստեփանոսին քաջութիւնը մեր վատութեանը հետ բաղդատենք: Ի՞նչ է մեր քաշած նեղութիւնը, ի՞նչ քաշած ունինք Քրիստոսի համար. սուրբ Ստեփանոս քարկոծուեցաւ իբրև հայհոյիչ, մեքը պզտի նեղութիւն մը՝ թեթև նախատինք մը՝ չենք ուղեր կրել Քրիստոսի սիրոյն համար. կը արամինք, անհամբերութիւն կրնենք, կը արտնջանք, հոգեւորէ ալ կը պաղկնք: Վասն զի չենք մտածեր՝ որ անոնցմով պիտոր պսակուինք երկինքը. հաւատքնիս տկար է, չենք մտածեր՝ որ անոնցմով աստուծոյ զաւկընէրը ըլլալնիս կերևնայ. Ի՞րապառ համբերութեան կայք, իբրև յորքէն մարտիչալ է ՚ի յեն ասպոսոսոս: Իր ուրիշ զաւկընէրը արունին ալ իրեն համար թափեցին, իսկ մենք սիրտ չենք ըներ իրեն համար նեղութիւն քաշե-

լու . կը լքանինք . Ձի մի աշխարհի ինչի առջամբ յերուժ  
և լգանիցի , զի ըն ևս արեամբ լաի պարեբաւեալ հա-  
խառակ իացի և եղացն :

Մ Ա Ս Ն Գ .

Որչափ որ զարմանալի է սուրբ Ստեփանոսին  
արևուծիւնը , նոյնչափ ալ զարմանալի է իր հե-  
զուծիւնն ու անյխաչարուծիւնը : Ձէ թէ միայն  
ներեց իր քարկոծողներուն , այլ եղբայրսիրու-  
ծեան հրաշալի օրինակ մը տալով մեզի՝ իրենց  
համար աղօթք ալ ըրաւ , իրենց համար բարեխօ-  
սեց առ աստուած՝ որ ըրածնին մեզք չխտսէ :  
Աս լեզուն սուրբ Ստեփանոս Յիսուսէն սորված  
էր , որ խաչին վրայ իր խաչահանուացը համար  
աղօթելու ատեն՝ ըրածնին չեն գիտեր , ներէ ի-  
րենց ըսաւ իր երկնաւոր Հօրը : Սուրբ Ստեփա-  
նոս ալ նոյն աղօթքը ըրաւ Յիսուսի . Տէր մի հաճա-  
բի՛ր սոցա զայս՝ ի մէջ : Գրիստոս նոյն աղօթքը ըրեր  
էր իր երկնաւոր Հօրը անոնց համար , որոնց մեզ-  
քը անհամեմատ առաւելուծեամբ ծանր էր քան  
զսուրբ Ստեփանոս քարկոծողներունը . ուստի  
նոյն աղօթքովը սուրբ Ստեփանոս ստիպեց զՊրիս-  
տոս , որ իր աղօթքը ընդունի՝ ու աղօթքին պտու-  
ղը եղաւ Պօղոս առաքելով՝ որ իր քարկոծողնե-  
րուն կամակից էր , անոնց զգեսաները կը սպահէր  
կոր՝ որ հանուած աւելի ուժով կարենան քար-  
կոծել :

Աս աղօթքը ընելու ատեն մեռաւ սուրբ Ստե-  
փանոս . Եւ զայս իբրև սոցայ , ննջեաց : Գրիստոնէաւ  
կան առաքինուծիւններուն ծայրագոյնը՝ կատա-  
րելու ատեն մեռաւ , որպէս զի օրինակ տայ մեզի ,  
որ եթէ իրեն պէս արիւն չենք թափեր , իր մարտի-

րօտուծեանը նմանինք , իրեն պէս ներող ըլլանք :  
Ներենք ուրիշներուն՝ որ աստուած ալ մեզի նե-  
րէ . կարօտ ենք աստուծոյ ներողութեանը , թէ  
որ մեզի հետ դատաստան մանալու ըլլայ՝ չենք  
արդարանար . ուրեմն մենք ուրիշներուն շնորք ը-  
նենք՝ որ ինքն ալ մեզի ընէ շնորհս քրիստոսի շնորհաց ,  
ու զմեզ իր սուրբ արքայուծիւնը հասցընէ :

Ա Ղ Օ Թ Բ

Ո՛վ սուրբ Ստեփանոս , դուն որ քու թնամի-  
ներուդ համար բարեխօս եղար՝ կարելի բան է  
որ ինձի համար չըլլաս , որ զքեզ կը սիրեմ՝ ու կը  
պատուեմ : Անոնք չիմնդրեցին քեզմէն՝ ու իրենց  
համար բարեխօսեցիր , կարելի բան է որ ես խըն-  
դրեմ՝ ու իմ խնդրուածքս չընես . ան ատենը  
զքեզ քարկոծողները աւելի բախտաւոր գըտ-  
նուած կըլլան քան զիս . անոնց համար բարեխօ-  
սելովդ պարտական ըրիր զքեզ՝ քու ջերմեանդ  
ներուդ համար աւելի բարեխօսելու : Աս վստա-  
հուծեամբ կը գիմեմ քեզի , մի մերժեր իմ խըն-  
դիրքս , բարեխօսէ ինձի համար ալ որ դամ ար-  
քայուծիւնը՝ քեզի հետ օրհնեմ զաստուած յա-  
ւիտեան :

Աղօթելիք որ քարածիղն լինէին՝ ի քեզ , նախդ  
ի վկայս , զի առցես զհատուցումն բարի յարար-  
չէն ամենեցուն . և այժմ , աղաչեմք զքեզ , և վասն  
մեր բարեխօսեալ :

# ՄՏԱԾԱԿԱՆ ԿԲ.

Յոհաննոս Կարապետի յիշայ :

## ՄԱՍՆ Ա.

Սուրբ Յոհաննէսը տղայութենէ ՚ի վեր ինչուան երսուն տարուան որ եղաւ՝ անապատը քաշուած էր. Եւ յանապատ մինչև յօր երկուց նորա Իրայելի : Ի՞նչ չիճնած օրբուէր էր, բայց այսու ամենայնիւ փախաւ աշխրբիս փօթուութիւններէն. մեղք չունէր, ու զինքը ապաշխարութեան տուաւ. ապաշխարութիւն չեքարողած՝ ինքը ապաշխարեց : Տղոց օրինակ տուաւ՝ որ անմեղութեամբ մեծնան, ու մեծերուն՝ որ ապաշխարութիւն ընեն, որչափ ալ անմեղ ըլլան : Իր ըրած ապաշխարութիւնը քարոզածէն շատ աւելի էր. հագածը ուղի մաղէ հիւսած, գօտին կաշիէ, ու կերածը մարախ ու վայրի մեղս : Ասանկ ապաշխարող կեանք անցուց ան՝ որ դեռ չիճնած սկսեր էր մարդարէանալ. ան՝ որ մարդարէներուն մեծը եղաւ, հին օրէնքին վերջն մարդարէն ու նոր օրէնքին առջինը, ու Վրիստոս ինքը բուսաւ՝ որ Յոհաննէս առաւել քան զմարդարէ էր : Ուրիշ մարդարէները Վրիստոսի գալուստը

մարդարէացան. ինքը ցուցուց՝ քարոզեց՝ ճանչցուց զՎրիստոս, ճամբայ բացաւ որ մարդիկ Վրիստոսի ետևէ երթան : Կը մկրտէր ջրով որոնք որ ապաշխարութիւն կուզէին ընել, բայց կիմայընէր իրենց որ իր ըրած մկրտութիւնը Վրիստոսի դնելու մկրտութեանը պատրաստութիւն մըն էր, իւրենը ապաշխարութեամբ կը տրամադրէր՝ մեղաց թողութիւն ընդունելու, Վրիստոսինը մեղաց թողութիւն կուտար : Ամենքը կը կարծէին որ թերևս ինքը ըլլայ Մեսիան, իսկ ինքը կը լուսաւորէր զերենք ըսելով. Ես չեմ Վրիստոսը՝ որուն կը սպասէք, ես իրեն առջեւն եկողն եմ, ես իրեն կօչկին կապերը քակելու արժանի չեմ : Ասանկ կը ըլլայ ճշմարիտ խոնարհութիւնը :

Սուրբ Յոհաննէսը դեռ չիճնած երկրպագութիւն ըրաւ Վրիստոսի, բայց անկէջ ետքը ջնասաւ զՎրիստոս, անանկ որ չէր ճանչնար ամենէն Վրիստոսի կերպարանքը : Անոր համար աստուած խոստացեր էր իրեն՝ նշանով մը յայտնել աստեիին, ու ճանչցընել՝ որն էր Վրիստոսը. Ես ու գիտէի դեռ, այլ որ աստուէսդն դեռ մտքել ըրով նա ասոց օրն. Յոյր վերայ Գետանիցն չէր շարժուի՝ չէ իրանիցն, նա է որ մտքել շարժուի սրբով : Արդեօք ինչ բաղձանքով կը սպասէր Յոհաննէս ան երջանիկ օրը տեսնալու, և ինչ ուրախութիւն ունեցաւ առջի տեսնալուն զՎրիստոս : Բարձրութեան հետք Վրիստոս ալ կուգար կոր մկրտուելու, աստուած իր խոստացած նշանը տուաւ : Յոհաննէս որ յորովայնէ մօրն անանկ ուրախութիւն ունեցեր էր Վրիստոսի ներկայութիւնը առանց տեսնելու իմանալով միայն, արդեօք ինչ ուրախութիւն զգաց սրալին մեջ՝ մարմնաւոր աչքով ալ տեսնելով զՎրիստոս : Իր այն ուրախութիւնը յայտնեց ետքը իր աշխարհներուն ըսելով. Ինչ բարեխոս զեւսային՝ որ ինչ և քէ ինչ՝ որախութեամբ որախ ըինի վասն յայնի զեւսային :

արդ այս ուրախութիւն որ իմ է՝ Լոյս է: Երբոր աս ուրախութեան մէջն էր Յոհաննէս՝ տեսնելով Հոգին սուրբ՝ Քրիստոսի վրայ, Քրիստոս մտեցաւ իրեն, ուզեց մկրտուիլ: Յոհաննէս՝ որ զՔրիստոս որդի աստուծոյ կը ճանչնար. Ե- ես քեզի և վայելցի՝ եմէ սա է որդին սաբաոծոյ. Յոհաննէս՝ որ այնչափ խոնարհ էր, որ զինքը անարժան կը սեպէր Քրիստոսի կօշիկն կապելը. քակելու. Ձե՛մ արժանի իս- նարհիւ Լո-ծանել զԻրացոյ կօշից նորս. արգեօք ինչ զգաց տեսնելով որ Քրիստոս իրմէն մկրտուիլ կուզէր: Իր խօսքէն յայանի է զգացածը. Ինչ պիտոյ է ՚ի քէն մկրտիւ, և քո՞ւ սա իս գաս: Պէտք չէր որ մենք ալ նոյն զգայութենքը, ու անկէց աւելին ալ ունենայինք սուրբ Հաղորդութիւնը ընդունելու ատեննիս, երբոր նոյն ինքն Քրիստոս մեր սիրաը կուզայ, մեր սրտին մէջը բուզէ բնակիլ: Մենք ալ նոյն խօսքը պէտք է ըսենք. Տէր, քո՞ւ սա իս գաս. պէտք է՝ մեր անարժանութեանը չննայելով, իր հրամանըն համար Հաղորդուինք, հնազանդինք իրեն ան հոգւով ու ան խոնարհութեամբ՝ որով Յոհաննէս հնազանդեցաւ զՔրիստոս մկրտելու:

Մ Ս Ս Ն Բ .

Աս խոնարհութեանը՝ աս զգացմանը մէջ ըլլալով Յոհաննէս, երբոր Հրէից քահանաները եկան հարցուցին՝ որ ինքը ո՞վ էր, Քրիստոսն էս, խիստ արամեցաւ՝ որ զինքը իր վարդապետին անղը կը գնէին, ուրացաւ, մերժեց, էս չեմ՝ Քրիստոսը ըսաւ, և ոչ արժանի եմ՝ անոր կօշիկներուն կապելը քակելու: Նոյն վկայութիւնը բոլոր ժողովրդեան առջին ալ տուաւ, ցուցընելով զՔրիստոս ու քարոզելով որ զո՛հ ըլլալու համար եկեր

էր, որպէս զի մարդկանց մեղքը բաւէ. Ահա-ս-սիկ գառն սաբաոծոյ՝ որ բառնայ զԵւը աշխարհի: Աս ալ բաւական չխեպեց, Քրիստոսի աստուածութեանն ալ վկայեց. Քրիստոս իբրև մարդ Յոհաննէսէն վեց ամիս պզտիկ էր, բայց իբրև աստուած՝ յաստուծոյ Հօրէ ծնեալ էր ՚ի յաւիտենից. ուստի Յոհաննէսէն առաջ էր. անոր համար ըսաւ Յոհաննէս. Սա է՝ վասն որոյ ես ասէի, զի՞ի ի՞մ գաս այր՝ որ սառալի ի՞մ էլեւ, զի յառաջ իսկ էր քան զիս: Աս իրեն խոնարհութիւնը՝ իր բարձր պաշտօնին հետ մէկտեղ դառն էր՝ որ Քրիստոս ներբողբան քարոզչի մը պէս՝ բոլոր ժողովրդեան առջին ան մեծ գովասանութիւնը ըրաւ Յոհաննու վրայ: Նախ գովեց իր անմեղութիւնն որ, ոչ գովութեան և ոչ սպառնալեաց հովը կրցեր էր շարժել. Ձի՞ն էլէք քեաննել յանապաքի, եղէքն շարժան ՚ի հոշոյ: Ետքը իր ապաշխարող կեանքը՝ իր խտաւորօն ճգնութիւնը. Այլ զի՞ն էլէք քեաննել, մտք ՚ի հանդերձն խախտութեան դարձաբեալ. ահա-ս-սիկ՝ որք զիս խոնարհ զգեցեալ էն՝ ՚ի քոսն լազաւորաց էն: Ետքը իր պաշտօնին մեծութիւնը յայանեց՝ ամեն մարդարէններէն վեր գնելով զինքը. Այլ զի՞ն էլէք քեաննել, մարգարէ, ոյո՞ւ ասե՛մ յեւ, սառաւել ես քան զմարգարէ: Ետքը Մաղաքիա մարգարէին խօսքովը իր ըսածը հաստատեց. Ձի՞ սա է՝ վասն որոյ գրեալն է՝ էս սառաւորից զհրելալսի ի՞մ սառալի երեսաց քոց, որ պարսաւ քեանց զճանապարհս քո սառալի քո: Ետքը աս ամեն գովեստները կըրեց ըսելով. Ահն ասե՛մ յեւ՝ չե յարուցեալ ՚ի ծնունդս կանանց մեծ քան զՅոհաննէս Միքիւն:

### ՄԱՍՆ Գ.

Թէ որ աս գովութիւնները կարօտ ըլլային աւագոյցի, բաւական էր Յովհաննէս մկրտիչին ունեցած մա՛հը զանոնք հաստատելու: Չի վախցաւ Հերովդէսի անօրէնութիւնը յանգիմաներու. իր պարտքը ընելու համար՝ յանձն առաւ բանա մը առ նել, ու նաև գլխատուել: Ճշմարտութեան վրայ իր կեանքը գրաւ, իր ամեն պատկերուն վրայ՝ որ Աստուծո՛վ ընդունէր պիտոր՝ աս պատկն ալ եւեւ չուց. այսինքն մարգարէներուն հետ՝ իր մարգարէութեան պատկը առաւ, կոյսերուն հետ՝ կուտութեան պատկը, ճգնաւորներուն հետ՝ ճգնութեան պատկը, առաքեալներուն հետ՝ իր քարոզութեան պատկը, ասոնց հետ՝ իր մարտիրոսութեան պատկն ալ առաւ: Երանի իրեն՝ որ արժանի եղաւ Քրիստոսի բերնէն անանկ գովասանք ընդունելու. ուրիշները իրեն համար՝ փորը սառանայ կայ կը սէկն: Սի՛ն Յովհաննէս՝ ու սպիտակ և ու լուսաւոր, և ասէին՝ դե գոյ՛ ի նմա. աս նախատինքը՝ իրեն մեծ գովեստ է, վասն զի Քրիստոսի համար ալ աշխարհս նոյն խօսքը բաւ: Այստս մեզի որ աշխարհս գովասանքը կը փնտռենք, անիկայ կը սէրենք. Քրիստոսի գովածն է գովելը, աշխարհս շատ անգամ՝ պարտաւելու բաները կը գովէ: Քրիստոս զՅովհաննէս ձախորդութեան ատենը գովեց՝ երբոր բանտին մէջ էր, իսկ աշխարհ յաջողութեան մէջ կը գովէ զմարգ: Քրիստոս սպասեց որ Յովհաննէսին աշխարհները երթան, ու ետքը սկսաւ գովել զինքը. իսկ աշխարհս մեր երեսին, ու մեր բարեկամներուն առջին միայն կը գովէ զմեզ, իսկ ետեւէն կը պարտաւէ:

### Ա. Գ. Օ Թ. Բ

Ով երջանիկ սուրբ Յովհաննէս, առաքեալ և մարգարէ, կարապետ և մկրտիչ որդւոյն աստուծոյ, դուն որ յարգանդէ սրբեալ էիր՝ ու ապաշխարողի կեանք վարեցիր, դուն որ Հոգւով սրբով լցեալ էիր՝ ու աշխրբիս փորձութիւններէն փախար՝ անապատը քաշուեցար, օգնէ մեզի որ մեղաւոր ըլլալով՝ աշխրբիս վասնդներուն մէջն ենք. բարեխօս եղիր մեզի համար, որ մենք ալ քու վարուցդ հետեւելով՝ արժանի ըլլանք գատաստանին օրը՝ Քրիստոսի բերնէն այն ցանկալի գովութիւնը լսելու. Առնի՛ ծառայ Բարի և հասարակի:

Դառանդին Հօր սպասաւոր  
 Եւ յարգանդէ երկրպագօշ,  
 Կարապետ և մկրտիչ  
 Այնմ որ մեղաց մերոց բաւիչ,  
 Լեր բարեխօս առ նոյն գլխած՝  
 Ձեզբէլ զգիր մեր յանցանաց:

# ՄՏԱԾԱԿԱՆ ԿԳ.

Սուրբ Աստուածաձօրը վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Սուրբ աւետարանը սրբոյն Յովսէփայ վրայ  
 աս գովեստը միայն կրնէ. Եւ Յովսէփ այդ նորա քան-  
 ղի արտաբ էր: Բայց սուրբ գիրքը արտաբ ըսելով՝  
 կիմանայ ամեն առաքինութիւն ունեցողը, ինչպէս  
 Յօբ նահապետին համար կրսէ. Սուրբ արտաբ եւ ճշ-  
 ճարտաբ. ինչպէս Զաքարիայի ու Եղիսաբեթի հա-  
 մար ալ կրսէ. Երկուքն արտաբ էին: Սուրբ գիրքին  
 խօսքին աս իմաստը Յովսէփ իր գործքովը կը հաս-  
 տատէ: Ինչ փորձութիւն, ինչ տագնապ էր որ  
 քաշէց՝ երբոր իմացաւ սուրբ Կուսին երկու հո-  
 գւով ըլլալը. կը ճաննար անոր սրբութիւնն ու  
 մաքրութիւնը, բայց սուրբ Կուսին լուծութիւնը  
 կարծես որ ներշահը կը հաստատէր: Ի՞նչ ընէ  
 խեղճը. մէկ զիէն օրէնքը կարգէրը զանիկայ իր  
 քովը չիպահէլ, մէկալ զիէն ալ չէր ուզէր՝ ա-  
 նանկ ամենասուրբ անձի մը նախատինք ընէլ: Ա-  
 սանկ անտանելի տարակուսի մէջ միտքը գրաւ որ՝  
 առանց ամենեւին ծայն հանելու՝ զինքը տնէն հա-  
 նէ, բայց ինչ սրտով: Իր չիտուծալը մէկէն մտա-

ծածը ընելու՝ յայտնի կը ցուցնէ, որ աղօթքով  
 աս աստուած գիմեց. ան ատենը աստուած հրեշ-  
 տակի ձեռքով իմացուց իրեն մարդեղութեան  
 խորհուրդը, ու առաջ որ ըստ օրինաց միայն ի-  
 րեն հարս ըրեր էր զսուրբ Կոյսը, անկէց ետքը  
 աստուածոյ յայտնի հրամանովը՝ իր հարսը եղաւ,  
 ու ինքը հօր մը ամեն իրաւունքը ունեցաւ Քրիս-  
 տոսի վրայ, ու Աստուածայի կոչուելու արժանի  
 եղաւ: Սրբեօք ինչ մխիթարութիւն, ինչ ուրա-  
 խութիւն զգաց ան ատենը սուրբ Յովսէփ. աս-  
 տուած ասանկ կը մխիթարէ իր երկիւղածները  
 փորձելէն ետքը, ասանկ իրենց արցունքը կը  
 սրբէ: Ան ատենը իմացաւ որ սուրբ Կուսին լու-  
 թիւնը չէ թէ միայն իր խոհեմութենէն առաջ  
 կուգար, վասն զի ըսելովը տարակոյսը պիտոր չի  
 վէրնար, այլ և իր մեծ խոնարհութենէն: Ուստի  
 ան որ կասկածելի եղած էր իրեն, անկէց ետքը  
 եղաւ ակնածելի, իբրև ճշմարիտ մայր աստուծոյ.  
 ան որ տնէն դուրս ընէլ մտածեր էր, անկէց ետքը  
 զինքը անարժան կը սեպէր անոր հետ բնակելու:  
 Անկէց կրնայ իմացուիլ որ ինչ հօգ, ինչ խնամք  
 ունէր սուրբ Կուսին վրայ՝ որուն աստուած զինքը  
 ինտանակալ ընտրէր էր: Սուրբ Կուսին ուրախու-  
 թիւնն ալ իրն էր, արամութիւնն ալ. երբոր  
 Օրոստոս կայսեր հրովարտակին հնազանդելու  
 համար հարկ եղաւ որ սուրբ Կոյսը ան վիճակին  
 մէջ Բեթղէմէմ ասանի, ու հօն տեղ մը չըլտաւ  
 զինքը հանդէսցնելու, արգեօք ինչ եղաւ իր վեր-  
 քը. բայց աստուած անոր տեղը մխիթարեց զին-  
 քը՝ ամենէն առաջ սուրբ աստուածածնայ հետ  
 ինքը տեսնելով զՈրդին աստուծոյ մանկացեալ  
 ու ըսելով հրեշտակներուն երգը աղքատ ողորմելի  
 այրին վրայ՝ որ լուսով պատած էր, ու երկինք  
 գարձած: Նմանապէս մեծ եղաւ իր ուրախու-  
 թիւնը, չէ թէ միայն հովաներուն երկրպագու-



Թիւնը տեսնելով, այլնաւ իրեք Թագաւորներուն հետուանց դալը աստիւն մը առաջնորդութեամբ, ու որդի աստուծոյ՝ փրկիչ աշխարհի ճանհաւնին, մտաւր մը մէջ դրած մանկիկը:

ՄԱՍՆ Բ.

Բայց մէկալ հողմանէ ալ իր վիշտերը պակաս չեղան. նախ՝ երբոր սուրբ աստուածածնայ հետ Յիսուսը քառասուն օրէն տաճարը տարաւ, ու հոն Սիմէոն ծերունւոյն մարգարէութիւնները ըսեց՝ Յիսուսի ու սուրբ աստուածածնայ վրայ, սուրբ աստուածածնայ սիրտը անցնելու սուրբ՝ ան ատենէն իր սիրտն ալ անցաւ. մանաւանդ որ սուրբ ծերունւոյն առ սուրբ աստուածածնայ միայն ան խօսքը ըսելէն, գուշակեց որ ինքը սիրտոր չիտեսնայ ան օրերը, ու չիկրնայ պիտոր գոնէ մսիթարել իր ամենասիրելի հարօր: Քիչ ատենէն Հերովդէսի հալածանքը վրայ հասաւ. ան վախին ու տագնապին մէջ ինչ կուգար ձեռքէն, բայց եթէ աստուծոյ ապաւինիլ: Աստուած ալ նորէն իրեն հրեշտակ խրկեց, ու իբրև վերակացուի աստուածորդւոյն և աստուածամորը՝ իրեն հրամ. մեց, որ անէ երկուքն ալ Եգիպտոս փախցնէ: Մեծ պատիւ էր իրեն՝ որ աստուծոյ տեղը բռնէ երկրի վրայ, հայրութիւն ընէ աստուծոյ միածին որդւոյն, աստուծոյ դաղանեացը հաղորդ ըլլայ, հրեշտակները իրեն հետ խօսին, ու սուրբ աստուածածնայ պահապանը ըլլայ. ասկէց մեծ ինչ պաշտօն, ինչ պատիւ կրնայ ըլլալ: Բայց թէթև վիշտ չէր իրեն տեսնել՝ թէ ինչպէս հարկ կըլլար Քրիստոսի՝ փախչել բռնաւորի մը ձեռքէն, որուն կրնար մահ խրկել ու խալցօիլ: Կը մտածէր

ճամբուն դժուարութիւններն ու վտանգները, զիչեր ատեն փախչելու հարկը, ու եգիպտացւոց կռապաշտութիւնը. բայց ամեն բան յանձն աւած՝ անխառն անջիտ իր պաշտօնը կատարեց: Եգիպտոս տարաւ Յիսուսն ու սուրբ աստուածածնին: Հոն ինչ որ քաշեցին՝ աղքատ ու անծանօթ ըլլալով, զիւրին է մտածելը. բոլոր քաղքին մէջ մէկ աստուածապաշտ մը չիկար՝ որ իրենց օգնէր կամ դժար վրանին. բոլոր քաղքը անօրէնութեանց մէջը թաղուած էր: Հոն այսչափ նեղութեանց մէջ սպասեցին՝ ինչուան որ աստուած ուրիշ կերպ անօրինէ: Վերջապէս Հերովդէս մեռաւ, ու նորէն աստուած հրեշտակի ձեռքով խմացուց սուրբ Յովսէփին՝ որ նորէն առնէ Յիսուս ու Սարիամ, ու դառնայ հրէաստան. բայց որովհետև Բեթղէհէմ թագաւորեր էր Սըքեղայոս՝ Հերովդէսի որդին, վախցաւ հոն երթալու. ու աստուծոյ իրամանաւը տարաւ զանրէնը Նազարէթ քաղքը. հոն բնակելով Յիսուսը նախնային կոչուեցաւ, ինչպէս մարգարէութիւն եղած էր վրան:

ՄԱՍՆ Գ.

Հոն մեծցաւ Յիսուս՝ սուրբ Յովսէփայ ձեռքին տակը, սուրբ Յովսէփ իր աշխատանքովը զինքը կը կերակրէր. անոր համար ետքի դատաստանին օրը՝ երբոր Քրիստոս զատաւորը զէ բարձեալ և էրբայ ինչ որ ըսէ, սուրբ Յովսէփ չիկրնայ պիտոր ուրիշ արդարաց հետ ըսել՝ Երբ որբայ բարձեալ և էրբայ ինչ որ ըսէ: Բայց ինչպէս որ աստուած իր սիրելեացը վիշտը պակաս չընէր, ան միջոցին մէջն ալ մեծ վիշտ մը խրկեց սուրբ աստուածա-

ծնայ և սուրբ Յովսէփայ: Ամեն տարի զատկին օրերը Երուսաղէմ կերթային, Յիսուս ալ մէկ-աւել առին՝ երբոր տասուերկու տարուան էր. 'ի դարձին՝ Յիսուս հոն մնաց առանց իմացնելու իրենց՝ իրենք ենթադրեցին որ ազգական ուղեկիցներուն հետ ետեւուն կուգար: Բայց երբոր իրիկուն եղաւ, ու չխտասն զինքը, սրտերնին թունդ էլաւ, դարձան Երուսաղէմ զինքը փնտռելու. իրէք օր յուսահատելու տառապանք քաշեցին՝ ասդիս անդին ինկած, ամենուն հարցնելով, ամեն տեսակ վտանգներ մտքերնէն անցընելով: Սուրբ Յովսէփայ իր ցաւը հերիք չէր, սուրբ աստուածածնայ ցաւն ալ իրեննվրայ կեւեւնարարդեօք աշխարհ իրենց ինչ անսպաս կերեւոր առանց Յիսուսի. իրենց սրտին կսկիծն ու տագնապը աղէկ կը հասկըցուի սուրբ աստուածածնայ խօսքէն՝ որ ըսաւ Յիսուսի, երբոր իրէք օրէն ետքը գտան զինքը տաճարին մէջ. Որքէսէ, Ղէնէ, Գործ գործեցեր դո՞ւ ընդ մէջ. ահաասիկ հայր քո և էս քոսապէս և խորհէս դէպ. Որդեակ, ինչ ըրիր մեզի, հայրդ ու էս ինչ քաշեցինք՝ ինչուան որ գտանք զքեզ:

Ասկէց ետքը սուրբ աւետարանին մէջ յիշատակ մը չիկայ սուրբ Յովսէփայ վրայօք. սուրբ եկեղեցին աւանդութեամբ զիտէ՝ որ Յիսուսի չարարանքներէն առաջ մեռաւ սուրբ Յովսէփ: Ասկէց կիմացուի՝ որ մեռնելու ատենը Յիսուս ու Մարիամ իր քօլն էին: Ամեն արդարներն որ Քրիստոսի գալստենէն ետքը մեռան ու կը մեռնին, աս մտիթարութիւնն ունին՝ որ մեռնելէն ետքը Յիսուս ու Մարիամ պիտոր տեսնան, անոնց քօլը պիտոր երթան. իսկ սուրբ Յովսէփ մեռնելովը՝ անոնցմէ պիտոր բաժնուէր. անոր համար որչափ որ մեծ էր իր մտիթարութիւնը՝ իրենց ձեռքը հոգին աւանդելով, այնչափ մեծ էր

իր տրամութիւնը անոնցմէ բաժնուէլուն: Բարեպաշտական կարծիք է, բայց խիստ հաւանական, որ Յիսուսի խաչելութեան օրը յարութիւն աննոյ մեռելներուն մէկն ալ սուրբ Յովսէփ էր, որ ետքը Յիսուսի հետ հոգեով և մարմնով երկինք համբարձաւ:

Ա. Դ. Օ Թ Գ

Ո՛վ սուրբ աստուածահայր, այսչափ Յիսուսի համար քաշած ցաւերուդ ու այսչափ ուրախութիւններուդ համար ըլլայ, ընդունէ իրմէն մեզի համար աս շնորքը՝ որ Յիսուսի, Մարիամու ու քու անունդ բերնէրնիս ըլլայ մեռած ատենիս, որպէս զի բարի մահուամբ արժանի ըլլանք յաւիտենական փրկութեան:

Որ արժանի եղեր տեսանել մարմնով զորդին աստուծոյ յայտնապէս, որ էից լուսոյն արժանի եղեր բառնալոյ 'ի քօ զերկս, բարեխօսեա առ ատեր վասն մեր:

# ՄՏԱԾԱԿԱՆ ԿԳ.

Հասարկի վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Աստուած իր միածին որդին Յիսուս Քրիստոս տուաւ մեզի՝ որ իրմով փրկուածեան հասնինք. զմեզ ալ տուաւ իրեն՝ որ փրկէ զմեզ. Չի ամենայնի՛ վր է քաղցր նմա, քաղցէ զէւանս յաւիպէնական: Ամեն բան Աստուծմէ է. կոչումն, ընտրութիւն, կոչման հնազանդելնիս, ու յարատեւութիւնն որ մեր կոչմանը վախճանն է. բայց մենք ալ մեր կոչմանէ գործակից պիտոր ըլլանք աստուծոյ շնորհացը, մեր կոչումը պիտոր ապահովենք բարեգործութեամբ, ու փրկութեան արժանի պիտոր ըլլանք յարատեւութեամբ: Ուրախանանք որ աստուած արդէն զմեզ մկրտութեամբ ու հաւատով կոչեր է ՚ի յաւիտենական կեանս. բայց աղօթք ընենք որ աստուած մեզի շնորք ալ տայ մեր կոչմանը մէջ յարատեւելու. վասն զի շատերն ալ կոչեր է, որոնք փրկութեան պիտոր չհասնին իրենց անհոգութեամբը. Բաղարժ էն կոչելեալէ, եւ ստիպու էն ընարեալ: Իրաւ կոչեր է զմեզ աստուած, ու զմեզ Քրիստոսի տուեր է, որպէս զի զմեզ յաւիտե-

նական կենաց հասցընէ. Քրիստոս ալ իր չարչարանօքը ու մահուամբը ճամբայ բացեր է մեզի. բայց ասով չըլնինար. Քրիստոս մեր ընելքն ալ մեզի կը սորվեցընէ՝ ըսելով. Այս էն յաւիտենական կեանս, զի ծանօթէն զպէս միայն ճշմարիտ ստիպած, եւ զբ առաքելոյեր զՅիսուս Քրիստոս: Աս ծանօթութիւնը՝ արբայութեան մէջ կը հասնի մինչև ՚ի դէմ՝ յանդիման աստուծոյ տեսութիւնը, որն որ արդարոց յաւիտենական երանութիւնն է. բայց քանի որ երկրի վրայ ենք՝ աս ծանօթութիւնը այն տեսութեանը սկիզբն է, ու հարկաւոր պայմանը անոր համեմուտ: Աս ծանօթութիւնը՝ քանի որ երկրի վրայ ենք՝ տեսական միայն չիկրնար ըլլալ, այլ պէտք է որ գործնական ալ ըլլայ. հերիք չէ որ ընդունինք ինչ որ սուրբ հաւատքը մեզի կը սորվեցընէ, այսինքն մէկ աստուած մը միայն ըլլալը, իրեք անձ ունենալը, երկրորդ անձը՝ որ է Քրիստոս՝ զմեզ փրկելու համար աշխարհ գալը: Աս ծանօթութեանը մէջ կիմացուի մեր պարտքերն ալ որ ունինք աստուծոյ ու Քրիստոսի մեր փրկչին. այսինքն իրեն հնազանդելու, իր օրինակին հետեւելու, իրեն նմանելու: Թէ որ աս պարտքերը չընենք, ընդունայն կըլլայ մեր հաւատքը՝ այսինքն զինքը ճանճաւնիս. վասն զի զաստուած չընճանչնար մէկը՝ Թէ որ աստուծոյ պատուիրանը ները չկայահեր, ինչպէս Յոհաննէս առաքեալը կըսէ. Յայսիկ գիպե՛՛՛ք՝ երէ ծանեալ զեա, երէ զպա. քաղցրանս նորա պահելե՛՛ք:

## ՄԱՍՆ Բ.

Չարմանք չէ որ Քրիստոս անքն մեր ստեպ կը կրկնէ ինչ պատճառաւ իր աշխարհ գալը. այսինքն որպէս զի զինքը մեզի ճանչցընէ, ու իրմով

դաստուած ու մեր պարտքերը ճանչնանք: Աս է մեր հաւատքին հիմը, ճանչնալ որ Քրիստոս, որդի Կուսին Սարիամու, մարդ միայն չէ, այլ մարդ ըլլալէն առաջ աստուած էր ու որդի աստուծոյ՝ իր շօրը հաւասար. ելաւ շօրմէն ու եկաւ աշխարհ իր ուղեւորը. Եւ ի՛նչ շօրէ և ելի յաշխարհ: Ու իր շօրը ամեն կամքը կատարելէն ետքը՝ նորէն դարձաւ ուսկից որ եկեր էր. Իբրևաւ Բողոսմ գաշխարհ, և երևամ առ Հայր: Այսինքն իբրև տէր աշխարհի՝ եկաւ ուղած ատենը, ու գնաց երբոր ուղեց: Աս կարող հաւատալէն ետքը՝ ուրիշ գլխուարին բան չիմնար հաւատալու. վասն զի խորհուրդ Երրորդութեան, խորհուրդ հաղորդութեան, մեղաց Թողութիւն, մշանջնաւորութիւն ու անսխալութիւն եկեղեցւոյ, ու անոր ամեն մեզի սորվեցուցածը գիւրին կըլլայ հաւատալ. որովհետև ինքն Քրիստոս, աստուած և մարդ, ասանկ կը սորվեցընէ: Հաւատքի մասանց գէմ փորձութիւններ որ մաքերնիս դան, միշտ պէտք է հոն ասնինք մաքերնիս՝ որ Քրիստոս է ըսողը, ու Քրիստոս աստուած է. Քրիստոսի եկեղեցին ասանկ կը սորվեցընէ, Քրիստոսի եկեղեցին չիկըրնար սխալեր: Սրտաշարժ պատմութիւն մըն է Խոսրովանու մանկանը պատմութիւնը. երբոր Ղիոն ղեախնոս աս պզտի աղուն բերանը՝ իր սուրբ հաւատքը խոստովանելուն համար չարաչար դարնեղով, հարցուց իրեն՝ Ո՞վ սորվեցուց քեզի աս հաւատքը, պատասխանեց անմեղ մանկիկը. Մայր սորվեցուց: Ասանկ պէտք է ըսենք մենք այլ աստանային՝ աս փորձութիւնները բերած ատենը. Սուրբ եկեղեցին Քրիստոսի, մեր մայրը, ասանկ կը սորվեցընէ:

### Մ Ա Ս Ն Գ.

Աս ամեն բան կը հաւատանք, բայց գործքի որ կուգայ՝ հոն է գոժուարութիւնը: Առաքեալներն ալ կը հաւատային, ու Քրիստոս տէրն մեր քանի անգամ գովեց իրենց հաւատքը, բայց փորձութեան ատեն՝ զինքը Թողուցին ու ցրուեցան: Անոնց անատենի ունեցած հաւատքին պէս՝ տկար ու անհաստատ է մեր հաւատքն ալ. նոյն օրը՝ նոյն վայրկեանն որ յերմեռանդ հաւատացեալներ ենք, նոյն պահուցութիւններուն մէջ՝ որ քիչ մը առաջ կատէինք՝ նորէն կրնանք իյնալ: Մեզի ալ առաքեալներուն ըսածը կըսէ Քրիստոս. Այժմ հասարայ, անա եկեղեցի թամ՝ դի դիս միայն Բողոցոս: Հի մայ կը հաւատանք. բայց քիչ մը ետքը՝ փորձութիւն մը պատահածին պէս, թէ որ աղօթքով պատրաստուած ըլլանք անոր գէմ, հաւատքնիս ու առաջադրութիւննիս չիբաւեր. ան ատենը բանը բանէն անցնէն ետքը կիմանանք՝ ինչպէս տկար ու անհաստատ ըլլալին. անձնատիրութիւննիս կը յաղթէ, կը մտնանք Քրիստոսի սուրբ հաւատքը: Վասն զի ինչպէս որ սորվեցուց մեզի Քրիստոս մէկ աստուած՝ իրէք անձ ըլլալը, ինչպէս որ սորվեցուց իր որդի աստուծոյ ըլլալը, ու մեր փրկութեանը համար աշխարհ գալը, վերջապէս ինչպէս սորվեցուց՝ որ ասոնք չիհաւատացողը իր աշկերտը չիկրնար ըլլալ, ասանկ ալ սորվեցուց՝ որ խաչը ուսը առած իր ետեկէն չիգնացողը՝ իր աշկերտը չիկրնար ըլլալ: Որ ու Բառնայ սխալ էր և գայ պէնի իմ, ու կարէ իմ առաքելոս լինելէ

Ա. Ղ. Օ թ. Գ

Յիսուս փրկիչ իմ, մի Թողուր որ հաւատքս մտնեամ, ու քու աշխերտդ ըլլալէն զքեզ իմ շնորք տուր ինձի որ գործքով հաւատամ քեզի, որ հաւատքս մեռած հաւատք չըլլայ: Քու խօսքդ է որ առանց քեզի բան չենք կրնար ընել: Առանց ի՞նչ էի կարէի առնել: ուրեմն ևս առաւել չենք կրնար առանց քու շնորհացդ՝ ոչ հաւտալ քեզի, և ոչ հաւատքնիս գործքով ցուցնել: Քու առաքելոցդ հետ կը խնդրեմ: Յաւել էի՞ հասարակ: Այստե՛ս հար մանկանը հօյրը պէս կաղաղակեմ: Հասարակ գէր, օգնէա անհասարակէանս ի՞նչո՞ւմ: մինչև ինձի ալ ըսես: Ե՛րբ, հասարակ գո ինչո՞ւմն գէտ:

Եւ մի տար սասանութեան զոտս մեր փրկիչ, այլ ամրացո հաստատուն հաւատով յանձինս մեր զոյս զսէր և զհաւատս մինչև յաւիտեան:

### ՄՏԱԾԱԿԱՆ ԿԵ.

Աստուծոյ նախախնամութեանը վստահութիւնը  
ունենալու վրայ:

### ՄԱՍՆ Ա.

Աստուծոյ նախախնամութեանը վրայ տարակուսելը մեծ անիրաւութիւն ընել է աստուծոյ դէմ: Երբոր բան մը կը խնդրենք իրմէն, ու ան ուղածնիս չիտար, պէտք չէ որ գանգատինք: Վան զի ինքը մեզմէ աւելի կը ճանչնայ մեր բարիքը, ու կուզէ բարիք ընել մեզի, անոր համար անիրաւ կըլլայ մեր ըրած գանգատը: Պարտքիան չէր աւանակին աս անիրաւ գանգատանքէն զինքը արգարացնելու: բայց զմեզ սիրելէն՝ տես որ աստիճան կը զիջանի, ու զմեզ գատաւոր կընէ իր նախախնամութեանը: Ձեր զաւկընէրը ձեզմէ բան մը խնդրելու որ ըլլան, կրու, ու գիտնաք որ ուղածնին իրենց մաս չէ, չէք տար իրենց: գուց որ բնութիւննիդ գէտ ՚ի չարը յօժարեալ է, ու զաւկընէրնուդ ուղած բարիքը կընէք իրենց, հապա որչափ աւելի ձեր երկնաւոր հայրը ուղածնիդ եւել բարիք կընէ ձեզի: Մարդուն բերանը կը գոցէ աս ձեռնարկութիւնը: Իսկ էիէ դուք որ լարդ է՞

գիւղէտ պարգևս Բարին Կաւ Կրտայ յերոյ, որաւ ևս ա-  
 առաւել Հայրն յեր յերկնից Կառն Բարին այնոյի՛ որ Խըն-  
 Դրէն 'ի նմանէ: Աս ձեռնարկութիւնը՝ ամեն տա-  
 րակոյս ամեն թերահաւատութիւն ամեն վախ  
 դուրս կընէ մարդուս սրտէն, սրտիկէն առ մեծը  
 ձեռնարկելով, այսինքն երկրաւոր ծնողաց ըրա-  
 ծէն ցուցնելով՝ մեր երկնաւոր Հօրը ըրածը՝ ու-  
 ըրուն մեր վրայ ունեցած դուժը չիբարդատուիր  
 երկրաւոր ծնողաց իրենց զաւկըներուն վրայ ու-  
 նեցածին:

### ՄԱՍՆ Բ.

Քրիստոսի ըրած ձեռնարկութեանը մեծ ուժը  
 հոս է. Դուք որ լարդ էք. այսինքն դուք՝ որ աւելի  
 կուզէք առնուլ քան թէ տալ, աւելի չարիք ը-  
 նելու յօժարութիւն ունիք քան թէ բարիք ընե-  
 լու. խկ աստուած՝ որ բարիք ընելէն ուրիշ բան  
 չուզէր, ամենուն բարիք կընէ, չարերուն ալ ամեն  
 օր իր արեւը կը ծագէ, մեղաւորներուն ալ իր ան-  
 ձրեւը կուտայ. Զարեգախի Իւր Ծագէ 'ի վերայ լարաց և  
 Բարեաց, և ածէ անխէ՛ 'ի վերայ արդարաց և Տեղաորաց: Ուրեմն  
 դուք որ չար էք, ու երբոր զաւկըներնուդ  
 հետ է բաներնիդ՝ ամեն չարութիւն մէկդի կը  
 գնէք, իրենց ուզածը կուտայ, հասո Բնչալէս  
 կրնաք տարակուսիլ որ ձեր ուզածը չիտայ աս-  
 տուած՝ որ այնչափ բարի է ու բարերար:

Քրիստոսի ձեռնարկութեանը ուժը հոս ալ  
 չիլըմըննար, այլ երկրաւոր ծնողաց հետ կը բաղ-  
 դատէ մեր երկնաւոր Հայրը: Ի՞նչ է մարմնաւոր  
 հօր մը իր զաւկին հետ ունեցած առընտրութիւնը՝  
 աստուծոյ մեր ամենուս հետ ունեցածին քօղը-  
 չէ թէ միայն մարմնինս ստեղծողը ինքն է, անանկ

որ՝ մեր ծնողը չէին կրնար մեզի կեանք տալ ա-  
 ւանց աստուծոյ, այլ մեր հոգւոյն ստեղծողն ալ  
 ինքն է: Ուստի անանկ անբարդատուելի առաւե-  
 լութեամբ հայրերնիս է աստուած, որ չուզէր  
 իրմէն ուրիշը մեզի հայր կանչէնք. Եւ հայր մի իրէտ  
 յեւ յերեի, և յեր մի է հայր՝ որ յերկնս է: Ուրեմն  
 թէ որ մարմնաւոր հայր մը այնչափ կը սիրէ իր  
 զաւկըները՝ որ իր ժլատ բնութիւնն ալ կը մոռ-  
 նայ, ու անոնց ամեն բարիք ընել կուզէ, հասո  
 ձեր երկնաւոր Հայրն որ բուն հայրերնիդ է, ու  
 ինքը ստեղծէր է զձեզ ու կը սպահէ, որչափ աւելի  
 կը սիրէ զձեզ, ու որչափ աւելի կուզէ բարիք ը-  
 նել ձեզի. Ո՞րաւ ևս առաւել հայրն յեր՝ յերկնից Կառն  
 Բարին այնոյի՛ որ Խնդրէն 'ի նմանէ:

### ՄԱՍՆ Գ.

Հոս ալ գեռ չիլըմըննար Քրիստոսի ձեռնար-  
 կութեան ուժը: Սրտաշարժ նկարագրութիւն մը  
 կընէ աստուծոյ ունեցած խնամոյցը՝ նաև անբան  
 անասուններուն վրայ. ազաւաններուն նայեցէք,  
 կըսէ, ոչ կը ցանեն, ոչ կը հնձեն, և ոչ սլաշար  
 պահելու անդ ունին, ու աստուած զիրենք կը  
 կերակրէ. վայրի շուշանը նայեցէք կըսէ, Բնչալէս  
 կաձի, ոչ կը մանէ և ոչ կը գործէ, բայց իր հա-  
 գածը և ոչ Սողոմոն իր փառաւորութեանը մէջ  
 կըրցաւ հագնիլ: Ուրեմն թէ որ անարգ թաջունը  
 ու անարգ խոսն՝ որ այսօր դաշտին մէջն է՝ վաղը  
 կրահը կը նետուի, առանց իրենց խնդրելուն՝ աս-  
 տուած անանկ կը հոգայ, որչափ ևս առաւել  
 զձեզ՝ որ անոնցմէն շատ վեր էք, զձեզ՝ որ իր բա-  
 նաւոր արարածներն էք ու իրմէ բարիք կը խն-  
 դրէք. Ո՞րաւ ևս առաւել Հայրն յեր յերկնից Կառն

Բարին այնոցի՛կ՝ որ+ խնդրեն 'ի նմանէ: Մի՛ երկուի+, չէ  
 քան զԲաղաս յագս լաւ է+ դոռ+: Թողունք աստու-  
 ծոյ ըրած բարիքը անբան անասուններուն, որոնք  
 չեն կրնար ալ խնդրել Աստուծոյ իրենց պիտոյ-  
 քը. մեր վրայ նայինք, որչափ հոգեւոր ու մարմնա-  
 ւոր շնորքներ ըրած է մեզի ու կրնէ անգագար,  
 առանց մեր խնդրելուն. ուրեմն թէ որ առանց  
 մեր խնդրելուն ալ այսչափ շնորքներ կրնէ մեզի,  
 որչափ ևս խնդրելու որ ըլլանք. Ո՛րա՛ք եւս առա-  
 ւել քացի բարին այնոցի՛կ՝ որ+ խնդրեն 'ի նմանէ:

Աս ամեն պատճառներէն յայտնի է՝ որ երբոր  
 աստուած մեր խնդրիքը չկրտար, մեր կողմանէ է  
 պահուած թիւնը. իր վրայ արանջալու տեղը՝ մեր  
 վրայ պէտք է արանջանք որ խնդրելու բաներն իս  
 չենք գիտեր, մեր վնասը կուզենք իրմէն, կամ ա-  
 ւելի օգտակարը խնդրելու տեղը՝ աւելորդը կը  
 խնդրենք: Իսկ ինքն որ մեզմէ շատ եւել գիտէ  
 մեր օգուտը, ու մեր հոգեւոր ու մարմնաւոր կա-  
 րօտութիւնը, մեզի անանկ երեւցած ասենն ալ որ  
 աղօթքն իս չկրտար՝ ուզածնէս աւելին կուտայ,  
 այսինքն մենք աւելորդը կը խնդրենք, ինքը հար-  
 կաւորը կուտայ. մենք մարմնաւորը կը խնդրենք,  
 ինքը հոգեւորը կուտայ: Ինչպէս թէ որ մեկը ստէս  
 հաղորդուելու անհոգ ըլլայ, ու սրտանց ըսէ աս-  
 տուծոյ՝ Ձեռոց մեր հանապառօրէ քոր մեզ այսօր, աս-  
 տուած անոր աղօթիցը ըրած ու խնդրածէն ա-  
 ւելի տուած կըլլայ, թէ որ մարմնաւոր հացին  
 տեղը՝ ջերմեանդութիւն ապ իրեն ստէս հա-  
 ղորդուելու: Վերջապէս թէ որ Գրիստոսի աշ-  
 խարք գալէն առաջ ալ անիրաւութիւն էր՝ աս-  
 տուծոյ նախախնամութեան վրայ տարակուսի-  
 ըր, աստուած իր միածին որդին աշխրբիս վեր-  
 կութեանը համար ապէն ետքը՝ դեռ տարակու-  
 սիլը ամպարտութիւն է:

Ա. Ղ. Օ. Թ. Բ.

Յիսուս փրկիչ իմ, ինծի համար մեռնելէդ ետ-  
 քը՝ ինչպէս կրնամ տարակուսիլ որ աղօթքն իս  
 չկրտար. կեանքդ ինծի համար տալէդ ետքը՝ ինչ-  
 պէս կրնամ երկբայիլ որ իմ հոգեւոր պէտք ե-  
 ղածը չիտաս: Ձեմ՝ ուղեր ինչ որ օգտակար չէ  
 իմ փրկութեանս՝ որուն համար չարչարուեցար  
 ու մեռար. միայն հոգեւոր փրկութեան օգտա-  
 կար եղածը կը խնդրեմ, ան որ ինծմէ շատ աւելի  
 կը ճանչնաս. աս միայն գիտեմ, որ խնդրիքս չըրած  
 ատենդ ալ աղօթքս կը լսես, ու ուզածէս աւելին  
 կուտաս, չէս կտարեր խօսքդ՝ որ ըսիր. Խնդրեցի+  
 և քացի յեւ:

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո, և շնուս  
 զամենայն արարածս ողորմութեամբ քով, քեզ  
 յանձն առնեմ զանձն իմ, դու հոգս և սպարաս-  
 տես զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմ հետէ  
 մինչև յաւիտեան:

## ՄՏԱԾԱԿԱՆ ԿԶ.

Աստուծոյ ներկայորթներ աշխուռս առջին  
ունենալու վրայ:

### ՄԱՍՆ Ա.

Քրիստոնէական առաքինութեանց մէջ չիկայ  
ուրիշ առաքինութիւն մը՝ որուն այնչափ էական  
եղած ըլլան սուրբերը, ու այնչափ յորդորեն ըղ-  
մեզ ետևէ ըլլալու, ինչպէս աստուծոյ ներկայու-  
թիւնը մտածէ: Աս առաքինութիւնը մեր սուրբ  
հաւատքին վրայ կեցած է՝ որ կը սորվեցընէ աս-  
տուծոյ ամեն տեղ ըլլալը, ու ամեն բան տեսնելը:  
Աստուած ամեն տեղ է, ուրեմն ամեն տեղ պետք  
է յիշելք իր տէր ըլլալը, ու իր ձեռքին տակը ըլ-  
լալնիս. անանկ որ՝ ամեն տեղ կրնանք ըսել Յա-  
կոբ նահապետին ըսածը. Տէր է 'ի փեղ-ոջս յայտիկ,  
և էս ու գիտի: Աստուծոյ ներկայութիւնը աս  
կերպով աչքընուս առջին միշտ ունենալով՝ իր ամ-  
բաւութիւնը միշտ կը խոստովանինք: Աստուած  
ամեն տեղ ըլլալով՝ ամեն բան ալ կը տեսնէ, ա-  
մեն բան իր աչքին առջին է. ուրեմն պէտք է որ  
մենք ալ զինքը միշտ աչքընուս առջին ունենանք.

ու չէ թէ միայն գործքերնիս ու խօսքերնիս՝ այլ  
մտածութիւննիս ալ անանկ ընենք՝ որ իր ներ-  
կայութեանը անարգանք չըլլայ: Մեր ամեն գաղա-  
նիքը կը տեսնայ, բան մը չիմածկուիր իրմէն, ուր  
որ երթանք հետերնիս է. անոր համար կըսէ Պա-  
ւելթ մարդարէն. Յէրէսոյ 409 էս յո՞ փոխեայոց. Բէ է-  
լանէ՛մ յերկինս, 700 անդ էս. և Բէ իջանէ՛մ 'ի Դժոխս / և  
անոր յօր էս: Ասանկ կը մտածէր Պաւելթ, ու աս-  
տուծոյ ներկայութիւնը աչքին առջին ունէր միշտ.  
ուստի աղէկ ըրածն ալ՝ գէշ ըրածն ալ՝ աստու-  
ծոյ աչքին զիմացը ըրած կը սեպէր. Տէր ասորած  
իբրև-Բեան Իմոյ, 'ի քուէ կարգոյի և գիշերի աստղի 40:  
'Ինչ միայն մեղայ արէ, և լուր աստղի 40 արարի: Ինչու  
մենք ալ ասանկ չենք մտածեր:

### ՄԱՍՆ Բ.

Աս մտածութիւնը ամենէն զօրաւոր կերպն է  
մեզքէ հեռու կենալու, ու կատարելութեան  
ճամբան առաջ երթալու: Երբոր մարդս մտածէ  
որ աստուած կը տեսնայ զինքը, իր ամեն կիրքը  
կը բռնէ, ամեն փորձութեան կը յաղթէ. ինչ և  
կցէ վտանգաւոր անթի մէջ երբոր մարդ մտածէ՝  
որ իր դատաւորին առջին է, անոր՝ որ զինքը պե-  
տոր դատէ, ու կրնայ այն վայրկեանէն իր դատա-  
պարտութեան վճիռը տալ, ինչպէս կրնայ հա-  
մարձակիլ մեղանչելու: Աստուած չիմտածելնէս  
է շատ անգամ որ կը մեղանչենք. թէ որ զինքը  
աչքընուս առջին միշտ ունենայինք, շատ մեղքերէ  
սզատ կը ըլլայինք. ինչոս անորէն մարդ պիտոր ըլ-  
լայ, որ աստուած զիս կը տեսնայ ըսէ, մեղանչէ:  
Կատարելութեան մէջ առաջ երթալու ալ կարձ՝



Ճամբան աս է. Թէ որ քրիստոնէական կատարել-  
 ւում թիւնը՝ ամեն մարդու իր վիճակին պարտքերը  
 ազէկ ընելուն վրայ է, զաստուած աչքին առջին  
 ունենալէն զորաւոր ուրիշ ինչ յորդոր կրնայ  
 ունենալ իր պարտուցը զանցաւում թիւն չընելու,  
 ու եռանդեամբ իր պարտքը կատարելու: Երբոր  
 մտածենք որ աստուած կեցեր կը նայի ինչպէս ը-  
 նելնիս մեր պարտքը, ինչպէս իրեն ծառայելնիս,  
 դեռ կրնանք ծուլում թեամբ ու անհոգութեամբ  
 ծառայել իրեն: Ասկէջ աւելի ինչ մխիթարանք  
 կրնայ ունենալ մարդս. աստուած գիտէ մեր աը-  
 կարութիւնը, կը տեսնէ ինչ նեղութիւն կը քա-  
 շենք աս կամ ան փորձութեանը գէմ գնելու, ու  
 մեր պարտքը կատարելու, աստուած կեցեր կը  
 նայի մեր պատերազմիլը՝ որպէս զի զմեզ պատկէ,  
 մեր ջանքը վարձատրէ. ասկէ զորաւոր ինչ քա-  
 ջալէրութիւն կրնայ տալ մեզի: Աս է Գաւիթ  
 մարդարէին ըսածը. Սրբաբո ուրախ եղի յին և զն-  
 ծասցէն առաջի նորա. վասն զի իրենց վարձատրողը  
 միշտ աչընուն առջին է:

ՄԱՍՆ Գ.

Ուրեմն պէտք է զգուշանանք այն բաներէն՝ որ  
 արդէք են աստուծոյ ներկայութիւնը մտածե-  
 լու, ու ամեն հնարք բանեցընենք՝ զաստուած աչ-  
 քընուս առջին ունենալու: Աստուծոյ ներկայու-  
 թիւնը մտածելու արդէք են այն ամեն զբօսանք-  
 ներն՝ որ մարդուս սիրտը կը հեռացընեն Աս-  
 տուծմէ. անանկ բաներէն՝ որ մարդուս կրքերը  
 կը գրգռեն, ու մարդուս երեւակայութիւնը կայ-  
 ւայեն. անանկ չափազանց զբաղմունքներէն որ

մարդուս միտքը կը գրաւեն, չեն թողուր որ զաս-  
 տուած մտածէ: Աս ամեն բաներէն պէտք է զգու-  
 շանանք. վասն զի անանկ գանձ մըն է աստուծոյ  
 ներկայութիւնը՝ որուն համար ամեն զոճ արժան  
 է ընել: Իսկ աստուծոյ ներկայութիւնը աչը-  
 նուս գիմացը ունենալու ամենէն առջի հնարքն է  
 աղօթքը. իրմէն խնդրենք որ աս մեծ շնորքը տայ  
 մեզի: Ասկէջ 'ի զատ' օրուան մէջ քիչ մը ասեն  
 որոշել աստուծոյ հետ ըլլալու. դորձքերնուս  
 կարգ կանոն գնել, ու աստուծոյ համար ընել ա-  
 մեն ըրածնիս. նաև ամենէն պղտի ու անասորքեր  
 դորձքերնիս՝ իր կամքը կատարելու համար ընել.  
 ամեն արարած անանկալ՝ զինքը յիշել, երկինքը  
 իր աթոռը սեպել, երկիրս իր ռաքին պատուան-  
 դանը, մարդիկ իր նախախնամութեանը՝ աստուծոյ առատա-  
 ձեւնութեանը պարգև, ձախորդութիւնները՝  
 իրատ: Ասանկով սուրբերը մտքերնին միշտ առ  
 աստուած ունենին. ինչ որ տեսնէին՝ զաստուած  
 կը մտածէին, աստուած միշտ աչընուն առջին  
 էր. ասանկով մենք ալ կրնանք աս առաքինու-  
 թիւնը վստարկել:

Ա.Ղ.Օ Թ.Գ

Յիսուս փրկիչ իմ, դուն ես իմ հոգևոր ու  
 մարմնաւոր կենացս պահպանիչը, առանց քեզի՞ ոչ  
 կրնամ ապրիլ և ոչ սուրբ շնորհացդ մէջը մնալ:  
 Պէտք էր որ զքեզ միշտ աչքիս առջին ունենայի,  
 զքեզ միշտ մտածէի: Իայց ներէ ինձի որ շատ ան-  
 դամ ընդունայն մտածութիւններ արգէլք կըլ-  
 ան ինձի՝ քու ներկայութիւնդ յիշելու: Կորհնեմ  
 զքեզ՝ որ իմ սիրտս ալ միտքս ալ կը տեսնես, ու

տեննելովդ միայն իմ մասձուլութիւններս ալ բաղ-  
ձանքներս ալ կուզընս ու կը զորացընես. շնորք  
տուր կնձի որ ասկէց ետքը բան մը չիմասձեմ,  
բանի մը չիբաղձամ, որ հաճոյ չըլլայ քեզի:

Որ անսողդ էս խոնարհաց յերկնից 'ի յերկիր,  
և տուող ողորմութեան ազգի մարդկան, զման-  
կունս եկեղեցւոյ քօ պահեա 'ի խաղաղութեան:

ՄՏԱ.ԾԱ.ԿԱՆ ԿԷ.

Աղօրքի վրայ :

ՄԱՍՆ Ա.

Աղօթք ըսելը՝ Աստուծմէ շնորք խնդրել ըսել  
է: Պէտք է որ սրտանց աղօթենք, վասն զի աս-  
տուծոյ շնորքին կարօտ ենք. պէտք է որ խոնար-  
հութեամբ աղօթենք, վասն զի աստուծոյ շնորքին  
անարժան ենք, ու ամենեւին մէկ կերպով մը պար-  
արկան չէր աստուած մեր աղօթքը ըսել, իր բա-  
րութեամբը միայն խօսք տուաւ լսելու. պէտք է  
որ յարասեւութեամբ աղօթենք, վասն զի աս-  
տուծոյ շնորքը անգին բան է, ու արժանի է որ  
ամեն ջանք ընենք անիկայ ունենալու: Բայց ասի-  
սոս որ մեր բոլոր ջանքը ունայն ու անցաւոր բա-  
ներու ետեւէ է, կամ աւելորդ հոգով մեր կենաց  
հարկաւոր բաները ունենալու՝ որոնք խոստացած  
է աստուած տալու մեզի, թէ որ մենք իր շնորքը  
խնդրելու ըլլանք. Խնդրէցէ՛ք նախ պարգայութիւնն աս-  
պտոյ, և այդ ամենայն յաւելոյ՛ք յէջ: Քրիստոս տէրն  
մեր, ինքը կարօտութիւն մը չունենալով՝ մեզի  
համար այնչափ աղօթք ըրաւ. Որ յաստուծոյ ճարնոյ  
խնայ ազնի և պաշարման արժգին գովմամբ և որպա-

ստոր ճապարհանէր: Ինչուան երբեմն բոլոր գիւղերն  
ալ աղօթքով կանցընէր. Ե- կանէր դժիշէրն ՚ի գլուխ  
յաղօթան ասպո-ծոյ: Գէթօսմանի պարտեզին մէջ ալ  
հօդեվարուածեան ասփճան հասած՝ աւելի մտա-  
դրուածեամբ աղօթք կընէր. Ե- էր ՚ի քոֆնապի, և  
ճապարհ-բռնեամբ ևս կայր յաղօթն: Ուրեմն սրջափ ա-  
ւելի պէտք է աղօթք ընենք մենք որ այսչափ հո-  
գեւոր ու մարմնաւոր կարօտուածիւններ ունինք:

### Մ Ս Ս Ն Բ.

Թէ որ ստոյգ չիգիտանայինք որ աստուած ա-  
ղօթքնիս կընդունի, կընայինք թուշալ աղօթք Ե-  
նելէն, բայց վստահ ենք որ կընդունի, սուրբ հա-  
ւատքը կը սորվեցընէ, Քրիստոսի խօսքն է. Սձե-  
նայն որ խնդրէ, առնու. և որ հայցէ, գրանէ, և որ  
բաղխէ, բաղոյն նմա: Մեր վստահուածիւնը Քրիստո-  
սի խոստմանը վրայ է. մեր վստահուածիւնը աս-  
տուածոյ բարուածեանը վրայ է. աստուած մեր բա-  
րեգուած հայրն է, կընայ ըլլալ որ մենք իրեն գի-  
մենք, ու ինքը մերժէ զմեզ: Քրիստոսի խօսքն է.  
Ո՞վ է ձեր մեջէն, որ զաւակը հայ ուղէլու որ ըլ-  
լայ՝ ինքը քար տայ անոր, կամ ձուկ խնդրելու  
որ ըլլայ՝ օճ տայ անոր. իսկ թէ որ գուրջ չար ըլ-  
լալով՝ բարի պարգևներ կուտայք զաւկընուդ, որ-  
ջափ ևս առաւել ձեր երկնաւոր հայրը բարեք  
կուտայ ուղօղներուն: Բայց մեր ապերախտու-  
ածիւնը ու մեր անհասողանդուածիւնն է արգէլքը  
մեր վստահուածեանը՝ ընդունելու իրմէն ուղած-  
նիս, վստն զի մենք ալ կը ճանչնանք՝ որ արժանի  
չենք ընդունելու: Ուրեմն թողունք ապերախ-  
տուածիւնը, հնադանդ որդիք ըլլանք, ան ասեմը  
վստահուածեամբ կը խնդրենք իրմէ, ու ինքն ալ

կուտայ իր շնորքը. վստահուածեամբ կը զարնենք  
արքայուածեան գուռը, ու ինքն ալ կը բանայ:  
Թէ որ աշխարհս վրայ աւատածեան թագաւոր մը  
կամ իշխան մը ըլլար, ինչ ջանք չէինք ընել իրմէ  
մեր պիտոյքը ընդունելու: Թէ սպէս շատ անգամ  
ամեն ջանքերնիս պարապ կելլէ մարդկանցմէ, կը  
խնդրենք ու չենք գտներ, գուռը կը զարնենք ու  
բացօղ չիկայ, այսու ամենայնիւ չենք լքանիր.  
կը վաղէնք ան բարիքներուն ետեւէն, որոնք մեզմէ  
կը փախչին. ու կը փախչինք անոնցմէ, որոնք պա-  
տրաստ կան առջևնիս: Ասանկով երկուքէն ալ կը  
զրկուինք, ու մեր կարօտուածեանը մէջ կընտրենք  
մնալ քան թէ դիմել առ աստուած՝ որ միայն կըր-  
նայ մեր ամեն կարօտուածիւնը լեցընել, ու զմեզ  
երջանիկ ընել:

### Մ Ս Ս Ն Գ.

Քրիստոս ասէրն մեր կը խոստանայ մեզի՝ ինչ որ  
իւր անուամբը իր Հօրմէն խնդրելու ըլլանք, ընդու-  
նելու. Սձեն ամէն ատէ՛ յեւ, դէ դր քն խնդրե՛նք ՚ի  
Հօրէ իմէ յանուն ի՛ժ, քաղէ յեւ: Հապա ինչու է որ  
շատ անգամ ուղածնիս չենք ընդունիր: Մենք կը  
կարծենք՝ որ չենք ընդունիր. աստուած ուղած-  
նէս աւելին, ուղածնէս մեծը կուտայ. աղօթքնիս  
ոչ երբէք պարապը կերծայ: Կրնանք ըսել՝ որ  
Հայրն երկնաւոր Քրիստոսի աղօթքը մշտ լած  
չըլլայ, ինքն է ըսողը առ Հայր. Գիտէ՛ ՚ի յաննայն  
ժամ աւե ինչ: Բայց ինչպէս կըլլայ որ Քրիստոս  
խնդրեց երկնաւոր Հօրմէն, Սնո՞՞ դբաժախ պայ յի-  
նչ. ու աստուած չարգիլեց Հրեաններուն անդգա-  
մուածիւնը, թողուց որ խմցընէն Քրիստոսի այն  
լեզի բաժակը. ուրեմն չիլուց Քրիստոսի աղօթքը.

բայց Պօղոս առաքեալը կրօն որ լսեց. Եւ բէւե շինէր առ լատինացիս. վասն զի աստուած Քրիստոսի խնդրած էն անհամեմատ աւելի մեծ բան տուաւ, այսինքն աշխարհ փրկել, գժոխքը կործանել, արքայութեան դուռը բանալ մեզի, հրեշտակներէն ու հրեշտակապետներէ ու ամեն արարածներէն նաև իբրև մարդ՝ Երկրպագութիւն ընդունել:

Բայց երբեմն ալ աստուած իրաւացինէ մեր աղօթքը չիսեր. վասն զի նախ՝ աղէկ կերպով չի խնդրելնու համար. անանկ բան կը խնդրենք՝ որ մեր փրկութեանը օգտակար չէ, երբեմն ինասակար ալ է, կամ կը խնդրենք ասանց հաւատքի, աւանց յուսոյ, աւանց մտադրութեան, աւանց թերմանագրութեան, աւանց յարասեութեան, վերջնապէս կը խնդրենք ու չենք ընդունիր, վասն զի գէշ կերպով կը խնդրենք. Խնդրէ՛ք և ոչ առանգ, վասն զի շարաւր խնդրէ՛ք: Երբեմն ալ չենք ընդունիր, վասն զի աստուածոյ շնորհացը մեջը չենք, ու չենք ուզեր ալ հաշտուիլ աստուածոյ չեա. անանկ շնորք կը խնդրենք՝ որ արդէն տուած է, ու մենք չենք բանեցընէր, կամ մեր կողմանէ կրցածնիս չենք ընէր որ՝ չիկրցածնիս ինքը տայ: Թէ որ աս պահպութիւնները չընենք արօթքնու մեջը, յանուն Յիսուսի ինչ որ խնդրենք՝ կընդունինք. աս գաղանկքը ինքը մեզի սորվեցուց՝ ան խօսքովն որ ըսաւ առաքելոց. Մինչև յայժմ ոչ էն խնդրենք յանուն ի՞մ, խնդրենք և առանցող: Անոր համար սուրբ առաքեալքը սկսան յանուն Յիսուսի ընել իրենց աղօթքները՝ հրաշքները՝ ու ամեն գործքերնին. ասանկ ալ սորվեցուցին սուրբ եկեղեցւոյ, որ իր ամեն աղօթքները ՚ի Քրիստոս Յիսուս, Յիսուսի Քրիստոսի, շնորհօք պէտան մերոյ Յիսուսի Քրիստոսի ըսելով ըմբռնեն. ու Յիսուսի անունէն ուրիշ անուն չիճանչնար՝ որ զմեզ կարենայ փրկել: Զի և ոչ անուն այլ ՚ի ներքոյ երկնից գոտեալ ՚ի Տարբի, որով

արժան իցէ իեալ մեզ: Մեր աղօթքին զօրութիւնը Քրիստոսի վրայ հաստատուած ըլլալուն պատճառն ալ ան է որ, աստուած զմեզ կը սիրէ՝ մենք զՔրիստոս սիրելնուս ու իրեն հաւատալնուս համար, ինչպէս Քրիստոսի խօսքէն յայտնի է. Զի ինչն իսկ Հայր սբեւ զՅէշ, զի դո՛ւք զիս սիրեցի՛ք և հաւատարմիք ինչ էս յառաջո՞յն էլի:

Ա.Ղ.Օ Թ.Գ

Յիսուս փրկիչ իմ, դուն խոտացար մեզի՛ ընդունիլ ինչ որ քու անուամբք երկնաւոր Հօրմեզ խնդրելու ըլլանք. սուր մեզի՛ որ քու չարչարանայք ու խաչելութեանդ շնորհիւ կարենանք սիրել զքեզ, ու օրով գալ երկինքը ատենել զքեզ, ու օրհնել յաւիտեան:

Որ զբան քո օրինաց հաստատեցեր գործով մեզ օրինակ, հանելով զգիշերն ՚ի գլուխ յաղօթան աստուածոյ, բնութեամբ մերով անօրինաբար, որում կրկնի ծուներ ամենայն:

# ՄՏԱԾԱԿԱՆ ԿԸ.

Նորիկ աղօրթի վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Աստուած մեր աղօթքը լսելու համար՝ ուրիշ բան մըն ալ կուզէ մեզմէն, այսինքն եղբայրսիրութիւն. կուզէ որ մենք ալ ուրիշներուն աղաչանքը ընենք, իրենց կարօտութիւնը ձեռքնէս եկածին չափ լեցնենք. ինչ որ կուզենք՝ ուրիշները մեզի ընեն, մենք ալ իրենց ընենք. Չամէնայն որ մասնաձայն չենք արտայնէ յեղ ճարտի, այնպէս արաւելէ և ղոռտ նոցա: Ասիկայ կարծ խօսք մըն է, բայց եղբայրսիրութեան ամեն պարագայերը ու բոլոր սուրբ գրքին տուած խրատները կը բովանդակէ. Չի այն իսկ էն օրէնքն և ճարտարէն: Աստուած կուզէ որ աս կանոնն որ՝ կապ մըն է մարդիկ իրարու հետ կապելու, նոյնը ըլլայ զմեզ աստուծոյ հետ կապուիք. աստուած ամենուն հայրը ըլլալով աս պայմանը կը պահանջէ, առանց ասոր չիլեր մեր աղօթիցը, մեզի շնորք չիտար, տուածն ալ ետ կառնէ: Քրիստոս տերն մեր աս բանը առաջիով մըն ալ բացատրեց. ծառայ մը իր տիրոջը ասոր հաղար քանցար պարտք ունէր. տէրը տեսնելով

որ ծառայն չէր կրնար վճարել, գթացաւ ու սարտքը ներեց իրեն: Մտաայն ընկեր մը ունէր՝ որ իրեն պարտքեւան էր հարիւր դահէկան, աս մեծ շնորքը իր տիրոջմէ ընդունելէն ետքը, ինքն ալ իր ծառայակցին ներելու տեղը՝ բանա դնել տուաւ զինքը՝ որ սարտքը տայ: Տէրն որ խնայաւ աս բանը՝ բարկացաւ, կանչեց ծառան ու ըսաւ. Պէտք չէր որ դուն ալ քու ընկերոջդ ողորմելիր, ինչպէս որ էս քեզի ողորմեցայ. ու զինքը բանա դնել տուաւ՝ որ բոլոր պարտքը վճարէ: Աս առաջը Քրիստոս տերն մեր բերելէն ետքը՝ կրնէ. Ասանկ ալ իմ երկնաւոր հայրս կրնէ ձեզի, թէ որ ձեր եղբայրը սրտանց չընէրէք: Մեղաւոր ենք, անարժան ենք, բայց աստուած աղօթքնիս կընդունի. իսկ թէ որ սրտերնուս մէջ ատելութիւն ունինք՝ ուրիշներուն չենք ներեր, եղբայրսիրութիւն չունինք, վայ է մեզի, աղօթքնիս չանցնիր:

## ՄԱՍՆ Բ.

Աս ալ կայ որ աստուած արքայութեան դուռը մէկ զարնելով մեզի չիբանար. կուզէ որ յարատեւենք, նորէն զարնենք, դրանն առջև համբերութեամբ սպասենք՝ մինչև որ բռնայ: Քրիստոս տերն մեր սրտաշարժ օրինակով մը կը յորդորէ զմեզ՝ որ չիձանձրանանք, չեդարձինք աղօթք ընելէն: Դատաւոր մը կար քաղցի մը մէջ, որ ոչ Աստուծմէ կը վստիսէր, և ոչ մարդկանցմէ կամաչէր. նոյն քաղցին մէջ խեղճ որբեւորի մը՝ նեղեալ իր թշնամիէն կերթար կուգար կողացէր գատաւորը, որ իրեն իրաւունք ընէ: Իսկ զատաւոր խեղ մը ասան մտիկ չընէլէն ետքը՝ ըսաւ ինքնիրեն. Որ-

չափ ալ Աստուծմէ չեմ վախեր, ու մարդկանցմէ չեմ ամաչեր, դոնէ սա որբեւարիին ինձի տուած նեղութենէն խաղտելու համար՝ իր դատաստանը կարեմ: Աս առակին ետեւէն ձեռնարկութիւն մը կրնէ Քրիստոս ըսելով. Թէ որ այն անիրաւ դատաւորը ասանկ ըրաւ, կրնայ ըլլալ որ աստուած չիլտէ իր ծառայիցը՝ որ դիշեր ցորեկ իրեն կաղաղակէն: Սիրա շարժելու խօսքը հոս է. կուզէ որ ձանձրացընենք իր երկնաւոր Հայրը մեր աղօթքովը, յարատեւեմք, չեղադրինք աղօթեւէն՝ ինչուան որ չընէ խնդրքնիս:

Մ Ա Ս Ն Գ.

Ասանկ ըրաւ քանանացի կինը. Քրիստոսի ետեւէն սկսաւ աղաղակել՝ Աղորմեա ինձ տեր, իմ դուստրս չարաչար կայսահարի: Քրիստոս չիլտելու դարկաւ, պատասխան չիտուաւ իրեն. անիկայ նորէն կաղաղակէր, անանկ որ՝ Քրիստոսի աշկերանները սկսան միջնորդութիւն ընել ըսելով. Սըւոր խնդրքը կատարէ, չեղադրիր կոր ետեւէնս աղաղակելու: Քրիստոս պատասխանեց. Ես ուրիշներուն համար չեմ եկած, Իսրայելի կորուսեալ ոգևարներուն համար եկած եմ: Կինը աս ըսելով չիյուսահատեցաւ, նորէն երկրպագութիւն ընելով ըսաւ. Տէր օգնէ ինձի: Քրիստոս իրեն պատասխան տուաւ որ արդար բան չէր՝ զաւկըններուն հայրը շունչերուն ապա: Ավոր ըլլար, աս խօսքէն ետքը ձայն չէր հաներ, յոյսը կը կարէր կերթար. բայց ինքը վստահ ըլլալով Յիսուսի բարեգթութեանը՝ ըսաւ. Իրաւ անանկ է, բայց շունչն ալ տէրերնուն սեղանէն ինկած փշրանքնելովը կասրին: Քրիստոս որ կնոջը խոնարհութիւնն

ու յարատեւութիւնը անսաւ՝ ըսաւ իրեն. Ո՛վ կին, քու հաւատքդ մեծ է, ուղածդ թող ըլլայ: Ասանկով աղջկը բժշկուեցաւ, ու յայտնի եղաւ որ Քրիստոս կնոջը յարատեւութեանը կը սպասէր՝ իր խնդրքը ընելու:

Ա Ղ Օ Թ Գ

Յիսուս փրկիչ իմ, էս ալ քանանացի կնոջը պէս չեմ գադրիր աղաղակելէն, օգնէ ինձի. էս ալ անոր հաւատքովը կը խնդրեմ, ողջնցուր իմ հօգիս: Անիկայ խոնարհեցաւ, զինքը շունչերու հաւասարելը յանձն առաւ. էս ալ իրեն պէս զիս անարժան կը սեպեմ քու շնորքիդ. ինձի ալ գթա, որ քու պատուական արեանդ գինն եմ:

Որ զաղաղակ կնոջն այլազգոյ առընկալար փրկիչ մարդասիրապէս, և զիմս ապաշխարութեան արա արժանի զձայն, մեղուցեցայ քու ունոջ:

# ՄՏԱԾԱԿԱՆ ԿԹ.

Նորեկ աղօրքի վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Առաքեալները տեսնելով որ Քրիստոս ստէպոս ու ուր որ կը դանուէր՝ աղօթք կընէր, խմացան աղօթքին հարկաւորութիւնը, ու խնդրեցին որ աղօթք ընելուն կերպը իրենց սորվեցնէ. Տէր, առաջ մեզ յաղօթս խաւ: Ինքն ալ սորվեցուց իրենց այն հրաշալի աղօթքը, որ է Հայր Աբր: Քրիստոսի աւսանկ ստէպոս ու ամեն սեղ աղօթք ընելէն՝ մենք ալ պէտք է խմանանք աղօթքին որչափ հարկաւոր ըլլալը: Քրիստոս սուրբ էր և ամենասուրբ, այսու ամենայնիւ աղօթք ընելէն չէր դադարէր. մենք որ մեղաւոր ենք, ախտերով ու գէշ յօժարութիւններով լի, ինչպէս կրնանք յուսալ յաղթել մեր բնութեանը, ու մեղքերէն հեռու կենալ, թէ որ աղօթքով աստուծոյ շնորհք չընդունինք՝ որ մեզի օգնէ: Քրիստոս, որ էր ըստ 'ի լուսոյ, ու զմեզ լուսաւորելու համար աշխարհ եկած էր, զիշեր ցորեկ կաղօթէր. մենք որ բողբոլիկ խաւար ենք, ամեն գիէն մոլորութեան վտանգներով պատած, նենգաւոր թշնամիները չորս գինիս առած, ինչ

պէս կրնանք անոնց ձեռքէն խալտիլ առանց աղօթքի՝ որ աստուած մեզի հարկաւոր եղած ըստ տայ:

## ՄԱՍՆ Բ.

Քրիստոս աստուծոյ հետ էր միշտ, ու աստուծոյ հետ միացեալ երանական տեսութեամբ, այսու ամենայնիւ ստէպոս կառանձնանար ու կաղօթէր. մենք որ շարունակ զբաղած ենք, մտքերնիս ալ սրտերնիս ալ աշխրբիս բաներուն կերթայ միշտ, ինչպէս կրնանք աստուծոյ հետ միանալ, հաւատք յոյս ու սէր ունենալ, թէ որ ամեն օր գտնէ քիչ մը ատեն չեքաշուինք՝ զմեզ չեթողվենք, աստուծոյ ներկայութիւնը չեմտածենք, հետը չիխօսինք, ու մեր սէրը աղօթքով չեցուցնենք իւրեն: Քրիստոս միշտ աստուծոյ փառքը փնտուելու, աստուծոյ կամքը կատարելու հետ էր, աշխրբիս փրկութեանը համար կաշնատէր ու կը կրէր, այսու ամենայնիւ ստէպոս կը դադարէր աստուծոյ ասանկ հաճոյական գործքերէն, ու աղօթքի հետ կը լսար. իսկ մենք ոչ քուններնէս քիչ մը ատեն կը իտրենք, ոչ մարմնաւոր ու անօգուտ զբաղմունքներնէս, ոչ սնտոխի ու շատ անգամ վտանգաւոր զբօսանքներնէս, և ոչ պարսպ կեցած ու ձանձրացած ատեններնէս, քիչ մը աղօթք ընելու համար: Թիէ որ ընենք ալ վայրկեանները կը համրենք, ուրիշ բանի մը անանկ ճիշդ ժամացոյց չենք բռնէր՝ ինչպէս աստուծոյ հետ խօսելու: Ուրեմն ուրիշ պատճառ չեփնտուենք ստէպոս իյնալ նուս, ուրիշ պատճառ չեփնտուենք մեր ակարութեանը ու մեր անկատարութեանը, բայց աղօթքի պակասութիւնը:

Նոյն խի աղօթքէ ձանձրանալնիս, աղօթքը ընել չեգիտանալնիս, մեր յանցանքն է: Մեր մարմնաւոր շահուն համար պէտք եղած գործքերը՝ որչափ ալ գոհարին ըլլան՝ ետեւ կ'իյնանք կը սորվինք: Ընչնու գոնէ նոյնչափ փյոթ չենք ըներ, նոյնչափ ետեւ չենք ըլլար աղօթքը ընելը սորվելու: Աւրեմն մենք ալ առաքելաց պէս խնդրենք ՚ի Քրիստոսէ՝ որ աղօթքը ընել սորվելընէ մեզի: Ուստի մեր յաղթն կաւ աշխատինք, ետեւ կ'իյնանք աղօթքը ընել սորվելու՝ որն որ մեր փրկութեանը համար այսչափ հարկաւոր է, ու չեձանձրանանք աղօթքը ընելէն՝ որովհետեւ յարատեւութեամբ կընդունինք Աստուծոյ մեր խնդիրքը:

Մ Ա Ս Ն Գ .

Աս բանս սրտաշարժ առաւելով մը կը բացատրէ Քրիստոս սուրբ աւետարանին մէջ: Թէ որ դուք բարեկամ մը ունենաք կըտէ, ու գիշեր ատեն երթաք զնոցը աղաչելու՝ որ քանի մը հաց տայ ձեզի. բարեկամներնէ որ մէկը յոգնած գաղթած ճամբէ եկած ըլլայ, ու բան մը չունենաք առջին գնելու՝ որ ուտէ. խի անխիայ ներսէն պատասխանէ որ՝ մի նեղէք զիս գիշերով, դուներս գոց են, զաւկըներս ինծի հետ անկողնի մէջ են, չեմ կրնար ելլել ու զածնիդ տալ ձեզի, ինչ կընէք. այնչափ կը ստիպէք զնոցը, նորէն նորէն դուք կը զարնէք որ եթէ բարեկամութեան համար ալ չըլլայ՝ նեղութենէն խալըսելու համար կելլէ կուտայ: Ասով կ'իմացընէ մեզի Քրիստոս, որ եթէ աստուած ալ շատ անգամ մեզի առջի բերանը չիտայ ուղածնիս, պէտք չէ որ ձանձրանանք ու գազրինք աղօթքը ընելէն, պէտք է նորէն զարնենք

դուք, նորէն աղաչենք. չիկրնար ըլլալ որ չիտայ խնդիրքնիս, վասն զի չէ թէ միայն բարեկամնիս է՝ այլ և հայրերնիս. ու չէ թէ ուրիշ համար է խնդիրքնիս՝ այլ մեզի համար, չէ թէ մարմնաւոր բան է խնդրածնիս՝ այլ մեր հոգւոյն պիտոյքը, որ ինքն ալ կուզէ որ խնդրենք իրմէն: Աւշացընելը իր իմաստութիւնն է՝ ասանկ աւելի օգտակար սեպելով մեզի, մեր վրայ ունեցած սէրն է՝ կուզէ որ յարատեւութեամբ աւելի արժանի ըլլանք խնդիրքնիս ընդունելու: Զիկրնար ըլլալ որ չիտայ խնդիրքնիս, որովհետեւ Քրիստոս աս առաւելը կ'իմացընէ մեզի՝ որ աստուած ալ այն բարեկամին պէս կընէ մեզի. անոր համար ալ ետեւն կըտէ. Խնդրեցէ՛, և քաջի յեւ, քաջի յեւ, և քաջի յեւ: Ասիկայ խոստմունքը մըն է մեզի Քրիստոսի կողմանէ, որ չիկրնար սխալիլ. ասով կ'իմանա՞ք որ ինչպէս պատրաստ է աստուած մեր խնդիրքը ընելու, ու հետեւաբար է աստուած մեր խնդիրքը ընելու: Վասն զի ինչ ինչպէս հարկաւոր բան է աղօթքը: Վասն զի ինչ որ մարմնաւոր հայր մը իր զաւկին մարմնաւոր կենացը համար հոգ ունի, նոյնը աստուած եւելք մեր հոգւոր կենացը համար ունի. աստուած մեզի մարմնաւոր հացէն ՚ի զաս՝ մեր հոգւոյն պէտք եղած շնորքն առաքելութիւններն ալ կուտայ. անոր համար կուզէ որ աւելի անոնք խնդրենք, անոր համար չիխնդրած ալ կուտայ. Խնդրեցէ՛ և քաջի յեւ, և քաջի յեւ, և քաջի յեւ: Թէ որ աղեկ ճանչնալինք ինչըսէ կ'ընթաց, ինչ ըսել է մեր փրկութեան հարկաւոր առաքելութիւնները, ու կ'ենդամնի հաւատքը ունենալինք՝ որ աստուած կուտայ մեզի անոնք՝ երբ որ խնդրենք, որչափ աւելի ջերմեռանդութեամբ ու յարատեւութեամբ աղօթք կընէինք: Վասն զի աստուած ինչպէս խնդրողն իր շնորքը կուտայ, ասանկ ալ չիխնդրողն չիտար. իսկ ասանց աստուծոյ շնորքն՝ բարիք մը չէնք կրնար



ընել, որ մեր փրկութեանը օգնէ. Ասանց ի՞նչ էն  
կարէ՛ք առնել ըսաւ Քրիստոս: Ուրեմն առանց ա-  
ղօթքի փրկութեան չենք կրնար հասնիլ:

Ա. Ղ. Օ Թ. Բ

Յիսուս փրկիչ իմ, ներէ ինձի որ ինչուան հի-  
մայ աղօթքներս գաղջութեամբ ու ձանձրու-  
թեամբ ըրեր եմ. փորձովս սորվեցայ՝ որ առանց  
քեզի բան մը չեմ կրնար ընել, որ առանց քեզի  
տկար ու ողորմելի եմ, ոչ մեղքէն կրնամ փախ-  
չիլ, ոչ առաքինութեան ետեւ ըլլալ. ուրեմն սոր-  
վեցուր ինձի աղօթք ընել. Ուստի ինչ յառջեւ կալ. որ-  
պէս զի քու շնորբովք փրկութեան հասնիմ:

Վասն որոյ և մէք պաղատեսցուք առ քեզ  
Քրիստոս, շնորհեա մեզ՝ յամենայն ժամ լինել  
քեզ յանդիման մաքուր աղօթիւք ըստ անմար-  
մնոյն՝ որ յերկինս:

## Մ Տ Ս. Ծ Ս. Կ Ա. Ն Հ.

Հայրսերիկ վրայ:

Մ Ա Ս Ն Ա.

Ի՞նչ մեծ բարութիւն է՝ որ Քրիստոս տերն  
մեր մեզի սորվեցուց աղօթք ընելու կերպը: Իբրև  
Թէ մեկը իր ողորմելութեանը համար աղերսա-  
գիր տալու ըլլայ Թագաւորի մը, ու Թագաւո-  
րին սիրելի որդին անոր աղերսագիրը շարագրէ՝  
ըսելով որ ես Հօրս սիրտը աղէկ դիտեմ, աս կեր-  
պով քու խնդրքդ ընդունելի կըլլայ իրեն: Աս-  
տանկ ըրաւ մեզի Քրիստոս, Հայրերը սորվեցը-  
նելով՝ սորվեցուց մեզի ինչ կերպով Աստուծոյ  
պիտոր խնդրեք մեր ողորմելութեանը ճարը,  
ինչ կերպով պիտոր խնդրենք մեր պիտոյքը՝ որ  
խնդրեքնիս ընդունելի ըլլայ: Ինքն Քրիստոս որ-  
դին աստուծոյ է աս աղօթքին շարագրողը, ու-  
րեմն պէտք է որ կատարեալ ըլլայ, պակաս բան  
մը չըլլայ մէջը: Ու իրաւ Հայրերը համառօտու-  
թիւն մըն է բոլոր աւետարանին. ինչ որ աս-  
տուած մեզի համար պատրաստեր է, ինչ որ մենք  
իրեն համար պարտեալ ենք ընելու, բոլորն ալ  
Հայրերին մէջը կայ. ամեն պէտքերնիս ու ամեն

պարտքերնիս կը բովանդակէ, մտքերնիս ալ վարքերնիս ալ կուզղէ, անանկ որ սրտերնիս պէտք է բազձայ միշտ ինչ որ Հայրենին մէջը կը խնդրենք. ու անոնցմէ ՚ի զատ ուրիշ բաղձանք չունենայ:

Աջօթքը առ աստուած կը ըլլաւ. բայց ինչ ա նուն պիտոր տանք իրեն. Քրիստոս տէրն մեր ինչ սորվեցուց մեզի. տէր կոչել զինքը, ստեղծօղ կոչել, աստուած կոչել, դատաւոր կոչել, ամենա կարօղ կոչել. կրնայինք ու կրնանք աս ամեն ա նուններն ալ ալ իրեն. բայց ան անունն որ չէինք համարձակեր տալու, անիկայ սորվեցուց Քրիստոս, այս ինքն Հայր կոչել զինքը. ինչ քաղցր ա նուն: Քրիստոս տէրն մեր սորվեցուց մեզի աս ա նունը, ու ինքը սուաւ մեզի աս իրաւունքը՝ մեր հայրը կոչել զաստուած, վասն զի ինքը զմեզ իր եղբարքը ըրաւ՝ անով իր հայրը մեզի ալ հայր եղաւ. ուստի ինքն ալ երբոր աստուծոյ վրայ կը խօսի մեզի, ձեր հայրը կըսէ. Զի գիտէ հայրն յեւ երկուսոր թէ պիտոյ է յեւ այդ ամենայն: Ինչ փառք, ինչ երջանկութիւն, ինչ վատահուծիւն կուտայ մեզի աս անունը: Նահապետները զինքը աստուած կը կոչէին, մենք Քրիստոսի շնորքով՝ կը համարձակինք հայր կոչել զինքը:

Ասկէց ՚ի զատ զմեզ իրարու հետ քլ կը կապէ աս անունը: Ամենքս ալ աստուծոյ զաւակներն ենք՝ իրմէն ստեղծուած ըլլալով. ինքը հայրերնիս է, ուրեմն իրարու եղբարք ենք: Բայց ասկէց աւելի ու գերազանց կապ մըն է՝ որ Քրիստոս զմեզ իր եղբարքը տեղ ընդունելով՝ աստուծոյ որդեգիր եղած ենք: Ինքը մեր անդրանիկ եղբայրն է, ամենքս մէկ ընտանիք մըն ենք, ամենուս խնդիրը մէկ պիտոր ըլլայ. անոր համար կըսենք Հայր մեր: Ասկէց գեղեցիկ՝ ասկէց սրբազան կապ մը կրնայ ըլլալ իրար սիրելու:

Նստէն կըսենք որ յերկնս է. աս յաւելուածը

մեր սիրտը՝ մեր բաղձանքը՝ աշխրբէս կը վերջընէ, երկինք կը հանէ՝ ուր որ մեր հայրն է, հոն կը յորդորէ ուղղելու մտքերնիս ալ՝ սրտերնիս ալ. յիշեցընելով որ մեր ճշմարիտ հայրը հոն է, ան որ զմեզ ստեղծէր է ու կը խնամէ, ան որ մեզի կեանք սուտէր է ու կը պահէ, ան որ մեզի շնորք սուտէր է ու հողևոր կեանք՝ որով երկինքը իրեն հետ պիտոր թագաւորենք: Ուրեմն ինչպէս կրնանք գոհ ըլլալ իրմէն զաստուած՝ իրմէ հեռի կենալով. մեզի աքսորանք պիտոր էրենայ երկրիս վրայ կենալը, մեր հայրենիքը հոն է՝ ուր որ մեր հայրն է:

ՄԱՍՆ Բ.

Հայրմերին մէջը Քրիստոս եօթը բան կը սորվեցընէ մեզի խնդրել Աստուծմէ. առջինը աս է. Սուրբ եղիցի անուն քո: Բարի զաւակ մը չէ թէ միայն ինքը կը սիրէ ու կը պատուէ իր հայրը՝ այլ կուզէ որ ուրիշներն ալ սիրեն ու պատուեն. ուստի մենք ալ ասանկ պարտկան ենք ընելու մեր բարեգուծ հօրը. խնդրենք իրմէն որ շնորք տայ, չէ թէ միայն մեզի՝ որ զինքը սիրենք ու պատուենք, այլ և ամենուն՝ որ զինքը ճանճան սիրեն ու պատուեն:

Յրկրորդ խնդրքն է. Նիշուց արքայաւթիս քո. այսինքն արժանի ընէ զմեզ հասնելու իր արքայութեանը՝ որ մեզի համար պատրաստէր է, ու ընելու Քրիստոսի բերնէն՝ Նիշուց օրհնեալ Հօր ինչ, ժառանգեցէ՛ դպարտաբեալ յեւ արքայաւթիսն: Ուրեմն ասով կը խնդրենք Աստուծմէ որ արքայութեանը հասնելու համար հարկաւոր եղած շնորքը տայ մեզի, ուստի Քրիստոս տէրն մեր չէ թէ միայն արքայութեան գուռը բացաւ մեզի, այլ

և սորվեցուց ինչ կերպով կրնանք հոն հասնիլ. վասն զի առջև ու գլխաւոր կերպը՝ հոն հասնելու շնորքը Աստուծմէ խնդրելն է:

Երրորդ խնդիրքն է. Երէջի կամք քո որպէս յերկինս և յերեւի: Սա երրորդ խնդիրը առջև երկուքին հետ անանկ կապուած է՝ որ առանց ասոր մեկալ երկուքը անկարելի է. վասն զի առանց աստուծոյ կամքը կատարելու, իր պատուիրանքները պաշտելու, մեղքէն հեռու կենալու, ոչ դաստուած կը պատուենք, և ոչ արքայութիւն կրնանք երթալ: Անոր համար երէջի կամք քո ըսելու ասենն յիս՝ աս դիտաւորութիւնը պէտք է ունենանք, որ մեղաւորները դադրին մեղք գործելէն, մենք ալ հեռու կենանք մեղքէն, որպէս զի ամենուս վրայ ալ աստուծոյ կամքը կատարուի, ինչպէս երկինքը հրեշտակներն ու արդարները միշտ կը կատարեն: Աս համառօտ խօսքովը, որ Քրիստոսն անհոռի ի մաստութիւնը սորվեցուց մեզի, ամեն շնորք որ մեզի հարկաւոր է՝ խնդրած կըլլանք իրմէ. չէ թէ միայն ամեն մեղքէ հեռու ըլլալ, այլ նաև ամեն առաքելնութիւններ ունենալ, Քրիստոսի նմանելով՝ որ երկինքէն աստուծոյ կամքը ընկելու համար միայն ինչաւ, ու աստուծոյ կամքը իր կերակուրը կը սեպէր. Ի՞նչ երբաւոր այն է, զի աբարից զէպան այնորի՞ որ առաքեալն զիս:

Չորրորդ խնդիրքն է. Չհաց մեր հանապազօրէրդ քորք մը այսօր: Ասով կը սորվեցընէ մեզի Քրիստոս, չէ թէ միայն մարմնաւոր կերակուրնիս խնդրել Աստուծմէ՝ որ ինքրիքն ալ կուտայ նաև ազուաւին ձագերուն, այլ նաև հոգևոր կերակուրնիս՝ այս ինքն աստուծոյ խօսքերը, որուն համար ինքը ըսաւ. Ու հացիս միայն ինչոյն յար, այլ ամենայն բանիս որ էլան է՝ ի բերանոյ յարաւորոյ. ու սուրբ գիրքը մարմնաւոր կերակուրի պահաւթութիւնէն մեծ պատիժ կը սեպէ հոգևոր կերակուրնը. Առաքելոյն սով յերկի:

ու սով հացի՞ այլ սով լսելոյ զբանն քեան: Ասկէց ՚ի զատ՝ հոգևոր հաց է սուրբ հաղորդութիւնը, այս ինքն Քրիստոսի մարմնը, որ մեր հոգևոյն կեանք կուտայ, ու յաւիտենական կեանք. Ես ի՞նչ հացի ինեաց. հացն զոր էս քորք յարմին ի՞նչ է. որ առաքել զհացս զայս, ինչոյն յարաւորոյ:

Մ Ա Ս Ն Գ.

Հինգերորդ խնդիրքն է. Թող մէջ զպարպիս մեր, որպէս և մէ թողումս մերոյ պարպապանաց: Աստուծոյ գէժ ըրած մեղքերնիս են մեր պարտքերը, անոր համար Ղուկաս աւետարանիցը թող մեզ զպարպիս մեր ըսելու անղը, թող մեզ զմեզ մեր կըսէ: Ուրեմն Քրիստոս անէրն մեր սորվեցընելով մեզի՝ որ մեղքերնուս թողութիւն խնդրենք, կապահովէ զմեզ՝ որ իր չարչարանացը ու մահուանը համար աստուած մեզի թողութիւն կուտայ միայն մեկ թէսութեամբ մը, այսինքն թէ որ մենք ալ ուրիշներուն ներեմք: Ըսել է որ եթէ մենք ուրիշներուն ներելու չըլլանք, աստուած ալ չիներեր մեզի: Մեր քրիստոնէութեան առջին նշանը եղբայրսիրութիւնն է. Յայտ ծանօտն զիս էլէ ի՞նչ առաքելութիւն է, երբ սիրելիս զմեանս. անոր համար Քրիստոս աս կտորը կաւելցընէ, որպէս զի հարկաւորինք ներելու մեր եղբայրը. անանկ որ որպէս և մէ թողումս մերոյ պարպապանաց ըսելովնիս՝ ըսած կըլլանք աստուծոյ, որ եթէ մենք ուրիշներուն չիներենք՝ ինքն ալ չիներէ մեզի. ասով մեր պատիժը խնդրած կըլլանք՝ շնորք խնդրելու անղը.

Վեցերորդ խնդիրքն է. Ես քորք զմեզ ՚ի քորք յարմին: Չար սատանան չորս գինիս կատարի առ իւր իւր մը պէս կը պարտի՞ որ կըլլէ զմեզ. մեր նա.

խամայրը օձի ձևով փորձեց, զմեզ ալ փորձելէն չխաղաղիր: Անոր համար Քրիստոս ինչպէս իր աւակերտացը ըսաւ՝ Արևոսն կարէ՛ք և աղջնս արարէ՛ք, դի քի անկանիցի՛ք ՚ի քորճո-Յիւնս: Հայրմերին մէջն ալ զրաւ որ միշտ խնդրէնք Աստուծոյ՝ որ օգնէ մեզի փորձութեան ատեն, չնորք տայ որ փորձութեան մէջ չխլայթուինք չխխանք, կարծեմութեամբ կուտինք անոնց դէմ: Ասով կը հարկաւորէ զմեզ Քրիստոս՝ որ ևս առաւել մենք զմեզ փորձութեան մէջ չեձգենք. վասն զի կամէք ինքը զինքը փորձութեան մէջ զնօրը չիկրնար բսել աստուծոյ՝ Մի քանից դեռ ՚ի քորճո-Յիւնս:

Վերջին խնդիրքն է. Այլ քրիստոս դեռ ՚ի լարէն: Ի չարէն բսելով՝ կը խնդրենք որ սատանային ձեռքէն խաղսէ զմեզ, վասն զի բուն չար սատանան է, ինչպէս շատ տեղ կըսէ Քրիստոս. Գայ լարն և յառաջակի զերմանեալն. Իսկ որո՞՞ս որդիք լարէն են. ասելին քան դայն՝ ՚ի լարէն է:

Ասանկ հրաշալի աղօթք մըն է Հայրմերը, վասն զի անոր շարագրօղը Քրիստոս է՝ որ մեր ամեն պիտոյքը մեզմէ աւելի գիտէ, ու չիկրնար ըլլալ որ պակաս բան մը թողուցած ըլլայ աստուծոյ խնդրելու: Ուստի ուրիշ ամեն աղօթքներ Հայրմերին բացատրութիւնն են, անոնք բոլորը Հայրմերին մէջը կան, բայց սուրբ Հորք՝ ան աղօթքներն ալ շինած են, ու սուրբ եկեղեցին ընդունած է, մեր մտքին օգնելու համար՝ որ ան ամեն բաներն ալ Հայր մեր բսելու ատեն մտածենք, թու թակի պէս չըսենք, առանց մտադրութեան չի վրախրանք Հայր մերը:

Ա. Ա. Օ. Թ. Բ

Յիսուս փրկիչ իմ, շնորհակալ եմ որ սորվեցուցիր ինձի աս աղօթքը, ու սորվեցընելովդ վատահացուցիր զիս ընդունելու քու արգեանցդ համար իմ պիտոյքս՝ իմ խնդիրքներս՝ իմ փրկութիւնս՝ քու երկնաւոր Հորմէջ: Ինչ մտքով ինչ դիտաւորութեամբ որ զրիր աս աղօթքին ամեն մէկ բաւը՝ նոյն դիտաւորութեամբ կըսեմ: Փրկիչ իմ որ ինձի սորվեցուցիր իմ փրկութիւնս խնդրել, քու սորվեցուցած աղօթքովդ քեզի կը դիմեմ, փրկէ իս սատանային ձեռքէն, որ զքեզ կարենամ օրհնել յաւիտեան:

Փրկութիւն դու ես Յիսուս, և առ ո՞ սյլ յենուցուցք. փորձանակից դու ես, և առ ո՞ սյլ ապաւինեցուցք. ոչ տալն փորձութիւն՝ քո է, և առ սյլ ո՞ սպաստանեցուցք. ողորմած դու ես, և զո՞ւմ սյլ ոտից նմին կարօտեալքս բուռն հարցուք: Նայեաց տեր՝ ՚ի փորձեալքս և կործանեալքս, ՚ի մասնեալքս և չարքարեալքս, ՚ի խոցեալքս և գիւշատեալքս, ՚ի յարբեալքս և յիմարեալքս: Փրկիչ, որ զփրկութիւն ուսուցեր խնդրել, քջովս զքեզ թախանձեմք, փրկեա զգերեալքս յորսողէն, որ ես օրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

# ՄՏԱ.ԾԱ.ԿԱՆ ՀԱ.

Սովորական գործքերնիս աղէկ կերպով  
ընելու վրայ :

## Մ Ա Ս Ն Ա.

**Մ**եր հոգևոր կատարելութիւնը շատ բան ընելու վրայ է, և ոչ մեծամեծ գործքեր ընելու վրայ. շատ սուրբեր կան որ երևելի գործք մը ըրած չունին, իրենց սրբութիւնը սովորական գործքերնին աղէկ կերպով ընելնուն վրայ էր: Բայց իրենց պղտի բաներուն մէջ հաւատարիմ ըլլալնուն համար՝ աստուած իրենց մեծամեծ շնորհներ տուաւ: Իրենց խոնարհութիւնը մեծ էր, որով պղտի գործքերու կը զբաղէին, փառաւոր գործքերը ուրիշներուն թող տալով. վասն զի իրենց զիրենք անկարող կը սեպէին մեծ գործքեր ընելու: Քրիստոնէական կատարելութիւնը երևելի ու անսովոր գործքերու վրայ որ ըլլար, խիստ քիչ մարդ կատարեալ կրնար ըլլալ. վասն զի անանկ գործքերը ստէպ չեն պատահիր, իսկ կատարելութիւնը մեր ամեն օրուան գործքը պիտոր ըլլայ, մեր ունակութիւնը պիտոր ըլլայ:

Ուստի որ վիճակին մէջ որ աստուած զմեզ գրեր է՝ ան վիճակին սովորական պարտքերը աղէկ ընելնուս վրայ է մեր կատարելութիւնը, ու անոնք կուզէ մեզմէ աստուած, որովհետեւ ան վիճակին մէջը գրեր է զմեզ՝ ան գործքերը ընելու համար: Վասն զի յայտնի բան է՝ որ աստուծոյ կամքը ընելնիս է մեր սրբութիւնը, ու ան է որ մեր գործքերը կընէ արգիւնաւոր. առանց անոր ամենէն երևելի գործքերնիս ալ բան մը չեն աժեր, իսկ անովը ամենէն պղտի գործքերնիս ալ մեծ վարձք կընդունին: Քրիստոս աերն մեր երստեն տարի ինչ գործք ըրաւ՝ որ մարդկանց առջին երևելի սեպուէր. բայց որովհետեւ իր երկնաւոր շօրը կամքն էր ամեն ըրածը, որովհետեւ ամեն բանի մէջ անոր ուղածը կընէր՝ ինչպէս ինքը ըսաւ. Ես զհաճոյս նորա առեմ հանապաղ. իր ամեն գործքը աստուծոյ առջին ամենամեծ ու ամենա կատարեալ գործքեր էին: Մեծ մխիթարութիւն է աս մեզի. հարկ չիկայ որ մեր կատարելութիւնը ասպիս անգին փնտրուենք, քովերնիս է միշտ, մեզի հետ է միշտ, ամեն սովորական գործքերնուս վրայ է. կատարելութիւն մը՝ որ մեր պարտքերուն արդէք է՝ կատարելութիւն չէ, ու աստուած չուզեր մեզմէ անիկայ. աստուծոյ ուղածը մեր պարտքերը աղէկ ընելնիս է, աս է որ ուրիշներուն ալ բարի օրինակ ու շինութիւն կըլլայ: Ստիկայ գիւրին բան մը կերտնայ, բայց յարտակելը աս բանիս մէջ՝ ծանր գժուարութիւններ ունի. մեր բնութեանը պիտոր յաղթենք, ու անոնք է որ մեծ վարձքի արժանի կըլլանք:

ՄԱՍՆ Բ.

Մեր սովորական գործքերը, այսինքն մեր վե-  
 ճակին պարտքերը պէտք է աղէկ ընենք, անանկ  
 որ՝ կերպով մը մեղի համար ալ կարենայ ըստիւ-  
 Զամէնայն ինչ բարոտ գործէսց դա: Մեր պարտքերը  
 աղէկ ընելու համար՝ պէտք է ճշգուծեամք, ե-  
 ուանդեամք, ու յարատուութեամք ընենք: Ճըշ-  
 գուծեամք ընելը կամօք զանցառութիւն չընել  
 ըսել է գործքի մը՝ որ մեր պարտքն է, և ոչ վեր  
 ՚ի վերոյ ընել գործքը. որ աստե՛ն՝ ուր տեղ ինչ  
 կերպով որ ընելու է, անանկ ընել: Գործ մը ե-  
 ուանդեամք ընել ըսելը՝ ակորժելով ընել ըսել  
 չէ. սովորաբար ակորժը եւանդեան հետ կեր-  
 թայ, բայց կրնայ ըլլալ ալ որ՝ գործք մը ակոր-  
 ժելի չըլլայ մեղի, ու եւանդեամք ընենք. ան ա-  
 տենը մանաւանդ աւելի արգիւնհաւոր կըլլայ ը-  
 րածնիս, մեր բնութեանը յաղթելով: Ամենէն  
 դժուարը յարատուութիւնն է. ամեն մէկ գործքը  
 զայս զատ մտածելու որ ըլլանք՝ գիւրին կերենայ-  
 քոյց ամենը մէյուեղ շարունակ ու վնջև ՚ի մահ  
 ճշգուծեամք ու եւանդեամք ընելը՝ մարտիրոս  
 ըլլալու պէս բան մըն է, ու անոր համար վարձքը  
 մեծ է: Ուրեմն ասոր վրայ պիտոր ըլլայ մեր  
 քննութիւնը, աս պիտոր ըլլայ մեր կատարելու-  
 թեան կանոնը. պարտքերնիս ճիշդ կրնենք, պարտ-  
 քերնիս եւանդեամք ու յարատուութեամք կը  
 կատարենք: Աս քննութիւնն որ ընենք՝ շատ խո-  
 նարհելու պատճառ կը դանանք վրանիս, տես  
 ննելով որ առաջ երթալու տեղը՝ ետ գնացեր ենք,  
 զանցառութիւններ ընելով ու վեր ՚ի վերոյ մեր  
 պարտքերը կատարելով:

ՄԱՍՆ Գ.

Ասոնցմէ ՚ի զատ ուրիշ բան մըն ալ հարկաւոր  
 է քրիստոնէական կատարելութեան համար, ու  
 գրեթէ հոգին ու կեանքն է անոր. այսինքն աս-  
 ուուծոյ համար ընել ըրածնիս: Ուրիշ ամեն բան  
 կըր թէ մարմինն է կատարելութեան, աս է որ  
 հոգի կուտայ մեր գործքերուն, աս դիտաւորու-  
 թիւնն է որ զանոնք կը սրբադործէ: Մեր պարտ-  
 քերը բնական յոժարութեամք կամ սովորու-  
 թեամք, կամ մարդկային նկատման կամ շահու-  
 համար, կամ ՚ի ցոյցս մարդկան ընելը, աստու-  
 ծոյ առջին արգիւնք մը չունի: Ամէնայն քառս քը-  
 փեր Թագաւորի ՚ի ներսոյ՝ կըսէ Գաւթի մարդարեն-  
 մեր ամեն գործքն ալ ասանկ է, ներսերնէս այս-  
 նինքն սրտերնէս ու մտքերնէս կը կախուի անոնց  
 արգիւնքը: Ամենէն մեծ ու երեւելի գործքերը էր-  
 բոր աստուծոյ համար չընենք, բան մը չեն արժեր.  
 շատ մեծ մտածական մըն է աս. թէ որ գործքեր  
 նիս աղէկ մը քննելու ըլլանք, որչափ քիչ բան  
 կը դանենք որ աստուծոյ համար միայն ըրած ըլ-  
 լանք: Այլթի կրնենք, կաշխատինք, գրսուանց  
 ամեն պարտքերնիս կը կատարենք, բայց թէ որ  
 սովորութեան համար միայն է ըրածնիս, թէ որ  
 չիմեղագրուելու համար է, թէ որ շահու կամ  
 համարմունք վատարկելու համար է, թէ որ  
 Աստուծմէ ՚ի զատ ինչ և կցէ պատճառի հա-  
 մար է, ընդունայն աշխատեր ենք, ամենեւին մեր  
 կատարելութեանը օգուտ մը չէ եղեր անոնցմէ:  
 Այնչափ աւելի ողբալի է մեր ըրած կորուստը՝  
 որչափ որ դիտաւորութեամք մը միայն ամենէն  
 պղտի գործքերնիս կրնային աստուածահաճոյ ու

արդիւնաւոր ընել վասն զի աստուած ինչ ընել  
 նիս չինայիր, այլ ինչպէս ընելնիս, ու ասով կե-  
 րեւնայ իր իմաստուն ու բարեգութ նախախնա-  
 մութիւնը: Աստուած ամենուս նոյն տաղանդը չե-  
 տուեր, նոյն գործքը ամենուս ձեռքէն չիգար-  
 բայց որովհետեւ ամենէս ալ կատարելութիւն կը  
 պահանջէ, անանկ ըրած է՝ որ ամենէն անարգ ու  
 ծառայական գործքն ալ մեր դիտաւորութեամբը  
 յարգ ընգունի, աշխուհական գործք ըլլայ, ու  
 զմեզ կատարելութեան հասցընէ:

Ա. Գ. Օ Թ. Գ

Յիսուս փրկիչ իմ, կը ցաւիմ որ ինչուան հի-  
 մայ նիւթական կերպով ընելով իմ գործքերս՝  
 ասանկ աղքատ ու անկատար մնացեր եմ, երբոր  
 այսչափ զիւրաւ կրնայի առաջ երթալ կատարե-  
 լութեան մէջ: Ամեն մէկ գործքս ինծի մէյմէկ աս-  
 տիճան կրնային ըլլալ կատարելութեան սանդու-  
 խէն վեր ելլելու. իսկ ես չեմ գիտեր թէ արգեօք  
 անոնցմով քայլ մը ըրած եմ դէպ ՚ի կատարելու-  
 թիւն: Ենտք տուր ինծի, որ ասկէց ետքը ամեն  
 գործքս քեզի համար ընեմ, ապրիս ալ շունչ  
 առնելս ալ քու սիրոյդ համար ըլլայ:

Ի գիշերի և ՚ի տունըեան և յամենայն ժամու  
 զքեզ աղաչեմք, և ՚ի քէն խնդրեմք մարգատեր  
 աեր. լոր մեղ աստուած փրկիչ մեր, խոնարհեա-  
 ցի ունին քո ՚ի խնդրուածս մեր, զի մի ունայն լի-  
 ցին վաստակք ծառայից քոյ. այլ համարեա զաշ-  
 խատուութիւնս մեր ՚ի գործ արգարութեան, և  
 ՚ի պտուղ աստուածապաշտութեան:

### Մ Տ Ա. Ծ Ա. Կ Ա. Ն Հ Բ.

Պրտի բաներու մէջ աչ աստուծոյ հաւատարիմ  
 ըլլալու վրայ:

Մ Ա. Ա. Ա.

Հողեր կենաց մէջ ծանր սխալմունքներուն  
 մէկը մեծ մեծ ճգնութիւններ ընելու բաղձանքն է.  
 սրբութիւնը Սիմէոն սիւնակեցիս պէս սիւնի մը  
 ծայր բնակելուն վրայ չէ, և ոչ Սկիտիի ճգնաւոր-  
 ներուն պէս անապատը քաշուելուն: Ասոնցմէ  
 շատ աւելի հարկաւոր է մեր ամեն օրուան պարա-  
 քերը աղէկ ընել, պղտի մահացուցմունքներու  
 աւելի փոյթ ունենալ. վասն զի պղտի բաներու  
 մէջ աստուծոյ ծառայելու վարժօղը, պէտք է  
 դած տեղը մեծն ալ կրնայ ընել. անոր համար  
 կըսէ Քրիստոս. Որ ՚ի չորան հասարակէ՞ է, և ՚ի  
 բաւժն հասարակէ՞ է: Մեծ մեծ ճգնութիւնները ոչ  
 ամենքս կրնանք ընել, և ոչ ընել կըցօղները ամեն  
 օր կրնան ընել. բայց համբերութիւն՝ հնազան-  
 դութիւն՝ հեղութիւն՝ խոնարհութիւն և այլն՝  
 ամենքս ալ, ամեն օր, ամեն ժամ կրնանք ընել:  
 Ընդ հակառակն ալ որ պղտի առիթներու մէջ չէ  
 սորված՝ ունակութիւն չէ ըրած՝ իր պարտքը.

նելու, անիկայ մեծին մէջն ալ չընէր. Եւ որ 'ի քորան անիբաւ է, և 'ի քորան անիբաւ է: Վասն զի թէ որ պղէկ ունակուածիւնը այնչափ զօրաւոր է որ չիթողու մարդու ծանր բաներու մէջ ալ իր պարտքին գէմ ընելու, որչափ աւելի չար ունակուածիւնը զօրաւոր է պարտքերնուս գէմ ընել տալ, որովհետև մարդս աւելի հակեալ է 'ի չարն քան 'ի բարին: Զուրին շտակ տեղ ալ ճամբայ բանալու որ ըլլաս, կամոց կամոց կը քալէ կերթայ. բայց թէ որ դառ 'ի վայր տեղ ճամբայ բանաս, կը դաճալի՞: Ասանկ է մարդուս բնութիւնն ալ. Յուզա պզտի ագահութիւններ ընելէն՝ հասաւ սոսկալի ագահութիւն մը ընելու, ու երեսուն դաճեկանի համար զՔրիստոս մասնեց: Ասանկ ալ ուրիշ ամեն ունակութիւններու վրայ կը ստուգուի Քրիստոսի խօսքը:

### ՄԱՍՆ Բ.

Աս արամբանութիւնը սակաւ կընենք ուրիշ ներու վրայ. մէկը տեսնանք որ պզտի խօսքի մը համար կը սրգոյնի, հապա մեծ անարգանք մը որ ընդունելու ըլլար՝ ինչ պիտոր ընէր կըսենք: Մէկը տեսնանք որ թեթև բանի մը չիհնազանդիր, թէ որ դժուարին բան մը իրեն հրափայտէր՝ ինչ պիտոր ընէր կըսենք. ու ըրած արամբանութիւնիս ուղիւ է: Ուրեմն մեր վրայ դառնանք. թէ որ պզտի բաներու մէջ մենք մեղի չենք յաղթեր, մաճացուցմունք չենք ընէր, մեծ բաներու մէջ ինչպէս կընանք: Թէ որ թեթև փորձութիւն ներու մէջ աչք ընիս չենք բռնիր, սրտերնիս չենք զնայեր, ծանր փորձութեան մը մէջ իշխալու որ ըլլանք՝ ինչպէս կընանք բռնել ու զսպել: Ուրեմն

ջանանք պզտի բաներու մէջ աստուծոյ հաւատաւրիմ ըլլալ. փախչել պզտի առիթներէն, մենք մեղի յաղթել, որպէս զի մեծ առիթներու մէջ ալ կարենանք յաղթել: Որ 'ի քորան հասարակ է, և 'ի քորան հասարակ է: Հոգևոր կենաց մէջ խիստ հարկաւոր կանոններէն մէկն է Քրիստոսի աս խօսքը. վասն զի աստուծոյ տուած պզտի շնորքները բանեցրելուն վրայ է աւետարանական կատարելութեան բոլոր շինուածքը. ով որ աստուծոյ տուած պզտի շնորքները կը բանեցընէ, երթալով մեծ շնորքներու արժանի կըլլայ: Մեղի պէս կընէ աստուած. երբոր ազբըսի մը ոլորմութիւն տանք, ու տեսնենք որ կը մշտնէ, մշտն ալ չենք 'ի տար. երբոր մէկու մը ձեռք պզտի անատութիւն մը կուտանք, ու կը տեսնենք որ շահեցընելու տեղը կը պակեցընէ, այնչափն ալ չենք թողուր ձեռքը՝ չէ թէ անկէջ աւելին տալ: Ասանկ կընէ աստուած ալ. երբոր կը տեսնէ որ տուած շնորքը չենք բանեցընէր, աւելի շնորք տալու տեղը՝ սուսածն ալ էա կաննէ. ինչպէս քանքարաթաղոյց ծառային առակը բերելէն ետքը ըսաւ. Զի ամենայնի որ ունիցի, պայի և յաւելցի. և որ ուն ունիցի, և զը ունիցի՝ բարցի 'ի նմանէ:

### ՄԱՍՆ Գ.

Ասկէջ կը հեռուի՞ որ ներքի մեղքերէն պէտք է զբուշանանք գրեթէ այնպէս՝ ինչպէս մահուափէն: Վասն զի կամօք ու դիտնալով ներքի մեղքերէն չըզգուշանալը՝ աստուծոյ շնորքը բանի տեղ չիգնէլ է, ոսքի տակ առնել է, անանկ որ աստուած տեսնելով իր տուած շնորքը բանի տեղ չիգնէնիս, ուրիշ շնորք չիտար. ասանկով առաջ



չերթալէն 'ի զատ՝ ետ կերթանք, ու կամաց կամաց մահուչափին մէջն ալ կիյնանք: Երեւի մեղքը պղտի հիւանդութիւններու պէս է, որոնց դիմացն որ չառնես՝ կը ծանրանան, մահացու հիւանդութիւն կըլլան. որ խոհեմ մարդը աս պղտի հիւանդութիւն է՝ աս թեթեւ ջերմ մըն է ըսելով՝ անհոգ կըլլայ. ասանկ են ներքի մեղքերն ալ. բանի տեղ չիգրածիդ պէս՝ առաջ կերթան. Որ արհամարհի զիորս, իոր իոր իոր՝ անէպի:

Աս կործանմունքէն խաղտելու համար՝ պէտք է փոյթ ունենանք այն ամեն. պղտի բաներուն, որոնցմով մեր վիճակին մէջ կրնանք դիմել 'ի կատարելութիւն: Աէ թէ միայն ներքի մեղքերէն զդուշանալով՝ որ աստուծոյ շնորքը արհամարհել է, այլ նաև զանցառութիւններէն՝ որ աստուծոյ տուած շնորքը չիբանեցընել է. ով որ աստուծոյ տուած շնորքը չիբանեցընէր, տալու շնորքէն ալ զինքը կը զրկէ. վասն զի ընդունելու որ ըլլայ, ան ալ պիտոր չիբանեցընէ. Որ 'ի իորսն անբաւ է, ե 'ի բաւին անբաւ է:

Ա. Դ. Օ Թ. Գ

Յիտուս փրկիչ իմ, որ քու շնորքովդ միշտ սըրտիս մէջը կը խօսիս, կը յորգորես զիս՝ ինծմէ ազնկներուն հետեիլ, ու ես անհոգ կըլլամ. բարի բարի խորհուրդներ միտքս կը ձգես, ու ես մտքես պարտեկան չեմ ընելու ըսելով՝ զանցառութիւն կընեմ: Գոհութիւն կուտամ աս ամեն ինծի տուած շնորքներուդ համար, միայն կը ցաւիմ որ մինչև հիմայ չեմ բանեցուցեր զանոնք: Աս շնորքները ուրիշ մը տուած որ ըլլայիր, սուրբ կըլլար. իսկ ես միշտ նոյն պակասաւորն եմ. ներէ ինծի,

ու տուած շնորքդ ետ մի՛ առնէր: Իրաւ՝ քանքարը ծածկող ծառային պէս արժանի եմ՝ որ ետ առնուս ինծմէ տուած շնորքդ, ու ուրիշին տաս. բայց անիկոյ առած քանքարը չիբանեցուցած ըլլալով՝ բանեցընել ալ չուզեց, ու ինքիւրենը ետ տուաւ, իր ծուրութիւնը մեղադրելու տեղ՝ զբեղ խիտ ախրոյ տեղ զնեղով: Քաւ լիցի որ ես անանկ ընեմ. իմ ծուրութիւնս կը խոստովանիմ, քու բարեգթութենէդ կը գոհանամ, ու կառաջադրեմ որ ասկէց ետքը քու տուած շնորքներդ կրցածիս չափ բանեցընեմ:

Յորժամ զտաղանդ պատուիրանին պահանջես ի ծառայիցն ընդ կրկնաշահ քանքարացն, արժանացո զմեզ Քրիստոս ուրախութեան քո յերկինս:

### ՄՏԱ.ԾԱ.ԿԱՆ ՀԳ.

Ներկի մեղքերը չարհամարանէրս վրայ:

### ՄԱՍՆ Ա.

Աւրիչ է ներել մեղք գործելը, ուրիչ է ներել մեղքը արհամարհելը. ներել մեղքի մէջ բարեպաշտ անձինք ալ կ'իյնան. Նոյն անգամ յառաջն անցի աբարն կըսէ Դաւիթ մարդարէն. բայց կը ջանան չիյնալու, իյնալէն ետքն ալ կը ցաւին ու կը զղջան: Իսկ որոնք որ ներել մեղքը բանի տեղ չեն դնէր, ու փրկութեան հասնելու համար հարկաւոր չեն սեպեր անոնցմէ զդուշանալը, անոնց համար է որ կըսէ սուրբ գիրքը. Ու անագի դատաստ, քոք քոք իրծաննայի, այսինքն ով որ ներել մեղքը բանի տեղ չիդնէր, քիչ քիչ մահուցափին մէջը կ'իյնայ: Մեծ վտանգի մէջ են ասանկները. ինչ տարբերութիւն ունի նաւաբեկութենէ, թէ որ նաւդ պղտի ծակէ մըն ալ ջուր առնէ, ու դուն անհոգ ըլլաս. որչափ ալ պղտիկ ըլլայ ծակը՝ ետքը ետքը կընկղմի նաւդ. իրաւ՝ մեկէն չընկղմիր, մեկէն չես խղզուիր. բայց խեղճ մխիթարանք է՝ քիչ մը ուշ խղզուելդ, երբոր պիտի խղզուես:

Մարդս խիստ զիւրաւ պղտի մեղքերէն մեծին կը հասնի. վասն զի վախն է որ զմեզ ծանր մեղքերէն ետ կը բռնէ: Երբոր մեկ դիէն աս վախը կամաց կամաց կը քիչնայ՝ ներել մեղքերը համարձակ գործելով, մեկալ դիէն ալ կեւեւնայ մարդուս չար յոժարութիւնը՝ որ դէպ ՚ի մեղքը կը հրէ, շատ դիւրին կըլլայ պղտիկէն մեծը անցնիլը: Ներել մեղքերուն վտանգին պէս. մահուցափ մեղքինը աչքի զարնելով կը խրատեցնէ ըզմարդ, իսկ ներել մեղքինը բարակ խարտոցի մը պէս կուտէ մարդուս հոգևոր կեանքը. ու ետքը կ'իմանայ մարդ՝ որ պղտի բանի տեղ դրածը՝ առանկ չէ եղեր, երբոր անողտալի կերպով քիչ քիչ առաջ երթալով ինքը զինքը մահուցափին մէջը կը դանայ: Ներել մեղքը կայծի մը պէս է, առջի բերանը հաղիւ կերենայ, փչածիւր պէս կը մարդի. բայց երբոր մէյմը առաջ երթայ, ու բոց որ ըլլայ, գիւրաւ չիմարիր, առնդ կը բռնկցնէ, մախիր կընէ:

### ՄԱՍՆ Բ.

Ստանային հնարքն է՝ միշտ պղտիկէն սկսել տալը. չնըրտեցնէր իր որսը. մեկէն մահուցափ մեղքի մը փորձութիւն բերելու որ ըլլայ մեղք, կը խրախնք. անոր համար կը ջանայ որ առաջ ներել մեղքերու զմեղ վարժեցնէ: Բայց որչափ ալ ներել ըլլայ ըրածնիս, որչափ թշնամի ալ չընէ զմեզ աստուծոյ, դարձեալ Աստուծոյ ու մեր մէջը պտղութիւն մը կը ձգէ. Հոգեոյն սրբոյ շնորքը բոլորովն չիմարէ ալ սրտերնուս մէջ, բայց կը տրամեցնէ զինքը: Ասոր հետևանքը ան կըլլայ,

որ աստուած մեզի աւելի շնորք տալու տեղը՝ տուածը չիվերցընելը հերիք կը սեպէ. ու ծանր փորձութիւն մը վրանիս գալու որ ըլլայ՝ այն սովորական շնորքովը չենք գիմանար, կիյնանք ծանր մեղքի մէջ. անոր համար Պօղոս առաքեալը կը խրատէ զմեզ որ Հոգին սուրբը չխորամեջընենք.

Մէ՛ք քրքմեցողայանէք ու Հոգին սուրբ աստուծոյ:

Երեւի մեղքերը թեթև հիւանդութեանց կը նմանին, որոնց անհոգ որ ըլլանք՝ կը ծանրանան, ու զմեզ գերեզման կը տանին. ուստի իր հոգւոյն փրկութեանը քիչ մը հոգ ունեցողը չիկրնար անհոգ ըլլալ ներքին մեղաց վրայ, ինչպէս որ խեղացի մարդը իր հիւանդութեանը վրայ անհոգ չըլլար՝ թեթև է ըսելով: Թեթև ջերմ մըն է կուզայ վրանիս. ինչ չենք ըներ գիմացը առնելու, ինչ զգուշութիւն չենք ըներ որ նորէն չիդառնայ: Կրնայ մահ բերել, հերիք է ամեն հնարք բանեցընելու՝ որ վրանիս չխտրէ. հապա ինչո՞ւ հոգևոր հիւանդութեան վրայ ալ ասանկ չենք մտածեր. մի թէ մարմնաւոր մահւոնէ շատ աւելի գէշ չէ՞ հոգևոր մահը. մի թէ հոգևոր հիւանդութեան ծանրանալը աւելի սարց գէ՞քան զմարմնաւորինը. սուրբ գիրքին խօսքն է. Ո՛ր անարգէ դասխառ, քոյր քոյր կոծանէնցի: Մասնաւորք որ մարմնաւոր հիւանդութեանց ծանրը ու թեթևը գիւրաւ կը շանչցուի, իսկ հոգևորինը դժուարաւ, շատ անգամ մարդուս ապականեալ բնութիւնը, չար յօժարութիւնները, կիրքերէն սղտորած միտքը, թեթև կարծել կուտան ան՝ որ աստուծոյ առջին ծանր է. անոր համար ապահով ճամբան ներքին մեղքերէն ալ զգուշանան է, կամաւ ու գիտութեամբ չիդործել սր և իցէ թեթև մեղք:

ՄԱՍՆ Գ.

Բայց թէ որ յայտնի կարենայինք ալ ներքին մեղքը մահուցափէն որոշել, ծանրը ու թեթևը ազէկ զանազանել, ասոնք շատ անգամ իրարու անանկ սահմանակից են որ մեծ յանդգնութիւն կըլլար վստահիլը՝ ուզած տեղերնիս ամաւր կէնալու, ու չիկասկածելը որ ակար բնութիւննիս մեկէն մեկալը կանցնի. մանաւանդ ան տեսակ մեղքերու մէջ՝ որ մարդուս բնութեանը վրայ սաստիկ տպաւորութիւն կընեն, ու կը հրապուրեն մեր զգայարանքները: Ո՛վ կրնայ վստահ ըլլալ որ աստուած ան վստանգին մէջը մեզկ մասնաւոր շնորք տայ չիյնալու. մի թէ շատ անգամ ներքին մեղքերնուս պատիժը չէ՞ որ աստուած իր մասնաւոր շնորքը չիտար մեզի, որով պիտոյր կարենայինք յարատեւել իր սուրբ շնորքին մէջը: Ասանդուշութեամբն է որ ներքին մեղքերը շատուուն դատապարտութեանը պատճառ եղած են ու կըլլան:

Մէյժն ալ ամօթ բան չէ՞ ըսելը՝ որ էս իմ ստեղծողիս իմ բարերարիս հերիք է որ ծանր նախատինք մը չընեմ, թեթև նախատինքներ ընելա հոգ չէ: Աս խօսքը զգայուն սրտի խօսք չէ. մէկն որ կը սիրենք, անոր պզտի նախատինք մըն ալ ընել չիպիտոյր ուղենք: Աս ալ մտածելու բան մըն է որ աստուած իր բարութեանը համար ներքին մեղքերուն ծանր սլատիժ չէ գրեր. ուրեմն թէ որ իր բարութիւնը նուազ եղած ըլլար, ու ներքին մեղքերուն ալ ծանր սլատիժ գրած որ ըլլար, աւելի պիտոյր հնազանդէինք իրեն. ըսել է որ իր բարութիւնը աւելի ըլլալուն համար՝ չենք ու-

զեր հնազանդիլ իրեն : Ասիկայ զգայուն սրտի  
զործք է :

Ա.Ղ.Օ Թ.Գ

Յիսուս փրկիչ իմ, շնորք տուր ինձի որ ասիէց  
եաքը չիջափեմ մինչև ուր ըլլալը իմ զգուշու-  
թեան ստարքս, այլ թեթև մեղքերէն ալ զգու-  
շանամ, որպէս զի ծանրէն ասպաճով ըլլամ : Գի-  
տեմ որչափ ալ առաջագրեմ, դարձեալ ներքեւ  
մեղքերէն ազատ պիտոր չըլլամ քանի որ կապ-  
ը իմ. բայց թեթև մեղքերէն ալ զգուշանալով՝ կը  
յուսամ քու շնորքովդ գոնէ մահուչափ մեղքի  
մէջ չիյնալու : Ինձի փափուկ խղճմանըք տուր,  
որ գործքերս՝ խօսքերս՝ ու մտածութիւններս ա-  
ղէկ կըսեմ, ու սանձեմ իմ զգայարանքներս ոչ  
սիրտս : Ի՛նչ քէր պահպան Բերանդ իմոյ, և շոտան  
ամուր զբանս իմոց՝ դի մի խորհրտիցի սիրոյ իմ Բանիւ լա-  
րուիւնան :

Սկեսցէ, տէր, ՚ի վերայ մեր ողորմութիւն քո,  
և բան փրկութեան քո պահեսցէ զանձինս մեր  
՚ի մեզաց. ողորմութիւն քո և ճմարտութիւն քո  
և լոյս երեսաց քոյ առաջնորդեսցէ մեզ ՚ի յար-  
դարութիւն. որ ողորմած դ ես, զթամ և երկայ-  
նամիտ տէր, ընկալ զաղաչանս մեր բարեխօսու-  
թեամբ սուրբ աստուածածնին :

# ՄՏԱԾԱԿԱՆ ՀԴ.

Յիսուսի սիրոյն վրայ :

## ՄԱՍՆ Ա.

Յիսուսի սէրը պէտք է որ սրտերնուս մէջ ա-  
մեն բանէն վեր ըլլայ, ու ամեն բան՝ որ իր սիրոյն  
հետ չիկրնար միարանիլ, իրեն զոհէնք պիտոր :  
Որ սիրէ զհայր իւր իմ զմայր առաւել քան զիս, և է ինչ  
արժանի. և որ սիրէ զառաք իմ զդոստոս առաւել քան  
զիս, և է ինչ արժանի : Ասանկ ալ ուրիշ ամեն անձի  
ու բանի վրայ կիմացուի. ուստի որ սէրն որ սըր-  
տերնուս մէջ կը տկարացնէ Յիսուսի սէրը կամ  
Յիսուսի սիրոյն գէտ կելլէ, այն սէրը զմեզ անար-  
ժան կընէ իրեն : Վասն զի Քրիստոս ազնուական  
սէր մը կուզէ մեզմէ, որ զմեզ ամեն արարածնե-  
րէն վեր հանէ, վասն զի Քրիստոս արժանի է  
ասանկ սիրոյ, անհամեմատ կերպով քան զամեն  
արարած գերազանց ըլլալուն համար : Վասն զի  
այնչափ գերազանց ըլլալովը անանկ կը սիրէ զմեզ  
որ ամենեւին ուրիշի մեր վրայ ունեցած սէրը իր  
սիրոյն չիհամեմատիր : Վասն զի մեզի այնչափ բա-  
րկբ ըրած է՝ որ ուրիշներուն մեզի ըրած բարեբը  
անոնց չիկրնար համեմատիլ : Վասն զի կուզէ,

զմեզ երջանիկ ընել, ու ինքը միայն կրնայ տալ մեզն հաստատուն ու յաւիտենական երջանկութիւն: Ուստի ո՛վ որ չիտրեր զՅիսուս, կամ Յիսուսէն եւել բան մը կը սիրէ, այնպիսին արժանի չէ որ զՅիսուս վայելէ, ինքը զինքը իր յաւիտենական երջանկութիւնէն կը զրկէ:

Յիսուսի սէրը մեզն աշխարհս վրայ վայելք չի խոստանար, այլ խաչ: Եւ որ ոչ առնու դիտելու էր Կայ դէպի իմ, չէ ինչ արժանի: Այսինքն ո՛վ որ յօժարութեամբ չընդունիր աշխարհս նեղութիւնները՝ ուսկից որ դան, թէ մեր խեղճ վիճակէն, թէ զիսուածներէն, թէ հիւրընդունութենէն, թէ մարդկանց չարութենէն կամ պակասութենէն, և թէ ուրիշ ինչ և իցէ կերպով, ո՛վ որ աս ամեն բաները համբերութեամբ ու անտրտունջ չկրպշեր, Յիսուսին արժանի չէ: Յիսուսի հետեւիք իրեն պէս ու նոյն վախճանի համար նեղութիւն բաշէն է, ու մեր քաջածը իրենին հետ աստուծոյ նուիրելն է, վասն զի մեր քաջածին բոլոր յարգը կը փնտռէ, անոր համար ալ աս փորձը կուզէ մեզմէն. վաստութիւն է իրեն համար բան մը չկրպշելը, ինչպէս վատ է զինուորը՝ որ չուզէր պատերազմել, անանելով որ իր թագաւորը պատերազմին ամեն վտանգներուն մէջ զինքը դրեր է՝ իր զինուորները խաղտելու համար: Նեղութեան չի համբերելը՝ Քրիստոսի չարչարանացը մասնակից ըլլալ չուզել է, անանկ մարդը Քրիստոսի արժանի չէ. արժանի չէ Քրիստոսի անդամ ըլլալու, արժանի չէ Քրիստոսի զինուոր ըլլալու, ուստի արժանի չէ Քրիստոսի յաղթութեանը ու փառացն ալ երկինքը մասնակից ըլլալու:

### ՄԱՍՆ Բ.

Յիսուսի սէրը կուզէ որ մեր կեանքը իրեն նուիրենք, որպէս զի մենք զմեզ չեկորսընցընենք. Որ իբրևոյն պանջն էր վասն իմ, գրոցէ զնա: Ո՛վ որ իր ատենը դո՛հ ընէլու համար՝ իր անմեղութիւնը կը կորսընցընէ, անիկայ իր կեանքը պահէլ ուզելով կը կորսընցընէ. Որ սիրէ պանջն էր, արձակ զնա այսինքն կորուսանէ: Ո՛վ որ իր կամքը՝ իր հաճոյքը՝ իր հանգիստը կը փնտռէ՝ աստուծոյ պատուէրանացը գէտ, զինքը աւելի քան զաստուած կը սիրէ, ուստի զինքը կը կորսընցընէ. Որ իտոյն պանջն էր կեցողանէ, իբրևոյն զնա: Ի՛նչ կուրութիւն, ի՛նչ թշուառութիւն կըլլայ մարդու ինքը զինքը փնտռել իր ուզածը ընել քիչ մը ատեն, երբոր էտքը յաւիտեան կորսընցընէ պիտոր իր անձն ու իր ուզածը: Իր կեանքը աս կերպ փնտռելով աշխարհս մէջ, անդին յաւիտեան իր կեանքը պիտոր կորսընցընէ, շարունակ մեռնի պիտոր՝ ամեն ուզածներէն զուրկ մնալով, միշտ տանջանք քաշէ պիտոր: Այլէկ բազդառանք իրարու աս երկու բանը:

Յիսուսի ըսած կերպովը, կեանքերնիս աս աշխարհս մէջ կորսընցընելով՝ ատեննիս մահացընէլ ըսել է, մեր չար յօժարութիւնները զպղել, աստուծոյ պատուէրանքները պահէլ ըսել է որ մեր զգայարանքները օրինաւոր չեղած բաներուն համար մեռած պիտոր ըլլան, ունայնութեանց ու պէտք չեղած զբօսանաց անզգայ պիտոր ըլլանք, արթից ու մեր պարտքերուն փոյթ պիտոր ունենանք. ըսել է որ ամեն բան աստուծոյ համար պիտոր ընենք, աստուծոյ փառացը համար պի-

տոր աշխատինք, մենք զմեզ սխտոր չեմքնառնք: Երջանիկ է՝ ով որ աս կերպով իր կեանքը կը կորսնցնէ. կարծես որ կը կորսնցնէ, կարծես որ չեմքնառնք, կարծես որ կը զոհէ, բայց կը գտնէ յաւիտեանական կեանք, իր ըրած զոհին ու մահաչուցմանը վրայ յաւիտեան կուրախանայ. Զի չեն արժանի տարաքանի ժամանակիս հանդերձեաց քառասուն՝ որ յայդնեաց են ՚ի մեւ:

### ՄԱՍՆ Գ.

Յիսուսի սէրը կուզէ որ ամենքս ալ իր սուրբ հաւատքին տարածմանը փոյթ ունենանք, թէ և քարոզիչ չըլլանք, թէ և քահանայ վարդապետ չըլլանք. ու ասոր գիւրին կերպն ալ կը սորվեցընէ՝ ըսելով, Որ ընդունի զմարգարէ յանոան մարգարէի, զվարչս մարգարէի առոցէ: Ու իր առաքեալներուն ալ ըսաւ. Որ ընդունի զյէսուս զիս ընդունի, և որ ոչ արբոսցէ յէսուս բաժակաս յանոան յայս՝ թէ դոստ Քրիստոսի է, ամէն ասեմ յէսուս ընդունող զվարչս իւր: Ուրեմն ով որ քարոզիչ մը՝ վարդապետ մը՝ քահանայ մը՝ իբրև աստուծոյ պաշտօնեայ կընդունի՝ կը պատուէ՝ ու կօղնէ իրեն, անոր վարձուցը մասնակից կըլլայ. անանկ որ պաւաթ մը ջուր ալ անոնց տուողը չկըրիւր իր աս մասնակցութենէ, իրենց յարգութիւն տուողն ալ իր վարձքը կառնէ: Ո՞վ կրնար հաւատալ աս բանիս, թէ որ Քրիստոս ըսած չըլլար. ասանկ բարերար՝ ասանկ առատաձէռն սխրող ծառայելէն աւելի ինչ էրջանկութիւն կրնայ ըլլալ. մարդկանց ծառայողներուն շատ անգամ արդիւնքը չիճանչցուիր, շատ անգամ ճանչցուի ալ անվարձ կը մնայ. վարձք ալ ընդունելու որ ըլլայ, ինչ է ընդունածը: Ասանկ չէ Քրիստոս.

սի ծառայելը. սղախ արդիւնքն ալ իր վարձքը ունի, և յաւիտեանական վարձք:

### ԱՂՕԹՔ

Յիսուս փրկիչ իմ, դուն ես միայն՝ որ ասանկ կը հատուցանես. ինչ հնարք չես բանեցուցած մեզի վարձք վատարկել տալու համար: Ենորհաւ կալ եմ քեզի որ աս սիրոյ նշանները սահմանէր ես, որոնցմով կրնամ վստահիլ՝ որ զքեզ կը սիրեմ: Ասկէց ետքը ինչնեղութիւն որ խրկես վրաս, ինչ վնաս թող տաս որ ուրիշները ընեն ինձի, կառաջագրեմ որ քու շնորհովք համբերեմ, սիրով ընդունիմ, չխորանջամ: Իմ սիրտս անարժան կըլլայ քեզի, թէ որ վատութեամբ աս թեթեւ խաչէրն ալ չառնէ վրան, ու չիգայ ետևէդ, թէ որ վատութեամբ քեզմէ աւելի բան մը սիրէ:

Նուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քո՝ զոր արկեր յերկիր՝ բորբոքեա յանձն իմ, զի պրեպեցէ զազա հոգւոյ իմոյ, և սրբեպեցէ զինոյ՞ մասց իմոց, և մաքրեպեցէ զմեզ մարմնոյ իմոյ, և վառեպեցէ զլոյս գիտութեան քո՝ ի սրտի իմում, և ողորմեա քո արարածոցս և ինձ բազմամեղիս:

# ՄՏԱ.ԾԱ.ԿԱՆ ՀԵ.

Եղբայրսիրտըրևսն վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Քրիստոս առնն մեր շատ անգամ բանիւ ու գործով մեզի եղբայրսիրուծիւն սորվեցընելէն՝ ի զատ, սրտաշարժ օրինակ մըն ալ բերաւ կատարեալ եղբայրսիրուծեան: Մտրդ մը Երուսաղէմէն Երեքով իջնելու ատեն աւաղակներու ձեռք կէյնայ, զինքը կը կողոպտեն՝ կը վերաւորեն՝ կիսամեռ կը թողուն կերթան: Քահանայ մը կանցնի անկէց, կը տեսնայ, ու կը թողու կերթայ. նմանապէս զեռացի մը հոնկէց անցնելու ատեն կը տեսնայ ու կը թողու կերթայ: Ինչուան հոս եղբայրսիրուծեան սոսկուծիւնը ինչ գէշ բան ըլլալը կը ցուցընէ Քրիստոս, երկուքին ալ անգթուծեամբը: Վերաւորուած հոգեվարք մը կը տեսնեն, իրենց ազգէն, իրենց քաղքէն, բայց որովհետեւ հասարակ մտրդ մըն է, անձանօթ, չքաւոր, երեսը չեն նայիր. թէ որ մեծ մտրդ մը ըլլալը, հարուստ, պատուաւոր, կը վազէին օգնելու իրեն: Սոսանկ է շատ անգամ մեր եղբայրսիրուծիւնն ալ. թէ որ մէկէ մը յոյս ունինք շահու,

սիրով կօղնէք իրեն, ծախք ալ կընէք իրեն համար. իսկ ուսկից որ յոյս մը չիկայ, կանցնինք կերթանք: Ի՞նչ եղբայրսիրուծիւն չէինք ըներ անոր՝ ուրկէց կատուած ըլլար մեր բախտը. ասիկայ աստուծոյ համար բարեգործուծիւն ընել չէ, այլ մեր շահուն համար:

Բայց աս քահանայն ու զեռացին շահանդրուծենէն ի զատ՝ անգթուծիւն ալ պէտք է ունեցած ըլլան, որ անանկ խեղճ վիճակի մը մէջ տեսնելով իրենց ազգայինն ու քաղաքացին, անցան գնացին: Մենք որ ըլլայինք, կը գթայինք վրան, սիրտերնիս կը ցաւէր, չօղնէինք ալ իրեն՝ գոնէ կը մեղքընայինք վրան. բայց որչափ բարոյական խեղճուծեան մէջ անձինք կը տեսնանք, սրջափ հոգևոր վերքերով վերաւորուած, ու անգպուծեամբ կանցնինք կերթանք. չէնք խղճար վրանին՝ որ մեղքերու մէջ էն, ու հոգինին մեռած է քան թէ կիսամեռ. փոյթերնիս չըլլար, կանցնինք կերթանք:

## ՄԱՍՆ Բ.

Ետքը Քրիստոս աս անգթուծեան դէմ սամարացիին եղբայրսիրուծիւնը կը պատմէ, զմեզ յորդորելու համար՝ որ անոր հետեւինք: Սամարացի մըն ալ նոյն տեղաց անցնելու ատեն, կը տեսնէ վերաւորը ու կը գթայ վրան. քովը ձէթ ու զինի դանուկելով անոնցմով վերքերը կը լուայ, կը պատէ, ու իր գրաստին վրայ գնելով խեղճ մտրդը՝ պանդոկ կը տանի կը հանգչեցնէ զինքը: Հետեւեալ օրը անկէց ելլելու ատեն՝ կը հանէ երկու գահեկան կուտայ պանդոկապետին, կը յանձնէ որ հոգայ զինքը. ինչ ծախք ալ որ ընէ,

կը խոստանայ՝ ՚ի դարձին վճարելու: Չինայի որ  
 Հրեայ է վերաւորը. թէ և ինքը սամարացի է, ու  
 սամարացիները կը քաջուէին Հրեաներէն, բայց  
 իր ըրածը եղբայրսիրութեան համար է, թշնա-  
 մին ալ ըլլար՝ կը գթար վրան: Ոչ աղջին տար-  
 բերութեանը կը նայի, ոչ քաղցին և ոչ կրօնքի.  
 կը խղճայ վրան, ու ձիէն իջնալը, ողորմելին քովը  
 երթալ՝ զինքը մխիթարել՝ վերքերը լուալ ու  
 սպասելը հերքը չիսեպէր, կաշնատի կը տանի  
 զինքը ինչուան ՚ի պանդոկ. չէ թէ միայն իրեն  
 պէտք եղած ձէթն ու զինին անոր բժշկութեանը  
 համար կը բանեցընէ, չէ թէ միայն ամեն իր ձեռ-  
 քէն եկածը կընէ, այլ և ստըկէ կեղծ:

Սօ սրտաշարժ առակը պատմելն ետքը՝ Քրիս-  
 տոս տէրն մեր օրինականին ըսաւ. Դուն ալ գնա  
 սամարացիին ըրածը ըրէ: Սօ խօսքը օրինականին  
 միայն չըսաւ Քրիստոս, այլ և մեզի կըսէ ինչուան  
 այսօր սուրբ աւետարանին մէջը. Ե՛րբ և Դո՛ւ ար-  
 նոյնպէս:

### ՄԱՍՆ Գ.

Սօ պատմութիւնը առակ միայն չէ, այլ ճշմար-  
 տութիւն. վասն զի ասով կիմացընէ Քրիստոս  
 ինչ որ ինքը մեզի ըրաւ, ու իրապէն ՚ի զատ՝ իր  
 օրինակովը կը յորդորէ զմեզ. անանկ որ, Ե՛րբ և  
 Դո՛ւ ար- նոյնպէս ըսելը՝ դուն ալ ինձի պէս ըրէ ը-  
 սել է: Ինքը ճանապարհորդ մըն էր, երկինքէն  
 ինչաւ, մօտեցաւ մեզի՝ որ սատասայէն վերաւո-  
 ղուած էինք, ամեն շնորք կողոպտեր էր մեզմէ,  
 կիսամեռ՝ յաւիտեանական մահուան մօտ էինք:  
 Մեզ հոգալու ու բժշկելու համար՝ ամեն պէտք  
 եղած ծախքը վճարեց, ինչուան իր սուրբ և պա-

տուական արիւնն ալ մեր փրկութեան համար  
 տուաւ. Չի ու ապախանացու արժանեղինօք և ոսկեղէ-  
 նօք իրկեցարուք, այլ պարտական արեւմբն Քրիստոսի:  
 Մեզի համար աշխատանք մը չիկնայեց, քանի որ  
 աշխարհիս վրայ էր՝ զմեզ հոգալէն ետքը, երկինք  
 դառնալու ատեն ալ՝ յանձնեց զմեզ իր սուրբ  
 եկեղեցւոյն, առանդելով ՚ի պանդոկի ամեննիւալ խառ-  
 ղիէն եկեղեցւոյ. ու իր չարչարանօքը ստացած ար-  
 դեանցը անսպասելի գանձը՝ մեր ամեն սիրտոյնը  
 համար հսն գրաւ, որպէս զի սուրբ խորհուրդնե-  
 ղուն ձեռքովը անոնց մանանկից ըլլալով՝ ամեն  
 վերքերնիս ողջըննայ, ուժ առնէնք. ստատանային  
 յաղթէնք, փրկութեան համարնք: Ո՛վ մարդասի-  
 րութիւն Յիսուսի փրկչին մերոյ, ինչիւր մեր սըր-  
 ան մէջը որ մենք ալ իրար այնպէս սիրենք՝ ինչ  
 պէս որ ինքը զմեզ սիրեց:

Քրիստոս տէրն մեր առակը հոս կը ըմբոցընէ,  
 չըսեր որ ետքը ան վիրաւորը ինչ շնորհակալու-  
 թիւն ըրաւ իր բարերար դամարացւոյն. վասն զի  
 աս ըսելը՝ մեզմէ շնորհակալութիւն ուղէլ էր.  
 Իսկ իրեն մեզմէ ուղած շնորհակալութիւնը՝ աւ-  
 տուծոյ սիրոյն հե՛տ՝ եղբայրսիրութիւնն է, որն  
 որ առաջ հաստատեց՝ օրինականին տուած պա-  
 տասխանովը. իրարու ըրածնիս, իրեն ըրած կը  
 սեպէ. Ո՛րովէնպէս արարիք մե՛սմ էլ քաջարցա այստղի իտրե-  
 կանց, ինչ արարիք:

### Ա. Գ. Օ Ք. Բ

Յիսուս փրկիչ իմ, աս ինձի ըրած գթութեանդ  
 շնորհակալ եմ, որն որ աս սիրուն առակովը մեզի  
 բացատրեցիր. շնորք տուր ինձի՝ որ ասկեց ետքը  
 ամենեկն եղբայրսիրութեան դեմ չընեմ, որով  
 հեռաւ ամենէն եւեւ ինձմէ ուղածդ աս է: Ծնորք



տուր ինձի որ քու ճշմարիտ աշկերտդ ըլլալս՝ եղբայրսիրու թեամբ ցուցնեմ, որովհետև ասանկ հրամանեցիր. Յայսմ գիտասցեն ամենեւեան երևի իմ աշակերտքէս եւ երևի սիրելոցէս զմեռանս :

Նոր սիրոյ պատուիրանին  
Գործով ըցօղ եղեր բանին,  
Աղօթելով առ Հայր յերկին  
Թողուլ ըզմեզս որ ի խաչին .  
Ինձ որ հոգևովս հաւատացեալ  
Երկըրպագեմ քեզ միածին,  
Թող ըզլուծումըն հրամանին,  
Ան յիշեսցին մեզքն առաջին :

## Մ Տ Ա Մ Ա Ն Կ Ա Ն Հ Զ .

Նորին Լոյսայրսիրութեան վրայ :

### Մ Ա Ս Ն Ա .

Քրիստոս աւերն մեր հին օրէնքին պատուիրանքները կատարելագործելու ու հաստատելու եկաւ, ինչպէս ինքը կըսէ . Ու եկի աշխարհս զսպասելուս, ոչ ի խաչելուս, այլ ի կենդանացնելուս : Քրիստոսն ալ կերպով մահաւորեալն անմիջապէս առաջ ետքի ընթրեաց ատենը՝ սուրբ հաղորդութեան խորհուրդը հաստատելէն ետքը՝ իբրև կրօնի մը ապաստանը տալը, ու իբրև թէ իր արեամբը ստորագրելը, պարտք մը կը դնէ վրանիս՝ որ ասոր դէմ եղած ամեն պղտի բաներէն ալ զգուշանանք, վասն զի ասով պիտոր ճանչցուն Քրիստոսի աշկերտ ըլլանիս, քրիստոնեայ ըլլանիս . Յայսմ ծանոցեն զյեւ ամենեւեան երևի իմ աշակերտքէս եւ երևի սիրելոցէս զմեռանս :

Եղբայրսիրութեան կերպն ալ առջնինս գրաւ ինչպէս պէտք է մեկզմեկ սիրենք . Որպէս սիրելոց էս զյեւ, ապա սիրելոցէս զմեռանս : Այս է պատուիրան իմ,

ւի սիրեալիքս ւսիմանա որպէս և ես դչեւ սիրեցի: Քրիստոս զմեզ սիրեց իբրև իր աշկերանները, իբրև իր եղբարբքը, իբրև իր արեանը գինը, իբրև իր անգամները, իբրև իր ժառանգակիցները, մենք ալ աս համեմատութեամբ սիրենք պիտոր մէկըմէկ: Քրիստոս զմեզ սիրեց առանց մեր արժանաւորութեանը, զմեզ սիրեց իրեն թշնամի եղած ասեննիս. ուրեմն մենք ալ մեզի թշնամի եղողներն ալ պիտոր սիրենք: Քրիստոս զմեզ սիրեց, չէ թէ խօսքով այլ գործքով, իր ամեն արդեանցը զմեզ մասնակից ընելով, զմեզ սիրեց ինչուան իր արիւնը մեզի համար թափելով, ասկէց աւել սեր չկերտնար ըլլալ. ուրեմն մեր եղբայրսիրութեանն ալ չափ ու սահման պիտոր չիղենք, ինչ որ կրնանք՝ ուրիշներուն յաւիտենական փրկութեանը համար պիտոր ընենք: Ի՞նչ պարազկան չենք ընելու Քրիստոսի՝ որ զմեզ այսչափ սիրեց. բայց որով հեռա զինքը չենք աններ, իրեն ուրիշ կերպով չենք կրնար մեր սէրը ցուցնել, իր ամեն իրաւունքը գրած է մեր ընկերներուն վրայ, անանկ որ՝ ուրիշներուն ըրածնիս իրեն ըրածի պէս կընդունի. Արդէնքս արբիքս քոսմ եղբարցս այսոյիէ խոբընանց, ինչ արբիքս: Ասանկ ըլլալէն ետքը՝ ո՞վ է այն հաւատացեալն որ հիւանդի մը այցելութիւն չընէ, ստոյգ զխնայալով որ Քրիստոսի պիտոր ընէ աս այցելութիւնը. ո՞վ է որ իր կարողութեանը համեմատ ողորմութիւն չխայ աղբատին, ստոյգ զխնայալով՝ որ Քրիստոսի կուտայ այն ողորմութիւնը. ո՞վ է որ ուրիշէն անիրաւութիւն մը ընդունած ասանք՝ մտածելով որ իր անյիշաջարութիւնը Քրիստոս իրեն ըրած պիտոր սեպէ, սիրաը չեղարժի ու չի՞նայ մէկէն իր ամեն կիրքը. ո՞վ է որ համարձակի ան ասանք բերնէն նախատական խօսք մը հանելու, ստոյգ զխնայալով՝ որ Քրիստոս իրեն ըրած պիտոր սեպէ աս նախատինքը: Ի՞նչ

աստուածային գութ. զխնայալով որ մարդկային բնութեան դժար կուգայ անիրաւութեան համբերելը, աս կերպով զիւրացուց:

### Մ Ա Ս Ն Բ .

Անոր համար հին հաւատացելոց մէջ, չէ թէ միայն անձանօթ էր իրարու թշնամութիւն ընելը՝ այլ անանկ եղբայրսիրութիւն արթած էր մէջերնին, որ մէկ սիրա մէկ հոգի էին, ամեն սենեցածնին հասարակաց էր. մէկ մեծ ընտանեաց մը պէս՝ իրարու իբրև եղբայր ու բոյր՝ անանկ կը նայէին, անհաւատներուն համար ալ շարունակ աղօթք կընէին, ու ձեռընուն եկածին չափ կօղնէին իրենց, անանկ որ կապաշաններն ալ կը զարմանային իրենց վրայ: Աս ամեն բան իրենց աչքին զիւրին կերևար, վստն զի հաւատքնին կենդանի էր. քանի որ հաւատքը թուլցաւ, նոյն համեմատութեամբ եղբայրսիրութիւնն ալ քիչցաւ: Բայց Քրիստոսի շնորհքն զօրութիւնը չկուսկսիր հաւատացելոց վրայէն. դարձեալ կը անսնէք իր ճշմարիտ աշկերանները, չէ թէ միայն այն կրօնաւորներն ու կուսանքները՝ որ հիւանդաց ծառայութեան նուիրած են զիրենք, այն կրօնաւորներն որ գերիներ խաղսելու համար կեանքերնին վստնդի մէջ կը գնեն, այն կրօնաւորներն ու մայրապետներն որ անհաւատից երկիրներ՝ անոնց անդժաբար իրենց գուրս ձգած զաւկները կը ժողվէն կը սնուցանեն ու քրիստոնէաբար կը գաստիարակեն, այլ և աշխարհական արանց և կանանց ընկերութիւններ՝ որ նոյնպէս եղբայրսիրութեան գործքերու համար միացած են. անանձին ալ ողորմած ու եղբայրասէր մարդիկ՝

գործք ողորմութեան ընելու համար, ատեննին ալ ունեցածնին ալ չեն խնայեր, անօթիները կերակրելով, զգետա չունեցողները հագուեցընելով, հիւանդանոցները պարտելով, ու ասոնց նման բարեգործութեանց հետ ըլլալով: Ասոնց ամենն ալ Քրիստոսի պատուիրանքին շնորհն է, ու ասոնց յարգը ետքի դատաստանին օրը պիտոր ճանչցուի: Վասն զի ողորմութեան բարձր 'ի գլխին պարծի առ դասսարանսս:

**Մ Ա Ս Ն Գ.**

Ուրեմն Քրիստոս տերն մեր ինչպէս որ ինքը կը սիրէ զմեզ, կուզէ որ անանկ ալ մենք իրար սիրենք: ասովն է որ մենք իրեն հետ, ու իրմով աստուծոյ հետ ալ կը միանանք: Վասն զի ինչ սիրով որ Հայրն երկնաւոր կը սիրէ զՔրիստոս, նոյն սիրովն է որ Քրիստոս ալ զմեզ կը սիրէ: Որպէս սիրեաց զիս Հայր, եւ ես սիրեցի զիս: Ուրեմն նոյն սէրը աստուծոմէ Քրիստոսի անցնելով՝ Քրիստոսէ մեզի՝ ու մեզմէ իրարու, ամենքս կը միացընէ աստուծոյ հետ: Աս սէրն է, որ Պօղոս առաքեալին ըսածին պէս՝ բոլոր հաւատացելոց սիրտը կը տարածուի Հոգւոյն սրբոյ շնորբովը: Զի սէրն ասարածոյ սիրտալ է 'ի սիրոս մեր 'ի Յէուս Հոգւոյն սրբոյ: Ասկէց կիմացուի եղբայրսիրութեան ինչպէս հարկաւոր ըլլալը, վասն զի իրար սիրելով՝ զՔրիստոս կը սիրենք, ու զՔրիստոս սիրելով՝ զաստուած կը սիրենք: Ասկէց կիմացուի դարձեալ եղբայրսիրութեան ինչ գերադանց առաքինութիւն ըլլալը: Վասն զի եղբայրսիրութիւնը աստուածսիրութենէ տարբեր բան չէ, նոյն սէրն է՝ որով զաստուած կը սիրենք, աստուծոյ սիրոյն լըումն է, զմեզ ի-

բարու հետ մէկ ընելէն ետքը՝ Քրիստոսի՝ ու հետեւաբար աստուծոյ հետ մէկ կընէ, ու ասով կըլլանք երջանիկ յաւիտեան. աս է նոյն առաքելւոյն ըսածը՝ Բայց սէր յասիրտեան ից:

**Ա Ղ Օ Բ Գ**

Յիսուս փրկիչ իմ, որովհետեւ քեզի այսչափ սիրելի է եղբայրսիրութիւնը, ու ինձի այսչափ հարկաւոր, շնորք տուր ինձի որ սիրեմ ուրիշները՝ ինչպէս դու զմեզ սիրեցիր, շնորք տուր որ ինձի անիրաւութիւն ընօրներն ալ սիրեմ, ինչպէս դու խաչահանուացդ համար աղօթք ըրիր՝ որ երկնաւոր Հայրդ ներէ իրենց: Շնորհակալ եմ որ ուրիշներու ըրածս քեզի ըրածի պէս կընդունիս, ասկէց ետքը ձեռքէս եկածը ընեմ իրենց համար քու շնորբովդ:

Ամենողորմ տէր, ողորմեա ամենայն հաւատացելոց, իմոց և օտարաց, ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց. շնորհեա և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն որ առ իս յանցանաց, և դարձո զնոսա 'ի չարեացն՝ զոր ունին վասն իմ, զի ողորմութեան քու՛մ արժանի եղիցին և նոքա:

# ՄՏՍ.ԾՍ.ԿՍ.Ն ՀԷ.

Նորեկ եղբայրսիրուքնսն վրայ :

## ՄՍ.ՍՆ Ա.

Եղբայրսիրութիւնը աւետարանական խրատ միայն չէ, այլ պատուիրան. Քրիստոս տէրն մեր անանկ կը պահանջէ մեզմէ աս սէրն որ՝ մասնաւոր իր պատուիրանքը ըրաւ եղբայրսիրութիւնը. Այս է պարտէր իմ, զի սիրելիս զիս մեռնիս : Քրիստոսի սիրելի աշակերտն ալ Յոհաննէս աւետարանիչ, իրմէն հաստատուած Ստից եկեղեցիները այցելութիւն ըրած առեւնը՝ միշտ աս բանիս կը յորդորէր հաւատացեալները. Սիրելի զաւկըներս, իրար սիրեցէք : Այնչափ ստեպ կըսէր աս խօսքս որ՝ աշկերտները օր մը հարցուցին իրեն՝ որ ինչո՞ւ եղբայրսիրութեան վրայ միշտ կը խօսէր : Ինքն ալ պատասխանեց. Վասն զի աս է մեր փրկչին պատուիրանը. ու աս որ պահելու ըլլաք, ամեն պատուիրանք պահած կըլտք : Անոր համար պէտք է որ մենք ալ ամեն բանէն եւեւ ջանք ունենանք, որովհետև Քրիստոս տէրն մեր ասոր համար միայն իմ պատուիրանքս է ըսաւ. ու ասիկայ ըրաւ նշան իր աշկերտներուն. Յայտ ճանիցեն ամենեւեմն եմէ իմ

աշկերտս է, եմէ սիրեցէս զիս մեռնիս : Պահք, աղօթք, ճշնութիւն, ամենքն ալ աղէկ ու գովելի բաներ են. բայց անոնցմով չէ՝ որ կը ճանչցուի Քրիստոսի աշակերտը : Ասովը դատէ պիտոր Քրիստոս զվեղ վերջի գատաստանին օրը, ասովը մենք ալ հիմայ կը դատենք ուրիշները. ուրիշ ամեն նշան կրնայ սարակուսական ըլլալ, բայց ճշմարիտ եղբայրսիրութիւնը՝ առանց Քրիստոսի հոգւոյն չի կրնար ըլլալ :

Եղբայրսիրութեան մէջը ուրիշ ամեն առաքինութիւն կը փակուի. անոր համար Պօղոս առաքեալը կըսէ. Լրտօն օրինաց սէր է : Իսկ առանց եղբայրսիրութեան և ոչ աստուածսիրութիւն կրնայ ըլլալ, որն որ առջի ու ամենէն մեծ պատուիրանքն է. Այս է մեծն և առաջին պարտիրան : Վասն զի սիրել զաստուած ու զընկերն իրարմէ չէն կըրնար բաժնուիլ. մի և նոյն պատուիրանքն է, որ կը հրամայէ մեզի սիրել զաստուած՝ ընկերնիս սիրելով, ու սիրել ընկերնիս՝ զաստուած սիրելով : Բոլոր սուրբ գիրքին ու առաքեալներուն մեզի սորվեցուցածը աս է՝ որ եղբայրսիրութեամբ միայն կրնանք գործնական սէր ունենալ առ աստուած, առանց անոր մեր ունեցած սէրը վերացեալ աստուածսիրութիւն մը կըլլայ : Յովհաննէս առաքեալը յայտնի կըսէ. Եթէ ոչ ստից՝ եմէ սիրեմ զաստուած, և զեղբայր իմ աստից, սուր է. որ ոչ սիրել զեղբայր իմ՝ զոր սէսանէ, զաստուած՝ սուր ոչն է քեզի սիրեմը : Իստից սիրելէ :

ՄԱՍՆ Բ.

Կատարեալ էղբայրսիրութիւն որ չունենանք, աստուծոյ շնորբէն զուրկ ենք, հոգինիս մեռած է. Ո՛ր ոչ սէրէ ղեւբայր իւր, անդէն 'ի մահուն խոյ: Կը սորվեցընէ որ կուրուծեան մէջ ենք. Ո՛ր արեայ ղեւբայր իւր, 'ի խաաբի է եւ ընդ խաաբ շքէ: Կը սորվեցընէ որ տեսակ մը մարգասպանութիւն կը նենք. Ո՛ր արեայ ղեւբայր իւր, մարգասպան է: Աս խօսքերուն միտքը յայանի է. վասն զի ով որ եղբայրսիրութիւն չունի, մահացու մեղքի մէջ է, ու մահացու մեղքն է՝ որ մեր հոգին կը մեռցընէ: Անանկ ալ զիւրին է աս մեղքիս մէջը իյնալը, որ ատուութեան կամ վրէժինդրութեան խորհուրդ մը միայն՝ զիտուծեամբ ու կամաւ սրտին մէջ որ ունենայ մէկը, մահուչափ կը մեղանէ: Ով որ էղբայրը չիսիրեր, մութ տեղ կը քալէ: Բայ ինչո՞ւ աս մեղքը գործելով մութ տեղ կը քալէ, ու ուրիշ մեղքերով չիքալեր: Վասն զի աս մեղքիս մէջը հասարակօրէն մարգուս խղճմտանքը զիւրաւ մեկնութիւններ կը գանայ՝ զինքը արդարացնելու, ու խաւարի մէջ մնալու: Որչափ ատուութեան խորհուրդներ խօսքեր ու գործքեր առաքինութեան տեղ կանցնին, աստուծոյ փառացը նախանձ, շքմարտութեան սէր, ու հոգւոց փրկութեան ջանք կը սեպուին. անանկ որ մեղքը բարեգործութեան տեղ կը գործուի, ու գործօղը կը պարծի՝ խղճմտանք ընելու տեղ: Ով որ ղեղբայրը կ'ատէ, մարգասպան է. վասն զի սրտին մէջ կը մեռցընէ ղեղբայրը, ու պարտըկան կըլլայ՝ Քրիստոսի արեանը՝ որուն զինն է էղբայրը:

ՄԱՍՆ Գ.

Եղբայրսիրութեան առաքինութիւնը անուշաչտա եղ մըն է բարակ ու բեկանուտ շիշի մը մէջ դրած, ամեն տեղ, ամեն աստի կտորելը զիւրին: Կը տեսնանք որ բարեպաշտ մարդիկ ալ շատ անգամ կը պակսին աս առաքինութենէն. անոր համար ամեն կերպով զգոյշ պիտոր կենանք վտանգներէն: Առաքինութիւն մը չիկայ որ ասոր պէս ստէպ վտանգ ունենայ. քրիստոնէութեան հոգին ասոր վայրըլուծն համար՝ սասանան ամեն ջանքը կընէ աս հիմը խախտելու, մանաւանդ մեր անձնասիրութիւնն ալ իրեն օգնական դանաբով՝ որ ամեն սղտի բանի մէջ զիւրաւ կը գրգռուի իր պատիւը փնտրուելու: Ուստի թէ որ էղբայրսիրութեան մէջ տղէկ հաստատուած չըլլանք, աս յարձակմունքներուն գէմ չենք կրնար կենալ, ընդհակառակն առաքինութիւն մըն ալ չիկայ՝ որ այսչափ շահաւոր ըլլայ մեզի. առտուրնէ ինչուան իրիկուն առիթ կուենանք էղբայրսիրութիւն ընելու: Ամեն վիճակի մէջ իրարու օգնելու առիթ չիպակսիր. ուրիշ կերպ օգնելու առիթ ալ չըլլայ՝ ուրիշներուն պակտութեանցը համբերելու առիթը չիպակսիր, սրն որ ամենէն մեծ էղբայրսիրութեան գործքերուն մէկն է: Վասն զի մեզի գպզող գործքի կամ խօսքի մը համբերելով՝ թէ խօսողն և թէ ուրիշներու շնութեան առիթ կըլլանք, բարի օրինակ կուտանք. աս ալ չըլլայ, գէմ չիկենալովնս՝ զինքը չենք գրգռեր, նորէն պակտութեան մէջ ինտու՝ ըրածը կամ խօսածը պաշտպանելու համար: Վաճառական մը ամեն օրուան՝ ամեն աստի ընելու սղտի շահերը աւելի

կը նայի, քան զմեժ մեժ շահերն՝ որ տարին մէյմը կը յաջողի չիյաջողիր. ասանկ ալ մեծամեծ առաքինութիւններ վաստակելու առիթ քեզ կը յաջողի, ամեն օրուան առիթները չեփախցընենր՝ մեժ գանձ կը զիշենք:

Ա. Գ. Օ Թ. Գ

Յիսուս փրկիչ իմ, շնորք տուր ինձի որ եղբայր սիրութեան դէմ չընեմ, ուրիշները չիվշտացընեմ, ինձի վիշտ տուօղներուն ալ սիրով համբերեմ: Դուն խաչին վըսյ զքեզ խաչ հանօղներուն համբերեցիր, ու իրենց համար աղօթք ալ ըրիր. աս օրինակը մեզի տալէ՞ք ետքը՝ ի՞նչ կը մնայ մեզի չի համբերելու: Աս անճառելի մարգասիրութեանդ համար ըլլայ, աուր ինձի աս առաքինութիւնը՝ որ քեզի այգչափ հաճոյ ու սիրելի է:

Որք անկախից եղաք նմանութեան մահու քո, որդի աստուծոյ, արժանաւորեա զմեզ կերպարանակից լինել քեզ, փառաց թագաւոր. քեզ երգեսցեն եկեղեցիք սրբոց զերգս հոգեւորս:

## ՄՏԱԾԱԿԱՆ ՀԸ.

Ողորմածորեան վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Աստուած ամենակատար է, կատարելութիւն մը չեկրնար ըլլալ. որն որ աստուած գերազանց կերպով չունենայ. ուստի Վրիստոս աերն մեր զմեզ յորդորելու համար որ ամենառաքինութիւն ունենանք, իր երկնաւոր Հայրը օրինակ կուտայ մեզի, կուզէ որ անոր նայինք, ու կըցածնուս չափ՝ մեր խեղճ կարողութեանը համեմատ անոր նմանելու ջանանք. Եւբրոս գոտ իսպաբեալ, որ պէս և Հայրն յեր երկնաւոր իսպաբեալ է: Աս ընդհանուր խօսքէն գուրս Վրիստոս ամենեւին մասնաւոր առաքինութեան մը համար իր երկնաւոր Հայրը օրինակ չիբերեր, գթութենէ ՚ի զատ. Եւբրոս գոտ գրեալ, որպէս և Հայրն յեր գրեալ է: Վասն զի առաքինութիւն մը չիկայ, որով մարդս կարենայ աւելի նման ըլլալ աստուծոյ, ինչպէս ողորմութիւնը: Աստուծոյ ամենառաքինութիւններն ալ ծայրադոյն աստիճանի կատարեալ են, իր ամենառաքինութիւններն ալ իր բնութեանը պէս անհուն են. բայց մասնաւոր կերպով ողորմած ը-

սուէրուն պատճառը՝ իր գթութենէն առաջ եկած գործքերուն խիստ մեծ ըլլալուն համար է. վասն զի ամենեկին ուրիշ առաքինութիւն մը իրեն ընել չհառուաւ՝ ինչ որ գթութիւնը ընել տուաւ: Իրաւ, Աստուած զմեզ իր սիրոյն՝ իր բարութեանը՝ իր առատութեանը համար ստեղծեց, ու շնորհաց դերքնական վիճակը բարձրացուց. բայց այն երջանիկ վիճակը կորսընցընելէս ետքը՝ ողորմութիւնը իրեն անանկ բան մը ընել տուաւ, որ զմեզ ստեղծելէն շատ վեր է. այսինքն իր միածին որդւոյն արեամբը զմեզ փրկեց. Ըստ Իբրոս ողորմութեանն ապրեցոյց զեւ: Անոր համար ողորմածութիւնը զմեզ աւելի կը նմանցընէ աստուծոյ, իր ամենէն եւել երեցած առաքինութեանը նմանցընելով որ աստուծոյ զաւկըններն ենք՝ Հօրերնուս պէս ողորմած ըլլալով: Աս միտքը Քրիստոսի խօսքին ձեռն ալ կիմացուի. կրնար ըսել. Եւէրոսոս գրեթէ, որպէս եւ Հայրն իմ գրեթէ է. բայց աւսանկ չըսաւ, որպէս եւ Հայրն չէր ըսաւ. որով ըսել կուզէ՝ ողորմած որ չըլլանք, խորթ զաւկընէր կըլլանք, Հօրերնուս չենք նմանիր:

ՄԱՍՆ Բ.

Բայց այս նմանութիւնը՝ որպէս եւ Հայրն չէր, հաւասարութիւն չիմացուիր. վասն զի աստուծոյ ողորմութեանը ո՞վ կրնայ հաւասարիլ, անհուն է իր գթութիւնը: Այլ կիմացուի որ ամեն ջանք պիտոր ընելը ողորմած ըլլալու, կրցածնուս չափ օրինակելու իր ողորմածութիւնը, ինչպէս երևելի նկարչի մը աշկերտ՝ իր վարպետին ամենաճարար նկարքը կրցածին չափ կօրինակէ:

Ողորմութիւնը առաքինութիւն մըն է՝ որ ուրիշ խեղճութեանը օգնել կուզէ. աս ուղիւը երկու բանէ կրնայ առաջ գալ, եղբայրսիրութենէ ու կարեկցութենէ: Եղբայրսիրութենէ առաջ եկածը՝ աւելի կատարեալ է քան զկարեկցութենէ առաջ եկածը. վասն զի եղբայրսիրութիւնը առաքինութիւն է, իսկ կարեկցութիւնը բնական զբացումն՝ որով երբեմն ակամայ ալ կը գթանք ուրիշի խեղճութեանը վրայ: Աստուծոյ ողորմութիւնը միշտ իր մարգարտութենէն առաջ կուգայ, իր սէրն է որ կը շարժէ զինքը մեր խեղճութեանը ողորմելու: Ով որ իրաւցընէ կը սիրէ ուրիշը, կարեկցութեան չըսպասեր որ անոր օգնէ. անոր կարօտութիւնը իմացածին պէս՝ կօզնէ, լսելը իրեն համար բաւական է, պէտք չէ որ անոր խեղճութիւնը անանայ՝ կարեկցելու համար: Աս է որ Քրիստոս անքն մեր մեղքէ կուզէ. Եւէրոսոս գրեթէ, որպէս եւ Հայրն չէր գրեթէ է. կուզէ որ եղբայրսիրութենէ շարժինք օգնելու ուրիշին. վասն զի իրաւ՝ կարեկցութիւնն ալ վերջապէս կը շարժէ զմեզ եղբայրսիրութիւն ընելու, բայց ան աւսենը առաքինութիւնը բնական զբացմանէ առաջ կուգայ: Իսկ երբոր ընդհակառակն բնական զբացումը առաքինութենէ առաջ գայ, շատ աւելի արգիւնաւոր կըլլայ. ան ասենն է որ մարդս չէ թէ միայն կուզէ ուրիշի խեղճութեանը օգնել, այլ անոր խեղճութիւնը իր վրայ կը զգայ. ինչպէս Պօղոս առաքելոյն եղբայրսիրութիւնն էր որ կըսէր. Ո՞հիւսնադանայ, եւ էս ու հիւսնադանամ. անոր համար խրատ կուտայ որ մենք ալ իրեն պէս ընենք. Զգեցարոսոս այսուհետեւ իբրև ընտելաւտ ապոստոս զգոմի զուրմութեան, ներել մեանց, շնորհել իբրեաց:

### Մ Ա Ս Ն Գ .

Քրիստոսի որպէս և Հայրն Յէր գլխած է ըսելը՝ ու ըրել խրատ մըն ալ է մեզիւ վասն զի հայր մը զաւկընէրուն օգնելու համար՝ կարօտուածիւն չունի որ զգայուն սիրտ ունենայ, փափուկ աղիք ունենայ. հայրենի սէրը բնութեան պակտուածիւնն ալ կը լեցընէ, ու պէտք եղած տեղը կարեկից ալ կը լըլայ զաւկընէրուն, անոնց խեղճութիւնը իրենը կը սեպէ: Թէ և իրենց կամօքը ինչպէս ըլլան խեղճութեան մէջ, ինչպէս անառակ որդին, դարձեալ կը գթայ վրանին, կը համբերէ, անմեղագիր կընէ, սիրուելու զաւկընէր ալ չըլլան՝ կը սիրէ զիրենք, զինքը կը մոռնայ՝ զանոնք հոգալու համար, ինչպէս Քրիստոս ըրաւ մեզի: Ասոր համար է Քրիստոսի ըսելը՝ որպէս և Հայրն Յէր գլխած է. որպէս զի ճշմարիտ գթութեան աս ամեն յատկութիւնները մէկ խօսքով յիշեցընէ մեզի. Որպէս գրաց հայր 'ի վերայ որդոց իւրոց, այնպէս գլխացի Կէր յերկնաշէն' իւր:

Ա. Գ. 0 Թ. Գ

Յիտուս փրկիչ իմ, կորհնեմ զքեզ՝ որ մեզի աւսանկ սրտաշարժ խրատներով մեր պարտքը սորվեցուցեր ես. բայց միտքս՝ որ աղէկ հասկընամ ըսածներդ, օգնէ ինձի՝ որ ի գործ դնեմ զանոնք. վասն զի քու խօսքդ է որ՝ աւանց քեզի բան մը չենք կրնար ընել. Առանց ի՞ ոչ ինչ կարէ՛ք առնել:

քու խօսքդ ալ է՝ որ խնդրողն կօղնես. Խնդրեցէ՛ք և Կարէ յեւ. շնորք տուր ինձի՝ որ քու խրատդ կատարեմ, ու ըլլամ գթած ու եղբայրասէր:

Փոխանակ սուրբ աւետաւոր զուարթնոյն՝ գրութութիւն քո մեզ հանգիպեացի յուսով գիտութեան, մտիթարեւ զհոգիս և լուսաւորել:



## ՄՏԱԾԱԿԱՆ ՀԹ.

Ոչրիչներուն պահտըրևանը կարևկից  
ըլլալոչ վրայ:

### ՄԱՍՆ Ա.

Ով որ ուրիշներուն պահտութիւնը կը գիտէ, ու կը մեղադրէ, հասարակօրէն ինքը անկէջ մեծ պահտութիւններ ունի. անոր համար է՝ որ կըսէ Քրիստոս աւերն մեր. Զք քեսանէս ու լալ յախն է ու բօր քո, և ՚ի քոսմ ախանդ դգերանդ ու քեսանէս: Բայց ենթադրեալ որ ինքը չունենայ պահտութիւն, եղբայրսիրութիւն է ուրիշները իրենց պահտութեանցը համար մեղադրել: Վոյր մը տեսնանք, խուլ մը՝ կաղ մը՝ հիւանդ մը, վրանին կը գծանք ու կը ցաւինք: Ինչո՞ւ համար է որ ուրիշներուն բնական պահտութիւնները մեր գուժը կը շարժեն, ու բարոյական պահտութիւններն ուն կարեկից չենք ըլլոր: Մի՞թէ բարոյական պահտութիւնը բնականէն քիչ խեղճութիւն է. ինչո՞ւ կոյր մը տեսնենք որ՝ առջևը փոս մը կայ, դէպ ՚ի փոսը կերթայ կոր, կը ցաւինք վրան, շուտ մը կը վազենք իրեն օգնելու՝ որ փոսին մէջը չկնայ, ու երբոր մէկը բարոյական պահտութեան մը՝ մեղքի մը

մէջ կը տեսնենք՝ որ դժօրիքին սոսկալի վնճը կերթայ կոր գահալիժէրու, իրեն վրայ ցաւելու տեղը՝ իրեն օգնելու տեղը՝ զինքը կը մեղադրենք: Իսկ եթէ ըրածը մեղի ալ գոչի, կատենք ալ զինքը. ասանկ չէին ըներ սուրբերը. կը ցաւէին իրենց հալածօղնեւուն վրայ, իրենց դէմ ընելուն համար չէին ասեր՝ չէին մեղադրեր զանոնք, անոնց համար աղօթք կընէին: Ամենէն առաջ ինքն Քրիստոս աւերն մեր, զինքը խաչ հանօղնեւուն սոսկալի մեղքը՝ ջանացաւ որչափ կարելի էր անմեղադիր ընել երկնաւոր Հօրը առջին, ու անոնց համար թողութիւն խնդրէց՝ ըսելով. Հայր Ըսդ Դոյս, ու ու գիտէն ուիւ գործէն:

### ՄԱՍՆ Բ.

Բայց կրնայ մէկը ըսել որ բնական պահտութիւնները ակամայ են, ունեցօղն ալ չուզէր՝ որ ունենայ. ինչպէս կոյրը կուզէ տեսնալ՝ չիկրնար, խուլը կուզէ լսել իր ձեռքը չէ. բայց բարոյական պահտութիւններուն մէջ կամաւորութիւն ըլլալով՝ մարդս անանկ պահտութիւն ունեցօղն վրայ չիկողճար, վասն զի ունեցօղին ձեռքն է չունենալը: Թէ որ ատանկ է, բարոյական պահտութիւն ունեցօղը բնական խեղճութեանը վրայ՝ աս վերջին աստիճանի խեղճութիւնն ալ ունի, որ իր շար կամայն ալ չիկրնար յաղթել. հիւանդ մը՝ որ իր հիւանդութիւնը չիճանչար, աւելի խղճալու արժանի չէ: Արք ըսածդ գիտովութիւն մըն է, աս բարոյական պահտութիւնները ունեցօղը կերպով մը գիտովցած է. ով է որ տեսնելով գիտով մը՝ որ զինքը ծովը կը ձգէ կոր, չիխլճար վրան, ձեռքէն

եկածին չափ չարդիւէր անոր ծով իննալը: Հրեա-  
ներն ալ կամաւորութեամբ կը հալածէին կոր  
զՔրիստոս, ու անոր համար պատիժնին պիտար  
ընդունէին, Երուսաղէմը պիտար կործանէր, ի-  
րենք ալ դէրի պիտար ըլլային, ու աշխարհս չորս  
դին ցրուէին պիտոր: Բայց Քրիստոս խղճաց վրա-  
նին, լացաւ իրենց վրայ, ողբաց Երուսաղէմի կոր-  
ծանութիւնը, ու այն սրտաշարժ ողբը ըրաւ վրան-  
Ասին Երուսաղէմ, քանի անգամ ուղեցի քո-  
զաւկընեբդ թեւերուս տակը առնել ինչպէս հաւը  
իւր ձագուկները կառնէ, ու դուն դէմ կեցոր: Ու-  
րեմն կամաւորութիւնը մարդուս պահաւթիւն-  
ներուն խեղճութիւնը չիկերցընէլն ՚ի զատ՝ ա-  
ւելի խղճալի կընէ, անանկ որ Քրիստոսի ամենա-  
սուրբ արտասուածքը արժանի եղաւ:

Մ Ա Ս Ն Գ.

Ուրիշները անմեղագիր ընել ըսելով չիհասկը-  
ցուի իրենց չարութիւնը արդարացընել: չարու-  
թիւնը միշտ գէշ բան է, պէտք է ատենք: վայ ա-  
նոր՝ որ գէշ բանին աղէկ է կըսէ. աստուծոյ խօսքն  
է որ Եսայի մարգարէին բերնովը ըսաւ. Վայ այ-  
նոյնի՝ ոյ՛ ստիցեն յւարն Բաբել: Բայց չարութիւնը ու-  
րիշ բան է, չարութիւն ընողը ուրիշ էրկու իրար-  
մէ տարբեր բաներ են. անոր համար պէտք է  
միշտ աս զանազանութիւնը ընենք. որչափ ալ  
գէշ բանը ատենք, Բայց գէշ բան ընողը պէտք չէ  
ատենք: Աս տարբերութիւնը աղէկ հասկընալու  
համար՝ մեր վրայ մտածենք. մենք ալ մեղաւոր  
մարդիկ ենք, թէ որ ըսենք որ անմեղ ենք՝ մենք  
զվեզ կը խաբենք, սուտ է ըսածնիս. Եթէ ստիցեն՛

Եթէ Դու ինչ ու ասիմք, զանիկն խաբենք, և ճամբա-  
րին ՚ի Դու ու գոյ: Աս մեղքերէն խաղտելու համար  
լինչ կընենք. կատենք զանոնք, վասն զի առանց  
ատելու՝ չենք կրնար զըջալ անոնց վրայ, խոստո-  
վանիլ ու թողութիւն առնուլ աստուծոյ: Բայց  
մեղքերնիս ատելու համար՝ հարկ է որ մենք զմեզ  
ալ ատենք. ընդհակառակն մենք զմեզ սիրենէս է՝  
որ ըրած մեղքերնիս կատենք. ուրեմն գործած  
մեղքերնիս կատենք, առանց ատելու զմեզ՝ որ ան  
մեղքերը գործեր ենք: Հիմայ աս զանազանու-  
թիւնն՝ որ ասանկ աղէկ մեր վրայ կընենք, ինչո՞ւ  
ուրիշներուն վրայ ալ չենք ըներ: Քրիստոսի խօս-  
քին գէմ չէ՞ ըրածնիս՝ որ կըսէ. Սիրեցէս զն-  
ից քո իբրև զանոնք քո. Ինչո՞ւ աս արտօնութիւնը  
մեզի միայն կը սեփականենք, ու կուզենք՝ որ ու-  
րիշներն ալ մեր վրայ ընեն աս զանազանութիւնը.  
Թէ որ իրենց գէմ գէշ խօսք մը ելլէ բերներնէս՝  
որչափ ալ ըսած խօսքերնիս ատելի ըլլայ, չենք  
ուզեր որ զմեզ ալ ատեն. կուզենք որ փիլիսոփայ  
ըլլան մեզի համար, ու զանազանեն մեր ըրածը  
մեղմէն. իսկ մենք իրենց համար չենք ուզեր աս  
փիլիսոփայութիւնը բանեցընել:

Ա Ղ Օ Թ Գ

Յիսուս փրկիչ իմ, ինչպէս որ ամեն աւաքինու-  
թեան մեզի օրինակ եղար, ու եղբայրսիրութեան  
ալ օրինակ տալու համար՝ ինչուան Հրեաներուն  
սոսկալի անօրէնութիւնը ջանացար թեթեւցընել  
ըսելով. Ու գիտէն զի ու գործէն. շնորք տուր ինձի  
որ ես ալ ուրիշները անմեղագիր ընեմ. իմ պակ-  
սութիւններս նայիմ, աչքիս մեջ գերան ունենա-  
լով՝ ուրիշներուն աչքին մէջէ եղած շեղը չխտե-  
լով:

նամ. որպէս զի ես ուրիշներուն պակտութեանը  
չինայելով, դուն ալ իմիններուս չինայիս, ու զիս  
սուրբ արքայութեանդ արժանի ընես:

Որ տիրականս առ ի քէն կարգեալ տընտես ընու-  
թեան մերոյ  
Իմաստութեամբ ըզպարտիս եթող քոյոց պարտա-  
պանաց,  
Թող եւ ըզմեր ըզյանցանս ողորմութեամբըդ քո  
Քրիստոս:

## ՄՏԱԾԱԿԱՆ Զ.

Դատարարեան վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Բան մը առանց ճանչնալու դատել՝ մշտ  
յանգրտութիւն է, ու քիչ անգամ կրնայ պատա-  
հիլ՝ որ չխնայի դատողը: Աս խօսքս թէ որ ամեն  
բանի մէջ իրաւ է, ևս առաւել ուրիշի միտքը գա-  
տելու մէջ՝ որուն ներսի գին չենք ճանչնար, չենք  
գիտեր իրեն զինքը արդարացնելու պատճառնե-  
րը: Աստուած կարգիլէ հին օրինաց մէջ՝ համրը  
չամբաստանել, վասն զի համրը լեզու չունի, չի-  
կրնար խօսիլ՝ որ զինքը արդարացնէ. ուրիշը գա-  
տելն ալ ասոր պէս է. խեղճը չիմանար մտքերնիս,  
չիկրնար զինքը արդարացնել. Զհամբ մի զուր-  
Մարդս գրտէն երեցածը միայն կրնայ դատել.  
անկէց ուրիշին միտքն ու սիրտը գատելը յան-  
դուգն գատողութիւն է. սակայն ասկէց ալ յա-  
ճախեալ բան չիկայ: Ասոր համար է որ կրտս  
Դաւիթ մարգարէն. Սոսի են որդիք մարգարէն ի իշտոս  
Եւրեանց: Ի՞նչ ծուռ կարծիքներ չեն ըներ մարգիկ  
Իրարու վրայ. վեր ի վերոյ տեսած կամ ըսած  
բաներնէն ի՞նչ ծուռ հետեանքներ չեն հաներ.

Ընչ կասկածներ ապացոյցի տեղ չեն դնէր: Ընօղէն գործքը գատելու տեղ, մենք գործքէն ընօղը կը գատենք. չէնք փորձեր որ շատ անգամ մարդիկ ինչ որ կերևնան՝ ան չեն, ու չեն երևար ինչ որ են: Ան որ իրենց ազգկուժիւնը դրոււանց չեն ցուցնէր. կան ալ որ ամեն կերպով կը ջանան իրենց գէշուժիւնը ծածկել, ու դրոււանց աղէկ երևնալ. կան որ աչքի զարնօղ պահուժիւններ ունին, բայց անանկ առաքելուժիւն ալ ունին, սրտերնին ալ անանկ բարի է, որ աւոյժ ներելի կըլլան իրենց սրահուժիւնները: Գնա գատէ ասանկները սոսկ դրսւանց տեսածովդ. շատերն որ մենք աղէկ մարդիկ կը սեպենք, աստուծոյ առջին գէշ են. շատերն ալ որ մենք գէշ մարդիկ կը սեպենք, աստուծոյ առջին աղէկ են. վասն զի մենք գրսինը կը տեսնենք, աստուած ներսինը. Մարդ հայի յերեսս, և ասորուստի հայի ՚ի սիրտս: Մի և նոյն գործքը ուղիղ ու ծուռ գիտաւորութեամբ կրնայ ըլլուիլ. ինչ գիտենք որ ընօղը որ գիտաւորութեամբ կրնէ կոր, ինչ իրաւունք ունինք ուղիղ մեկնելու տեղը՝ ծուռ մեկնել իր գործքը: Եստ պէտք է վախնանք՝ չըլլայ որ մեր կիրքերը ըլլան ծուռ մեկնելու սպառաւոր. վասն զի շատ անգամ անոնք են պատճառը յանգուզն գատողութեան, ու հասարակօրէն ամեն մարդ ինչ բանի յօժարութիւն կամ կիրք որ ունի, կը կարծէ որ ուրիշներն ալ նոյնը ունին. Յորոյ իրէ ոչ, ՚ի նոյն և դասս կարծէ:

### Մ Ա Ս Ն Բ .

Բանի բանի գատողութիւններ կըլլան, որ մարդուս կիրքը ընել կուտայ՝ միտքը պատրերով: Փարիսեցիները չուզեցին ճանչնալ զՔրիստոս. ինչու. վասն զի փառասէր ու արծաթասէր մարդիկ էին, չէին ուզեր որ Քրիստոսի փառաւորութեամբ՝ իրենց իշխանութեան ու շահուն յիսաս մը հասնի. աս եղաւ պատճառը իրենց ըրած ամեն ծուռ գատողութիւններուն: Բոլոր ժողովուրդը զինքը մարգարէ կը ճանչնար, իրենք մեզուօրի տեղ գրին զինքը. Մէ+ գիտէ՞ զի այն այն Ջրասոր է: Թէ որ Քրիստոս իրենց մտլութիւններուն աչք գոցած ըլլար, իրենց փառասիրութեանն ու շահասիրութեանը օգնելու որ ըլլար, առանց այնչափ հրաշքներուն ալ որ ըրաւ, խիտ աղէկ մարդ եղած կըլլար իրենց համար. բայց որովհետեւ կը գատապարտէր իրենց մտլութիւնները, ու չէր թողուր որ մոլորցնեն ժողովուրդը, մեղաւոր մարդ եղաւ. Մէ+ գիտէ՞ զի այն այն Ջրասոր է: Մարդիկ ուրիշը կը գատեն, չէ թէ իր արժանաւորութեանը նայելով՝ այլ իրենց շահուն. մէկէ մը շահ որ ունին, անոր պահուժիւնները չեն տեսնար. մէկն որ իրենց շահուն արգէլք է, անոր ամեն առաքելուժիւնները իրենց աչքին պահուժիւն կերևայ: Ուստի ուրիշներուն վրայ ուղիղ գատողութիւն ընելու համար, ինչպէս սուրբ Ոսկեբերանը կրտէ, պէտք է որ մեկը ազատ ըլլայ ամեն նախապաշարմունքներէ, ոչ յարում ունենայ մէկուն և ոչ ընդգիսութիւն, ոչ վախ մը ունենայ և ոչ շահ, ամեն կիրքերէ ազատ ըլլայ: Բայց ով կրնայ իր վրայ ապահով ըլլալ որ աս կատա-

րելու թեանը հասած ըլլայ. անոր համար Քրիստոս ատկէն մեր կը հրամայէ որ ամենեւին ուրիշները չճգատենք. բացարձակ կերպով կըսէ. Մի՛ շարքէս:

### ՄԱՍՆ Գ.

Աստուծոյ միայն է իրաւունքը զմարդիկ դատելու. աս իրաւունքը անանկ իրեն պահած է, որ նաև Քրիստոս փրկիչն մեր իբրև մարդ՝ Աստուծոյ ունի իր իշխանութիւնը դատելու զմեզ. Չամբասնդաբար Ես որդոյ իւրոյ: Հասա ինչպէս կրնանք մենք աս իշխանութիւնը յափշտակել, ու դատել ուրիշները՝ որ թերևս աստուծոյ առջև մեզմէ աղէկ են: Այն իշխանութիւնն որ աստուած Քրիստոսի տուած՝ ամենեւին անմեղ անարատ ու մեղքէ բոլորովին հեռու ըլլալուն համար, ինչպէս Պօղոս առաքեալը կըսէ՝ անմեղ անարատ դառնալ ի մեղաբաց, մենք մեղաւոր մարդիկ նոյն իշխանութիւնը կուզենք բանեցնել անոնց վրայ՝ որոնց հետ Քրիստոսի ատեանը պիտոր ելլենք դատուելու. Իսկ զի շարքս զէջքայր քո, քանզի ամենէսին իսկ եմք ատաղի արեւին Քրիստոսի: Պատճառն ալ կուտայ չկրնանալու ուրիշները դատել. վասն զի ո՞վ կրնայ ուրիշն ծառային դատաւոր ըլլալ, իր տիրօջ կիցնայ դատել. թէ որ յանցանք ունի՝ իր տիրօջն է յանցաւոր. ինչպէս որ իր տիրօջը կիցնայ վարձատրել իր ծառայութիւնը, ասանկ ալ անոր կիցնայ դատել իր յանցանքը. Իսկ ո՞վ էս՝ որ շարքս զայս ծառայ, իւրում արեւուն իսկ իմ անխնի: Անանկ որ՝ թէ և յանցաւոր ըլլայ եղբայրդ, զինքը դատուելիք՝ դուն ալ իրեն պէս յանցաւոր կըլլաս. Զի որով շարքս զէջկերն, զանին քո շարքսարեւն: Իսկ թէ որ յանցաւոր չէ, կրկին կըլլայ քու

յանցանքդ. մէյ՛մը աստուծոյ դատաստանը յափշտակելը. մէյ՛մըն ալ մոքիդ մէջ զինքը զըպարտելը: Անոր համար Քրիստոս ատկէն մեր մեղին հրամայէն ետքը որ զիրար չճգատենք, կըսէ՝ որպէս զի աստուած ալ զձեզ չճգատէ. Մի՛ շարքէս, և ի՛ շարքէս:

### Ա. Գ. Թ. Գ

Յիսուս փրկիչ իմ, ինձի շնորք տուր որ ուրիշները չճգատեմ: Դուն ես ամենուս դատաւորը, մի. թողուր որ քու իշխանութիւնդ յափշտակեմ: Ես ո՞վ եմ որ քու ծառայքը դատեմ. ասկէ ետքը ես զիս դատեմ, որպէս զի դուն զիս չճգատես. ես ինձի չիներեմ, որպէս զի դուն ինձի ներես: Դուն որ ամենուն դատաւորն ես՝ քու խաչահանուացդ յայանի մեղքը իրենց ազատութեանը տալով՝ թողութիւն ինդրեցիր իրենց՝ համար, Հար իող քոց և ի ու գիտէն և ինչ գործէն ըսելով. ու թէ թեւցընէ ուզեցիր իրենց ամենածանր անօրէնութիւնը. իսկ ես ուրիշներուն թէ թեւ պակասութիւնը կը ջանամ ծանրացընելու: Քու մարդատիրութիւնդ տպաւորէ սրտիս մէջը, որպէս զի եղբայրս երբ ըլլամ, քու բարեգթութեանդ հետեմ, քու հէզ ու խնարհ սրտեդ սորվիմ ուրիշները չճգատել:

Դատաւոր արդար՝ որ հաստատեցեր ՚ի մեզ դատող բնութեան զմիտս մեր, շնորհեա սմա դատել զանձինս իրաւամբք և արդարութեամբ, ինայեա ՚ի մեզ տէր ողորմութեամբ:

# ՄՏԱ.ԾԱ.ԿԱ.Ն ԶԱ.

Խոնարհուշրեան վրայ :

## Մ Ա Ս Ն Ա.

Աստուած Թէ զհրեշտակները և Թէ զմեզ ստեղծեց, որպէս զի իրեն ծառայելով՝ փառաց հասնինք. բայց փառաց հասնելու ճամբան դրաւ խոնարհութիւնը: Հրեշտակներուն մէկ մասը աս ճամբան չուզելով բռնել, կործանեցան. փառաց չիճասնելէն՝ ի զատ՝ յետին անարգանաց ու թշուառութեան մէջ ինկան: Ուղեցին նոյն ճամբով զմեզ ալ կործանել, ու հասան իրենց բողձանքին՝ մեր նախածնողքը խաբէլով: Արդ ինչ աստուածոյ սղորմելով մեր վրայ՝ ուղեց նորէն կանգնել, բայց ինչ ճամբով խոնարհեցաւ, մարդ եղաւ, ու իբրև մարդ՝ յետին խոնարհութիւն յանձն առաւ, ինչուան երկու աւազակներու մէջ՝ իբրև երրորդ աւազակ մը խաչուելով, որպէս զի զմեզ փրկէ ու փառաց հասցնէ: Անոր համար Հայրն երկնաւոր ալ զինքը անանկ բարձրացուց, որ նոյն ստամաններն որ իրեն աստուածութեանը չուզէցին խոնարհելի՝ իր մարդկութեանն ալ երկրպագութիւն ընեն: Խոնարհեցոյց զանին՝ լեաւ հնազանդ ճոհու լափ, և ճոհու

Խաւի. վասն որոյ և ասպարհոյց զնա աստուել բարձրացոյց, և շնորհեաց նմա անուն՝ որ ՚ի վեր է քան զամենայն անուն. զի յանուն Յիսուսի՝ Քրիստոսի՝ ամենայն ծոռնը իբնեացի, երկնաւորաց երկրաւորաց և անդարամեպակնաց:

Աս ասանկ ըլլալով, ինչպէս կրնայ մարդս առանց խոնարհութեան փրկուիլ ու փառաց հասնիլ: Թէ որ մեր նախածնողքը արգարութեան վիճակէն կործանեցան հպարտութեամբ, ինչպէս մենք մեղաց վիճակէն կրնանք ոտք ելլել առանց խոնարհութեան. Թէ որ Քրիստոսի հարկ եղաւ խոնարհիլ՝ մեր կործանմանէն զմեզ կանգնելու համար, հապա ինչպէս մենք առանց խոնարհութեան կրնանք ոտք ելլել: Անոր համար սուրբ գիրքը ամեն անկ վար կը զարնէ հպարտութիւնը, ինչուան թշամի հպարտներուն կը կոչէ զաստուած. Ասպարհոյց ամբարբասանից հախառակ էայ: Վասն զի աստուած ճամբարտութիւն ըլլալով, պէտք է որ թշամի ըլլայ ստուածեան. իսկ հպարտութիւնը ստուածիւն է բորբոսիլն. աստուած կուզէ որ մարդս ճանչնայ իր ոչինչ ըլլալը, իր ամեն ունեցածը Աստուծոյն ունենալը. իսկ մարդս երբոր չիճանչնար ու կը հպարտանայ, ճամբարտութեան դէմ՝ կրնէ, ուստի ստուածիւն է ըրածը: Մենք իսկ որ ողորմելի մարդիկ ենք, հպարտ մարդ մը որ անմանք՝ կը գարշինք իրմէն, ըսել է որ կը ճանչնանք հպարտութեան ստուածիւնը:

## Մ Ա Ս Ն Բ.

Աստուած մեք փրկութեան ճամբան խոնարհութիւնը դրած ըլլալով կուզէ որ սուրբ հաւատքին խորհուրդներուն մտքերնիս խոնարհեցընենք ու հաւատանք, որչափ ալ խելընիս չիճանիս

անոնց. որպէս զի այն խոնարհութիւնը մեզի սանդուխ ըլլայ՝ երկինք էլէլու: Չոր օրինակ՝ առ տուած մէկ է, անձը իրեք. Քրիստոս մէկ է, բայց թէ մարդ է և թէ աստուած. սուրբ հաղորդութիւնը ճշմարիտ մարմին և արիւն Քրիստոսի է, թէ և հացէն ու գինիէն զառ բան չենք տեսներ սուրբ սեղանին վրայ. ասոնք ու ասոնց նման ճշմարտութիւնները, որչափ ալ խելքերնէս վեր բաներ են, կը հաւատանք՝ Քրիստոսի ասանկ մեզի սորվեցրնելուն համար. Գեղե՛ճ գիրքս՝ Ի հնազանդու-  
 Բիւնն Քրիստոսի. ասիկայ առանց խոնարհութեան չըլլար: Ասոր համար է որ կըսէ Քրիստոս. Եթէ ուրախ լինէք և եւ ինչի՞ք իբրև սնունդիք, ու մասնիցէք յարգա-  
 յո-Բիւնն երկինջ: Ինչպէս աղայ մը իր հօրը ըսածին վրայ ճիտարակուսիր՝ կը հաւատայ, ասանկ ալ կու-  
 ղէ աստուած որ մենք իր ըսածին, ու սուրբ եկեղեցւոյ բերնովը մեզի սորվեցուցած բաներուն, միամիտ ըլլանք, խոնարհինք, հաւատանք: Հաւատքը աստուծոյ շնորհն է, իսկ շնորքը խոնարհներուն միայն կուտայ աստուած. Տայ շնորհս խոնարհաց:

ՄԱՍՆ Գ.

Բայց թէ որ աս ամեն պատճառներն ալ չըլլային՝ խոնարհութեան հարկաւորութիւնը մեզի ցուցընելու համար, բաւական էր Քրիստոսի օրինակը: Վասն զի աստուած ասանկ սահմաներ է՝ որ Քրիստոսի նմանելով միայն կարենանք փրկուել ինչպէս առաքեալը կըսէ. Գի զորս յառաջն ճանաւեր, յառաջագոյն հրաւիրեաց իբրպարանախից լինել պարկերի որդոյն իւրոյ: Իսկ խոնարհութիւնը Քրիստոսի յղութեան վայրկեանէն ինչուան երկինք համբառ-

նալը շարունակ ըրած առաքինութիւնն է. ու աս առաքինութիւնը իրեն ինչպէս սերելի ըլլալը անկէջ ալ յայտնի է՝ որ ամենին ուրիշ առաքինութեան մը համար չըսեր խոնարհութեան համար ըսածը. Ուստիս յիշէն, զի հեղեմ և խոնարհ սրբի-  
 Քրիստոսի բոլոր ջանքը զմեզ փրկութեան ճամբան գնելն էր. և որովհետև փրկութեան ճամբան խոնարհութիւնն է, ու առանց խոնարհութեան ուրիշ ամեն առաքինութիւն հեթանոս փիլիսոփաներուն առաքինութեանը պէս անօգուտ է, անոր համար մեկզկէն կը զգուշացընէ զմեզ հպարտանալէն՝ ըսելով. Որ Բարձրացողանէ պանն խոնարհեալի. մէկալ գինն ալ կը յորգորէ ի խոնարհութիւն՝ ըսելով. Ս- որ խոնարհեողանէ պանն Բարձրացի: Փարխեցին ու մաքսաւորին օրինակոյն ալ կը բացատրէ ըսածը. փարխեցին իր ամեն պարծենցած առաքինութիւններովը՝ պարով ծոմով՝ տասնորդներ աալով՝ չարդարացաւ աստուծոյ առջին. իսկ մաքսաւորն որ խոնարհութեանն աչքը երկինք չէր համարձակեր վերցընելու, կուրծքը կը ծեծէր, ուրիշ խօսք չէր ըսեր՝ բայց միայն Աստուած քաւեա զիս պեղաւորս, փարխեցին չընդունած շնորքը ընդունեցաւ. Ասե՛ճ յեւ, էջ սա սրբարարեալ ի պոտն իւր քան պնա:

Ա.Ղ.Ս Թ.Կ

Յիսուս փրկիչ իմ, օգնէ ինձի՝ որ զպեմ իմ հպարտութիւնս. ասիկայ է որ արդէք կըլլայ ինձի քու շնորքը ընդունելու: Տուր որ ճանչնամ իմ ոչինչ ըլլալս ու քու մեծութիւնդ, իմ սկարութիւնս ու քու ամենակարողութիւնդ. ինչ որ եմ, քեզմով եմ. ուրիշ բան չունիմ՝ ինձմէ՛ բայց

հարատու թիւն ու մեղք, ու ասոնցմով է՝ որ մինչև հիմայ գոցեր եմ սրտիս դուռը քեզի գէմ՝ որ խոնարհներուն սիրաը միայն կը բնակիս. քուկին խօսքդ է՝ Յս յո՞ հանգեայց, եմէ ու ՚ի հեռու ՚ի խոնարհ: Ասկէց ետքը իմ ամեն ջանքս ընեմ աս առաքնութիւնը ստանալու, քեզի այսչափ հաճոյ ըլլալուն համար: Սուրբ աստուածածին՝ որ քու խոնարհութեանդ համար արժանի եղար Քրիստոսի մայր ըլլալու, օգնէ ինձի՝ որ ես ալ խոնարհութեամբ արժանի ըլլամ Քրիստոսի ծառայ ըլլալու:

Բանին զմաքրեցելոյն ջրով զոսա լուանայր, զի զխոնարհութիւն ՚ի նոսա ասաւորեսցէ, Երրորդութեանն պղ օթեանն:

Աստուած մարդասէր՝ որ զմաքսաւորն արգարացուցեր, քաւեա զիս զմեղաւորս:

**ՄՏԱ.ԾԱ.ԿԱՆ ԶԲ.**

Որքը երանոչրևակց վրայ :

**ՄԱՍՆ Ա.**

Ո՞վ է աս վարդապետութիւնը ընօղը: Քրիստոս որդին աստուծոյ, աստուծոյ խնաստութիւնը, ինքն աստուած: Հին օրէնքը աստուած լեռան մը վրայէն ասուաւ, բայց կայծակներով փայլակներով ու որոտմունքներով: Քրիստոս ալ լեռան վրայէն կուտայ իր նոր օրէնքը, բայց հոս ձայն ձուն չիկայ, չորս զին հանդարտութիւն, իր անուշ ձայնը միայն կը լսուի: Հին աստուած հրեշտակներու ու մարգարէից բերնովը կը խօսէր. իսկ հոս ինքն է խօսողը. իր սուրբ բերնէն ելան աս երանութիւնները, աս պատգամները. ուստի յարգութեամբ ու մտադրութեամբ մտածենք իր ըսածները: Վասն զի ասոնք ուրիշ գիտութեանց պէս չեն՝ որոնք մարդուս հետաքրքրութիւնը միայն կը շարժեն, առանց սիրաբ գոհ ընելու. անոնք զմեզ երջանիկ չեն կրնար ընել. այլ Քրիստոսի սորվեցուցած գիտութիւնը ճշմարիտ երջանկութիւն է. ասկէց օգտակար լինջ կրնայ ըլլալ մեզի: Մարդկային խնաստութիւնը, բարբ աշխարհ



քին խնայողութեանը, սասանկ բան չխորվեցողին. աս միայն բաւական է մեր սուրբ կրօնքին ճշմարտութեանը պայտջոյց ըլլալու:

Առջի երանութիւնը կուտայ Քրիստոս աշխարհի հարստութեանը օրտերին չիկրայցնիւնընուն. Երանի աղապատ հոգաւ, զի նոցա է արայոն-իւնն երկնից: Կան աղքատներ՝ որ իրենց կամօքը աղքատութիւն յանձն առեր են, հարստութիւնն կամ գոնէ հարստանալու կարողութիւնն մէկ գի ձգելով, ու իրենց պէտք եղածը ուրիշ հրամանաւը գործածելով: Ասանկները իրաւցընէ հոգաւ աղքատ են, թէ որ յանձն առած աղքատութիւնն կատարեն, ու գործածած բաներնուն վրայ օրտերին չիկրայցնեն: Կան ալ որ ՚ի ծնէ աղքատ են, կամ գգբարտութեամբ աղքատներ են. ասոնք ալ հոգաւ աղքատի տեղ կընդունի աստուած, թէ որ չխաժգոջան իրենց կարտութեանը վրայ, թէ որ աստուծոյ կամայը հետ համակերպութեամբ՝ իրենց աղքատութիւնը աստուծոյ համար քաշեն: Բայց հարուստներն ալ կրնան ըլլալ հոգաւ աղքատ, թէ որ ունեցածներնուն վրայ սիրտերնին չիկրայցնեն, թէ որ իրենց հարստութեամբ չհիպարտանան, թէ որ ագահութեամբ ունեցածնին եւեցընելու համար իրենց հոգտերն չիպահօն, թէ որ սպարտաս են անարտունջ կորսընցընելու ունեցածնին՝ երբոր աստուած անանկ ուղէ, թէ որ հարստութիւնն ունայն բաներու չեն բանեցըներ, թէ որ աղքատաց կօգնեն ու աստուծոյ փառացը՝ կրօնքի պայծառութեանը կը գործածեն իրենց հարստութիւնը:

Աս իրեք տեսակ աղքատներուն է՝ որ Քրիստոս երանի կուտայ, ու արքայութիւնը իրենց է կըսէ: Ուրեմն ով որ աս կերպով աղքատ է, իրեն իրաւունքն է արքայութիւն երթալը, վասն զի աս

տուած է խոտայօղը: Ի՞նչ երջանիւթիւն, ի՞նչ աժան առուտուր. հարստութիւն մը՝ որով քանի մը տարիէն յաւիտենական հարստութիւն կը ստանայ մարդս, զաստուած իր ամեն փառօքը կը ժառանգէ:

Մ Ա Ս Ն Բ.

Երկրորդ երանին Քրիստոս տէրն մեր կուտայ սգաւորներուն. Երանի սգաւորաց, զի նոցա միմեանքն են: Սուղն ու լացը՝ որ մարդիկ թշուառութեան նշան կը սեպեն, Քրիստոս երջանիւթեան նշան կը սեպէ: Բայց տեսալ տեսալ սուգ կայ: Մէյմը բնական. ասիկայ ամենուն ալ կը պատշաճի, վասն զի աշխարհս թշուառութիւններով լեցուն է, ամենքը սուգի պատճառ ունին. ոմանք մեծութիւննին կորսընցընելուն համար արցունք կը թափեն, ոմանք առողջութիւննին, ոմանք բարեկամնին. ուրիշներն ալ կերպ կերպ վնաս քաշելուն համար: Ասոնց մէջն անոնք են երանելի, որոնք որ իրենց վնասը աստուծոյ ձեռքէն եկածի պէս համբերութեամբ կը քաշին՝ մեղքերնուն ապաշխարանք սեպելով, ու ինչուան սիրով ալ կը քաշեն՝ Քրիստոսի խաչակից ըլլալու համար: Ասանկները երկիկքը պիտոր մխիթարուին, ուր ամեննին վնաս մը ու լացի պատճառ մը չիկայ, ու աստուած վայելելով՝ կատարեալ երջանիւթիւն պիտոր ունենան: Երկրորդ վնաս ալ ներքին մխիթարութիւն կուտենան, գիտնալով որ իրենց քաշածը կը կշռէ կը չափէ աստուած, ու որ մը անգին հատուցումը պիտոր ընէ. բայց հոս ալ զիրենք անմխիթար չիթողուր, մէկգիւն որ վնաս կը խըղկէ՝ մէկալ գիւն իր բարերարութիւններն ալ պատկաս չընէր:

Ուրիշ կերպ հոգևոր սուգ մըն ալ կայ, որ քրիստոնէական կատարելութեան հեռուօրները կրնեն՝ հրաժարելով աշխրբիս ունեայնութիւններէն, ու ապաշխարող կեանք անցընելով: Ասանկէ ներսուն միտիծարանքը շատ աւելի կըլլայ թէ երկիրքը և թէ երկրիս վրայ: Աս տեսակ սգաւորներէն են անոնք ալ՝ որ աստուծոյ դէմ եղած մեղքերուն վրայ արցունք կը թափեն, ինչպէս Պաւլոս մարգարէն կըսէ՝ Վասի՛ւ ջուրց իշխն յաւայ իմոյ, դի ոչ պահեցին դարենս քո: Ուրիշ տեղ ալ կըսէ՝ Տրսմոսթիան խաւս դիս ՚ի մեղաւորաց, և ոյ՛ բողոքն դարենս քո: Ինքը աստուծոյ պատուիրանքները պահելէն ՚ի զատ, սիրտը կը մաշէր մեղաւորներուն վրայ՝ որ աստուծոյ պատուիրանքները չէին պահէր: Հայելի յանաբորտանս և մաշէի, դի դպարտութեանս քո ոչ պահեցին: Ասանկ սգաւորներէն են անոնք ալ, որ աշխրբիս թշուառութիւնները ու մեղքի վեռանքները տեսնելով՝ արցունք կը թափեն, որ մը առաջ կը փափաքին հոգիին ապահովելու, ինչպէս նոյն մարգարէն կողբայ. Վայ ինչ դի ընդերսը եղև պարտութեան իմ: Ինչպէս Պողոս առաքեալը կը բաղձար. Ո՞ր պայր ինչ էլանել ՚ի մարմնոյ ասպի, և մարմնէլ առ ասպարած: Գիպեմք՝ ելի որաք յամեմք ՚ի մարմնի ասպ, օպարանմք յասպարածոյ: Ասանկ սգաւորներէն են, որ Քրիստոսի չորհարանքները մտածելով՝ արցունք կը թափեն, Քրիստոսի սէրը մտածելով՝ սուրբ հաղորդութիւնը ընդունելու ատեն փոշկին: Ասանկներուն միտիծարանքը ամենէն եւեւ պիտոր ըլլայ երկիրքը, երբօր զինքը ժառանգեն, որ է ասպարած ամենայն միտիարութեանց: Ար միտարուին արցունք թափած ատեննին ալ, Հոգւոյն սրբոյ շնորքին քաղցրութիւնը զգալով, կը միտարուին մահուան ատեննին ալ՝ իրենց երկիրքը ունենալու միտիծարանքին ճաշակը առնելով: Թէ որ աս սուգին՝ աս արցունքին յարգը

ճանչնայինք, ամեն աշխարհային ուրախութիւն ու զբօսանք սրտերնէս մէկդի կրնէինք, ու օրջափ առեն որ գտնէինք մեր հարկաւոր զբաղմունքներէն գուրս՝ ամենն ալ աս լոցովը կանցընէինք, աս կըլլար մեր հանգիստն ու զբօսանքը:

### ՄԱՍՆ Գ.

Երրորդ երանին Քրիստոս սերն մեր կուտայ հեղեղուն. Երանի հեղոյ, դի նոպ ծառանգեցէն ղերէր: Իայց ինչ բանի վրայ կը կայանայ հեղութիւնը. քրիստոնէական հեղութիւնը էղբայրսիրութեան ու խնարհութեան վրայ հաստատուած է, չէ թէ քաղաքավարութեան կամ շահու կամ ուրիշներուն հաճոյանալու. վասն զի սրտանց պիտոր ըլլայ, չէ թէ երեսանց: Եղբայրսիրութեան ու խնարհութեան համար հեղ եղօղը՝ թէ պղտի թէ մեծ դիսուրածներու մէջ չիգրգուեր, չիգառնանար, միշտ անուշութեամբ կը վարուի. զէմքը, շարժուածքը, ձայնը, խօսքը, ամեն բան անուշ ու հանգարա կըլլայ. մեծին, հաւասարին, պղտիկին, ամեն աստիճանի մարդկանց հետ, նոյն քաղցրութիւնը կը բանեցընէ. վասն զի ամենքն ալ իրաւունք ունին որ անանկ վարուինք հետերնին, ինչպէս որ մենք կուզենք որ ուրիշները վարուին հետերնիս: Իրաւ՝ դժար է մեզի դէմ եղօղներուն հետ հեղութեամբ վարուիլ. բայց առանց դժուարութեան առաքիմութիւն չըլլար: Իրաւ՝ ոմանց բնութիւնը կրակոտ է. բայց թէ որ աստիկայ զիրենք արգարացընէր, ան ատենը Քրիստոսի այն խրատները միայն պիտոր պահէինք՝ որոնք որ մեր բնութեան յարմար են: Քրիստոսի ուղածը

ան է՝ որ մեր բնութեանը յաղթենք, կիրքերն իս  
բանենք, չար ունակութիւնն իս փոխենք. ով որ  
աս քանքը՝ աս բանութիւնը չենք իր բնութեանը  
դէմ, Քրիստոսի աշակերտ չէ. Արքայութեան երկնից  
Բանաբարի, և Բանաստեղծութեան զօրքը չենք  
լանք աս առաքելութեանը, որն որ Քրիստոս ա-  
մենէն մեծ առաքելութեանց կարգը դրաւ, ու  
ինքը զինքը օրինակ տուաւ՝ ըսելով. Ուստի ոչ յի-  
շէն զի հեղ եմ և խնայեմ սրբիս: Հեղութեան դէմ  
եղած մեղքը թեթեւ կը սեպուի, բայց անանկ չէ-  
Քրիստոսի գլխաւոր պատուիրանքն զէմ է.  
Յայտ ծանրէն ամենէն և երբ իմ աշակերտ է, և երբ սի-  
րեցէ՛ք զիմանս: Ուրիշ սիրտը կծու խօսքով կամ  
կերպով վիրաւորելը՝ ուղղակի աս պատուիրան-  
քն զէմ է:

Հեղբուն երանի ապուռն պատճառն ալ կըսէ  
Քրիստոս. Զի նոյն ծառանգեցէն զեւրդ: Ըսել կու-  
ղէ որ չէ թէ միայն երկինքը իրենց հեղութեամբը  
կը ժառանգեն, այլ և երկիրս. վասն զի հեղը  
ամենուն սրտին վրայ կը տիրէ, հեղութիւնը ա-  
մենուն սիրելի կընէ զմարդ: Ի՞նչ յաղթութիւն-  
ներ ըրած է հեղութիւնը, որ ուրիշ կերպով ան-  
կարելի էր. քրիստոնէից հեղութիւնը ինչուան  
հեթանոսաց դարձին ալ մեծ պատճառներուն  
մէկը եղաւ:

Ս. Գ. Օ Թ. Ք

Յիսուս փրկիչ իմ, ինձի շնորք տուր որ քեզի  
պէս հեղ ու խոնարհ ըլլամ. դուրս ըրէ սրտէս ա-  
մեն կիրք ու դառնութիւն, տուր ինձի անանկ  
սիրտ մը՝ որ փախչիմ հակառակութիւն ու վէճ  
ընեմն, անանկ սիրտ մը՝ որ ամեն ինձի նեղու-

թիւն տուողներուն համբերեմ, որպէս զի քու  
տուած երանութեանդ արժանի ըլլամ:

Կենդանարար քո յարութեամբդ, անմահ թա-  
գաւոր, կենդանաց զմեռալքս մեղքը՝ կենդա-  
նական դործովք բարեաց ըստ լուսաւոր. քոց սա-  
տուիրանաց. վասն որոյ գթա ՚ի մեզ, մարդասէր  
փրկիչ:

# ՄՏԱԾԱԿԱՆ ԶԳ.

Նորիկ ուրբ կրանարևուց վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Չորրորդ երանին կուտայ Քրիստոս կատարելութեան ետևէ եղօղներուն. Երանի որ բազմաբան ծարաւի էջէն արտարո-նեան, զի նոքա յագեցին: Արգարուածիւնը սուրբ գրքին մէջ կը նշանակէ ամեն առաքինութիւն մէկտեղ ունենալը, բարեպաշտութեան մէջ կատարեալ ըլլալը. ինչպէս Յօբայ համար կըսէ՝ Այ՛ց արբար. ինչպէս Չաբարիայի ու Եղևաբեթի համար կըսէ՝ Երկոյնի արտարէիէ: Որն որ մենք կրտննք սրբութիւն կամ քրիստոնէական կատարելութիւն, որուն մէջը միշտ կրնայ մարդ աւելի առաջ երթալ: Ուրեմն Քրիստոսի խօսքը աս է. Ինչպէս անօթի մարդ մը ուրիշ բան չիմտածեր՝ բայց կերակուր, ինչպէս ծարուած մարդ մը ուրիշ բանի չիբազար՝ բայց ջուրի, ով որ աս կերպով կը բազայ քրիստոնէական արգարու-թեան՝ երանելի է: Ասոր ետևէն պիտոր ըլլանք միշտ, ուրիշ ամեն բան՝ երկրորդական պիտոր սեպէնք. աս պիտոր ըլլայ մեր սրտին բազմանքը, ասիկայ պէտք է մարէ սրտերնուս մէջ ուրիշ ա.

մեն բազմանք, որ կատարելութեան գէժ է: Ասոր համար պէտք է պատրաստ ըլլանք առիթ մը չիփակցնելու, որպէս զի քայլ մը ըլլայ՝ առաջ երթանք աստուծոյ շնորքին մէջ. ասիկայ պէտք է ամեն խօսքերնուս՝ ամեն գործքերնուս մէջ մեր կանոնը ըլլայ: Ի՞նչ ջըներ անօթի ու ծարու մարդը կերակուր ու ըմպելի գանալու. ասանկ պիտոր ըլլայ մեր բազմանքն ալ կատարելութեան մէջ առաջ երթալու: Մեծ մեծ գործքեր չիպահանջեր մեզմէ աստուած, այլ մեր պարտքերը սերունդ կատարել, ու ամեն բանի մէջ աստուծոյ կամքը ընելու բազմալ. ու թէ որ բանի մը մէջ պահսինք ալ չիվճատիլ չիթուշալ, այլ խոնարհիլ ու աւելի զգուշանալ:

Աս բազմանքը ունեցողներուն կը խոստանայ Քրիստոս՝ իրենց բազմանացը լէցուիլը. ով որ հարստութեան կամ մարմնաւոր բաներու կը բազմայ, շատ անգամ չիհասնիր բազմանքին. թէ որ հասնի ալ, բազմանքը չիլէցուիր, միշտ աւելի կը գրգուռի: Իսկ կատարելութեան բազմանքը մարդուս սիրաը կը հանգչեցնէ. վասն զի ուղելովը միայն սիրել զաստուած ու աստուծոյ հետ միանալ, աստուծոյ սէրը կուեննայ ու կը միանայ աստուծոյ հետ. նոյն իսկ բազմալովը՝ բազմացածը ունի: Ասկէց զուրս բան մը չիկայ՝ որ մարդուս սիրաը կարենայ կշաացնել. աս քաղցն ու ծարաւն է, որ սուրբ խորհուրդները՝ մանաւանդ սուրբ հաղորդութիւնը ընդունելով՝ կը յագենայ. աս քաղցն ու ծարաւն է, որ սուրբ աւետարանը ու հօգևոր գրքեր կարգալով՝ անոնց մէջ իր կերակուրն ու ըմպելիքը կը գանայ. աս քաղցն ու ծարաւն է, որ ամեն բանի մէջ աստուծոյ կամացը համակերպելով՝ կըսէ Քրիստոսի հետ. Խ Քրաւն ուր այն է, զի արբից զեման ասպուծոյ: Անպառելի երանութիւն մըն է Քրիստոսի խոստացածը, որ.

չափ աւելի բաղձանք անոր՝ այնչափ աւելի երա-  
նելի կըլանք:

### ՄԱՍՆ Բ.

Հինգերորդ երանին կուտայ Քրիստոս ողոր-  
մածներուն. Երանի ողորմածաց, զի նոսա ողորմութիւն  
գոյնէ: Կերպ կերպ է ողորմածութիւնը. նախ՝  
ուրիշ մարմնաւոր պիտայքը լէցընել, ինչպէս  
անօթին կերպիւր տալ, մերկը հագուեցընել,  
բանտարկելոց այցելութիւն ընել, հիւանդաց ծա-  
ռայել, պանդուխտները ընդունիլ, գերկները ա-  
ղատել, մեռելները թաղել, ու ասոնց նման ողոր-  
մութեան գործքեր: Ամեն մարդ աս ամեն գործ-  
քերը ընելու կարողութիւն չունի, բայց հերիք է  
կրցածը ընէ, առիթ չիկորսընցընէ, երբ ուր ու  
ինչպէս որ կուզէ ուրիշները իրեն ընեն՝ ինքն ալ  
ուրիշներուն ընէ:

Ուրիշ կերպ ողորմածութիւն մըն ալ կայ, ու-  
րիշ հոգևոր պիտայքը հոգալ. ինչպէս ագէտներ  
ունի իրենց պարտքը սորվեցընել, վշտացեալները  
մխիթարել, աղօթք ընել վասն կենդանեաց և մե-  
ռելոց, ու ասոնց նման եղբայրսիրութեան գործ-  
քեր: Իսկ թէ որ ուրիշներուն իրենց պարտքը  
սորվեցնելու տեղ՝ չար օրինակ տանք իրենց, վըշ-  
տացեալները մխիթարելու տեղ՝ մենք զիրենք վըշ-  
տացնենք, ուրիշներուն համար աղօթք ընելու  
տեղը՝ մեզի համար ալ չընենք, վերջապէս ուրիշ-  
ներուն ողորմելու տեղը՝ մեզի ալ չողորմինք, ե-  
րանութեան տեղ՝ թշուառութեան կը հանգի-  
պինք, Քրիստոսի բերնէն Սիայ՝ օրհնեալ լսելու  
տեղը՝ Երեւոյ՝ յինչն անիծեալ կը լսենք: Վասն զի  
եաքի գատաստանին օրը՝ Քրիստոս կարծես որ

ուրիշ ամեն մեղքերը մոռնալով՝ ասոր վրայ միայն  
պիտայքը քննէ զմեզ. թէ որ ուրիշն ողորմէր էնք,  
Սիայ՝ օրհնեալք պիտայք լսենք, վասն զի Բաբելոն  
գլխաւոր պարծի ողորմութիւն աս դատաստանաւ. իսկ թէ  
որ չենք ողորմէր, վայ մեզի, Երեւոյ՝ յինչն պիտայք  
լսենք:

Ուրիշ մեծ ողորմութեան գործք մըն ալ կայ,  
որ ամեն օր՝ ամեն ատեն՝ ամենքս ալ կրնանք ընել,  
ու չենք մտածէր: Աստուծոյ առջև ամենէն մեծ  
գործք ողորմութեան է՝ ուրիշին պակասութեանը  
ներքէլ ու համբերել. թողունք ծանր անիրաւու-  
թիւնները, շատ անգամ թէթև վըշտ մը որ ընդ-  
ունինք ուրիշներէն՝ չենք ներքեր իրենց, կարեկից  
չենք ըլլար իրենց բնական պակասութեանը, չենք  
մոռնար ըրածնին, կը մեծցընենք ըրածնին մտքով  
ու խօսքով: Հասկա ինչու կուզենք՝ որ ուրիշները  
մեր պակասութիւններուն ներքին, անմեղազիր ը-  
նեն զմեզ: Թէ որ աստուած ալ մեր պակասու-  
թիւններուն նոյն աչքով նայեր, չինքերք մեր մեղ-  
քերուն, ինչ կըլլար մեր վիճակը. ուստի զմեզ  
ստիպելու համար որ ուրիշներուն ներքեք, աս  
արդար պայմանը կը պահանջէ՝ որպէս զի ինքն ալ  
մեզի ներէ. Զի էլիկ Բողոքոսի մարգինս ղյանդանս նո-  
ցա, Բողոքն ե յեւ հարն յեր Երիւստոց ղյանդանս յեր:  
Մնոր համար ալ Հայր Թերն մէջը սորվեցուց որ ը-  
սենք. Թող մեզ պարտիս մեր, որպէս ե մեք Բողոքս մե-  
րոյ պարտապանաց: Ինչ քաղցր, ինչ սպասով պայ-  
ման. ներքեք ուրեմն ուրիշներուն, ողորմինք ու-  
րիշներուն, որ աստուած ալ մեզի ներէ ու ողորմի:

### Մ Ա Ս Ն Գ.

Վեցերորդ երանին կուտայ Գրիստոս մարուր  
 ու անկեղծ սիրտ ունեցողներուն. Երանի որ սուրբ  
 էն սրբիւթ, զի նոքա դասաբոսած քեւոյնէ: Ի՞նչ է սրտի  
 մաքրութիւնը, ու ի՞նչ բանի վրայ հաստատուած  
 է սուրբ սիրտ ունենալը: Մաքրութեան առջի  
 աստիճանն է մահուչափ մեղքէն հեռու կենալը,  
 ու ներելի մեղքերու յարում չունենալը, անանկ  
 որ աստուծոյ սրբարար շնորհք մարդու սրտին  
 մէջը բնակի: Երկրորդ աստիճանը՝ դէշ ունակու-  
 թիւններու տեղ բարի ունակութիւններ ունե-  
 նալը, որով մարդս կըսուի առաքինի: Իսկ երրորդ  
 աստիճանը՝ արարածներու յարում չունենալը,  
 ու աստուծոյ հետ միացած ըլլալը. ան ատենն է  
 որ մարդու սիրտը սուրբ ու աստուծոյ հետ կա-  
 պուած կըլլայ, ամեն կիրքերն ալ ըստ կամայն  
 աստուծոյ կըլլան, ուրախութիւնն ալ՝ արամու-  
 թիւնն ալ, բաղձանքն ալ՝ երկիրն ալ, սէրն ալ՝  
 խորշումն ալ, վերջապէս ան ատենը մարդս ուրիշ  
 բան չեմնտուեր՝ բայց աստուծոյ կամքը, որ է  
 սուրբ սիրտ ունենալ: Վիճակ չիկայ որուն մէջ  
 ասանկ սուրբեր եղած չըլլան. իրաւ՝ աս երրորդ  
 աստիճանը դժուարութիւններ ունի, ու հոն  
 հասնելու համար շատ ջանք ու աշխատանք պէտք  
 է, բայց չիկայ բարիք մը՝ որ անաշխատ վաստը-  
 կուի. դժուարութիւնները կը գերբինան՝ քանի  
 որ մարդս առաջ կերթայ աստուծոյ ճամբուն  
 մէջ. ու կիրքերնիս յազմելու ուրախութիւնը՝  
 աշխատանքնիս մունալ կուտայ. ան որ ՚ի սկզբ-  
 բան անկարելի կերենար՝ կըլլայ կարելի: Ինչ աշ-  
 խատանք որ ըսես՝ քաւարանին տանջանքին հետ

չեղադատուիր. ուրեմն մտածելը միայն որ աս  
 կերպով քաւարանէն կը խալըսինք՝ պէտք է որ  
 մեզի սիրտ տայ ամեն աշխատանք աչւընիս աւնե-  
 լու: Աս վարձքն է՝ որ սուրբ սիրտ ունեցողներուն  
 կը խոտանայ Գրիստոս. Զինոքս դասաբոսած քեւոյնէ:  
 Այս ինքն աչւընին դոցածնուն պէս՝ պիտոր անու-  
 նան զաստուած, պիտոր վայելել սկսին անմիջա-  
 պէս երանական աստուածատեութիւնը՝ արգէն  
 իրենց սիրտը սուրբ ըլլալով, ու յուրտեան պի-  
 տոր նոյնը վայելէն: Աս ինչ մեծ հատուցում է՝  
 որ աստուած պիտոր ընէ անանկներուն. որ աշ-  
 խատանք չսփեր ասանկ հատուցումը. ով մաքրու-  
 թիւն սրտի, ինչ անպին բան էս եղեր, չէս արժեք՝  
 որ ամեն ջանք ընեմ, ամեն աշխատանք քեզի հա-  
 մար յանձն տանում:

Ասկէց ՚ի զատ սուրբ սիրտ ունեցողները աշխու-  
 քիս վրայ ալ՝ ամեն բանի մէջ զաստուած կը տես-  
 նեն. արարածոց գեղեցկութիւնն ալ տեսնեն, կը  
 մտածեն որ ինչպէս աստուած՝ որ ան գեղեցկու-  
 թիւնը անոնց տուեր է՝ գերազանց կերպով ինքը  
 պէտք է ունենայ: Զաստուած կը տեսնեն նաև այն  
 մտիթարութիւններովն ու գերբնական ուրախու-  
 թիւններով՝ որ ամեն մարմնաւոր ուրախութիւն-  
 ներէն վեր է, ու չիկայ բան մը՝ որ անոնց բազ-  
 դատուի: Զաստուած կը տեսնեն նաև հաւատ-  
 քով սուրբ խորհուրդները ընդունելու ատեն,  
 մանաւանդ սուրբ հայոցրութիւնը ընդունած ա-  
 տեննին: Զաստուած կը տեսնեն վերջապէս իրենց  
 մահուան ատենը յուսով ու սիրով իրենց հաւա-  
 տարմութիւնը վախճանական յարատեութեամբ  
 կնքելով, ու խաղաղութեամբ հոգնինն աստուծոյ  
 յանձնելով:

Ա. Ղ. Օ թ. Բ

Յիսուս փրկիչ իմ, կը ցաւ իմ որ սրախ սրբու-  
 թիւնը կորսընցուցեր եմ մեղքերովս. քայց դուն  
 մեղաւորներուն ալ շնորք տուիր՝ որ իրենց մեղքը  
 ապաշխարեն, ու նորէն սուրբ սիրտ ստանան.  
 քու չարչարանացդ ու խաչին վրայ մեռնելուդ  
 համար ըլլայ, սուր ինծի ալ աս շնորքը. Սէրդ  
 ուրք հասարակեալիս ասորոսած, և հոգի ուղիղ նորոգեա  
 ՚ի քոյի ինձ:

Սրբեա տէր զմեղուցեալ քոյ ծառայիցս զգա-  
 յարանս, և շնորհեա տեսանել զքեզ, և լսել ըզ-  
 ճայրական զձայնն՝ եթէ դա է որդի իմ սիրելի:

### ՄՏԱԾԱԿԱՆ ՁԴ.

Նորէն ոչրը կրանոչրեանց վրայ:

### ՄԱՍՆ Ա.

Եթե ներքոյ երանին կուտայ Քրիստոս խա-  
 զաղարար մարդկանց. Եւանջ խաղաղարաց, զի նա  
 քա որդի ասորոսածոյ կուտային: Խաղաղարար ըլլալու  
 համար՝ նախ պէտք է խաղաղասեր ըլլանք, ուրիշը  
 խռովելու պատճառ չհամար, զսպենք մեր կիր-  
 քերը, չափենք մեր խօսքերը, կանոնաւորենք մեր  
 գործքերը: որպէս զի չըլլայ որ ուրիշներուն կեր-  
 պով մը նեղուածիւն տանք, կամ եղբայրսիրու-  
 թեան գէմ բան մը ընենք: Սնկէց ետքը կրնանք  
 ուրիշներուն խաղաղարար ըլլալ, սիրով ու քաղ-  
 ցրուածեամբ ջանալով սիրտերնին առնել, իրարու  
 ճետ հաշտեցնել, ու թշնամութեան պատճառ  
 ներք մէջերնէն վերցնել: Մանաւանդ երբոր մէ-  
 կուն հակառակութիւնը մեզի հետ է, պէտք է  
 որ զոհեր ալ ընենք, մեր շահը մեր իրաւունքը  
 մեկդի դնենք, մեր պատուոյն վրէժխնդիր չըլլանք:  
 Ով որ աս զոհերը չուզեր ընել, խաղաղասեր չէ՝  
 թող թէ խաղաղարար. ոչ ծանր խօսքերու պէտք  
 է պատասխան տանք, ոչ մեզի գէմ լաւ բաներ.

նուս պէտք է հաւատնք, ոչ ուրիշի ըրած գէշ  
կերպին պէտք է նայինք, ոչ կրած նախատինք-  
ներնիս յիշել և ոչ ուրիշներուն անիրաւ պա-  
հանջմունքներուն ուղղակի գէժ կենալ: Աս կեր-  
պը բռնելնուս համար աշխարք զմեզ ապուշ ու  
անզգայ կը սեպէ, զեն չկտար, թող անանկ սեպէ.  
մենք Քրիստոսի սիրոյն համար սա սուրբ անզգա-  
յու թիւնը յանձն առնուենք. Մէք յեմարք վասն Քրիս-  
տոսի: Բայց սա անզգայութիւնը մեզի ինչ պատու  
որ կը բերէ, Քրիստոսի բերնէն լսենք. Զի նոքա որ-  
դիք ասպարհոյ իռլեսոյն:

Քրիստաւու է որ որդիք ասպարհոյ իռլեսոյն ըսելը՝  
սուրբ գրքին լեզուովը որդիք աստուծոյ են ըսել  
է. ինչպէս հրեշտակը սուրբ աստուածածնայ ը-  
սաւ Քրիստոսի համար. Որ ծնանելոցն է՝ ի սէն սուրբ  
է, և որդի ասպարհոյ իռլեսոյ: Ուրեմն խաղաղարար  
մարդը աստուծոյ որդի կը սեպուի ու է՝ Քրիս-  
տոսի նմանելով, որ զմեզ աստուծոյ հետ հաշտե-  
ցնելու համար ամեն նախատինք յանձն առաւ,  
ինքը զինքը զոհեց: Աս բանը գէշերն ալ կը շննչ-  
նան. հիմայ ալ չեճանչնան, որ մը պիտոր ճանչ-  
նան զըջով՝ բայց զըմուսնին ատենէ դուրս պի-  
տոր ըլլայ: Այս պիտոր սան իրենց ու ըսեն՝ մենք  
անմատուցեամբ զինքը կարհամարհէինք, հիմայ  
աստուծոյ որդուցը կարգը անցեր է. Մէք անսիրտ  
զլարս շորս մարտութիւն համարեաք. զիմար համարեցա-  
նք որդի ասպարհոյ: Ինչպէս աստանաները երկինքը  
խռովելով՝ գատապարտուեցան ի յաւիտեանական  
թշուառութիւն, ասանի ալ խաղաղարար մար-  
դիկ՝ թէ իրենց գէժ՝ եղովները հանգարտեցընե-  
լով, և թէ ուրիշները իրարու հետ հաշտեցընելով  
յաւիտեան երանելի պիտոր ըլլան. ու ինչպէս որ  
խռովարար մարդիկ աստանային որդիքը սեպուե-  
լով՝ անոր պատիժը պիտոր ժառանգեն յաւիտե-  
նական խռովութիւն գժոխքին մէջ, ասանի ալ

խաղաղարարները որդիք աստուծոյ սեպուելով՝  
Քրիստոսի ժառանգակից պիտոր ըլլան, յաւիտե-  
նական խաղաղութիւն ու երանութիւն վայելե-  
լով երկինքը:

### Մ Ա Ս Ն Բ .

Ութերորդ երանին կուտայ Քրիստոս անոնց,  
որոնք որ արգարութեան համար կը հալածուին.  
Երանի որտ հալածեալ ինչն վասն արգարութեան, զի նոյա  
է արգարութիւնն երկնից: Հիմայ գազարած են բռնա-  
ւորներն՝ որ հաւատաքի ու բարի վարքի համար կը  
հալածէին կը չարչարէին, մտարտրոս կընէին հա-  
ւատացեալները ու լաւ մարդիկները: Բայց ու-  
րիշ կերպ հալածողներ չեն պակսիր, որոնք առա-  
քինութիւնը ու առաքինի մարդիկները ծաղը ը-  
նելով ու անարգելով կը հալածեն. ասով կըլլայ  
որ շատերը ետ կը կենան առաքինութեան ճամ-  
բէն, կամայնէն քրիստոնէական պարտքերին ը-  
նելու, չեն ուղեր ջերմեանդ երեւնալ: Ասոնց հա-  
մար ալ է՝ որ կըսէ Քրիստոս. Զի որ ամեն համարեացի  
զիս և զբանս իմ, զես և որդի մարտոյ յամեն արասցե  
յորժամ գայցե իսոսօք իւրով և չօր և հրեշտակայ սրբոյ:  
Իսկ որոնք որ ուրիշներէն ծաղը ու անարգանք  
կրելու աչւընին անելով՝ ամօթ չեն սեպեր Քրիս-  
տոսի հետեւից, քրիստոնէական պարտքերնին  
ընելու, ջերմեանդ երեւնալ, անոնց համար է որ  
կըսէ Քրիստոս. Զի ամենայն որ խոստովանեցի յիս ա-  
ռաջի մարդիկն, և որդի մարտոյ խոստովանեցի զմանե  
ասաջի հրեշտակայ ասպարհոյ: Ուրեմն թէ որ բարի  
վարուց ու բարեպաշտութեան համար անար-  
գուիք ու հալածուինք, չհարամինք՝ այլ ուրա-  
խանանք, վասն զի սա անարգանքը՝ սա հալա-



ծանրը՝ մեզի կապահովէ արքայութիւնը, արքայութիւնը մերը կընէ. Չի նոցա է արքայութիւնն էր-  
նից:

### Մ Ա Ս Ն Գ.

Ուրիշ երանութիւնները Քրիստոս տէրն մեր կըսէ ու կանցնի, բայց աս ութերորդին վրայ կանկ առնելով՝ աւելի կը բացատրէ, ըսել է որ խիստ հարկաւոր կը սեպէ ասիկայ իր սուրբ եկեղեցւոյն. Երանի է յեւ յորժամ նախապիջէն զՅէշու և հալածեցնէ և ասիցեն զամենայն բան լար զՅէշու սոսք վասն ի՞նչ: Դիտելու բան է որ Քրիստոս տէրն մեր հալածանքի՝ տանջանքի ու մարտիրոսութեան կարգը կը գնէ նախատինք՝ բամբասանք՝ ու զրպարտութիւն կրելն ալ: Իրաւցընէ ծանր բան է. Յօբնա հասպտան որ այնչափ համբերող էր, բոլոր ունեցածը ու մեծութիւնը կորսընցընելուն համբերեց, բոլոր զաւկըները մեռնելուն՝ անորդի մնալուն համբերեց, մարմինը փտատելուն՝ մեջը որդեր վնասալուն համբերեց, բայց բարեկամներէն նախատուելուն՝ ու անոնց իր վրայ չար կարծիք ընելուն համար՝ սիրաբ էրած՝ չկիրցաւ լռել: Կաւիթ մարդարէն ալ որ այնչափ հեղ էր, իրաւ՝ Սեմէիին անէծքին համբերեց, բայց համբերութեանը հատուցումը Սատուծմէ խնդրելով ըսաւ. Թոյլ պոսք դժմ անիծանել, որպէս զի պէտք էր զմիշտ իմ, և հապոստե էնչ Բարի փոխանակ անիծիցդ դորա: Պօղոս առաքեալն ալ մարտիրոսներուն կարգը կը գնէ բամբասանքի համբերողները. Յիւլեոնէ գառաւորն զառաջինս՝ յորս Երեսուցեցայ, և Բաղամ լարարանաց համբերեցէ՛ք՝ նախապանաց և նեղութեանց: Անոր համար Քրիստոս ետեւէն կըսէ. Յնժացե՛ք և ուրախ լերոսք, զի վարչք յեր Բաղամ էն յերկինս: Ո՛հ ինչ մեծ հատու-

ցում, ինչ մեծ վարձք պիտոր ըլլայ ասանկներուն հատուցումը՝ որ Քրիստոս անանկ առաջ վարձահատոյցը՝ Բաղամ կըսէ. անոր համար ալ համբերեցէք ըսելու տեղը՝ ուրախացէք կըսէ՝ իմպատառաւ անարգանքը ու բամբասանք կրելնուդ համար: Ուրեմն թէ որ արքայութիւնը ապահովել կուզէիք, պէտք է անարգանաց ու բամբասանաց համբերեցէք, ասանք արքայութիւնը մերը կընեն. Չի նոցա է արքայութիւնն էրնից:

### Մ Ա Օ Թ Գ

Յիտուս փրկիչ իմ, շնորք սուր ինձի որ ՚ի դործ գնեմ աս խրատդ. կը հասկընամ որ քու թշնամիներուդ զիս բամբաստելն ու անարդեղ՝ ինձի մեծ փառք է. երանի՛ ինձի թէ որ քեզի համար առնարգուիմ, ինձի համար այնչափ չարչարանք ու անարգանք կրելուդ համար: Սուրբ առաքեալներդ, սուրբ մարտիրոսները, քու շնորքովդ արիւնիին ալ թափեցին քեզի համար. ես ալ քու շնորքովդ կը յուսամ որ քեզի համար անարգանաց ու բամբասանաց համբերեմ, որպէս զի անոնց վարձքին մասնակից ըլլամ:

Այս թիւք սոցա և բարեխօսութեամբ պարզեաւ մեղ Քրիստոս մասն և բաժին ընդ հրաւիրեալսն ՚ի կոչումն արքայութեան երկնից:

### ՄՏԱԾԱԿԱՆ ՁԵՒ

Քրիստոսի շարեզոտք հովուին մեր վրայ  
ունկեցած սէրը:

### ՄԱՍՆ Ա.

Քրիստոսի մեր վրայ ունեցած սէրը ցուցնելու համար բերած օրինակներուն մէկը՝ հովուի օրինակն է. զինքը հովիւ կրնէ, զմեզ իր ոչխարները: Ինչ օրտաշարժ օրինակ, Քրիստոսի ոչխարներն ենք, զմեզ չեթողուր՝ որ կորսուինք, բոլոր յոյսերնիս իր վրայ գնենք, ինչպէս գաւնուկը իր հովուը կը սիրէ՝ անանկ սիրենք զինքը:

Օրինակը առաջ կը տանի ու կըսէ. Հովուը իր ոչխարները իրենց անուհովը կը կանչէ. Զիւր ու խարսն կուէ յանասնէ: Ըսել է որ Քրիստոս տէրն մեր ամեն մէկերնիս զատ զատ կը ճանչնայ, ամեն մէկերնուս անուն գրած է, ու այն անունովը զմեզ կը կանչէ: Ոչխարները իրենց հովուին ձայնը կը լսեն, ինքը առջևնէն կերթայ՝ անոնք ետեւէն կուգան, վասն զի կը ճանչնան իր ձայնը. Ախարսն յայնի նորա լսեն, առաջի նոցա էրևայ, և ուխարսն ըսէն նորա էրևան, զի ճանաչելն զյայն նորա: Ասանկ ըրաւ Քրիստոս ալ մեզի, առջևնէս գնաց՝ միշտ իր

ձայնը սուրբ գրոց խօսքերովը լսել կուտայ մեզի, սրտերնուս բարի ազգարարութիւններ ալ ընելով, անանկ որ՝ կը ճանչնանք իր ձայնը ըլլալը: Եսայի մարգարէն աս բանն առաջուց տեսնալով՝ կրտէ Քրիստոսի համար որ հովիւի մը պէս իր ոչխարները խնամէ պիտոր, իր գաւնուկները թեւըուն տակը ժողովէ, ու գիրիը կրէ պիտոր զանոնք. Իբրև հովիւ մի հովուէսցէ զխաւինս իւր, և բաւխաւ իւրով ժողովուցէ զգաւինս, և ի ծոց իւր իրեսցէ ընտաս: Ուրիշ տեղ ալ ինքը Քրիստոս մեզի կիմացնէ թէ ինչ արամուտ թիւն է իրեն՝ ոչխարներէն մէկը կորսուցընելը, ու ինչ աշխատանք կորսուած ոչխարին ետեւէն կերթայ ու գանելու որ ըլլայ՝ ինչպէս ուսին վրայ առած տուն կը գառնայ, գրացիները՝ բարեկամները կը հրաւիրէ ուրախութիւն ընելու, կորսուած ոչխարը գանելուն համար: Ա՛հ, աս ինչ դուրս է Քրիստոսի մեր վրայ ունեցած գուրթը. ինչ ապերախտութիւն ըրած կըլլանք, թէ որ իրեն մտիկ չընենք ու չերթանք ետեւէն: Փանիներ եղան որ Քրիստոսի սիրոյն երախտագէտ ըլլալու համար՝ անապատները քաշուեցան, պաքով՝ ծոմով՝ ապաշխարանքներով՝ ճգնութիւններով՝ հալածմունք ու անարգարք կրելով՝ ամենախնայներով ու արիւննին ալ թափելով՝ մինչև Գողգոթա լեւը ետեւէն գնացին:

### ՄԱՍՆ Բ.

Իր ձայնը անանկ անուշ է, իր խօսքերը խղճմըտանքնուս առած լոյսին ու սրտերնուս աղնուական զգացմանց անանկ համաձայն, որ մէկէն կը ճանչցուի ճշմարիտ հովուին ձայնը ըլլալը: Բարեպաշտները կը ճանչնան, մտիկ կընեն, ու վստա

հուլիսի 1-ին Կերթան ան ձայնին. աշխարհիս՝ կերթերու՝ սատանային ձայնին ականջ չեն կատեր, անոնցմէ կը փախչին, վասն զի չեն ճանչնար անոնց ձայնը. Զօրաբի դէմ ու երեքօրէն, այլ խախտչեն ՚ի նմանէ, դի ու ճանաչելն ղայն օրարաց: Հաւատքի դէմ խօսք մը, սուրբ եկեղեցւոյ դէմ, եղբայրսիրութեան դէմ, համեստութեան դէմ խօսք մը կը խառնէ զերեւոյ, կիմանան որ օտարի ձայն է, իրենց հովուինը չէ: Զըլայ որ ասանկ ձայներու մտիկ ընենք, վասն զի ասով յայանի կըլայ՝ որ Քրիստոսի ոչխարներէն չենք. յայանի կըլայ՝ որ մուրբեալ ոչխարներէն ենք, զինքը թողեր ենք, անդգայ ենք մեր վրայ ունեցած սիրոյն:

**ՄԱՍՆ Գ.**

Աղէկ հովուքը իր կեանքը կը դնէ ոչխարներուն վրայ, ասանկ ըրաւ Քրիստոս ալ. Ես էմ հովիւն քաջ. հովիւն քաջ զանչն իւր դնէ ՚ի վերայ ուխարաց, ըսաւ ու ըրաւ: Խաչին վրայ մեզի համար կեանքը տուաւ, զմեզ սատանային ձեռքէն խալըսելու համար՝ արիւնը թափեց. չիթողուց զմեզ գայլուն բերանը՝ ինչպէս վարձկան հովուք կընէ, վասն զի իրը չեն ոչխարները՝ փոյթը չէ, կը թողու զանոնք գայլուն բերանը ու կը փախչի. Իսկ վարձկանն՝ որ ու է հովիւն, որոյ ու իւր են ուխարացն, իբրև անասնէ պայլն դի գայ՝ թողու զուխարան և խախտի. քանզի վարձկան է, և չէ քոյն նմա վասն ուխարացն: Իայց մենք որ Քրիստոսի ոչխարներն ենք, զմեզ սիրելէն՝ չիթողուց որ գայլը՝ այսինքն սատանան՝ զմեզ յափշտակէ. Ես էմ հովիւն քաջ, և զանչն իմ դնէմ ՚ի վերայ ուխարաց: Ի՛նչ կըլար մեր բանը, թէ որ Քրիստոս մեզի համար իր կեանքը զրած չըլար. յաւի-

տեան որս պիտոր ըլլայինք գժոխային գայլուն: Զմեզ անոր ձեռքէն խալըսելն ալ հերիք չէ, մեզի յաւիտենական երջանկութիւն ալ ստարաստեց: Երկու ծայր, գժոխք ու արքայութիւն. մէկէն փրկելը հերիք չիտեպեց, մեկալին ալ հասցնելու համար՝ առջնին ինչպէս՝ որ է ատեն հոն երթամք: Որո՞նք սիրտը ասանկ սիրոյ կրնայ անդգայ ըլլալ թէ որ զմեզ առաջ ալ կը սիրէր իբրև իր ոչխարները, հապա մեզի համար արիւնն ալ թափելէն ետքը՝ ի՛նչ սէր պիտոր ունենայ վրանիս. թէ որ մեր վրայ մեռաւ՝ մենք իրենը ըլլալուս համար, հապա իր մեր վրայ մեռնելէն ետքը՝ ի՛նչ կերպ իրենը եղանք: Պողոս առաքեալը ուրիշ կերպ չի կրնալով բացատրել, կրտէ որ մենք ամենքս Քրիստոսի մարմինն ենք, իր մարմնոյն անդամներն ենք. ինչպէս մարդս տէր է իր մարմնոյն, անանկ ալ Քրիստոս մեր տէրն է. Այլ դո՛ւք մարմն Քրիստոսի էք, և անդամք յանդամոց երբս:

**Ա. Գ. Թ. Գ**

Յիտուս փրկիչ իմ, դուն ես իմ ճշմարիտ ու բարեգութ հովիւս: Գուն ինձի համար մեռար, ես ալ իմ մահս քու սիրոյդ համար յօժարութեամբ կընդունիմ, իմ քեզի դէմ ըրած ապերախութեամբ անստ պատիժ կընդունիմ մահս, քեզի մահակից ըլլալու համար կընդունիմ: Քու կինդ ըլլալ կը ճանչնամ, կը ճանչնամ որ վրաս ամեն իրաւունք ունիս՝ թէ զիս ստեղծելուդ և թէ զիս փրկելուդ համար. ու անանկ գո՛չ եմ քու կինդ ըլլալէս, որ չեմ ուզեր ամենեկն ուրիշնը ըլլալ. քու մարմնոյդ մասն եմ, ինձի իրաւունք տուիր ասով՝ որ մը քու փառացդ ալ մասնակից ըլլալու.

մի թողոր որ աս իրաւունքը իմ մեղքերովս  
կորսւնցընեմ: Քու ոչխարդ եմ, ինձի շնորք ատւր  
որ քու ձայնդ միայն ճանչնամ, ուրիշներու ետեւէ  
չէրթամ՝ որոնք զիս մուրրցընել կուզեն. քու  
ետեւէդ միայն դամ, որպէս զի ես ալ քու ոչխար-  
ներուդ հետ փրկութեան համնիմ. քու խօսքդ է՝  
Ուխարդ իմ յայնի իմում ցեն, և զինի իմ գան, և ես  
դամ նոյա զիւնանն յաւիտեանիսն: Որչափ ալ մուր-  
րած ըլլամ, փնտռէ զիս, դախր ու քու ոչխարնե-  
րուդ հետ խառնէ:

Որ մուրրեցայ ՚ի հօտէ քումմէ, հովիւ բարի,  
խնդրեա զիս զմուրրեալս, և արժանաւորեա խառ-  
նիլ ՚ի հօտ քո, Քրիստոս, և կեցո:

## ՄՏԱ.ԾԱ.ԿԱ.Ն 22.

Նորեկ Յիսուսի մեր վրայ ունեցած սիրոյն  
վրայ, ու ի՛նչպէս պետք է ջանակը ակնկայ  
յիկորպընցընելոս վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Քրիստոսէտէրն մեր իր ինչպէս սիրելը զմեզ՝  
բացատրեց ըսելով. Որպէս սիրեաց զիս Հայր, և ես  
սիրեօ՞նիւմ եմ: Հայրն երկնաւոր ինչպէս որ անհուն  
և ամբաւ սիրով կը սիրէ իր միածին որդին, ա-  
նանկ ալ անոր մարդկութիւնը կը սիրէ՝ Քրիստոս  
նոյն անձը ըլլալով, թէ աստուածութեանը և թէ  
մարդկութեանը: Արդ ինչպէս Հայրն երկնաւոր  
ամբաւ սիրով կը սիրէ զՔրիստոս՝ անոր անձը աս-  
տուածային ըլլալուն ու մարդկային բնութիւնը  
անոր հետ միացած ըլլալուն համար, ասանկ ալ  
Քրիստոս զմեզ կը սիրէ՝ մենք ալ իր մարդկային  
բնութիւնը ունենալուն համար. ուստի կրնայ  
ըսուիլ որ նոյն իր Հօրը անբաւ սիրովը զմեզ կը  
սիրէ: Քրիստոնէական կրօնքին հական վստմու-  
թիւններուն մէկն է ասիկայ, ու աւելի կը շարժէ  
մարդուս սիրա՛լ՝ երբոր մտածէ որ, ինչպէս Հայրն  
երկնաւոր կը սիրէ զՔրիստոս՝ զենքը փառաւորե-

լու համար, ասանկ ալ Քրիստոս զմեզ կը սիրէ՝ որպէս զի զմեզ յաւիտենական փառաց հասցընէ. անոր համար կուզէ որ իր սիրոյն մէջը կէնանք. Ասոյն է՝ սէր իմ:

### Մ Ա Ս Ն Բ.

Քրիստոսի սիրոյն մէջը մնալը՝ իր շնորքին մէջը մնալ ըսել է. իր շնորքին մէջն որ մնանք, արբալ յուծիւնը մերն է. ամեն փորձութեանց անող կը յաղթենք, առանց անոր՝ ստատանն կը տիրէ վառնիս, դժտիբը մեռնելնուս կը սպասէ: Ուստի երբոր աշխարհ մարմին ու ստատանայ զմեզ կը փորձեն, Քրիստոսի խօսքը պէտք է յիշենք՝ Ասոյն է՝ սէր իմ, որպէս զի աս անուշ յորդորանքովը սիրտ առնենք ու կարենանք վրայ ելլել: Աս մեր թշնամիները կը ջանան Քրիստոսի պատուիրանքներուն դէմ ընել տալ մեզի, որպէս զի իր շնորքը՝ իր սէրը կորսընցընենք, վասն զի Քրիստոսի սիրոյն մէջը մնալու մէկ հատիկ կերպն է իր պատուիրանքները պահել. աս ապահով կերպը ինքը մեզի սորվեցուց. Նե՛ք պահե՛ք՝ դպարտութեան իմ, խօսի՛ք՝ ի սէր իմ: Ուրիշ ամեն բան, այսինքն ծով, պաք, ճգնուծիւն, աշխատանք, մահացուցմանք, աղօթք և այլն, Քրիստոսի պատուիրանքներն որ չկատարենք, պարտալը կերթան. իր շնորքը կը կորսընցընենք, իր սիրոյն մէջը չենք կրնար կենալ: Աշխարհի մեծերուն օրջափ ալ ըսածնին ընես՝ ապահով չես իրենց սիրելի ըլլալու. յանկարծ խելււնին կը փչէ, կամ վրտգ զրպարուածութեան մը հաւատալովն, երեսէ կիշնաս. իսկ Քրիստոսի երեսէն չիմաշնիս ապահով է, թէ որ իր պատուիրանքները պահենք: Պատուիրանքներն ալ ծանր

չեն. Ե- դպարտութեան նորա լին ծանուս. մանաւանդ ինքը գործքով մեզի օրինակ տալն էաքը: Վասն զի ինքը ինչ ծանր բաներ որ քաշեց, նոյն բաները չկատարեց ինքը. ինքը իր երկնաւոր Հօրը պատուիրանքը կատարելու համար՝ արիւնն ալ թափեց, խաչին վրայ մեռաւ, ուստի անոր համար ինքը զինքը օրինակ կուտայ մեզի ըսելով: Որպէս և էս դպարտութեան Հօր իմոյ պահեցի, և խօսի՛ք՝ սէր նորա: Ի՞նչ ասուծ, ի՞նչ նախախնիք կըլլայ մեզի, թէ որ իրեն չի՛նտարինք, ու իր պատուիրանքները պահելու որ չըլլանք: Ի՞նչ չեն ըներ մարդիկ՝ ուրիշներուն սիրելի ըլլալու համար. ի՞նչ չենք ըներ՝ եթէ զիսնայինք որ անող թագաւորի մը սիրելի ու բարեկամ պիտոր ըլլանք: Այսոս մեզի. Քրիստոսի, որ չբաղդատուեր բոլոր աշխարհի թագաւորներուն հետ, չենք ջանար սիրելի ըլլալու՝ իր ըսածները ընելով: Թագաւորներու ու բոլոր աշխարհի սիրելի ըլլալը՝ ի՞նչ երջանկուծիւն կուտայ մեզի. տուածն ալ անցաւոր, ու մեր սիրալը չիկրնար յագեցընել: Իսկ Քրիստոսի սիրելի եղողը՝ յաւիտենական երջանկուծիւն կուտենայ, ու սիրալը կը յագի՝ իր փառքը միայն աննալով, ուրուն Դաւիթ մարգարէն բազձալով կըսեր. Յագեցայ յերեւել խառաց քոց: Աս օրով յագեցումն է որ Քրիստոս կը խոտանայ իր պատուիրանքները պահողներուն՝ ըսելով. Որ ունի դպարտութեան իմ և պահէ ընտա, նա է որ սիրէ զիս. և որ սիրէն զիս՝ սիրէս. քի՛ ի Հօրէ իմոյ, և էս սիրեցոյն ըսաւ և երեցոցոյն նմա զիս:

ՄԱՍՆ Գ.

Աս ինչ խորունկ խորհուրդ ունի եղեր Յիսուսին սէրը. աս խորհուրդը արքայութեան մէջ պիտոր յայանուի բոլոր աշխրբիս առջին, որպէս զի ամառէն Քրիստոսի պատուիրանքները չեպահօղները. ան առենը դագրի պիտոր խորհուրդ ըլլալէն, ու լոյսի պէս ամենուն աչքին պիտոր երեւոյ Քրիստոսի պատուիրանքները պահօղներուն վերկուծեան կերպը. բոլոր աշխրբիս յայանուի պիտոր, ամենքը պիտոր անմասն ինչ ըսել է եղեր Քրիստոսի սիրելի ըլլալը, ինչ ըսել է եղեր՝ Քրիստոսի զմեզ սիրելը: Ինչ յնձուծութիւն, ինչ ուրախութիւն պիտոր ըլլայ ան առենը Քրիստոսի սիրելեացը ուրախութիւնը. ան առենը պիտոր իմանանք Քրիստոսի խօսքին բուն իմաստն որ կըսէ. Զայս խօսեցայ ընդ յեւ, զի ուրախութիւնն իմ ՚ի յեւ իցի, և յեր ուրախութիւնն լոյսաւ եւ իցի: Վասն զի արգարհները անդին պիտոր հասկընան ինչ ըսել է եղեր Քրիստոսի զերենք անսիրի սիրելը՝ ինչպէս որ Հայրն երկնաւոր զինքը կը սիրէ. ինչ ըսել է եղեր Քրիստոսի իրենց համար խաչին վրայ մեռնիլը. ինչ ըսել է եղեր Քրիստոսի սիրելի ըլլալով՝ անոր արգեանցը մասնակից ըլլալը. ու աս ամեն բանը հասկընալը՝ անանկ ուրախացընէ պիտոր զերենք, որ Քրիստոսի ուրախութիւնը իրենց սրտին մէջը պիտոր ընցուի, անանկ ուրախութիւն մը՝ աշխրբիս ուրախութիւններուն չեպաղգատուիր, անանկ ուրախութիւն մը՝ որ յաւիտեան պիտոր սուէ:

Ա. Գ. Օ. Թ. Բ

Յիսուս փրկիչ իմ, աս ինչ սէր է որ մեր վրայ ունիս, աս ինչ ուրախութիւն է որ մեզի համար պատրաստեր ես. չնորք տուր ինձի որ չեղրիւովմ աս ուրախութեանն՝ քու սիրոյդ մէջը մնալով. զուրութիւն տուր ինձի որ քու պատուիրանքներդ պահեմ, որպէս զի քու սիրոյդ մէջը մնամ: Աս ա մեն բան մեզի զուրցելդ ալ՝ քու սիրոյդ պապցոյն է. մի թողուր որ ապերախա ըլլամ, մի թողուր որ վրաս ունեցած սէրդ ու խնամքդ պարապը հանեմ: Մի թողուր որ աշխրբիս անցաւոր ու արտուր ուրախութիւնը՝ քու յաւիտեանական ու երանացուցիչ ուրախութեանէդ վեր գնեմ. աշխրբիս ուրախութիւնը իմ սիրաս չեղըցներ, իմ փրկութեանս ուրախութիւնը կը խնդրեմ. Տուր ինչ յնձուծութիւն քրիստոսեան. իմ խեղճ հոգիս իմ աս ուսպեալ մարմինս այն ուրախութեանը կը սպասեն: Լսելի արա ինչ պէր զնձութիւն և զուրախութիւն, և յնձուծութիւն սպիտակ իմ պատուպետալ:

- Ուրախացո տեր ողոյս փրկութեամբ, այր վասն իմ ՚ի սուգ:
- Մէր անուն Յիսուս, սիրով քով ճըմլեա, սիրտ իմ քարեղէն.
- Տենչալն անպէամբ տուր ինձ յազնաւ, տեր Յիսուս Քրիստոս:

# ՄՏԱԾԱԿԱՆ ՁԻ՛

Քրիստոսի մեր փրկարեան համար  
մտնեիրս յիսայ :

## ՄԱՍՆ Ա.

Երբոր անսպասին մէջ Իսրայելացւոց վրայ  
օձեր յարձրկեցան՝ իրենց մեղքերուն պատիժ,  
ու խածնելով կը սպաննէին զանոնք, Մովսէս ա-  
ստուծոյ հրամանաւը սղնձէ օձ մը կանդնեց եր-  
կայն փայտի մը ծայր, որպէս զի խածնուողները  
անոր նայելով չիմեանին: Աս օձը Քրիստոսի օրե-  
նակն էր, ինչպէս որ ինքը կրտս. Որպէս Մովսէս  
Բարձրացոյց զէն յանապաքի, նոյնպէս Բարձրանալ պարբ. է  
որդոց մարդոց: Քրիստոս մեզի համար խաչին վրայ  
բարձրացաւ, որպէս զի իրեն նայելով խաչըսինք  
սատանային խածնէլէն: Աս բանս Քրիստոս Հրէից  
պատմելու ատենը՝ պարբ. է բառովը բացատրեց,  
պէտք է որ՝ որդին մարդոց, այս ինքն էս, խաչ ել-  
լէմ: Աս խօսքովը շատ բան կը հասկըցուի: Նախ՝  
աստուծոյ կողմանէ պէտք էր. իրաւ՝ շատ կերպով  
կրնար աստուած փրկել զմեզ, բայց աս կերպը  
ընտրեց, վասն զի ուրիշ կերպով ասանկ լիուլի  
հաստուցում չէր կրնար ըլլալ՝ մարդուս մեղքովը

աստուծոյ եղած նախատանաջը. ուրիշ կերպով  
ասանկ չէր յայտնուէր աստուծոյ արդարութիւն-  
նը՝ սրբութիւնը՝ ու մեղքի դէմ ունեցած ատե-  
լութիւնը. ուրիշ կերպով ասանկ չէր երևնար իր  
ողորմութիւնն ու մարդասիրութիւնը, իր փառքն  
ու իմաստութիւնը. վասն զի Քրիստոսի մահուամբ  
բը միայն աստուծոյ արդարութեանը ամեն իրա-  
ւունքը կը լեցուէր, ու իր անհուն ողորմութեանը  
ամեն շնորքները կը յայտնուէին:

Երկրորդ՝ մարդուս կողմանէ ալ պէտք էր. վասն  
զի ասով կը ճանչնային մարդիկ մեղքին ինչ դէշ  
բան ու ինչ սոսկալն պատիժներու արժանի ըլ-  
լալը. ասով կը ճանչնային ապաշխարելու հարկա-  
ւորութիւնը, ու սիրա կառնէին Քրիստոսի քա-  
շածնեցուն հեռակէտ. ասով կը յորդորուէին սի-  
րելու զՔրիստոս, ու իր վրայ դնելու բոլոր իրենց  
յոյսը:

Երրորդ՝ Քրիստոսի կողմանէ ալ պէտք էր. վասն  
զի ասանկ զանախօսկիծ ու նախատալց մահ մը  
միայն կրնար գոհ ընել իր անհուն սէրն որ ունէր  
իր երկնաւոր Հօրը, ասով միայն կրնար Քրիստոս  
լեցնիլ իր սաստիկ բաղձանքը զմեզ անանկ կեր-  
պով փրկելու՝ որ ատուած գինը բաւականէն եւել  
ըլլար, աստուծոյ եւելքը փառք ըլլար, ու մեզի  
աւելի օգտակար: Աս կերպովը միայն Հայրն երկ-  
նաւոր կրնար տալ Քրիստոսի այն անսահման  
փառքը՝ որով կուզէր փառաւորել զՔրիստոս  
իրբև միջնորդ իրեն ու մարդկանց մէջը: Թէ որ  
Քրիստոսի հոգին ունենայինք, կիմանայինք որ  
պէտք է մեզի ալ իրեն հետ խաչուիլ. ու աս ճըշ-  
մարտութիւնը հասկընալնս՝ զմեզ անհամբերու-  
թենէ կը խալտէր, ամեն գանգաւ կը լուցընէր,  
ու միշտ գոհութիւն կուտայինք իրեն:

Մ Ս Ս Ն Բ .

Քրիստոս տէրն մեր օձին օրինակը բերելէն ետքը կըսէ . Ձի այնպէս սիրեաց ասորոսած զաշխարհ, մինչև զբրտի իւր միածին եք . զի ամենայն որ հասարայ 'ի նա' մէ՛ իւրիցէ, այլ ընկալի զիննսն յաւիտեանսն : Աստուած մեզի համար իր միածինն ու սիրելի որդին տուաւ . թէ որ բոլոր աշխարհք ու բոլոր երկինքը հրեշտակներով մէկ տեղ տուած ըլլար, և ոչ կը բաղդատուէր իր որդւոյն հետ : Վասն զի իր որդին տալով ամեն բան տուած եղաւ, որովհետեւ բոլոր իր ունեցածը որդւոյն է, զոր էր ծառայող և մեայնի, որով և զյաւիտեանսն աբար . իր որդին մեզի տալով զմեզ իրեն որդեգիր ըրաւ, ու ժառանգակից որդւոյն . Այսուհետև լին ծառայ, այլ որդի եմք որդի, և ծառայող ասորոսած : Ո՛հ, ինչ մեծ խօսքեր են ասոնք, ինչ բարութիւնն ու ողորմութիւնն, ինչ սէր . արդէն աստուծոյ ստեղծուածները ըլլալով զմեզ իրեն պարարկան ենք տալու . հասար զմեզ փրկելուն, ու աս կերպով փրկելուն համար, ինչ կրնանք տալ :

Մ Ս Ս Ն Գ .

Աս ալ մտածենք որ աստուած իր որդին տուաւ իրմէ ապստամբած մարդկանց, անոնց համար՝ որ կատապառութեանն ու ամեն տեսակ պղծութեան մէջ ընկղմած էին . աս ողորմութիւնը չըրաւ ապստամբ հրեշտակներուն . անհնազանդութեան մեղքը ըրածնուն պէս՝ զիրենք դատապարտեց ,

ու իրենց բազմութեանը նայեցաւ, և ոչ իրենց բնութեան գերազանցութեանը : Սեզի ալ չէր կրնար նայնպէս ընել, կրնայինք անկէ ետքը յուսալ արքայութիւն երթալու, ու յաւիտեանական կեանքը վայելելու : Բայց անանկ չըրաւ, զմեզ պատժելու տեղը, ինչպէս որ արժանի էինք, մեր տեղը իր անմեղ որդին պատժեց խաչին վրայ մեանելու, որպէս զի մենք չիպատաճուինք, այլ յաւիտեանական կեանքը հասնինք : Վասն իր որդին մեզի տալովը, անոր բոլոր արդեանքը, չարչարանացը, սուբբ արեանը, մահուանը, ու ինչուան իր աստուածութեանն ալ մասնակից ըրաւ զմեզ . ուստի Քրիստոս մեր գլուխն է, մեր զօրութիւնն է, մեր լոյսն է, մեր գանձն է, մեր մխիթարութիւնն է, ու մեր փրկութիւնն է : Անոր համար է որ Քրիստոսի չհնաւաստացող չիփրկուիր, վասն զի կը մերժէ իրմէն իր փրկութիւնը՝ որ է Քրիստոս . ինչպէս ինքը նոյն խօսքերուն ետևն կըսէ . Որ ու հասարայ 'ի նա, արդէն իսկ դատապարտու է : Աստուած իր որդին աշխարհ չիփրկեց որ գտնէ ու գատապարտէ զմարդիկ՝ ինչպէս որ իր զրգարութիւնը կը պահանջէր, այլ որպէս զի փրկէ զանոնք . ուստի ով որ կընդունի զՔրիստոս, կը փրկուի . իսկ ով որ չընդունիր՝ գատելու ու գատապարտելու կարօտութիւն չիմնար, ինքիւն յանցանքին գատապարտութեանը մէջ կը մնայ, չուզէր անկէց խաղտիլ . Ձի ու ասորեաց ասորոսած զբրտի իւր յաշխարհ՝ ինչ զապետի զաշխարհ, այլ զի թերէնցի աշխարհ նովա . որ հասարայ 'ի նա' ու դատապարտուի, և որ ու հասարայ 'ի նա' արդէն իսկ դատապարտուի, և զի ու հասարայ յանուն միածին որդւոյն ասորոսած :



Ա. Ղ. Օ թ. Գ

Յիսուս փրկիչ իմ, մի Թողուր որ ես ալ քեզի չիհաւատացողներէն ըլլամ. առբ որ քու պատուիրանքներդ պահելով, ու քու սիրոյդ համար բարեգործութիւն ընելով, քու արդեանցդ մասնակից ըլլամ, որ կարենամ որ մը պալ զքեզ վայելէ: Կը ճանչնամ իմ մեղքերս, բայց որչափ ալ մեղաւոր ըլլամ, քեզի կապաւնիմ. քու չարչարանացդ ու մահուանդ գինը չափ չունի, իմ մեղքերէս անհուն առաւելութեամբ աւելի է: Յոյսս քու վրայ դրած եմ, ու ժողովուր իմ յոյսս. կը հաւատամ քեզի, աւելցուր իմ հաւատքս. կը սիրեմ զքեզ, աւելցուր իմ սէրս, ու անանկ ըրէ՛ որ յաւիտեան սիրեմ զքեզ երկինքը, ու զքեզ սիրելը ըլլայ իմ յաւիտենական երանութիւնս:

Որ 'ի խաչին բարձեր զգտաակնիք մահու՝ տա-  
րածելով զբաղուկս քո, արձակեաւ և զիս 'ի կա-  
պանաց բանասրկուին, յոյս կենդանութեան և  
փրկութեան իմոյ տէր:

# ՄՏԱԾԱԿԱՆ ԶԸ.

Քրիստոսի առանձնակիս կենացը վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Քրիստոս տէրն մեր երեսուներեք տարի ապ-  
րեցաւ աշխրբիս վրայ, ասոնց իրեքը միայն քա-  
րողութեամբ, հրաշքներով, չարչարանքներով ան-  
ցուց, իսկ երեսունը առանձնական ծածուկ ա-  
ռաքինութիւններով. վասն զի ասոնց ամենքս ալ  
կրնանք նմանիլ, ամենքս կրնանք իր առանձնական  
վարուցը հետեւիլ, բայց ետքի իրեք տարուան կե-  
նացը հետեւիլ սուրբերուն միայն արուած է:  
Թէ որ բոլոր կեանքը ետքի իրեք տարիներուն  
պէս անցուցած ըլլար, իրեն հետեւիլ խիստ գժար  
ու յուսահատելի կըլլար. անոր համար չքսաւ որ  
ամենքն ալ հրաշքներ գործեն, ամենքն ալ խաչին  
վրայ մեռնին, այլ ով որ կուզէ փրկուել ընդունի  
ան խաչն որ ատուած իրեն կուտայ, ու իմ ե-  
տեւս գայ ըսաւ: Չքսաւ որ ինձի պէս խաչուե-  
ցեք, ինձի պէս հրաշքներ գործեցեք, այլ Ուսա-  
լուք մինն զի հեղ եմ եւ խոնարհ սրբի: Չիկայ մարդ  
մը որ չիկրնայ հեղ ու խոնարհ ըլլալ, չիկայ մէկը  
որ իր ծնողքը չիկրնայ պատուել, չիկրնայ իրենց

հնազանդիչ. Եւ էր նորա հնազանդ: Վերջապէս ամենքս կրնանք Քրիստոսի աւանձնական կենաց առաքինութիւնները ունենալ, մեր սկարուծեանը համեմատ:

Սուրբ աւետարանը Քրիստոսի ան ասրկներուն համար աս խօսքս միայն կըսէ. Եւ էր նորա հնազանդ. եւ զարգանայր իմաստութեամբ եւ շնորհօք յաւարտօք եւ ի ճարտիմնէ. այսինքն իր ծնողացը հնազանդ էր, ու օրէ օր կը մեծնար հասակով ու շնորքով՝ Թէ աստուծոյ և Թէ մարդկանց առջին: Ուրեմն յայտնի է նախ՝ որ աղքատ տան մը մէջ կը կենար, իբրև հիւսան մը որդի, ուր որ հանգստութեան համար պէտք եղած բաներէն ի զատ՝ հարկաւոր բաներն ալ պակաս էին: Հարկաւորապէս իր զբօսմունքն ալ իրեն վիճակին համեմատ էր, սուրբ Յովսէփայ արուեստին կօզնէր. ան որ խօսքով մը աշխարհ ստեղծեց՝ սրց և ուրազ կը բանեցընէր: Ասկէց մեծ խոնարհութեան օրինակ կրնայ ըլլալ Քրիստոս որդին աստուծոյ հիւսանց կարգը դրաւ զինքը, ուրեմն ինչպէս քրիստոնէայ մը կրնայ ուղեւոր իր վիճակէն ալ վեր գրուի: Ան որ կրնար իր ծայրագոյն իմաստութեամբը զարմացընել աշխարհ, որ կրնար ամեն կուսապաշտները դարձընել, ու իր երկուստը Հօրը քառքը եւեցընելու համար՝ հրաշքներ գործել, չքրաւ, ու այնչափ ասորի ծածկուած կեցաւ: Անործ կենալով՝ աւելի մեծագործութիւն ըրաւ, սորվեցընելով մեզի՝ որ երեւելի ըլլալու փափախ Նիս սանձներ: Քրիստոս իր ծնողացը կը հնազանդէր. ո՞վ էր հնազանդօղբ. միածին որդին աստուծոյ, իմաստութիւնն յաւարտեան, աշխարհս տէրը, մարդկանց փրկիչը: Որուն կը հնազանդէր. իր ստեղծուածներուն՝ որոնց խելքն ու կարողութիւնը չէր կրնար իր իմաստութեանը ու ամենակարողութեանը հետ բաղդատուիլ: Ինչպէս կը հնազանդէր. անոնց

կամբը աստուծոյ կամբը սեպելով: Մեզի շատ անգամ ծնողաց ու մեծերուն հնազանդելը ծանր կուգայ, մեր մտածածը անոնց մտածածէն աղէկ կարծելով: Սեպենք այլ որ անանկ ըլլայ. բայց արդեօք Քրիստոս իր ծնողացմէ աւելի աղէկ չէր մտածէր. Թէ որ կը մտածէր, ու իր մտածածը մէկդի գնելով՝ իր ծնողացը կը հնազանդէր, ինչ պատճառ կը մնայ մեզի հնազանդութենէ փախ չելու:

ՄԱՍՆ Բ.

Քրիստոս տէրն մեր քիչ քիչ իր հասակին համեմատ կը ցուցընէր գրտուանց իր իմաստութիւնը: Ինչպէս արեւ միշտ նոյնպէս լուսաւոր է, բայց առաւանց դեռ նոր ծագած ատենը՝ իր լուսաւորութիւնը մեզի բոլոր չէրեցընէր, այլ որչափ որ կը բարձրանայ՝ այնչափ աւելի կերեւնայ իր լուսը, ասանկ ալ Քրիստոս՝ արեգակն արդարութեան՝ պղտիկուց չէրեցուց իր իմաստութիւնը, այլ քիչ քիչ՝ որչափ որ իր հասակը կը պահանջէր. ծածկեց իր անհուն իմաստութիւնը՝ որուն մէկ պղտի կայծը աստուերիլու տարուան եղած ատենը տաճարին մէջ Հրէից վարդապետներուն ցուցընելով, ամենքը զարմացած ապշած՝ իրարու կը հարցընէին, որ ինչպէս հիւսան մը որդի դեռ ան հասակին այնչափ զիտութիւն ու իմաստութիւն կրնար ունենալ: Իսկ մենք չիզիտցածնիս ալ կուզենք ծախել, ու իմաստուն երեւալ. շատ անգամ մեր սխալ կարծիքն ալ կը պնդենք՝ պղզտիկ լինալու համար:

Քրիստոս տէրն մեր նոյնպէս իր առաքինութիւններն ալ կը ծածկէր, իր հասակին պէտք եւ

զածը միայն գրտուանց ցուցնելով, էրբոր աստուածոյ առջին անանկ կատարեալ էին իր առաքինութիւնները՝ որ անկէց աւելին չէր կրնար ըլլալ: Իսկ մեկը աստուածոյ առջին ինչ ողորմելի պահասաւոր ըլլալնիս գիտանք ալ, գրտուանց առաքինի կուզէնք երևնալ, պահտութիւննիս ծածկելով. անանկ որ՝ եթէ մարդկանցմէ նկատմունք չունենայինք, շատ առաքինութիւններ ու բարի գործքեր զանց կրնէինք:

**Մ Ա Ս Ն Գ .**

Ուրեմն մեծ մեծ գործքեր ընելու բաղձանք պէտք չէ ունենանք. աստուած մեզմէ մեծ մեծ գործքեր չեպահանջէր, այլ սովորական գործքերը ազէկ ընել, իրեն համար ընել: Սուրբ Յոհաննէս Մկրտիչը ամենէն մեծ աւարբերուն մեկն էր, բայց ամենեւին հրաշք մը չի գործէց. Զէ Յոհաննէս նախ Բնուարբ: Քրիստոս աւերն մեր երստուն տարի մեզի անանկ սրբութեան օրինակ մը տուաւ, որուն աւանդս ալ կրնանք հետեւիլ. ու աստուածոյ առջը այնչափ հաճոյ ու սիրելի էր իր առանձնական կենաց առաքինութիւններովը, որչափ վերջի իրեք աստուան ըրածներովը: Կրտէն երեւցած առաքինութիւններնուս մէջ՝ շատ անգամ անձնասիրութիւն ալ կը մանայ, որ կը պղտորէ զանանք ու պահասաւոր կրնէ աստուածոյ առջին. իսկ առանձնական առաքինութիւնները աս վտանգը չունենալէն՝ ՚ի զատ, մեզի վստահութիւն մըն ալ կուտան՝ որ ինչպէս դրսէն չերեցած բաները աստուածոյ սիրոյն համար միայն կրնանք, անանկ ալ դրսէն երեւցածները իրեն սիրոյն համար է որ կրնանք:

Ա Ղ Օ Թ Գ

Յիսուս փրկիչ իմ, դուն հասակիդ համեմատ աստուածոյ ու մարդկանց առջին քու իմաստութիւնդ ու շնորքդ ցուցուցիր. իսկ ես հասակիս հետ իմ պահտութիւններս ու անշնորք փտտերս եւեցուցի. որչափ որ դուն առաքինութիւններդ ու բարեգործութիւններդ աճեցուցիր, այնչափ ես իմ մեղքերս եւեցուցի. սիրտս՝ միայն՝ առողջութիւնս՝ ամեն ընդունած բարիքս գեշի բանեցուցի: Արտոս իմ անցուցած տարիներուս. շնորք տուր ինձի որ դոնէ ասկէց ետքը ապաշխարեմ մեղքերուս վրայ, ու քու ամեն տուած բարիքդ ազէկի գործածեմ: Ո՛վ սուրբ Կոյս, ո՛վ աստուածահայր, այն հնազանդութեանը համար որ Քրիստոս որդին աստուածոյ ըրաւ ձեզի, բարեխօսեցէք ինձի համար որ ես ալ ձեզի պէս իր վարուցը հետեւիմ. ինչպէս որ ինքը ձեզի հնազանդ եղաւ, ա՛նանկ ալ ես աստուածոյ պատուիրանացը ու իմ հօգևոր և մարմնաւոր ծնողացս հնազանդիմ:

Ճմարտասպէս մարմնացար և ընդ մարդկան շրջեցար, կատարեցեր զամենայն, և օրհնեցեր յառաջին անիծ իցն, աստուած Բանդ ողորմեա մեզ:

# ՄՏԱԾԱԿԱՆ ՁԹ.

Քրիստոս մեր հոգոյն յոյսը շրջապահ վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Հաւատամբէն մէջը կը գաւանդնը զՔրիստոս լոյս ՚ի լուսոյ, ու առանց խելընիս հասնեցու կը կոչենք զինքը լոյս անասեղծ, լոյս անմատոյց, ան-  
ճառելի և անխմանալի լոյս, ճառագայթ միաւայն Հօր, ու ասոնց նման բացատրութիւններ, որոնք որչափ իրականին նշանակութենէն վար են՝ այնչափ մեր մտքէն վեր. վասն զի անմարմին լոյսը՝ ոչ աւելնուս և ոչ մտքերնուս տակը կրնայ լինալ: Բայց մարմնացեալ լոյսը՝ որ է Քրիստոս, ինչ ըւ-  
լալը կրնանք քիչ մը հասկընալ, գէթ ըստ մասին՝ որ մեզի կը վերաբերի:

Քրիստոս մեր լոյսն է նախ, վասն զի սասանան՝ որ է իշխանն խաւարի՝ իրմով հալածեցաւ մեզմէ, կեանքաշտութեան մութը վերցաւ, մարդիկ ճանչ-  
ցան իրենց արարիչը, իմացան ինչ կերպով զինքը պիտոր պաշտեն, ու գիտցան որ յաւիտենական կեանքը իրենց համար պատրաստուած է: Ասանկ պայծառ լոյսը ո՞վ կրնայ չհաւանալ, անանկ խա-  
ւարէն ետքը՝ որ բոլոր աշխարհ ծածկեր էր. վեր-

ջի աստիճանի յամառութիւն պէտք է ունենայ մէկը՝ որ աւելները դոցէ ասանկ բարերար լոյսը չհաւանալու:

Քրիստոս մեր հոգոյն լոյսն է նաև իր շնորհու-  
վը՝ որ մեզի կուտայ, վասն զի անով մեր միտքը կը լուսաւորուի, մեր սիրտը կը մաքրուի, ու քաղցր խաղաղութիւն մը կը վայելէ: Աս լուսովը մեր հոգին կարթննայ, աս լոյսն է որ մեր սրբին մէջը աստուծոյ սէրը կը վառէ. աս լուսովն է որ կը հաւանեք ու կը յուսանք. աս լոյսն է՝ որ մեզի կը սորվեցնէ որտէ՛լ մեր ճշմարիտ ու յաւի-  
տենական բարիքը՝ անցաւոր ու աներևոյթ բա-  
րիքներէն: Մարգս մութ աղը չի կրնար անասծ բաները որտէ՛լ, մարգը ծառ կը կարծէ, օճը բռան. բայց լոյսը ծագածին պէս՝ ամեն բան ինչ որ է՝ անանկ կերեայ աչքին. ասանկ ալ Քրիստոս սի լուսովը մտքերնէս մութը վերնալով՝ կրնանանք որ աղքատութիւնը՝ նեղութիւնը՝ վիշտը՝ գեշ բաներ չեն եղեր, մարգս երանելի կրնեն եղեր. մաշը սոսկալի բան չէ եղեր, այլ քուսն մը, ու անցք մը մաշւընէ ՚ի կեանս: Ասոնց նման ուրիշ ամեն բան ալ ուղիղ գտակը կուտայ մեզի աս լոյ-  
սը, որ է ինքն Քրիստոս լոյսն ճմարիպ՝ որ լուսաւոր ասունը զամենայն յարդ որ գաւոց է յաշխարհ: Անոր հա-  
մար ըսաւ Քրիստոս. Ես եմ լոյս աշխարհի. ետեկն ալ յարեց. Որ գայ զինի իմ, ընդ խաւար մի գնացեալ: Վասն զի ո՞վ որ Քրիստոսի ետեկն չերթար, ո՞վ որ անոր յայանած բաներուն հաւատալու տեղը՝ իր մաքի լոյսին կը վատահի, ու իր կարծեացը կը հե-  
տակի, խաւարի մէջ կը մնայ, որոշ չեճանչնար՝ ոչ իր սկիզբն ու ետքը, և ոչ իր պարտքերը: Ո՞վ որ Քրիստոսի սուրբ եկեղեցոյն սորվեցուցածին հե-  
տեկը տեղը՝ իր մտքին կը հետակի, հարկաւ կը մտըրի. վասն զի մարդուս միտքը սխալահան է, և ոչ սուրբ գիրքին խօսքերը կրնայ ինքիբն անոր

խաւ իմանաւ. մէկը առանկ՝ մէկօրը անանկ կիմա-  
նայ, յայտնի է որ երկուքին մէկուն իմացածը  
սխալ է: Սնոր համար է որ փիլիսոփաներն ու հե-  
րեափիկոսները այնչափ մտորութեանց մէջ ինկան-  
վան զի Քրիստոսի լոյսը չունենալով, խաւարի  
մէջ քաւելցին:

ՄԱՍՆ Բ.

Կմանապէս ուլ որ Քրիստոսի բարոյականին չի.  
հետեւիր, ու իր ախտերը կուզէ գոհ ընել, խաւա-  
րի մէջ է, կուզէ որ իր գործքերը խաւարի մէջ  
մնան, մարդ չիմանայ. կարելի սր ըլլայ, Աստուծ-  
մէ ալ կուզէ ծածկել: Սիրտը կը խառնայ, հա-  
ւատքը կը մ.թըննայ, ու դիմացը եղած վիհը չի-  
տեսնար, մէջը կը գահավիժի: Իսկ ուլ որ Քրիս-  
տոսի խօսքէրէն չիհեռանար, սուրբ եկեղեցւոյ  
կը հնազանդի, կը ջանայ Քրիստոսի առաքինու-  
թեանցը նմանիլ, խաչը ուսը առած՝ իրեն հե-  
տեւիլ, ամեն տաած քայլը կը տեսնէ, արքայու-  
թեան ճամբէն չիխոտորի: Անոր համար Քրիս-  
տոս առջի խօսքին ետեէն կաւելլընէ, Այլ ըվաւոյն  
չլայնի նեւոյ: Ի նչ է կենաց լոյսը. — գործեալ  
Քրիստոս է, որ մեզի կառայնարգէ հոգեւոր կե-  
նաց մէջ, ու սոք սոք առաջ կը տանի՝ մինչև կը  
հասցընէ զմեզ աստուծոյ երանելի տեսութեանը.  
Գնացէ նա ՚ի պրո-վէնէ ՚ի պրո-վէնէ, եւ էրեւոյն առ-  
պոսած հրեւոյսայնոյ ՚ի Սիոն:

ՄԱՍՆ Գ.

Հոգեւոր ճամբան իրեք աստիճան ունի, անոր  
համար է ըսելը՝ Գնացէ նա ՚ի պրո-վէնէ ՚ի պրո-  
վէնէ: Առջի աստիճանին մէջ սրբարար շնորքն որ  
կընդունինք՝ կը սրահէ զմեզ մահացու մեղքերէն,  
ու Քրիստոսի լուսովը արժանի կըլլանք արքայու-  
թեան մէջ յաւիտենական լոյսը ժառանգելու:

Երկրորդ աստիճանին մէջ՝ աստուծոյ սէրը չի-  
թողուր մեզի մեղքին ծանրը ու թեթեւը զանա-  
ղանել, ամեն մեղքն ալ մեզի սատելի կընէ, ներելի  
մեղք ալ չենք ընէր դիմանալով, ու մտքերնիս վա-  
նիս ըլլալով: Մեղքէն փախչին ալ բաւական չենք  
սեպէր, այլ նաև կը ջանանք ինչ որ աստուծոյ  
հաճոյ է՝ ընելու, կը ճանչնանք աստուծոյ բարե-  
րարութիւնները, ու անոնց համար իրեն գոհու-  
թիւն առէն չենք գողցիր:

Իսկ երրորդ աստիճանը կը միացընէ զմեզ աս-  
տուծոյ հետ, ու ընտանի կընէ իրեն. անանկ  
սլայծաւ լոյս մը կը ծայգէ մեր հոգւոյն՝ որ անկէջ  
ետքը Աստուծմէ ուրիշ բան չենք ուզեր մտա-  
ծել. իր կատարելութիւնները մեր միտքը կը գրա-  
ւեն, ու իր սէրը մեր սիրտը: Ամեն արարածները՝  
սպեն բան՝ ունայնութիւն կերեւայ աչընուս, թէ  
որ աստուծոյ փառացը ու սիրոյն համար չըլլան:  
Առ է Քրիստոսի լոյսը, ասանկ կըլլանք՝ թէ որ աս  
լոյսը մեզի առաջնորդ ունենանք եւ աս լոյսը կը  
լայ մեզի կարապետ յաւիտենական լուսոյն, որ  
արգարները երանելի կընէ արքայութեան մէջ:

Ա Ղ Օ Թ Ք

Յիսուս փրկիլէ իմ, կը հաւատամ որ դուն ես իմ հոգւոյ լոյսը, առանց քեզի խաւար եմ, ու խաւարի մէջ կը ստըտիմ. ծաղէ ինձի առ լոյսը, մաքրէ հոգիս, լուսաւորէ, ու քեզի հետ միացուր: Քանի որ առ շնորքը ինձի չընես, հին մարդը կենդանի կը մնայ սրտիս մէջ, ու հոգւոյս դէմ կը կուռի: Քանի որ առ շնորքը ինձի չընես՝ սիրտս արարածներու կը յարուի, ու անոնք արդէք կը լսան քու սիրոյդ: Քանի որ առ լոյսը ինձի չետաս, կատարելութեան ճամբէն կրնամ խոտորիլ, ու մեղքի մէջ ալ էլնալ: Ուստի ես ալ Պաւլոս մարդարէին հետ կը խնդրեմ. Լոյս Կոոր Կէր ալոյ իմոյ, քի մի էրբէն անլեոյն ՚ի մահ:

Լոյսդ որ ընդ Հօր նախ քան զլաւիտեանս, եկիր լուսաւորել զխաւար մեզոց աշխարհի՝ ծագել ՚ի սմա զլոյս հրամանի. առ քեզ հոգի իմ առաւօտէ: Հոգի իմ յամենայն ժամ զքեզ փառաւորէ տէր, վասն զի լոյս են հրամանք քո ՚ի վերայ երկրի:

## Մ Տ Ա Ծ Ա Կ Ա Ն Ղ .

Քրիստոսի վրայ ինչ մեծ փառանորիւն պետք է ունենանք:

## Մ Ա Ս Ն Ա .

Քրիստոս ամեն մեր սխառոյքը զիտէ, կը հոգայ, ու կրնայ ճարը ընել: Տիւրոսի ու Սիդոնի երկրէն դառնալէն քիչ օր ետքը Պեննեսարէթի ծովուն քովը՝ բազմութիւն Քրիստոսի չորս զինաւին, իր վարդապետութիւնները լսելու: Իրեք օր ժողովուրդը զմայլած Քրիստոսի շնորհալից ու սրտաշարժ խօսքերէն, հոնկէց չէին ուղեր հեռանալ: Ան տանելը Քրիստոս առաքեալներուն ըսաւ. Պուծա կը շարժի կոր առ ժողովուրդեանը վրայ, վասն զի իրեք օր է որ հոս են, ոմանք ալ հեռու տեղերէ եկած են: Ուրեմն Քրիստոս նախ կը դիտէ ու գիտէ որչափ ատենէն ՚ի վեր իր ծառայութեան մէջ ենք, ու որչափ աշխատէր ենք իր ծառայութեանը մասնելու, ինչ փորձութիւններ կրեր ենք, ինչ արդէքներու յաղթեր ենք, ինչ զոհեր ըրեր ենք. քայլ մը չենք ըներ իրեն համար՝ որ չիգիտնայ ու չիշէ: Ո՛հ, որչափ քաղցր է սասնկ սիրող մը ծառայելը, որ մեր ամեն սղտի աշխա-

տանքը կը ճանչնայ. որչափ ասորեր է ուրիշ տե-  
րերէն, որ կամ չ'ն ճանչնար կամ չ'են ուզեր  
ճանչնալ մեր ծառայութիւնը:

Քրիստոս առաքեալներուն ըսաւ. Սա ժողո-  
վուրդը ուտելու բան ալ չունի: Ուրեմն Քրիս-  
տոս կը ճանչնայ մեր խեղճութիւնն ու կարօտու-  
թիւնը, մեր վիշտը ու նեղութիւնը, մեր ցաւը ու  
հիւսիսը: Մարդիկ չէ թէ միայն չեն գիտեր մեր ա-  
մեն կարօտութիւնը, այլ շատ անդամ չեն ալ հաւ-  
ասար. ուրեմն ինչո՞ւ մարդկանց վրայ աւելի կը  
գնենք մեր յոյսը քան թէ Քրիստոսի:

### ՄԱՍՆ Բ.

Քրիստոս առաքեալներուն խնայուց՝ որ վտան-  
գաւոր էր արձրկել ժողովուրդը, առանց իրենց  
կերակուր ասլու: Արժախէլ գրոսս Եօթիս Աստիճ,  
գոյնէ Կիւիցիս զճանապարհայն: Ի՞նչ գթած սիրտ, կը  
վախնայ որ չըլլայ թէ ճամբան անօթութենէ  
մարող ինչօր մը ըլլայ: Ուրեմն Քրիստոս գալու  
վտանգներուն գիտացն ալ կառնէ. առաջուց կը  
հոգայ վտանգներէն ազատել զմեզ: Ուրեմն ին-  
չո՞ւ իրեն չենք յանձներ ամեն բաներնիս, ինչո՞ւ  
մամառութի մէջ կը գնենք զմեզ օպագային համար.  
Ինքը ասպագան ալ գիտէ՝ ինչ որ պէկ կամ գէշ  
պիտոր պատահի մեզի, ու կրնայ արգիլել մեր  
հոգւոյն փտասակար ըլլալու բաները: Ուրեմն բո-  
լորովին իր գթութեանը յանձնենք զմեզ. ասով  
իրեն մեծ պատիւ կընենք, ու մեր սրտին ալ հան-  
գըտութիւն:

Մարդիկ գիտնան ալ տեսնան ալ մեր կարօտու-  
թիւնը, փոյթերնին չէ. իսկ Քրիստոս չէ թէ միայն  
կը գթայ վրանիս, այլ չիկրնար ալ ծածկել իր  
գթութիւնը: Ժողովուրդեան վրայ ունեցած գութը՝  
յայտնեց առաքեալներուն, ու ըսաւ. Քրիստոս  
Ժողովուրդը: Ասանկ սիրար կրնայ մեր խեղճութիւ-  
նը աննելու չեղարժիլ: Ի՞նչ բանի համար էր իր  
կարեկցութիւնը. Ժողովուրդեան իր սիրոյն համար  
անօթի կենալու, ու նեղութիւն քաշելու հա-  
մար: Ուրեմն ինչ որ Քրիստոսի սիրոյն համար,  
ևս առաւել իր պատուիրանացը գէժ չընելու հա-  
մար նեղութիւն որ քաշենք, Յիսուսին սիրար կը  
շարժէ, իր կարեկցութեանը արժանի կըլլանք:

### ՄԱՍՆ Գ.

Մարդիկ մեր կարօտութեանը կարեկից ալ որ  
ըլլան, շատ անգամ չեն կրնար կամ չեն ուզեր  
ճար մը ընել մեր կարօտութեանը: Քրիստոս ա-  
սանկ չըբաւ, ըսաւ առաքեալներուն որ բացար-  
ձակապէս չէր ուզեր ժողովուրդը անօթի անել-  
նին դարձնել: Մտա անգամ պէտք մը՝ նեղու-  
թիւն մը որ կուռնեանք, ու աստուած քիչ մը ա-  
սեն զմեզ աս կարօտութեանը՝ աս նեղութեանը  
մէջն որ կը թողու, պէտք չէ վհատինք. ինքը գի-  
տէ որչափ ատեն օգտակար է մեզի աս նեղու-  
թիւնը քաշել. երբոր կը կարծենք որ ալ յոյս  
չեկայ մեզի աս նեղութեանէն խաղտելու, աս-  
տուած իր ինամքը պակաս չընէր: Կսե առա-  
քեալները կարծեցին՝ որ անապատ տեղ ճար մը  
չէր կրնար ըլլալ ժողովուրդեան անօթութեանը,  
բայց Քրիստոս անոր ճարը հրաշքով ըրաւ. ու  
միշտ ալ իր նախախնամութեան բնական ճամբաւ

ներն որ պահին, կրնայ ընել ու կրնէ ատ հրաշ-  
քը: Աստուած սահմաններ է որ իրեն վաստահա-  
ցողներուն յոյսը պարտապ սխտոր չէլլէ. ուստի  
կամ բնական ճամբով կը խնամէ զիրենք՝ խնայէս  
սպառնին ձագերը, կամ իր նախասնամուծեանը  
ծածուկ ճամբաներովը սիրմաններուն սիրարը  
շարժելով, կամ գործքերնին յաջողելով. և կամ  
Թէ որ ուրիշ ճար չիմնայ, անպատախն մէջ հացը  
բաղմոցընէրուն պէս՝ հրաշք ընելով կը խնամէ:  
Աստուծոյ կարողութեանը առջև բնական ճամ-  
բան ու հրաշքը նոյն է. գրէր է որ ամեն օր արեւը  
ելլէ, մեզի լոյս տայ. Թէ որ ամեն օրուան կարգը  
աս չըլար, ու յանկարծ օր մը արեւը ծագէր, բո-  
ւր անխնայ արարածները իր լուսովը տեսնէինք,  
ասկէց մեծ հրաշք կրնա՞ր ըլլալ. բայց արեւ ա-  
մեն օր ծագելուն, ու աս հրաշքը ամեն օր ըլլա-  
լուն համար՝ հրաշք չենք սեպեր: Ասանկ ալ աս-  
տուած գրէր է՝ որ յոյսերնին իր վրայ գնօղնե-  
րուն բանը պիտոր յաջողի. հրաշք ալ ընէ աս  
բանիս համար՝ իր գթութեանը կարգն է, իրեն  
համար հրաշք չէ: Աստուած զմեզ խնամելէն չի-  
պահսիր, մենք ենք որ զմեզ չենք խնամեր, իր  
վրայ չենք գնէր յոյսերնիս, մեր մեղքերովը անար-  
ժան կը գնենք զմեզ իր խնամոցը. հոգևոր կարօ-  
տութեաննիս կը Թողունք, մարմնաւոր ու աւե-  
լորդ բաներ կուղենք իրմէն. անոր համար երկու-  
քէն ալ կը զրկուինք:

Ա. Ղ. Օ. Թ. Գ.

Յիսուս՝ փրկիչ իմ, դուն գիտես իմ ամեն հո-  
գևոր ու մարմնաւոր պիտոյքս. գթած ես, ողոր-  
մած ես, կուղես իմ խեղճութեանս ճարը ընել.  
ու ամենակարող ես, կրնաս իմ ամեն կարօտու-

Թիւնս լեցընել: Անոր համար որչափ սաստիկ ըլ-  
լայ խեղճութիւնս, որչափ աւելի ըլլայ կարօ-  
տութիւնս, քու վրայէդ չեմ վերցընէր յոյսս,  
բողբովն քեզի կը յանձնեմ զիս. Ի քեզ քէր յու-  
սոցայ, մի ամաւելից յաւիտեան:

Յոյս իմ ես դու տէր, քաւիչ յանցանաց ի-  
մոց, մի անտես առնէր զըղկուսն արտասուաց  
իմոց, ողորմես ինձ աստուած:



### ՄՏԱԾԱԿԱՆ ՂԱ.

Քրիստոսի մարդկային կամացք իր երկնաւոր  
Հօրը կամբխի հետ հաւանակերպորեսեր  
վրայ :

### ՄԱՍՆ Ա.

Քրիստոս տերն մեր իր երկնաւոր Հօրը կամբք՝  
իր առջի ու գլխաւոր գործքը կը սեպէր. զեւ աշ-  
խարհը չէկամ՝ մարգարէին բերնովը ըսած էր. Ի  
գութիս գրոյ գրեալ է վասն ի՛մ, առնել զվասն, քո առ-  
դոսած ի՛մ: Ետքը աշխարհը ալ որ եկաւ, միշտ աս  
էր ըսածը. Ինչ էս յերկնոյ, ու զի զվասն ի՛մ արարեց,  
այն զվասն այնորի՛ն՝ որ առաքեալն զիս: Ինչ կերպով  
ալ իր Հօրը կամբք ընելը՝ յայտնի է, ամեն ա-  
նարգանք, ամեն չարչարանք յանձն առած՝ ին-  
չուան խաչին վրայ մեաւ իր Հօրը կամացը հնա-  
զանդելու համար. Լէալ հնազանդ. մահոս լաք, և մա-  
հո-խաւի: Չէ թէ դժուարութեամբ հնազանդելով  
այլ յօժարութեամբ ու սիրով. անսնկ որ՝ իր  
Հօրը կամբք կատարելը իր կերակուրը կը սեպէր.  
Ի՛մ կերպոսը այն է, զի արարեց զվասն այնորի՛ն՝ որ առա-  
քեալն զիս. ըսել կուզէր որ՝ ան էր իր զուարճու-  
թիւնը, ան էր իր ամեն բանէ վեր անորժամ բա-

նը: Ինչպէս անթի մարդու մը կերակուրէն ա-  
ւելի անորժեղի բան չիկայ, ասանկ ալ ամեն բանէ  
եւել անորժեղի էր Քրիստոսի՝ իր երկնաւոր Հօր  
կամբքը կատարելը, ու մասնաւորապէս մեր վեր-  
կուծիւնը՝ որուն համար եկեր էր, որն որ իր  
գործքը կը կոչէր. Չի արարեց զվասն այնորի՛ն՝ որ առա-  
քեալն զիս, և կապարեցեց զգործ նորա. ուրիշ սեղ ալ  
կրտէ. Չգործն կապարեցի, դոք եպոսոն յիս՝ զի արարեց:  
Ուրեմն Քրիստոս մեր փրկութեան համար մեռ-  
նելը՝ իր կերակուրը կը սեպէր, անոր համար զին-  
քը հարկաւոր կերակուրէն ալ կը զրկէր, անթի  
ծարաւ մեզի համար կաշխատէր. միանգամ մին  
ալ որ բազմայ մարմնաւոր կերակրոյ, ետեւն մեր  
փրկութեանը համար չարչարուելը դալուն հա-  
մար էր. Յանկանալով յանկացայ զայս պատէք ուրիշ ընդ  
յեւ. միւս ևաւարեալ իցե՛մ: Կրնայ մէկուն սիրաւ չե-  
շարժիլ ասիկայ մտածելով. Քրիստոս զմեզ վեր-  
կելը իր կերակուրը կը սեպէ, զմեզ փրկելու հա-  
մար քաղց ու ծարաւ կը քաշէ, ու մենք կերա-  
կուրնիս զբոսանքնիս ու հանգստութիւննիս ալ  
ունենալէն ետքը՝ զեւ կը դժուարինք իրեն ծա-  
ռայելու, ու աստուծոյ կամբքը կատարելու հա-  
մար՝ քիչ մը նեղութիւն քաշելու :

### ՄԱՍՆ Բ.

Երկնաւոր Հօրը կամբքն էր որ Քրիստոս զմեզ  
փրկելու համար աշխատի, քաղց ու ծարաւ քա-  
շէ, անարգութի, նախատուի, չարչարուի, ու խա-  
չին վրայ մեռնի. բայց Քրիստոս չքօսաւ որ աս բա-  
նէրն էին իր կերակուրը. թէ և նոյն բանը ըսած  
կըլար՝ ինչ որ կը նշանակէ ըսելը. Ի՛մ կերպոսը այն  
է, զի արարեց զվասն այնորի՛ն՝ որ առաքեալն զիս.

զի իր Հօրը կամքը այն բաներն էին: Ուրեմն ինչո՞ւ այն բաները լռեց, ու աստուծոյ կամքը միայն ըսաւ. վասն զի անոնք որչափ ալ աստուծոյ կամքն ըլլան, մարդկային բնութեան ծանր կուգան. չարչարանք ու նախասիրք կրեն ու մեռնիլը ըստ ինչքան ակտիւ էին: Բայց, աստուծոյ կամքն է՝ որ ակտիւ էլ կրնէ զանոնք. անոր համար՝ իմ կերակուրս աստուծոյ կամքը ընեն է ըսաւ: Մենք ալ մեր վշտաց ու նեղութեանցը մէջ ասանկ պէտք է ընենք. չմտածենք անոնց ծանրութիւնը, այլ յիշենք որ աստուծոյ կամքն է՝ որ անոնցմով կը կատարենք. ասանկով կը թեթեւանան անոնք մեզի, ակտիւ էլ կըլլան, ու մենք ալ մեր փրկչին հետ կրնանք ըսել՝ որ աստուծոյ կամքը մեր կերակուրն է. անակտիւ բան է նեղութիւն ու խաչքաշիլը, բայց որովհետեւ աստուած ասանկ կուզէ որ նեղութիւն ու խաչքաշիլով փրկուածան հասնիմ՝ ինծի ակտիւ էլ կերակուր կըլլայ քաշիլը, որչափ ալ բնութեանս գժար դայ՝ սիրով կը քաշեմ:

### ՄԱՍՆ Գ.

Աս ալ մտածենք որ Քրիստոս տէրն մեր էր ըսաւ աս խօսքը: Օր մը երբոր Սամարիայէն կանցնէր՝ Գալիլեա երթալու համար, Սուքար քաղաքը հասաւ. հոն Յակոբ նահապետին բացած ջրհորին քովը նստաւ անօթի ծարաւ, կէսօրուան տաքին, քաղէկէն յոգնած: Աշկերանները քաղաք գնացեր էին՝ կերակուր գնելու: Սամարացի կնիկ մը եկաւ ջրհորէն ջուր քաշելու. աս կնիկը խիստ ազեկ կնիկներէն չէր, հինգ երկի փոխեր էր, այսպիսին ալ հերթը է: Քրիստոս տէրն մեր ուղեց զինքը

դարձի բերել. ու իր ծարաւը պատճառ բռնելով՝ քիչ մը ջուր ուղեց իրմէն. ասով սկսաւ կամաց կամաց խօսքը հոգեւորի փոխել, կամաց կամաց կնիկը գլխէն անցածները ըսել, անանկ որ՝ կնիկը շուարած քաղաք վաղեց, ըսելով ամենուն. Յիէք տեսէք, կարծեմ որ Մեսիան էկեր է, ամեն գրէ խէս անցածը ինծի ըսաւ. Եկոյ՛ եւ պէտէ՛ դայք մի՛ որ ասաց ինչ պաշտօնայն, որ ինչ իմ գործեալ է. մի ինչ նա՞ էջէ՛ Քրիստոսն: Աս միջոցին որ Քրիստոս սամարացի կնիկանը հոգեւոյն փրկութեանը կաշխատեր, հասան աշկերանները, կերակուր բերին, ու ըսին Քրիստոսի. Ուրքէ՛, հաց ի՛ք: Հոս է որ ըսաւ Քրիստոս այն խօսքը. Ի՞նչ քերակուր այն է, ինչ քերակուր ըսաւ Քրիստոս մէկ կնիկան մը հոգեւոյն փրկութեանը համար անօթի ծարաւ զբաղած, կերակուրը աւելին պատրաստ՝ ու ինչքա՞ն իմ կերակուրս աստուծոյ կամքն է, այսինքն հոգեւոյն փրկութեանն է կրտէ. իսկ մենք մեր հոգեւոյն փրկութեանը համար քիչ մը նեղութիւն քաշել չենք ուղեր: Քրիստոս կնիկան մը հոգեւոյն փրկութեանը համար՝ անօթի ծարաւ կէսօրուան սրբուն տակը կաշխատի, իսկ մեզի ծանր կուգայ քիչ մը ծով բռնելը՝ սրբութիւն առնելու համար: Քրիստոս իր ակտիւ էլ կերակուրը կը սեպէ կնիկան մը հոգեւոյն փրկութեանը՝ աստուծոյ կամքը կատարելու համար, իսկ մենք մեր հոգեւոյն փրկութեանը՝ որ աստուծոյ աւջի ուղածն է մեզմէ՛, ամենէն ծանր բանը կը սեպենք:

Ա. Գ. Թ. Գ.

Յիտուս փրկիչ իմ, չորք տուր ինծի՝ որ ճանչնամ մէյմը՝ աստուծոյ կամացը համակերպութեանն դուրս ամենեկն երջանկութիւն մը չըլլաւ.

լը, ոչ աշխարհիս վրայ և ոչ երկինքը, ուր արդա-  
րոց երանութիւնը՝ աստուծոյ հետ նոյն կամբը  
ուենեալնին է: Ինծի ալ ատորժեղի ըրէ աստու-  
ծոյ կամբը, որ անկէց գուրս բան մը չիմնուեմ:  
ու իմ ամեն վիշտս ու նեղութիւնս թէթեցընեմ  
ըսելով՝ Եւեոյն կամք քո:

Որ կամաւ Հոր զարդարանս յանձն առեր, բանդ  
աստուած, ողորմեա:

Մեծառելոյ Հոր եակից ի խաչ ելեր կամաւ Հոր՝  
ողորմեա:

## ՄՏԱԾԱԿԱՆ ՂԲ.

Աշխարհս ներդարիւնները՝ աստուծոյ կամացը  
նետ հաւակերպորհաւար կրերու վրայ:

## ՄԱՍՆՅԱ.

Երբոր հիւանդութիւն մը կամ նեղութիւն  
մը կամ անարդանք մը, ուսկից և ինչ և իցէ կեր-  
պով գիմացնիս կեղէ, ու բնութիւննիս չուզէր  
ընդունիլ, պէտք է մէկէն Քրիստոսի խօսքը յի-  
շէնք՝ որ Պետրոս առաքեալին ըսաւ: Պետրոս ա-  
ռաքեալ երբոր տեսաւ որ Յուդա ղնուորներով  
Քրիստոսի վրայ եկեր էր՝ ղնիքը բռնելու համար,  
սուր քաշեց, ու քահանայապետին ծառաներուն  
մէկին ահանջը զարկաւ կորեց ձգեց: Ան ատենը  
Քրիստոս ծառային ահանջը բժշկեւէն ետքը,  
հրամայեց Պետրոսի՝ որ սուրը սեղը գնէ, ու ը-  
սաւ. Կուգես որ Հօրս տուած բաժակը չիխը-  
մեմ: Զբաժան, որ էր ինչ Հայր, ու ըմբոյն: Երբոր  
մեր բնութիւնը գէմ կեղէ վրանիս եկած վտացը,  
պէտք է մենք ալ մէկէն աս խօսքը ըսենք: Ընդու-  
նայն է զգայարանքներնուս հետ վիճելը՝ ղերենք  
համարելու համար. վասն զի չեն համարուիր, ու  
ընդհակառակն խիստ հնարաբէս են՝ իրենք զմեզ

համոզելու. ուստի ամեն պատճառներու տեղ  
Քրիստոսի աս խօսքը պէտք է ըսենք, որուն մէջը  
ամեն համոզուելու պատճառները կան. Զքա-  
ծակն, զբ եք ինչ Հայք, ո՛ւ ըմբօղիք՝:

### ՄԱՍՆ Բ.

Վիշտ ու նեղութիւն չեքաշելու համար՝ դգայա-  
րանքներնուս մեզի գէմ՝ բերած պատճառներուն  
ամենէն աւելի զմեզ խարօղը աս է. այն վիշտերն  
ու նեղութիւնները՝ որ մարդկանց չարութենէն  
տուաջ կուգան՝ Աստուծոյ էկած չենք սեպեր:  
Բայց Քրիստոս, թէ և գիտէր՝ որ Յուգայի ու  
քահանայապետներուն չարութենէն պիտոյ ա-  
ռաջ գային իր չարչարանքները, նախատինքը, մա-  
հը, բայց իր Հօրը տուած բաժակը կը կոչէ զա-  
նոնք. Զքածակն, զբ եք ինչ Հայք: Վասն զի պէտք  
չէ որ մեր քաշած նեղութեանը անմիջական պատ-  
ճառը նայինք՝ որ շատ անգամ մարդկանց չարու-  
թիւնն է, կամ աշխրբիս գիպուածներն են, այլ  
պէտք է մտածենք որ աստուծոյ առջին ոչ գի-  
պուած կայ, և ոչ մարդկանց չարութիւնը մեզի  
բան մը կրնայ ընել՝ թէ որ աստուած չիթողու-  
անոր համար Քրիստոս ըսաւ Պիղատոսի. Աւ ու-  
նէիք դոս իւխանոսիան ՚ի վերայ իմ և ու մի, ելէն ու էք  
դոսեալ գեղ ՚ի վերասոր: Աւրեմն ինչպէս կրնանք  
մենք բոլորովին մտնալ զաստուած, ու երկրոր-  
դական պատճառները միայն մտածել:

Երբոր Սեմէի կանխմանք զԴաւիթ մարգա-  
րէն, ու նախատական խօսքերով քարեր կը նե-  
տէր վրան, քովն եղօց զորավարները ուղեցին  
զինքը սպաննել. բայց Դաւիթ արգիլէց՝ ըսելով  
թողէք որ անիծէ, վասն զի աստուած կուզէ որ

ես անիծուիմ: Դաւիթ Քրիստոսի տեսն մերոյ  
օրինակը չունէր, միայն Հօգուով սրբով գիտէր ու  
մարգարեացներ էր Քրիստոսի քաշելու չարա-  
րանքներն ու նախատինքը. այսու ամենայնիւ ա-  
սանկ համակերպութիւն ունեցաւ աստուծոյ կա-  
մայը հէա, ու ասանկ քրիստոնեական իմաստա-  
սիրութիւն: Հասցա մեզի ամօթ չէ՞ որ Քրիստոսի  
օրինակն ու խրատները աչքերնուս զիմացը ունե-  
նալով՝ անհամբերութիւն ընենք, չուզենք նախա-  
տինք ու նեղութիւն քաշել, չուզենք խմել այն  
բաժակն որ աստուած մեզի կուտայ խմելու:

### ՄԱՍՆ Գ.

Բայց աստուած մեր հայրը ըլլալով ինչո՞ւ կու-  
տայ մեզի աս դառն բաժակը: — Հայք մը իր զա-  
ւակը դգուելով միայն՝ հայր կըլլայ, գգուելով մի-  
այն՝ զաւակը սիրած կըլլայ. հոս է մեր սխալմուն-  
քը: Հայք մը խրատելով իր զաւակը՝ աւելի կը  
սիրէ, քան թէ գգուելով. անոր համար Պօղոս ա-  
ռաքեալը առականց դրքին խօսքովը կը յորդօրէ  
եբբայեցիները՝ իրենց քաշած նեղութեանը համ-  
բերելու, ու կըսէ. Մի մտնաք այն միսիթարու-  
թիւնն՝ որ սուրբ գիրքը կուտայ ձեզի իբրև իր զա-  
կրներուն. Արդեա՞յ իմ, մի զամենի ՚ի խրատու դեառն,  
և մի վնասիցիս յանդիմանեալ ՚ի նմանէ. ուի զբ սիրէ սէր,  
խրատէ. սանջէ պաշնայն որդի՝ զբ ընդունի: Ետե՛ն ալ  
կաւելցնէ. Աստուած գձե՞լ կը խրատէ, զաւակը  
ներու տեղ կը դնէ. որ զաւակն է՝ որ հայրը  
չիխրատէր զինքը: Աւրեմն թէ որ աստուած ըզ-  
մեզ իրատելու համար կը խրիէ մեզի աս նեղու-  
թիւնները, ինչո՞ւ համար կը իրիէ մեզի աս նեղու-  
թիւնները կրնենք, սիրով չենք ընդունիր: Աս-

տուած իր անմեղ որդւոյն ալ չիմնայեց՝ մեր մեղքերուն համար. ուրեմն որչափ ևս առաւել կը հարկաւորի զմեզ պատժելու: Աստուած որդեսէր հօր մը պէս ըրաւ. հայր մը պղտի զաւակ մը ունենայ՝ որ անհնազանդութիւններ կընէ, ինչ կերպ կը բռնէ. մեծ զաւակը թէ և յանցանք մըն ալ չունենայ՝ պղտիկին առջին կը պատժէ, որպէս զի տեսնելով որ իր մեծ եղբայրը՝ հօրը տուած պատիժը կընդունի լուսթեամբ ու խոնարհութեամբ, ինքն ալ որ յանցաւոր է՝ պատիժը համբերութեամբ քաշէ: Աստուծոյ ըրաւ աստուած. զՔրիստոս իր անմեղ որդին՝ պատժեց, որպէս զի անկէջ սորվինք մեր պատիժը սիրով ընդունիլ. մանաւանդ զիտնալով որ յանցաւոր ենք, ու աստուած՝ մեր պատիժը անգին պահելու տեղը՝ ուր անհամեմատ աւելի աստտիկ պիտոր ըլլար՝ հոս կը պատժէ զմեզ:

Աս ալ մտածենք որ ինչ կը վաստակինք անհամբերութիւն ընելով. ուզենք չուզենք պիտոր քաշենք. թէ որ սիրով չքաշենք, խաչը վրաներնէս նետել ուզենք, անօգուտ կըլլայ, ու կը հարկաւորի աստուած ուրիշ խաչ մըն ալ խրկել մեզի: Աստուած բժիշկին ըրածը կընէ մեզի. բժիշկը մաքրողական դեղ կուտայ, թէ որ խմենք՝ իր օգուտը կընէ, կը խաղըսինք. իսկ թէ որ աս ինչ լեզի բան է ըսելով՝ դեղը բերներնէս դուրս տալու ըլլանք, հարկ կըլլայ որ բժիշկը նորէն ուրիշ մաքրողական մըն ալ տայ: Ուրեմն աստուծոյ խրկած նեղութիւնը որչափ ալ ծանր գայ մեզի, համբերութեամբ ընդունինք. բնութիւննիս դէմ ելլելու որ ըլլայ, ըսենք. Դեղ մըն է որ պէտք է ընդունինք, բաժակ մըն է որ պէտք է խմենք, բժիշկ մըն է տուօղը՝ որ մեր բարւոյն համար կուտայ, հայր մըն է տուօղը՝ որ զմեզ կը սիրէ. Զբաժանի, ար եր ինչ Հայր, ու ընդդէմ:

Ա. Ղ. Օ Թ Բ

Յիտուս փրկիչ իմ, շնորհակալեմ որ ամեն բանի բարի օրինակ տուեր ես մեզի. ինչ է իմ քաշածս քու քաշածներուդ բովը՝ որ չիհամբերեմ: Մանաւանդ որ քու քաշածներովդ զօրութիւն ալ ընդուներ ես մեզի համար երկնաւոր Հօրմէդ, որպէս զի կարենանք համբերել: Ասկէջ ետքը խրկէ ինձի ինչ խաչ որ կուզես, միայն թէ առաջուց զօրացուր զիս շնորքովդ՝ որ սիրով տանիմ խրկած խաչդ:

Որք զբաժակ մահու ընդ քեզ արբին, և մկըրտութեամբ արեան ընդ քեզ մկրտեցան, որք և զիտա իւրեանց բարձին զկնի քո, և անմեկնելի սիրով ընդ քեզ խաչակցեցան, սոքօք տալաւմք՝ ողորմես:

## ՄՏԱԾԱԿԱՆ ՂԳ.

Քրիստոսի կռուէն խաչը ուսերնիս առած  
կրքաբու վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Երևակայենք որ մեր փրկիչը՝ խաչը կռնակը առած՝ Գողգոթա լեւը կելլէ. բայց հետը քահա- նայապետներ զպիրներ զինուորներ ու իր թնա- միները ըլլանուն ահա՛ր բոլոր իր աշխարհները ու սիրելիները ետեւն: Երևակայենք որ աս կերպով Գողգոթա ելլելու առնելը՝ սուրբ աւետարանին մէջը ըրած հրաւերքը ընէ մեզի: Եթէ ոչ կա՞ր ղինի ի՞մ գաւ, առջէ ղխաւ ի՞նչ եւ էլէնցէ ղինի ի՞մ. որ ոչ առ- նաւ ղխաւ ի՞նչ եւ գայ ղինի ի՞մ, լէ ինչ արժանի: Աս աւե- սարանին մէջը գանուելով, ու մեր փրկչին բերնէն աս խօսքը լսելով, ի՞նչ պիտոր պատասխանէնք ի- րեն. թէ որ բոլորովին խելւրնիս ալ՝ զգացմունք- նիս ալ չենք կորսնցուցեր, պէտք է ըսենք. Ո՛վ սիրելի փրկիչ մեր, քեզմէ ուրիշ որո՞ւն ետեւն կրնանք երթալ, որ մեզի յաւիտենական երջան- կուածիւն ապ. Տէր, առ մ՛ երթիցոս, բանս կենաց յա- տիւրեանիւնաց առնիս: Ինքն ալ մեզի կրտ. Ապէկ է, թէ որ աս որոշմունքը կրնէք, ու իրաւ կուզէք

ետեւս գալ, պայման մը միայն կը դնեմ՝ ձեզի- իմ լուծս վրանից առէք, այսինքն խաչ մը կռնակ- նից առած ետեւս եկէք. Սուրբ Կրք ի՞մ ի՞նչ:

Աս պայմանն է, աս խօսքն է, որ աշխարհառէր մարդկանց ծանր կուգայ, ուսկից մեր անձնասի- րուածիւնը կը խորշի. վասն զի ոչ երբէք աղէկ մը կը քննենք մեր փրկչին խօսքը, ոչ երբէք աղէկ մը կը հասկընանք խօսքին միտքը: Աս խօսքը մեր վրայ բեռ մը դնելու առնն՝ որ մեզի ծանր ու ան- սանելի կերենայ, ամեն կերպով կը թելթեղնէ անոր ծանրութիւնը, ու անանկ կընէ որ զիւրաւ կարենանք ասնիլ: Տանելու խաչերնիս հասարակ խաչ մը չէ, այլ Յիսուսի խաչն է. բայց մինակ պի- տոր շխտանիք զանիկայ, այլ Յիսուսի ետեւն, Յիսուսին հետ, ու Յիսուսին համար: Զօրավար մը՝ որ արխաբար ամեն վտանգ աչքը առած, ա- մենեւին չեթողար իր զօրքը, աչքնուն չիհեռա- նար, ապլենէն կերթայ, ի՞նչ դժուարութիւն կը մնայ զինուորներուն իր ետեւն երթալու: Թէ որ տարակուսին, անտանս, չուզէն ետեւն երթալ, մեծ ամսթ ու նախաախիք չըլլար իրենց. զինուորի մը չափ ալ չեկանք, կամ թէ զինուորէ մը պա- կան պարտական ենք՝ Քրիստոսի հաւատարիմ ըլ- լալու. մեծ ամսթ չէ մեզի, որ ինքը ապլենէս եր- թայ իր յաղթութեանը վրայ ապահով, ու մենք վատ ու գաստիւք զինուորներու պէս՝ ետե կե- նանք, ետ գառնանք, փախչինք պատերազմէն:

## ՄԱՍՆ Բ.

Քրիստոսի գալէն առաջ արգարները աս քաջա- լերութիւնը չունէին. կը վախնային, առաջնորդ մը չունէին՝ որ զերենք արխաղներ, Քրիստոս առ- ջենէն չէր երթար որ վտահաւածութեամբ ետեւն

երթային. բայց այսու ամենայնիւ ինչէր չեքա-  
 շեցին աստուծոյ համար: Պօղոս առաքեալը ա-  
 ղէկ կը նկարագրէ քաջածնին, սով, ծարաւ, ար-  
 սոր, հալածանք, ծեծ, կապանք, բանտ, բար-  
 կոծակը, սղոյուելը, թուրով սպանուելը, ասոնց  
 ամենն ալ քաջեցին, ամենուն ալ համբերեցին,  
 ակարուժիւննին չնայեցան, զիմեցին 'ի սրտաւ-  
 րազմ: Զօրացան 'ի սխարուէնէ, եղէն զբաւորք 'ի պա-  
 րեբաւի: Հոս է մեր ամաչելու տեղը. անոնք Քրիս-  
 տոսէ առաջ աս ամեն բաները համբերուժեամբ  
 քաշեցին, ու ինչ որ ծանրագոյն խաչ կրնայ ե-  
 րևակայուել՝ ամենն ալ աստուծոյ փառացը հա-  
 մար միայն թեթևացաւ իրենց: Իսկ հիմայ որ մեր  
 փրկիչը չէ թէ միայն նոյն աստուծոյ սիրովը զմեզ  
 կը յորդորէ, այլև առջնէն կերթայ՝ մեզի օրի-  
 նակ ու սիրտ աալով, այսու ամենայնիւ թեթև  
 խաչերը մեզի ծանր կերևան, ու կը լքանինք: Զա-  
 ժէր որ Պօղոս առաքեալը զմեզ ալ գաղատացուց  
 պէս յանդիմանէ, որ աչւննուս առջին Քրիստոս  
 խաչ ելած անստով զեռ կը զանգաղինք. Որոյ  
 գրեթէ առաջի ալայ Յիսուս Քրիստոս գրեցաւ՝ 'ի խաւ ե-  
 լեաւ: Զաժէր որ ըսէ մեզի. սով վատ քրիստոնեա-  
 ներ, թէ որ ձեր փրկիչը առջնէնդ ծանր խաչը  
 կանակը առած անստով ձեր թեթև խաչը սիրտ  
 չէք ըներ տանելու, ինչո՞ւ իր անունը վրանիդ ա-  
 սեր էք, արժանի չէք աս փառաւոր անուանը:

Իրած՝ ինչ է մեր քաջածը Քրիստոսի քաջած-  
 ներուն քովը, կրնանք զմեզ իր հետը բաղդա-  
 տել: Որգին աստուծոյ իր փառքը մեկիկ դրած,  
 բոլոր իր ազգին անօրէնութեանը ու կատաղու-  
 թեանը նպատակ եղած, ատեանէ ատեան քշուե-  
 լով՝ ու յանցաւորի մը պէս զբարտաւթիւններ  
 կրելով՝ իր արարածներէն անիրաւեաբար գտտա-  
 պարտուած, խաչի վրայ երկու աւաղակներու  
 մէջ աչւննուս առջին մեռած անսնէնէն հաքը,

մեր քաջածը իրեն քաջածներուն հետ բաղդա-  
 տելը՝ վատուժենէ անդին ալ կանցնի, ու կըլլայ  
 անստութիւն. Ո՛ր սխար գաղատացիք, որոյ գրեթէ ա-  
 ռաջի ալայ Յիսուս Քրիստոս գրեցաւ՝ 'ի խաւ ելեաւ:

### ՄԱՍՆ Գ.

Հարկաւոր բանն որ աս խօսքերէն սկստը հա-  
 նենք, ու մտքերնուս մէջ խորունկ տպաւորենք,  
 աս է: Մեր փրկիչն որ զմեզ իր ետեւէն երթալու  
 կը հրաւիրէ, ինքը մեր առջնէն կերթայ. քանի  
 որ մենք սիրով յանձն առեր ենք իր ետեւէն եր-  
 թալու, ինքը զիմայնէս չիհեռանար, ու քանի որ  
 ինքը մեր հետն է, երկինք ալ վրանիս կրնայ, եր-  
 կիր ալ սոււրնուս սակը բացուի, ամեն նեղու-  
 թիւն ու զժբաղդուժիւն ալ վրանիս գայ, վախ-  
 նալիք չուհինք. վասն զի մեր փրկիչը հեռերնիս  
 է, իր ամենակարող զորութեամբը ամեն բանի  
 յաղթող կրնէ զմեզ: Անանկ որ՝ խոնարհ ու սուրբ  
 վատահուժեամբ մը կրնանք ըսել՝ Գաւթի՞մ մտը-  
 ցարկին հետ. Տէր այս ի՞նչ է քեանք ի՞նչ, էս յոսմէ՞ եր-  
 ինայ. Ընդ որստպէսցի 'ի վերայ ի՞նչ պարբաղմ, ու երկի-  
 ցն 'իբր ի՞նչ. Ընդ որստպէս 'ի վերայ ի՞նչ ճակատամարտ, ստիպն  
 էս այսո՞րի 'ի թեղ, քեր, յոստայ: Քանի որ մեր փրկիչը  
 հեռերնիս է, ամեն բան առջնէնիս կը զիւրննայ,  
 ամեն բան կարելի կըլլայ. Յաճեսոյնի կարող է՞մ այ-  
 նա՞՛ որ զբացոյցն դիս: Մեր ակարուժեանը նայելու  
 որ ըլլանք, զարմանք չէ որ անտանելի երևնայ մե-  
 զի՞ խաչը կանակնիս անսնել ու Քրիստոսի ետեւէն  
 երթալը. մենք մեր վրայ միայն կը նայինք, անոր  
 համար է որ կը վախնանք, կը տագնապինք ու կը  
 լքանինք. սուրբերն ալ իրենց վրայ նայելու որ  
 ըլլային, կը յուսահատէին. բայց որովհետեւ միշտ

ազընուն առջին ունեկն զՔրիստոս, ու կը յիշէին իր խօսքն որ ըսաւ՝ Եւ ահա էս ընդ յեւ էմ փնչն՝ ՚ի կապարած աշխարհի, ասով էր որ կը զօրանային, ու ամեն տառապանաց մէջ զերէնք երջանիկ կը սեպէին: Մոյն աեղը՝ որ անոնց զօրութիւնն տուաւ, մեզի ալ պատրաստ է ասլու. անոնց ըսածը մեզի ալ կըսէ. Եկայք առ իս ամենայն վասպալեալք և բեռնաւորք, և էս հանդոցից ղ յեւ: Մէկ զիէն լուծ կը գնէ վրանիս, մէկալ զիէն կը քաղցրացնէ գրած լուծը. կարծես որ բեռ կը գնէ վրանիս, բայց կը թէթեւցընէ գրած բեռը. անոր համար է ըսածը. Զի ւրծ իմ գաղտը է, և բեռն իմ խորհրդի:

Ա. Գ. Օ Թ. Գ

Յիսուս փրկիչ իմ, կորչնեմ զքեզ՝ որ քու օրինակովդ ու շնորբովդ ասանկ կը թէթեւցընես մեր նեղութիւնները: Հէրիք չես սեպեր՝ որ քու չար չարանքներովդ անոնք արդիւնաւոր ըրիր մեզի, կուզես ալ որ մխիթարուինք անոնցմով, կուզես որ տուած երանութիւններդ ասկէց սկսինք փորձել խաչ քաշելը մեզի մխիթարանք գործընելով: Կընդունիմ սիրով քու ձեռքէդ իմ խաչս, կը գրկեմ, ուսս կ'առնեմ, էտեւէդ կուզամ, չեմ բաժնուելիր քեզմէն, վստահ ըլլալով՝ որ չես թողոր զմեզ, մեզմէն չես բաժնուելիր՝ քանի որ մենք քեզ մէն չենք բաժնուած:

Որ խոստացար լինել ընդ մեզ մինչ ՚ի կատարած, անանջրպետք ՚ի քէն վարժողաց, և այցելու մեղաւորաց սրտացելոց ՚ի բանասրկուէն ՚ի խաւարային նոր կամս, քաղցրութեամբ քո աեղ խնայեա ՚ի մեզ:

ՄՏԱ. ԾԱ. ԿԱՆ Դ. Գ.

Քրիստոսի քաղցր հրաւերքն որ կընես անկուս:

ՄԱՍՆ Ա.

Այստեղ անջրգի անապատ մըն է, արքայութիւն երթալու ճամբան մոլորխոսանքէն ու փուշերէն՝ այսինքն մուտթիւններէն ու մուրրութիւններէն գոցուած, աստուծոյ շնորբին գեաերն ալ ցամբած. Որտէս էրիք անապատ և անջուր, ուր ու գոյ ՚ի նմա ճանապարհ: Ասոր մէջը ճամբորդութիւնը նստները մենք ենք, որ նրթալու ճամբանիս չենք գիտեր, ու ծարաւէն ալ ուժերնիս կարած՝ չենք կրնար քալել. ուրիշ ճար չիմնար, բայց ինդրէլ Աստուծմէ՝ ինչպէս Իսաիթ մարգարէն կընէր՝ որ իրեն ճամբայ ցուցընէ. Յոյց ինչ ճանապարհ՝ յոր գնացից: Աս մեր նեղութեանը վրայ զթալով Քրիստոս աեղ մեր զմեզ կը հրաւիրէ ըսելով. Եկէ ոք ծաւալի իցէ, եկեացէ առ իս և արբցէ. էս էմ ճանապարհ և ճամբորդութիւն և կէսնս: Իր ետեւէն գնացողներն են միայն՝ որ չեն մըլըրիր, ինքն է միայն մեզի արքայութեան ճամբան ցուցընողը, ինքն է միայն որ սս անջրգի երկրիս վրայ ծարաւած աստեանիս՝



մեզի ջուր կուտայ, ու կը զորացնէ զմեզ՝ ճօ՛ւ՛ բանին առաջ տանելու: Ուրիշները ծարաւնին անցընելու համար՝ կիրքերնուն ետեւն կերթան, ու կիրքերը ծարաւնին անցընելու տեղը՝ աւելի կը ծարուեցընեն: Իսկ Քրիստոս զմեզ իրեն կը հրաւիրէ, ու անանկ ջուր մը կուտայ մեզի՝ որ ծարաւնին անցընելէն ՚ի վատ, սրտերնին ալ կը բանայ: Բաւիթ մարգարէն առաջուց աս ջուրին համար ըսած է. Ձորդիս քափոն-նեան քո քառնս ըմպել նոցա, և ի՛նչ էն է, քեր, աշքիւր կենաց: Աս այն ջուրն է՝ որուն համար ըսաւ Քրիստոս. Որ ըմպէ՛ ՚ի ջրոյն, ևր էս քաց նմա, մի ծարաւեացի յառիպեան. այլ ջուրն, ևր էս քաց նմա, եղիցի ՚ի նմա աշքիւր ջրոյ բռնեցելոյ ՚ի կեանսն յառիպելից. այս ինքն անանկ ջուր մըն է իմ տուածս, մինչև արքայութիւն կը հասցընէ խնօղ:

### ՄԱՍՆ Բ.

Սամարայի կինը թէ և Քրիստոսի խօսքը աղէկ մը չհիշատակեցաւ, այսու ամենայնիւ խնդրեց իրմէ աս ջուրը. Տէր, քորք ինչ և ջուրն և այն, և ի մի ծարաւեացոյն մի էիք այսր հանել ջուր: Նիւթակիան աշխատանքէ խաղտուելու համար խնդրեց Քրիստոսի ըսած ջուրը, կարծելով որ իրաւցընէ նիւթակիան ջուր էր ըսածը, ու այն ջուրը խնօղ՝ չէր ծարուէր, ու չէր կարտուեր ջրհորէն ջուր բաշխուլ: Իսկ մենք որ գիտենք Քրիստոսի տուած ջուրը՝ Հոգւոյն սրբոյ շնորքը ըլլալը, փափաքինք ու խնդրենք անիկայ, որպէս զի մեր ախախց ու կրից բոցը մարէ, աշխրբիս սնտախ բաներուն ծարաւը անցընէ մեզմէ, մաքրէ զմեզ մեր մեղքերէն, ու մեր Հոգւոյն ուժ ասոյ արքայութեան ճամբան երթալու: Ով որ կենդանի հաւատաւ իր սուրբ կը

գիմէ. գետի պէս առատ կընդունի Հոգւոյն սրբոյ շնորքը. Որ հասարայ յիս, գեպտ յորովայնէ նորա բռնեցելոյ ջրոյ կենդանութեան: Սուրբ աւետարանիչն ալ կը հաստատէ՝ որ աս գետը Հոգւոյն սրբոյ շնորքին համար ըսաւ Քրիստոս. Չայս սակը վատն Հոգւոյն, ևր ընդունելոց էին՝ որք հասարայնն ՚ի նա: Ասիկայ սուրբերուն ու ջերմեանդ հաւատացեալներուն վրայ յայտնի կը տեսնանք. իրենց ամեն խօսքը աստուծոյ շնորքովը լեցուած՝ ասոյն բուն օգուտ կընեն՝ գետերու պէս անոնց սիրով ուսողելով, ու հոգևոր պաղտաբերութիւն ընելով:

### ՄԱՍՆ Գ.

Աս շնորքը մասնաւորապէս գրողմն խորհրդով կընդունինք, բայց ուրիշ ամեն խորհուրդներն ալ աս գետոյն աղբիւրներն են, որ Քրիստոս բացաւ մեզի համար՝ անոնցմով մեզի ամեն պէտք եղած շնորքները ընդունելու: Եւ որովհետեւ ասոնք Քրիստոսի իր ջարջարանքներովը ու մահուամբը վատաղկած արգիւններուն զինն են, քանի որ ինքը չէր մեռած ու երկնաւոր Հօրմէն չէր փառաւորուած, չէինք կրնար ընդունել: Զի լսէ Հոգի, քանի Յիսուս լսէ քառասուրբալ: Ուրեմն իրեն պարտական ենք, չէ թէ միայն աս շնորքները մեզի համար պատրաստելուն, այլ նաև սուրբ խորհուրդները հաստատելուն համար, որոնցմով որչափ որ սակպ ուղեւոր ըլլանք՝ կրնանք շնորք ընդունել, ու Քրիստոսի արգեանցը մասնակից ըլլալ:

Ան ալ մտածենք որ ինչ կերպով Քրիստոս զմեզ հրաւիրեց աս շնորքները ընդունելու: Չատկի ստնին վերջի օրն՝ որ ամեն օրւնէ ետէլ հան-

գիտաւոր էր, ու աւելի բազմութիւն կը լէցուէր տաճարին մէջը, ոտքի վրայ կեցած, ամուր ձայնով որ ամենքը լսեն՝ աղապակեց: Քրիստոս էր աղապակօղը, որուն համար Եսայի մարգարէն կը սէ՛սէ՛ Ոչ աղաղակեցի, և ոչ ոք լռիցի՛ ՚ի հրապարակս զբարբառս նորս: Ինքը տաճարին մէջը կեցած աղապակեց՝ Ի վերջնում ասոր մեծի ասիսն էայր Յիսուս, աղաղակի և սուէր. Եթէ ոք ծարաւի իցի, եկեացի աս իս և սրբցի:

Ա. Ղ. Օ Թ. Կ

Յիսուս փրկիչ իմ, ինձի ալ լսել տուր աս քու ձայնդ, աս քու քաղցը հրաւերքդ. ինձի համար ալ աղապակէ՛ որ լսեմ, վասն զի աշխրբիս հազար ու մէկ ձայները արգելք են ինձի՛ քու ձայնդ լսելու. բարձրացուր քու ձայնդ, որ անոնցը չիլսեմ. մանաւանդ թէ բոլորովին լռեցուր անոնցը, որ պէս զի քու կինդ միայն լսեմ, դամ աս քեզ՝ ծարաւս քեզմէն աւելելու. տուր ինձի քու անուշ ջրեզ, զոչխո քափիւմէսն քո, որպէս զի կարօս չքլամ աշխրբիս զբօսանքներուն. Տէր, քորք ինչ զնորս պայն, զի մի ծարաւեցայց և մի եկից այսր հանել ընդ:

Որ աղբիւրդ էս ծարաւեաց և հանգիստ աշխատելոց, ճանապարհ մտրերեց և հովու հոգեւոր բանաւոր հօտի, փափաքողացս աս քեզ, Քրիստոս, լեր նաւահանգիստ և արբո մեզ ծարաւեացս զբաժակ քո քաղցրութեան յանսպաս աղբերէք:

## Մ Տ Ա. Ծ Ա. Կ Ա Ն Ղ Ե .

Նորէն եոյն հրաւերքիկ վրայ, որն որ Քրիստոս կընէ ամենուս:

## Մ Ա Ս Ն Ա .

Որոնք որ իրենց մխիթարութիւնը աշխրբիս բարեացը վրայ դրած են, անոնց ետեէ են, ու անոնց համար կաշխատին, շատ թշուառ են. վարձքի անց բեռ կընդունին. վասն զի ուզածնին հոն կը փնտրուեն՝ ուր որ չիկայ, ու բարիք կարծածնին՝ որոնցմով կուզեն կշամանալ՝ աղի ջուր կը նմանի, որ ծարաւը անցնելու տեղը՝ աւելի կը գրգռէ. Ամենայն ոք ըմպէ ՚ի ջրոյ յայդմանէ, մասնագամ ծարաւի: Այսու ամենայնիւ այն բարիք կարծածնին ալ՝ դիւրաւ չեն կրնար ձեռք բերել, սուղի կը նստի իրենց, առողջութիւննին կը մաշեն, ու երբեմն կեանքերնին ալ կը կորսնցնեն: Աս ալ հերիք չէ, մեղաց վտանգներէն ալ չեն խաղտիր՝ որ ամենէն ծանր բեռը ան է, ինչպէս Դաւիթ մարգարէն կըսէ. Անբէնութիւնս իմ որպէս բեռն ծանր ծանրացան ՚ի վերայ իմ. Ասանկ ընդունայն աշխատողներուն ու բեռնաւորներուն է՝ որ Քրիստոս իր քաղցը հրաւերքը կընէ. Եկայ՛ աս իս ամենայն

Չափափեալս և բեռնաւորս, և Էս հանգուոյնց զյէզ: Ո՛հ, ինչ սրտաշարժ հրաւելքը, մէկը դուրս չիմգեր, ամենքն ալ կը հրաւելրէ. Ամենայն Չափափեալս և բեռնաւորս: Քրիստոս է հրաւելրողը, աստուած է, մեզի պէտք մը չունի. մենք որ ամեն կարօտութիւն ունինք իրեն, մեզի կիկնար իր օտքը զիմեւ: Բայց ինքը ասանց մեզի սպասելու՝ կը հրաւելրէ զմեզ, ու կը հրաւելրէ, երբոր մենք զինքը թողեր ու ուրիշ միտմարութիւն կը փնտրենք, ծանր բեռներու տակ ընդունայն աշխատելով: Ասանկ քաղցր հրաւելքը չընդունէին մեծ ի՛նչ ապերախտութիւն կրնայ ըլլալ:

### Մ.Ա.Ս.Ն Բ.

Իսկ թէ որ Քրիստոսի հրաւելքը ընդունինք, ու իրեն դիմենք, նախ բեռերնիս կը թեթեւցընէ՝ աշխրբիս ծանր լուծը վրաներնէս վերցընելով, ինչպէս Նաայի մարգարէին բերնովը կը խոստանայ. Ն- եղիցի յաւոր յայնմիջ Բարձր լուծ նորս ՚ի պարանոցէ քոմէ. ետքն ալ այն բարեկէն որ ընդունայն աշխրբիս զբօսանքներուն մէջը կը փնտրուէինք՝ ինքը եւելքը կուտայ. Ահա ՚ի բարութենէ զցանկաւիսն քո: Վասն զի այն սրտի տագնապն որ խղճմանքի անհանդարտութենէն կուգայ՝ կը վերցընէ, ու աւոր տեղը անպատմելի ուրախութիւն մը կուտայ՝ որ խղճմանքի հանդարտութեան պտուղն է: Անանկ որ մարգուս հօգին կը զորանայ աստուծոյ շնորհովը, ու կարծես թէ ինքը զինքը նոր կը ստանայ, ու կը սկսի արքայութեան ճամբան երթալ, ինչպէս Դաւիթ մարգարէն իր վրայ կրսէ. Դարձոյց զանէն ի՛մ առ իս, և առաջնորդեաց ինչ ՚ի ճանապարհս արդարութեան: Աս է հանդիսան որ Քրիստոս մեզի

կը խոստանայ ըսելով. Նայս առ իս ամենայն Չափափեալս և բեռնաւորս, և Էս հանգուոյնց զյէզ:

### Մ.Ա.Ս.Ն Գ.

Իրաւ է որ աստուծոյ ծառայելու համար ալ աշխատանք պէտք է, մեր բնութեանը դէմ պիտոր պատերազմինք՝ արքայութիւնը ձեռք ձգելու համար. Արդարութեան երկնից Բռնադապի, և Բռնա՛յ յափափէն զնա: Բայց աստուածային միտմարութեանն ու սրտի հանդարտութիւնը՝ մարգուս աշխատանքը կը թեթեւցընէ. անոր համար է որ կրէս ինքն Քրիստոս. Չի լուծ ի՛մ քաղցր է, և բեռն ի՛մ քոքոգի: Թէ որ իր պատուիրանները զժուարութիւն չունենային, չէր ըսեր Քրիստոս նեղ և անյոյ է ճանապարհն՝ որ քանի ՚ի իննս, և ոչ լուծ ու բեռն կը կոչէր զանոնք. Բայց իր պատուիրանքները պահէ ընդու զժուարութիւնը՝ աշխրբիս ծառայելուն հետ բաղդատելով՝ անանկ կը դիւրինան, որ Քրիստոս անոր համար աս սիրուն բացարութիւնը կրնէ՝ ըսելով. Իմ լուծս քաղցր է, ու բեռս թեթեւ. Առէ՛ք զլուծ ի՛մ ՚ի յեղ, զի լուծ ի՛մ քաղցր է և բեռն ի՛մ քոքոգի: Աս խօսքիս ճշմարտութեանը ուրիշ ապացոյց ալ որ չըլլար, հէրիք էր միայն անանկն որ աշխրբիս ծառայողները մշտաժոհ՝ ու անհանգիստ են, իսկ Քրիստոսի ծառայողները զոհ՝ ու հանգիստ: Վասն զի թէ որ երկու ծառայութեանը զժուարութիւնները հաւասար ալ ըլլային, զարձեալ Քրիստոսի ծառայելը աւելի ընարելի կըլլար, որովհետեւ ինքը կօզնէ մեզի ու ամեն զժուարութիւն կը թեթեւցընէ իր շնորհովը. Հոգին ՚ի Բիխանս հասունէ պիտրութեան մերոմ: Իսկ աշխարք իր խոստացած երջան

կուժիւնը տալու համար՝ ինքը չօգնէր, կը թու-  
ղու որ մարդս ինքիբէն աշխատի, հօգին էլլէ. ինչ-  
պէս Փարաւան իտրայէլացոց աղեսս շինել կու-  
տար՝ առանց իրենց պէտք եղած յարգն ու եղէգը  
տալու. կուղէր որ յարգն ալ իրենք ճարեն. Իսո-  
յէնչէն երեսոյս Ժողովոցէս քեզ յարգ բտելով: Ուրեմն  
մեր ընելու ընտրութիւնը՝ աս երկուքին մէջն է.  
Քրիստոսն ծառայել՝ որ կօչնէ կը զօրացնէ ու  
կը մխիթարէ զմեզ, թէ աշխրբի՝ որ Փարաւանի  
պէս զմեզ բռնի կաշխատացնէ, առանց օգնելու,  
առանց պէտք եղածը տալու:

Սուս ենթացրուծիւն մըն ալ ընենք՝ որ Քրիս-  
տոսի ծառայելը աւելի ծանր ըլլայ, քան թէ աշ-  
խրբի ծառայելը: Բայց աշխրբի ծառայօլը կրնայ  
մաքէն հանել՝ որ օր մը պիտոր լմընայ իր վայել-  
քը, ու ան ատենը ինչ պիտոր ըլլայ իր վիճակը.  
Իսկ Քրիստոսի ծառայօլը՝ որչափ ալ զինքը այն  
վայելքներէն զրկէ, գիտէ որ օր մը իր աշխատան-  
քը պիտոր լմընայ, ու յաւիտենական երջան-  
կուծիւնը պիտոր սկըսի. ուստի Պօղոս առա-  
քեալին պէս կըսէ. Չբարոս պատերազմն պատերազմե-  
ցայ, ու ընկաջն կապարեցի, ուստի պահեցի. այսո-  
հէ-  
պէս կայ և ինչ ինչ արդարութեան պատիւն՝ զոր հապտօղէ  
ինչ րէր: Անմտութիւն է ժամանակաւորին համար՝  
յաւիտենականը կորսնցնել:

Ա. Ղ. Օ թ. Գ

Յիսուս փրկիչ իմ, կընդունիմ քու քաղցր հրա-  
ւերքդ, զիւր քու քաղցր լուծդ իմ վրաս, ինծի  
անիկայ բեռ չէ՝ այլ թեւ, ինչպէս թուրքներուն  
թուրքն որ աուեր էս՝ իրենց բեռ չէն, այլ թե-  
թուութիւն, ասանկ ալ քու քաղցր լուծդ ինծի

թեթուութիւն է: Բայց ծանր ալ որ ըլլար, դար-  
ձեալ սիրով կընդունէի. վասն զի միայն քեզմէ  
եկածն է բարի, քեզմէ դուրս բարիք չիկայ. ամեն  
ընտրութիւն, որ գուն չէս, կարօտութիւն է:

Չքեզ՝ որ յամենայնի զթած և մարդասէր  
տէրդ էս՝ աղաչեմք հանապօղ, զի զօրացուցէս  
զմեզ օր ըստ օրէ կալ՝ ի կարգի կրօնաւորութեան  
մերում. թեթեւացի տէր զքաղցր լուծ քո՝ զոր  
եդեր ի վրայ մեր, զի կարացուք կալ ի պատուի-  
րանի քում, և զհաճոյսն աննել առաջի քո յա-  
մենայն ժամ:

# ՄՏԱԾԱԿԱՆ ՂԶ.

Ինչ որ մեր փրկոչընկեր համար կոչոք  
մեզմե Քրիստոս:

## ՄԱՍՆ Ա.

Առանց աստուծոյ շնորքին չենք կրնար փրկուիլ. Առանց ի՞նչ ուրիշ խնայող և արեւել կրտս Գրիստոս. բայց ասով չիմացուիր՝ որ մեր կողմանէ ընկելք չունենանք. մարմնաւոր կեանքը աստուած ինքերեն առաւ մեզի՝ զմեզ ոչնչէն ստեղծելով, բայց հոգեւորը անանկ չէ. սուրբ Թգոստինոսին ըսածին պէս, Որ ստեղծն դէպք առանց քո՞ ուրիշն ոչնչ առանց քո: Ուրեմն ամենէն առաջ կամք պէտք է մարդիկ բան մը որ ուզեն՝ ինչ կրնեն. վաճառական մը հարստանալ որ կուզէ՝ ինչ կրնէ. զօրական մը անուն վասարկիլ որ կուզէ՝ ինչ կրնէ: Բողձանքը ամեն բանի ձեռք զարնել կուտայ՝ իրենց վախճանին հասնելու համար, ու ամեն բանէ զգուշանալ ինչ որ արդէք կըլլան հասնելու: Ուրիշ ինչ բանի ալ զբաղին, մտքերնէն չէլեր իրենց բուն վախճանը. կամքը միշտ գէտ ՚ի հոն կառաջնորդէ իրենց: Ասանկ պիտոր ըլլայ մեր կամքն ալ փրկութեան հասնելու. Եթէ ոչ ՚իսի

չի՞նի ի՞նչ գալ. ամենէն առաջ կամքը կը զնէ. անոր ետեւէն ուրիշ երկու բան ալ կուզէ իր ետեւէն երթալու համար, այսինքն Ուրառի դանին, և առջէ չիտալ իւր հանապաղ, և էլէնդէ դէտ ի՞նչ:

Ուրեմն փրկուիլ ուզողը պէտք է իր անձնաւորութիւնը անանկ բռնէ՝ որ աստուծոյ սիրոյն գէտ չէլէ, ինքը զինքը աստուծոյ համար սիրէ, ինք իրմէն հրաժարի: Աս հրաժարումը իրէք աստիճան ունի. առջինն է մահացու մեղքերէն ետ կէտալ, մահ յանձն առնուլ՝ քան թէ աստուծոյ շնորքը կորսնցընել: Երկրորդն է ամեն կամաւոր ներելի մեղքերէն ետ կէտալ: Երրորդը՝ ջանալ մեր պակասութիւնները շտկելու, զսպելու մեր անձնասիրութիւնն՝ որ ամեն գործքերուս մէջ կամացուկ մը կը մանայ, նաև բարեգործութեանց մէջ: Ուրեմն թէ որ մեղքէ մը կը յաղթուինք, թէ որ կիրք մը արդէք կըլլայ մեզի փրկութեան ճամբուն մէջ առաջ երթալու, ըսել է որ չենք ուրացեր զմեզ, մեզմէ չենք հրաժարած, Քրիստոսի առջի խօսքը չենք պահէր՝ Ուրառի դանին: Երկրորդ ուզածն է որ խաչերին կանակնիս առած՝ իր ետեւէն երթանք. Առջի չիտալ իւր հանապաղ և էլէնդէ դէտ ի՞նչ: Ետ առեակ խաչեր կան. կարգէ դուրս խաչեր կան՝ որ հալածանքի առեն կըլլան, ամենքն ու մահ, ինչպէս Քրիստոս տէրն մեր կրեց, ու իրեն ետեւէն մարտիրոսները. աս առեակ խաչերը թէ և թէք կը պատահին, բայց մենք պատրաստ պիտոր ըլլանք շնորհօքն աստուծոյ կրելու զանոնք՝ քան թէ իրեն գէտ մեղանջելու: Իսկ սովորական խաչերուն մէջ կան որ ակամայ են՝ ինչպէս հիւրընդունութիւն, աղքատութիւն, կորուստ, ճախորդութիւն, նախասինք, լծնաճութիւն, ու ասոնց նման թէ՛ իր րուտութենէ, թէ՛ ՚ի գիպուածոյ, և թէ՛ մարդկային չարութեանէ վրանիս եկած խաչեր, որոնցմէ չենք կրնար փախ

չիլ, պէտք է որ կրէիք: Բայց թէ որ առանց տրանջալու՝ ակաման կամաւոր ընելով՝ աս խաչել-  
 րը աստուծոյ սիրոյն համար կրելու ըլլանք, աս-  
 տուած կամաւորի սեղ կընդունի, ու Քրիստոսի  
 խօսքը ըրած կըլլանք՝ առջէ շխաւ իւր հանապառ:  
 Կամաւոր խաչէր ալ կան՝ որ մարդս ինք իրեն կը  
 կրէ, ինչպէս ճիշտութիւն, մահացուցմունք, հո-  
 գեոր գործքեր, կրօնաւորական հնազանդութիւն՝  
 ալքատուութիւն ու ողջախոհութիւն, ու ասոնց  
 նման բաներ՝ որ մեղքնեղութիւն կուտան, ու մեր  
 անձնասիրութեանը կը գոյշին: Աս տեսակ կա-  
 մաւոր խաչէրը պէտք է ևս առաւել համբերու-  
 թեամբ ու անարատնջ կրէիք, որովհետեւ մեր  
 կամօքը ընտրած ենք: Սիրով կրելու որ ըլլանք,  
 ետքը չենք զլծար, մահուան ատենը մխիթարանք-  
 նիս մեծ կըլայ, մահուանէ ետքն ալ վարձքերնիս:

### ՄԱՍՆ Բ.

Աստուած է՝ որ ամեն մարդու կեանք կուտայ.  
 Ինչպէս որ մեր ձեռքը չէր ստեղծուելնիս կամ  
 ոչնչութեան մէջ մնալնիս, ասանկ ալ մեր ձեռքը  
 չէ նորէն ոչնչ ըլլալ կամ մնալ մեր հուստեան  
 մէջը: Աստուած զմեզ ստեղծելէն ՚ի զստ՝ մեր  
 վախճանն ալ որոշէր է, յաւիտենական երանու-  
 թիւն՝ թէ որ իր գրած օրինացը հնազանդիք, ու  
 յաւիտենական թշուառութիւն՝ թէ որ չի՛հնա-  
 զանդիք: Երկուքին մէկը ընտրելը մեր ձեռքն է,  
 վրիճակէր կամ գառապարտուիլ: Բայց երկուքն  
 փրկուել կամ գառապարտուիլ: Բայց երկուքն  
 ալ հրաժարիլ ձեռքերնիս չէ. արքայութիւն կամ  
 դժոխք, երբորդ բան չիկայ յաւիտենական. ու  
 մեր մահուանը ատեն վիճակնիս որոշուի պիտոր:  
 Ուրիշ բաներու մէջ կրնանք ոչ մէկը և ոչ մէկը

ուզել: Բայց աս բանիս մէջ հարկ է՝ կամ մէկը  
 կամ մէկը ուզել. աստուած ասանկ դրեր է,  
 իր կամացը դէմ բան չըլլար:

Սակեց ՚ի զստ՝ մեր վախճանին համեմուտ ճամ-  
 բան ալ աստուած սահմանէր է, անոր ալ ատէր  
 չենք: Ով որ իր կեանքն ու իր հանգիստը փնտե-  
 լու համար՝ աստուծոյ կամացը դէմ կընէ, ով որ  
 իր ամեն ուզածը՝ իր ատէրը գոհ կընէ, ով որ իր  
 երջանկութիւնը աս աշխարհ վրայ կը դնէ, մէկ  
 խօսքով՝ ով որ աշխարհ մէջ իրեն տէր ըլլալ կու-  
 զէ, անգին զինքը կը կորսնցընէ: Զի որ կամեի  
 իւր կեցողանէլ, կորուսէ զստ: Իսկ ով որ Քրիստոսի  
 սիրոյն համար աս աշխարհ մէջ իր հանգիստը իր  
 կեանքը չնայիր, աւելի կընտրէ մեռնիլ, աւելի  
 կընտրէ ամեն բան կորսնցընել, աւելի կընտրէ իր  
 ատէրը զօպել, քան թէ աստուծոյ կամացը  
 դէմ ընել, անիկայ անգին իր հանգիստը՝ իր կեան-  
 քը՝ իր ամեն ուզածը կը գտնայ: Ես որ կորուսէ  
 զստն իւր զստն իմ, կեցողանէ զստ: Աստուծոյ ըրած  
 որոշմունքը չիփոխուիր. աս է ճամբան փրկու-  
 թեան համեմուտ, աս ճամբուն մէջն ենք, աս է  
 մեր ընելու բանը, վասն զի աս միայն մեր  
 ձեռքն է:

### ՄԱՍՆ Գ.

Բայց մտածելու արժանի բան է. վասն զի  
 Քրիստոս աս խօսքերը բռնէն ետքը՝ անմիջապէս  
 կը կըցէ. Զի՞նչ օգուտ է մարդոյ՝ եթէ դաւաճարն ամենայն  
 զանեցի, և զանչն իւր կորուսէ կամ գոռոյն: Ասիկայ  
 ուրիշ կորուստներուն չենմանիր. կրնանք պաշտօն  
 նիս կորսնցընել, պատիւնիս, հարստութիւննիս,  
 աստղութիւննիս ու կեանքերնիս, բայց անձեր-

նիս միշտ մերն է. ամեն ունեցածնիս անցաւոր բաներ են, մենք ենք որ միշտ պիտոր մնանք: Ասոր համար մեր փրկութիւնն է միայն մեր հարկաւոր գործքը. ուրիշ գործքերնիս ուրիշներէն ալ կախում ունին, ուրիշներն ալ կրնան մեր առողջ աշխատիլ ու ընել. բայց աս գործքը մեզմէ միայն կը կախուի, մենք միայն կրնանք ընել. մենք պիտոր ասպաշխարհնք, մենք առաքինութեան ետեւ ըլլանք, մենք մեղաց առիթներէն փախչինք, մենք կիրքերնուս յաղթենք: Ուրիշը կրնայ մեզի համար աղօթք ընել, կրնայ զմեզ յորդորել, կըրնայ օգնել՝ բայց մեր առողջ չի կրնար ասպաշխարհել, չի կրնար մեր առողջ հեղ ու խոնարհ ըլլալ, չի կրնար մեր առողջ Քրիստոսի հետեւիլ: Աս է մեր մեկ հատիկ հարկաւոր գործքը, վասն զի փրկութիւննիս կորսընցընելով՝ ամեն բան կորսընցուցած կը ըլլանք, փրկութեան հասնելով՝ ամեն բան վաստակած: Ուրիշ կորուսաներու կրնայ շար մը ըլլալ, մէյմը կորսընցուցածնիս՝ ուրիշ անգամ կրնանք վաստակիլ. իսկ հոս աս յոյսը չի կայ, մէյմը կորսընցուցածնիս՝ միշտ կորսուած է, ոչ կը գտուի, ոչ կը գնուի. Ձիւն պաղէ ճարդ իրանս ընդ անյին իւրոյ: Ինչ յուսահատելի կորուստ: Իսկ թէ որ փրկութեան հասնինք, թէ որ աստուծոյ շնորքին մէջ մեռնինք, ինչ փնաս ըրած կըլլանք աշխրբիս վրայ խաչ քաշելէն. ամենն ալ կանցնի, յաւիտենական Երանութիւն կը յաջորդէ, վախ չիմնար ունեցածնիս կորսընցընելու, կուրախանանք աշխրբիս վրայ նեղութիւն քաշած ըլլալնուս. Ձի ոչ էն արժանի լարլարանք ժամանակիս հանդէպէնց քառաջն որ յայտնէնց էն ի մեզ: Ո՛վ Երանութիւն յաւիտենական, ս՛վ Երանութիւն անկորուստ, գուն պիտոր ըլլաս ասկէց ետքը զիս ամեն գործքերուս մէջ յորդորողը:

Ա. Ղ. Օ Թ. Գ

Յիսուս փրկիչ իմ, ինձի ուժ աուր որ կիրքերուս յաղթեմ, աշխրբիս նեղութիւնները սիրով քաշեմ, խաչս ուսս աւաճ. քեզի հետեւիմ. շնորհակալ եմ որ առջնէս երթալով՝ մեզի ճամբայ ցուցուցիր, շնորհակալ եմ որ մեզիս խրատները աուիր, կառաջադրեմ որ քու շնորքովդ զաննք կատարեմ. ու կը հաւատամ որ օր մը փառօք Հօր ու քու հրեշտակներովդ պիտոր գաս, ու պիտոր հասուցանես իւրաքանչիւր ըստ գործս իւր:

Փոխանակ ճգնութեան համբերողաց մատուցանէ իւրաքանչիւր զանթառամ պսակն, փայլեն որպէս զարեգակն յորժամ գայ փառաւոր լինել ի մէջ սրբոյ իւրոց:

րունակ զմեզ պիտոր մահացրնենք՝ ինչպէս Պօղոս  
առաքեալը կրսէ. Յամենայն ժամ պահն Յիսուսի՝ ի  
Տակննացոս Տարփնս մեր իբեացոս. անանկ որ՝ կարե-  
նանք ըսել. Վասն իմ մեռանիմս պահանապար:

### ՄՏԱԾԱԿԱՆ ՂԷ.

Նորէն Քրիստոսի մեր փրկութեանը համար  
մեզմեզ ուզած շահեկարն վրայ:

### ՄԱՍՆ Բ.

### ՄԱՍՆ Ա.

Վախճան մը, որուն հասնել կուզենք, որչափ  
որ մեծ ու կարեւոր է՝ այնչափ աւելի պէտք է  
մտածենք հասնելու կերպին վրան: Մեր կենացը  
հարկաւոր բաներուն վրայ աղէկ կը մտածենք,  
բայց հոգեւորին վրայ՝ մեր փրկութեանը վրայ՝  
նոյն ջանքը չենք ընել, աղէկ չենք մտածեր: Անոր  
համար Քրիստոս աւերն մեր օրինակով մը զմեզ կը  
խրատէ. Թէ որ մեկերնիդ աշտարակ մը շինել ու-  
զէ, չի՛նստիր նախ մտածեր որ բաւական ըստակ  
ունի՝ շինուածքը լճնցրնելու: Աս աշտարակը մեր  
փրկութեան շինուածքն է, աս շինուածքին հար-  
կաւոր եղած բաները ինքը մեզի սորվեցուց- սոյս.  
Ինքն հրաժարիլ ան ամեն բանէն՝ որ մեր փրկու-  
թեանը արգելք կըլլան, խաջը ուսերնիս առնել  
ու իր ետեւէն երթալ: Աս է ամեն օրուան ընելուք-  
նիս, Առցէ շալա իւր ՀԱՆԱՊԱՋԼ Ե՛լիսցէ պէտք իմ-  
շարունակ մենք մեզի հետ պիտոր կուտինք, շա-

Աղէկ պիտոր մտածենք որ քրիստոնէական  
պարտքերնիս ընելու համար՝ զոհեր ունինք ընե-  
լու: Պէտք է մտքերնիս խոնարհեցրնենք հաւաա-  
քի բաներու մէջ, բոլորովին գերի ընենք Քրիս-  
տոսի. Գերէմէ պէտք մեր ի հասարակութիւն Քրիստոսի:  
Պէտք է մեր սիրտը ետ քաշենք ան ամեն բանե-  
րէն՝ որ աստուծոյ սիրոյն գէմ կելլէ, ամեն բանէն  
ու մեզմէ ալ աւելի սիրենք զաստուած, բան մը  
չխսրենք՝ բայց միայն աստուծոյ համար, բան մը  
չխսրենք՝ բայց ինչ որ ինքը կուզէ ու ինչպէս որ  
կուզէ որ սիրենք: Պէտք է որ կիրքերնիս սան-  
ձենք, ետ կենանք ան ամեն բաներէն՝ որ մեր ան-  
տերը կը դրդուեն, ու ջանանք խլել զանոնք մեր  
սրտէն. վերջապէս պէտք է որ պատրաստ ըլլանք  
ունեցածնիս ալ՝ կեանքերնիս ալ զոհելու, թէ որ  
հարկ ըլլայ, աստուծոյ դէմ չընելու համար: Աս  
է քրիստոնէական կտարերելութեան աշտարակը  
շինելու կերպը, ու անոր համար պէտք եղած  
բաները:



### Մ Ա Ս Ն Գ .

Աղէկ պէտք է մտածենք որ աս բաները մենք  
 ինքիբերնուս չենք կրնար ընել, բայց կրնանք աս-  
 տուածոյ շնորբօլը՝ որն որ միշտ պատրաստ է տա-  
 լու՝ թէ որ խնդրենք. անոր համար կուզէ՝ որ միշտ  
 արթուն ըլլանք վրանիս, ու ալօթք ընենք. Ար-  
 Թան կոչէ, և աղօթն արարէ: Իժուարին է շինելու  
 աշտարակնիս, երկան կը քէ՛ն՝ այսինքն բոլոր  
 կենսքերնիս, բայց շինուածք մըն է՝ որ ստատուածոյ  
 աւելի հաճոյ է քան թէ եկեղեցիներ շինել: Վասն  
 զի ասիկայ անմահ յիշատակ մըն է ստատուածոյ շնոր-  
 քին զորութեանը: Ասիկայ անանկ աշտարակ մըն  
 է՝ որ ստատանային ձեռքէն զմեզ կը պատասպարէ,  
 ու մինչև երկինք կը հանէ զմեզ: Ուրեմն հարկա-  
 ւոր բաները պատրաստելէն ետքը՝ արիաբար ձեռք  
 զարնենք հիմը գնելու, ու աշխատելէն չեզոգորինք՝  
 բարձրացնելու ու լիննցնելու աս շինուածքը,  
 որպէս զի անկատար չիմայ. Զի գոռն արիանիջն  
 անի, և ու կարայն կարարէ: Աս վախը պէտք է ու-  
 նենանք՝ անսնելով որ քանինքը կը սկըսին, ու չեն  
 լիննցնենք. քանինքը որ անջի բերանը ջերմեանդ  
 քրիստոնեաներ էին՝ ետքը ձա՛մբանին փոխեցին,  
 Քրիստոսի ետեկն երթալու անցը՝ աշխուրհս ե-  
 տեկն գնացին: Քննենք պատճառը, ինչու չեկրցան  
 սկսած չենքերնին լիննցնել: Վասն զի հաշիւնին  
 աղէկ չեբանեցին, չմտածեցին հարկաւոր եղածը  
 պատրաստելու, փոյթերնին չեղաւ իրենց կիբեքը  
 զսպելու: Ծանր մեղքերէն ջրակրտիր մեր կործա-  
 նուովը, այլ պզտի պակասութիւններէն, թուրնա-  
 լէն, ալօթքի ծուլութիւն ընելէն, զբոսանաց  
 միայն ետեկ ըլլալէն, խոնարհութեան պակասու-

թեանն, մեր վրայ վատահանալէն, յոյսերնիս բո-  
 լոր աստուածոյ վրայ չեղնելէն: Ընդհակառակն ու-  
 ընք որ Քրիստոսի խրատը պահելով՝ իրենց հա-  
 շիւը աղէկ կը բանեն, արթուն կը կենան ու ա-  
 ղօթքէն չեն պակսիր, յաջողութեամբ իրենց չեն-  
 քը առաջ կը տանին: Աս է այն հոգևոր խոհեմու-  
 թիւնն որ Քրիստոս կը խրատէ որ ունենանք. Ե-  
 Ղեբար իտրագեպտ էբել ղէն: Թոհեմ մարդը առա-  
 ջուց կը մտածէ ու կը բանեցընէ այն ամենայն հը-  
 նարքներն՝ որ հարկաւոր են իր վախճանին հաս-  
 նելու: Աս խոհեմութիւնը բանեցուցին ամեն  
 սուրբերը, աս խոհեմութիւնը բանեցուց Պօղոս  
 առաքեալն ալ՝ որ կըսէ. Ամեն բանէն զպիցի զիս,  
 որպէս զի Քրիստոս ունենամ. Յաճեալն ղբեցայ,  
 ղի ղՔրիստոս ղահեցայ: Ասանկ ըբաւ աւետարանին  
 պատմած այն խոհեմ մարդն ալ՝ որ իր ամեն ունե-  
 ցածը ծախեց, ու գնեց այն երկիրը՝ ուր որ գանձ  
 թաղած էր: Ասանկ ըբին հինգ խոհեմ կուսանքն  
 ալ՝ որ ամանով հեանքնին ձէթ առին, որպէս զի  
 կանթեղնին գիշերը չիմարի: Ուրեմն խնդրենք  
 միշտ Աստուածէ որ աս խոհեմութիւնը տայ մեզի,  
 որպէս զի մեր փրկութեան համար հարկաւոր ե-  
 ղած բաները մտածենք ու բանեցընենք. Վասն զի  
 հոգինիս որ կորսընցընենք, բոլոր աշխարք ալ շա-  
 հելնիս անօգուս է. Զի՞նչ օգոտ է մարդոյ, էնէ  
 ղաշխարհ ամենայն ղահեցի և ղանն իտր քոտեցի: Աս-  
 տուած պահէ, ի՞նչ օղբ, ի՞նչ յուսահատութիւն  
 պիտի ըլլայ անոնցը՝ որ հոգինին կը կորսընցընեն.  
 Բայց մէյմը կորսընցընէն ետքը՝ ամեն բան անօ-  
 գուս:

Ա. Ղ. Օ Թ. Բ

Յիսուս փրկիչ իմ, ինձի շնորք տուր որ չի-  
թուընամ, սկսածս չիթողում. օգնէ իմ տկար կա-  
րողութեանս՝ որ շինեմ լինցընեմ հոգւոյս փրկ-  
կութեան աշտարակը, որուն թու տուած խրա-  
տովդ Եղէրոսի՝ Կաթարեալս՝ սիրա ըրեր ու ձեռք  
զարկեր եմ: չըլլայ թէ սատանան էտքը ծիծաղի  
վրաս ըսելով. Այս այր սխառ շինել, և ու կարոյ կա-  
րարել:

Ողորմեա ինձ Քրիստոս ողորմութեամբդ քով  
մեծաւ, զի կարօտ եմ էս շնորհի թո և ողորմու-  
թեան, ողորմեա և լուր ինձ բազմամեղիս:

### Մ Տ Ա. Ծ Ա. Կ Ա. Ն Ղ Ը:

Նորեկ Քրիստոսի մեր փրկութեան հասար  
մեզմէ ողորմեա բաներուն վրայ:

Մ Ա. Ս Ն Ա.

Երբոր Աբրահամ աստուծոյ հրամանաւ ի-  
սահակ իր որդին պիտոր զոհէր, սուրբ գեղքը  
կրտէ որ ողջակէզին փայտը զաւկին ուսը տուաւ,  
ու ըսաւ որ ելէ ինչուան լեռան գլուխը՝ ուր որ  
զինքը պիտոր զոհէր: Աս սրտաշարժ պատմու-  
թիւնը աւելի կը շարժէ մեր սիրտը, երբոր մտա-  
ծենք որ Իսահակ Քրիստոսի օրինակն էր. երկնա-  
ւոր Հայրը գրաւ անոր ուսին վրայ այն փայտը՝  
որուն վրայ պիտոր խաչուէր ու զոհ ըլլար մեզի  
համար: Ահա ճշմարիտ Իսահակը՝ որուն վրայ է  
ամենուս յոյսը, որով խոստացաւ աստուած ա-  
մենքս օրհնել. Օրհնեալն ՚ի դասի քամ ամենայն ազգի  
եւրի: Քրիստոս որդին աստուծոյ խաչը ուսը ա-  
ռած Գողգոթա լեռը կելէր խաչուելու. բայց  
առջի քաշած չարչարանքներէն, փուշ պսակին  
ու ձաղկանաց տակը այնչափ թափած արիւնէն,  
անանկ տկարացած էր որ՝ բնականապէս անկա-  
րելի էր այն ահագին բեռան տակը դիմանալ: Քա-

հանայապետներն ու դպիրները չէին ուզեր իր  
խաջուռէքն առաջ մեռնիլը. իրենց անգուժ ատե-  
լուծիւնը յայդեցընելու համար՝ կուղէին տեսնել  
խաչին վրայ շատ աւելի նախատական ու չարա-  
չար մահուամբ մեռնիլը. անոր համար Սիմոն կիւ-  
րենացին բռնել տուին, ու խաջը բռնի կանակը  
տուէին՝ որ Յիսուսի ետեկն սանի:

Որչափ ալ իրենց միտքը աս էր, բայց մեր փր-  
կինն որ բան մը չէր թողուր իրենց ընելու՝ որ  
մեղի օգուտ չըլար, ասով ցուցուց մեղի հարկա-  
ւորութիւնը՝ որ մենք ալ խաջը կանակնիս առած  
իր ետեկն երթանք: Վասն զի թէ որ ինքը անմեղ  
ըլլալով՝ մեղի համար ան չարչարանքը քաշէց,  
մենք որ մեղաւոր ենք՝ որչափ ևս առաւել պէտք  
է որ քաշենք: Աս էր այն խօսքին միտքն որ իրեն  
ցաւակից եղօղ՝ իր վրայ լացօղ բարեպաշտ կա-  
նանցը ըսաւ. թէ որ կանանչ փայտը աս չարչա-  
րանքը կը քաշէ, հապա չորը ինչ պիտոր ընէ. Զի  
էթէ ընդ փայտ դաւար պայտ առնեն, ընդ տն լինէ ւէ-  
նիցի:

### ՄԱՍՆ Բ.

Քրիստոս անքն մեր թէ որ ինքը ուղած չըլար,  
չէր տաներ խաջը, իր ուղելը զինքը հարկաւորեց  
տանելու. բայց իր կամաւոր հարկը՝ մեր վրայ  
պարտը կանութեան հարկ մը դրաւ խաջ քաշե-  
լու: Քրիստոս ուղեց տանելու իր խաջը, և ուղե-  
լուն համար տարաւ. բայց մենք չէնք կրնար ը-  
սել՝ որ ուղելուն համար կը տանինք. կրնանք  
ըսել որ ուղելով կը տանինք մեր խաջը, բայց չենք  
կրնար ըսել՝ որ ուղելուն համար կը տանինք:  
Հոս է մեր ընելու արամաբանութիւնը. թէ որ

մեր փրկիչը աղաւ ըլլալով՝ ուղեց տանելու իր  
խաջը, ինչ կիյնայ ընէլ մեղի՝ որ չէնք կրնար հրա-  
ժարիլ մեր խաջը տանելէն, մեր ձեռքը չէ տանիլը  
կամ չտանիլը, ուղենք չուղենք՝ տանինք պիտոր,  
ու չուղելու որ ըլլանք՝ թէ՛ աւելի կը ծանրացը-  
նենք խաջերնիս, և թէ՛ անօգուտ կըլլայ քաշած-  
նիս: Ուղենք չուղենք խաջ պիտոր քաշենք. ու-  
րեմն խելքը՝ ուղելով քաշին է, որովհետեւ ան  
տանելը օգտակար կըլլայ մեղի խաջ քաշելը. վասն  
զի ինչպէս որ Քրիստոսի խաջակից կըլլանք, ա-  
սանկ ալ մասնակից կըլլանք իր փառացը: Ուրեմն  
երբոր աստուած խաջ մը կը խրկէ մեզի՝ պէտք է  
որ համբերենք, սիրով ընդունինք, օրհնենք զին-  
քը՝ զմեզ Քրիստոսի խաջակից ընելուն համար:

### ՄԱՍՆ Գ.

Բոլոր մեր սխալմունքը հոս է. խաջը կը տա-  
նինք, բայց բռնի՝ ինչպէս Սիմոն Կիւրենացին,  
որուն կանակը բռնի տուին. Հրեաները Քրիստոսի  
խաջը՝ տանելու համար. Զոս կալան պահակ, զի  
բարձիւ լիալն նորա: Կը տանինք խաջը, բայց ամեն  
հնարք բանեցընելով՝ որ վասներնէս նետենք, խա-  
լասինք. անոր համար կը նեղինք, կը տաղնապինք,  
անհամբերութիւն կընենք. ու աս ամեն բաներով  
ուրիշ բան չենք վաստը կիր, բայց աւելի ծանրա-  
ցընել մեր խաջը: Երանի թէ միայն ծանրացընել  
ըլլար. շատ անգամ մեր հոգւոյն վնասակար ալ  
կընենք այն խաջը՝ որ աստուած մեր օգտին հա-  
մար մեղի կուտայ. շտուք մին է՝ որ ոտքի տակ  
կառնենք, որուն համար հաչու պիտոր տանք աս-  
տուծոյ: Աստուած բարեկէն ալ վիշտն ալ մեր

փրկուածեանը համար կուտայ մեզի, ու ինչպէս  
 առւած բարիքներուն համար հաշիւ պիտոր ուզէ  
 մեզմէ՝ թէ որ աղէկի չլեբանեցընենք որ մեր հոգ-  
 ւոյն օգտակար ըլլան, ասանկ ալ թէ որ իր խըր-  
 կած ձախորդուծիւնները համբերուածեամբ տա-  
 նելու չըլլանք, ու մեր հոգւոյն օգտակար ընելու  
 աեղ՝ մնասակար որ ընենք, հաշիւ պիտոր պա-  
 հանջէ մեզմէ: Վասն զի աշխրբիս յաջողութիւն-  
 ներէն աւելի մեծ շնորք է ձախորդուծիւններն որ  
 կը խրկէ մեզի աստուած, որովհետեւ ասոնք աւելի  
 օգտակար են մեր հոգւոյն փրկուածեանը: Անոր  
 համար պէտք է օրհնենք զաստուած՝ որ խաչ  
 քաշելը հարկ ըրեր է մեզի համար, ուր որ դաւ-  
 նանք՝ խաչ կը գտնենք, ու մեր ձեռքը չէ խաչ  
 քաշէլէն խաղըսիլը: Թէ որ աստուած մեզի թա-  
 ղուցած ըլլար խաչ քաշելու կամ չլեբաշելու ըն-  
 արուծիւնը, շատ հաւանական է՝ որ չլեբաշելը  
 կընարէինք, զրկելով զմեզ Քրիստոսի խաչակից  
 ըլլալէն՝ իր փառացն ալ մասնակից չէինք ըլլար:  
 Թերեւ առանց ապաշխարանաց կեանք մը անցը-  
 նելով, կը դատապարտուէինք ալ: Փնօք աստու-  
 ծոյ որ աս ընարուծիւնը մեր ձեռքը չէ գրած,  
 ազատ չենք խաչ քաշէլէն, միայն ազատ ենք քա-  
 շելու կերպին, ուստի աւելի դիւրին կըլլայ մեզի  
 օգտակար կողմը ընարէլնիս: Վասն զի շատ ան-  
 խեք պիտոր ըլլանք՝ որ քաշելու խաչերնիս ու-  
 զելով չլեբաշենք, քաշածնիս մեզի օգտակար չը-  
 նենք:

Ա, Գ, Թ Ք

Յիտուս փրկիչ իմ, կառաջագրեմ որ ասկէց  
 ետքը ինչ խաչ որ տաս ինձի՝ ուղեւոր ու սիրով  
 տանիմ: Շնորք տուր ինձի՝ որ աս առաջագրու-

Թիւննիս հաստատուն պահեմ, ու ինչուան Քող-  
 գոծային գլուխը այսինքն մինչև ՚ի մահս ասնիմ՝  
 քեզի հետ իմ խաչս:

Խաչակցեալք ընդ Քրիստոսի և ընդ նմին թա-  
 ղաւորեալք, ՚ի միւսանգամ գայտեան նորա նրա-  
 տելոց էք դատաւորք, թողուծիւն շնորհեցէք և  
 մեզ մեղաւորացս:

### ՄՏԱԾԱԿԱՆ ՂԹ.

Աստուծոյ շնորհք ձանկեայտ ու ասկրայտ  
ընայտ վրայ:

### ՄԱՍՆ Ա.

Քրիստոս տէրն մեր տեսնելով Հրէից ասկրայտութիւնը աստուծոյ շնորհներուն դէմ, կարեկից եղաւ ան քաղքերներուն՝ որ ամենեկին իր խօսքերը չէին լսած, և ոչ իր ըրած հրաշքները տեսնէին. ու անոնց քաղքատելով Հրէաստանի քաղքերը՝ աստուծոյ յանդիմանեց զիրենք, որ այնչափ բարեք՝ այնչափ հրաշք տեսնալէն ետքը, այնչափ խրատ լռելէն ետքը, դեռ դարձի չէին եկած: Վայ թէ՛ Քրիստոս, վայ թէ՛ Բեթսայիւն, ի՞նչ էր ի՞նչ Տէրոս և ի՞նչ Սիդոն եղեալ եկին դժբախտներն՝ որ ի՞նչ էր էն, վաղ ևս արդեօք խորհով և ճիւղով ասալ խարեալ էր: Աս յանդիմանութիւնը կը սոսկացնէ զմեզ ալ, թէ որ մտածենք արջափ շնորհներ Աստուծոյ ընդուններ, ու անոնց դէմ կեցեր ենք. արջափ ներքին և արտաքին աղգեցութիւններ տուեր է մեզի աստուծոյ, որոնք մենք անօգուտ ըրեր ենք. որ եթէ ուրիշներուն տուած ըլլար,

սուրբ կրկային. ու մենք անհոգ ըլլալով՝ մեր անհոգութիւնը բանի տեղ չենք դնէր:

Դատաստանին օրը Քրիստոս այն անդեղ ու ասկրայտ քաղքերները աւելի խտուածեամբ պիտոր պատժէ քան զՀեթանոս քաղքերները՝ որ ամեն պղծութեամբ լեցուն էին, բայց աստուծոյ անոնց չէր տուած այն շնորհներն որ Հրէից տուաւ: Ի՞նչ բարեքն լեօ՛ք երբեք Տէրոսի և Սիդոնի յաստուծոյ քան թէ՛ մենք: Դատաստանին օրը ամեն բան պիտոր յայտնուի. Քրիստոս հաշիւ պիտոր պահանջէ, ոչ միայն գործած մեղքերնուս՝ այլ նաև իր տուած շնորհները կորսնցունելնուս համար: Կը ցաւինք այնչափ աղքերուն վրայ՝ որ սուրբ եկեղեցիէն ու քրիստոնէական հաւատքէն դուրս ծներ են: Իրաւ ցաւալի են, վասն զի դատաստանին օրը պիտոր դատապարտուին. բայց հազար անգամ աւելի պիտոր ըլլայ գէշ քրիստոնէից դատապարտութիւնը՝ ասանկ մեծ շնորհը կորսնցնելնուս համար: Ի՞նչ պիտոր ըլլայ մեր վեճակը, թէ որ փրկութեան չի համարինք, թէ որ աստուծոյ տուած շնորհները չիբանցնենք. ջանանք ուրեմն փրկութեան ճամբան երթալու, ջանանք աստուծոյ ըրած աղգեցութիւններուն հնազանդելու:

### ՄԱՍՆ Բ.

Հրէից աս ասկրայտութիւնը ինչէն առաջ դաւն ալ կը յայտնէ Քրիստոս՝ Կափառնաում քաղքին հպարտութիւնը յանդիմանելով. Ո՛վ Կափառնաում, դուն որ զքեզ մինչև երկինք կը բարձրացնես, մինչև դժոխքը պիտոր խնաս: Հարստութիւնը՝ իշխանութիւնը՝ գիտութիւնը՝

փառք պատիւ ունենալը՝ շատ անգամ զմարդ կը հուրացընէ, ինքը զինքը անմեղ կարծել կուտայ, անկէջ առաջ կուգայ աստուծոյ ըրած ազգեցութիւններուն մասիչ չընելը: Բայց գառաստանին որը աչքնիս պիտոր բացուի, ու պիտոր ճանչնանք աստուծոյ շնորքը արհամարհելը ամենէն ծանր մեղքերէն մէկը ըլլալը: Խոնարհութիւնն է որ զմարդ թէ արժանի կրնէ աստուծոյ շնորքին, և թէ ճանչնալու բանեցընել կուտայ ընդունած շնորքը: Աստուած ինչպէս որ հպարանները կը պատժէ ու իրենց կուրուծեանը մէջ կը թաղուէ, ասանկ ալ խոնարհներուն միտքը կը բանայ՝ որ ճանչնան իրենց փրկութեանը հարկաւոր եղած բաները: Գահանայ զէն, Հայր, քեր երկնի և երկրի, զի ծածկեցեր պայ յիմաստնոց և ի գիպնոց, և յայտնեցեր գոյոց: Աստուծոյ շնորքը մերժելը՝ Քրիստոսի հրաւերքը մերժել է: Քրիստոս թուերը բացած զմեզ կը հրաւիրէ ըսելով՝ Եկնո՛ք առ ինձ և նայն վազախեալս և բեռնաւորս, և ես հանգոտից զձեզ: Կը խոստանայ մեր ամեն բեռը թեթեւցընել, ամեն նեղութենէ խաղտել զմեզ, ու սիրտերնիս հանգնեցընել: Իսկ մեք աշխրբիս սուս խոստանալները աւելի ընտրելով, աշխրբիս ունայն ու անյաւոր զուարճութեանցը ու զբոսանացը համար՝ Քրիստոսի հրաւերքը կը մերժենք: Ասկէց մեծ ինչ ապերախութիւն կրնայ ըլլալ՝ ասկից աստուծոյ արգար բարկութիւնը կը շարժէ՝ զմեզ իր շնորքէն զրկելու, ինչպէս Քրիստոս թագաւորին առակովը հասկըցուց: Թագաւոր մը իր զաւակին հարսնիքին շատերը հրաւիրեց, անոնք չուղեցին զալ, նորէն ծառաները խրկեց ըսելու որ մեծ սեղան պատրաստեր էր՝ հրամանն զան, անոնք իրենց ասուտուորին՝ իրենց արտերուն զբաղած՝ չուղեցին երթալ: Ան ասներ թագաւորը բարկացաւ ու ըսաւ ծառաներուն. Հրաւիրեալները ար-

ժանի չեն իմ շնորքիս, գնացէք՝ ով որ գտնաք ճամբու վրայ՝ բերէք որ իմ շնորքս անոնք վայելեն:

### ՄԱՍՆ Գ.

Չըլլայ թէ մենք ալ աս կերպով աստուծոյ շնորքը կորսընցընենք: Մեզի ձրի սեղան, ձրի արքայութիւն պատրաստեր է, կուզէ միայն՝ որ աշխրբիս աւելորդ զբոսանքներն ու զբաղմունքները մէկզի ձգենք՝ իր հրաւերքը ընդունինք: Կուզէ որ Քրիստոսի քաղցր ու թեթեւ լուծը վրանիս աւնենք, աշխրբիս ամեն բեռներէն խաղտելու համար՝ կուզէ որ Քրիստոսի պէս հեղ ու խոնարհ ըլլանք, որպէս զի մեր հանգիստը գտնենք: Առէ՛ք զլուծ իմ ի ձեզ և ուսարուք յինչն՝ զի հեղ եմ և խոնարհ սրբիս, և գործիչ հանգիստ անխնայ ձերոց: զի Լուծ իմ գաղցր է, և բեռն իմ խորոզի: Որն է Քրիստոսի լուծը, որն է Քրիստոսի բեռը՝ իր օրէնքներն են, իր խաչն է: Ասկից լսելով՝ բնութիւննիս մէկէն կը խրկուի, բայց չիխաբուիր. աշխարհս ալ, սաւանան ալ, իրենց լուծը՝ իրենց բեռը կը գնեն վրանիս, ո՞ր զին գառնանք՝ լուծ մը ու բեռ մը պիտոր կրենք. ուրեմն բանը բեռ կրելու կամ չիկրելու վրայ չէ, այլ ընտրելու որ՝ որուն գրած բեռը աւելի թեթեւ է. Քրիստոսինը, թէ աշխրբիս ու սատանայինը: Քրիստոսինը քաղցր ու թեթեւ է, վասն զի ինքը կօզնէ մեզ իր շնորքովը, ու անոր ծանրութիւնը կը թեթեւցընէ. վասն զի արքայութեան յոյսը անիկայ կրօններուն անանկ ուժ մը կուտայ, որ ամենուն անոր ծանրութիւնը չեն զգար: Իսկ աշխրբիս ու սատանային լուծը՝ ոչ միսթաբութիւն և ոչ յոյս կուտայ մարդուս, միշտ սիրտը վախի մէջ է՝ որ ետքը ո՞ւր պիտի ըլն.

նայ : Վերջապէս Քրիստոսի լուծը տանողին սիրաբ  
հանդիսա է, աշխրբիս ու սատանայինը տանողին  
սիրաբ անհանդիսա ու սաղնապէալ : որոնն վե-  
ճակն է ընտրելի :

Ա Ղ Օ Թ Ք

Ծնորհակալ եմ, Յիսուս փրկիչ իմ, որ զիս ալ  
հրաւիրեցիր քու սեղանդ, ու քու քաղցր լուծդ  
իմ վրաս դրիր : Թող ուրիշները իրենց ղբաղմուն-  
քին հետ ըլլան, իրենց ղբօսանքը փնտռեն : Իմ  
ղբաղմունքս ալ ղբօսանքս ալ քու կամքդ կա-  
տարելն է, իմ փրկուածեանս ետեւ ըլլան է, քու  
սուած շնորքդ բանեցընելն է : Կընդունիմ սիրով  
քու քաղցր ու թեթև լուծդ, աղատէ զիս աշ-  
խրբիս ու սատանային անտանելի բեռնէն : Կուր  
ինձի որ խոնարհութեամբ աղու մը պէս ըլլամ,  
որպէս զի երկնաւոր Հայրդ հպարաներուն ու ի-  
րենց դիտութեանը վստահացողներուն չկայտ-  
նածը ինձի ալ լայանէ, որ ճանչնամ աշխրբիս  
ունայնութիւնը : յայտայ ինձի, բանայ իմ միտքս  
ալ որ ճանչնամ իմ փրկութեանս հարկաւոր ե-  
ղած բաները, ու անոնք ՚ի դործ դնելու անհոգ  
չըլլամ իր շնորքով :

Որ զայս աստուածային քո բանի ծագեցեր  
յաշխարհամած խաւարն անդիտութեան, լուսա-  
ւորեա և զմեզ Հօր իմաստութիւն :

Մ Տ Ա Տ Ս Ա Մ Ն Ճ

Ճշմարտոյ դարձի վրայ :

Մ Ա Մ Ն Ա

Քրիստոսի սրտաշարժ ու ազգու իրաւանքէն  
մեղաւոր կին մը դարձի եկաւ, որոշեց որ գէշ  
ճամբէն գուրս ելլէ : Մտածեց որ իր սիրաբ փո-  
խօլը մեղքերուն թողութիւն ալ կրնար տալ :  
Ուստի առիթ կը փնտռէր իրմէն աս շնորքը խըն-  
դրելու : Իմացաւ որ Սիմոն փարիսեցիին տունը  
սեղանի հրաւիրուեր է, մէկէն հոն գնաց : ամօթ  
չխեղեց այնչափ հոգւոյ առջին երեւնալու, որոնք  
իր գէշ վարքը գիտէին, և ոչ իր մեղսակիցներուն  
խօսքերէն վախցաւ, որոնք հարկաւորապէս իր  
դարձին վրայ հաղաբումէկ խօսք պիտոր ըսէին  
ծաղկելով : Բայց ինքը մէյո՛ր դարձի գալէն ետքը՝  
ուրիշ բանէ չէր վախեր, ուրիշ բանէ չէր ամա-  
չէր, բայց միայն իր մեղքերէն : ուրիշ բանի չէր  
բաղձար, բայց Քրիստոսի : Սեղանատունը մտաւ,  
ու Յիսուսին ետեւի կողմէն առանց իրեն երեւնա-  
լու՝ թէ և ուրիշները ամենքն ալ զինքը կը տես-  
նէին, սիւս լալ ու արցունքովը Յիսուսի ոտերնե-  
րը թրջել, մաղերովը սրբել ու համբուրել : Հեար

ամանով անուշահոտ եղ ալ առեր էր, ան ալ Յիսուսի ոտըններուն վրայ պարպեց: Իր զըջումը այնչափ սաստիկ էր, սիրալը անանկ սուրբ սիրով մը վառուած, որ բերնէն խօսք մըն ալ չէլաւ: Նկխօսեցաւ, բայց իր արցունքը խօսելէն աւելի էր, իր դարձքը քան զամեն ճարասանութիւն աւելի էր բայցարէր իր սիրալը: Արուն սիրալը չեղարժիր՝ աս պատմութիւնը կարգալով, արգեօք Մագդաղենացին մեզմէ աւելի մեղաւոր էր: Կէտք չէր որ մենք ալ իրեն պէս Յիսուսի ոտքը ինկած լայնք, մանաւանդ այն ոտքը մեր սիրոյն համար վերաւորուէին ետքը:

Յիսուս գեւ խօսք մը ջըսաւ իրեն, բայց չիմերժեց զինքը, աս միայն բաւական նշան էր մեղքերը ներելուն: Յիսուս կուշացնէ իր խօսելը զըջուցեալ մեղաւորին, մէկէն չիսօսիր, բայց ետքը անանկ կը խօսի՝ որ աւելի մեծ կըլլայ իր միսթարութիւնը, ինչպէս Մագդաղենացինը եղաւ:

### ՄԱՍՆ Բ.

Սիմոն գայթակղեցաւ Յիսուսի թող տալուն վրայ՝ որ անանկ մեղաւոր կնիկ մը իր քովը մօտենայ: Գրիստոս որ Սիմոնին սուշը գացեր էր՝ աւոր մեղքերուն ալ թողութիւն տալու, բայց նոյն սիրալը չէր գտած անոր քովը, օրինակով մը ուղեց զինքը խրատել՝ ու իրեն հետ գաղջ ապաշխարողները, միանգամայն խեղճ կնիկն ալ միսթարել՝ ու անոր հետ սրտանց ապաշխարողներն ալ: Ըստաւ: Երկու հօգի մէկու մը պարարկան էին, մէկը հինգ չարիւր գահէկան, մէկայը յիսուն, ու ստակ չունէին պարքերինն վճարելու: Պարտատէրը երկուքին ալ պարտքը շնորհեց, հիմայ սասնց ուր

զպարտատէրը աւելի կը սիրէ: Պատասխանեց Սիմոն: Արուն որ պարտքը աւելի էր: Գրիստոս ալ ըսաւ: Աղէկ գատաստան ըրիր: Ըսել ուղեց որ աւելի մեղք ունեցողները երբոր դարձի կուգան, ու աստուած թողութիւն կուտայ իրենց մեղքերուն, հասարակօրէն աւելի ջերմեանդ կըլլան՝ աւելի սղորմութիւն Աստուած մէ ընդունելուն համար: Ասոր աղայոյցը՝ Մագդաղենացինն ու Սիմոնին գործքերէն բերաւ: ու ցուցնելով խեղճ կնիկը Սիմոնին՝ ըսաւ: Կը տեսնէս աս կնիք. սուշդ եկայ՝ ոտքիս ջուր ալ չեղեցուցիր, խի աս իր արցունքովը ոտըններս լուսայ, ու մտղերովը սրբեց. համարյր մը չիտուիր ինձի, խի աս ոտըններս համբուրելէն չեղաղրիր. եղով դուրս չօծեցիր, աս անուշահոտ եղով ոտըններս ալ օծեց. վասն զի իրեն եղած թողութիւնը աւելի ըլլալով, սէրն ալ աւելի է: — Արգեօք ինչպէս միսթարուեցաւ խեղճ կնիկը աս խօսքերը լսելով, բայց աս ալ հէրք չէ, դարձաւ Յիսուս գէտ պի կնիք, ու ըսաւ: Ի՞նչ մեղքերուդ թողութիւն եղած է. թողեալ լէ ջին՝ +եւ մէր՝ +:

### ՄԱՍՆ Գ.

Թողեալ լէ ջին՝ +եւ մէր՝ +: Ի՞նչ զօրաւոր խօսք, ինչ միսթարական խօսք. նոյն խօսքն է որ մինչև ցայսօր Գրիստոս կըսէ քահանային բերնովը՝ ապաշխարողներուն: Նոյն խօսքին զօրութեանը մէնք ալ արժանի կըլլանք՝ թէ որ նոյն սրտով զըջանք խոստովանինք ու արձակու՛մ աւնենք: Թէ որ նոյն հաւատարմով մենք ալ ապաշխարութեան խորհուրդը ընդունինք, զմեզ ալ մեր հաւատքը կը փրկէ՝ ինչպէս Գրիստոս ըսաւ կնոջը.



Հասարակական կեցանքն ըսելը: Մենք աշխոյն խղճմանքի հանդարտութիւնը կունենանք, մեզն ալ Քրիստոսի խօսքին զօրութիւնը կը հասնի. Ն'ըն 'ի խաղաղութիւն: Ո՛վ քաղցր խաղաղութիւն, անպատմելի միտիժարութիւն, պատու ճշմարիտ ապաշխարութեան. ամենէն մեծ մեղաւորներն ալ սատր փորձը կաւենեն՝ երբոր խղճմանքինն աղէկ մը քննելէն ետքը, սրտանց մեղքերնուն վրայ զըջալէն ետքը, կը յաղթեն հպարտութեան, նկատմունքն ու ամաչելը մէկզի կը դնեն, ու խոնարհութեամբ մեղքերնին Քրիստոսի փոխանորդին կը խոստովանին: Ոչ երբէք մարդ իր ախտերուն հետեւելով՝ իր բընութիւնը գոհ ընել ուղելով՝ կրնայ զգալ աս հանդիսան ու քաղցրութիւնը, ինչ որ ասանկ ապաշխարութեամբ մը կը զգայ. Քրիստոս չիխօսիր հետը, բայց ինքը գոհ է, զինքը երջանիկ կը սեպէ որ Քրիստոս իր սէրը կընդունի, ու իր ապաշխարութիւնը չիմերժէր:

Սորվինք ուրեմն սուրբ Մագդաղենացիէն՝ ինչ պէս պէտք է զըջալ սորվինք որ ինչպէս մեր զգայարանքներն որ մեղքի բանեցուցեր ենք՝ աստուծոյ սիրոյն պիտոր գործածենք: Սորվինք որ Քրիստոս աերն մեր է այն պարտաւերը՝ որ կը գծայ վրանիս, ու պարտաս է մեր պարտքը շնորհելու, թէ որ սրտանց խնդրենք իրմէն: Մեր պարտքը մեղքերնիս է. որչափ որ աւելի մեղանչէր ենք, այնչափ աւելի պէտք է զինքը սիրենք՝ մեզն թողութիւն տալուն համար: Ասանկ որ ընենք, զաստատանին օրը զմեզ զատապարտելու տեղը՝ ամենուն աւջին մեր ապաշխարութիւնը կը գովէ:

Ա. Գ. Օ Թ. Գ.

Յիսուս փրկիչ իմ, ուրեմն քու սէրդ ըլլայ իմ ապաշխարութեանս հոգին. իմ զըջումս ըլլայ՝ քեզն պէս բարեգութ ու սիրելի տէրս վնասընելուս համար: Ենորք աուր ինձի որ դեբզ աւելի սիրեմ, մեղքերս աւելի ըլլալուն համար. աուր որ աւելի սիրելովս դեբզ՝ աւելի արժանի ըլլամ թողութեան: Վառէ սրտիս մեջ քու սիրոյդ բոցը, որ զիս ալ մտքրէ Մագդաղենացիին պէս. ու քու սիրելութեանդ արժանի ընէ յաւիտեան:

Սղբեր անմահութեան, աղբերացոյ 'ի սրտէ իմէ զարտատուս ապաշխարութեան որպէս պունըկին, զի լուացից զմեզս անձին իմոյ յառաջ քան զեւանին իմ յաշխարհէս, և ողորմեա քո արարածոցս և ինձ բազմամեղիս:

### ՄՏԱԾԱԿԱՆ ՃԱ.

Պետրոս առաքելային դարձին շրայ :

### ՄԱՍՆ Ա.

Պետրոս առաքեալը Կայիափային բազը վառարանին քով նստած՝ դեռ իր ուրացուած թիւնը հաստատելու առեւն, զինուորները զՔրիստոս անկէց կանցընէին : Դարձաւ նայեցաւ Քրիստոս Պետրոսի վրայ. այն անուշ նայուածքը, աքաղաղին ալ ան միջոցին խօսելը, իր մեծ մեծ խոստմանը ները ու Քրիստոսի խրատը միտքը իյնալը, բոլորը մեկտեղ գալով աստուծոյ շնորքը անանկ շարժեց իր սիրան՝ որ մէկէն դուրս ելաւ ու խեղճ կերպով սկսաւ լալ : Պետրոս այն ցաւալի փորձովը ճանչնալով իր սկարուած թիւնը, իմացաւ որ առիթ ներէ փախչելէն՝ ի զատ - ւրիշ ճար չիկայ իրեն. թէ և սրտանց էր իր զընուրը, չիմտածեց որ երթայ Քրիստոսի ոտքը իյնայ՝ թողու թիւն ինզրէ, և ոչ Կայիափայի սպասաւորներուն հետ կենայ՝ իր երգումը ետ առնելու, սուած գայթակղութիւնը վերցընելու, ու թէ որ պէտք ըլլայ կեանքն ալ առաւ՝ իր ուրացուած թեանը փոխարէն : Աս բառի խորհուրդներէն չիխաբուեցաւ, առիթէն փախ

չիլը ամենէն հարկաւոր սեպեց. մեղաւորին պէտք է որ նախ մեղաց առիթներէն հեռանայ, մնացածը ատենին կրնայ ընել : առիթներէն չիհեռացողը բոլորովն դարձի եկած չէ :

Պետրոս առաքեալը առջի անգամ իյնալէն ետքը՝ թէ որ ան անկաց հեռացած ըլլար, երկրորդ ու երրորդ անգամ ալ չէր իյնար. բայց ինքը որչափ ալ առջի անգամուէն բազէն դուրս ելաւ, գարձեալ հոն անանալով՝ նորէն ինկաւ, անկէց ետքը և ոչ մտածեց հեռանալ : Ու թէ որ Քրիստոս ան նայուածքը ըրած չըլլար իրեն, մեղքին մէջը կը մնար. զընուրին առջի նշանը մեղաց առիթներէն հեռանալն է : Արդեօք Պետրոս առաքեալը որչափ անիծեց իր ան բազը մտնալը, ան սպասաւորներուն հետ անանուիլը, հոն անգուանքը ու շնալը, ո՛չ թէ որ ես հոն գնացած չըլլայի, աս մեղքին մէջը չէի իյնար. թէ որ հոն ուշացած չըլլայի, գոնէ երկրորդ ու երրորդ անգամ ալ զՔրիստոս ուրացած չէի ըլլար, աս խեղճութեան միջ չէի իյնար :

### ՄԱՍՆ Բ.

Պետրոս առաքեալը՝ Քրիստոս իրեն նայածին պէս, այսինքն աստուծոյ շնորքը իր սիրտը շարժածին պէս, դուրս ելաւ անկէց. ու դուրս ելածին պէս, արցունքները սկսան վազել աչքերէն. Եւ - էլէաւ արգասիս. էլայ արտառաջ : Աստուծոյ կրտսն Մատթէոս և Դուգաս աւետարանիչները : Իսկ Մարկոս՝ որ իր աչկերան էր ու վկայ իր անգագարելի արատաւացը, կրտսն. Եւ - սխառ լալ : Սկըսաւ ըսելը՝ ըսել է որ ան ատենը միայն չիլացաւ, այլ բոլոր կենացը մէջ, ամեն անգամ որ աքաղաղն

ձայն կը լսէր, գեախնը կ'ընար, ու արցունքը աչ-  
 ւըներէն գեախ պէս կը վազէր՝ անանկ որ երեսնե-  
 րուն վրայ խորը եղած էր արցունքէն, ինչպէս իր  
 վարքին մէջ գրած է: Սասնկ է ճշմարտա զընձումը,  
 իր մեղքը չիմոռնար, շարունակ աչքին աւչին է.  
 ասանկ էր Գաւիթ մարդարէին զընձումն ալ՝ որ կը-  
 սէ. Ե- մեղք էմ առաջի իմ էն յամենայն ժամ:

ՄԱՍՆ Գ.

Բայց ինչպէս ալ կրնար ելլել խեղճին մաքէն  
 Քրիստոսի ըրած ազգարարութեանը սրտաշարժ  
 կերպը, ու զինքը ուրացած ասանկ այն քաղցր  
 նայուածքն որ ինչուան սիրտը թափանցեց. ա-  
 սանք միշտ կը յիշէր Պետրոս ու կուշար: Մենք  
 ալ թէ որ սակայ մեր մեղքերը մաածէինք, ու աս  
 սուսուծոյ ողորմութիւնն՝ որ զինքը անարդէնէս  
 ետքն ալ զմեզ երեսէ չիձգեց, մենք ալ իրեն պէս  
 արցունք կը թափէինք:

Պետրոսի մաքէն չէլած բաներուն մէկն ալ ի-  
 րեն ըրած յանձնադատանութիւնն եղաւ, ու  
 ինքը զինքը մեկալ առաքեալն իրեն վեր գնելը՝ ըսե-  
 լով. Թեպէք եւ ամենքն գայթակղեցին, այլ էս ու: Եթէ  
 մոռնէլ ես հասանիցէ ընդ գէւը, զ՛նչու ու ուրացայց: Ա-  
 սանկ մեծ մեծ խօսելէն ետքը, ասանկ իր վրայ  
 վստահ ըլլալէն ետքը, մեկ անարդ աղախնոյ մը  
 խօսքէն վախնալն, ու իր վարդապետը ուրանալը,  
 չէր կրնար մոռնալ: Միտր համար երբոր Քրիստոս  
 յորութիւն ասնէլէն ետքը հարցուց իրեն որ՝  
 Պետրոս, կը սիրէս զիս. վախցաւ ըսելու՝ որ կը  
 սիրէր, ու մանաւանդ Քրիստոսի իրեք հեղ նոյն  
 հարցմունքը ընէլէն արամելով՝ որ չըլլայ թէ նո-  
 րէն վստանգի մը գայ, ըսաւ. Տէր իմ, դուն ամեն

բան գիտես, սիրոս ալ կը ճանչնաս՝ որ կը սիրեմ  
 զքեզ: Ուստի Քրիստոս ալ անոր առեած ինչա-  
 նութիւնը նորէն հաստատելէն՝ ի գատ, իմացուց  
 իրեն որ իր սէրը այն աստիճան պիտոր հասնէր՝  
 որ արեւնն ալ պիտոր թափէր Քրիստոսի սիրոյն  
 համար. Զայս ասաց նշանակեալ թէ որով յահա քառա-  
 սոր առնիցէ դաստատած: Աս կտորը մեզի շատ սիրտ  
 կուտայ. Պետրոսի ըրած մեղքը պզտի մեղք չէր,  
 բայց զընձամբ ու խոնարհութեամբ անանկ նորէն  
 աստուծոյ շնորքին արժանի եղաւ՝ որ Քրիստոս  
 բոլոր իր հաւատացեալները անոր յանձնեց,  
 Աբաժեա զւիտար իմ ըսելով, ու զինքը նորէն իր եկե-  
 ղեցւոյն գլուխ ըրաւ: Քրիստոսի ուրացողը՝ Քրիս-  
 տոսի փոխանորդ եղաւ, ու հաւատացեալոց գլուխ:  
 Ուրեմն որջափ ալ մեղաւոր ըլլանք, կրնանք մենք  
 ալ իր զընձանը ու խոնարհութեանը հետեւելով՝  
 աստուծոյ շնորքին նորէն արժանի ըլլալ, ու կոր-  
 սընցուցած արդէնքնին նորէն վստաւիկլ: Պե-  
 տրոսի վրայ ալ ցուցուց Քրիստոս ան խօսքն որ  
 ըսաւ. Ու եիի իմէլ զարդարս, այլ զեղաւորս: Պողոս  
 առաքեալն ալ կը խոստովանի՝ Քրիստոսի նոյն  
 խօսքը իր վրան ալ կատարուելը: Յետոս Քրիստոս  
 էն աշխարհ իրէլ զեղաւորս, որոց գլուխն էս էմ: Պատ-  
 ճառն ալ ետեւէն կըսէ. Որպէս զն մեղաւորները  
 Քրիստոսի ինծի ըրած երկայնմտութիւնը տեսնե-  
 լով՝ օրինակ ասննն. Զի նախ յիս եղոյց դամենայն էր-  
 նայնմարութեան՝ յօրինակ այնոցիկ որ հաստատուցն իցէն ի նա:

Ա. Գ. 0 Թ. Գ

Յիտես փրկիչ իմ, իմ վրաս ալ դարձուր քու  
 աչքդ, ինծի ալ ըրէ ատ անուշ նայուածքդ. կա-  
 կուզցուր իմ սիրաս ալ որ լամ իմ մեղքերս,

խոնարհիմ քու առջիդ, վրաս չիվստահիմ. ու թէ որ արեւնս քեզի համար չիկրնամ թափել քու առաքելոցդ պէս, գոնէ արցունքս թափեմ, ու կարենամ Ռաւիթ մարգարէին պէս ըսել. Լրացի պմենայն գիշեր պմահիճս իճ, և արբուսուսօք իճով պմից. Ղինս իճ Բացի:

Շնորհեալ վիմին եկեղեցւոյ,  
Ձոր պահեցեր ի հոսելոյ  
Եւ կանգնեցեր ի գլորելոյ,  
Վասն սրբաին արտասուելոյ,  
Կանգնեա եւ զիս տեր ընդ նրմին  
Ի գլորմանէ սայլմարողին,  
Տարով աչացս յորդ արտասուս  
Եւ ջուր նրման ծովու գլլոցս:

### ՄՏԱԾԱԿԱՆ ՃԲ.

Պօղոս առաքեալիւ դարձիւ վրայ:

### ՄԱՍՆ Ա.

Պօղոս առաքեալը հին օրէնքին նախանձայոց ըլլալով՝ Քրիստոսի կրօնքին գէմ ելաւ, քրիստոնէաները կը հալածէր, սուրբ Ստեփանոսին քարկոծմանն ալ մեղսակից եղաւ, միով բանիւ՝ թշնամի էր Քրիստոսի: Եւ թէպէտ չիգիտնալով էր ըրածը, ինչպէս ինքն ալ կըսէ. Զի պայն յանգիստութեան և յանհասանութեան գործէի, բայց դարձի գալէն ետքը՝ ինքը զինքը ամենէն եւել մեղաւոր սեպեց, ու մեղաւորներուն գլուխը կը կոչէ զինքը. Հասարարիճ է բանս, և ամենայն ընդունելութեան արժանի, ղի Յետոս Քրիստոս եմ յաշխարհ իրիւ ղեղաւորս, որոց գլուխն էս էճ: Ի՞նչպէս կրնար ըսել աս խօսքը՝ երբոր իրմէ մեծ ուրիշ այնչափ մեղաւորներ կային. Յուգա՛ որ զՔրիստոս մատնեց, Հրեաները՝ որ զՔրիստոս խաչեցին, քահանայապետները՝ որ գիտնալով ու առնախանձու դատապարտելտուին Պիղատոսի զՔրիստոս, ու ժողովօրդը գրգռեցին՝ որ Բարաբբա աւաղակը Քրիստոսէ քիչ յանցաւոր սեպելով՝ անիկայ ազատել տան խաչելէն, ու

զՎրիստոս դատապարտել: Ուրեմն ինչպէս կըրնար Պօղոս առաքեալը մտայ համոզմամբ զինքը մեղաւորներուն գլուխը սեպել: Վասն զի առաքեալը իր մեղքը միշտ կը մտածէր, իր մեղքը միայն միշտ աչքքին առջևն էր, անիկայ միայն կը զգար. ուստի սաստիկ ցաւի մէջ եղօղի մը պէս՝ իր ցաւը ամեն ցաւէ եւեւ կը սեպէր, վասն զի ան էր իր զգացածը: Յաւ քաջօղը, ինչպէս են աչքի՝ ականջի՝ ակուայի՝ գլխու՝ ցաւերը, իր քաշածը միայն գիտէ փորձով, ուրիշներուն քաշածը կը լսէ կամ կը տեսնայ միայն, բայց չիզգար. իր ցաւը ամենէն ծանր կուգայ իրեն, ասանկ ալ սուրբ առաքեալը այն աստիճան կը ցաւէր Վրիստոսի դէմ ընելուն համար՝ որ իր ցաւոցը պատճառը ամենէն սաստիկ կերեւար իրեն, անոր համար ալ զինքը ամենէն մեղաւոր կը սեպէր:

### ՄԱՍՆ Բ.

Պօղոս առաքեալ առ խօսքը իր դարձէն շատ տարի ետքը իր սիրելի աշկերտին կը գրէ. ուրեմն պէտք էր որ ըսէր՝ Որոյ գլուխն էս էի. բայց ինքը ասանկ չըսաւ, այլ՝ Որոյ գլուխն էս էմ. իրրև թէ ան ատենն ալ մեղաւոր ըլլար: Վասն զի ինքը զինքը ինչ որ էր առանց աստուծոյ շնորհացը՝ անանկ կը սեպէ. թէ որ աստուծոյ շնորքը իրեն օգնած չըլլար, միշտ նոյն մեղքին մէջը մնացած կըլլար. ու դարձի գալէն ետքն ալ՝ թէ որ աստուծոյ շնորքը վրայէն վերնար, դարձեալ նոյն մեղաւորը կըլլար: Ուստի իր վրայ եղած փոփոխութիւնը բոլորովն Վրիստոսի կընծայէր՝ ըսելով. Նախ յիս երայց Յիսուս Վրիստոս զամենայն երկայնապահութիւն. աս խօսքը ինքը զինքը ամենէն մեղաւոր սեպելուն հետեւանքն է.

ըսել կուզէ որ՝ Վրիստոս իր ամենէն մեծ երկայնապահութիւնը իմ վըստ ցուցուց, որ մեղաւորներուն գլուխն էմ. ու թէ որ ինծի ողորմեցաւ, ուրիշ ամեն մեղաւորաց ալ կողորմի. Այի նախ յիս երայց Յիսուս Վրիստոս զամենայն երկայնապահութիւն, յօրի-նախ այնոցի՝ որ հասապալացն իցեն ՚ի նա: Ու իրաւ՝ քան ինէր Պօղոս առաքեալին օրինակովը ու անոր ձեռքովը դարձի եկան, բայց իր խոնարհութիւնը նայէ՝ որ միշտ ինքը զինքը առաջ կը նետէ. Նախ յիս երայց զամենայն երկայնապահութիւն: Ինքը զինքը աս կերպով կամբաստանէ, որպէս զի մենք սիրա առնենք, վստահինք՝ որ Վրիստոս մեզի ալնոյն գթութիւնը կը բանեցընէ, մեր մեղացն ալ թողութիւն կուտայ:

Իր վստահութիւնը փրկութեան հասնելու ինչ բանի վրայ գնելն ալ կրսէ, որպէս զի աւելի սիրա աւանդէք. Յիսուս Վրիստոս էին յաշխարհ՝ իրիւր զմեզաւորս, որոյ գլուխն էս էմ: Ինչ որ Վրիստոս աշխարհ եկեր է մեղաւորները փրկելու համար, ուրեմն կուզէ փրկել զմեզ. թէ որ իր աստուածութեան փառքը մեզի գնելով՝ մեզի պէս խեղճ մարդկանց նման մարդ եղէր է, ու բայց ՚ի մեղաց՝ ամեն ողորմելութիւնն իս յանձն առեր է, ու անոնցմէ ՚ի զստ՝ նաև չարչարուիլ ու խաչուիլ մեզի համար, ուրեմն կուզէ որ փրկուինք. ասիկց աւելի ինչ կրնար ըսել առաքեալը՝ մեզի սիրա սաղմ համար:

### ՄԱՍՆ Գ.

Բայց ինքը մէյմը դարձի գալէն ետքը, մէյմը Վրիստոսի հետ միանալէն ետքը, ալ չիբաժնուէ ցաւ իրմէն. Վրիստոսի սիրոյն համար ամեն բան

յանձն առեր էր, ինչպէս կըսէ. Սիրդ ո՛վ մէկէայե  
զմեզ 'ի սիրոյն 'Քրիստոսի, նեղութիւն, Բէ անխնայութիւն,  
Բէ հաւածանք, Բէ սո՛վ, Բէ մերկութիւն, Բէ վիշապ, Բէ  
սուր... ու մահ եւ ու կէտնք, եւ ու հրեշտակնք, ու որ կանոն  
եւ ու հանդերձեալնք, եւ ու այլ ինչ որարած էարէ մէկէ  
զմեզ 'ի սիրոյ անպի սաստիճոյ' որ 'ի 'Քրիստոս Յիսուս 'ի  
պէր մեր: Հոս է ամեն գժուարութիւն. Թէ որ մեր  
զընդունն ալ՝ մեր դարձն ալ՝ իրենին պէս եղած ըլ-  
լար, Թէ որ մենք ալ իրեն պէս ճանչնայինք՝ ինչ  
գլխութիւն ըրած է մեզի 'Քրիստոս, մենք ալ ի-  
րեն հետ ամեն արարածոց ձայն կուտայինք, ին-  
չուն մահ ալ յանձն կառնէինք՝ մէյմըն ալ չի-  
մեղանչելու համար: Բայց մենք չենք մտածեր,  
չենք ըմբռներ ինչ գերութենէ խաղսէնիս, խա-  
ղսէնէս ետքն ալ զմեզ մեղաւորի տեղ չենք դը-  
ներ. Պօղոս առաքեալը դարձի դալէն ետքը հրաշք-  
ներ կը գործէր, երրորդ երկինքը ելաւ, ու այսու  
ամենայնիւ զինքը մեղաւորներուն առջինը կը սե-  
պէր. իսկ մենք մեր առջի վիճակը կը մոռնանք, ու  
գրեթէ սուրբերուն կարգը կը դնենք զմեզ: Մարդս  
իր սիրելոյն դէմ չի գիտնալով ալ բան մը որ ընէ,  
չիմոռնար ըրածը, ու քանի որ միտքը դայ՝ ցաւ  
կը զգայ սրտէն. Թէ որ զՔրիստոս սիրէինք, չէինք  
մոռնար մեր մեղաւոր ըլլալը:

Ա. Ղ. Օ Թ. Գ

Յիսուս փրկիչ իմ, տուր որ ճանչնամ ինձի ը-  
րած գլխութիւնդ. ուրիշը ինձի պղտի բարեք մը  
որ ընէ, ամօթ կը սեպէմ՝ իրեն ապերախտ ըլլա-  
լը, կը սիրեմ զինքը: Իսկ քեզի, որ այսչափ բա-  
րեք ըրած ես ինձի ու կընես, ապերախտ եմ, ու

սիրտս անզգայ է քու սիրոյդ: Փոխէ աս սիրաբը,  
ու նոր սիրտ մը առեր ինձի քու ամենակարողու-  
թեամբդ. Սիրք սուրբ հասարակեալ յիս սաստիճոյ, եւ  
հոգի սուրբ ներգրեալ 'ի քորի իմոսմ:

Որ ընտրեցեր 'ի մարգկաննէ հաւատարիմ սուրբ  
զառաքեալն Պօղոս, որոշելով յաւատարման՝ լի-  
նէլ քեզ խոստովանող, աղաչանօք սորա կեցոյ  
զմեզ:

# ՄՏԱԾԱԿԱՆ ՃԳ.

Բարի առաջակիև դարձիև վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Քրիստոսի հետ խաչուած երկու աւազակնե-  
րուն մէկը, տեսնելով որ Քրիստոս այնչափ չար-  
չարանաց ու նախատինքներու մէջ՝ բերնէն դան-  
գաւ մը չհիշանելէն ՚ի զատ, նախատօղնեքուն ու  
չարչարօղնեքուն համար աղօթք կընէր, երբոր  
տեսաւ իր ընկերօջն անոնց յարմարելը, սկսաւ  
յանգիմանել զինքը. Դուն ալ առ կատաղի մարդ-  
կանցը կը հետեւիս, Աստուծոյ չէս վախնար,  
մէնք ալ նոյն պատժոյ մէջ ենք. ու մեր կրածը  
յանցանքներնուս պատիժն է, ինքը մէկու մը  
միտս տուած չունի, անմեղ է: Ետ բան՝ աս ա-  
ւազակին արիւթիւնը, խոնարհութիւնը, ու  
արամբանութիւնը. արիւթիւնը, վասն զի ընկերը  
յանգիմանելով բոլոր քահանայապետներն ալ,  
զինուորներն ալ, հոն եղօղնեքուն ամենն ալ կը  
յանդիմանէր, անոնց ըրած հայհոյանքները ընկե-  
րօջը ըրածէն շատ աւելի ծանր էին: Թնարհութի-  
ւնը, վասն զի զինքը յանցաւոր ու արժանի կը ճանչ-  
նար քաշած պատժոյն. ասկէց ալ յայտնի է որ

ճշմարիտ զղջում ունէր ըրած մեղքերուն վրայ:  
Տրամբանութիւնը, վասն զի թէ և քահանայապետ-  
ներն ու Պիղատոսը յանցաւոր դատեր էին զՔրիս-  
տոս, ինքը տեսնելով Քրիստոսի համբերութիւնը՝  
լուծիւնը՝ հանգարուածիւնը՝ անյիշատարու-  
թիւնը, ու անոր թշնամեացը կատարութիւնը  
խնայաւ որ անանկ առաքելի անձը յանցաւոր չէր  
կրնար ըլլալ, կիրքի բան պիտոր ըլլար զինքը խա-  
չէնին: Աստուածային շնորքն ալ ան ատենը իրեն  
լոյս տուաւ. ճանչցաւ Քրիստոսի ո՞վ ըլլալը, ու  
գարձաւ ըսաւ իրեն. Յիշեալ էի՝ քէր, յորժամ գայ-  
նիս արգայութեամբ բով: Քրիստոսի ան տանջանքնե-  
րուն մէջը՝ խաչի վրայ զինքը կատուած տեսնելով՝  
ճանչնալ որ աստուած է, ասիկայ առանց աստու-  
ծոյ մեծ շնորհացը անկարելի էր: Ի՞նչ աստուա-  
ծային նշան տեսաւ վրան որ՝ իրեն քէր կանչէ.  
ձեւերները ուրքները դամուած, գլուխը փուշե-  
րով ծակիճրկած, սոքէն ինչուան գլուխը վէճք,  
ամենքը զինքը կը նախատեսին, մանաւանդ քահա-  
նայապետներն՝ որ աստուծոյ փառացը նախան-  
ձաւոր պիտոր ըլլային. ասոնք էին իր արքայու-  
թեանը նշան. կը տեսնէր մարդ մը՝ որ մեռնելու  
վրայ էր, աս էր իր աստուածութեանը նշան: Զէ,  
աւազակը մարդկօրէն չէր կրնար ճանչնալ. իր ա-  
րիւթեանը՝ իր խոնարհութեանը՝ իր զղճմանը՝ իր  
Քրիստոսի անմեղութիւնը ճանչնալուն համար,  
աստուած ալ իրեն գերբնական լոյս մը տուած՝  
որ Քրիստոսի ո՞վ ըլլալը ճանչնայ: Թէ որ քահա-  
նայապետներն ալ աս սիրաբ ու աս միտքը ունե-  
նային, թէ որ կիրքերով սրտերնին ալ՝ մարքերնին  
ալ ազականամ չըլլար, աստուած իրենց ալ լոյս  
կուտար, իրենց ալ կը ճանչնային զՔրիստոս, ու  
զինքը չէին խաչեր. Զի եթէ էր ծանոթեալ, ու ար-  
դեօք դարէն բառացի ՚ի խաչ հանէին:

ՄԱՍՆ Բ.

Աստուածային շնորքը հաւատքին հետ յոյս ու սէր աւտուաւ աւաղակին. ջիւուսահատեցաւ նա յեւրով իր անցեալ կենացը վրայ, որ ինչուան ան ատենը մեղքերու մէջ՝ աւաղակութեամբ անցուցեր էր, ուշ չիտեսցէ իր զըջումը, տարակուսելի չիտեսցէ իր դարձը մահուան դուռը հասած ըլլալուն համար. բոլոր յոյսը Քրիստոսի վրայ դըրաւ. Յիշեալ ղիս րբէ՛, մաքեղ որ ելլեմ, կորսուած եմ. յիշէ իմ զըջումս, ու ներէ իմ մեղքերուս: Իսկ սիրոյն սաստկութիւնը ընդունած թողութեանէն յայտնի է. Քրիստոսի ըսածն էր. Չէ որո՞մ շար Լուսարար, շար սիրէ: Աս սիրովն էր որ խաչին վրայէն զՔրիստոսի անմեղութիւնը պաշտպանեց, ու ընկերոջը հայհոյանքը լռեցուց. սա սիրովն էր որ խաչին վրայէն իր հաւատքը յայտնեց, ու ամենուն առջին իր մեղաւոր ըլլալը խոստովանեցաւ: Ան ատենը Յիսուս ալ իրեն ըսաւ. Ամէն անձ գեւ, այսօր ընդ իս իցես՝ ի Դքսիսիս: Աս խօսքովս Քրիստոս, չէ թէ միայն աւաղակին մեղացը թողութիւն տուաւ՝ որ աստուած միայն կրնայ ընել, այլ նաև որոշեց անդին ունենալու վիճակը, արքայութեան դուռը բացաւ իրեն, յաւիտենական երջանկութիւն խոստացաւ, որն որ երկնի և երկրի տէրը միայն կրնայ ընել: Արդեօք ի՞նչ մտութարանք ունեցաւ բարի աւաղակը սա խօսքը լռելով Քրիստոսի բերնէն, ու ապահով ըլլալով որ նոյն օրը պիտոր ունենար ան երջանկութիւնը. բոլոր կեանքը գէշ անցուցած ըլլալով, ու մահուան ատենը զըջում ընելով, Քրիստոսի հետ պիտոր ըլլար մէկէն զբախակն մէջ, այսինքն արգա-

րոյ քովը՝ որ կը սպասէին քիչ ատենէն Քրիստոսի յաղթական փառաւոր գալստեանը, որպէս զի իրեն հետ արքայութիւն երթան, յաւիտենական երանութիւնը վայելելու:

ՄԱՍՆ Գ.

Ինչ որ Քրիստոս բարի աւաղակին ըսաւ, նոյնը ամենուս ալ կրսէ. անիկայ օրինակ մըն է իր անհուն ողորմութեանը, մեղի ալ նոյն խոստմունքը կրնէ, որչափ ալ մեղաւոր ըլլանք, որչափ ալ մեղքերնուս մէջ երկան ատեն կեցած ըլլանք: Մենք ալ սկտք է բարի աւաղակին վաստահութիւնը ունենանք Քրիստոսի խոստմունք վրայ. մեր աւելորդ վախը կը վշտացնէ մեր փրկիչը. ամենքս ալ տղար մեղի ենք, ամենքս ալ մեղաւոր ենք, կը ճանչնանք մեր մեղքերը, ու աւելի ճանչնանք պիտոր մեանելու ատեննիս: Թէ որ մեղքերնիս միայն նայելու ըլլանք, յուսահատելի է մեր բանը. բայց Քրիստոսի չարչարանքը՝ Քրիստոսի խոստմունքն է՝ որ մեղի սիրտ կուտայ: Արցածնիս ընէնէս ետքը՝ ուրիշ բան չմտածենք, բայց Յիսուսը խաչին վրայ, Յիսուսը՝ որ մեղի համար իր սուրբ արիւնը կը թափէ. դիմենք իր գիրկը, թե երբ բացած մեղի կը սպասէ, ինչպէս որ աւաղուց մեղի խոստացած էր՝ որ խաչին վրայէն զմեզ գրկէ: Յարժամ Բարձրաշայն յերկէ, զամենէն յգեղեցի սա իս:

Ա. Դ. Թ Գ

Յիսուս փրկիչ իմ, քու ողորմութիւնդ որ կը մտածեմ՝ ամեն վախ սրտէս կը փարատի. թէ որ քու սուրբ արիւնդ ինձի համար թափած չըլ-



Լայիր, յուսահատելէ եր իմ բանս, բայց բարի աւազակին օրինակը ինձի սիրտ կուտայ. անոր պէս կը զիմեմ քեզի, անոր պէս կը պաղատիմ, Յիւնէս Ղէս Կէր, յոյժամ գայցեն արայսն-Սէամբէր Կոլ:

Տէր որ գթացար յաւաղակն խաչակից լինել քեզ, և մոքքեցեր զաղակընթիւն յանցանաց նորա յաղբերէ կողմ քո, գթա և յիս 'ի մեղաւորս՝ որ ծարաւիս եմ առ քեզ, և փափաքեմ 'ի դաւիթս քո՝ որպէս զմի 'ի յեղջերուաց 'ի յաղբերս ջուրց:

### ՄՏԱԾԱԿԱՆ ՃԳ.

Խղճմտակրի հակարարութիւն վրայ:

### ՄԱՍՆ Ա.

Քրիստոս անին մեր սուրբ աւետարանին մէջ մեր հօգուցն ամեն հարկաւոր եղած բաները կը սորվեցնէ մեզի. ասոնցմէ մէկն ալ է՝ խղճմտանք նուս հետ հաշիւնիս օղէկ բանելը: Քրիստոս մեր կեանքը ճամբու մը կը նմանցնէ. աս ճամբուն մէջ մեզի ուղեկից կուտայ ոստի մը՝ որ թշնամի չէ մեզի, բարեկամ է, բայց իր հաշիւը օղէկ կը նայի մեր բարւոյն համար: Ուստի կը յորդորէ զմեզ Քրիստոս, որ երթալու անկերնիս դէս չի հասած՝ հաշիւնիս տեսնանք անոր հետ, ինչ պարագ որ ունինք՝ վճարենք, որպէս զի չըլլայ թէ ետքը երբոր ատեան գիմէ, դատաւորը զմեզ բանա զնէ, ինչուան ետքի մանր ստակն ալ մեզի վճարել ապ. Լէր Իրաւախոյ ընդ ոստի Կոմ վաղագոյն՝ միւլթեմ իցես ընդ նմա 'ի ճանապարհի, գոռցէ ճապնիցէ զքեզ ոստին դատարարի, և դատարարն դահճի, և արխնիցիս 'ի Բանդ. ամէն ասէմ քեզ, ոչ եւանիցես անպի՝ միւլթեմ հատուցանիցես զյետին նաբարալիքն: Ասկէց աղւոր

օրինակ չկրնար ըլլալ մեր խղճմտանքին՝ որ առեւր է աստուած մեզի ընկեր մեր կենացը ճամբուն մէջ. թէ որ հիմակուց զինքը գոհ չընենք, ետքը Քրիստոսի ատեանը չեանքինս պիտոր ելլէ, ու հոն զմեզ դատաւորին ձեռքը տայ, այսինքն աստուծոյ արդարութեանը մասնէ. ան ատենը պարտքերնիս ճիշդ պիտոր զճարենք ինչուան ետքի մանր ըստակը, ան ատենի զճարքը սոսկալի պիտոր ըլլայ: Անոր համար Քրիստոս տէրն մեր իր ամբաւ զթուծեամբը առաջուց կը յորդորէ զմեզ, գեռ ճամբու մէջ մեր ոտխին ձեռքէն խալտել: Ի ճանապարհի գոտի զհաշիւն, զերծանէն 'ի նմանէ:

ՄԱՍՆ Բ.

Քրիստոս տէրն մեր խղճմտանքնիս մեզի ոտխ կը կոչէ, չէ թէ մեզի թշնամի ըլլալուն, հասա մեր անկարգ բաղձանքներուն գէմ կենալուն հասմար: Խղճմտանքնիս մեզի նոյն բանը կընէ, ինչ որ չընշտակը՝ Բաղաամին ըրաւ: Բաղաամին բռնած ճամբան աստուծոյ գէմ էր. անոր համար հրեշտակը՝ ձեռքը սուր՝ գէմ կեցաւ իրեն, էքը խըրտեցուց, Բաղաամին ոտքը պատին զարնուելով՝ ճղմուեցաւ, ինչուան աչքը բացուեցաւ, տեսաւ որ հրեշտակ աստուծոյ էր իրեն գէմ կեցողը. էչէն ինչաւ, երկրպագութիւն ըրաւ իրեն: Ան ատենը հրեշտակը ըսաւ. Մուռ ճամբայ բռնելուդ համար է քեզի գէմ կենալս. Ահա եւի էս 'ի քանապիսիւն քեզ, զի ոչ է ճանապարհդ քո ուղիդ ստալի իմ: Ասանկ կընէ մեզի մեր խղճմտանքն ալ շատ անգամ՝ ծուռ ճամբէն զմեզ էա կը քաշէ, շատ անգամ ալ շիտակ ճամբան կը քշէ զմեզ. երկուքն

ալ մեր կամացը գէմ: Բայց ասով մեզի թշնամու թիւն է ըրածը. քաւ լիցի. ալ աղէկ է որ բարեկամ մը մեզի գէմ կենայ, քան թէ թշնամի մը զմեզ շողքորթէ ու խաբէ. Լաւ էն հարսածք բարեխի քան դժամակար համբոյրս թշնամոյ: Չմեզ շողքորթող՝ մեր անկարգ բաղձանքներն են, խի մեզի գէմ կեցողը՝ խղճմտանքնիս է. էթէ կուզենք որ մեզի գէմ չըլլայ, զինքը գոհ ընենք: Բայց ինքը գոհ չըլլար, ինչուան որ իրեն մտիկ չընենք. չենք կրնար զինքը հանդարտեցընել պատճառանքներով, չենք կրնար զինքը ուրիշ կերպով մեր կողմը ձգել բայց միայն իրաւունքը տալով իրեն, ու իր ազգարարութեանցը հեռուելով: անոր համար կըսէ. Լեր Իբրասիսի ընդ ոտխի քամ: Անկարելի բան է, ինքը մեզի չե՛նեանիր, միշտ կը բողբէ մեզի գէմ. ու վայ մեզի, թէ որ իր բողբը չուզենք լսել:

ՄԱՍՆ Գ.

Ուրեմն խղճմտանքնիս, որ մեզի ոտխ է՝ բայց բարեկամ, պէտք է գոհ ընենք. ու գոհ ընենք՝ քանի որ ճամբուն մէջն ենք, քանի որ կապրինք. Վարդայն միւլէտ-իցէս 'ի ճանապարհի: Վասն զի թէ որ առաջուց իր հետը հաշիւնիս չեանանք, թէ որ զինքը առաջուց գոհ չընենք, ետքը հարկ կըլլայ որ բարեկամութիւնը մեկզի դնէ, վասն զի երեսուցապատութիւն չկրնար ընել. հարկ է որ ետքը իրաւցընէ մեր ոտխը ըլլայ՝ Քրիստոսի ատեանը ելած ատեննիս: Ուրիշ ոտխներու պէս չէ՝ որ առաջուց ծածկէ իր ընելու ամբաստանութիւնը, ու ետքը գուրս հանէ, հիմակուց մեզի չ'իջևտակ

կը յայտնէ իր գոհ չըլլալը: Քրիստոսի ատեանը  
 ինչ որ պիտոր ըսէ, հիմակուց շարունակ կըսէ  
 մեզի. սակեց մեծ բարեկամութիւն կրնայ ըլլալ  
 ասանկ բարեկամին խօսքին մտիկ չընելը ինչ մեծ  
 անխելքութիւն կըլլայ. վասն զի հեռանքը սրբ-  
 անիկ չէ. կամ յաւիտեանական դատապարտութիւն,  
 և կամ ինչուան ետքի մանր ըտակը վճարել է  
 քաւարանին մէջ: Մահընէ ետքը մարգս իր  
 խղճմտանքը չիկրնար խաբելըբել. գեռ դատաւորը  
 վճիռ չիտուած՝ ինքիքն իր խղճմտանքին ամբաս-  
 տութիւնը կը հաստատէ, ինքիքն իր վճիւրը կու-  
 տայ: Ասոր համար է որ հոգևոր առաջնորդները  
 կը յորդորեն զմեզ՝ ամեն օր քիչ մը ատեն միա-  
 քերնիս ժողվել, մեր մահուան ատենը երեւա-  
 կայել, մտածել որ հիմայ ան վտանգն մեջն որ  
 ըլլայինք՝ խղճմտանքնիս մեզմէ ինչ կուզէր. որպէս  
 զի հիմակուց իր ուղածը կատարենք, զինքը գոհ  
 ընենք. Լէր էրասախոհ ընդ ոսկիի գոհ միւլքէս էջես՝ է  
 ճանապարհի: Ա՛հ, ինչ երջանկութիւն է մտածելն որ  
 որչափ ալ մեղաւոր ըլլանք, որչափ ալ պարտք ու-  
 նենանք, բայց խղճմտանքնուս հետ հաշիւնիս տե-  
 սեր ենք, հաշտ է մեզի հետ, իր բողբը հոս մտիկ  
 ըրեր ենք՝ գեռ Քրիստոսի ատեանը չեհասած. Ի  
 ճանապարհի գորը դեաշիւն. ալ չիհարկաւորիր մաս-  
 նել զմեզ դատաւորին, վասն զի թշնամի ոտիս չէ,  
 գիտնք որ չիտաբեր զմեզ. այս է խղճմտանքի  
 հանգարտութիւն ըտուածը, որուն հետ բաղբա-  
 սուելու վայելք մը չիկայ աշխրբիս վրայ:

Ա Ղ Օ Թ Բ

Յիսուս փրկիչ իմ, միտքս աս խրատնէ բովդ լու-  
 սաւորելուդ համար՝ կորհնեմ զքեզ. շնորք տուր  
 ինձի որ սորվեցուցածդ՝ ի գործ դնեմ, խղճմտան-  
 քիս գէմ չընեմ, ըրածիս ալ ճարը տեսնամ. որ-  
 պէս զի ես ալ արժանի ըլլամ վայելելու այն խա-  
 ղաղբութիւնն՝ որ քու ծառայքդ աշխրբիս վրայ  
 ալ կը վայելեն խղճմտանքի հանգարտութեամբ:

Խաղաղութիւն մեր և կեանք՝ որ ՚ի Հօրէ առա-  
 քեցար միածին որդի աստուծոյ, տէր մեր և փրկ-  
 ցիչ Յիսուս Քրիստոս, առը մեզ զխաղաղութիւն  
 քո, զոր շնորհեցեր սրբոց քոց առաքելոց՝ փր-  
 մամբ քո ՚ի նոսա զկենդանացուցիչ և զամենազօր  
 Հօգիդ քո սուրբ:

# ՄՏԱԾԱԿԱՆ ՃԵ.

Բարևսպաշտ քրիստոնէիև ունեցած սրտիև  
խաղաղութեանը վրայ :

## ՄԱՍՆ Ա.

Ինչպէս որ ամպարիշտ մարդկանց անկարելի է սրտի խաղաղութիւն ունենալ, Զի ու գոյ խաղաղութեան ամպարչապոյ՝ առէ Կէր, ասանկ ալ բարեպաշտ մարդուն սիրտը միշտ խաղաղութեան մէջ է: Ասիկայ սուրբ գիրքը ըսած ալ չըլլար, խելքը կը ցուցընէր. վասն զի աստուած մարդուս ծայրագոյն բարին ու վերջին վախճանը ըլլալով, անկարելի է որ մարդուս սիրտը հանդէս՝ առանց աստուծոյ հետ միանալու. իսկ աս միութիւնը ուրիշ կերպով չի կրնար ըլլալ, բայց բարեպաշտութեամբ ու աստուծոյ պատուիրանքները պահելով: Երբոր բան մը իր կեդրոնէն դուրս է, բռնի կը կենայ հոն. երբոր մարդկային մարմնոյն մէկ անդամը տեղէն ելած է, ինչ որ ընէս չի հանդէր. ասանկ ալ մարդուս սիրտը՝ երբոր Աստուծոյ բաժնուած է մեղքով, իր կեդրոնէն դուրս է. ուստի աշխարհիս ամէն վայելքն ալ որ ունենայ, չի հանդէր. անոր համար սուրբ Օգոստինոսը կըսէր

առ աստուած. Սրբերը զեղ, Կէր, վասն գո. և անհանգիստ է սիրտ մեր մինչև հանգուցեալ ՚ի Կէր: Երբոր մեղաւորը Աստուծոյ հետու կուղէ կենալ, ամենէն առաջ իր միտքը իրեն թշնամի կըլլայ, իր հաւատքը զինքը կը գատապարտէ, իր կրօնքը իրեն սոսկում կը բերէ, իր խղճմանքը զինքը կը տանջէ, իր մեղքը զինքը ալէկոծութեան մէջ կը ձգէ. Այլ անորէն Իբրև զծով ծոթեցին, և հանգիստ մի գոցեն: Սոսկ մտածելն որ ետքը սուր պիտոր էր. թայ, իր դժոխքը ասկէջ կը սկսի. չի կրնար ալ չի մտածել, խղճմանքը մտածել կուտայ:

## ՄԱՍՆ Բ.

Ընդ հակառակն՝ երկիւղած մարդուն սիրտը միշտ խաղաղութեան մէջ է. սաղմասին խօսքն է. Խաղաղութեան բաղամ է այնորիկ՝ որ սիրեն զբէնս գո: Վասն զի ով որ աստուծոյ դրած օրէնքները կը պահէ, ով կրնայ անոր սիրտը խառնել. ինչ վիշտ ու նեղութիւն ունենայ, գիտէ որ աստուած կը խրկէ վանոնք՝ իր հաւատարմութիւնը վորձէլու, իր վարձքը եւեկընելու համար. կորհնէ զաստուած, գանդրտելու տեղը՝ թէ որ հիւրնանայ, կը մխիթարուի՝ Քրիստոսի չարչարակից ըլլալուն համար. թէ որ ալքըսնայ, կուրախանայ Քրիստոսի նմանելուն համար՝ որ մեծատուն էր ու մեղի համար աղքատցաւ. թէ որ նախատուի, Քրիստոսի խաչին վրայ քաշած նախատինքները մտածելով կը մխիթարուի, որ երկու աւաղակաց մէջը խաչուեցաւ, ու Բարբաբայէն գէշ սեպուեցաւ: Կարճ խօսքով՝ աստուծոյ կամքը իր ուղածն է, ինչ որ աստուած կուղէ՝ ինչպէս որ կուղէ՝ իր

ուղածն ալ ան է. իր սրբին տիրողը Քրիստոս է, որ մեր սրբին խաղաղութիւնն է՝ ինչպէս Պօղոս առաքեալը կըսէ, Այն նա է խաղաղութիւնն մեր :

### Մ Ա Ս Ն Գ .

Ով որ աստուծոյ հետ խաղաղութիւն ունի, անիկայ ուրիշներուն հետ ալ չիխառովիր. վասն զի աստուծոյ պատուիրանքները պահէլով՝ սրբին մէջ ոչ քէն կը պահէ, ոչ նախանձ, ոչ կասկած, ոչ հպարտութիւն, ոչ սր և իցէ կիրք՝ որ ուրիշները իրեն դէմ կը գրգռէ: Մանաւանդ ընդ հակառակին իր հեղութեամբն ու հանգարտութեամբը՝ թշնամիներուն սիրան ալ կ'առնէ, ինչպէս էր Բաւթիմ մարգարէն՝ որ կըսէ. Ոչ արէին զձեռն՝ ես էի խաղաղարար: Անանկ մարգը ևս առաւել ինք իրեն հետ չիխառովիր, իր ամեն կրիցը տէր ըլլալով՝ վասն զի ինքը աստուծոյ հնազանդելով իր կիրքերն ալ իրեն կը հնազանդին: Աս է բարեպաշտին վիճակը. հարկ չիկայ Պօղոս առաքեալ ըլլալու, որ բոլոր արարածները չիկրնան իր սրբին խաղաղութիւնը խառովել, հարկ չիկայ մարտիրոսներուն պէս ըլլալու, որ չարաչար ամեն շանաց մէջ ալ իրենց սրբին խաղաղութիւնը չիկորսընցուցին. հէրիք է որ բարեպաշտ բրիտանեայ ըլլանք, աստուծոյ պատուիրանքները պահէլու ջանք ունենանք, աս խաղաղութիւնը կը վայելէնք: Հէրիք է որ աստուծոյ շնորքին մէջը ըլլանք, ամեն բարեաց հետ աս խաղաղութիւնն ալ կ'առնենանք, ու կրնանք Սողոմոնի պէս ըսել. Եթէ ինչ բարութիւնս մանգամայն ընդ նմա: Աս սրբի խաղաղութիւնը աղէկ կը փորձեն նաև մեղաւորները՝ երբոր աստուծոյ հետ կը հաշտուին: Աս խաղա-

ղութիւնն է, որուն շէն կրնար բաղդատուել աշխարհի ամեն բարիքը՝ ամեն զբօսանքը՝ ամեն վաշէլը. սղտի զբօսանք մըն ալ սրբի հանգարտութեամբ՝ շատ աւելի զուարճալի կըլլայ, քան թէ բոլոր աշխարհի զբօսանքները՝ առանց սրբի հանգարտութեան: Աս խաղաղութիւնն է որ Քրիստոսի լուծը կը քաղցրացնէ մեզի ու բեռը կը թեթեւցնէ. առանց ասոր չենք կրնար ըմբռնել որ ինչպէս խաչը ուսերնիս առած՝ Քրիստոսի ետեէն նեղ և անձուկ ճամբան երթալը՝ կրնայ թեթեւ լուծ մը ըլլալ:

Ուրեմն թէ որ ուրիշ կերպով սրաւերնիս չիչարժիր աստուծոյ հաւատարիմ ըլլալու, ասով շարժենք զինքը. աս խաղաղութիւնը վատարկելու համար զինքը յորդորենք աստուծոյ պատուիրանքները պահէլու: Եւ հանդուրձութիւն մըն է ասիկայ, բայց երբոր մեր շահը աստուծոյ փառացը հետ կը համաձայնի, աստուած ալ կուզէ որ փնաւուենք զայն: Աստուծմէ չիբաժնուինք, իր վրայ գնենք մեր խաղաղութիւնը, վասն զի ուրիշ տեղ չենք գտնար խաղաղութիւն. վասն զի աշխարհս չիկրնար առ մեզի խաղաղութիւն, ընդունայն տեղը կը փնաւուենք աշխարհի զբօսանաց մէջ խաղաղութիւն, աստուծոյ դրած օրէնքը պահէլով միայն կը գտնանք խաղաղութիւն. Ոչ միանգամ այսմ խանի մաբան լինին, խաղաղութիւն ի վերայ նոյն :

Ա. Ղ. Օ. Բ. Ք.

Յիսուս փրկիչ իմ, գուն էս իմ սրտիս խաղաղութիւնը, բեղմով միայն գոհ է սիրտս, առանց քեզի միշտ աժգոհ, ըսել է որ գուն էս իմ ստեղծօղս, վասն զի ստեղծօղս միայն կրնայ իմ սիրտս

գոհ ընել: Թէ որ ես այսչափ պակասութիւններ  
 ունենալով՝ ասանկ գոհ եմ՝ քեզմով, հասցա ա-  
 նոնք որ ամեն կերպով հաւասարիմ՝ են քեզի՝  
 ինչ ուրախութիւն պիտոր ունենան սրտերնուն  
 մէջ. թէ որ աս խեղճ աշխարհիս մէջ ալ ասանկ  
 սրտի խաղաղութիւն կը վայելեն քու ծառայքդ,  
 հասցա ինչ երջանկութիւն սրտի պիտոր ունենան  
 երկինքը՝ զքեզ ժառանգելով:

Խաղաղութեամբ քով, Քրիստոս փրկիչ մեր,  
 որ ՚ի վեր է քան զամենայն միտս և զբանս, ամ-  
 րացո զմեզ և աներկիւղ սրահեա յամենայն չարէ-  
 հաւասարեա զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս  
 քո, որք հոգւով և ճշմարտութեամբ քեզ երկիր  
 պագանեն. վասն զի ամենասուրբ Երրորդու-  
 թեանդ վայելեն փառք իշխանութիւն և պատիւ  
 այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

## ՄՏԱԾԱԿԱՆ ՃԶ.

Մեղաւորիւն խեղճ վիճակի:

## ՄԱՍՆ Ա.

Քրիստոս աւերն մեր անառակ որդւոյն առա-  
 կովը խիստ կենդանի կը նկարագրէ մեղաւորին վե-  
 ճակը: Նախ իր ժառանգութեան բաժինը ուղե-  
 լը՝ որ հօրը անէն ելլէ՝ կատարեալ մարդուս Աս-  
 տուծմէ զատուիլ ուղեւն է: Ի՞նչ բանը կը պակսէր  
 հօրը ասնը մէջ, հօրը բնութեանը վրայ չէր կըր-  
 նար դժգոհ ըլլալ, անկէց ալ յայանի է որ իր  
 բաժինը ուղածին պէս՝ հանեց տուաւ. կերակուր՝  
 հագուստ՝ աղնուական կեանք՝ խաղաղութիւն՝  
 ամեն բան ունէր: Բայց իր անկարգ ազատու-  
 թեան սէրը, ու քանի մը հօրը չուզած զբօսանք-  
 ներուն բաղձանքը, զինքը մոլորցուցին: Ասանկ  
 ալ մեղաւորը աստուծոյ պէս բարեգութ չօրմէն  
 կուղէ բաժնուիլ. ոչ իր սրտին խաղաղութիւնն  
 որ աստուծոյ հետ կենալովը ունէր՝ աչքին կերե-  
 նայ, ոչ իր հոգևոր կեանքն որ զինքը ամենուն  
 ակնածելի կընէր, ոչ իր հոգևոր ու մարմնաւոր  
 պիտոյքն որ աստուած կուտայ. իր քանի մը կիր-  
 քերը գոհ ընելու համար, անկարգ ազատութիւն

մը ունենալու համար, կուզէ զատուիլ Աստուծ-  
մէ: Այսու ամենայնիւ աստուած իր բաւական  
չնորքէն չկզկէր մեղաւորը, իր ժառանգութեան  
բաժինը կուտայ, որն որ էթէ բանեցընելու ըւ-  
լայ՝ աւելի շնորք ալ կընդունի, գարձի կուգայ  
ու կընայ փրկուել:

Բայց ինչպէս անառակ որդին հօրմէն բաժնու-  
ծին պէս՝ զինքը ամեն անկարգութեանց տալով,  
բոլոր ունեցածը կերաւ մըսխեց, սովը վըայ հա-  
սաւ, ողորմելութեան մէջ ինկաւ, ինչուան խո-  
զէր արածէր յանձն առաւ, անոնց կերածէն  
ուտելու գոհ եղաւ, ու ան ալ տուող չկար իրեն,  
ասանկ ալ մարդս Աստուծմէ հեռացածին պէս՝  
իր առաքինութիւնները, առած բարի կըթու-  
թիւնը, ամեն ունեցած հոգևոր բարիքը կը կոր-  
սընցընէ, սովի մը մէջ կ'իյնայ որ ան բաներոջն որ  
կը կարծէր իր ակտերը կշտացընել՝ անոնցմով  
աւելի կանոթենայ. աշխրբի ու սատանայի պէս  
անգութ ակրանց յանձ կ'առնու ծառայել, որոնք  
խողերուն կերած եղծուրը կը կերցընեն իրեն,  
այսինքն պինտ պինտ պատառներ իրեն կըլնել  
կուտան: Աս է իր գտած աղատութիւնն ու վա-  
յեւըը, որն որ մաքէն չէր անցներ՝ Աստուծմէ  
հեռանալու ատենը:

ՄԱՍՆ Բ.

Աս խեղճ վիճակին մէջ անառակ որդին սկսաւ  
մտածել իր հօրը տունը ունեցած երջանկութիւ-  
նը, ու ըսաւ ինքիւրեն. Քանի՞ ծառաներ իմ հօրս  
տունը առատ կերակուր ունին, ու էս հոս ան-  
թի՛ մեռնելու աստիճան հասեր եմ: Աս բազդա-  
ատութիւնը մեղաւորն ալ պէտք է ընէ, մտածելով

իր հոգւոյն խեղճութիւնը, իր սրտին անհանգըս-  
տութիւնը, մահւոյնէ ետքը գլուխը գալիքը, պէտք  
է ինքիւրեն ըսէ. Քանի՞ աստուծոյ ծառայք սրտե-  
նին հանդիսա՞ ուրախ զուարթ իրենց մահուանը  
պատրաստ կեցած են՝ որ արքայութիւն երթան  
վայելէն, ու էս ասանկ միշտ խռովեալ՝ վախէս կը  
տագնապին: Աս մտածութեանը ետևէն բնական  
կուգայ անառակ որդւոյն ըրած որոշմունքը՝ որ  
էլէ երթայ հօրը ոտքը իյնայ. մեղայ ըսէ, հօրը  
քովը գոնէ ծառայութեան մասնէլ ուզէ, արգէն  
իր ժառանգութեան բաժինն մխտած ըլլալով:  
Որոշմունքը ըրաւ, ու էլաւ գնաց առ հայրը.  
Հոս է ամենին սրտաշարժ կտորը. գէս հօրը քովը  
չհասած, ոտքը չինկած, միտքը դրած խօսքերը  
գէս չըսկըսած զուրցելու, հայրը տեսածին պէս  
հեռւանց՝ ընգտաւ եկաւ, ճիտը ինկաւ, գրկեց  
զինքը, պագաւ, իբրև թէ ամենեին ապերախտու-  
թիւն մը՝ ամենեին իր կամացը գէմ բան մը ըրած  
չըլար: Երբոր սկսաւ ալ որդին իւր զըման խօս-  
քերը ըսելու, չի՛ծողուց որ լմընցընէ. մէկէն հրամ-  
մեց որ ծառաները իր առջև հագուստները բերեն,  
հագուցընեն զինքը, ձեռքը մատնի դնեն, կոշիկ-  
ները հագցընեն, սեղան պատրաստեն, մեծ ու-  
րախտութիւն ընելու՝ զուկին գառնալու համար:  
Մեղաւոր մը աս օրինակն որ կարգայ, կարելի է  
որ սիրտը չխարժի, կարելի է որ գարձի չկայ:  
Կարելի է որ ինքն ալ անառակ որդւոյն զըմումը  
չունենայ:

ՄԱՍՆ Գ.

Թէ որ ասանկ դթած հայր մըն է աստուած,  
թէ որ ասանկ կը սիրէ զմեզ նաև ամենածանր ա-  
պերախտութիւն իրեն գէմ ընէնէս ետքը, թէ որ

ասանկ մէկէն կը մոռնայ իրեն ըրած նախատխնք-  
նիս, թէ որ ասանկ կողորմի մեր խեղճութեանը  
վրայ, ինչ անգոյս սիրա սխտոր ունենայ ան մե-  
ղաւորը, որ չի գառնայ, աստուծոյ տաքը չի յնայ,  
մեղայ չքսէ, ստոյգ դիտնալով որ դեռ չի նորոգած  
ընդունի սխտոր իր մեղացը թողութիւն: Թէ որ  
ասանկ չըլլար, Քրիստոս տէրն մեր աս առաջը  
չէր բերեր մեզի. գթած հայր մը օրինակ բերաւ,  
որ անկէց հասկընանք մեր երկնաւոր հօրը գթու-  
թիւնը: Աստուծոյ գթութիւնը մեր գթութեանը  
պէս չի կարծենք, իր ամեն բանը անհուն ու ան-  
սահման է, իր բարութիւնը, իր սէրը, իր ողոր-  
մութիւնը խելքէ մտքէ վեր է, մինչև իր արգա-  
րութիւնն ալ ողորմութեան համար է: Ճմարիտ  
գարձի եկող մեղաւոր մը չի կայ՝ որ աս գգուանքը  
չըլլայ, չի մանայ իր հոգւոյն աստուծոյ շնորհովը  
զարգարութիւն, չի մանայ մեռնելէն յարութիւն  
առնելը: Քրիստոսի աս ետքի խօսքն որ անա-  
ռակ որդիին հօրը բերանը կը գնէ, այնչափ անոր  
համար չէ՛ որչափ ամեն գարձի եկած մեղաւոր-  
ներուն. վասն զի անառակ որդին մեռած չէր,  
բայց իբրև մեղաւոր յաւիտենական մահուան  
մէջ էր. անոր համար կըսէ՝ Թէ եղբայր քո այս մե-  
ռեալ էր, և եկեալ: Մեղաւորին հոգին իրաւցընէ  
մեռած է աստուծոյ առջին, անանկ որ՝ իր ամե-  
նակարողութիւնը աւելի մեծ հրաշք կը գործէ  
մեղաւոր մը հոգեւոր մահուանէն յարուցանելով,  
քան թէ մեռելի մը յարութիւն առնել աստով:  
Աստուծոյ մեղաւորին համար ըրած շնորհը անանկ  
մեծ բան է՝ որ ուրիշ կերպով բացատրել անհը-  
նար ըլլալով, Քրիստոս տէրն մեր անառակ որդ-  
ւոյն մեծ եղբօրը նախանձովը կը բացատրէ:  
Վասն զի մեծ եղբայրն որ ամենեկին հօրը կամացը  
գէմ բան մը չէր ըրած, անոր պէս շնորհ մը չէր  
ընդունած հօրմէն՝ որ ինչուան տանը մէջ սնու-

ցած պարարտ հորթուկն ալ անոր համար մար-  
թեւ տայ: Աս ինչ շնորհ, աս ինչ սէր, աս ինչ  
գթութիւն, ոչ գոխիքին ստակալի վախը, ոչ  
խղճմտանքին ասնջանքը, և ոչ մեղաւորին ուրիշ  
խեղճութիւնները ասանկ կրնան շարժել զինքը  
գարձի գալու, ինչպէս աստուծոյ ու բորբ երկըն-  
քին աս կերպով իր գարձին վրայ ուրախանալը:  
Ասե՛ յեւ, այսպէս է որ արարութիւն յերկնս վասն իոյ մե-  
ղաւորի՝ որ սպաշխարեցէ:

Ա. Ղ. Օ Թ. Կ

Հայր երկնաւոր, մի թողուր որ քեզմէ հե-  
ռանամ, ու դերի ըլլամ աստանային, որ զիս ա-  
մենէն մեծ խեղճութեան մէջը ձգէ՝ քու շնորհէդ  
ղովելով: Աս ալ անառակ որդիին պէս ապերախ-  
տութիւն ըրած եմ քեզի. բայց քու գթութիւնդ  
անանկ մեծ է՝ որ վստահութեամբ կը գիտեմ օտքդ  
կիցնամ, գիտնալով որ զիս չես մերժեր. միայն անոնք  
կը մերժես, որոնք որ իրենց խեղճութեան մէջը  
կուզեն մնալ քան թէ մեղայ ըսել ու նորէն քեզի  
գառնալ. քանի որ մենք որդւոյ սիրա ունինք,  
գուն չես պակսիր բարեգութիւն հօր մը սիրաւ ու-  
նենալ մեր վրայ:

Ընդ անառակին որդւոյ գոչեմք առ Հայրդ  
գթած, մեղաք յերկնս և առաջի քո՝ քաւիչ  
յանցանաց. եւ ընդառաջ սիրով, գրկեա համբու-  
րիւ, մտքեա զմեզ ՚ի մեղաց մերոց:



### ՄՏԱ. ԾԱ. ԿԱ. Ն ՃԷ.

Մատուան վրայ:

### ՄԱՍՆ Ա.

Հարուստ աշխարհասերն ու հոգեսէր աղքատը՝ երկուքն ալ էաքը էաքը մահուան գուռը կը հասնին. հոն երկուքին վիճակն ալ մէկ է. մահը ան ատեն ամեն մարդ կը հաւաստիք: Հարուստին ամեն վայելքը՝ ամեն զուարճութիւնը կը լըննայ, զիզամ հարստութիւնը իրեն չօգնէր, ամեն բան անցած լընցած է. նմանապէս աղքատին ամեն քաշած խեղճութիւնը՝ վիշտը՝ ճիւղութիւնները անցած լընցած են. երկուքն ալ անցածը կը յիշեն, բայց ինչ տարբեր կերպով. մէկուն յիշատակը գառն, մէկալինը անուշ: Աշխարհասէրը կուզէ՝ որ աղքատին պէս անցուցած ըլլար իր կեանքը, աղքատը կուրախանայ անցուցած կենացը լըլայ. մէկը կը ցաւի աշխարհ կորսնցընելուն համար, մէկալը կուրախանայ իր տառապանքը լըննալուն համար. մէկը կը սոսկայ աստուծոյ արգարութենէն, մէկալը հանգիստ սրտով կը յուսայ աստուծոյ ողորմութեանը: Աչքերն կը գոցեն, անգին կը բանան. ասոնց երկուքին հոն ի.

բարմէ ունեցած տարբերութիւնը՝ Քրիստոս ատերն մեր մեծատան ու Ղազարու պատմութեամբը մեզի կիմայընէ:

Ղազարոս կը մեռնի, հրեշտակները կը տանին զինքը ՚ի գոգն Աբրահամու. խեղճ աղքատին՝ որ աշխրբիս վրայ իրեն երեսը նայող չեկար, հրեշտակները կը ծառայեն, ու անոնց քաղաքակից կըլլայ: Մեծատունն ալ կը մեռնի, մարմինը պատուով ու հանգիսիւ դերեզման կը տանին իր բարեկամները, բայց հոգին կանոնն սատանաները զժոխք կը տանին: Երկուքին վիճակն ալ ինչ փոփոխութիւն: Օր մը մարմիննին ալ նոյն փոփոխութիւնը պիտի ունենայ. Ղազարունը՝ որ ողջութեան ատենն ալ՝ մեռնելէն ետքն ալ արհամարհեալ էր, փառաւոր յարութիւն պիտոր առնէ՝ իր հոգւոյն յաւիտենական երանութեանը հաղորդ ըլլալու. իսկ մեծատանն՝ որ բէհեղներով ծածկուած էր ողջութեան ատենը, ու մեռնելէն ետքն ալ փառաւոր շիրմի մէջ դրած, պիտոր էլլէ անկէց սոսկալի հրեշ մը եղած, իր հոգւոյն յաւիտենական տանջանացը մասնակից ըլլալու: Ես ՚ի Դժոխան ամբարձ պաւ իւր մեւ ՚ի քանջանան էր, էպէս զԱբրահամ ՚ի հեռասարանէ, եւ զՂազարոս ՚ի գոգ նորս հանգոցեալ:

### ՄԱՍՆ Բ.

Առջի ու զլուսւոր ամնջանքը դատաւարաւեւոյ՝ մտածելն է իրենց զրկուիլը արքայութենէն. աս է ան որդը՝ որ ոչ երբէք գագրի պիտոր իրենց սիրար կրծէլէն, որ ինչպէս զաստուած իրենց կամօքը կորսնցուցին, իրենց ստեղծօղը, իրենց ամեն բաղձանքին կեդրոնը, իրենց ծայրագոյն բարին: Աս

իրենց տանջանքը կրկին պիտոր ըլլայ՝ տեսնելով որ ուրիշները առ երանութեանը հասեր են, ու իրենք զրկուեր. և ուրիշները որոնք, անոնք որ իրենք կարհամարհէին, կը նախատէին, կը հաւածէին. անոնք որ իրենց վիճակը ունէին, նոյն զբառաբուծիւնները, նոյն արգելքները, նոյն կիրքերը, նոյն աւիթները, ու աստուծոյ շնորքով ամենուր յաղթեցին. անոնք որ իրենց պէս մեղքերու մէջ ալ ինկեր էին, նոյն չար ունակութիւնները ունէին, բայց մահէրին մտածելով՝ զՊատգին, խոնարհեցան, առ աստուած գործան, ու ապաշխարելով՝ փրկութեան հասան: Ան աւանդ սրտերին կըրտուելով ըսեն պիտոր, արիստ, էս ալ անոնց պէս կրնայի ընել, էս ալ կրնայի արքայութիւն երթալ, ու հիմայ դժոխքին մէջը կը տանջուիմ:

Երկրորդ տանջանքն է անշիջանելի կրակը. աս կրակին ինչ տեսակ բան ըլլալը սուրբ հաւատքը չէ սահմանած, բայց ինչ սոսկալի բան ըլլալը անկէց յայտնի է՝ որ Քրիստոս առջի տանջանքին հետ նոյն կարգը կը դնէ՝ ըսելով. Ո՛ր որդն նոյա ու մտանի, և հոռն ու շիջանի: Ասոնց երկուքն իրայ՝ ան ալ աւելցուր, որ ամենեւին թեթև մխթարանք մը կամ օգնութիւն մը չունին: Մեծատունը իր տանջանացը մէջ ողորմելի կերպով կազաղակէ. Հայր Աբրահամ, ողորմէ ինձի, խրկէ Ղազարոսը՝ որ մասին ծայրը ջուրի մէջ թաթխէ շեղուս քիչ մը զովարնելու համար, վասն զի կը պապակիմ աս կրակէն: Իսկ Աբրահամ կը պատասխանէ. Մէջէնիս մեծ փոս մը կայ, Ղազարոսը չիկրնար քեզի մօտենալ: Ուրեմն կաթիլ մը ջուրի ալ մխթարանք չունին գտտապարտեալները իրենց տանջանացը մէջ:

Երրորդ տանջանքն է՝ բաղդատել իրենց վաշելած չնչին զուարճութիւնները դժոխքին հետ:

Իրենք իրենց կրակն ողբալով վախ, ինչ էին աշխարհի բարեքն որ անոնց համար զրկուեցայ արքայութենէն, ու դժոխք ինկայ. չէի կրնար էս ալ հիմայ ուրիշներուն հետ արքայութիւնը վաշելու. անոնք իրենց վատացը հետ այնչափ մխթարանքներ ալ ունէին, էս իմ վայելցայ հետ այնչափ դաւնութիւններ. հիմայ անոնք ան թեթև վիշտերէն խալսեցան, ու ալ պիտոր չիբաշէն, իսկ էս աս ողորմելի վայելցայ համար աս տանջանքներու մէջը ինկայ: Ես ըրի աս անխելք ընտրութիւնը, տեսայ որ անոնք ներհակը ընտրեցին, աշխարհ ու իրենց կիրքերը ոտքի աակ առին՝ երկինքը վատարկելու համար, ու էս իմ խելքիս հետեցայ, չուզեցի անոնց հետեւիլ. դատուած ոչընչի հետ փոխեցի: Որդեալ, յիշաւ դի ընկալար անդէն զԲարիս քո ի ինտան քոմ, և Ղազարոս նոյնպէս զԱբրահամ. արդ սա սաք մխթարի, և յոն այդր պապային:

### ՄԱՍՆ Գ.

Չորրորդ ու յուսահատելի տանջանքն է մըտածելն որ դժոխքէն խալսելու յոյս չիկայ, յաւիտեան ան վիճակին մէջ պիտոր մնան: Որչափ սաստիկ ալ է դժոխքին տանջանքները, թէ որ յոյս մը ըլլար բերաւոր գարերէ ետքը անկէց խալսելու, մխթարանք մը կըլլար գատապարտելոց. աս յոյսը կը փոխէր բոլորովն դժոխքին ինչ ըլլալը. բայց ամենէն գէշը՝ սոսյգ գիտնալն է, որ միշտ պիտոր տակ իրենց թշուառութիւնը. աս սոսկալի մշտն է՝ որ դժոխքը դժոխք կընէ. գատապարտելոց ահանջը միշտ աս մշտը կը հնչէ, չեն կրնար վայրկեան մը հեռացընել մտքերնէն աս

յուսահատելի Բարը: Այն Բարն որ արդարները երանելի կընէ՝ մտածելով որ յաւիտեան զատուած ախոր վայելէն, գառապարտաւորը կը թշուառացնէ՝ մտածելով որ յաւիտեան Ատուածն զրկուած ախոր մնան: Ա՛հ, թէ որ կարելի ըլլար գառապարտելոց մէկուն աշխարհ դառնալ, արգեօք ինչ վարք կը վարէր. ինչ բան իրեն ծանր կերէնար յաւիտեանական դժօխքին առջին. որ ճշմութիւնը՝ որ ապաշխարանքը չէր թէթեւնար իրեն՝ յաւիտեանական երանութեան համեմուտ համար: Անոնց համար յոյս չիկայ. իսկ մենք գեռաէր ենք երկօքքին մէկը ընարելու, դեռ կրնանք երկու յաւիտեանականութիւններուն որն որ կուզենք՝ ընարել. օր կուգայ որ՝ մենք ալ չենք կըրնար ընարութիւն ընել. հիմայ է ատենը մտածելու, հիմայ կընդունի ատուած մեր ապաշխարութիւնը. Ահա-ասի՛ ժամանակ՝ ընդունելի, ահա օր Իրի-մէն:

Ա. Ղ. Օ Թ. Գ

Յիսուս վերկիչ իմ, շատ ուշ կըլլայ դժօխքին մէջ խեղքս գտնուիս գալը, ու հոն քուհին գթութեանդ ապաւինիլս. հիմայ կապաւինիմ, ողորմէ ինձի. մի թողուր՝ որ հոն իյնիմ: Իրաւ՝ արժանի էի հոն ըլլալու. և թէ որ չողորմէիր ու ապաշխարելու ատեն ատուած չըլլայիր ինձի, հիմայ հոն կըլլայի, ու ինձի համար՝ ալ յոյս չէր մնար. բայց որովհետև ողորմեցար ու ատեն ատելիր ինձի, կիմանամ որ չես ուղեր իմ գառապարտաւորիլս: Ենորք ատու ինձի որ մտքէս չիհանեմ ան Բարը արգարոց երանութեանը ու մեղաւորաց թշուառութեանը, որսէս զի անով ամեն վիշտ ամեն ա-

պաշխարանք ինձի թէթեւայ. հոս պատժէ զիս ատէր իմ Յիսուս, որսէս զի անդին ողորմիս: Ահա կէշ, ապա հոգի, ապա մի ինայեր, ու յա-ի-րեան ինայե-րէս:

Գարձուցիչ մողորելոց, գարձո զիս ՚ի չար սովորութեանց իմոց ՚ի բարի սովորութիւն, և բեւեւեա ՚ի հոգի իմ զսոսկալն օր մահուն և զերկիւղ գեհէնին և զսէր արջայութեան, զի զըջացոյց ՚ի մեղաց և դորձեցից վարդարութիւն, և ողորմեա քս արարածոցս, և ինձ բազմամեղիս:

գուժիւնը ընէլ, փրկութեան հասնելու. անոր համար կըսէ Քրիստոս, Եւէոյն գօրիւ յէր պնդեալ ընդ մէջս, և ճրագունիւ լաջեալ:

Երբորդ պատրաստութիւնն է՝ միշտ սպասել ան օրուան որ աստուած պիտոր կանչէ զմեզ. Եւ դուք նմանօրչ մարդիան՝ որք ակն ունիոյն պետան իւրեանց թէ էրբ դառնայցե ՚ի հարսանեաց, զի յորժամ գայցե և բախիցե՝ վազազակի բանայցեն նմա: Քրիստոս մեր դուռն ալ կուգայ զարնելու, մանաւանդ հիւրն-գուժեան ասեննիս. իսկ մենք մահուան չենք սպասեր, անոր համար ալ պատրաստ չենք կենար դուռը բանալու, էրբոր Քրիստոս կը զարնէ: Բայց ուղենք չուզենք ինքը կը մանն. քանի՛ քանիներ կը յուսային ինչուան հարիւր ասրի ալ ասրէլու, ու ակնկալութիւննին պարպալ էլաւ. մահը ստոյգ է որ պիտոր գայ. բայց զալու ասենը ստոյգ չիգիտանալնու համար, որով պէտք էր միշտ սպասելնք իրեն, մենք ամենեկին չենք սպասեր:

### ՄՏԱԾԱԿԱՆ ՃԸ.

Մահուան պատրաստ կենարչս փրայ:

### ՄԱՍՆ Ա.

Մահուան առջի պատրաստութիւնն է՝ կիրքերէ ու անկարգ ակորժակներէ ազատ ըլլալը. ինչպէս ճամբորդ մը ազատ քալելու համար՝ ըզգեստին ծայրերը վեր կաննէ, գօտիովը կը հաստատէ՝ որ իրեն քալելուն արգելք չըլլան, ասանկ ալ մենք աշխարհասիրութիւնը ու ամեն կիրք՝ որ մեր հոգեւոր ճամբուն արգելք կըլլան՝ պէտք է մահացուցմամբ զսպենք. աս է Քրիստոսի խօսքը՝ Եւէոյն գօրիւ յէր պնդեալ ընդ մէջս: Երկրորդ պատրաստութիւնն է՝ հաւատք ու բարեգործութիւն. ճամբորդ մը՝ որ զիշեր ասեն կամ մուժտեղէ մը պիտոր էրթայ, հետը ճրագ կաննէ՝ որպէս զի չիմոլորի կամ ոտքը բանի մը զարնելով չիյնայ: Մեր կեանքը մութ ճամբորդութիւն մըն է, հաւատքն է որ մեզի լոյս պիտոր տայ. հաւատքն ալ կենդանի պիտոր ըլլայ բարի գործքերով, թէ որ չէ՝ մարած ճրագի մը պէս չիկրնար լոյս աալ. Հասարկ առանց գործոց մեռեալ են: Առանց աս ճրագին չենք կրնար մեր վտանգաւոր ճամբոր.

### ՄԱՍՆ Բ.

Բայց որոնք որ պատրաստ կը սպասեն մահուան, ինչ երկանկութիւն պիտոր ունենան. ինչ միսթարութիւն չունենար մահուան ասենը ան՝ որ իր կեանքը պատրաստութեամբ անցուցեր է. սիրաբ բանի մը կըպած չէ՝ որ մահուան ասեն անկէց բաժնուիլը իրեն ծանր գայ: Ինչ ուրախութիւն է ընդունիլ քահանային ձեռքէն զՔրիստոս՝ որ կուգայ զինքը երկինք կանչելու. ան վերջի անգամն է որ ծածկուած կերենայ իրեն, քիչ մը ասեննէն իր երանացուցիչ փառքովը պիտոր երկնայ: Երանի անոր որ դուռը բանալու պատրաստ է, ու Քրիստոսի գալուն կը սպասէ.

Երանի ինչ ծառայոցն այնոցի, որոնք էլեւս պէրն գրոցե  
 արձանս: Երեսէն ալ կերևայ իր երջանկուածութենը,  
 զորս ու զուարթ մեռնելէն ալ յայանի է ինչ հա-  
 ճատքով ինչ յուսով ինչ սիրով իր սիրաւ վա-  
 ռուած է. վասն զի բարի կէանք ունեցողն մա-  
 հուանը ասենը՝ աստուած է որ իրեն աս ամեն  
 շնորքը կուտայ: Վերջապէս հոգին կուանդէ, աշ-  
 խրքէս կելլէ, մարմնը միայն հոս կը մնայ՝ որուն  
 հետ որ մը նորէն պիտոր միանայ: Աչքը գոցած ին  
 պէս՝ կը անսնէ հոգևով իր աէրը, որուն ծառա-  
 յեց. բարեգուծ աէր մը՝ որ ալ իրմէ ծառայու-  
 թիւն չուզէր, կը մտնընէ զինքը յաւիտենական  
 հանդիսան ու ուրախութիւնը, անկէց ետքը ինքը  
 անոր կարօտութիւնը կը լէցընէ. Ամէն ասէ՛մ յէս  
 գօփի ընդ մէջ ածոցէ, և բաւմեղանցէ դնաս, և անցեալ  
 պաշտոնցէ դնաս: Ի՛նչ երջանկութիւն ասանկ ար-  
 ըող մը ծառայելը, մեր ըրած ողորմելի ծառայու-  
 թիւնը կաթէ՛ աս հատուցումը: Պատրաստ կե-  
 նանք ուրեմն իրեն, ու պատրաստ կենալու հա-  
 մար՝ ասպաշխարհնք որ մեղքերնիս արդէք չըլան  
 աս ուրախութեանը ու աս երջանկութեանը:  
 Հաստատուն վաստահութիւն ունենանք իրեն ու  
 զրմութեանը, ու բազմանք ասանկ բարեգուծ  
 աէրը անսնելու. ասոնք իրեն աւելի հաճոյական  
 են քան թէ աւելորդ վարը՝ որ իր գթութեանը  
 անարգանք է, ու մեր սիրտն ալ կը թուլընէ:  
 Ասանկով կըլլանք ան երջանիկ ծառաներէն, որ  
 եկած ատենը արթուն ու պատրաստ կը դանէ:

ՄԱՍՆ Գ.

Քրիստոս իր դալու ատենը չիյայանեց մեզի, որ-  
 պէս զի միշտ պատրաստ ըլլանք. Արձան կացէ՛ք, դէ  
 ու գիպէ՛ք յորո՞՞ճ ծառա- պէրն յէր գայ: Թէ որ մեռնէ.

լու ատեննիս զիտնայինք՝ քնաս էր մեզի, վասն զի  
 ան ատենին կը ձգէինք մեր պատրաստութիւնը.  
 Բայց չեղիտնալովնիս՝ պէտք է որ միշտ պատրաստ  
 կենանք, ինչպէս կը յորգորէ զմզ՝ Քրիստոս ասն  
 սիրովը օրինակով՝ որ զիտնալով որ գող պիտոր  
 գայ իր ատենը պիտոր ծակէ ու ներս մանայ, չի-  
 քրնանար: Խղճմտանքնիս ան վիճակին մէջ գնենք,  
 որուն մէջ որ մահուան ատեն գտնուելը կուզենք՝  
 ասանկով յանկարծական մահ մըն ալ որ ունե-  
 նանք, պատրաստ կը գտուինք: Տուներնիս գող  
 մանալու՝ ունեցածնիս ասնելու վախ որ ունե-  
 նանք, ի՛նչ արթնութիւն չենք ընէր, ի՛նչ զգու-  
 շուածութիւններ չենք բանեցընէր. Իսկ հոգինիս ապա-  
 հովելու համար՝ նոյն փոյթը չունինք: Այնչափ  
 մեր ազգականներն ու ծանօթները յանկարծ կը  
 մեռնին, արդեօք ի՛նչ վիճակի մէջ էր իրենց խղճ-  
 մտանքը: Այնչափ հիւրընդունութենէ մեռնողներ ալ  
 չէն կարծէր որ պիտոր մեռնին, միշտ կը յուսան  
 որ գեռ կապրին, անանկ որ՝ հիւրընդունութեան մէջ  
 ալ յանկարծ կըլլայ իրենց մեռնելը: Քրիստոսի  
 այնչափ անգամ նորէն ըսելը՝ Յորո՞՞ճ ծառա- ու յոր-  
 ծիցէ՛ք, գայ որդի մարդայ. ու մեր այսչափ անգամ  
 փորձով աեսնալը՝ կարելի է որ գեռ մեզի չազգէ:  
 Պատրաստ առաքեալը լսելով Քրիստոսի այնչափ ան-  
 դամ արձան կացէ՛ք ըսելը, ու առակով ալ պատ-  
 րաստ կենալու հարկաւորութիւնը ցուցընելը,  
 հարցուց՝ որ իրենց համար միայն էր աս առակը՝  
 թէ ամենուն. Տէր, առ մէջ ասացէր դառա՞՞ր դայր՝ Թէ  
 առ ամենեւեան: Քրիստոսի տուած պատասխանը  
 ամենքս ալ վախի մէջ պէտք է ձգէ՛ որ չըլլայ թէ  
 մենք ալ խարուինք ու անհոգ ըլլանք. Զոր յէտք  
 ասէ՛մ, ամենեղան ասէ՛մ, արձան կացէ՛ք:

Ա. Ղ. Օ Թ Ք

Յիսուս փրկիչ իմ, մի Թողուր՝ որ անհոգ ըլլամ իմ փրկութեանս վրայ. չըլլայ որ անսպասարաստ գանուելմ մահուանս ատեն. ասկէց ետքը քու գալուդ սպասելը ըլլայ իմ գործքս. ուրիշ ինչ որ ընեմ, ինչ բանի որ զբաղիմ, ահանջս դուռը ըլլայ. որպէս զի ուրախութեամբ բանամ քեզի: Ալ չուշանամ զիս անանկ վիճակի մէջ գնելու՝ որ մահուան ատենը շիտթ իմ. անանկ գործեմ, անանկ խօսիմ, անանկ մտածեմ, ինչպէս որ մահուանս ատեն պիտոր ուղեմ գործած խօսած ու մտածած ըլլալ. առաջագորութիւնս վայրկեան մը ուշացրնելը, հոգիս յաւիտենական կորստեան վտանգի մէջ գնել է. Աստուծի, այժմ սկսայց:

Բարերար տէր, հրեշտակի բարույ յանձն աւրասցես զիս՝ քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ, և անխռով անցուցանել ընդ չարութիւն սյսոցն՝ որ են ՚ի ներքոյ երկնից, և ողորմես քո արարածոցս և ինձ բազմամեղես:

# Մ Տ Ա Շ Ա Կ Ա Ն Ճ Թ .

Գաղջ քրիստոնէիս մահուանը վրայ:

## Մ Ա Ս Ն Ա .

Ով որ դաղնութեամբ անցուցեր է իր կեանքը, իրաւ՝ չըսուիր որ կեանքը մեղքի մէջ անցընողնէրուն պէս յուսահատութեան փորձութիւններուննայ, բայց չըսուիր ալ որ պատրաստ ըլլայ մեռնելու, ինչպէս Քրիստոս տէրն մեր կը հրամանէ. Եւ դուք էղերուք դասարանս, զի յորում ծամու ու ափսոսանքի գայ որդի մարդոյ: Ուստի ան օրը վերջապէս հասնելով կը սիրտի մտածել որ կրնար իր մեղքերուն ապաշխարանքը հոս քաշել, ու անփոթութեամբ զած է. առանց բարեգործութեան կեանք մը անցուցեր է, այնչափ առիթ ու գիւրութիւն ալ ունենալով հոգը չէ եղած: Քրիստոնէական պարտքերը սովորութեան պէս կատարեր է, աղօթքները առանց մտադրութեան ըրեր է, սուրբ խորհուրդները առանց ջերմեամանութեան ընդուներ է, նեղութիւնները աստուծոյ համար չէ քաշեր: Մէկ խօսքով իր բոլոր կեանքը նիւթական կեանք մը եղեր է, առանց զիտաւորութեան աստուծոյ փառացը՝ իր ամեն գործքերը ըրեր է, որով ամեն

որ արդիւնք կրնար գիլել: Ան ատենը պիտոր ըսէ մտքէն, ափսոս, կրնայի պատարաստ ըլլալ, ու չեմ:

Կը ցաւի՝ որ կրնար իր կերբերը զօպել, իր պակասութիւնները շեղիւ, չէ ըրած. թէ որ չեն աւելցեր, չեն ալ սրահած. բոլոր կեանքը նոյն պակասութիւններով անցուցեր է, վոյթը չէ եղեր քրիստոնէական կատարելութեան ետեւ ըլլալ, առաքինութեան մէջ զարգանալ, աստուծոյ հետ ընտանենալ. վերջապէս ատենը պարտապ անցուցեր, Աստուծոյ իրեն արուած քանքարը չէ շահեցուցեր: Անոր համար ետքի հիւլընութեան ատենն ալ հասարակօրէն պարտապ կանցընէ, վասն զի կենացը մէջ չէ սորված՝ իր քաշածը աստուծոյ նուիրել, աստուծոյ համար քաշել ձանձրութիւն, քնհատութիւն, ցաւ, ամեն բան նիւթապէս կը կրէ, աննոյմով արդիւնք վատարկելու տեղը՝ երբեմն կը արանջայ ալ, աժգոհ է ծառայօղնորուն, ամեն բանի անհամբերութիւն կրնէ. Քրիստոսի չարչարանքները չեմտածեր՝ որ ամեն նեղութիւն կը թէթեւցընեն:

ՄԱՍՆ Բ.

Թէ և ամենքս ալ ուղենք չուղենք պիտոր մեռնինք, բայց աստուած իբրև թէ մեռնիլը մեր ձեռքը ըլլար՝ կընդունի մեր նուէրքը, թէ որ իրեն սիրոյն նուիրենք մեր մահը, թէ որ մեղքերնուս պատիժ ընդունինք մեռնելը, թէ որ Քրիստոսի նմանելու համար սիրով մեռնինք: Զերմեանգ անձի մը՝ որ կենացը մէջ շատ անգամ աս նուիրմունքը ըրած է աստուծոյ, մահուան ատենն ալ գիւրթին է ընելը. բայց գաղջ հագի մը կամ չեմտածեր ընելու, կամ ընէ ալ շատ դժուարութեամբ,

որով արդիւնք կը քեցընէ: Նոյն խկ սուրբ խորհուրդներն ալ առանց ջերմեանդուութեան կընդունի, ինչպէս բոլոր կենացը մէջ ընդուներ է. վասն զի սովորութիւն եղած բանը՝ մահուան ատեն դժուարաւ կը փոխուի:

Մահ ըսածդ հեռուէն ալ որ մտածես, վախ կը բերէ մարդուս. հապա երբոր մտենայ, գիտնանք որ քիչ օր մնացեր է մեռնելունս, վաղը կամ աս գիշեր պիտոր մեռնինք. ինչ սոսկում պիտոր բերէ մեզի՝ թէ որ առաջուց խղճմտանքնիս մաքրած չըլլանք, աստուծոյ հետ հաշիւնիս աղէկ տեսած որ չըլլանք: Ան ատենը գաղջ քրիստոնէան շատ սրածառներ կուեննայ խուղելու. վասն զի անանկ մարդիկ սովորաբար խղճմտանքնին ալ վերի վերոյ կը քննեն, տարակոյսնին չեն յայտներ հոգևոր հօրերնուն, միշտ յարմարագոյն ատենի կը ձգեն, ու թշուառաբար մահներնին որ կը մտանայ, ուժ ալ ատեն ալ չեն ունենար ճարը տեսնելու, սրտերնին հանդարտելու: Երկիւղած անձ մը, որ տարակուսի՝ մեղքերը աղէկ խոստովանած կամ աղէկ զղջացած չըլլալու, հոգևոր հայրը կրնայ համարձակ զինքը ապահովել, տարակոյսները դուրս ընել. բայց մէկն որ վերի վերոյ կերպով ըրած է միշտ իր խոստովանանքը, ոչ ինքը կրնայ իբ միտքը հանգարտել, ոչ խոստովանահայրը:

ՄԱՍՆ Գ.

Ներելի կարծած մեղքերուն վրայ ալ ան ատենը կը սկսի տարակուսիլ, որովհետև խղճմտանքնի վրայ հոգ չէ ունեցեր, անփոյթ եղեր է իր վիճակին պարտուցը վրայ, միտքը՝ աչընէրը՝ չէ զըս.

պեր, համարձակութիւն տուեր է զգայարանք-  
ներուն. լեզուն չէ բռներ, մէկուն մէկալին վրայ  
պէտք չէ զածը խօսեր է, թերևս անուշինին ալ  
կոարեր է, ու խոստովանելէն ետքը անհոգ եղեր  
է շփոհելու. թերևս առուաւորի մէջ ալ անհո-  
գութեամբ տուած փրօտները՝ ետքը չէ հատու-  
ցեր: Ողջութեան ատեն շատ անգամ աս բաները  
թեթեւ բաներ կերևան գաղ շողիներուն. բայց  
մահը մօտեցած ատեն ուրիշ կերպ կը գտան  
մարդ. թէ որ ան ատենի դատմունքն է ճշմարի-  
տը, ինչպէս որ շատ հաւանական է, ինչպէս կըր-  
նայ հանգարակէ իր խղճմանքը, ինչպէս կրնայ  
կարճ ատենի մէջ՝ հիւրնդութեան մէջ՝ բոլոր  
կեանքը քննել միտքը բերել. թէ որ առաջ գիտ-  
ցած ըլլար՝ որ ան տարին պիտար մեանի, ամեն  
բան կարգի գրած կըլլար. Եւէ գիտէր քանոքէն՝  
յորո՞ւմ պահու գող գայ, հսկէր: Ո՞վ չի հասկեր, թէ որ  
գիտնայ. բայց աս չէ խոհեմութիւնը. խոհեմ  
մարդը գիտէ՝ որ ամեն սր կրնայ գողը գալ, անոր  
համար առաջուց զգուշութիւնները կընէ, միշտ  
կը հսկէ. Վասն այսորի՞ն է դո՞ւք եղերո՞ւք պարսպապտ,  
չի յորժամ ու ակն ունիցիք՝ գայ որդի մարդոյ:

Ա. Դ. Օ Թ. Ք.

Յիսուս փրկիչ իմ, շնորք տուր ինձի որ միշտ  
պատրաստ ըլլամ քու գալտեանդ. հանէ զիս աս  
գաղջութենէն, տուր որ հոգեոյս վրայ փոյթ ու-  
նենամ, անհոգ չըլլամ, որպէս զի քու գալից յան-  
կարծ չըլլայ ինձի համար: Ծնորհակալեմ որ զիս  
անպատու ծառ ըլլալուս համար կտրել չխոտեր,  
ատեն տուիր ինձի, շնորք տուիր՝ որ ճանչնամ  
մինչև հիմայ ըրած գաղջութիւնս. օգնէ ինձի որ

ասկէց ետքը պտղաբեր ըլլամ, ու առջի պատուդ  
ըլլայ՝ մահս մատնելու, որպէս զի պատրաստ գը-  
նուօլ ծառային պէս՝ երանութեանդ արժանի  
ըլլամ. Երանի է ծառայի՞ն այնի՞, զոր ելեալ դերն գրա-  
նի՞նէ արարեալ այնպէս:

Օժանդակեալ թեոյց արթութեք, խոստովանեալ  
մայրդ կենդանեաց, և ելլին իմ յերկրէս հովտէ՝  
առանց լլկանաց հետեւել ի կեանս օթեանացդ  
պատրաստութեան, զի թեթեասոյի կատարածն  
իմ ինձ ծանրացելոյս անօրէնութեամբ:



# ՄՏԱԾԱԿԱՆ ՃԺ.

Ձերվնասնոյ զրիստոնէիև մանուսակը վրայ :

## ՄԱՍՆ Ա.

Ձերմեանոց քրիստոնէան իր մահուանը ա-  
տեն նախ և առաջ մեղքերուն վրայ մտածելիք  
չունի, վասն զի իր կրցածին չափ խոստովաներ է  
անկեղծ ու խոնարհ խոստովանութեամբ, ու սըր-  
տանց ալ զըջացեր է. ուստի կրնայ վտահել ա-  
տուծոյ սղորմութեանը՝ որ Յիսուսի արդեամբքը  
փրկութեան պիտոր հասնի: Աս վտահութիւնն  
որ ողջութեան ատենը ունեցեր է, մահուան ա-  
տենն ալ սրտին խաղաղութիւն մը կը բերէ՝ որ  
ան ատենի ամենէն մեծ դառնութիւնը չըզգար:  
Իր վիճակին պարտուցը վրայ ալ սիրաբ կրնայ  
հանգիստ ըլլալ, վասն զի ամեն իրիկուն քններ է  
իր խղճմանը, ու ունեցած պակասութիւնները  
շիտիկ ջանացեր է: Իր կեանքը ըրննալուն վրայ  
ալ չիխառվիր. վասն զի աստուծոյ համար կ'ապ-  
էր, աստուծոյ անունի ուղիւն համար ալ յո-  
թարութեամբ կը մեանի: Սիրաբ աշխրբիս չէր կը-  
տուցած՝ որ բաժնուելուն համար արածի, մա-  
նուանոց կուրախանայ զաստուած կորսընցընելու

վտանգներէն խաղտելուն համար. որչափ ալ ի-  
րեն սիրելիներէն բաժնուելուն ցաւը զգալու ըլ-  
լայ, զիրենք աստուծոյ կը յանձնէ, ու մեկզիկն  
աշխրբէս խաղտիլը մտածելով՝ մեկալ զիկն զի-  
րենք, առջինին համար գոհութիւն կուտայ աս-  
տուծոյ, երկրորդին համար զգացած ցաւն ալ  
աստուծոյ կը նուիրէ, ըսելով: Հարբէր դիպանս իճ,  
†էդ ճարտօցից պարտաճ օրհնութեան :

## ՄԱՍՆ Բ.

Որչափ ալ ատենէն առաջ ու անակնկալ ըլլայ  
իր մահը, չիխառվիր. վասն զի պարտաստուած է  
առաջուց. մանուանոց իրեն պատճառ կըլլայ մեծ  
արդիւնք վաստակելու, աստուծոյ կամեցը հա-  
մակերպելով, ու ցաւերը աստուծոյ սիրոյն հա-  
մար քաշելով: Խաչելութիւնը ձեռքը բռնած՝ ա-  
նով կը մխիթարուի, անոր կը նուիրէ իր ամեն նե-  
ղութիւնները, ու Քրիստոսի քաշածները միտքը  
բերելով՝ իրենները կը թեթեան. կը համբուրէ  
իր փրկիչը, որ օր մը պիտոր յարուցանէ իր հոյ  
գառնալու մարմինը:

Վերջին թոշակը կը բերէ քահանայն. թէ որ  
բոլոր կենացը մէջ անանկ ջերմեանաբութեամբ ու  
հաւատքով կը հաղորդուէր, հապա ինչ սէր՝ ինչ  
եռանդ չունենար մեանելու ատեն ընդունելու իր  
փրկիչը՝ որ քիչ ատենէն պիտոր անանայ սղորմած  
տէր մը, որ պիտոր չիյնի իր մեղքերը, այլ իր  
խելճ ողորմելի ծառայութիւնը մեծ բանի մը պէս  
պիտոր վարձատրէ: Առանկ հիւանդի մը քով  
գանուօղին փախաբը կուգայ իր վիճակը անոր վե-  
ճակին հետ փոխելու, ատենելով միայն իր ան-

խում կերպը, իր հաստատուն հաւատքը, աստուծոյ ողորմութեանը վրայ ունեցած վստահութիւնը, իր սէրը՝ որով ամեն նեղութիւն համբերութեամբ կը քաշէ, ու իր մա՛հը յօժարութեամբ կընդունի աստուծոյ ձեռքէն:

### ՄԱՍՆ Գ.

Վերջապէս հիւընդութիւնը երթարով կը ծանրանայ, հիւանդը ինքիբերն կուզէ, կամ սիրով կընդունի վերջի նպատակներն ալ. ու որչափ ալ ուժը նուազի՝ ձկերնայ ալ խօսիլ, Յիսուսի ու սուրբ աստուածածնայ անունը բերնէն չկապկսիր, անոնց անունը տարով՝ հոգին կուանդէ: Աստուծոյ մա՛հ չըսուիր, այլ կեանք. ասանկ մահուան սահմանը ինքը՝ Քրիստոս կուայ. Անն ասե՛մ յեւ, ղի որ ղբանն ի՛մ քէ և հասարայ այն՝ որ արտաբերայ ղիս, ընդունի ղիւանն յաբիւնախման, և ՚ի դասարայն ու յարանէ, այլ քոնեցաւ ՚ի մահաւանէ ՚ի կեանս: Ասանկ մահ ունեցողը՝ Քրիստոսի ան ծառաներէն է, որոնց երանի տուաւ՝ ըսելով: Երանի է ծառայիս այն ղի, ղբ էիւալ արեւն գոտնեցէ արարեալ այնպէս. ամէն աւե՛մ յեւ, ղի ՚ի վերայ ամենայն ըւէոյ իւրոյ կայոսոցն ղնա: Քրիստոս աւերն մեր է ըսողը, ու հաստատական ձեւով է ըսածը՝ Ամէն ամէն ասե՛մ յեւ, որպէս ղի ալ ղէկ սպաւորուի մարբնուս մէջ: Արթըննանք ասանկ մեծ խոտամուկէն, սիրա աննէք, ալ խափնք աս իր խոտամուկէն համեղու, վասն ղի խիստ մեծ է աս խոտամուկէրը. Ի վերայ ամենայն ըւէոյ իւրոյ կայոսոցն ղնա: Աւարբիս վրայ ալ երբեմն աւերերը իրենց հաւատարիմ ծառաներուն հասուցում կընեն, ինչպէս Քրիստոս աւերն մեր օրի-

նակ կը բերէ, ու ծառաներն ալ գո՛հ կըլան իրենց ընդունած հատուցմունքովը: Բայց ի՛նչ են աշխըքիս աւերերուն բոլոր ունեցածը՝ այն հատուցմունքին քովը, որ Քրիստոս կը խոտանայ իր հաւատարիմ ծառայիչը. ասոնց հասուցումը աստուած է, արքայութեան փառքն է՝ որն որ յաւիտեան պիտոր վայելէն, զստուած ժառանգելով. հրեշտակներուն ու սուրբերուն գասակից ըլլալն է, աստուծոյ հետ մէկ ըլլալն է, իր աստուածութեանը մասնակից ըլլալն է: Աւերեմն չա՛մեր որ աս ամեն բաները մտածելով՝ գաղջութիւնը մէկգի զնենք, ու մեր հոգւոյն վրայ փոյթ ունենանք, ջերմեանդ ըլլանք: Ինչո՞ւ է որ մեր ամեն մարմնաւոր ու ժամանակաւոր շահը կը մտածենք, ու հոգւոր և յաւիտենական շահերնիս չենք մտածեր:

### Ա. Գ. Թ Գ

Յիսուս փրկիչ իմ, ի՛նչ կուզես ինձմէն՝ բայց իմ շահս. յաւիտենական երջանկութիւն մը վաստիկելու, ղքեղ յաւիտեան ստանալու համար, որ ձգնութիւն՝ որ գո՛հ ծանր կրնայ սեպուիլ: Ինչ որ քաշում, անիկց աւելին քաշեցիր. քեզի ծանր չերեցաւ ինձի համար խաչուիլը, ինձի ինչպէս ծանր կրնայ երենալ իմ շահուս համար կերբերս գոպելը. ասկէց ետքը սիրով յանձ կուտում ինչ որ կուզես ինձմէ, ինչ որ կը հրամանս ինձի. վասն ղի գուն իմ շահս աւելի կը փնտաես, քան թէ ես իմինս:

Ինձ մեղաւորիս հոգեղինի մարգարեացես ողորմել, Յիսուս, արաջանօք իմոյն հրեշտակի՝

դարձուցանելով զիս տէր՝ ի բարիդ քո հետալու-  
սոյ. զի զաւանդ հոգւոյս իմ պաշտպանութեան՝  
զոր հաւատացեր նմին, զընկալեալն ՚ի քէն ՚ի  
կենցաղ աստեացս, ուրախութեամբ սրախ յիս  
բերկրեալ անմեղազրեւի առ ՚ի քէն օրհնեալ  
խնդալից գլխաց զուարճութեամբ, քեզ սրբոյ  
բարձրութեան փառաց անհասկց, ՚ի խրախճանս  
կենդանախումբս բերկրեցելոց պարուց մատու-  
ցեալ ընծայեսցէ, գովեալ ողբմած :

## Մ Տ Ա Մ Ա Կ Ա Ն Ճ Ժ Ա .

Դատաստանին յիս :

## Մ Ա Ս Ն Ա .

Քրիստոս տէրն մեր աշխարհս փրկելու համար  
եկաւ, չէ թէ գատելու. բայց նորէն մէյմըն ալ  
պիտոր գայ, ան ատենը պիտոր գատաստան ընէ :  
Հայրն երկնաւոր իր ձեռքը զրած է աշխարհս  
գատելու. ինքը չէ որ անձամբ պիտոր գատէ, այլ  
սահմաններ է՝ իր սիրելի Որդւոյն Քրիստոսի ձեռ-  
քովը ընել մեր գատաստանը, ինչպէս սահմանած  
էր՝ անոր ձեռքովը ընել մեր փրկութիւնը. Ու էնէ  
Հայր Դատի զոյ, այլ զամենայն Դատաստան էր Որդւոյ  
Էրոյ : Ուրեմն մեր գատաւորը Քրիստոս պիտոր  
ըլլայ, ինչպիսիքն էր նմա Դատաստան առնել : Բայց  
որովհետեւ ան ատենը արդարութիւն ձեռք պի-  
տոր առնէ իբրև գատաւոր, առաջուց գլխութիւն  
չիթողուց՝ որ մեզի չեցուցընէ, հնարք չիթողուց  
որ չիբանեցընէ՝ ան օրը զմեզ չիգատատարուելու :  
Մեր փրկութեան ճամբան խօսքով ու օրինակով  
մեզի ստրվեցընէն ՚ի զոս՝ գատաստանին օրը  
բռնելու կերպն ալ մեզի բացատրեց. նկարագրեց  
ինչ կերպով պիտոր օրհնէ արդարները, ինչ կեր-

պով մեղաւորները պիտոր դատապարտէ, ու ինչ պիտոր ընենք դատապարտուածներէ խաղտելու համար: Ասկէց աւելի ի՞նչ կրնայ ընել բարեգութ դատաւոր մը, անանկ որ ամեն մարդուն իր ձեռքն է, չէ թէ միայն չդատապարտուիլը՝ այլ և չէ դատուիլը, իր մահը իրեն համար անցք մը ընել է դէպ ՚ի կեանք: Ամէն ամէն ասէ՛ յեւ, ղի՛ որ ղբանն ի՛մ ւնէ և հասարայ այն՛՝ որ արտաբնացն ղբն, ընդունի ըլ-  
 փնանն յառի՛քէնսկանս, և՛ ՚ի դատաբանն ու մարտնէ, այլ փոխեցաւ՝ ՚ի մահոսանն ՚ի կեանս:

### ՄԱՍՆ Բ.

Ճար չիկայ, ան որը պիտոր գայ՝ բիւրաւոր դարեր ետքն ալ գալու ըլլայ, մեզն համար մօտ է, վասն զի ամեն մարդուն իր կեանքն է միայն դատաստանին պատրաստուելու ատենը, անկէց ետքը ատեն չիկայ մեր վիճակը փոխելու: Ընչպէս որ մեռնինք, անանկ յարուածին պիտոր ասենինք. թէ որ մեզքի մէջ մեռնինք, մեզքով Քրիստոսի ա. տեանը պիտոր ելլենք. թէ որ արգարացեալ մեռ-  
 նինք, մահուանէ ՚ի կեանս պիտոր անցնինք: Եկեա՛նք ծամանախ, յորո՛ւմ ամենե՛րի՛ն՝ որ ՚ի գերեզմանս խայրեն, արի՛ղեն խայնի նորա և եկեա՛նք արգարաւ. որոց բարիս գոր-  
 ծեալ իցէ՛ ՚ի յարութիան կենաց, և որոց ղւար արբեալ՝ ՚ի յարութիան դատաբանաց: Ի՞նչ բարիք ու չարիք՝ մեռնելէն ետքը չեն գործուիր, ուրեմն մահն է մեր վիճակը որոշողը. մահերնիս հետու է՝ չենք կրնար ըսել, ուրեմն դատաստանիս ալ մօտ է: Ամենք ալ ան ատեանը պիտոր ելլենք, անոնք որ մինչև հիմայ եղեր են, մենք որ կանք, ու որոնք ալ մեզմէ ետքը պիտոր ըլլան: Ամենե՛րեան որ ՚ի գե-  
 ղեզմանս խայրեն, այս ինքն աշխրբիս որ ղին ալ մար-

մինին ցրուած ըլլայ, ամենքն ալ Քրիստոսի ձայ-  
 նը պիտոր լսեն. Լուի՛ցեն խայնի որդոցն սոսորձոց, որ ղերենք նորէն իրենց հօգուոյն հետ պիտոր միացը-  
 նէ, ու հրեշտակապետին փողովը՝ զամենքն ալ իր ատեանը պիտոր կանչէ: Մէկը չիկրնայ պիտոր խոյս ալ այն ամենակարող ձայնէն, ամենքս հօն փողովինք պիտոր մեր յաւիտենական վիճակին որոշուիլը լսելու: Աս որոշմունքն ալ պիտոր ըլ-  
 ւայ, չէ թէ մեր պատուոյն՝ մեր անուանը համե-  
 մատ, չէ թէ մարդկանց կարծեացը ու մեր ղըր-  
 սուանց երեցածին համեմատ, այլ մեր գործքե-  
 րուն. որոց բարիս գործեալ իցէ, և որոց ղւար ար-  
 բեալ: Այսինքն ինչ որ գործքով ըրած ենք, ինչ որ խորհրդով, ինչ որ գիտաւորութեամբ, ինչ որ բազմանքով, ինչ որ ղանցաւորութեամբ, ինչ որ մեր խղճմաննիցն խորունկը ծածկուած են, պիտոր յայտնուին, ու չիկրնանք պիտոր կերտով մը ղմեզ արգարացընել:

### ՄԱՍՆ Գ.

Որոշմունքն ալ չէ թէ փամփանակաւոր պիտի ըլլայ՝ այսչափ կամ այնչափ սարուան կամ գա-  
 րերու համար, այլ յաւիտենական ու անգարծ, յաւիտենական երջանկութեան կամ յաւիտենա-  
 կան թշուառութեան. արգարաց յաւիտենական կեանք, իսկ մեղաւորաց յաւիտենական մահ: Աս ստակալի վճիւր՝ աս երանելի աւետիլը լսելով՝ թէ որ սիրանընիս չիշարժի, թէ որ վախը կամ յոյսը ղմեզ չիյորգորէ ամեն մեզքէ ետ կենալ, ու բա-  
 րեգործութեան ետեւ ըլլալ, մեռելներէն աւելի անգարջ ենք: Միանգամ պիտոր ըլլայ մեռնելնիս, միանգամ ալ դատաստան. Կայ Գոց մարդիան միան-

գամ մտանէլ, և յնոր այնորիկ զարասարան: Անանկ արգար գատաստանն ու անանկ անխաղ առեան, ուսկից ուրիշ առեան կամ աւ այլ գատաւոր բողբէլ չըլար. վասն զի վճիռ տուողը Քրիստոս է, այսինքն նոյն ինքն արգարու թիւնն աստուծոյ: Ինչ որ Քրիստոս կը դատէ՝ աստուծոյ գատաստանն է, ու աստուծոյ կամօքը. Ե-դարասարանն ի՞մ արդար է, զի ու խորքէմ զիսմ ի՞մ, այլ զիսմ այնորիկ՝ որ առաքեացն զիս: Արգար է իր գատաստանը, վասն զի սրագէտ է. արգար է, վասն զի աստուծոյ զիտու թեանը ու կամայը համեմատ է. արգար է, վասն զի հոն աղաչանք ու միջնորդութիւն չեղօբեր. արգար է, վասն զի հոն աչառանք կամ ակնածութիւն չիմտնար. արգար է, վասն զի ասն մէկուն արգեանքը կամ մեղայը համեմատ է, վասն զի ինչ վարձը որ խոտացեր է առաջուց, ու ինչ պատիժ որ սղաանացեր է, անոնցմէ մաղ մը չիտատորիր. անոր համար ալ՝ մէկը չիսխոր կրնայ գանգալը Քրիստոսի ըրած գատաստանին, այլ մանաւանդ ամեն մարդ գեւ վճիւր չըլած՝ ինք իրեն գատապարտութեան արժանի ըլլալը պիտոր ճանչայ: Թէ որ գատաստանին օրը միշտ մտքերնինն ունենայինք, մեր վարուցը անխաղ կանոն կըլլար, ու ամենեւին չէինք մեղանչեր. Յիշեալ զիսմ ճաննս, և յառաքեանն ու մեղիցեան:

Ա. Գ. Օ Թ. Վ

Յիտուս փրկիչ իմ, որ օր մը քու առեանդ պիտոր ելլեմ. անանկ կը փառաւորեմ զքեզ՝ ինչպէս քու Հայրդ, վասն զի ասոր համար զմեզ գատաւը ինչնաու թիւնը քեզի առաւ, ինչպէս որ գունըսիր, Զամենայն դարասարանն է որդոյ իւրոսմ, զի ամե-

նէսեան պարտեցն զՈրդի՝ որպէս պարտեն զՀայր: Բայց արգեօք ուրխաութեամբ թէ արամութեամբ քու առեանդ պիտոր ելլեմ. կը ջանամ որ մեռնէլէս առաջ քու շնորքովդ սպաշխարեմ, որպէս զի ան օրը չիյնէս իմ մեղքերս: Ան օրը քու բարեգութ սիրագ արգարութիւնը պիտոր դրաւ. հիմայ որ ողորմութիւնը գրաւած է՝ զթախնի. հիմակուց լսել տուր ինձի քու ամենակարող ձայնդ, չէ թէ հող գարձած մարմինս յարուցանելու՝ այլ մեռած հոգիս կենդանացնելու համար. որպէս զի նոր կեանք մը սկսիմ, հոգևոր կեանք՝ որ արգարոց հետ արժանի ըլլամ քու օրհնութիւնդ լսելու, ու յաւիտենական արքայութիւնդ ժառանգելու: Քու սուրբ խաչդ իմ ապաւենս ըլլայ, որ ամպերուն մէջէն փառօք Հօր երեցած առեանդ չամաչեմ, ինչպէս որ յոյս վըագ դրած եմ. այլ քու շնորքովդ ուրախ զուարթ ալ կողմդ կարենամ կենալ արգարներուն հետ:

Քատաւոր արգար, յորժամ դաս փառօք Հօր գատել զկենդանիս և զմեռեալս, մի՛ մտաներ ՚ի գատաստան ընդ ծառայի քում, այլ փրկեա զիս ՚ի յաւիտենական հրոյն, և լսելի արա ինձ զերանաւեա կոչումն արգարոց յերկից արքայութիւնդ, և ողորմեա քո արարածոցս և ինձ բազմամեղիս:

# ՄՏԱԾԱԿԱՆ ՃԺԲ.

Նորէն դատաստակին վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Քրիստոս անքն մեր ուրիշ անգամ մըն ալ պիտոր գայ աշխարք, նոյն մարմնովը՝ բայց քառօր Հօր, ինչպէս Հաւատածքին մէջը կը դաւանինք: Ան աւենը առջի անգամուն պէս սկիար ու մահկանացու մարմնով պիտոր չեգայ, այլ վառուարեալ ու ամենակարող մարմնով. բոլոր երկինքին հրեշտակներն ալ մէկտեղ. Եւ յորժամ եկեացե որդի մարտոյ քառօր իւրով, և ամենայն հրեշտակի ընդ նմա: Գեղեցն մեկ հրեշտակ մը տեսաւ, ու վախէն մեռելի պէս ինկաւ. Քրիստոսի գերեզմանին պահապանները հրեշտակ մը անանկէն եղէն իբրև դեռեալ կրօն սուրբ աւետարանը. հասպա ինչ սոսկում պիտոր ըլլայ երկինքին բոլոր հրեշտակները մէկտեղ տեսնելը: Թէ որ որոտում մը՝ կայծակ մը՝ մրրիկ մը անանկ ահաւոր կերեւոյ մեղի, հասպա սով կրնայ երեւոյցել ան սոսկումն որ պիտոր ունենան մեղաւորները՝ անսնայով զՔրիստոս փայլալիմացայտ ամպերու վրայ նստած, հրեշտակները չորս զին առած, աշխրբիս սկիզբէն ինչուան ետքը ե-

ղած մարդիկ ամենքը առջին ժողոված՝ իրենց յաւիտենական վիճակը որոշելու: Յայնժամ նորից յաւնառ քառօր իւրոյ, և ժողովեացին առաջի նորա ամենայն առջի: Ամենքը իրար պիտոր ճանչնան, չէ թէ միայն իրենց զգգականներն ու ծանօթները՝ այլ բոլոր աշխրբիս մարդիկը. սաստուած ամեն մեկը ամենուն պիտոր ճանչցնէ իրենց ամեն գործքերովը, որպէս զի իր ընելու գառաստանին արգարու թիւնը ամենքն ալ ճանչնան: Ահ, սպաշխարու թիւնը միայն կրնայ խաղտել աս ամօթէն զմեղաւորը:

Ան ատենը պիտոր բաժնէ արգարները մեղաւորներէն, ինչպէս հովիւ մը՝ որ ոչխարները այծերէն կը բաժնէ. արգարները ալ կողմը պիտոր կեցնէ, մեղաւորները ձախ կողմը: Ոչ ազնուական կը նայի և ոչ աղքատ, ոչ գիտուն և ոչ սղեւ, ոչ եկեղեցական և ոչ աշխարհական. միայն արգար ու մեղաւոր, որոնք որ աստուծոյ շնորքին մէջ մեռեր են, ու որոնք որ մեղաց մեջ: Անանկ դիւրաւ ու անշփոթ իրարմէ բաժնէ պիտոր զանոնք, ինչպէս հովիւը չիփոթէր այծը ոչխարին հետ. ամենքը պիտոր ճանչնան՝ որ այն է իրենց անդը: Էրիկ կնկանէն պիտոր բաժնուի, եղբայրքրոջմէն, ծնողք իրենց զաւկէն, բարեկամ իր բարեկամէն. սոսկալի բաժանում, որ մէյմըն ալ իրարու չիկրնան պիտոր մօտենալ. Վիէ մեծ է ընդ մեզ և ընդ յեզ. եկէ իսիցին սաքի առ յեզ անցանել ու իարէն, և ու այսի առ մեզ անցանել:

## ՄԱՍՆ Բ.

Ետքը Քրիստոս վճիւր պիտոր տայ. աւետարանին մէջի վճիւրներուն պէս չէ որ, ով որ չուզէ մտիկ չեղնէ. ամենքն ալ լսեն պիտոր, ամենքն ալ

արգարացընեն պիտոր առած վճիւր , ամենքը  
 ուզեն չուզեն՝ հնազանդին պիտոր իրեն որդւմա-  
 նը : Այլ հողմիններուն պիտոր ըսէ . Սէպոյ օրհնեալ  
 Հօր ինչ , Ժառանգեցէ՛ք ղ պարբարեալ յեղարայո-  
 թիանն ի սկսմանն աշխարհի : Ինչ ուրախութիւն արգարաց .  
 ալ իրենց չքսեր Քրիստոս որ պաշտարեն , խա-  
 չէրնին առնեն ետեւն երթան , իրենցմէ ալ հրա-  
 ժարին , այլ արքայութիւն երթան , հանգչին , ու  
 յաւիտեանական երանութիւն վայելին : Իրենց բա-  
 րեգործութիւններն ալ որոնց համար աս վարձքը  
 պիտոր ընդունին , առջևնին պիտոր զնէ՛ մանա-  
 լանդ եղբայրսիրութեան գործքերնին , որ Քրիս-  
 տոս իրեն ըրած կը սեպէ . անանկ որ՝ արգարները  
 պիտոր զարմանան աս խօսքին վայ , ու պիտոր  
 ըսեն . Մենք էրբ քեզի աս բարիքը ըրած ունինք :  
 Ան ատենը պիտոր իմանանք եղբայրսիրութիւն  
 ինչ ըսել է , որդրմութիւն ինչ ըսել է , ներել  
 ինչ ըսել է , ուրիշ վայ ցուել ու կարեկից ըլ-  
 լալ ինչ ըսել է . վասն զի աս ամեն բաները բո-  
 լոր մարդկանց ու հրեշտակաց առջնն՝ իրեն ըրա-  
 ծի պէս պիտոր ընդունի : Արգարներուն աս խօս-  
 քովը աս ալ կիմացուի՝ որ իրենց բարեգործու-  
 թիւնները Քրիստոսի արգեանքը հետ միանալով  
 անանկ ազնուանան ու անանկ յիսուսին պիտոր՝  
 որ իրենք ալ պիտոր չե՛ծանշան իրենց ըրած բա-  
 րեգործութիւնները , մենք ստանկ բան չենք ըրած՝  
 պիտոր ըսեն : Ի՛նչ մեծ , ի՛նչ սիրելի , ի՛նչ միտթա-  
 րական օր պիտոր ըլլայ ան օրը արգարներուն  
 համար . Քրիստոս աչրն մեր մեզի սիրա առլու  
 համար՝ ասանկ մանրամասն կը նկարագրէ այն  
 օրը :

Մ Ա Ս Ն Գ .

Ետքը ձախ կողմը կեցօյններուն՝ այն սոսկալի  
 վճիւր պիտոր ասյ , գատապարտելով զիրենք ի  
 հօւրն յաւիտեանական՝ որ իրենց համար պատրաս-  
 տուած չէր , այլ սատանաներուն : Աս կտորն է որ  
 զարհուրանաց հետ անանկ կսկիծ մը պիտոր ասյ  
 մեղաւորներուն , որ որդի մը պէս սրտերնին կրծէ  
 պիտոր յաւիտեան , մտածելով որ իրենց համար  
 արքայութիւնը պատրաստուած էր , ու իրենք  
 իրենց կամքը անկէց զրկուելով , սատանային հե-  
 աւեւելով , անոր համար պատրաստուած դժօխքը  
 պիտոր ամնջուին յաւիտեան : Քրիստոս անոնց  
 ալ իրենց յանցանքները երեսնուն պիտոր ասյ ,  
 մանաւանդ եղբայրսիրութեան գեմ ըրած մեղ-  
 քերնին : Ան ատենը պիտոր իմանան , որ իրենց  
 անգթութիւնները՝ բամբասանքները՝ զգիանքնե-  
 րը՝ ու ամեն անիրաւութիւնները Քրիստոսի ըրեր  
 են՝ իրենց ստեղծողին , զիրենք միակողմն , ու ի-  
 րենց գատաւորին : Ան ատենը պիտոր իմանան՝  
 ինչ ըսել է Քրիստոսի արեանը զինը ըլլալը , ինչ  
 պէս որ ամենքս ալ ենք , ու իրար անարգելով՝  
 Քրիստոսի սուրբ արիւնը անարգած կըլանք , ու  
 ինչ անիրաւութիւն որ իրարու կընենք՝ Քրիստո-  
 սի պատուական արեանը ըրած կըլանք : Աս բանս  
 անանկ պիտոր իմանան մեղաւորները , ու Քրիս-  
 տոսի ըրած անարգանքնին անանկ պիտոր ըմբռ-  
 նեն՝ որ իրենք ալ ստիպուին պիտոր ըսել Քրիս-  
 տոսի . Ե՛րբ աս բաները քեզի գեմ ըրեր ենք , էրբ  
 ղքեղ անթի՛ր ծարաւ՝ մերկ՝ հիւանդ ու բանտի  
 մէջ աեսեր , ու չենք օգնիք քեզի : Քրիստոս ալ  
 սուրբ աւետարանին մէջ տուած խրատը՝ հոն զի-

ընդ գատապարտելու համար պիտոյր կրկնէ, որ իրեն եղբարցը չողորմելով՝ իրեն ըրեր էն անսղորմութիւն: Ան սոսկալն նկարագրուածիւնը կը լմնցընէ սուրբ աւետարանը՝ ըսելով: Ե- երկնքն նոգա ՚ի քանջանսն յաւիտէնականս, եւ արդարսն ՚ի էնանսն յաւիտէնականս: Անկէց ետքը աղատելու յոյս չիկայ. աստուած մարդուս առջին դրեր է յաւիտէնական երանութիւն, այսինքն զինքը. ով որ զինքը չուզեր, իրմէ կը զրկուի, ու ան զրկումն է դժոխքը: Աւ ինչպէս որ աստուած մարդուս աչք տուեր է, ինքը ինքիրմէ աչքը հանելու որ ըլլայ՝ միշտ աչքէն զուրկ կը մնայ, ասանկ ալ ով որ իր կամօքը Աստուծմէ կը զրկուի՝ Աստուծմէ զուրկ կը մնայ միշտ: Աստուած մարդուս կեանք տուեր է, ով որ ինքը զինքը իր կամօքը ծովը կը ձգէ ու կը մեանի, ճար չիկայ նորէն ողջըննալու, ասանկ ալ գատապարտելոց դժոխքը ըմբնալու ճար չիկայ:

Ա. Գ. Օ Թ. Ք

Յետու փրկիչ իմ, քու արգարութիւնդ հիմայ բանեցուր իմ վրաս, մեղքերուս պատիժը հիմայ սուր ինծի՝ քանի որ ողջ եմ: Մի խնայեր ինծի, պահանջէ ինծմէ վերջին բնիսնն ալ իմ անբաւ պարտուցս՝ ամեն կերպ թշուառութեամբ. բուրն ալ սիրով կրնգտնիմ հոս, որպէս զի անդին ողորմիս ինծի: Ամեն խառութիւնդ հոս ըրէ. բայց անդին, քու պատուական արեանդ համար ըլլայ, զիս մի՛ գատապարտեր. հոս էրէ, հոս կարէ, հոս մի՛ խնայեր, որպէս զի յաւիտէան խնայես անդին:

Յորժամ հեծանոցաւ գատողութեան քո, տէր, որբես զկալ աշխարհի, յըշտեմարանս արքայու թեանդ ժողովեա զմեզ ընդ արգարոցն:

### ՄՏԱԾԱԿԱՆ ԱԺԳ.

Քրիստոսի ողորմւոյրեանը վստահ ըլլալու վրայ:

Մ. Ա. Մ. Ա.

Քրիստոս տէրն մեր երկու աթոռ ունի. մէկը շնորհաց, մէկալը արգարութեան. արգարութեան աթոռը նստի պիտոյր երբոր դայ զմեզ գատելու. քանի որ ողջ ենք, շնորհաց աթոռին վրայ նստած է հիմայ, որպէս զի ինչ որ ըստ պատշաճի խնդրենք իրմէն՝ շնորհէ մեզի. անոր համար կըսէ. Խնդրեցէ՛ք եւ ստանալոցաք. իսկ արգարութեան աթոռին վրայ նստած ատենը պիտոյր այլ ինչ որ ամեն մարդ կարողիւնաւորի: Ինչ անխելքութիւն կըլլայ ուրեմն իր արգարութեան ատեանը կոչուելու սողստել, երբոր հիմախուրնէ իր շնորհաց աթոռը կրնանք զիմել. անոր համար կըսէ առաքեալը. Մարդոցա՛յ այսուհետեւ կամարձակուելեամբ ստանըի ախարայ շնորհաց նոգա: Աս աթոռը՝ ով որ կուզէ, կրնայ զիմել. մէկալին ուզէնք չուզէնք՝ կուսինք պիտոյր. ինչ ամօթ բան. պէտք կըլլայ որ Քրիս-



տոս հրաւիրէ զմեզ իր ողորմութեան աթոռը գիմելու, առանց իր յորդորելուն չենք երթար իր ոտքը՝ մեր կարօտութիւնը լեցնելու: Յանցաւոր ենք, զեն չիտար. թէ որ արդարութեան աթոռը երթալու ըլլայինք, ան ասենը պիտոր վստահայինք ու ըսէինք. Ս'ի հարմեր 'ի դատարան ընդ ծառայի գոմ. բայց երբոր իր շնորհաց ու ողորմութեան աթոռը պիտոր գիմէնք, ինչ կը վստահեք յանցաւոր ըլլալու համար: Հիմայ իրեն գիմէնին ուրիշ բանի համար չէ՝ բայց մեզքերուս անարակոյտ թողութիւն ընդունելու, ու շնորք խնդրելու՝ որ կարենանք պարտքերնիս կատարել: Զի ընկալցոս գործարմութեան, եւ գարոս շնորհս 'ի դէպ ժամանակի օգնականութեան: Ոչ մէկին և ոչ մէկալին արժանի ենք, բայց աղօթքով երկուքն ալ կրնանք ընդունիլ. վասն զի աղօթքով ընդունիլը աղօթողն աղէկութենէն առաջ չիգար, հապա առօղին ողորմութենէն. Ոչ առ արդարութեանց մերոյ արխանէս գոմիս մեր առաջի գո, այլ վասն Բաղոմ գլխութեան գո քէր: Առանկ հարկաւոր բանի ինչպէս կրնանք անհոգ ըլլալ, ու չգիմէլ Քրիստոսի ոտքը:

Մ Ա Ս Ն Բ.

Թէ որ Քրիստոս անքն մեր չիհրաւիրէր զմեզ, կրնայինք քաշուել՝ կրնայինք չիհամարձակիլ իր ողորմութեան ու շնորհաց աթոռը գիմելու. բայց երբոր կը յորդորէ զմեզ գիմելու, վատահ պիտոր ըլլանք իր խօսքին. Մարիցոս այսուհետեւ համարչալութեամբ առաջի անտոյ շնորհաց նորա: Վասն զի որչափ ալ պարտըկան չէ մեր խնդիրքը կատարելու,

բայց կը կատարէ՝ չէ թէ միայն իր խոստմանը համար, այլ նաև հրամայելուն համար՝ որ իրեն ծառայենք: Ինքն է ըսողը՝ որ առանց իրեն բան մը չենք կրնար ընել: Առանց իմ ու ինչ կաշէս առնելու ուրեմն իրեն գիմելու որ ըլլանք, պէտք է որ մեզի շնորք ապ իրեն ծառայելու. թէ որ չէ, չիկրցած բաներնիս հրամայած կըլլար մեզի: Կը հրամայէ իր պատուիրանքները պահելու. ուրեմն պատրաստ է մեզի շնորք տալու՝ որ կարենանք իր պատուիրանքները պահել, ապա թէ ոչ՝ չէր հրամայեր իր պատուիրանքները պահել: Ասկէց աւելի ինչ ապահովութիւն կը փնտռենք խնդրելու ընդունելու. ուրեմն վատահութեամբ գիմէլք իր ողորմութեան ու շնորհաց աթոռը, որպէս զի բանի որ ասենն է՝ ընդունիլք մեր մեղացը թողութիւն, ու փրկութեան համնելու շնորք:

Մ Ա Ս Ն Գ.

Թէ որ թագաւոր մը իր ողորմութեանը վրայ ատրակուսողին բարկանար ու պատժէր զինքը, ո՞վ չէր յուսար իրմէ թողութիւն ու շնորք ընդունելու, ո՞ր անխելքը չէր գիմէր անանկ ողորմած ու գթած թագաւորին ոտքը: Սուրբ գիրքն է ըսողը. Ո՞ հասարաց 'ի քէր, եւ յամբ էզեւ. մեզի միայն պիտոր պատահի աս դժբախտութիւնը՝ որ յուսանք 'ի Քրիստոս, ու խաբուելիք. հերիք է որ չուղենք առանց աշխատելու արքայութիւն երթալ: Մոյն իսկ առաքելոյն խօսքը՝ Զի գարոս շնորհս 'ի դէպ ժամանակի օգնականութեան, ըսել է որ մենք պիտոր աշխատինք՝ որ Քրիստոս ալ օգնէ մեզի իր

չորքօլը . ապա թէ ոչ, պէտք չէր որ օգնականու-  
 թիւն խնդրէինք արքայութիւն երթալու , այլ  
 բացարձակապէս արքայութիւն : Բայց աս չարքը  
 մէկու մը չկատար աստուած . Բրիտոս նաև իրեն  
 համար ըսաւ . Ո՛ր զնոյն պարս էր արարել Բրիտո-  
 սի , և ճարնել ՚ի գոտս ի-ր : Ուրեմն հերթք է որ  
 յանդգնութիւն չըլլայ ըրածնիս , որչափ որ կըր-  
 նանք՝ վստահինք Բրիտոսի ողորմութեանը . վստա-  
 զի ինքն է հրամանօղը՝ որ վստահինք : Բայց թէ որ  
 չիհրամաներ ալ, պէտք էր յուսայինք ու վստա-  
 հէինք իր վրայ . որովհետև զմեզ այնչափ կը սիրէ՝  
 որ մեզի համար իր կեանքը զրաւ , ու ինքը մեր  
 վրայ ունեցած սէրը յայտնելու համար՝ ըսաւ .  
 Մէծ ևս քան զայս սէր ու ոչ ունի , էի՛ն զանչն ի-ր դիցի  
 ՚ի վերայ Բարեկամաց ի-րոց : Մարգարէին բերնօջի ալ  
 կըսէ . Թէ որ մայր մը իր զաւակը մոռնալու ալ  
 ըլլայ , ես զձեզ չեմ՝ մոռնար . ուրեմն ինչպէս  
 կրնանք չիվստահիլ իր վրայ : Ար վստահինք բարե-  
 կամի մը խօսքին . Բրիտոսէ աւելի որ բարեկամը  
 ունինք՝ որ իր վրայ չիվստահինք . անոր համար  
 կըսէ Պօղոս առաքեալը՝ գիտեմ որուն վստահել ,  
 Գիտեմ յո հաւասարչեան էմ : Ամենակարող է խոսա-  
 ցօղը ու ամենողորմ . կրնայ ու կուզէ ողորմիլ ու  
 օգնել մեզի . ուրեմն իր վրայ գնենք մեր ամեն  
 յոյսը :

Ա. Գ. Օ Թ Բ

Յիսուս փրկիչ իմ , քու վրագ է իմ յոյսս , քու՝  
 որ իմ արարիչս ու փրկիչս ես , որ իմ կարօտու-  
 թիւնս ալ՝ ախարութիւնս ալ գիտես , ու կրնաս  
 ու կուզես օգնել ինձի . քու վրագ է յոյսս , ու-  
 ինչ յուսալիք չունիմ : իմ վրաս որ նայիմ , յուսա-

հատեալ կուգայ . քեզմէ միայն կը յուսամ իմ  
 փրկութիւնս , ու աս յոյսս պարասպ չեղլուեն  
 վրայ վստահ եմ . ի գեղ Կէր յոստոյայ , մի ամաւելցից  
 յա-ի գեան :

Յոյս իմ ՚ի մանկութենէ իմմէ . յոյս իմ ՚ի Ժա-  
 մանակի ծերութեան . յոյս իմ ՚ի միւսանգամ  
 գալտեանն քս , մի անտես առներ զիս սէր աս-  
 տուած իմ :

# ՄՏԱԾԱԿԱՆ ՃԺԳ.

Արքայորդեան վրայ :

## ՄԱՍՆ Ա.

Մարդս արքայութեան համար ծնած է, իր վախճանին բազմանքը սրտին մէջը կը կրէ, կրնայ դանիկայ նուաստացընել բայց չիկրնար ջնջել սրբտէն : Բոլոր աշխրբիս աէր ըլլայ, գէս կը զգայ որ ինքը աւելի բանի մը համար եղած է. ինչ բանի սիրաը կըսոյցնէ, կիմանայ որ զինքը կը նուաստացընէ. իր հանգիստը չիգանար, ու խղճմտանքը զինքը կը խայթէ : Սուս երջանիկութեան մը ետևէ կըլլայ, անոր հասածին պէս՝ կիմանայ որ ան չէ եղեր իր երջանիկութիւնը. ուրիշ փորձեր ալ կընէ, անոնց ստուծիւնն ալ կիմանայ. վերջապէս բազմանքը կը մնայ բանի մը, որ երկրիս վրայ չի գտնուիր, երկինքն է՝ որուն համար ստեղծուած է. իր երջանիկութիւնը աստուած է՝ որ զինքը ըստեղծեր է : Աւստի արքայութիւն որ կըսենք՝ զաստուած ժառանգելն է. զաստուած ունենալը՝ աստուծոյ հետ միանալը՝ անանկ երջանիկութիւն մըն է, որ անկէց զրկուիլը դժոխք է. գատապարտելոյ յաւիտենական թշուառութիւնը՝ Աս-

տուծմէ զուրկ ըլլալնին է. իմանալով որ ինչ բան կորսընցուցին՝ յուսահատութենէ՝ չարաչար կը աննըւնին, որդ մըն է՝ որ կը կրծէ յաւիտեան իրենց սիրաը, կրակ մըն է՝ որ կէրէ յաւիտեան հողինին ալ՝ մարմիննին ալ : Զաստուած ժառանգողը՝ ուրիշ բանի մը չիբաղձար, ամեն բազմանքնէրը կը կշտանան զաստուած ժառանգելով, ու մէյով ժառանգելէն ետքը՝ ալ վախ չունի կորսընցընելու իր ժառանգութիւնը : Արքայութեան մէջ ոչ մահ կայ, ոչ հիւանդութիւն. ոչ կիբք կայ, և ոչ մեղք. հոն կեսնք միայն կայ ու առաքինութիւն. ամեն մարդ ուրիշ վայելածը՝ իրենը կը սեպէ, ինքը վայելելու պէս կուրախանայ : Հոն ոչ պա կայ և ոչ արամուծիւն, ոչ բազմանք և ոչ բանի մը սպասել, վասն զի մարգուս ամեն բազմանքը հոն լեցուած է, ամեն բան գտած է՝ զաստուած գտնալով :

Աս երջանիկութեան մէջ ան բերբաւոր արգարնէրը արդեօք ինչ կը մտածեն, իրենց ու իրարու վրայ նայելով : Քրիստոսի խօսքն է՝ Յայնժամ արգարէն ծագեացն իբրև զարեգակն յարայաութեան երկնից. ամեն մէկը մէյմէկ արեգական պէս պիտոր փայլին. ամենքը իրարու հետ սիրով կապուած. ամենքը երջանիկ, աչւընին Քրիստոսի վրայ պիտոր գարձընեն՝ ճաննալով որ ինքն է առաջը իրենց ստ ծայրագոյն երջանիկութիւնը : Սիրտերնին իր սիրովը կը վառուի, մտածելով մանաւանդ՝ որ Քրիստոս իրենց սա երջանիկութիւնը տալու համար, չէ թէ միայն հողինին յաւիտենական մահւընէ փրկեր է, այլ սա ամեն բարիքը ընելու համար՝ իր կեսնքը տուեր է. ու որպէս զի իր շնորքով ստացած երջանիկութիւնը ամենին աւելու որախօցընէ զիրենք, անանկ ըրեր է՝ որ իրենց արգիւնքն ալ իր արգեաննը հետ խառնուի, ու իրենց հաւատարմութեան հատուցումը ըլլայ ու-

նեցած երջանիութիւննին. ուղեր է որ իր չարչարանացը մասնակից ըլլան, որպէս զի իր փառացն ալ մասնակից ըլլալու արժանի ըլլան: Իրենց սիրոյն լուսմը ան պիտոր ըլլայ, որ Քրիստոս զերենք չորս զին առած՝ անոնց երջանիութիւնը իրեն փառք պիտոր սեպէ, իբրև անոնց գլուխը՝ զերենք իր աստուածութեանը մասնակից պիտոր ընէ, զերենք իր եղբարքը պիտոր սեպէ, իր ժառանգակիցները պիտոր ընէ, զերենք պիտոր միացընէ իր երկնաւոր Հօրը հետ՝ որդեգիր ընելով զերենք, անանկ որ՝ անկէ ետքը իրեն ու Աստուծոյ հետ մէկ ըլլան: Ա՛հ, աս ինչ բան պարտաւորած է մեզնի համար, ու մենք ինչ կը մտածենք. աս բաներու համար եղօղը՝ կրնայ՝ ուրիշ բանով մը երջանիկ ըլլալ. աս բաները գիտցօղ կրնայ աշխարհի բաներուն սիրօղ կըստընել, իրեն համար կրնայ գժուարութիւն մը արդէնք մը ըլլալ՝ որուն աստուծոյ շնորքօղ չիյաղթէ:

### ՄԱՍՆ Բ.

Հոն պիտոր տեսնէք սուրբ աստուածածինն ալ՝ որուն բարեխօսութեամբը փրկուէր ենք, որ մեզի բոլոր մեր կենացը մէջ մտցուածիւն ըրեր է. պիտոր տեսնանք զինքը մասնաւոր փառքի մէջ թագու հի հրեշտակաց և ամենայն սրբոց, փառքի մը մէջ՝ որ մեր երեակայութեան վեր է: Վասն զի թէ որ արդարները արեւդական պէս պիտոր փայլին, մենք արեւդակէն աւելի բան չենք կրնար երեակայել, բայց պիտոր տեսնանք հոն տեղը: Պիտոր տեսնանք մեր պաշտպան հրեշտակն ալ՝

որ բոլոր մեր կենացը մէջ զմեզ խնամեր է, փորձութեան ատեն խղճմասնէնիս շարժեր է, զգուշացուցեր է զմեզ. մեղքի մէջ ինկած ատեննիս՝ արամեր ու ջանացեր է նորէն զմեզ աստուծոյ մօտեցնելու. ու գարձի եկած ատեննիս՝ բոլոր երկինքին հրեշտակներուն հետ վրանիս ուրախացեր է. բարեգործութիւն ընելու զմեզ մշտ յորդորեր է, ու օգնական եղեր է մեր փրկութեանը: Ա՛հ, երբոր աչընիս անդին բանանք, ու տեսնալու որ ըլլանք աստուծոյ աս գերազանց արարածը՝ որ մեզնի պէս ողորմելին աս ամեն բաները ըրեր է, արգետք ինչ սեր պիտոր ունենանք իր վրան, ինչպէս պիտոր ուրախանանք յաւիտեան իր հետը ըլլալնուս համար:

### ՄԱՍՆ Գ.

Հոն պիտոր տեսնէք ամեն սուրբերն ալ իրարմէ փառաւոր՝ ինչպէս Պօղոս առաքեալը կըսէ այլաբանելով. Ասպր քան դասպր աստուէ է քառօք: Մահապետները Ազամէն սիսեալ, մարդարէները, առաքեալները, մարտիրոսները, ու Քրիստոսն անմահ գառին անմիջապէս ետէն գնացօղ հուսանքը, ու ամեն սուրբերը՝ որոնց վարքը կարգալով կը զարմանայինք վրանին, ու բարեխօս կը բռնէինք զերենք, տեսնէք պիտոր հոն: Պիտոր տեսնէք նաև մեր ծնօղքը, պապերնիս, աղբականներնիս ու սիրելի բարեկամներնիս, որոնք մեզնի հետ երկրիս վրայ պանդխտեր՝ ու նեղութիւն քաշելով յաղթեր են աշխարհիս. իրենց հետ պի-

տոր յիշենք անցուցած վտանգնիս, ու յաւիտեան պիտար ուրախանանք՝ մէյմըն ալ իրարմէ մահուամբ չիբաժնուէնուս համար:

Ասկէց եւել բան մը չենք կրնար երեւակայել արքայութեան վրայ. կը հաւատանք միայն՝ որ աս ամեն երեւակայած բաներնիս արքայութեան քովը ստուեր մըն են, վտան զի իրօք ինչ ըլլալը խելքէ մտքէ վեր բան է. Պէր ասին ոչ եպէս, և ունին ոչ լռաստ, և ՚ի սիրոյ մարդոյ ոչ անկատ, զոր պարբաստեաց ասպարոսք «իբեւեաց իւրոյ»:

Ս. Ղ. Օ Թ. Գ

Յիսուս փրկիչ իմ, շնորհակալ եմ որ ինձի համար ասանկ բան ստորատուեր ես. ներէ ինձի որ ասանկ երջանկութիւնը՝ սնտախ բաներու հետ փոխել ուզէր եմ, զքեզ կորսընցընելը աչքս աւեր եմ՝ կիկքերս դո՛հ ընե՛լու համար: Ենորք սուր ինձի՛ որ ասկէ ետքը արքայութիւնը միայն մասնւմ, արքայութիւնը միայն ինզրեմ, ինչպէս որ սորկեցուցիր, ու արքայութեան համար միայն ապրիմ, արքայութեան համար ամեն նեղութիւն յանձն աւնում. վտան զի կը հաւատամ, Պէ ոչ էն արժանի պըլարանդ ծանանախի հանդերձեւց փառացի՝ որ յայտնեւց էն ՚ի մեզ: Աթէ քու չարչարանօք ու մահուամբ չիբանայիր մեզի արքայութեան գուռը, ո՞վ կրնար յուսալ հոն մանեւու. Աթ որ երկնաւոր շօրմէգ չիկնդրէիր. Հայր, զբո եպոստոն ինչ՝ կաթմ, զի ուր էնն իդեմ՝ և նոպա իրէն ընդ իս, ո՞վ կըրնար արժանի ըլլալ այնպիսի փառաց: Աթ Առ զուր որ քու աղօթքդ ստորաց հանեմ, սուր որ

տանեմ արքայութեան մէջ քու փառքդ, ինչպէս որ յերկնաւոր շօրմէգ ինզրեցիր. Պէ պեսանիդէն զխառան, զբո եպոստոն ինչ:

Արքայ երկնաւոր, սուր ինձ զարքայութիւն քո՝ զոր խոտացար սիրելեաց քոց, և զօրացս զիրա իմ ասել զմեզս և սիրել զքեզ միայն, և աւնել զկամս քո, և ողորմեա քո արարածոցս, և ինձ բազմամեղնս:

# ՄՏԱԾԱԿԱՆ ՃԺԵ.

Առանց Գրիստոսի արքայաշրիան կրրայ  
ըրրար:

## ՄԱՍՆ Ա.

Մարդու սիրաը երանութեան կը բաղձայ, ու երանութիւն կը փնտռէ. չին փիլիսոփաները աշխրբիս վրայ կը փնտռէին աս երանութիւնը, անոր համար չեգտան. ամաք ալ մարդու սիրաը այնչափ նուսասացուցին՝ որ ուսել խմել ու մարմնաւոր հաճոյքը մարդու սիրաը յագեցընելու բաւական սեպեցին, ու մարդս երջանիկ ընելու տեղը՝ աւելի լծուսացուցին: Թէ որ մէջերնին եղան ալ որ ճանցցան աշխրբիս անցաւորութիւնը, ու խնացան որ պէտք է ուրիշ մը ըլլայ մարդու երանութիւնը, անոր ճամբան ու մանաւրու գուռը չիճանցցան: Քրիստոս է միայն անոր ճամբան ու գուռը, անով միայն կը հասնինք արքայութեան. հաւատքն է զմեզ հոն տանողը, ու Քրիստոս է որ մեզն ճամբարիս հաւատքը կը սորվեցընէ: Բոլոր չին ու նոր կտակարանը Քրիս-

տոսի համար է, անոր կը խրկէ զմեզ. ով որ ուրիշ ճամբայ ուղեց ցուցընել մարդկանց, մտորցուց զանոնք: Քրիստոս է ճամբան ու գուռը՝ որոնք որ հանկէց կը մանան, անոնք միայն կիմանան՝ որ շատակ ճամբուն մէջն են, անոնք են որ իրենց հուզեար կերակուրը՝ իրենց հոգւոյն ճարակը կը գանեն. Ընդ իս էլէն ու մարմնից, կեցոյն. մոցն և էլոյն, և ճարակ գոցն: Ամանկ դաշտերու մէջն կը տանի զմեզ, որ ուր որ գտնանք՝ ճարակ կը գանենք. Ելոյն և մոցն, և ճարակ գոցն: Քրիստոս գեւ աշխարք չեկամ՝ չին օրէնքին արդարնետուն ալ ինքն էր փրկութեան ճամբան. առանց իրեն գալըստեանը հաւատալու՝ մէկը չէր փրկուեր, մէկը իր հոգւոյն ճարակը չէր գաներ: Իրեն հաւատացողն են ին՝ որ աշխրբիս նեղութեանց ու վշտաց մէջ ալ իրենց միխթարանքը կը գանենին, գիտնալով որ շատակ ճամբուն մէջն են, ու յուսալով ետքը ետքը արքայութեան հասնելու: Գաւիթ մարդարէն որ Քրիստոսի հաւատալն ի գաս՝ իր ջարջարանքներն ու յարութիւնն ալ մարդարէալու, Քրիստոսի աշխրբիս վրայ անարգութիւն ու երկինքը փառաւորութիւն ալ նախադասաց, ան ճամբուն մէջ իր գասած հանգիստը կը ստորագրէ. Գանի որ Քրիստոս իմ հովիւս է, կըսէ, ինձի բան մը չիպակսիր. կանանչ արօտի մը մէջ ինքը ինձի կառաջնորդէ, ու ջուրի քով՝ հանգիստ տեղանոնք զիս կարածէ. Տէր հովիւսդն ըլիս, և ինչ բն ու պակասեցի. ի վայրի դաւաւրող անոր Բնակչոյց ըլիս, և առ ջուրս հանգստեան սնոյց ըլիս:

ՄԱՍՆ Բ.

Քրիստոսի մեզի տուած հոգեւոր կերակուրը ճշմարտութիւն է. մեր հոգին սուտ վարդապետութիւններէն սնունդ չառնէր, չին փիլիսոփաներուն հեռակողները ասոր փորձը ապին. անոնք ալ որ կը հեռակին հերետիկոսութեաներուն՝ որ Քրիստոսի ճշմարտ վարդապետութեան հետ իւրենց ստութիւնները խառնեցին, անոնք ալ ասոր փորձը կառնեն: Քրիստոսի վարդապետութիւնն է միայն մեզի սնունդ տուողը. ան է միայն՝ որուն ճշմարտութիւնը յայտնի կը տեսնուի, որուն մէջ մարդս իր ամեն կարօտութեանը գեղձ իր ամեն մխիթարութիւնը կը գտնէ, որով իր սրտին ամեն բաղձանքը կը յուսայ որ մը ունենալ: Աշխարհը, մարմինն ու ստամոյս կուզեն բաժնիէլ զմեզ՝ ի Քրիստոսէ, չեն ուզեր որ աս ճամբէն երթանք՝ աս գանձն մանենք՝ որպէս զի ճարակ չիգտնենք, որպէս զի հոգինիս կորսնցնենք: Արդոցեն մեզի աս դուռը, զմեզ կը խաբեն՝ իբր թէ անկէջ մը աշտոններուն ճամբան գժուարին ըլլայ ու անմխիթար. անոր համար Քրիստոս անոնց ըսածին դէմ մեզի ճշմարիտը կրտէ. Ես եմ գոռոն, ընդ իս ելի ոք մասնիցէ՝ կեցցէ. ելցէ և մտցէ, և ճարակ գտցէ:

ՄԱՍՆ Գ.

Քրիստոսի հեռակողին բան մը չեպահիր՝ Տէր հոյակապէս զիս, և ինչ ինչ ու պահաւորի: Ամեն բանէն առաջ՝ միտքը կը լուսաւորուի. փիլիսոփաներուն վարդապետութիւնը՝ թէ զիրենք և թէ իրենց հե-

տևողները աւելի մութի մէջ ձգեց, տարակոյտներ հանեցին՝ որ իրենք ալ չեկրցան լուծանել. լուծանելու համար ըսածնին ծուռ ըլլալը՝ անկէջ ալ յայտնի է, որ մէկուն ըսածը մէկալին ըսածին ներհակն է: Քրիստոսի վարդապետութիւնն է միայն՝ որ ամեն տարակոյս կը լուծանէ, ամեն բանի լոյս կուտայ. անոր համար ըսաւ. Ես եմ լոյս աշխարհի: Փիլիսոփաները չեկրցան մարդուս այսչափ ակարբութեանն ու խեղճութեանը պատճառը գտնալ: Քրիստոս չէ թէ միայն իմացուց մեզի բուն պատճառը, այլ նաև անոր գեղն ալ մեզի սորվեցուց: Ինքն է մեր ակարբութիւնը ջորացնողը՝ որ մեզքի մէջ չեյնանք, ինքն է իշխանէս ետքն ալ՝ զմեզ ոտը հանողը: Ո՞ր փիլիսոփան, ո՞ր օրէնագիրը, մարդիկ երջանկացնելու համար՝ Քրիստոսի քաջած չարչարաններուն մէկ պղտի մասը քաշէր է. Քրիստոս զմեզ փրկելու համար՝ կեանքն ալ տուաւ, մեզի համար մեռաւ ալ խաչին վրայ: Աս ալ հերիք չեսեպեց, իր վերքերուն սպիւք փառաւորեալ մարմնոյն վրայ պահեց՝ որ իր երկնաւոր Հօրը ցուցնէ միշտ, ու մեզի համար բարեխօսէ, որպէս զի Հայրն երկնաւոր յիշելով իր միածնին մեզի համար քաջածները՝ ողորմի մեզի: Ուրեմն ո՞վ առանց Քրիստոսի կրնայ հասնիլ արքայութեան, ո՞վ կրնայ արքայութեան ճամբան գտնալ առանց աս գանձն մանելու. ո՞ր անխեղք ասանկ առաջնորդը կը թողու, ու ուրիշ ետևէն կերթայ:

Ա. Դ. Օ Թ. Բ

Յիսուս փրկիչ իմ, մի թողուր որ աս անխեղքութեանէն զատ՝ ասանկ ակերտախտութիւն ալ ընեմ, ու քեզի պէս բարերար առաջնորդէն հե-

ունամ: Տար զես քու ոչնարնէրուգ արօտը, ուր  
 հոգիս իր ամեն հարկաւոր ճարակը կը գանոյ. զեր  
 զես արքայու թիւն երթաւ, ու ճամբան՝ որ դուն ես.  
 որչափ որ նեղ ըլլայ ան ճամբան, որչափ ալ զը-  
 ժուարին ըլլայ, քու շնորքդ կը լայնցնէ ու կը  
 զիւրնցնէ. ուրիշ ճամբայ երթալ չեմ ուզեր:

Ճանապարհ և ճամբաու թիւն և կեանք՝ Քրիս-  
 տոս, առաջնորդեա հոգւոց մերոց յերկրէ ելա-  
 նել յերկինս: Կուռն կենաց մալց Յիսուս, մոյժ  
 և զմեզ առ Հայր քո և Հոգի՝ երգել միշտ զիսառս:

## ՄՏԱԾԱԿԱՆ ՃԺԶ.

Առանց Գրիստոսի շնորհացը արդիւնաւոր լաւ  
 մը չենք չենք կրնար:

## ՄԱՍՆ Ա.

Քրիստոս. աէրն մեր ետքի ընթրեաց ատենը  
 շատ խորունկ բաներ յայանեց առաքեալներուն.  
 ասոնցմէ մէկն էր ան խօսքն ալ որ ըսաւ. Աստուծոյ  
 իմ ու ինչ իւրէն առնել: Աս խօսքս առաքեալները ան  
 ատենը չիմացան. բայց Հոգին սուրբ ընդունելէն  
 ետքը՝ չէ թէ միայն հասկըցան, այլ նաև անանկ  
 պարզ բացատրեցին մեզն՝ որ չիմայ մենք յայանի  
 դիտենք, որ առանց Քրիստոսի բարեգործութիւն  
 մը չենք կրնար ընել, ըրածնիս ալ բան մը չաժեր  
 աստուծոյ առջին, թէ որ Քրիստոսի արդեանցը  
 չեա չիմանան: Առաքեալները որչափ ալ չէին  
 կրնար ան ատենը աղէկ մը հասկընալ Քրիստոսի  
 ըսածները, բայց Քրիստոս իր խօսքը զիւրիմաց  
 ընելու համար՝ որթին օրինակը բերաւ. Ես էմ  
 որին ճշմարիտ. ես էմ որն և որոս ուս: Ի՞նչ սքանչելի  
 օրինակ. Քրիստոս միայն կրնար մտածել ասանկ  
 ազւոր օրինակ մը: Արթին ուռերը խաղող չեն  
 կրնար տալ՝ թէ որ սրթը իրենց չիւթ չիտայ.



խաղաղը որթին առած հիւժերէն կը գոյանայ, բայց ուռերուն պտուղը կը սեպուի. ասանկ ալ մեր բարեգործութիւնները Քրիստոսի արգիւնքովը մեզի առած շնորքէն առաջ կուգան, առանց անոր չենք կրնար բարեգործութիւն մը ընել. բայց ըրած բարեգործութիւննիս մերը կը սեպուի: Ա՛հ, թէ որ աս բանն ազէկ մտածելու ըլլայինք, ինչպէս կը խնար չէինք, ինչպէս կը ճանչնայինք որ ամեն ըրած բարեգործութիւննիս արդիւնքէն է: Կարէ ուր որթին, պտուղ չիկրնար առ ինքիրեն, վասն զի հիւժ չընդունիր որթին, ասանկ ալ մենք թէ որ Քրիստոսի հետ միացած չըլլանք, չենք կրնար բարեք մը ընել. Որպէս ուր որ կարէ պարու բերել յանձնէ՛ եթէ ու իջէ հասարակել որբն, նոյնպէս և դուք՝ եթէ ու յիս հասարակել իջէ:

### ՄԱՍՆ Բ.

Անոր համար է որ ետքը կըսէ Քրիստոս՝ Կաշէ՛ք յիս, և էս՝ ի յեղ: Այս ինքն՝ ամենքս ալ սուրբ մկրտութեամբ կը միանանք Քրիստոսի հետ, շըլլ մտրեալ որթոյն ուռերը կըլլանք. բայց սերն է որ զմեզ իրեն հետ հաստատուն կը պահէ, անով մենք իրենը կըլլանք, ինքն ալ մերը. Որ էս ի սերն՝ բնական է յասարած, և ասարած՝ ի նմա բնակէ: Ու իրեն հետ հաստատուն մնալով, կընդունինք իրան ջնորք՝ ամեն ըրածնիս արդիւնաւոր ըլլալու, ինչպէս ուր որթին հետ հաստատուն կենալով՝ կընդունի անկէ պտղաբեր հիւժը: Ուստի նորէն յայանագոյն կերպով կը բացատրէ Քրիստոս ըսելով. Ով որ ինծի հետ հաստատուն է, ու էս ալ իրեն հետ, անիկայ շատ պտուղ կուտայ. Որ հասարակել է յիս, և էս ի նա, նա բերէ պարու յոյժ: Ի՛նչ

գութ, ի՛նչ բարութիւն. ինքն է պտղաբեր հիւժը սուտը, առանց անոր չենք կրնար պտղաբերել, այսու ամենայնիւ կըսէ՝ Մա բերէ պարու յոյժ: Իրմէն չեբաժնուելին հերթը կը սեպէ՛ առած պըտուղնիս մերը ըլլալու. իր առած պտուղը մերը կը սեպէ. ինքն է պտղաբերը սուտը, ու անանկ կը սեպէ՛ իրեն թէ մենք ինքիրեննուս տայինք պտուղ. Մա բերէ պարու յոյժ: Ուրեմն մեզաւորն որ չիսիրեր զՔրիստոս, ու իր մեղքը կարուած է ի Քրիստոսէ, չիկրնար պտղաբերել, չիկրնար արդիւնաւոր գործք մը ընել. քանի որ իր մեղքը մէջն է, ամեն ըրածը պարտաւ կերթայ, արդիւնք մը չիկրնար վաստակիլ: Ալ իրեն համար ուրիշ ճար չիկայ, բայց արթմել ու ջանալ որ նորէն միանայ Քրիստոսի հետ, զլըջայ՝ խոստովանի՛ ապաշխարէ, սրպէս զի նորէն Քրիստոսի շնորհացը արժանի ըլլայ:

### ՄԱՍՆ Գ.

Մտածէ, ով հաւատացեալ հոգի, որ Քրիստոսի աս խօսքը՝ Մա բերէ պարու յոյժ, ինչ մեծ բան կը նշանակէ: Վասն զի հոգի մը՝ որ Քրիստոսի հետ միացեալ է, ու ինքը զինքը չէ կարած՝ չէ բաժնուած ի Քրիստոսէ, շարունակ պտուղ կը բերէ, իր ամեն գործքը պտուղ է, վասն զի ամեն բան Քրիստոսի շնորքն գորութեամբը կընէ: Չէ թէ միայն իր հոգեւոր գործքերը անով արդիւնաւոր կըլլան, այլ և իր անասրէր ու բնական գործքերը, ինչուան ուտելը՝ խմելը՝ քալելը՝ զբօսնելը՝ խօսելը, ինչուան քնանալն ալ կըլլայ արդիւնաւոր. անոր համար Պօղոս առաքելայը կըսէ. Զանկայն զոր և աստիճէք բանիս և արդեամբք, զամենայն

յանուն փեառն Յիսուսի արասջիք: Վերջն ալ կաւել-  
ցնէ. Գահարդդ էինիջիք Վիսրոս-ծոյ և Ղէջէ նոյն-  
այսինքն շնորհակալ ըլլանք աստուծոյ՝ որ մեզի  
ասանկ աղբիւր մը բացէր է՝ արգիւնք վաստըկե-  
լու, վասն զի քանի որ կապրիւնք ու Քրիստոսի  
հետ կազմ ենք՝ իր անսպառելի արգիւնքը մեզի  
կը հարկողէ անդագար, ու կուզէ որ իրմով ասա-  
ցած արգիւնքնիս՝ մերը սեպուի, անոնց դովու-  
թիւնը մերը ըլլայ, անոնց հասուցումը մենք ըն-  
դունինք, շունչ մը ասնելնիս ալ պարտալը չեր-  
թայ: Աս ի՛նչ խելքէ մտքէ վեր բարիք է, աս ի՛նչ  
մեծ հետեանք է Քրիստոսի հետ մէկ ըլլալնուս,  
զինքը սիրելնուս, իրմէն չեբաժնուելնուս. աս ա-  
մեն արգիւնքը վաստըկելու համար հերիք կըլլայ՝  
իրմէ չեբաժնուելնիս, աստուած Քրիստոսի ար-  
գիւնքը մերը կը սեպէ իրմէ չեբաժնուելնուս հա-  
մար. մեզք չիգործելնիս բաւական կըլլայ մեզի  
աս վաստակը ընել տարու: Քրիստոսի շնորքը աղ-  
բիւրի մը սէս մեզի կը վազէ շարունակ, հերիք  
կըլլայ որ մենք ճամբան չիզոցենք. աս է իմաստը  
այն բարեգուժ ու սրտաշարժ խօսքին. Որ հաս-  
տատու է յիս, նա բէրէ պիտու յոյժ:

Ա. Գ. Օ Թ. Բ

Յիսուս փրկիչ իմ, մի թողուր որ քեզմէ բաժ-  
նուիմ: նոյն խն բաժնուելիս, սոսկալի սպերախ-  
առութենէ ՚ի զատ, նաև թշուառութիւն մեծ կըլ-  
լայ ինձի. որթէն կարուած ուս մը կըլլամ, ար-  
ժանապէս կրակը ձգելու արժանի. ինչպէս որ  
աստուածային բերնովդ ըսիր. Եթէ ոչ ոչ է հասար-  
փեալ յիս, էլ նա արքայս իբրև պառն և յամաբէցաւ, և  
ժողովէն պէս և ՚ի հոս արխանն, և այրի: Տպաւորէ

սրտիս մէջ աս խօսքդ, որ չուղեկովդ զմեզ դատա-  
պարտել՝ առաջուց առջնիս կը դնես դժոխք եր-  
թալու վտանգները, ու արբայութիւնը վաստը-  
կելու ճամբան: Գուն ես անիկայ մեզի վաստըկցը-  
նօղը, դուն ես մեր հոն համեկու ճամբան:

Ճանապարհ բարի Քրիստոս և ճամբառութիւն,  
առաջնորդ հոգուց մերոց յերկրէ ՚ի յերկինս.  
Դուն կենաց մտից Յիսուս՝ աստուած ճամբարիս,  
մոյծ և զմեզ աս Հայրդ քս Հոգւովդ սրբով:

# ՄՏԱ.ԾԱ.ԿԱՆ ՃԺԻ.

Մարդուս ոչընչութեանը վրայ :

## ՄԱՍՆ Ա.

Մտածէ որ ասիկէ հարիւր տարի առաջ ի՞նչ էիր. աշխօղբիս վրայ առուստերներ կը լայնին, սպառեալներ, շինուածքներ, արեւ կէլէր կը մշտնէր, երկիրս իր բերքերը կը բերէր, ամեն բան առանց քեզի կը լար: Դուն ոչ հոգի ունէիր, ոչ ալ մարմին, ոչ զգացողութիւն, և ոչ կարողութիւն, և ոչ արդիւնք մը աշխարհ գալու: Մըջիւն մը քեզմէ աղէկ էր, աւաղի հաս մը քեզմէ լաւ. վասն զի անոնք կային, դուն չիկայիր: Ուրեմն հիւմախուսան ըլլալդ ալ, ինչ որ ունիս ալ, քեզմէ չէ, այլ բոլորն ալ ձրի ընդունէր ես Ստուածմէ. դուն չէ թէ միայն նոյն առջի ոչինչն էս, այլ թէ որ Ստուած ամեն վայրկեան զքեզ պահէրու որ ջըլլայ, դարձեալ ոչ ինչ կը լարս: Ուրեմն ի՞նչպէս կրնաս հպարտանալ, երբոր չէ թէ միայն ունեցածդ քուկդ չէ, այլ և ոչ կրնաս ունեցածդ պահել: Ստուած է որ զքեզ ալ, ունեցածդ ալ կը պահէ: Որ երէ գամենայն բանիս պարտեան իւրայ:

Արձանագործը արձան մը շինէլէն ետքը, առանց իրեն ալ՝ արձանը կը մնայ, իր շինողին կարօտ չէ. բայց մէնք այրելու համար ալ Ստուածոյ կարօտ ենք. անանկ որ՝ մէնք Ստուածմէ շատ աւելի կ'սխալու՞ ունինք, բան թէ լոյսը արեւէն: Սիկէց կրմացուի մեղքին ինչ գէշ բան ըլլալը. վասն զի չէ թէ միայն մեծ սպերտախառութիւն է մարդուս իր սակեղծողին գէժ ընելը, այլ և անարգել զանիկայ, որուն ամեն վայրկեան կարօտ է:

## ՄԱՍՆ Բ.

Մտածէ որ մարդուս բնական կեանքն ալ՝ ունեցածն ալ, առանց Ստուածոյ շնորհացը, անանկ պզտի բան է իր աւջին՝ որ անասուններուն ալ սուեր է անիկայ, ու ստանաններէն ալ էս չէ առած տուածը: Ուրեմն թէ որ Ստուած զմեզ սակեղծելէն ետքը՝ իր շնորհն ալ տուած չըլլար, հանդերձ մեր ըլլալովը ու ունեցածովը՝ դարձեալ ոչ ինչ կը մնայինք. ու արդիւնք մըն ալ չունէինք որ Ստուած աս մեծ շնորհքը մեզի ընէր, որով իր բնութեանը հաղորդ կը լարնք. ու մէկ պզտի աստիճան մը աս՝ շնորհքիս՝ հազար աշխարհներէ դերազանց է: Սիկէց կրնանք իմանալ՝ առանց աս շնորհքին ինչ ըլլալինս:

Աս ալ մեծ մտածելու բան է որ՝ աս շնորհքը ունեւայնէս ետքը, չէնք ալ կրնար պահել ինքրեկնուս՝ առանց ստուածոյ օգնականութեանը, ու կորսնցընէլէն ետքն ալ՝ չէնք կրնար նորէն ստանալ, արժանի ալ չենք նորէն ստանալու, առանց Ստուածոյ օգնականութեանը, առանց Վրիս.

աստի արդեանցը: Ասիկեց 'ի զոս' նոյն իսկ ունեցած շնորհքովն իս չենք կրնար բարի գործք մը ընել՝ առանց ներգործական շնորհաց, ինչպէս կըսէ Քրիստոս. Առանց ի՞մ ու ինչ կարէիք առնել: Ինչպէս աչքը՝ որչափ ալ առողջ ըլլայ, առանց լոյսի բան մը չիկրնար տեսնել, ասանկ մենք առանց Աստուծոյ ամեն անգամ նորէն օգնելուն, բարի գործք մը չենք կրնար ընել: Մեր ունեցած շնորհքովը կաթմբիկեր աղու մը կը նմանինք, որ թէ և կեանք ունի, բայց բան մը չիկրնար ընել ինքիտէն, և ոչ ոտքի վրայ կենալ առանց բանելու, և ոչ ուտել առանց բերանը գնելու: Ասանկ ենք մենք ալ. ուրեմն խոնարհինք, ու խնդրենք Աստուծոյ՝ որ իր օգնականութիւնը չիպահարկ վրաներնէս:

ՄԱՅՆ Ք.

Աւելի խոնարհելու համար՝ մասձենք մեր մշտքին տկարութիւնը, ու կամբերնուս ապականութիւնը: Թողունք բնական ճշմարտութիւնները, որոնցմէ խիստ քիչը կը ճանչնանք, ու ան ալ մտած կերպով. իսկ գերբնական ճշմարտութիւնները տեսնելու համար բողբոլովն կոյր ենք: Ամենէն մեծ կուրուցութիւնն ինչ կոյր ենք՝ աստուծոյ արարածները իրմէ վեր կը գնենք, ու զանոնք իրմէ աւելի կը սիրենք. անցաւ որ բաները՝ յաւիտենական բաներէն վեր կը գնենք, ու անկարգ կերպով զանոնք վայելելու համար՝ յաւիտենականը կը կորսնցնենք:

Մտքի տկարութեան հետ՝ որն որ սկզբնական մեղաց պատուին է, նոյն մեղքին մէկ ուրիշ պատուին

ալ է կամբերնուս ապականութիւնը: Ասիկեց է մեր հանամարտութիւնը առ չարը՝ որն որ կը զգանք սրտերնուս մէջ, այն յարուսմը՝ որ սննինք մարմնական հաճոյնց ու կիրքերու, սոյնինքն բարկութեան, ագահութեան, ծուլութեան, մէկ խոսքով՝ ամեն մուլութիւններու: Ծանր քար մը վերէն կախուած՝ կուզէ միշտ վար իջնալ, թէ որ իրեն մնալու ըլլայ. ասանկ ալ մեր բնութիւնը մուլութիւններու մէջ կ'իջնայ, թէ որ աստուծոյ շնորհք չեքանէ զինքը: Աստուծու վերքերով սուրբ աւետարանին պատմած վերաւորին զարձեր ենք, որ աւազակներէն զարնուած՝ ճամբուն մէջ ինկած, ուղորմածի մը օգնութեան կարօտ էր: Աս վիճակին մէջն ենք, ու թէ որ Քրիստոս աւեր մեր՝ այն բարերար ասամարայիին պէս մեզի օգնելու որ չըլլայ, հոգինիս արքայութեան ճամբուն մէջ մնացած՝ կը մեանի: Աս ասանկ ըլլալով, բողբոլովն մեր կողմանէ յուսահատելու տեղը՝ ինչպէս կըրնանք հպարտանալ, ու մեր վրայ վստահել:

Ա. Գ. Օ Թ. Գ

Ա՛լ ողորմած սուրբ Հոգի, ասանկ ողորմելի ըլլալով՝ քեզի կը դիմեմ. ինչպէս որ մկրտութեան սուրբ աւազանին մէջ՝ զիս սկզբնական մեղքէն մաքրեցիր, ասանկ ալ ան մեղքէն մնացած մաքիս կուրութեանէն՝ ու սրտիս ապականութեանէն ազատեց զիս: Գիտեմ որ արժանի չեմ քու ողորմութեանդ, վասն զի քու առած շնորհքդ պահելու տեղը՝ ներգործական մեղքերովս աւելցուցի վրայ. քիս տկարութիւնն ալ, սրտիս ապականութեանն ալ. բայց քու ողորմութիւնդ անչափ ըլլալով, ներք ինձի, ու նորէն միաքս լուսաւորէ, ու սիրտս

մաքրէ. Սէրդ սուրբ հասարակէս յիս Աստուած. Լայն  
սուրբ քէր ասաց իմոց, զի թէ երբէս ննջեցից ՚ի ճահ:

Հոգի աստուածոյ՝ աստուած ճշմարիտ, որ իջեր  
՚ի Յորդանան և ՚ի վերնատունն, և ընտաւորեցեր  
զիս մկրտութեամբ սուրբ աւազանին, մեզոյ յեր-  
կինս և աւաջն քո, մաքրեա զիս վերստին աս-  
տուածային հրով քով՝ որպէս հրեղէն լեզուօք  
զառաքեալսն, և ողորմեա ինձ բազմամեղին:

## ՄՏՍԱԾՍԿԱՆ ՃԺՐ.

Ներգործական մեղաց վրայ:

## ՄԱՍՆ Ա.

Մերգործական մեղքը զմեզ ոչնչէն ալ գէշ  
կընէ. Քրիստոսի աւանան մերոյ խօսքն է. Լաւ էր,  
Բէ լէր իսկ ճնեալ ճարգն այն: Այնչափ դարչելի է մե-  
ղաւոր մը աստուածոյ աչքին առջևը, որչափ դար-  
չելի է մեղքը՝ որն որ Աստուածէ աւելի կը սիրէ  
մեղաւորը: Ասանկ ամօթալի բան է՝ մեկ ծանր  
մեղք մը միայն ընելը, որ ընօղը չիպիտօք կարե-  
նար մէյմըն ալ աչքը վեր վերցընել, երկինք նայել.  
Չե՛մ արժանի հայել և պետանել զբարձրութիւնս երկնց  
ըսաւ Մանասէ իր մեղացը համար: Իրաւ է որ  
աստուածոյ շնորհօլը ու ողորմութեամբը, ու Քրիս-  
տոսի արգիւնքօլը, մարգտ արժանի կըլայ զըջա-  
լու, ու նորէն աստուածոյ սիրելի ըլլալու. բայց իր  
կողմանէ միշտ նոյն մեղաւորն է, միշտ պէտք է  
յիշէ որ իր տէրը մասնեց, իր ստեղծօղին թշնամի  
եղաւ: Թէ որ զըջալէն ու թողութիւն առնելէն  
ետքն ալ՝ ասանկ ամօթալի է մահացու մեղքը,  
հապա որչափ աւելի պէտք է ամաչէ՝ ով որ մա-  
հուչափ մեղքի մէջ է:

Թէ որ աստուծոյ շնորհքովը չէս աս վիճակին մէջ, ու չէս ալ եղած, ներքեւ մեղքերդ ալ չերեք էն ամբողջընէլու զքեզ: Աստուած իր ամբուս ողորմուածութեամբը ներքեւ մեղքի համար զմեզ չիգտաւ. պարտեր. բայց ինչ ամաչեւու բան է՝ որ աստուած սոբրմած ըլլալուն համար՝ զմեզ աւելի սիրելուն համար՝ զինքը աւելի վշտացնենք. ա նանկ որ՝ եթէ այսչափ գթած ու ողորմած չըլլար, ու ներքեւ մեղքերու համար ալ զմեզ զբժոխք իրկելու ըլլար, աւելի զգուշանայինք պիտոր զինքը վշտացնելէն. ըսել է որ՝ աստուած զմեզ աւելի սիրելուն համար, մենք զինքը աւելի կը վշտացնենք. ասկեղ աւելի ամաչելու բան կրնայ ըլլալ: Ամաչենք ու խոնար չինք մեր ապե. րախտութեանը վրայ:

ՄԱՍՆ Բ.

Մտածէ յանցաւոր մը՝ որ մահուան դատապարտուած ըլլայ, ինչ ամօթ կը քաշէ մարդկանց առջին, թէ և կրնայ կերպով մը իր յանցանքը պղտիկցնել, անանկ ծանր պատժոյ արժանի ըլլալը տարախուսել ընել: Ուրեմն ինչպէս պէտք է ամաչենք աստուծոյ ու հրեշտակաց ու արքայութեան սուրբերուն առջին, զժոխքի արժանի եղած ըլլալուս, անանկ յանցանքի համար՝ որն որ տարախուսի անա չիկրնար իյալ, ողորմած ու անխաղ գատաւորի վճիռ է: Աստուծոյ արդար ասենին առջեւ պատժոյ արժանի եղեր ենք, կախազանին աստիճաններուն վրայ էլէր ենք, ու աստուծոյ ողորմութեամբը միայն սզգատեր ենք կախազանէն, ուր որ մեզմէ քեզ յանցաւորները պատժուեր են. Արէ ու քետուս Եփ.

նեաւ էր ինչ, քոբր մ ևս՝ և բնակեալ էր անյն ի՛նչ Ժողոս: Այսու ամենայնիւ պզտի անարգանք մը կրելու որ ըլլանք, ինչու զժարնիս կուգայ, ինչնու չենք մտածեր՝ որ զժոխքին պատժոյը արժանի եղած ենք. ուրեմն Յոբ նաշապետին պէս խոնար չինք ու ըսենք. Ճմարգապէս յանցեայ, և որպէս որ ժանին էի՝ ու ընկաւայ:

ՄԱՍՆ Գ.

Թէ որ զըջացեր, ու զժոխք երթալէն խաղտեր ալ ենք, միշտ պիտոր վախնանք՝ նորէն զժոխքի արժանի ըլլալէն: Աս միայն մտածելը՝ ամեն ու նայնասիրութիւն՝ ամեն հպարտութիւն սրտեր նկս գուրս կընէ: Յուգա առաքեալ մըն էր, աստանաներուն կը հրամմէր, հրաշքներ կընէր. բայց ետքը յուսահատութենէն ինքը զինքը կախեց, ու յաւիտեան աստանաներուն օտից աակը իյնալու արժանի եղաւ. իսկ աւաղակը՝ որ զժոխք արժանի էր, մեռնելու ատենը արքայութեան արժանի եղաւ: Ուրեմն ինչպէս մենք զմեզ ուրիշէն վեր կրնանք սեպել, սրչափ ալ գեշ մարդ ըլլայ. վաղը անիկայ արքայութեան արժանի կրնայ ըլլալ, իսկ մենք զժոխքի: Աս անասուցութեան մէջ, ինչպէս կրնանք հպարտանալ. թէ որ մեղքի մէջ եղած ատենդ՝ մեռած ըլլայիր, ինչպէս պիտոր քու հպարտութիւնդ անիմ էիր, ու սուրբ գրքին ստորագրած մեղաւորներուն պէս պիտի ըսէիր լալով. Չի՛նչ ևս էլ և ևս ևս ևս ևս ևս: Փարիսեցին ինքը զինքը մարտաւորէն վեր գնելուն համար, աստուած զինքը խոնար հեցուց. իսկ մաքսաւորը իր խոնար հութեան համար՝ արժանի եղաւ արգարանալու:


Ա. Ղ. Օ Թ. Բ

Յիտուս փրկիչ իմ, շատ պարտական եմ որ խոնարհուեմ թեան ինչ մեծ ու հարկաւոր առաքինութեան ըլլալը մեզի սորվեցուցիր, չէ թէ խօսքով միայն, այլ և գործքով: Բնց իմ միտքս, որ աղէկ հասկընամ տուած դասդ, զօրութիւն ալ տուր իննձի, որ աւած դասս ՚ի գործ գնեմ: Ծանօնամ ինչ ըլլալը, ու մէյմըն ալ հպարտութեան անզիք չեամ, որպէս զի ողորմութեանդ արժանի ըլլամ, ու փրկութեան հասնիմ: Տէս լխանարհուելիս ի՞մ, և շրիէս ղիս:

Որ գերագոյն վառօք բարձրացուցեր զմանկունս եկեղեցւոյ քո, Քրիստոս, խոնարհութեան քո ճանապարհաւ, առաջնորդելով ՚ի յերկնային վարս հրեշտակաց, աղաչեմք առաջնորդեա մեզ անէր ՚ի յարգարութիւն:

### Յ Ո Ւ Յ Ա Կ

### Մ Տ Ա. Ծ Ա. Կ Ա. Ն Ա. Յ



ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ . . . . .	5
Ա. Սուրբ աստուածածնայ անարատ յղութեանը վրայ . . . . .	7
Բ. Սուրբ աստուածածնայ ծննդեանը վրայ . . . . .	13
Գ. Սուրբ աստուածածնայ ընծայմանը վրայ . . . . .	18
Դ. Սուրբ աստուածածնայ աւետանը վրայ . . . . .	23
Ե. Սուրբ աստուածածնայ այցելութեանը վրայ . . . . .	28
Զ. Քրիստոսի ծննդեան վրայ . . . . .	32
Է. Նորէն Քրիստոսի ծննդեանը վրայ . . . . .	38
Ը. Նորէն Քրիստոսի ծննդեանը վրայ . . . . .	42
Թ. Աստուածայայտնութեան վրայ . . . . .	45
Ժ. Քրիստոսի մկրտութեանը վրայ . . . . .	50

ԺԱ.	Նորէն՝Քրիստոսի մկրտութեանը վրայ	55
ԺԲ.	Տեանընդառաջին տօնին վրայ . . .	60
ԺԳ.	Ծաղկազարդի տօնին վրայ . . .	65
ԺԴ.	Քրիստոսի սուրբ Հաղորդութեան խորհուրդը հաստատելուն վրայ.	70
ԺԵ.	Նորէն սուրբ Հաղորդութեան խոր- հըրդոյն վրայ . . . . .	76
ԺԶ.	Նորէն սուրբ Հաղորդութեան խոր- հըրդոյն վրայ . . . . .	81
ԺԷ.	Նորէն սուրբ Հաղորդութեան խոր- հըրդոյն վրայ . . . . .	86
ԺԸ.	Նորէն սուրբ Հաղորդութեան խոր- հըրդոյն վրայ . . . . .	91
ԺԹ.	Քրիստոսի իր առաքելոց ոտքը լուս- լուծելու վրայ . . . . .	96
Ի.	Քրիստոսի Յուդայէն մտանուէլուն վրայ . . . . .	101
ԻԱ.	Յուդային զՔրիստոս համբուրելուն վրայ . . . . .	106
ԻԲ.	Քրիստոսի արամութեանը վրայ . . .	111
ԻԳ.	Քրիստոսի պարտիզին մէջ ըրած ա- ղօթքին վրայ . . . . .	116
ԻԴ.	Քրիստոս բռնելուն կատելնուն ու- քահանայապետներուն ատեանը հանելուն վրայ . . . . .	121
ԻԵ.	Քահանայապետներուն զՔրիստոս Պիղատոսի ձեռքը մտանուէլուն վրայ . . . . .	126
ԻԶ.	Յիսուսի ճաղկանացը վրայ . . . . .	131
ԻԷ.	Քրիստոսի թուր ու ուրիշ նախատա- կան տանջանքներ ընդունելուն վրայ . . . . .	136
ԻԸ.	Քրիստոսի վշով պատուէլուն վրայ . .	141
ԻԹ.	Պիղատոսի զՔրիստոս Հրէից ցուցը- նելը . . . . .	146


Լ.	Քրիստոս խաչը ուսը Գողգոթա լեռը եղելուն վրայ . . . . .	150
ԼԱ.	Յիսուսի Խաչելութեանը վրայ . . .	155
ԼԲ.	Սուրբ աստուածածնայ խաչին տակը կենալուն վրայ . . . . .	161
ԼԳ.	Քրիստոսի խաչին վրայ անցուցած եռքի իրէք ժամը . . . . .	166
ԼԴ.	Քրիստոսի խաչին վրայ ըսած եռքի խօսքը ու սուրբ հոգին աւանդելը	171
ԼԵ.	Քրիստոսի տիգախոց կողին վրայ . .	176
ԼԶ.	Քրիստոսի թաղմանը ու յարութեա- նը վրայ . . . . .	181
ԼԷ.	Նորէն Քրիստոսի յարութեանը վրայ	188
ԼԸ.	Նորէն Քրիստոսի յարութեանը վրայ	193
ԼԹ.	Նորէն Քրիստոսի յարութեանը վրայ	198
Խ.	Քրիստոսի համբարձմանը վրայ . . .	202
ԽԱ.	Նորէն Քրիստոսի համբարձմանը վրայ	207
ԽԲ.	Նորէն Քրիստոսի համբարձմանը վրայ	213
ԽԳ.	Հոգեգալտեան տօնին վրայ . . . . .	218
ԽԴ.	Նորէն Հոգեգալտեան տօնին վրայ . .	223
ԽԵ.	Տապանակին տօնին վրայ . . . . .	229
ԽԶ.	Քրիստոսի պայծառակերպութեանը վրայ . . . . .	233
ԽԷ.	Նորէն Քրիստոսի պայծառակերպու- թեանը վրայ . . . . .	239
ԽԸ.	Սուրբ Եկեղեցւոյ տօնին վրայ . . .	243
ԽԹ.	Սուրբ աստուածածնայ վերափոխ- մանը վրայ . . . . .	248
Ր.	Սուրբ աստուածածնայ դերաղան- ցութեանը վրայ . . . . .	253
ՐԱ.	Սուրբ խաչին վրայ . . . . .	259
ՐԲ.	Նորէն սուրբ խաչին վրայ . . . . .	265
ՐԳ.	Նորէն սուրբ խաչին վրայ . . . . .	269
ՐԴ.	Նորէն սուրբ խաչին վրայ . . . . .	273



ԾԵ . Աստուծոյ խրկած խաչերը սիրով քաշելու վրայ . . . . .	277
ԾԶ . Ամենայն սրբոց տօնին վրայ . . . . .	281
ԾԷ . Ննջեցեաց վրայ . . . . .	287
ԾԸ . Նորէն ննջեցեաց վրայ . . . . .	292
ԾԹ . Նորէն ննջեցեաց վրայ . . . . .	296
Կ . Նորէն ննջեցեաց վրայ . . . . .	300
ԿԱ . Սուրբ Սահ. փանոս նախավկային վրայ	303
ԿԲ . Յոհաննու Կարապետին վրայ . . . . .	308
ԿԳ . Սուրբ Աստուածածաօրը վրայ . . . . .	314
ԿԴ . Հաւատքի վրայ . . . . .	320
ԿԵ . Աստուծոյ նախախնամութեանը վրայ տաչուութիւն ունենալու վրայ . . . . .	325
ԿԶ . Աստուծոյ ներկայութիւնը ազընուս տաչլին ունենալու վրայ . . . . .	330
ԿԷ . Աղօթքի վրայ . . . . .	335
ԿԸ . Նորէն աղօթքի վրայ . . . . .	340
ԿԹ . Նորէն աղօթքի վրայ . . . . .	343
Հ . Հայրմերին վրայ . . . . .	349
ՀԱ . Սովորական գործքերնիս աղէկ կեր- պով ընելու վրայ . . . . .	356
ՀԲ . Պղտի բաներու մէջ ալ աստուծոյ հա- ւատարիմ ըլլալու վրայ . . . . .	361
ՀԳ . Ներելն մեղքերը չարհամարչելու վրայ . . . . .	366
ՀԴ . Յիսուսի սիրոյն վրայ . . . . .	371
ՀԵ . Եղբայրսիրութեան վրայ . . . . .	376
ՀԶ . Նորէն եղբայրսիրութեան վրայ . . . . .	381
ՀԷ . Նորէն եղբայրսիրութեան վրայ . . . . .	386
ՀԸ . Ողորմածութեան վրայ . . . . .	391
ՀԹ . Ուրիշներուն պակասութեանը կարե- կից ըլլալու վրայ . . . . .	396
Ձ . Դատողութեան վրայ . . . . .	401
ՁԱ . Խոնարհութեան վրայ . . . . .	406
ՁԲ . Ութը երանութեանց վրայ . . . . .	411

ՁԳ . Նորէն ութը երանութեանց վրայ . . . . .	418
ՁԴ . Նորէն երանութեանց վրայ . . . . .	425
ՁԵ . Քրիստոսի բարեգութ հովուին մեր վրայ ունեցած սէրը . . . . .	430
ՁԶ . Նորէն Յիսուսի մեր վրայ ունեցած սիրոյն վրայ , ու ինչպէս պէտք է ջանանք անիկայ չկորսընցընելու վրայ . . . . .	435
ՁԷ . Քրիստոսի մեր փրկութեան համար մեռնելու վրայ . . . . .	440
ՁԸ . Քրիստոսի առանձնական կենացը վրայ	445
ՁԹ . Քրիստոս մեր հոգւոյն լոյսը ըլլալուն վրայ . . . . .	450
Ղ . Քրիստոսի վրայ ինչ մեծ վտահու- թիւն պէտք է ունենանք . . . . .	455
ՂԱ . Քրիստոսի մարդկային կամացը իր երկնաւոր Հօրը կամքին հետ հա- մակերպութեանը վրայ . . . . .	460
ՂԲ . Աշխարհի նեղութիւնները՝ աստուծոյ կամացը հետ համակերպութե- կրելու վրայ . . . . .	465
ՂԳ . Քրիստոսի ետեէն խաչը ուսերնիս ա- ռած երթալու վրայ . . . . .	470
ՂԴ . Քրիստոսի քաղցը հրաւերքն որ կընէ ամենուս . . . . .	475
ՂԵ . Նորէն նոյն հրաւերքին վրայ , որն որ Քրիստոս կընէ ամենուս . . . . .	479
ՂԶ . Ինչ որ մեր փրկութեանը համար կու- ղէ մեզմէ Քրիստոս . . . . .	484
ՂԷ . Նորէն Քրիստոսի մեր փրկութեանը համար մեզմէ ուղած բաներուն վրայ . . . . .	490
ՂԸ . Նորէն Քրիստոսի մեր փրկութեան համար մեզմէ ուղած բաներուն վրայ . . . . .	495

ՂԹ.	Աստուծոյ շնորքը ճանչնալու ու ապերախա չըլլալու վրայ . . . . .	500
Ճ.	Ճշմարիտ գարձի վրայ . . . . .	505
ՃԱ.	Պետրոս առաքեալին գարձին վրայ . . . . .	510
ՃԲ.	Պօղոս առաքեալին գարձին վրայ . . . . .	515
ՃԳ.	Բարի աւաղակին գարձին վրայ . . . . .	520
ՃԴ.	Խղճմտանքի հանդարտութեան վրայ . . . . .	525
ՃԵ.	Բարեպաշտ քրիստոնէին ունեցած սրտին խաղաղութեանը վրայ . . . . .	530
ՃԶ.	Մեղաւորին խեղճ վիճակը . . . . .	535
ՃԷ.	Մահուան վրայ . . . . .	540
ՃԸ.	Մահուան պատրաստ կենալու վրայ . . . . .	546
ՃԹ.	Պաղջ քրիստոնէին մահուանը վրայ . . . . .	551
ՃԺ.	Չերմեւանդ քրիստոնէին մահուանը վրայ . . . . .	556
ՃԺԱ.	Պատաստանին վրայ . . . . .	561
ՃԺԲ.	Նորէն դատաստանին վրայ . . . . .	566
ՃԺԳ.	Քրիստոսի ողորմութեանը վատահալալու վրայ . . . . .	571
ՃԺԴ.	Արքայութեան վրայ . . . . .	576
ՃԺԵ.	Ասանց Քրիստոսի արքայութիւն երթալ չըլլար . . . . .	582
ՃԺԶ.	Ասանց Քրիստոսի շնորհացը արգիւնաւոր բան մը ընել չենք կրնար . . . . .	587
ՃԺԷ.	Մարդուս ոչընչութեանը վրայ . . . . .	592
ՃԺԸ.	Ներքործական մեղաց վրայ . . . . .	597





2131

z - 70